giving Amman the status of a transit point towards their final destinations. Over the years, these waves of Armenians have included musicians, sportsmen, and artists who got involved in the local community while transiting through Amman. Armen Armenagian and Karnig Sossoian (from Iraq) formed choirs with members of the community and gave several performances, only to leave for Europe and Canada after a short while. The same could be said of young men and women who came to Amman from Beirut and Aleppo and joined the basketball teams but later on left for other countries. The presence of these individuals had a big impact on the life of the community, but again it was a temporary, and the activities stopped with their departure.

Gradually the Armenians in Jordan have witnessed a decrease in their numbers as many have emigrated over the years. Even in the capital, the Armenians moved out of Jabal Al Ashrafiyeh. However, the institutions remained in their former locations, sometimes posing practical difficulties for the new generation that has found new interesting, modern venues closer to home.

Maintaining those institutions that were established over the years continues to be a difficult task in a small community. There are many Armenians who are not actively involved in the community organizations or usually remain distant from the community. At a time when there are many attractions for youth in the local environment, it is a challenge for Armenian institutions to attract and engage Armenian youth through creative methods and approaches. As society continuously evolves, leaders in the community should comprehend those changes and adopt modern ways and long-term strategies to ensure the continuity of the community's Armenian identity.

Like other small Armenian communities in the Diaspora, the Armenian community of Amman has faced and still faces many challenges. The political situation in countries around Jordan has raised concerns amongst Jordanian Armenians, especially the younger generation, which has either left the country to seek job opportunities in the Gulf countries or emigrated to the West.

Another challenge that faces the Armenian community in Amman is the location of its institutions. The Jabal Al Ashrafiyeh neighborhood, where all the Armenian institutions are located, is now regarded as an impoverished area of the capital Amman. It has lost most of its Armenian residents, who have moved away from the traditional Armenian quarter. Consequently, many Armenian families prefer to send their children to schools that are closer to their residences, which has led to a decrease in the number of students enrolled in the only Armenian elementary school of Amman.

The continuity of these institutions, which played a major role in the social and psychological well-being of the new community when they were first established, will depend on the methods and strategies adopted by community leaders.

Stronger ties with Armenia have been developing since its independence in 1991. Many Jordanian-Armenians, especially the youth, have been obtaining Armenian citizenship, thus creating a balance between their ancestral homeland and the land that hosted them when they were most in need of a safe haven. This has established closer ties with the homeland and strengthened the sense of belonging of Jordanian-Armenians.

CONCLUSION

The making of the Amman Armenian community posed a big challenge to the first generation of Armenian immigrants, who worked hard to realize the dreams of restarting their lives in a new environment while maintaining their Armenian identity. Currently the biggest challenge is to transform that dream into modern-day reality to ensure its continued existence for many more decades to come.

Յորդանանի Հայերը. Հայօճախին Կազմակերտումը
(Ամփոփում)

Սիլվա Սարգիսեան-Հայրապետեան
hairabed@hotmail.com

Թէեւ հիմնականին մէջ հայերը Յորդանան հաստատուեցան 1915ի Հայոց Ցեղասպանութենէն ետք, ուր սկսան վերակերտել զիրենք, այդուհանդերձ անոնք իբրեւ հայօճախ կազմաւորուեցան 1948էն՝ Պաղեստինի հայերու ոդիսականէն եւ Յորդանանի – մասնաւորաբար Ամմանի – մէջ անոնց հաստատումէն ետք:

1948ի գաղթականներու ներհոսքը անհրաժեշտութիւն դարձուց յորդանանահայութեան համայնքային կարիքներուն բաւարարումը: Նորեկները ձեւաւորեր էին արդէն իրենց հաւաքական կեանքը, յառաջացուցեր իրենց կազմակերպութիւնները՝ Պաղեստինի մէջ:

Նորեկներուն կշիռը՝ Ամմանի հայօճախին ձեւաւորման մէջ, շատ մեծ էր. անոնք յառաջացուցին կենսական կարիքը ընկերային, կրօնական, կրթական եւ մշակութային կազմակերպութիւններու՝ բաւարարելու համար թէ՛ իրենց՝ յորդանահայերու հետ միախառնուող նոր ինքնութեան յառաջացումն ու պահպանումը եւ թէ՛ նորաձեւուող հայօճախին տեղը՝ Յորդանանի ընկերութեան մէջ: Նախա1948ի զօրաւոր փոխյարաբերութիւնները՝ Յորդանանի եւ Պաղեստինի հայերուն միջեւ, պատճառ դարձան որ անոնց միախառնումն ու հարստացուած հայօճախին կազմաւորումը՝ արագ ընթանան:

Ձեկոյցը լուսարձակի տակ կ'առնէ Ամմանի հայօճախին կազմաւորումը մինչեւ անոր մերօրեայ գոյութիւնը: Հակառակ դիմագրաւած մարտահրաւէրներուն հայօճախը կը շարունակէ մնալ փոքր, սակայն աշխուժ եւ իբրեւ ապահով ապաստան կը ծառայէ շրջանի հայերուն:

ՀՄԸՄ Ամման. Մեկուսի Մասնաճիւղ
(Ակնարկ)

Սիլվա Պաղսարեան
silvabaghsarian@yahoo.com



ՄՈՒՏՔ

Զեկոյցը համառօտակի կը ներկայացնէ Ամմանի ՀՄԸՄի մասնաճիւղին հիմնումին, առաքելութեան եւ գործունէութեան պատկերը: Անոր նիւթերը քաղած ենք Ամմանի ՀՄԸՄի նախկին վարչականներու եւ անդամներու հետ ունեցած մեր հարցազրոյցներէն, զրոյցներէն, վարչութեանց անցեալի ատենագրութիւններէն, ակումբի արխիւին մէջ գտնուող այլ նիւթերէ ու փաստաթուղթերէ եւ ՀՄԸՄի պատմութեան նուիրուած մենագրութենէն[1]:

ՀԻՄՆՈՒՄ ԵՒ ԱՌԱՋԻՆ ՔԱՅԼԵՐ

Ամմանի ՀՄԸՄի մասնաճիւղը հիմնուած է 1938ին, «շուրջ 20 նորագիրներու մասնակցութեամբ»[2], որպէս ազգային խմբակցութիւն: Ութսունամեայ այս մեկուսի մասնաճիւղը այսօր կը շարունակէ իր առաքելութիւնը, որ կը նոյնանայ ՀՄԸՄի ընդհանրական առաքելութեան հետ[3]: Միութիւնը նախ որպէս ժողովարան օգտագործած է անդամներու տուները, ունեցած է «կարճ կեանք եւ ... Բ. Համաշխարհային ...

---

[1] Բիւզանդ Թորիկեան, *Պատմութիւն Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութեան, Հատոր Առաջին, Սկիզբէն Մինչեւ 1939 Թուական*, Պէյրութ, Տպարան Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան, 1995. Նաեւ նոյն՝ *Պատմութիւն Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութեան, Հատոր Երկրորդ, 1940-1974*, Պէյրութ, Տպագրութիւն Կարպիս, 1999:

[2] Թորիկեան, *Հատոր Առաջին*, էջ 261: Թորիկեան, հիմնումի թուական կը նկատէ 1937, եւ կու տայ անունները առաջին վարչութեան՝ Միհրան Գասապեան, Գէորգ Գէորգեան, Օննիկ Գէորգեան, Յակոբ Գույումճեան, Ալեքսանդր Խրլաքեան, Հրաչ Սարգիսեան, Բիւզանդ Տեքէճեան (նոյն):

[3] Հետեւելով հանդերձ ՀՄԸՄ ընդհանուր ծրագիր-կանոնագրին, Ամմանի ՀՄԸՄ շրջանակը ունի իր ներքին ծրագիր-կանոնագիրը, որ վաւերացուած է Յորդանանի երիտասարդութեան նախարարութեան կողմէ:

Պատերազմի նախօրեակին... դադրած է գործելէ»[4], ապա որպէս մարզական միութիւն - ՀՄԸՄ անուան տակ - պաշտօնապէս ճանչցուած է Յորդանանի երիտասարդաց նախարարութեան կողմէ 1946ին, հիմնադիր վարչութեան անդամներ ունենալով Յովիկ Էթեմէզեան, Տոքթ. Սուրէն Էթեմէզեան, Հայկ Թոմիկեան, Յակոբ Խուլմունեան, Յակոբ Պետեւեան, Ասատուր Պոյաճեան, Գեղամ Սուրճեան, Ճորճ Ճորճեան եւ Աւետիս Փանոսեան: Այդ շրջանին, միութիւնը գործած է վարձու գրասենեակի մը մէջ, մայրաքաղաքի թաղամասերէն Ռաս Ալ Այնի մէջ, իսկ 1967ին՝ անդամներու ճիգերով գնուած է հող եւ կառուցուած ներկայ ակումբը Էշրեֆիէ լեռան հայոց թաղամասին մէջ[5]: Կալուածը կառուցուած է հանգրուաններով. սկիզբը՝ գրասենեակներ եւ սրահ մը, ապա՝ ընդարձակուած եւ բարեզարդուած են սենեակներն ու սրահը, բարեկարգուած է խաղադաշտը: Ներկայիս, կառոյցը կ'ընդգրկէ Հայ Օգնութեան Միութեան (ՀՕՄ), ՀՄԸՄի եւ սկաուտական խումբի ու այլ գրասենեակներ, սրահ մը եւ պասքէթպոլի բաւականին ընդարձակ բաց մարզադաշտ մը[6]:

Որպէս մարզական միութիւն, ՀՄԸՄը գրաւած է Յորդանանի թագաւորական ընտանիքին ուշադրութիւնը եւ որոշ առիթներու վայելած է թագաւորական ընտանիքի անդամներէն ոմանց այցելութիւնն ու ներկայութիւնը[7]:

Միութիւնը ունի իր վարչութիւնը, որ կը բաղկանայ եօթ անդամներէ ու կ'ընտրուի երկամեայ շրջանի մը համար, ընդհանուր անդամական ժողովի ընթացքին, որուն ներկայ կ'ըլլայ նաեւ Յորդանանի երիտասարդական նախարարութենէն ներկայացուցիչ մը:

Միութիւնը կը գործակցի թէ՛ ՀՄԸՄի Սփիւռքի միաւորներուն հետ եւ թէ՛ Ամմանի մէջ գործող հայկական այլ միութիւններու[8] եւ հաստատութիւններու հետ:

---

[4] Ան գործած է երկամեակ մը, իբրեւ Երուսաղէմի ՀՄԸՄի ենթամասնաճիւղ (Թորիկեան, *Ա. Հտր.*, էջ 261. նաեւ՝ Թորիկեան, *Բ. Հտր.*, էջ 249):

[5] Գաղթի հետեւանքով այլ շրջաններ ապաստանած հայեր տակաւ հաստատուած են այդ թաղամասը, կառուցած հայ առաքելական Ս. Թադէոս եկեղեցին, Իւզպաշեան-Կիւլպենկեան Ազգ. Վարժարանը եւ Ամմանի Մարզական Միութեան ակումբը:

[6] Ատենին գործած է նաեւ գրադարան, ուր մէկտեղուած են պատմական եւ գիտական գիրքեր:

[7] Օրինակ, 1967ին, ակումբին բացումը կատարած է Իշխան Ռաատ Պըն Զէյտ:

[8] Հայոց Ցեղասպանութեան տարելիցը միասնաբար կը նշուի ՀՄԸՄի եւ ԱՄՄի կողմէ: Այլ պարագայ մըն էր Հուսէյն թագաւորի թագադրութեան քառասնամեակին (1992) առթիւ, ՀՄԸՄի դաշտին վրայ ՀՄԸՄի եւ ԱՄՄի

Քառասնամեակ մը, ան սերտ գործակցութիւն ունեցած է Երուսաղէմի ՀՄԸՄի մասնաճիւղին հետ: Արդարեւ, 1948ի Պաղեստինի բաժանման առթիւ ծագած պատերազմին հետեւանքով բաւական թիւով հայեր գաղթած են Ամման: Մեծաթիւ գաղթականներով ուռճացած Յորդանանի հայութեան այսպէսով առիթ յառաջացած է, որ ՀՄԸՄի Երուսաղէմի եւ Ամմանի շրջանակներուն եւ ակումբներուն կապերը զօրանան ու երկու մասնաճիւղերը միասնաբար գործեն մինչեւ 1967, երբ արաբ-իսրայէլեան պատերազմին բերմամբ, շրջանի քաղաքական կացութեան վատթարացումը, Արեւմտեան Ափի եւ Երուսաղէմի գրաւումը պատճառ դարձած են որ Ամմանի ՀՄԸՄը սկսի գործել առանձին:

ՄԱՐԶԱԿԱՆ, ՍԿԱՈՒՏԱԿԱՆ, ՊԱՐԱՅԻՆ ԵՒ ԱՅԼ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆՆԵՐ

Մարզական

Ամմանի ՀՄԸՄը տարբեր տարիներու ունեցած է ֆութպոլի, պասքէթպոլի աղջկանց եւ տղոց խումբեր, ինչպէս նաեւ պարախումբ եւ սկաուտական խումբ:

1944ին Ամմանի ՀՄԸՄի ֆութպոլի խումբը, տեղական երեք խումբերու հետ գործակցելով, միասնաբար հիմնած են Յորդանանի Ֆութպոլի Համադաշնութիւնը, որ կը գործէ մինչեւ այսօր: 1980ականներուն դադրած է ՀՄԸՄի ֆութպոլի խումբը:

Ըստ 1949-50 տարեշրջանի տեղեկագրին, մասնաճիւղը ունեցած է ֆութպոլի երկու խումբեր, պասքէթպոլի երեք խումբ եւ փինկփոնկի երկու խումբ[9], իսկ 1951ին, նաեւ՝ լուղորդներու խումբ մը[10]:

1970ականներուն վերակազմուած են տղոց, ապա եւ աղջկանց պասքէթպոլի խումբերը, որոնք ունեցած են վերելքի եւ վայրէջքի շրջաններ: Սկզբնական շրջանին, ժամանակ մը, տղոց պասքէթպոլի խումբը եղած է երկրորդական դասակարգի խումբերէն, ապա անցած է Ա. դասակարգ եւ շահած է երկրին ախոյեանութիւնը: Երկար ժամանակ ան գտնուած է առաջնակարգ դիրքերու վրայ: Սակայն 1999ի աւարտին, Յորդանանի Մարզական Համադաշնութեան որդեգրած նոր օրէնքները՝ օտարահպատակ մարզիկներու եւ այլ հարցերու վերաբերեալ, ինչպէս նաեւ նիւթական նեղ կացութիւնը ստիպած են որ Ամմանի ՀՄԸՄի

միացեալ ջանքերով կազմակերպուած դաշտահանդէսը (որուն ներկայ գտնուեցաւ Շարիֆա Պընթ Նասրը՝ արքայական ընտանիքէն, միութենականներու եւ ամմանահայութեան կողքին):

[9] Թորիկեան, *Բ. Հտր.*, էջ 250:

[10] Նոյն:

պասքէթպոլի թէ՛ աղջկանց եւ թէ՛ տղոց խումբերու անդամներուն թիւը նուազի եւ խումբերը, հետեւաբար, լուծուին[11]:

Պարախումբ

1955-60 շրջանին, Երուսաղէմի եւ Յորդանանի աշխուժ երիտասարդներ, միասնաբար կազմած են հայկական պարախումբ մը որ տեւած է քանի մը տարի: Տասնութ հոգինոց այս խումբը ելոյթներ ունեցած է Ամմանի եւ Երուսաղէմի մէջ:

Սկաուտական Շարժում

1948ի Պաղեստինի դէպքերուն հետեւանքով, ՀՄԸՄի սկաուտական շարժումի Յորդանան ապաստանած Երուսաղէմի անդամներ գործակցելով ՀՄԸՄ տեղի անդամներուն հետ, յառաջացուցած են Ամմանի ՀՄԸՄի սկաուտական շարժումը եւ կազմած խումբ: 1949-50 տարեշրջանին մասնաճիւղը ունեցած է 17 գայլիկներէ եւ 26 սկաուտներէ բաղկացած խումբ մը[12]: Աւելի ետք, 1965ին, խումբը կը հաշուէ նաեւ արենուշներ եւ արծուիկներ[13]:

Յորդանանի եւ Երուսաղէմի սկաուտական խումբերու միջեւ կապերը մինչեւ 1967 եղած են սերտ[14]: 1978էն իվեր, Ամմանի ՀՄԸՄը շարունակաբար իր մասնակցութիւնը բերած է համաՀՄԸՄական սկաուտական զանազան շրջաններու բանակումներու եւ խմբապետական ժողովներու[15]: Խումբը մասնակցեցաւ նաեւ 1994ի ամռան, Հայաստանի Հանրապետութեան մէջ տեղի ունեցած համաՀՄԸՄական բանակումին, 9 արի-արենուշներով: Ուշագրաւ է որ ՀՄԸՄի Միջին Արեւելքի միջդիւանային առաջին ժողովը գումարուած է Ամմանի մէջ, 2006ին:

---

[11] Փութպոլի եւ աղջկանց պասքէթպոլի խումբերու բոլոր մարզիկները հայեր էին, իսկ տղոց պասքէթպոլի խումբը վերջին տարիներուն ունեցած է երկու կամ երեք արաբ մարզիկներ:

[12] Թորիկեան, *Բ. Հյդ.*, էջ 250:

[13] Նոյն, էջ 251:

[14] Օրինակ, Հուսէյն թագաւորի թագադրութեան առթիւ ՀՄԸՄի Երուսաղէմի եւ Ամմանի ակումբները միասնաբար այցելած են թագաւորին շնորհաւորելու, եւ որովհետեւ շեփորախումբ չունէր Ամմանի մասնաճիւղը, անոնք Երուսաղէմի մասնաճիւղի շեփորախումբով ներկայացած են պալատ:

[15] Ըստ Թորիկեանի, Ամմանի ՀՄԸՄի մասնաճիւղի մասնակցութիւնը ՀՄԸՄի շրջանային ձեռնարկներուն սկսած է 1940ականներու երկրորդ կէսէն, սկիզբը շրջանային ընդհանուր ժողովներու մասնակցութեամբ, ապա միջմասնաճիւղային մրցոյթներու թէ բանակումներու մասնակցութեամբ եւ հիւրընկալումներով (Թորիկեան, *Բ. Հյդ.*, էջ 247):

Ներկայիս, սկաուտական խումբը կը հաւաքուի շաբաթական դրութեամբ, ամէն Ուրբաթ, ակումբին սրահը եւ կը գործադրէ նախապէս ծրագրուած դաստիարակչական թէ ուսուցողական յայտագիր: Խումբը կը կազմակերպէ խաղեր, պտոյտներ, բանակումներ առանց առնչուելու Յորդանանի սկաուտական շարժումին, սակայն կապուած մնալով ՀՄԸՄի սկաուտական ընդհանուր շարժումին կեդրոնական մարմնին, մասնակցելով սկաուտական համաՀՄԸՄական քառամեայ բանակումներուն:

Այլ Գործունէութիւններ

1950ականներու սկիզբը հիմնուած է մասնաճիւղին Կոմիտաս երգչախումբը, որ կը թուի կարճատեւ կեանք մը ունեցած ըլլալ[16]:

2010ին իշխան Ֆէյսալ Պըն Ալ Հուսէյնի կազմակերպած "Generation for Peace" ծրագրին առաջին մասնակից ակումբը եղած է - ՀՕՄի կողքին - ՀՄԸՄը՝ ծրագիրը գործադրելով ՀՄԸՄի ակումբին մէջ[17]:

Որոշ առիթներու, ՀՄԸՄը հիւրընկալած է դրացի երկիրներու մարզական եւ սկաուտական խումբեր: Մարզական ձեռնարկներու կողքին, Ամմանի ՀՄԸՄը ունեցած է նաեւ մշակութային շարժում՝ պահելու հայ երիտասարդը հայկական մթնոլորտի, հայկական սովորութիւններու եւ աւանդութիւններու շունչին տակ: Երբեմն հրաւիրուած են նաեւ սփիւռքահայ երգիչներ:

ՅՈՐԴԱՆԱՆԱՀԱՅՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԱՄՄԱՆԻ ՀՄԸՄՆ ԱՅՍՕՐ

Ներկայ հանգրուանին, Յորդանանը Միջին Արեւելքի քաղաքական զարգացումներէն ծանրապէս ազդուած է: Անցնող տասնամեակներուն, մեծ թիւով հայեր գաղթած են եւ հաստատուած Յորդանան շրջանի իրենց երկիրներէն, անդամակցած Յորդանանի զանազան հայկական կազմակերպութիւններու եւ միութիւններու՝ աշխուժացնելով ակումբները:

Այսօր, սակայն այդ հիւր հայերն ու յորդանանահպատակ հայերը մեծ թիւով բռնած են գաղթի ճամփան դէպի Եւրոպա, Աւստրալիա, Հիւսիսային Ամերիկա եւ այլուր:

Ներկայիս, ակումբին դիմագրաւած գլխաւոր դժուարութիւնը անդամներու թիւի նուազումն է՝ գաղթի, կեանքի նորատեսակ դժուարութիւններուն, կենցաղի պարտադրած նոր պայմաններուն

[16] Թորիկեան, *Բ. Հյդ.*, էջ 250:

[17] Իշխան Ֆէյսալ Պըն Հուսէյնի այս նախաձեռնութիւնը նպատակ կը հետապնդէր նոր սերունդը իրար մօտեցնել, որպէսզի միասնաբար գործեն - առանց էթնիկ, կրօնական, ֆիզիքական թէ այլ խտրութեան - յանուն խաղաղ կեանքի եւ ապահով ապագայի կերտումին:

բերմամբ: Կարեւոր բացասական գործօն է նաեւ ակումբին անդամներուն բնակավայրերու ցրուածութիւնը եւ ակումբին վայրին հեռաւորութիւնը՝ անոնց բնակութեան վայրերէն:

The Amman Homenetmen Chapter
(Summary)

Silva Menekshеian-Baghsarian
silvabaghsarian@yahoo.com

The paper is an overview of the Amman chapter of the Homenetmen, an Armenian Diaspora sports organization.

The Amman chapter was founded in 1938. During its first years meetings were held in the homes of the members. Eventually it was officially recognized by the Jordan Youth Ministry as a Sports Union and established an office. In 1944 the Union, in collaboration with three other local clubs, founded the Jordan Football Federation. In 1948 the club expanded its activities and established men's and women's basketball teams, a dance group and a scout group.

Due to the 1948 Palestine conflict, large numbers of Armenians took refuge in Amman, which positively impacted the local Armenian community while strengthening relations between the Jerusalem and Amman chapters of the Union. In 1967 this collaboration stopped due to the new political developments in Israel, Jerusalem and the West Bank. The Amman chapter inaugurated a new center in 1967 in the presence of His Eminence Prince Raad Bin Zeyd. Since 1978 the Amman Chapter has participated in the pan-Union Scout camping and leadership assemblies. It hosted the Middle East inter-cabinet meetings of the Union in 2006.

The chapter has always been on the radar of the palace in its community development projects. In 2010 the chapter joined in Prince Faisal Bin AlHussein's initiative called "Generation for Peace" and applied it in the club.

Alongside being the second home of Jordan Armenians, the club has been a safe haven to many Armenian refugees fleeing the turmoil in neighboring countries.

Հայ Օգնութեան Միութեան Ամմանի «Արազ» Մասնաճիւղ (Ակնարկ)

Արսինէ Ճամպազեան
ajambazian@engicon.com

Ամմանի մէջ հայկական օգնութեան միութիւն մը կազմակերպելու գաղափարը կը յառաջանայ 1946ին, խումբ մը տիկիններու կողմէ: Սկզբնական շրջանին, միութիւնը իր անդրանիկ քայլերը կ'առնէ Էշրեֆիէի շրջանին մէջ, «Հայ Տիկնանց Աղքատախնամ Միութիւն» անուան տակ: Զայն կը հիմնեն Սոֆի Գարագաշեան, Մարթա Զաքեան, Նուարդ Էթեմէզեան, Վարդուհի Յակոբեան, Անահիտ Ոսկերիչեան, Սիրանուշ Սարգիսեան: Ծնունդէն երկու տարի ետք, 1948ին, միութիւնը պաշտօնապէս կը ճանչցուի իբրեւ «Յորդանանի Հայ Օգնութեան Միութիւն»[1]:

Տասնամեայ յարատեւ գործունէութենէ ետք - օգնելով կարիքաւոր ընտանիքներու եւ անհատներու, մասնաւորապէս 1948ի արաբ-իսրայէլեան պատերազմին հետեւանքով յառաջացած գաղթականներու - 2 Մայիս 1956ին, իբրեւ կանացի բարեսիրական կազմակերպութիւն, ՀՕՄի Յորդանանի մասնաճիւղը Յորդանանի կառավարութեան կողմէ կը վաւերացուի եւ կ'ընդգրկուի բարեսիրական կազմակերպութիւններու կողքին՝ Ամմանը ունենալով իբրեւ նստավայր:

ՀՕՄի Ամմանի միաւորը - ճանչցուած իբրեւ՝ الجمعية الخيرية الأرمنية للسيدات - պաշտօնապէս կ'անդամակցի Յորդանանի Բարեգործական Միութեանց Լիկային (الإتحاد العام للجمعيات الخيرية الأردن), շուրջ 530 միութիւններու կողքին: Ան առաջնային տեղ կը գրաւէ Լիկայի կազմակերպութեան անդամացանկին վրայ եւ իր ներկայութիւնը կ'արժեւորէ դասախօսական, նուիրահաւաքի, բարեսիրական եւ այլ ձեռնարկներու իրականացմամբ: Մասնաճիւղը մաս կը կազմէ նաեւ ընկերային բարելաւման նախարարութեան «Բարեգործական Միութիւններու Կազմ»ին (وزارة التنمية الإجتماعية – مديرية شرق عمان, سجل الجمعيات الخيرية)

[1] Ան մաս կը կազմէ 1910ին «Հայ Կարմիր Խաչ» անուան տակ Նիւ Եորքի մէջ հիմնուած, ապա «Հայ Օգնութեան Միութիւն» վերանուանուած ՀՕՄին: Որպէս ոչ-կառավարական կազմակերպութիւն, ՀՕՄը անդամ է ՄԱԿին՝ 1975էն իվեր, եւ որպէս այդպիսին սատար կը կանգնի մարդկային իրաւանց սկզբունքներուն, ընկերային արդարութեան եւ համամարդկային քաղաքակիրթ կարգերու համատարած ընկալման:

ՆՇԱՆԱԲԱՆ ԵՒ ՆՊԱՏԱԿ

«Ժողովուրդին հետ, ժողովուրդին համար» մարտակոչը ունեցող ՀՕՄի Ամմանի մասնաճիւղը նպատակ կը հետապնդէ.-

ա) Օգնութիւն ապահովել կարիքաւոր ընտանիքներու եւ անհատներու.

բ) Պահպանել մշակութային ինքնութիւնը յորդանանահայութեան.

գ) Նպաստել կրթական, ընկերային, առողջապահական կարիքին եւ բարեկեցութեան՝ հայ եւ օտար համայնքներու, անկախ անոնց ցեղային կամ կրօնական պատկանելութենէն.

դ) Սատարել միութեան անդամներու զարգացումին եւ խրախուսել անոնց ներգրաւումը հանրային ծառայութեան.

ե) Գործակցիլ նմանատիպ նպատակներու ծառայող կազմակերպութիւններու հետ:

ԿԵԴՐՈՆԱՎԱՅՐ, ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹԻՒՆ ԵՒ ՎԱՐՉԱԿԱՆ ԿԱԶՄ

Մասնաճիւղին գրասենեակը կը գտնուի Ամմանի ՀՄԸՄի ակումբէն ներս: Ան սեփականատէրն է կառոյցին քառորդին:

Մասնաճիւղին անդամակցելու իրաւունք ունին 18 տարիքը բոլորած կանայք, որոնք կը վայելեն.- ա) քաղաքացիութեան բոլոր իրաւունքները, բ) լաւ վարք ու համբաւ ունին, գ) երկու գործօն եւ կամ մէկ վարչական անդամի երաշխաւորութիւնը ունին, դ) կ'ընդունին միութեան ծրագիր-կանոնագիրը:

Վարչութիւնը կը բաղկանայ եօթ անդամներէ[2], որոնք կը ծառայեն կամաւորապէս, երկու տարեշրջան: Վարչութիւնը կ'ընտրուի ընդհանուր անդամական ժողովին[3], ընկերային բարելաւման նախարարութեան ներկայացուցիչներու ներկայութեամբ[4]: Ընդհանուր անդամական ժողովին կ'ընթերցուի նախորդ վարչութեան գործունէութեան նիւթաբարոյական տեղեկագիրը արաբերէն եւ հայերէն լեզուներով:

Վարչական ժողովները կը գումարուին շաբաթական դրութեամբ, միութեան գրասենեակին մէջ: Ժողովներու ատենագրութիւններն ու նամակագրութիւնը կը կատարուին արաբերէն եւ/կամ հայերէն: Իսկ անդամական ժողովները, հաւաքոյթներն ու ձեռնարկները տեղի կ'ունենան ընդհանրապէս ՀՄԸՄի ակումբի սրահին մէջ: Կարգ մը ձեռնարկներ տեղի կ'ունենան պանդոկներու եւ այլ սրահներու մէջ, ըստ՝ ձեռնարկի բնոյթին, պահանջքին ու նպատակներուն:

---

[2] Վարչական կ'ընտրուի 21 տարիքը բոլորած գործօն անդամը:

[3] Ընդհանուր անդամական ժողով կը գումարուի նուազագոյնը տարին մէկ անգամ:

[4] Ընտրական առաջին ժողովի օրինականութեան համար անհրաժեշտ է 50% առաւել 1 անդամներու ներկայութիւնը: Այլապէս, երկու շաբաթ ետք գումարուող յաջորդ ժողովը օրինական կը համարուի՝ նուազագոյնը տաս անդամներու ներկայութեամբ:

ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆ

Մասնաճիւղը կը ծաւալէ բարեսիրական լայնածիր գործունէութիւն, մանաւանդ՝ կարիքաւոր ընտանիքներու, կրթանպաստներու, դասախօսական, ազգային եւ կրօնական տօներու կազմակերպման առումով: Այսպէս.-

Ամսական դրութեամբ նիւթական նպաստ կը յատկացնէ կարիքաւոր ընտանիքներու եւ անհատներու, ուտեստեղէն ու հագուստեղէն կը բաժնէ անոնց եւ այլոց:

Կը պահէ տարեկան շուրջ վեց սաներ Ազգային Իւզպաշեան-Կիւլպենկեան Վարժարանին մէջ, կը հոգայ օտար երկրորդական վարժարաններ յաճախող 2-3 հայ սաներու կրթաթոշակը, ինչպէս նաեւ կ'ապահովէ համալսարանական 2-3 ուսանողներու կրթաթոշակէն մաս մը:

Ամսական դրութեամբ, առաւօտեան դասախօսութիւններ կը կազմակերպէ ընկերային, կրթական եւ առողջապահական նիւթերու շուրջ:

Կը տօնակատարէ Համբարձման, Ս. Աստուածածնայ, Մայրերու Օրուան, Ամանորի ու Ս. Ծննդեան տօները հանդիսութիւններով ու ձեռնարկներով:

Փետրուար ամսուն հոգեհանգստեան պաշտօն կը կատարէ հանգուցեալ ՀՕՄուհիներու յիշատակին:

Կը կազմակերպէ տարեկան տօնավաճառ[5]:

Կը գործակցի գաղութիս հայ կազմակերպութիւններու հետ՝ համագաղութային բոլոր ձեռնարկներուն:

Մասնաճիւղը 2006ին հիմնեց Ամմանի «Արազ» Մանկապատանեկան Պարախումբը, որ ունեցաւ ելոյթներու շարք մը եւ արժանացաւ հանրութեան ու տեղական մամուլին ջերմ գնահատանքին: Խումբը կը հաշուէր քսան փոքրեր եւ քսան պատանիներ, անոնք կը սորվէին ժողովրդային՝ հայկական, արաբական եւ այլ ազգագրական պարեր, (Քոչարի եւն.): Պարխումբը դադրեցաւ Նոյեմբեր 2018ին՝ պատանիներու թիւի նուազումին պատճառաւ: Խումբին վերջին ելոյթը տեղի ունեցաւ 2018 Ապրիլին:

Յիշատակելի է շուրջ մէկուկէս տասնամեակ (1973-1988) գործած՝ ՀՕՄի Յորդանանի միաւորի հիմնած ծերանոցը, որ ներկայիս դադրած է՝ անտէր հայ ծերերու թիւի եւ անոնց աջակցելու կարիքի նուազումին պատճառով: Ծերանոցը կը գտնուէր Էշրեֆիէի շրջանին մէջ, հայոց թաղը: Ան միայարկ, անջատ, վարձու կառոյց մըն էր, ուր կը պատսպարուէին մինչեւ 10 ծերեր (երբեմն աւելի նուազ): Ապահովուած էր անոնց

[5] Տօնավաճառը կը համարուի ու կը շարունակէ ըլլալ մասնաճիւղին եկամուտի գլխաւոր աղբիւր. ան մեծ ժողովրդականութիւն կը վայելէ գաղութէն ներս:

կեցութիւնը, առողջական հոգածութիւնը, սնունդը..., անոնց կը տրուէր ընկերային ամբողջական հոգածութիւն եւ խնամք:

Յորդանանի ՀՕՄի «Արազ» միաւորը, հանդիսանալով ՀՕՄ մեծ ընտանիքին զանազան երկիրներու մէջ հիմնուած բազմաթիւ մասնաճիւղներէն մին, կը մասնակցի ՀՕՄի զանազան ծրագիրերուն, ինչպէս.- ա) Որբախնամ եւ Ամանոր ծրագիրեր, բ) Սուրիահայութեան անմիջական օգնութիւն օժանդակութեան աշխատանք, գ) ՀՕՄի հիմնադրամի ընդարձակում եւ զարգացում, դ) ՀՕՄԻ Հայաստանի, Արցախի, Ջաւախքի ու Սփիւռքի ծրագիրեր:

ՆԵՐԿԱՅ ՄԱՐՏԱՀՐԱՒԷՐՆԵՐ

Ներկայիս, Ամմանի ՀՕՄի մասնաճիւղը կը դիմագրաւէ լուրջ մարտահրաւէրներ: Անդամներու թիւի նուազումը, բազմաթիւ հայ ընտանիքներու արտագաղթը, նոր սերունդի անտարբեր կեծուածքն ու նուազ հետաքրքրութիւնը՝ անդամակցելու եւ կամ քաջալերելու մասնաճիւղին գործունէութիւնը՝ կը թուին ընդհանրական խնդիրներն ըլլալ միջինարեւելեան հայօճախներու մշակութային-ընկերային կազմակերպութիւններուն եւ խմբակցութիւններուն: Այս խնդիրները սպառնալից գործօններ են, որոնք կը թուլցնեն, կը նուազեցնեն եւ կը տկարացնեն միութենական գործունէութիւնները: Անհրաժեշտ է այս էական խնդիրներուն պարագաներն ու մանրամասնութիւնները քննարկել համամիջինարեւելեան հայկական առումով, վերլուծել եւ տեսական ու գործնական ուղիներ եւ միջոցներ որդեգրել՝ կարելի լաւագոյն ձեւով յաղթահարելու համար այս ընդհանրական եւ վտանգաւոր տագնապը:

The Armenian Relief Society of Jordan
(Summary)

Arsine Jambazian
ajambazian@engicon.com

The paper focusses on the foundation of the “Araz” Chapter of the Armenian Relief Society in Amman. It outlines the Chapter’s objectives, organizational chart and by-laws. It details the activities of the Chapter and the work done for the preservation of Armenian identity and analyzes intra-Armenian cooperation for the strengthening of the community.

The paper also notes the fruitful collaboration prevailing in the League of Philanthropic Societies, which functions under the umbrella of the Ministry of Social Development.

The paper discusses the difficulties and challenges it faces, particularly when it comes to inclusion of the new generation in its activities, and the effort it makes to encourage commitment by the new generation to participate in the active preservation of the Armenian community of Jordan.

Յորդանանի Ազգային Մարզական Միութիւնը (Ակնարկ)

Ռոզէթ Ալեմեան-Մահսերէճեան
Rose2alem@yahoo.com

Զեկոյցը կ'ընդգրկէ Յորդանանի Ազգային Մարզական Միութեան (النادي الرياضي الوطني) 60 տարուան (1955-2015) ուղին, կ'ընդգծէ անոր մարզական ու մշակութային գործունէութիւնը, արեւելումը եւ հայօճախին ազգային-եկեղեցական կեանքին մէջ ունեցած դերը:

ՆԵՐԱԾԱԿԱՆ

Ա. Աշխարհամարտին, արաբ ազգայնական ղեկավարներ Հիժազի եւ Սուրիոյ վիլայէթներու մէջ, գլխաւորութեամբ Մեքքէի իշխան Շերիֆ Հուսէյն Պըն Ալիի, կ'ապստամբին Օսմանեան Կայսրութեան դէմ: Խառնաշփոթ այդ տարիներուն, 1916ի Սայքս-Փիքոյի Համաձայնագրին եւ արաբներու կատարուած խոստումներու հակասութեան մէջ կը գոյանան Սուրիա-Լիբանանը, Պաղեստինը, Իրաքը եւ Անդր-Յորդանանի Էմիրութիւնը, որուն ղեկը 1921ին կը յանձնուի Շերիֆ Հուսէյնի որդի Ապտալլա Ա.ին: 1946ին Մեծն Բրիտանիա կը հեռանայ երկրէն եւ անկախ թագաւորութիւն կը հռչակուի Յորդանանը, իսկ Ապտալլա Ա.ը՝ թագաւոր:

1953էն 1999 Յորդանանին կը թագաւորէ Հուսէյն Պըն Թալալը, որ մեծապէս կը նպաստէ երկրին բարգաւաճման եւ ժողովուրդի բարօրութեան: Հուսէյն թագաւորին կը յաջորդէ անոր աւագ որդին՝ Ապտալլա Պըն Հուսէյնը որ նոր աւիշ կը ներարկէ երկրին, սատարելով ընկերային, մշակութային եւ տնտեսական կեանքի զարգացման:

ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻՆ ԿԱԶՄԱԽՈՐՈՒՄԸ

Յորդանանի հայութիւնը սկսած է ձեւաւորուիլ 1915ի Եղեռնէն ետք, երբ աքսորուած ու տարագրութեան ճամփան բռնած հայու բեկորներ ապաստան գտած են Յորդանանի զանազան քաղաքներու մէջ[1]: Ջարդերէն ազատած եւ երկրագործութեամբ զբաղող հարիւրաւոր

[1] Այս աքսորեալներէն շատեր մահացած են Դամասկոս-Տարաա-Մաան երկարող անապատներուն մէջ: Որբացեալ գաղթականներ ու աքսորեալներէն ոմանք տեղափոխուած են Փոր Սայիտի գաղթակայանը:

տէօրթեոլցիներ, իրենց աշխատանքի բերմամբ 1920ականներէն սկսեալ կը հաստատուին Յորդանանի Հովիտը (Ղոր ԱլՍաֆի) ուր կը զբաղին կանաչեղէնի եւ յատկապէս լոլիկի մշակմամբ: Ասոնց կողքին մարաշցիներ ու զէյթունցիներ կը կազմեն ստուար թիւ մը: Ասոնք, տեղացի արաբ ժողովուրդի ազնիւ վերաբերմունքին եւ պետութեան թոյլտուութեան շնորհիւ[2], տակաւ կը գոյացնեն տարրական համայնք մը:

Մինչեւ Բ. Աշխարհամարտի աւարտը, ապա եւ Պաղեստինի տարածքին երկատումը՝ 1948ին, տնտեսական, հայրենակցական, ազգականական-խնամիական սերտ կապեր գոյութիւն ունէին յորդանանաբնակ եւ պաղեստինաբնակ հայերու միջեւ: Մեծաթիւ յորդանանահայեր գործատէրներ եւ աշխատանոցներ հիմնած էին Եաֆայի, Հայֆայի եւ Երուսաղէմի մէջ: Վերջինս, որ աշխարհագրականօրէն շատ մօտ էր Ամմանի եւ բրիտանական իշխանութեան տակ կը գտնուէր, կը հանդիսանայ շրջանի ամէնազարգացած բնակավայրերէն մին, ուր վաղուց կայացած էր պատրիարքութեան շուրջ համախմբուած հայկական գաղութը, իր Սրբոց Թարգմանչաց Վարժարանով:

Երուսաղէմի Հայոց Պատրիարքութիւնը եւ սաղիմահայութիւնը նշանակալից դեր ունեցած են Յորդանանի հայօճախին կրօնական, կրթական, մշակութային եւ ազգային մարզերու կազմակերպումին մէջ: Արդարեւ, այդ շրջանին, մանաւանդ մինչեւ 1967՝ Երուսաղէմի գրաւումը, պատրիարքութեան կողքին՝ Երուսաղէմի հայոց մէջ տիրող կրօնական, ազգային, կրթական եռուն կեանքը մեծապէս սատարեց յորդանանահայ գաղութի կազմաւորման: Սրբոց Թարգմանչաց Վարժարանի գոյութիւնը մեծապէս նպաստեց որ զարգացած, ուսումնատենչ, հայրենասէր սերունդներ յառաջանան Պաղեստինի մէջ, որոնցմէ մտաւորականներ, ուսուցիչներ, զարգացած տարրեր 1948էն ետք հաստատուելով Յորդանան եւ մանաւանդ Ամման՝ ձեւաւորեցին միութիւններ, կառուցեցին դպրոց, նպաստեցին համայնքի ազգային կեանքի զարթօնքին:

Մինչեւ 1948, Ամմանի էշրեֆիէի բլուրը սակաւաթիւ տուներէ կը բաղկանար: 1948էն սկսեալ՝ Պաղեստինէն գաղթած մեծ թիւով հայեր բնակութիւն հաստատելով այդ շրջանը՝ հայկական դիմագիծ տուին թաղամասին: Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան հսկողութեան ներքեւ գտնուող վանքապատկան կալուածներ տրամադրուեցան

[2] Յորդանանի Հաշիմեան Թագաւորութիւնը իսկզբանէ դրական տրամադրութիւն դրսեւորած է հայութեան նկատմամբ: Յատկապէս, 1917ին Մեքքէի Շերիֆ Հուսէյն Պըն Ալիի ուղերձներուն մէջ, մահմետականները յորդորուած են որ յատուկ ուշադրութեան առարկայ դարձնեն հայերը: Աւելի ետք, արքայական պալատի սպասարկման անձնակազմին պաշտօնակոչուած են հայ վարորդներ, սափրիչներ, լուսանկարիչներ, որոնցմէ շատեր մինչեւ օրս կը ծառայեն թագաւորական ընտանիքի տարբեր անդամներու:

գաղութին, որպէսզի կարելի ըլլայ Ամմանի Էշրեֆիէի շրջանին մէջ բարձրացնել ազգային կառոյցներ: Կողք-կողքի կառուցուեցան Սուրբ Թադէոս առաքելական եկեղեցին, Ազգային Իւզպաշեան-Կիւլպենկեան Վարժարանը եւ ՀՄԸՄի ակումբը:

Աւետարանական եւ կաթողիկէ համայնքները մինչեւ 1960ականներ աշխուժ գործունէութիւն ծաւալած են գաղութէն ներս՝ ունենալով վարժարան եւ եկեղեցի:

Յորդանանի տարածքին հազիւ 6000 հայեր կ'ապրէին 1930-46ին: 1948ի արաբ-իսրայէլեան պատերազմին հետեւանքով, պաղեստինահայ գաղթականներու ալիք մը հասաւ Յորդանան, ուր գտնուող հայութեան թիւը 1950ին բարձրացաւ 10,000ի:

Աւելի ուշ, երբ 1967ի արաբ-իսրայէլեան պատերազմին, Իսրայէլ գրաւեց Արեւմտեան Ափը եւ Արեւելեան Երուսաղէմը, գաղթականական ալիք մը խուժեց այս անգամ Յորդանանէն Լիբանան եւ այլուր: Այս գաղթականներէն քիչեր հաստատուեցան շրջանի երկիրներուն մէջ. մեծամասնութիւնը արտագաղթեց Արեւմուտք, մասնաւորաբար՝ Մ. Նահանգներ:

1967ի պատերազմէն ետք, յորդանանահայութեան թիւը նուազեցաւ 3000ի: Աւելի ապահով եւ բարեկեցիկ կեանքի ձգտումով, մեծ թիւով յորդանանահայեր գաղթեցին ԱՄՆ եւ հաստատուեցան Լոս Անճելըս, Օրենճ Քաունթի: 1975ին սկսած Լիբանանի քաղաքացիական պատերազմը, ապա Քուէյթի եւ Իրանի դէմ Իրաքի յաջորդական պատերազմները եւ վերջին տարիներու Արաբական Աշխարհի "Գարուն"ի իրադարձութիւնները իրենց ուղղակի թէ անուղղակի, դրական ու բացասական անդրադարձը ունեցան Յորդանանի հայօճախին թիւին, ընկերային կեանքին, տնտեսական վիճակին եւ ազգային կառոյցներու պահպանման վրայ:

Յորդանանահայերու դէպի արեւմտեան երկիրներ գաղթով եւ ամմանահայերու՝ Ամմանի աւելի բարգաւաճ շրջաններ տեղափոխուելով, ներկայիս Ամմանի Էշրեֆիէ երբեմնի հայաշատ թաղամասին մէջ փոքրաթիւ հայութիւն մնացած է:

ՅՈՐԴԱՆԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՄԱՐԶԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆԸ (ԱՄՄ)

Մինչեւ 1946, Յորդանանի մէջ հայրենիքին՝ Խորհրդային Հայաստանի, նուաճումները արձագանգող միութիւն մը չկար: Կարիքը զգալով մարզական գործունէութիւն ծաւալող եւ ազգային ուղեգիծ հետապնդող միութեան մը, յորդանանահայ Սերովբէ Անթիքաճեանի նիւթական եւ բարոյական ներդրումով, 1946ին խումբ մը երիտասարդներ յանձինս Հայկ Նագգաշեանի (Հեթումեան Ազգային Վարժարանի ուսուցիչ), Կայծակ Լեփէճեանի եւ Վարուժան Կիւլեագուպեանի կը կազմեն Ուաթանի Մարզական Միութիւնը: Հուսկ, 15 Յունուար 1955ին Ամմանի

մէջ պաշտօնապէս կը հիմնուի Ազգային Մարզական Միութիւնը, գլխաւորութեամբ Սերովբէ Անթիքաճեանի եւ գործակցութեամբ Սարգիս Լեփէճեանի, Յովսէփ Կետիկեանի, Բիւզանդ Չորպաճեանի, Պետրոս Պալեանի, Հայկ Պէրպէրեանի, Զօհրապ Պոտոսեանի, Արշակ Սարգիսեանի եւ Մինաս Փելթէքեանի:

Միութիւնը իր ծրագիր-կանոնագիրին համաձայն, սկիզբէն եւեթ կը հետապնդէ հետեւեալ նպատակները.-

- Բարձրացնել անդամներուն կրթական, մշակութային եւ ընկերային մակարդակը, տարածել մարզական ոգին.
- Մօտէն իրարու ծանօթացնել անդամները եւ սատարել անոնց եղբայրական կապերու հաստատման ու ամրապնդման.
- Բարեկամական յարաբերութիւններ մշակել նոյնանման նպատակներ հետապնդող ուրիշ միութիւններու հետ[3]:

ԱՄՄի գործօն տարրերը 1950ականներուն եղած են գլխաւորաբար Պաղեստինէն գաղթած հայեր, մինչ յորդանանահայեր աշխատանքի բերումով ցրուած էին մայրաքաղաքէն դուրս, շրջանները: Անոնք 1950ականներու աւարտէն տակաւ Ամման հաստատուելով միացան միութեան: 1960-80ականներուն, ԱՄՄը սերտ կապեր հաստատած է Խ. Հայաստանի, յատկապէս Սփիւռքահայութեան Հետ Մշակութային Կապի Կոմիտէին հետ, որուն հետեւանքով մեծ թիւով յորդանանահայ ուսանողներ մեկնած են Հայաստան՝ բարձրագոյն կրթութիւն ստանալու, եւ վկայուած որպէս բժիշկ, ճարտարապետ, բանասէր եւն.:

Այս ուսումնառութեան շնորհիւ հայերէն լեզուին տիրապետող, զարգացած, հայրէնասէր սերունդ մը հասակ առաւ եւ գործել սկսաւ Յորդանանի մէջ: Ուսանողներէն շատեր հայրենաբնակ օրիորդներու հետ ընտանիք կազմեր էին եւ Յորդանանի ու մանաւանդ Ամմանի մէջ հաստատուելով ընդգրկուեցան Յորդանանի պետական, կրթական, արտաքին գործոց եւ ուժանիւթի նախարարութիւններուն մէջ, ուրիշներ՝ անձնական ձեռնարկութիւններ հիմնեցին: Շատեր ընդգրկուելով տեղի հայկական միութիւններուն՝ վերափոխեցին Յորդանանի հայօճախին դիմագիծը, թարմ արիւն ներարկելով անոր ազգային-մշակութային գործունէութեան: Յորդանանահայութիւնը տասնամեակներ շարունակ վայելած է հայրենի տաղանդաւոր գրողներու եւ արուեստագէտներու այցելութիւններն ու ելոյթները, շնորհիւ ԱՄՄի աշխուժ գործունէութեան: Ազգային տագնապալի պահերու՝ ԱՄՄն նիւթապէս եւ բարոյապէս օժանդակած է Լիբանանի, Արցախի, Լենինականի (այժմ Գիւմրի) եւ Սպիտակի տուժած հայորդիներուն:

---

[3] *Ազգային Մարզական Միութիւն, ԱՄՄ 50 Ամեակ, Ամման 1955 النادي الوطني الرياضي,* Ընդհ. պատասխանատու՝ Անդրանիկ Լեփէճեան, խմբ.՝ Ներսէս Ներսէսեան, Ռոզէթ Ալեմեան-Մահսերէճեան, Պէյրութ, Տպ. Շիրակ, 2008, էջ 10:

ԱԶԳԱՅԻՆ ՄԱՐԶԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ՆԵՐԿԱՅ ԿԱՌՈՅՑՆԵՐԸ

1955ին պաշտօնապէս կը հիմնուի ԱՄՄՆ եւ մինչեւ 1975 Ամմանի Մըստար կեդրոնական հատուածի տարբեր յարկաբաժիններու մէջ կը ծաւալէ իր գործունէութիւնը: 1975ին Էշրեֆիէ լեռան (ծանօթ՝ որպէս *Հայ Էլ Արման*) թաղամասին մէջ կը կառուցուի երկյարկ ներկայ արդի շէնքը, իր ընդարձակ սրահով, ժողովասրահով, գրադարանով եւ փոքր բակով: Մեծ կ'ըլլայ Գալուստ Կիւլպենկեան Հիմնարկութեան Հայկական Բաժանմունքի եւ ՀԲԸՄ նախագահ Ալեք Մանուկեանի ներդրումը՝ իրականացնելու համար այս ծրագիրը. 1980ին ԱՄՄի սրահը կ'անուանուի Ալեք Մանուկեան:

1984ին, խումբ մը վարչականներու նախաձեռնութեամբ եւ գաղութի ազգայիններու աջակցութեամբ, Ամմանէն հարաւ 17 քլմ. հեռաւորութեան վրայ, տասհազար քառ. մեթր տարածութեամբ հողաշերտ մը կը գնուի, որպէս զբօսավայր: 800 ծառերով գեղեցկացած այս հողակտորը իր ծածկուած նստավայրով, փոքրիկներու խաղավայրով դարձած է ամմանահայութեան հաճելի հաւաքատեղի: Յատկապէս ամառը, ան կ'օգտագործուի իբրեւ զբօսավայր, ուր ելոյթ կ'ունենան պարախումբեր եւ նուագախումբեր տեղական եւ հիւր ուժերու համախմբումով: Ան կ'օգտագործուի նաեւ իբրեւ սկաուտական բանակատեղի:

ԱՄՄ վարչական կազմը. կեդրոնը՝ երկարամեայ ատենապետ Սարգիս Լեփէճեան, 1980

ԱՄՄԻ ԾԱԽԱԼԱԾ ՀԻՄՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆԸ

ա) Մարզական շարժում

Մարզական Միութիւն ըլլալու հանգամանքը, կը թելադրէր որ մարզական կեանքին ներգրաւուած ըլլային անդամները: Այդպէս ալ, ԱՄՄի պասքէթպոլի յաջորդական խումբերը նշանակալից դեր ունեցան Յորդանանի մարզական կեանքին եւ այդ մարզաձեւին տարածման՝

հետաքրքրութիւն ստեղծելով հայ երիտասարդներու եւ տեղաբնիկներու մէջ:

ԱՄՄ մարզիկները 1963ին տիրացան Յորդանանի ախոյեանութեան եւ մաս կազմեցին պասքէթպոլի երկրի հաւաքականին[4]: Անոնք նաեւ 1980ականներուն իրենց մասնակցութիւնը բերին ՀԲԸՄի կազմակերպած Նաւասարդեան Խաղերուն՝ Լիբանանի, Կիպրոսի եւ Ժընեւի մէջ: Կարճ շրջան մը՝ 2015-16, կազմուեցաւ կրտսերներու ֆութպոլի խումբ, տեղի ունեցան մարզումներ: Վերջին տասնամեակին ուշադրութեան եւ առաւել հոգածութեան կ'արժանանայ ճատրակի ուսուցումը, կը կազմակերպուին մրցաշարքեր, համայորդանանեան մրցոյթներ:

Յորդանանի պասքէթպոլի ախոյեան ԱՄՄ խումբը, 1963

բ) Սկաուտական շարժում

Համաշխարհային մարզական կեանքին ներկայ թելադրանքով, մրցունակութեան պարտադրած նիւթական մեծագումար պահանջներու եւ արհեստավարժ մարզիկներու անհրաժեշտութեան դիմաց ԱՄՄի անհնարութիւնը պատճառ դարձաւ որ միութեան մարզական կեանքը նահանջ արձանագրէ: Փոխարէնը՝ աստիճանաբար զարգացաւ սկաուտական շարժումը, յատկապէս ամառնային զբօսավայրի հիմնումէն ետք, 1980ականներու կէսերուն:

1985էն իվեր, միութեան փոքրիկներն ու պատանիներ աշխուժ մասնակցութիւն բերած են սկաուտական շարժումին: Տեղի ունեցող տարեկան բանակումներուն մասնակցած են Իրաքէն, Սուրիայէն, Եգիպտոսէն, Լիբանանէն եւ Երուսաղէմէն ժամանած համախոհ խումբեր:

---

[4] Յորդանանի մարզական կեանքին իրենց բերած նպաստին համար, մինչեւ այսօր ԱՄՄի պասքէթպոլի նախկին երեք մարզիկներ (Յակոբ Մահսերէճեան, Տիգրան Մահսերէճեան եւ Վարուժան Սարգիսեան) կը վայելեն պետութեան ընձեռած առողջապահական ապահովագրութիւնը:

Վերջին տարիներու շրջանային իրադարձութիւններուն հետեւանքով, մերձակայ գաղութներէ երկսեռ արիներու մասնակցութեան հարցը դժուարացած է: Սակայն տեղական միջոցներով կը շարունակուի սկաուտական կեանքը, որ հայապահպանման էական գործօն մըն է յատկապէս հայկական վարժարան չյաճախող աշակերտներու համար: Հայերէն խօսելու, հայ երգ սորվելու, առողջ յարաբերութիւններ մշակելու շինիչ միջավայր կը հանդիսանան տարեկան այս բանակումները:

Տարեկան միացեալ բանակում, 2001

գ) Մշակութային կեանք

ԱՄՄի հիմնադրութեան հիմնական նպատակը եղած է մարզական շարժման կողքին խանդավառել յորդանանահայութիւնը հայ արուեստով ու մշակոյթով:

ԱՄՄի մշակութային գործունէութեան դրսեւորումները կարելի է բաժնել երկու հիմնական ուղղութիւններու.-

1) *Յոբելենական հանդիսութիւններ, յատուկ ձեռնարկներ, հիւր արուեստագէտներու ելոյթներ.*

Հայկական պատմական ուշագրաւ, յատկանշական տարեթիւերու, ամեակներու, գրողներու, արուեստագէտներու նուիրուած յոբելենական հանդիսութիւններու առթիւ գլխաւոր բանախօս հրաւիրուած են Լիբանանէն, Սուրիայէն, Հայաստանէն մշակոյթի հանրաճանաչ դէմքեր: Երբեմն հրաւիրուած են Յորդանանի հայ թէ օտար դէմքեր՝ պատմաբաններ, կամ այլ մասնագիտութեան տէր անձեր: Այս հանդէսներու ընթացքին իրենց մասնակցութիւնը բերած են ԱՄՄի անդամներ՝ ասմունքով, երգով, նուագով կամ պարով: Երբեմն արուեստագէտներ հրաւիրուած են Երուսաղէմէն, Պէյրութէն, Հալէպէն, յատկապէս Հայաստանէն, որոնք իրենց բարձրորակ կատարողութեամբ խանդավառութիւն ստեղծած են յորդանանահայութեան մէջ:

2) *Խմբային (թատրոն-նուագախումբ-պարախումբ-երգչախումբ) յարատեւ աշխատանքի արգասիք հանդիսացող գործունէութիւն.*

ԱՄՄէն ներս թատերական կեանքը իր զարթօնքը ապրած է յատկապէս 1970ականներուն, երբ հիմնուած է Յակոբ Պարոնեան Թատերախումբը: Վիոլէթ Լեփէճեանի, Սիլվա Հայրապետեանի, Լիպարիտ Ներսէսեանի եւ Արա Ոսկեանի առաջնորդութեամբ ներկայացուած են զանազան պատմական, երգիծական եւն. թատերախաղեր: Թատերախումբը աշխուժ գործունէութիւն ունեցած է գաղութի մշակութային կեանքին մէջ: Բազմիցս հիւրընկալուած է նաեւ Լիբանանի ՀԲԸՄ-ՀԵԸի Վահրամ Փափազեան Թատերախումբը:

Ամերիկահայ գրող Անդրանիկ Անդրէասեան Ամմանի մէջ, 1985

Նուրհան պատրիարք Մանուկեանի այցելութիւնը Ամման, 2013

Գարեգին Եպս. Պեքճեան, կողքին՝ թուրք գրող Քեմալ Եալչընն, 2004

- Պարբերաբար, ընդմիջումներով, միութեան երիտասարդ անդամներ քով-քովի գալով կազմած են էսթրատային սիրողական նուագախումբեր՝ հայ երգով խանդավառութիւն ստեղծելով յատկապէս միութենական խրախճանքներու ընթացքին:

- Միութիւնը կարճ ընդհատումներով ունեցած է իր Անդրանիկ Պարախումբը, գլխաւորութեամբ ԱՄՄի անդամներէն Գարեգին Քեֆէլեանի: Յաճախ պարուսոյցներ հրաւիրուած են Պէյրութէն, վերջին տարիներուն՝ Կարօ Տատաղլեան՝ Հալէպէն եւ Աննա Շահինեան՝

Հայաստանէն հրաւիրուած են որպէս պարուսոյց, իսկ խումբը վերանուանուած է Սպիտակ: Պարախումբի ելոյթները միշտ ալ յաջողութիւն արձանագրած են Ամմանի ներհայկական, Ճարաշի միջազգային եւ Հայաստանի համահայկական փառատօներուն:

- Միութիւնը ընդհատումներով ունեցած է նաեւ երգչախումբեր: Արմենակ Արմենակեանի գլխաւորութեամբ գործած է նոյնանուն խումբը (1980ականներուն): Իսկ 2010-15՝ միութեան Երեւան Երգչախումբի ղեկավարներ եղած են իրաքահայ Գառնիկ Սոսոյեան եւ Վարդուհի Թորոյեան-Ներսէսեան՝ Երեւանէն:

«Ո՞վ Է Ստախօսը» կատակերգութեան դերակատարները, 1978

Սպիտակ պարախումբը, 2014

դ) Մամուլ եւ հրատարակութիւններ

Անձնական նախաձեռնութեամբ եւ ներդրումով արդիական չափանիշներով տպարաններ ունեցած է գաղութը: Այս առումով կ'արժէ յիշել որ սկզբնական շրջանին, *Armenian International Magazine*ի (*AIM*) տպագրական աշխատանքներուն մէկ մասը կը կատարուէր Վարդանեաններու Ամմանի մէջ գործող տպարանին մէջ[5]:

ԱՄՄը ունեցած է *Անդրադարձ* ամսաթերթը, որ կը հրատարակուէր Հայկաւէտ Չքրլքճեանի խմբագրութեամբ (1993էն սկսեալ): Ապա, առաքելութիւնը շարունակած է Ներսէս Ներսէսեանը: 1993-2001ի ընթացքին լոյս տեսած է *Անդրադարձ*ի 45 թիւ: Միութիւնը ունի գրադարան, ուր կարելի է գտնել յատկապէս Խորհրդային Հայաստանի մէջ լոյս տեսած հրատարակութիւններ:

Յիշատակելի է 1995-2005՝ որոշ ընդմիջումներով

[5] *AIM*ի գունաւոր լուսանկարներուն գունային մշակումներուն (color separation) մէկ բաժինը կատարուած է "Moushuaka & Vartanian, Amman, Jordan" ընկերութեան կողմէ, թերթին երեւումէն մինչեւ 1991 Ապրիլ համարը ներառեալ:

կատարուած հայերէնի անվճար ուսուցման ձեռնարկը՝ Տիկ. Սօնա Ոսկեանի եւ Օր. Մարալ Ներսէսեանի նախաձեռնութեամբ:

Համագաղութային[6] գործունէութիւն ծաւալած են մտաւորականները, ինչպէս՝ բանաստեղծ Թադէոս Եսայեան (Ամման, 1941), Հայկաւէտ Չքրղքճեան (Եաֆա, 1938): Յուշագրութիւններու հեղինակ է Արաքսի Սարգիսեան-Վիզոյեան (Եաֆա, 1934--Այնճար, 2015), պատմուածքներու հեղինակ է Անահիտ Օշական-Ոսկերիչեան (Պուլկարիա, 1919--Ամման, 2005): Արաբերէն մանկագիր է Մարկօ Մալատչալեան (Քարաք, 1943):

Ձախէն երրորդը՝ Անահիտ Օշական, կողքին՝ Անուշ Նագգաշեան, 1998

ը) Ընկերային կեանք

Ընկերային կեանքը աշխուժ եւ հայ համայքի անդամները համախումբ պահելու նպատակաւ յաճախակի հաւաքներ կը կազմակերպուին ԱՄՄի ամառնային զբօսավայրին մէջ, ուր յատկապէս տօնական օրերուն եւ ամռան Հինգշաբթի երեկոներուն, ընտանեկան հաճելի մթնոլորտէն կ'օգտուին յորդանանահայերը: Պէտք է յիշել յաջորդական Տիկնանց Յանձնախումբերը, որոնց կազմակերպած *փոհմիկ օր*երուն, *կաղանդի պազար*ներուն վաճառքի կը դրուին իրենց պատրաստած աւանդական ճաշերը: Գոյացած հասոյթը կը յատկացուի ակումբի գործունէութեանց կամ բարեսիրական նպատակներու:

[6] Համագաղութային ձեռնարկներէն յիշատակելի են մանաւանդ՝ յորդանանահայ համալսարանաւարտներու եւ երկրորդական վարժարաններէ շրջանաւարտներու իպատիւ, ինչպէս նաեւ Եղեռնի յիշատակին նուիրուած ձեռնարկները: Վերջինիս պարագային գլխաւորաբար խօսք կ'առնեն Սփիւռքի տարբեր հայօճախներէ հրաւիրուած մտաւորականներ: Այս ձեռնարկները կը կազմակերպուին Յորդանանի հայօճախին բոլոր միութիւններու միացեալ գործակցութեամբ (հիւրի ընտրութիւնը կը կատարուի փոփնիփոխ ԱՄՄի եւ ՀՄԸՄի կողմէ, եթէ հիւրընկալողը ԱՄՄն է ապա հանդիսութիւնը տեղի կ'ունենայ ՀՄԸՄի սրահին մէջ եւ հակառակը: Գեղարուեստական յայտագիրին կը մասնակցին Ազգային Իւզպաշեան-Կիւլպենկեան Վարժարանի աշակերտները եւ երկու ակումբներու անդամներ: Ձեռնարկը կը հովանաւորէ Յորդանանի Հայ Առաքելական Եկեղեցւոյ առաջնորդը, որ նաեւ ի պաշտօնէ կը հանդիսանայ պատրիարքական փոխանորդը):

ԱՄՄԻ ԿԱՌՈՅՑԸ ԵՒ ՓՈԽՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆԸ ՊԵՏՈՒԹԵԱՆ ՀԵՏ

ԱՄՄն ճանչցուած է պետութեան կողմէ: Վարչութեան ընտրութիւնը կը կատարուի երկամեայ դրութեամբ: Տարեկան ընդհանուր անդամական ժողովին, պետական պատասխանատուներու ներկայութեամբ կը կարդացուի եւ կը վաւերացուի միութեան նիւթաբարոյական տեղեկագիրը: Պետութիւնը տարբեր առիթներով իր նիւթական օժանդակութիւնը կը բերէ յատկապէս մշակութային կեանքի զարգացման համար տարուող աշխատանքներուն:

Իշխանուհի Ալիա՝ շրջապատուած ԱՄՄի պատասխանատուներով, 1988

Իշխանուհի Սամա եւ ատենապետ Յակոբ Սերփէքեան, 2016

ԱՄՄԻ ԿԱՊԸ ՀԱՅՐԵՆԻՔԻՆ ՀԵՏ

ԱՄՄի փոխյարաբերութիւնները միշտ ալ սերտ եղած են Հայաստանի պետական մարմիններու հետ:

Արդարեւ, Պաղ Պատերազմի շրջանին, Սփիւռքահայութեան Հետ Մշակութային Կապի Կոմիտէի հետ ԱՄՄի հաստատած յարաբերութեան շնորհիւ մեծաթիւ հայ երիտասարդներ մեկնեցան հայրենիք՝ բարձրագոյն ուսում ստանալու:

Միութիւնը բազմիցս Յորդանան հրաւիրեց հայրենի գեղարուեստական այլեւայլ խումբեր եւ անհատ արուեստագէտներ, որոնք իրենց պարային, երգային թէ արուեստի այլ ելոյթներ ունեցան արքայական սրահներու մէջ: Բազմաթիւ խումբեր մասնակցեցան Ճարաշի եւ այլ մշակութային միջազգային փառատօներու:

1989ի երկրաշարժի օրերու համագաղութային նուիրահաւաքին զօրաշարժի ենթարկուեցաւ նաեւ ԱՄՄի անդամաշարքը՝ օգնութեան հասնելու համար երկրաշարժէն տուժած հայրենակիցներու անմիջական կարիքներուն: Նման այլ օգնութիւններ կատարուած են եւ կը կատարուին Արցախին առնչութեամբ, յատկապէս՝ զոհուած ազատամարտիկներու ընտանիքներուն:

Հայաստանի Գ. Հանրապետութեան հռչակումէն ետք եւս ԱՄՄը շարունակեց իր աւանդական գործակցութիւնը՝ հայրենի իշխանութեան հետ, ապա նաեւ ՀՀ Սփիւռքի նախարարութեան հետ սերտ կապեր

մշակելով հիւրընկալեց ՀՀ քաղաքական, ազգային եւ արուեստի գործիչներ:

Հայաստանի Հանրապետութեան պաշտօնատարներ Ամմանի մէջ, 1994

ԵԶՐԱՓԱԿՈՒՄ

ԱՄՄիութիւնը իր պատմութեան ընթացքին ունեցած է վերելքի շրջաններ եւ վայրէջքի պահեր՝ ազդուելով եւ արտացոլելով շրջանի աշխարհաքաղաքական վիճակը: Ներկայիս, ինչպէս այլ հայօճախներ՝ յորդանանահայութիւնն ալ կը դիմագրաւէ թէ՛ արդի աշխարհի պարտադրած նոր պայմաններու դժուարութիւնները եւ թէ՛ հայրենիքէն հեռու գոյատեւող հայկական գաղութներու տագնապները:

Անոնցմէ աւելի հրատապ են.-

ա. Հայաստանէն շրջանաւարտ աւագ եւ միջին տարիքի սերունդներուն յաջորդող նորերու բացակայութիւնը:

բ. Ներկայիս, յորդանանահայ երիտասարդներու մեծամասնութիւնը Յորդանանի տարբեր համալսարաններէ շրջանաւարտ է: Շատեր հայերէն կը խօսին, սակայն հայերէն գրել-կարդալ չեն գիտեր եւ նուազ առնչուած են յորդանանահայ միութենական կեանքին:

գ. Ոչ-հայկական միջավայրի մէջ ուսանելու եւ աշխատելու պատճառաւ խառնամուսնութիւններու թիւը բազմապատկուած է:

դ. Եթէ նախապէս Էշրեֆիէի լեռան շրջանին համախմբուած էին հայերը, ներկայիս տարածուած են Ամմանի գրեթէ բոլոր բնակելի նորակառոյց շրջաններու մէջ:

ե. Ազգային երեք կառոյցները (եկեղեցի-դպրոց-ակումբ) կը գտնուին Էշրեֆիէի Հաթէմ Էլ Թաիի փողոցին վրայ, մինչ հայութեան մեծամասնութիւնը կը բնակի այլ թաղամասերու մէջ, յառաջացնելով փոխադրական դժուարութիւններ:

զ. Յորդանանահայութիւնը միշտ ալ դիմագրաւած է արտագաղթի խնդիրը: Իսկ դէպի Յորդանան հոսքը Լիբանանէն, Սուրիայէն կամ Իրաքէն գրեթէ դադրած է սուրիական պատերազմի եւ շրջանային քաղաքական կացութեան բարդացման հետեւանքով:

Այս բոլոր արգելքներուն եւ դժուարութիւններուն դիմաց նշմարելի են նաեւ դրական գործօններ.-

- Համագաղութային աւելի սերտ յարաբերութիւններու մշակում:

- Բնիկ յորդանանցիներու հետ համարկում: Արդարեւ, մեծ թիւով հայեր ընդգրկուած են Յորդանանի արաբական միջավայրին մէջ:

- Պետութեան տարբեր օղակներու մէջ պատասխանատու դիրքերու ստանձնում, շնորհիւ երիտասարդներու արաբերէն լեզուի լաւ իմացութեան:

The Amman Watani Club
(Summary)

Rosette Alemian-Mahseredjian
Rose2alem@yahoo.com

The Jordan Armenian community took shape after the 1915 Genocide, when a number of Armenians exiled to Der Zor took refuge in different towns and cities in Jordan. Later, as a direct result of the 1948 Palestine crisis, new conditions evolved in the community, and large numbers of Armenians from Palestine took refuge in the cities of Jordan, settling particularly in Amman. The post-1948 period marked extensive efforts by the Armenian Patriarchate of Jerusalem in organizing and shaping the Jordan Armenian community, as the Amman Prelacy was within its jurisdiction.

In 1955 the Amman Watany Club was founded.

The paper focuses on the sixty-year track record of the Club, its activities, sports and cultural achievements, the activities conducted to preserve and maintain Armenian identity within the community.

As the community was located in a relatively stable and peaceful political environment, it extended a helping hand to Armenians of neighboring states devastated by civil war and turmoil.

The Club made good use of its strong relations with the Committee of Cultural Relations with the Diaspora, and invited and hosted Soviet Armenian cultural figures and authors. Their presence created an aura of Armenian patriotism, which maintained and underpinned Armenian cultural preservation policies and consolidated Armenian identity in the community.



The deportation route to the south (*Chomakhlou*, page 154)

The Descendants of Armenian Women in South Jordan

Anna Ohannessian-Charpin
anna.nonig@yahoo.fr

Thelteyn al walad la khalou
(Two-thirds of a child belong to his maternal uncle)

INTRODUCTION

Aleppo's role as a "clearing station"[1] from where Armenian deportees were pushed to places further into the eastern desert or southwards is well known. The town of Daraa on the southern border of Syria was another halt after Aleppo, where deportees were dispersed into the Arabian Desert, into areas of what was soon to become the Kingdom of Transjordan. Indeed, Armenians from the regions around Kesab and further north were deported into the Jordan Valley and stayed for some years in villages like Fheis, Salt and the town of Amman.[2] Other groups coming from more distant areas halted in Jarash and its surroundings. In the North, they stayed in Irbid, Hosn and Wadi Sir, while other groups were forcibly moved further to the South. Tafileh, with its Turkish garrison, had become a major station for deportees coming from Marash, Adana, Gurun, Mardin, Hadjin, Diarbekir and elsewhere. The Hidjaz Railway carried others into the southern arid areas, where groups of Armenians were dropped off the train at each stop and were conducted to the nearby settlements.

---

[1] "Memorandum on Relief Work that May Arise Out of an Armistice with Turkey," the National Archives, Political Intelligence Department, Foreign Office. Turkey /008, Oct. 30, 1918.

[2] Krikor Kudulian, *Garmir Noter Darakri Giankes. Port Saïd, (Haygagan Kaghtavayr)* [Red Notes from My Deportee Life: Port Saïd, Armenian Refugee Camp], Egypt, 1919. Kudulian gives the numbers of families or individuals arriving from different areas or villages on pages 24-9.

The 1918 Memorandum on relief mentions that about 25,000 Armenians are known to have passed through Aleppo in 1915, and to have been left at various points along the Hidjaz Railway as far south as Maan. With the Arab Revolt, these southern areas were liberated, and the Armenian survivors were rescued in the course of British and Arab operations. They were evacuated and sent mainly to the refugee camp of Port Saïd and others to Jerusalem.[3]

One of our sources on the deportations to Jordan is testimonies the survivors recounted years after their liberation. These testimonies represent important sources to understand and visualize the difficulties Armenians faced in their everyday life and in coping with local conditions as well as the relationships they established with the local inhabitants and the harsh life both faced with famine, epidemics, war and death. The testimonies also provide important information on village life in these remote areas, novelties Armenians brought in the fields of agricultural products, languages, schooling and education, as they played also the role of intermediary between the local Arabs and the Turkish garrisons.

These testimonies are quite numerous. They clearly show how the deportations were intended to send Armenians to their death. It was a "death march" accounts Stepan Dardooni.[4] The conditions the Ottoman authorities imposed, the penalties they gave, like cutting access to water, obliging the exiles to move every time they somehow established themselves, following them to remote villages and forcing them to convert to Islam, show how all this was planned, organized and monitored. If the number of deportees on their arrival in the summer of 1915 was in the thousands - as mentioned in the Memorandum - on their departure or arrival in Port Saïd in 1918 they numbered sometimes in the hundreds and often in the tens.

These testimonies, however, give little information about those who stayed or were left behind. They barely mention young girls who were married to local Arabs and had become part of other families or tribal groups and did not join the returnees to Port Saïd or Jerusalem. Hardly do they mention orphans adopted by local families.[5]

---

The last level of this article is more subjective and personal although it is of common interest to all Armenians as our topic is directly related to that of Islamized Armenians, and us, Armenians, who include in our identity definition Christianity as a starting point. We all know very well that the number of Islamized Armenians is very high in Turkey and that now, even whole regions and villages are discovering their Armenian origins or claiming Armenian descent.

The fenced area where Armenians were buried between 1915 and 1918 (photo A.O.-C.)

On the other hand, we all know also the efforts made starting from the 1918s in gathering children, women, and orphans often Islamized, giving them an Armenian education and preparing them to be vital elements of the Armenian Nation. In all the testimonies, we come across the efforts made by the refugees and deportees to preserve this identity, which again can be considered as a survival strategy.

We all know the efforts put forth by Armenian leaders and public figures in trying to *reconstruct* this Nation. We all know, especially in the Diaspora, that this national reconstruction rests on certain pillars out of which and among others, language, religion, common history together with the memory of the Genocide are considered the bases of Armenian identity.

Therefore, the question put to us, Armenians, is: what do you do when in the middle of a desert-town a Bedouin sits in front of you and says "my mother was Armenian" and puts the issue on such a symbolic level that he calls you "*kéri*"?

When ethnology/anthropology became a "social science" its main objective, or its moto, was to understand oneself through the understanding and the comprehension of the other. In this manner, my first attempt was to consider this group as the 'other' and treat this topic as the anthropological 'other', understand the other and reconstruct this other with the help of anthropological theory. In this context, understanding this 'other' needed an understanding of the tribal system, the *ibn-'amm* marriage, and how Bedouin

tribes construct their common foundation myths and apical or founding ancestors.

At the same time, I wanted to witness and narrate what has happened. Witnessing is another important act in anthropological research.

While both theorizing and witnessing give a certain understanding of the other and help construct this other, they fail to give any answer to the above-mentioned question, namely "What do you do? How do you react?"

Here, in this context, I am not only the observer, I am not only the scientist who constructs an explanation... here, I am involved in the explanation and am part of it, because then, I have to change the very basic pillars of my identity.

While preparing this paper, I went through my notes and my field diaries. Here is what I had written then:

> In ethnology, can we still talk of objectivity? In this situation, objectivity is impossible.
>
> After having spent months with the Bedouins, in their mud-brick houses or black tents, I am now in Maan. This town, that still bears witness of recent history, of the Ottoman Empire, of Lawrence and the Hidjaz Railway. Paradoxically, I feel at home.... My Armenian home. But, the obsession of objectivity is ever present and so I look for details to explain to myself why do I feel at home. And, I find many details! For example, these stools that are formed by egg cardboards put one on the other, that we find everywhere in the South. Here, at Zohra's, Dakhlallah's or Mohammad's houses these stools are dressed with a cover. All the chairs have small cushions and there are curtains. There is a certain harmony.
>
> And then there are the faces, round and white faces of women, daughters or granddaughters of Nvart, Hayganush, Araksi, Nora, Anna and Anna, Homossine, Levontine, Mariam-Toros, Nazéli, Khanem, Mayréni, Polor/Flor, Loussia.[59]

[59] The daughters of Anna who was the daughter of Sarkis Hamamjian and was married to Mardo Dinkjian (from Severeg-Diarbekir): Loussia, Hayganush and Nvart are married to members of the Abu Drewish and Levontine married to a membre of the Khreishan tribe. Anna's son, Artine was married to Zohra who was the daughter of Mariam-Toros. Mariam-Toros was married to an Abu Drewish.

Anna (known to have been acquainted to the hero Serop Aghpur) was married to an Abbadi and her daughter, Gharibé married a member of the Abu Drewish. Homossine, daughter of Hagop Ajemian from Chomakhlou, was married to a member from the Al Rawadh. Nazéli Ouzounian from Chomakhlou married to Abd el Dayem. Araksi Omartian from Chomakhlou married to an Abu Drewish. Her three brothers, Drtad, Apraham and Artine were in New York. Khanem, daughter of Manam and Garabed Matiossian from Chomakhlou, was married to an Abu Drewish. Mayréni Kizirian, daughter

Daughters of Armenian women and descendants of Armenian women
(photo A.O.-C.)

Հայ Կանանց Յետնորդներ Յորդանանի Հարաւը
(Ամփոփում)

Աննա Օհաննէսեան-Շարփէն
anna.nonig@yahoo.fr

Դաշտային հետազօտութիւններու բերմամբ Յորդանանի հարաւը կատարած իր այցելութիւններուն ընթացքին հանդիպած հայ կանանց յետնորդներու մասին է այս հետազօտութիւնը, ուր հեղինակը ընկերաբանութեան տեսաբանական դրոյթներով կը վերլուծէ Ա. Աշխարհամարտի զինադադարին ծննդավայր վերադարձող հայ խլեակներուն ետին մնացած եւ Յորդանանի հարաւի ցեղախումբերու կողմէ որդեգրուած-ամուսնացած հայ որբերու եւ որբուհիներու կենսագործունէութիւնը:

Ուսումնասիրութիւնը լուսարձակի տակ կ'առնէ այս մնացորդացին ընդգրկումը տեղաբնիկներուն մէջ եւ ընտանեւորումն ու սերնդագործումը՝ անապատային թափառիկ թէ նստակեաց ցեղախումբերու սովորութիւններու, ապրելակերպի, կենցաղի ու աւանդութիւններու թնճուկին մէջ: Այս հայ որբուհիները կը դառնան երկրորդ, մինչեւ իսկ 17րդ կին, իսկ աւելի բախտաւոր պարագաներու՝ կ'ընտանեւորուին իրենց նման ոչ-տեղաբնիկ ընտանիքներու զաւակներուն հետ: Եւ քանի որ մահմետականութիւնը կ'արտօնէ մօտիկ հարազատներու ամուսնութիւնը, ապա անոնց զաւակները կ'ընտանեւորուին իրարու հետ, եւ թոռները նոյնպէս՝ յառաջացնելով թէ՛ մօրենական եւ թէ՛ հօրենական հայկական ծագումով չորրորդ սերունդ մը անապատային այդ մնացորդացին:

of Gulizar and Hagop Kizirian was married to Abdel Ghani. Polor Assdourian, daughter of Dzeroun (probably from Zeitoun) was married to Ghneymi. And Nouri, daughter of Baydzar and Neshan Assadourian married to Glayyel Suleyman.

Վերլուծութիւնը կը կատարէ նաեւ այս յետնորդներուն արենակցական կապի վերականգնումին պատումը, երբ կապ կը հաստատուի եւ փոխայցելութիւններ կը կատարուին մնացողներուն եւ Լիբանան-Մ. Նահանգներ-Աւստրալիա-այլուր բնակող անոնց քոյր-եղբայրներու, մայրերու եւ անմիջական հարազատներու միջեւ, որով անապատային այս ցեղախումբերը այս յետնորդները կ'առնչեն պորտակապային արմատներու, թէեւ կը մնայ տակաւին անոնց մտքին մէջ շփոթը՝ հայու, Հայաստանի, հայրենիքի աշխարհագրական ընդգրկումին եւ այլ երեսակներու, իսկ այս յետնորդներուն մէջ՝ խաչաձեւումը ինքնութեան, կրօնքի, արմատներու եւ այլ երեսակներու...:

Armenians in the North and South of Jordan

Aline Bannayan
alinebb@yahoo.com

It is very rare to talk of Armenians who fled the Genocide and discuss the little known towns in Jordan as their place of settlement. For a Jordanian-Armenian who grew up in the capital, Amman, stories of survival have sprung up in the most unexpected areas in the past seven years since I started further researching this issue.

While I was translating at a training workshop for teachers in Jordan, I was approached by a lady who inquired about my name. The moment I said I was Armenian, the woman's eyes seemed to brighten with tears. Little did I know that the woman, wearing a headscarf, was of Armenian descent as well. "My grandfather was Armenian," she said, "He fled the Genocide." It was a total surprise for me. The lady was from Shobak, a town in the south of Jordan, three hours away from the capital. Amneh Shqeirat told me of her grandfather, and how he and three other boys ended up in Shobak, while others were dispersed in Tafileh, Maan, Wadi Musa and who knows where else. All these towns are in the vast expanse of Jordan's southern desert.

Bedouins and tribes live in the area where Armenians, mostly women and children, arrived on trains heading south on the Hidjaz railway line. Wherever they disembarked, they were taken in by tribes. On the other hand, most, suffering from disease and malnourishment, never made it alive to nearby towns. When driving south on the way to Maan and Shobak, I cannot but think of the hardships these survivors faced. Having witnessed horrible tragedies along the way, children and, most of all, women arrived these desert terrains with no shelter and no idea of the language spoken. They had to live in the harshest of conditions and adapt to a way of life that was totally alien to them. I always wonder how some of them actually made it.

For Arab Jordanians and those of Armenian descent as well, and apart from the community that later existed in the capital, not much is known of the Armenians in Northern and Southern Jordan. Not much has been recorded of the survivors who made it in the deserts of Jordan, and most of these are hidden stories of survival. The first and nearly all second-generation eyewitnesses have passed away. Most of their stories and belongings have now vanished. However, upon encountering any of their descendants, you feel their stories come to life again, and you can feel their urge to proudly tell of their ancestors' plight and point it out to yet another community member of "Armenian descent."

These descendants and others in these areas still talk of the Armenians' will to survive *Majzarat Al Arman* (the Armenian Massacres). They are also a living testament to the Arab families, who took in the refugees, who then became part of their families and now carry their names. They are noteworthy stories of survival.

In this paper, I will attempt to shed some light on the Armenians who settled in the south, particularly those in Shobak, and touch upon those who briefly lived in the North of the country, mainly in Jarash, as noted through the memoirs of a survivor.

What is under discussion today is the arrival of Armenians who came between the years of 1915 and 1918 to different parts of what is now the Hashemite Kingdom of Jordan. The cities and areas to be discussed are not as well-known as Der Zor or Raqqa - the vast deserts where hundreds of thousands of Armenians lost their lives.

A quick glance will point out that pre-1915 Armenian immigrants settled in the Jordan Valley -- Jordan's food basket -- bringing with them innovations in agriculture and irrigation. Before Trans-Jordan came into existence later in the early 1920s, there were small Armenian communities in different areas in towns like Karak and Zarqa, while waves of immigrants who arrived after the 1948 and 1967 Arab-Israeli wars inhabited the main cities of Amman and Salt. While these are the well-known towns, not much is known of the villages in the North and deserts of the South of the Kingdom where 1915 Genocide survivors were scattered.

Armenians, mostly from Sassoun and Kilis, seem to have settled in Jarash; however, most of those who survived left three years later. Their harrowing journey and stay near the ancient Roman ruins was recorded in Vahram Dadrian's book.[1] Suffering from pillage, hunger and sickness, and inhabiting the caves in the area, they lived through inconceivable hardships. According to Dadrian, up to 20,000 Armenians arrived in Jarash during the Genocide, but by the end of 1917 there were only 1000. He and most others, less than 450 people, left in 1918.

No Armenians live in Jarash nowadays. However, the remains of water mills built and renovated by Armenians still stand and are a testament to the Armenians who passed through the area in one of the best preserved Roman cities in the Decapolis - Jarash.

Dadrian's diary starts in May 1915. It reports the daily suffering of the deportation convoys which was intended to destroy the Armenians in the Ottoman Empire. Most were killed in locations along the route, and the US

[1] Vahram Dadrian, *To the Desert: Pages from My Diary*, translated from the Armenian by Agop J. Hacikyan, Gomidas Institute, Princeton.

consul in Aleppo, Jesse B. Jackson estimated those arriving in Aleppo at 15% of the original number.[2] By 1916 around 500,000 survivors in Syria were pushed towards Der Zor, where most perished. Around 130,000 were sent south of Aleppo, 100,000 of whom reached Damascus, Maan and Jarash.[3] The Dadrians were among those "lucky ones."

Famine and disease cut the number of arrivals. Dadrian describes the tension with local Arab, Circassian and Bedouin communities as mainly due to economic hardships. The people in the area already lived in impoverished conditions, with poor accommodation, very little work and the aftermath of Ottoman rule and the subsequent withdrawal of troops. Also, continuing war conditions in the area along with the arrival of these refugees, who had to find ways of earning a living in such meager conditions compounded destitution.

Armenian women were forcibly married in nearby towns and villages near the northern Jordanian border like Daraa (now in Syria) as well as in towns like Irbid, Shatana and Rumman.

By 1918, only about 450 survived the persecution, murder, kidnapping and plunder. With the defeat of the Ottoman army and the arrival of British troops during the Great Arab Revolt, and while other survivors were regrouping in Beirut and Aleppo, those Armenians remaining in Jarash left in November 1918 and headed to the city of Salt on foot before moving on to Jericho, and then briefly taking refuge around St. James Monastery in Jerusalem.

Dadrian's words portray their journey out of Jarash:

> While passing the site of the ruins [of Jarash] we looked for a long time at all the mounds of earth under which lay the bones of our compatriots. For a moment we visualized thousands of families from Marash, Aintab, Zeitoun, Adana, Sis, Caesaria, Chorum and elsewhere, with whom we were once acquainted. We had shared each other's fates, until one day they were wiped out of our lives as if in a dream.[4]

By May 1919, after staying in Jerusalem, some Armenians tried to get it to Constantinople, hoping to eventually make it to Armenia. They were put on a ship from Beirut to Alexandretta, or Iskenderun, and in June they arrived in Constantinople. Of Dadrian's 13-member family, five made it back.

---

[2] US Consul in Aleppo, Jesse B. Jackson, to US Ambassador to Turkey, Henry Morgenthau: National Archives, Record Group 59, decimal file 867, 4016/219.

[3] Jesse B. Jackson to Henry Morgenthau. National Archives, Record Group 59, decimal file 867, 48/271.

[4] Dadrian, p. 278.

One story from Jarash is of a leading miller who brought his profession to his new homeland. Khatcho Ohanian was born in Sassoun in 1866. With his wife Yeghsapet, from Kilis, he stayed on in Jarash, from where his surviving granddaughter Sirvart Kurkunyian-Karmandarian, moved to Amman in 1932. Sirvart notes that her grandfather, like others who brought with them their original professions, had a watermill, and he used to go to Jarash to work during the years after *Mathanet Khatcho el Armani* (the mill of Khatcho the Armenian) the family moved to Amman. It is still known as *Mathanet Khatcho el Armani*. From what is known he closed the mill around 1949 for health reasons.

Khatcho Ohanian's family members are the only Armenians originally from Jarash now living in Amman. Destined to be displaced over and over, his other descendants, now in Canada, still have a carpet which their great grandmother brought with her from Sassoun. They also mention having kettles and plates made of copper and combs made out of wood and ivory, which their grandfather used to make in Jarash.

On a visit with a Circassian guide, you come across Khatcho's mill still standing near the entrance of the North Gate in Jarash. It is one of seven surviving mills rebuilt with Roman stones and operated by Armenians. Some have disappeared, and most people in the area do not know what they are or who owned them.

Remnants of a mill

The caves in Jarash

In addition to the mills, one can see numerous caves in the vicinity. This is where Armenians took refuge when they first arrived near the Roman ruins. When an Armenian reads Dadrian's book and sees these caves and mills in person, they cannot but re-live the ordeal of living and look in awe at the mills which still stand. The

Jordan Department of Antiquities needs to be notified of the story behind these ancient mills, lest they are destroyed in the future.

SURVIVORS IN THE SOUTH

It is a different story in the south, where Genocide survivors were put on the Hidjaz train and dumped in Jurf Al Darawish, from where they made their way to the town of Tafileh in the south. People still talk of *Bir Al Arman*, a water well where the sick and dying were buried *en mass*. Some others made it to the town of Maan. Since first being identified in the late 1980s, third and fourth generation descendants, interviewed and visited by me since 2009 and by Dr. Anna Ohannessian-Charpin fondly and somberly remember their grandmothers' plight, stories, rituals and distinctive cooking.

Most Armenians who made it far south never made it back north like the Armenians of Jarash. Very few were located by relatives and left for Beirut and Damascus. The majority, mostly women, who were taken in and adopted by tribes in the area eventually could not leave their children behind. Most remained true to their faith and were buried with their bibles, while some who were very young, especially boys, grew up as Muslims.

It was the Genocide survivors again who brought another profession to the area. Armenian stonemasons and builders built the first houses in the region. Very few made it alive to towns like Shobak, where most were buried in a cemetery named *Maqbarat Al Arman Al-Nasara* (the Christian Armenians' cemetery). A few others made it to Wadi Musa, where Jordan's World Heritage Site, Petra, is located.

According to his grandchildren, after his parents died and were buried in the Shobak castle, Armenian Peno was adopted by a leading tribesman, Salama Musa. He was renamed Abdullah Muhtadi by his adoptive father, who brought him up alongside his three other sons. "There was some tension in the tribe that a fourth son would now share the inheritance," but his father put it to rest, and Abdullah grew up to be the most respected trader and mason in Shobak. It is reported that he spoke Armenian fluently when he met fellow Armenians passing through the region. Abdullah is described as "a man of his word. Always respected, always sought for council."[5]

It is indeed amazing to find grandchildren who never saw their Armenian grandmothers and grandfathers feel so proud of their ancestry after 100 years. They have not grown up as Armenians, but are well aware of the harrowing journey of survival. They are keen and interested to hear of Armenian traditions, cooking and the ancestral homeland. They humbly take note of their ancestors having been different, having had input in their new

[5] My interview with his grandson.

communities, having been respected as community members, and having been hardworking and loving mothers who gave some of their children Armenian names like Baidzar (now pronounced Bezar), Hripsimeh (now pronounced Fahimé) and Gharibé (meaning stranger) as per their status. Grandchildren remember some nursery rhymes and their distinctive cooking which was, of course, different than the neighbors'. They also remember the preparation of foodstuffs for winter, like in their homeland, a practice that is alien to those living in the desert.

CONCLUSION

The hidden stories of Shobak, Tafileh, Maan and Jarash are in the process of being further researched, archived and published. Spotting the caves of Jarash or driving parallel to the Hidjaz railway down the desert highway from Amman to the south, one can only reflect on how tens of thousands perished and the great difficulties that awaited those lucky enough to survive and adapt to harsh living conditions so as to continue to exist. For their grandchildren they are all heroes.

Յորդանանի Հիւսիսի եւ Հարաւի Հայերը (Ամփոփում)

Aline Bannayan
alinebb@yahoo.com

Հայոց Ցեղասպանութեան խլեակներու Յորդանան աքսորի յենքին վրայ, զեկոյցը կը ներկայացնէ Ա. Համաշխարհային Պատերազմի զինադադարին ծննդավայր վերադարձէն ետք Յորդանանի հիւսիսը եւ հարաւը՝ Շոպաք, Ճարաշ, Մաան եւն. վայրեր մնացած փոքրերու յետնորդներուն ինքնութեան գիտակցումն ու արծարծումը:

Զեկոյցը յետադարձ հայեացքով տեղաբնիկներուն յուշերուն հիմամբ կը վերականգնէ վերոյիշեալ մնացորդացին արհաւիրքները՝ ցեղասպանութեան տարիներուն եւ այնուհետեւ անոնց կենսագործունէութիւնը, սերնդագործութիւնը եւ յետնեալ սերունդներուն ընկալումը՝ անոնց:

Փոքրապատում ՀԲԸՄ Ամմանի (1929-55), Ռըսէյֆայի (1939-61), Զարքայի (1941-59) եւ Քարաքի (1941-46) Մասնաճիւղերու

Անդրանիկ Տագէսեան
adakessian@haigazian.edu.lb



Ստորեւ հրատարակուող նիւթը կը ջանայ փոքրապատումը կատարել Ամմանի, Ռըսէյֆայի, Զարքայի եւ Քարաքի[1] հայօճախներուն ՀԲԸՄի մասնաճիւղերուն:

Ամման (1929-55)

20 Ապրիլ 1929 թուակիրով ՀԲԸՄ Եգիպտոսի Շրջանակային Յանձնաժողովը (ԵՇՅ)՝ մեկնելով ՀԲԸՄ գործիչ Վեր. Հ. Խանդամուրի տեղեկութենէն թէ ամմանաբնակ Տոքթ. Հ. Եարտըմեան եւ Մ. Յարութիւնեան անդամագրուած են ՀԲԸՄին եւ սիրայօժար յանձնառու են Ամմանի «փոքրաթիւ գաղութին» մէջ գործելու իբրեւ ներկայացուցիչներ, անոնց կը ղրկէ անոնց անդամավճարներուն ստացագրերը եւ կը թելադրէ անդամագրել 10-15 հոգի Ամմանի մէջ, որպէսզի ըստ կանոնագրի կարելի ըլլայ մասնաճիւղ հիմնել:

[1] ՀԲԸՄ Գահիրէի արխիւին մէջ կը պահուին Ամմանի հայօճախին վերաբերող շուրջ 330 էջ հաշուող եւ 20 Ապրիլ 1929-3 Յունուար 1955 շրջանն ընդգրկող թղթապանակ մը, Ռըսէյֆայի հայօճախին վերաբերող 252 էջ հաշուող եւ 2 Մարտ 1939-21 Հոկտեմբեր 1961 շրջանն ընդգրկող թղթապանակ մը եւ Զարքայի հայօճախին վերաբերող 19 էջ հաշուող եւ Դեկտեմբեր 1941-27 Յունուար 1959 շրջանն ընդգրկող թղթապանակ մը (վերջինիս պարագային՝ բացի մէկէն բոլոր նիւթերը կը վերաբերին 1941-43 շրջանին): Ասոնք համարատուութիւն, ՀԲԸՄ Եգիպտոսի Շրջանակային Յանձնաժողովին հետ փոխադարձ նամակագրութիւն եւ սահմանափակ թիւով անձնական նամակներ են: Այս հետազօտութիւնը կազմուած է ամբողջութեամբ այդ նիւթերուն հիմամբ: Օգտուած ենք նաեւ իւրաքանչիւր թղթապանակի մէջ միւս մասնաճիւղերուն վերաբերող ակնարկութիւններէն:

Խորապէս շնորհակալ ենք Եգիպտոսի Շրջանակային Յանձնաժողովին, որ մեզի թոյլատրեց օգտագործել այս նիւթերը:

Հակառակ սկզբնական խանդավառութեան, մասնաճիւղը չի յառաջանար, մինչ ԵՇՅն «ակնդէտ» արդիւնքներու կը սպասէ, մանաւանդ որ «Ամմանի մէջ... ներկայիս ... բաւական թիւով հայեր բնակութիւն հաստատած են ու տնտեսապէս լաւ պայմաններու մէջ կը գտնուին»:

Երկար դադարէ ետք, ԵՇՅն 25 Ապրիլ 1936 թուակիրով կը գրէ Ամմանի մէջ Միութեան մասնաճիւղ մը կազմելու «սիրայօժար տրամադրութիւն յայտնած» Սերոբ Անթիքաճեանին[2], թելադրելով «հիմնադրական ժողովի հրաւիրել գաղութիդ այն անդամները որոնք կը փափաքին անդամակցիլ միութեան եւ ընտրել 5-7 անդամներէ բաղկացեալ մասնաժողով մը...»: Սակայն, մասնաճիւղին հիմնումը դարձեալ կը յապաղի. 14 Նոյեմբեր 1937 թուակիրով Անթիքաճեան կը յայտնէ թէ կարգ մը խորհրդակցութիւններու իբրեւ արդիւնք, առայժմ որոշուած է յետաձգել կազմութիւնը, քանի որ «Պաղեստինի ... խռովայոյզ վիճակ»ին[3] պատճառով «անստոյգ կացութիւն» մը յառաջացած է Ամմանի մէջ եւ թէ՝ «համարձակութիւն չէինք ունեցած ձեռնարկելու» ու կ'առաջարկէ որ մասնաճիւղին կազմութիւնը սպասէ «մինչեւ որ անցնին ներկայի փոթորիկն ու անստոյգ օրեր»: 18 Նոյեմբեր 1937 թուակիրով ԵՇՅն կը հակադարձէ թէ Պաղեստինի «խառնակութիւնները ... արգելք չեն եղած Միութեան Երուսաղէմի, Հայֆայի եւ Եաֆայի մասնաճիւղերուն գործունէութեան» կանոնաւոր շարունակումին[4], եւ կ'առարկէ թէ «այժմ կորիզ մը գոյութիւն կրնայ առնել, սպասելով աւելի լաւ օրերու, զայն ընդարձակելու նպատակաւ»:



Շուրջ տարի մը ետք, 23 Նոյեմբեր 1938ին ԵՇՅն դարձեալ կը գրէ Անթիքաճեանին, յայտնելով թէ դիմած է նաեւ

[2] Անթիքաճեան տէրն էր Ամմանի The National Garage (arranges tours to all places Baghdad, Syria, Palestine, հեռ. 14, նամակատուփ 55, հեռագրահասցէ՝ Serop) ընկերութեան:

[3] Պաղեստինի ճակատագրին վերաբերող տարածայնութիւններ խլրտումներ կը յառաջացնեն - 1936-39 տեւողութեամբ - տեղացի արաբներու մօտ:

[4] ԵՇՅին համար ուշագրաւ պիտի ըլլար ՀԲԸՄի տարածումը արաբական արեւելքին մէջ, ուր արդէն 1910ին հաստատուած էին մասնաճիւղեր Պէյրութի եւ Հալէպի մէջ, մինչ արաբական խորքի տարածքներ կը դանդաղէին: Նման տարածում մը պիտի ծանուցուէր Միութեան ամսական տեղեկագրին մէջ եւ ծառայէր իր փրոփականտին:

Անդրյորդանանի հոգեւոր հովիւ Յակոբ Քհնյ. Մավեանին, ամմանաբնակ Յակոբ Պետեւեանին[5] եւ Հայկ Փելթէքեանին, «խորհելով որ անոնց թանկագին գործակցութիւնը կրնայ դիւրացնել այդ գործին յաջողութիւնը», եւ կը թելադրէ որ Անթիքաճեան խորհրդակցի ասոնց հետ յաջողցնելու համար մասնաճիւղին կազմութիւնը»:

Անպատասխան մնալով, շուրջ երկուքուկէս ամիս ետք ԵՇՅն կը կրկնէ իր դիմումը վերոյիշեալներուն, միաժամանակ կը գրէ Պետրոս Լեփէճեանին[6], թէ տարիներէ իվեր ջանացած են մասնաճիւղ մը հիմնել Ամման, սակայն «զանազան առարկութիւններով ցարդ հետեւանք չտրուեցաւ մեր դիմումին» եւ յոյս կը յայտնէ որ Լեփէճեանի ներկայութիւնը դիւրացնէ մասնաճիւղին հիմնումը, թելադրելով անոր՝ յարաբերութեան մէջ մտնել վերոյիշեալ չորսին հետ «ու ջանք չխնայել մասնաճիւղի կազմութեան համար»: Լեփէճեան, Փետրուար 1939ին Ռըսէյֆայի մէջ մասնաճիւղ մը հիմնելէ ետք կը ջանայ նոյնը իրագործել Ամմանի մէջ, սակայն ճիգերը չեն արդիւնաւորուիր, քանի որ - ըստ Լեփէճեանի 22 Փետրուար 1939ի նամակին - Ամմանը փոքրաթիւ հայութիւն ունի եւ խնդիրներ կան քահանային ու վարժապետին միջեւ, «բաժնուած են միքանի հոսանքի...[եւ] դժուար կ'երեւի հոն գործ մը կատարելը», աւելցնելով նաեւ թէ վերոյիշեալ չորս անձերը «անտարբերութիւն ցոյց կու տան, կամ ալ բարեացակամ են, բայց իրենց միջեւ համերաշխ չըլլալով գործը կը մնայ երեսի վրայ»:

Մավեան - 15 Փետրուար 1939 թուակիրով – հաւաստելէ ետք ԵՇՅին թէ «անհոգ եւ անտարբեր չենք այս նպատակին նկատմամբ», այլ պատճառներ կը թուէ՝ գաղութին մէջ «բանիմաց ազգայիններու պակասը», ազգային գործերուն «նոր նորոյ» կարգաւորուիլը, նաեւ «հակառակ հոսանք»ի մը գոյութիւնը, հուսկ՝ պատրիարք հօր վախճանումը:

Յորդանանի նոր հոգեւոր հովիւ Հայկասէր Աբղ. Տօնիկեան ԵՇՅին ուղղած 6 Նոյեմբեր թուակիրով կը յայտնէ կազմութիւնը մասնաճիւղին եւ դիւանին, տասնամեայ ձգձգումներէ ետք, Բ. Համաշխարհայինի օրերուն, «հակառակ մեր դէմ յարուցուած դժուարութիւններուն»: Մասնաճիւղի հիմնադրումի ժողովը տեղի ունեցած էր 28 Հոկտեմբեր 1941ին, ներկայութեամբ 13 արձանագրուած անդամներու, ուր Յակոբ Պէրպէրեան[7] ընտրուած էր ատենապետ (8 քուէ), Սաղաթէլ Պալեան[8]՝ ատենադպիր (9

[5] Տնօրէնը Ամմանի առեւտրական ընկերութեան մը:

[6] Լեփէճեան 28 Դեկտեմբեր 1938 թուակիր նամակով յայտնած էր ԵՇՅին թէ հեռացած էր Պէյլանէն «Սանճաքի կացութեան բերմամբ», որուն հետեւանքով «ազդուած է այդ վայրի բոլոր մասնաճիւղերուն գործունէութիւնը»: Ան հաստատուած էր Ռըսէյֆա, ուր ուսուցչութեամբ կը զբաղէր:

[7] Տե՛սնել՝ այս հատորին մէջ իրեն նուիրուած յօդուածը:

[8] Այնթապցի, օսմանեան դրամատան պաշտօնեայ, 45-50 տարեկան:

քուէ), Միհրան Գասապեան[9]՝ «գանձապետ» (6 քուէ)[10]: ԵՇՅն կը հաստատէ նորընտիր վարչութիւնը եւ կը ղրկէ համապատասխան փաստաթուղթեր, կնիք ու ընկալագրերու տետր, թելադրելով հաւաքուած գումարը ղրկել Երուսաղէմի մասնաճիւղին: Չի ձեռնարկուիր Յորդանանի ՀԲԸՄ Շրջանակային Յանձնաժողովի մը կազմութեան, թերեւս նաեւ նկատի առնելով Յորդանանի միւս վայրերու մասնաճիւղերուն պարագաները, սակայն կեդրոնական դեր կը ստանձնէ Ամմանի մասնաճիւղը[11], իսկ Տօնիկեան կը դառնայ համակարգողը ՀԲԸՄ Յորդանանի մասնաճիւղերուն եւ Երուսաղէմի (որ ստանձնած կը թուի շրջանային հանգամանք) ու շրջակայքի մասնաճիւղերուն եւ ԵՇՅի միջեւ:

Տակաւ, Ամմանի մասնաճիւղը կը սկսի գործել, կը լծուի Մշակոյթի Կիրակիի նուիրահաւաքին[12], կը բարձրացնէ անդամներուն թիւը 16էն 46ի[13], կը կատարէ իր անդամավճարներու փոխանցումը՝ 9,115 պ.ո.[14]՝ Երուսաղէմի մասնաճիւղին, կը կատարէ համարատուութիւն, ուր Ամմանի հայութեան թիւ կը նշէ 395 հոգի: Աւելի ետք, անդամավճարներու առաւել կանոնաւորման համար, վարչական 7րդ նիստով կը պաշտօնակոչուին Ենովք Ներսէսեան՝ «օգնական-գանձապետի» (պէտք է հասկնալ գանձիչ) եւ Վարուժան Կիւլեագուպեան՝ փոխատենադպիրի պաշտօններով, թէյասեղանով մը կը նշէ ՀԲԸՄ 36րդ տարեդարձը՝ Ամմանի Հեթումեան

---

[9] Պերեճիկցի, դերձակ, 40-45 տարեկան:

[10] Վարչական միւս անդամներն էին Հայկ Պէրպէրեան, Գէորգ Գէորգեան, Տիգրան Եկէնեան, Պետրոս Տումանեան եւ Ենովք Ներսէսեան՝ խորհրդականներ:

[11] Մանաւանդ՝ Քարաքի եւ Զարքայի առումով, աւելի ետք՝ նաեւ Ռըսէյֆայի, որուն վարժարանին յատկացումները երբեմն կը կատարուին իր միջոցով:

[12] Այնուհետեւ, Մշակոյթի Կիրակիի նուիրահաւաքները կը դառնան ամէնամեայ, թէեւ կը կատարուին տարբեր ամիսներու: Երբեմն կը նկատուի նաեւ որոշ դանդաղում (միաժամանակ նաեւ ԵՇՅի պնդում)՝ վարչութեան կողմէ, հաւանաբար՝ ներհայկական հակազդեցութիւններու թէ վերապահումներու, բայց նաեւ ամմանահայութեան ուսերուն բարդուած հայօճախին վարժարանին ծախքերուն պատրուակով:

[13] Այնուհետեւ անդամներուն թիւը վերիվայրումներ կ'ունենայ. կ'արձանագրուին նորեր, կը դադրին ուրիշներ՝ «իրենց նիւթական անձուկ վիճակին», կամ մեկնումի պատճառով: Ապրիլ 1944ին անդամներուն թիւը կը հասնի 63ի:

[14] Մուտքի տուրքերէ՝ 2,500 պ.ո., անդամավճարներէ՝ 3,700 պ.ո., Մշակոյթի Կիրակիի նուիրատուութենէն՝ 3,030 պ.ո.: Այնուհետեւ եւս, պարբերաբար, վարչութիւնը իր հաւաքած գումարները կը ղրկէ նոյն հասցէով, տեղեակ պահելով նաեւ ԵՇՅն: Անդամներուն մուտքի տուրքը կը տարուբերէր 1-2,50 պ.ո.ի միջեւ, մինչ անդամավճարը 50 պ.ղ. էր: 1927-50 ժամանակաշրջանին Պաղեստինի եւ Անդրյորդանանի պաշտօնական դրամանիշը պաղեստինեան լիրան (ոսկին) էր: 1950էն սկսեալ Յորդանան հրապարակեց իր դրամանիշը՝ յորդանանեան տինարը:

Ազգային Վարժարանի սրահին մէջ: Կը կատարուին նաեւ նոր անդամագրումներ:

15 Սեպտեմբեր 1942 թուակիրով «Ամման-Անդրյորդանանի Տեղական Խորհուրդ Հայոց»ը կը յայտնէ ԵՇՅին թէ նախորդ տարուան համեմատ այս տարի 150 ոսկիի չափ յաւելում մը կայ Ամմանի դպրոցին ծախքերուն, եւ քանի որ ամմանահայութենէն տարեկան մօտաւորապէս 40 ոսկիի մուտք մը կ'ընլլայ, Խորհուրդը դիմած է Ամմանի ՀԲԸՄ վարչութեան, «որպէսզի աջակցին մեզի գէթ ամիսը մէկ ուսուցչի ամսավճարը ապահովել կամ օգնել կերպով մը ինչպէս որ յարմար կը տեսնեն»[15]:

18 Նոյեմբեր 1942ի ժողովին, կը կազմուի նոր վարչութիւն, նախագահութեամբ Հայկասէր աբեղան փոխարինած Յարութիւն Աբղ. Մուշեանի: Նոր վարչութիւնը «խանդավառութեամբ» կը լծուի աշխատանքի, ծրագրելով հաւաքոյթ մը եւ գիշերային դասախօսութեանց շարք մը՝ «այն երիտասարդներուն համար որոնք կը փափաքին իրենց եւ օտարներուն լեզուն լաւ ճանչնալ», անհրաժեշտութիւն կը նկատէ ընդառաջել թաղականութեան՝ 100 երկսեռ աշակերտ հաշուող Ամմանի դպրոցին նպաստելու կոչին[16], եւ 1942 տարեշրջանին ԵՇՅին կը փոխանցէ 44,750 պ.ո. գումար մը[17]: Իդէպ, 1942-43 կրթաշրջանի Ամմանի վարժարանին նախահաշիւն էր.-

Աշակերտներէն եկած ամսաթոշակներ	120
Հանդէսներէն գոյացած մօտաւորապէս	50
Վանքէն նպաստ	50
Այլեւայլ մուտքեր	75= 295 պ. ոսկի
Ուսուցիչներու ամսաթոշակ	310
Դպրոցաշէնքի վարձք	65
Մանր ծախքեր	20=315 պ. ոսկի

Ի պատասխան, եւ ընդառաջելով Ամմանի մասնաժողովին փափաքին, ԵՇՅն Օգոստոս 1943ին Ամմանի ազգային վարժարանին յատկացումը կը կրկնապատկէ, հասցնելով 35 պ.ո.ի:

Մասնաճիւղին գործունէութիւնը կը շարունակուի յարաբերաբար բնականոն: 10 Հոկտեմբեր 1943ի անդամական ժողովին կ'ընտրուի նոր

---

[15] 1941-42 կրթաշրջանին՝ ԵՇՅն յատկացուցեր էր 17 պ.ո., իսկ նոր դիմումով կ'ակնկալուէր յատկացումին առնուազն եռապատկումը, առաջարկելով նաեւ որ Զարքայի փակ վարժարանին յատկացումը ուղղուի Ամմանի վարժարանին:

[16] Մուշեան 23 Մարտ 1943 թուակիրով անուղղակիօրէն կը զգուշացնէր ԵՇՅն թէ Ամմանի մասնաճիւղին գոյութեան համար անհրաժեշտ է դպրոցին աջակցիլը, գուցէ ակնարկելով թաղականութեան մէջ մասնաճիւղին հանդէպ կեցուածքի:

[17] Մշակոյթի Կիրակիէն՝ 9,250 պ.ո., անդամավճարներէ՝ 31,900 պ.ո., մուտքի տուրքերէ՝ 3,600 պ.ո.: Անդամաշարքերու համարատուութեան հիմամբ կարելի է ըսել, թէ մասնաճիւղին մէջ տեղաշարժերը կը կազմեն շուրջ 25 առ հարիւր, որ կը խօսի տակաւին չկայունացած ամմանահայութեան մասին:

վարչութիւն[18], զոր ԵՇՅ շուտով կը հաստատէ: Կազմակերպական առումով, մանաճիւղը փափաք կը յայտնէ ստանալ կարգ մը թերթեր՝ *Արեւ, Պայքար, Զարթօնք*, ՀԲԸՄ ամսական տեղեկագիրը եւն.:

Ուշագրաւ է Մուշեանի տեղն ու դերը Յորդանանի եւ մանաւանդ Ամմանի ազգային միութենական կառոյցներուն մէջ. ան հոգեւոր հովիւն էր յորդանահայութեան, հոգեւոր տեսուչը Ամմանի ազգային վարժարանին, նախագահը՝ ՀԲԸՄ Ամմանի մասնաճիւղին, ունէր իր ազգային-կրօնական օրակարգն ու առաջնահերթութիւնները որոնք կրնային չնոյնանալ Յորդանանի մէջ գործող վերոյիշեալ եւ այլ հաստատութիւններուն օրակարգերուն հետ, դուռ բանալով խաչաձեւումներու, ինչպէս օրինակ՝ երբ Փետրուար 1944ին մասնաճիւղին կ'արգիլուի օգտագործել վարժարանին սրահը՝ «գաղութիդ մէջ հակընդդէմ հոսանքներու գոյութեան պատճառով»[19]:

Մասնաճիւղը կը մատնուի տագնապի, քանի որ չէր կրնար ոչ-հայկական հասարակաց վայրի մէջ հաւաք կազմակերպել՝ կառավարական արտօնութիւն չունենալով: Իսկ ժողով չգումարելով կրնար տկարանալ, քանի որ անդամներուն մեծամասնութիւնը «պարզ ազգասիրական եւ բարեսիրական նպատակներով է որ կ'անդամակցի ու չունենալով բաւականաչափ գիտութիւն Միութեան անցեալ եւ ներկայ ազգօգուտ ձեռնարկներուն մասին, ենթակայ է ազդուելու ՀԲԸՄիութեան դէմ եղած չարախօսութիւններէն..»: Դեռ աւելին, անդամներուն մեծամասնութեան (մանաւանդ փորձառուներու[20]) գործուն դեր եւ պատասխանատուութիւն ստանձնել չուզելը, լոկ անդամավճարները տալ եւ կղզիանալու միտումը, անդամական ժողովներուն անդամներուն փոքրաթիւ ներկայութիւնը էական կը դարձնեն մասնաճիւղը պաշտօնապէս օրինականացնելը:

ԵՇՅն կը լծուի բարձրացուած հարցերու լուծման, կը դիմէ Ամմանի ծանօթ անհատներու՝ աջակցելու մասնաճիւղին գործունէութեան, իսկ սրահի գործածութեան խնդրով բուռն կը հակադարձէ, զարմանալով որ «զուտ բարեսիրական եւ մշակութային [ՀԲԸՄը] ... կը շփոթուի հակընդդէմ հոսանքներու հետ ու անոնց կարգը կը դասուի», մինչ վարժարանը

---

[18] Հայկ Թոմիկեան՝ ատենապետ, Վ. Կիւլեսագուպեան ատենադպիր, Ենովք Ներսէսեան գանձապահ, Յակոբ եւ Զաւէն Եկէնեաններ խորհրդական:

[19] Արդարեւ Ամմանի հոգեւոր հովիւն ու տեղական խորհուրդը «յարմար» դատած էին «դպրոցը ոեւէ միութիւններու չտրամադրել»:

[20] Մուշեան եւս կը վկայէ թէ վարչութիւնը երիտասարդներէ կազմուած է: Յիրաւի, աւանդական մտայնութեամբ հաւաքականութեան մը մէջ «փորձառու անձերու ներկայութիւնը համակրելի» պիտի դարձնէր վարչութիւնը: Նոր վարչութենէն դուրս կը գտնուէին Անթիքաճեան, Յակոբ Պէրպէրեան, Գասապեան, Պետեւեան, Մամաս Սանթուրճեան, Պետրոս Տումանեան, որոնք կրնային ստանձնել վարչութիւնը եւ ըլլալ մասնաճիւղին փրկութեան ու ծաւալման ազդակը:

նպաստընկալ է ՀԲԸՄէն: ԵՇՅն կրկնակի կը դիմէ Մուշեանին փափաքելով որ վերաքննուի որոշումը[21]: Խնդիրը, սակայն, պատճառ չ'ըլլար որ վարչութիւնը չկատարէ Մշակոյթի Կիրակիի նուիրահաւաքը, որուն առթիւ 5 պ.ո. կը նուիրէ[22] Անթիքաճեան, որ «ամէն ատեն պատրաստ է օգնել ... եւ իր օգնութիւնը, շնորհիւ իր դիրքին, միշտ օգտակար եւ երբեմն ալ վճռական հետեւանքներ ունեցած է»:

Ամմանի հայութեան թիւը, ըստ Ամմանի ՀԲԸՄ մասնաճիւղի համարատուութեանց	
1941	395 հոգի
1942	85 ընտանիք
1943	120 ընտանիք[23]
1944	500 հոգի
1945	130 ընտանիք
1951	3-4000 հոգի

Մուշեան ջանքեր կը թափէ առաւել կարգաւորելու Ամմանի դպրոցը. 22 Նոյեմբեր 1943 թուակիրով ան ԵՇՅին կը գրէ «Ամմանի 23 տարեկան գաղութին» վարժարանին մասին, որ «գրեթէ ամէն երկու տարի իր տեղը փոխած է վարձու ըլլալուն համար», ու կ'աւելցնէ թէ ներկայ շէնքի քաղաքին ծայրը գտնուիլը եւ փոխադրամիջոցի չգոյութիւնը պատճառ կը դառնան որ կարգ մը աշակերտներ ուշացումով հասնին դպրոց: Ան կը բացատրէ թէ մտածում կայ քաղաքէն հեռու սեփական փոքր հողը ծախելու եւ փոխարէնը քաղաքին մէջ հինգ սենեակներով կալուած մը գնելու, 2500 պ.ո. արժողութեամբ, որով կը ներգրաւուին նաեւ օտար վարժարաններ յաճախող մօտ 50 հայ աշակերտները: Մուշեան կը շօշափէ ԵՇՅի աջակցութեան պատրաստակամութիւնը՝ կացութիւնը նմանցնելով 12 տարի առաջուան Ալեքսանտրէթի դպրոցին վիճակին (ուր ԵՇՅն գործուն դրական դեր ստանձներ էր), մանաւանդ որ «մեր ժողովուրդը բոլորն ալ գաղթական եւ հազիւ օրապահիկը ճարողներ են բացի մէկ երկուքէն որոնց օգուտը կարելի չէ ստանալ բնաւ»[24] ուստի կարելի չէր տեղական

[21] Որոշումը վերատեսութեան կ'ենթարկուի թոյլատրելով «մասնաժողովին տրամադրել Ազգային վարժարանի սրահը իր հաւաքոյթներուն համար»:

[22] Մշակոյթի Կիրակիի նուիրահաւաքին հաւաքուած էր 20,300 պ.ո.:

[23] Ուշագրաւ է անդամներուն աշխատանքային ասպարէզը, որ կրնայ տարրական գաղափար մը տալ ամմանահայութեան աշխատանքային ասպարէզին.- գրագիր՝ 3, դերձակ՝ 6, երկրագործ՝ 1, զինուոր՝ 8, լուսանկարիչ՝ 4, կայարանատէր՝ 1, մեքենագէտ՝ 4, պետ. պաշտօնեայ՝ 1, կապալառու՝ 1, գործաւոր՝ 1, կօշկակար՝ 5, մսավաճառ՝ 5, սափրիչ՝ 1, կլայագործ՝ 2, շրջուն վաճառական՝ 1, վաճառական՝ 4, մթերապահ՝ 1, ուսուցիչ՝ 2, հնակարկատ՝ 1, ուսանող՝ 1:

[24] Արդեօ՞ք փոխուած էին պայմանները՝ 1928ի համեմատութեամբ, երբ «տնտեսապէս լաւ պայմաններու մէջ» նկատուած էին անոնք:

ակնկալութիւններ ունենալ: ԵՇՅն, որ «նման ձեռնարկներու յատուկ վարկ» չունէր եւ կ'օգնէր «միայն կարօտ վարժարանաց, իր կարելիութեանց սահմանին մէջ», կը թելադրէ դիմել Երուսաղէմի պատրիարքարան, որուն իրաւասութեան ենթակայ է Յորդանանը:

Վարժարանի բարելաւման կողքին, Ամմանի մատուռը եւս կարիք ունէր բարեկարգուելու: Զոյգ պատճառներով Մուշեան եւ պատկան մարմինները կ'առնեն պիւտճէական քայլեր. տարեվերջին, Հեթումեան վարժարանը՝ հակառակ նախորդ տարուան նախահաշիւի 100 պ.ո. բացին (որուն պատճառով ալ ԵՇՅն 35 պ.ո. յատկացում կատարած էր Ամմանի վարչութեան յանձնարարութեամբ), կ'ապահովէ 50 պ.ո. շահ մը[25]:

Մասնաճիւղին 1944 տարուան հաշուետուութենէն կը պարզուի թէ մուտք եղած է 58,150[26] եւ ելք՝ նոյնքան, իսկ 1945ին՝ 82,150 պ.ո.:

Ճիշտ է որ մասնաճիւղերու գոյութիւնը միութենական ցանց մը կը յառաջացնէր, իսկ կարգ մը պարագաներու՝ այդ մասնաճիւղերուն գործունէութեան ծիրը չէր անցնէր անդամավճարներու գանձումի, Մշակոյթի Կիրակիի թէ ՀԲԸՄի հիմնադրութեան նշումի սահմանները[27], սակայն երբեմն, յատուկ պարագաներ, Սփիւռքի թէ Խ. Հայաստանի մէջ տեղի ունեցած զանազան իրադարձութիւններ ԵՇՅի թելադրանքով կ'արձագանգուէին մասնաճիւղերուն մօտ[28]: Տեղին է յիշել 1944ին ՀԲԸՄի ձեռնարկած համազգային հանգանակութիւնը, «որուն նպատակն է անմիջական օգնութեան հասնիլ Բ. Համաշխարհայինէն տուժած Յունաստանի, Պալքանեան երկիրներու, Ֆրանսայի առհասարակ արտասահմանի բոլոր հայ աղէտեալներուն եւ Հայաստանի նոյն պայմաններուն մէջ գտնուող մեր ազգակիցներուն»[29], աւելի ետք՝ 1946 Սեպտեմբերին, «ներգաղթի

[25] ԵՇՅն կը հակադարձէ՝ 1942 եւ 1943 տարեշրջաններու տարեկան ամբողջական հաշուեցոյցերը «բոլոր մանրամասնութիւններով» պահանջելով, եւ զանց կ'ընէ վարժարանին յաջորդ տարուան յատկացումը:

[26] Որուն 20,800 պ.ո.ն՝ Մշակոյթի Կիրակիի նուիրահաւաքէն:

[27] Որոնք հաւանաբար նաեւ միութենական-ազգային լիցք կը հաղորդէին անդամներուն եւ անոնց շրջապատին ընթացիկ կեանքին:

[28] Երբեմն մասնաճիւղերը նաեւ միջոց էին կապեր հաստատելու եւ նիւթական փոխանցումներ կատարելու հեռաւոր վայրեր գտնուող հարազատներու միջեւ, ինչպէս կը պատահի ամմանաբնակ Վահան Պասթաճեանի եւ մեսեչուսէցաբնակ Օր. Ազնաւորեանի պարագային:

[29] Ծրագիրը կը նպատակադրէր գոյացնել 360,000 տոլար, որուն 250,000ը՝ ԱՄՆի մէջ, իսկ Ամմանի մասնաճիւղին նուազագոյն գումար ճշտուած էր 100 պ.ո.: Մասնաճիւղը կը յաջողի գոյացնել 43,250 պ.ո., բացատրելով՝ «դժբախտաբար …

հանգանակութեան առթիւ մասնաւոր հանգանակիչ յանձնախումբի մը» կազմութեան: Ակնկալելի էր նաեւ, որ այս ցանցերը ունենային այլ դերեր եւս, ինչպէս կը պատահի ամմանաբնակ Պօղոս Յարութիւնեանի եւ Վ. Նագգաշեանի[30] պարագային, որոնք կը փափաքին իրենց 13ամեայ զաւակները Մելգոնեան Կրթական Հաստատութիւն ղրկել[31]: ԵՇՅն վարչութեան կը ղրկէ ՄԿՀ ընդունման պայմանները եւ «մտից քննութեանց փակ պահարանով հարցարանները», թելադրելով որ բոլոր դիմորդները ուղղուին Ամմանի մասնաճիւղ, ուր կազմուած ատակ յանձնախումբ մը քննութեան նստեցնէ դիմորդները եւ արդիւնքներն ու պահանջուած փաստաթուղթերը ղրկէ ՄԿՀ տեսչութեան:

Կը թուի՝ թէ՛ մասնաճիւղին եւ թէ՛ մանաւանդ ամմանահայութեան մէջ կուտակուող լարուածութեան բացայայտ դրսեւորումի դուռ կը բանայ ներգաղթի հանգանակութիւնը: Մեղադրանքներ կ'ուղղուին ատենապետ Անթիքաճեանի հասցէին, թէ հանգանակութեան անջատ յանձնախումբ մը կազմելով գոյացուած 290 պ.ո.ն տրուած է «...դաշնակներուն»[32], վարչութենէն ոմանք կը հրաժարին, ուրիշներ մեկնած են Պէյրութ, կամ կը պատրաստուին ներգաղթելու, եւ մասնաճիւղը «շատ անկազմակերպեալ քայքայեալ վիճակ մը» կ'առնէ, 1946ին գործունէութիւն չի ծաւալեր, բացի ներգաղթի հանգանակութենէն, որ կիսատ կը մնայ, իսկ ՀԲԸՄ քառասնամեակը կը կազմակերպուի «անձնական ջանքերով»:

ԵՇՅն կը դիմէ Անթիքաճեանին թելադրելով վարչութեան վերակազմութիւնը եւ ներգաղթի հանգանակութեան հաշուեփակը[33]: Ան միաժամանակ կը դիմէ Կորիւն վարդապետին, որ իր աջակցութիւնը ընծայէ անգործութեան մատնուած վարչութեան վերակազմութեան՝ Անթիքաճեանի հետ խորհրդակցաբար:

գաղութիս մտայնութիւնը եւ մանաւանդ նիւթական դիրքը ...կը կարծենք թէ այս արդիւնքն ալ գոհացուցիչ է», դարձեալ քօղարկի ակնարկելով ներամմանահայ հակադրութիւններուն: Ուշագրաւ է նուիրատուներուն ցանկը. 32 նուիրատուներուն նուէրները 10-0,250 պ.ո.ի միջեւ էին:

[30] Ան քառորդ դարու հայերէնի ուսուցչական վաստակ ունէր:

[31] 26 Յուլիս 1945 թուակիրով մասնաճիւղը կը հաւաստէր ասոնց ընդունակութիւնները, աւելցնելով որ նման քայլով «շատ աւելի պիտի բարձրանայ թէ միութեանս եւ թէ մասնաճիւղիս վարկը»:

[32] Ներգաղթի հանգանակութիւնը դուրս բերուած էր ՀԲԸՄ մասնաճիւղի ծիրէն. յանձնախումբը կը բաղկանար մասնաճիւղին անդամներէ եւ «տեղւոյս ազգայիններէն», որոնցմէ Տեղ. Խորհուրդի ատենապետ Յովիկ Էթեմէզեան կարգուած էր գանձապահ, իսկ ըստ պատրիարք հօր «հրահանգին»՝ անոր «գլուխը կը կանգնէր» Կորիւն Վրդ.:

[33] Հանգանակուած 200 պ.ո. գումարը հանգանակութեան յանձնախումբին մեծամասնութեան որոշմամբ կը փոխանցուի ՀԲԸՄ Երուսաղէմի 109 անդամ հաշուող մասնաճիւղի ատենապետ Լ. Գէորգեանին:

Դեկտեմբեր 1947ին Ամմանի մասնաճիւղը կը շարունակէ մնալ կազմալոյծ. գանձապահի չգոյութեան պատճառով կարելի չ'ըլլար գանձել նախորդ մէկուկէս տարուան անդամավճարները, ծանրաբեռնուածութեան պատճառով ո՛չ Կորիւն Վրդ., ո՛չ ալ Անթիքաճեան կը յաջողին վերականգնել մասնաճիւղը: Դպրոցին սրահը՝ խորհրդակցութեան հաւաքուելու վարդապետին՝ եկեղեցիին բեմէն արձակած կոչը չ'ընդառաջուիր, ապարդիւն կ'ըլլայ նաեւ Մկրտիչ Սալպաշեանի գանձապահի պաշտօնակոչումը:



Ամմանի մասնաճիւղին վերակազմութիւնը կ'ուշանայ մինչեւ Լ. Գէորգեանի ժամանումը հոն: Ան հեռացեր էր Երուսաղէմէն, ուր բոլոր մասնաճիւղերը «ներկայ պարագաներու բերմամբ ... իրենց գործունէութիւնը դադրեցուցած» էին[34], եւ իբրեւ գաղթական այլոց կարգին անցած էր Ամման[35]: Գէորգեան Մայիս 1949ին կը վերակազմէ մասնաճիւղը եւ կը լծուի անոր պետական ճանաչման գործողութիւններուն: ԵՇՅն Գէորգեանին կը ղրկէ Միութեան կանոնագրի անգլերէն եւ արաբերէն օրինակներ, գոհունակութիւն յայտնելով որ ան աշխատանք կը տանի վերակազմելու Երուսաղէմի մասնաճիւղը եւս, պատրիարք Հօր օրհնութեամբ[36]: Հիմա որ Պաղեստինի մասնաճիւղերը անգործութեան էին դատապարտուած, անհրաժեշտ կը դառնար դրացի նոր կեդրոնի մը կազմակերպումը:

24 Մարտ 1950 թուակիր տպագրեալ նամակով Կորիւն Վրդ. կը դիմէ ՀԲԸՄ Ամմանի եւ Պաղեստինի մասնաճիւղերու անդամներուն, յայտնելով թէ Յորդանանի Հաշէմական Թագաւորութեան նախարարաց խորհուրդը 12 Յունուար 1950ի նիստին «բարեհաճած է ...միութեան շնորհել գործունէութեան արտօնագիր»: Ատենի *Ֆիլասթին* թերթը ծանուցած էր.-

---

[34] Գահիրէն Գէորգեանի կը ղրկէ նաեւ Երուսաղէմի անդամացանկը, որովհետեւ վերջինս կը յայտնէ թէ Երուսաղէմի մասնաճիւղին թղթածրարը կողոպտուած ու կորսուած է:

[35] Հայ գաղթականներ եկած էին նաեւ Պէյրութ (Երիտասարդ Հայ, 15 Մայիս 1948):

[36] Պատրիարք Կիւրեղ Արք. Իսրայէլեանի փափաքն էր նաեւ ունենալ կազմակերպեալ եւ զօրաւոր մասնաճիւղ մը Ամմանի մէջ:

فرع لجمعية الاتحاد الخيري الارمني عمان – قرر مجلس الوزراء العالي للسماح السادة الاب كوريون مانوليان وليون كفركيان وهايك بكتكيان وسيروب انتكجيان وبطرس باليايه بتأسيس فرع لجمعية الاتحاد الخيري الارمني العام في المملكة الاردنية الهاشمية.

Կորիւն Վրդ. կը հրաւիրէ Ամմանի նախկին անդամները մասնակցելու 26 Մարտ 1950ի ընդհ. ժողովին՝ Հեթումեան Վրժ.ի սրահին մէջ, վերակազմելու համար մասնաճիւղը: Կը թուի թէ Գէորգեանի գաղթականի եւ նորեկի հանգամանքները, գուցէ նաեւ ամմանահայ միութենականներուն իր անծանօթութիւնը թոյլ չեն տար որ ան վերահսկէ ժողովին ընթացքը, որով ժողովին կը մասնակցին շուրջ 52 ոչ-անդամներ, որոնք տեղւոյն վրայ անդամագրուելով կը քուէարկեն ու ոմանք վարչական կ'ընտրուին խախտելով ՀԲԸՄ կանոնագիրը: Վարչութեան անդամ կ'ընտրուին Լեւոն Գէորգեան (ատենապետ), Հայկ Փելթէքեան (խորհրդական), Յակոբ Պետեւեան (գանձապահ), Յովիկ Էթեմէզեան (փոխատենապետ), Յակոբ Զաքեան՝ ատենադպիր: Կարծէք՝ նոր վարչութիւնը խանդավառութեամբ կը լծուի անդամարշաւի եւ կը ծրագրէ կատարել հանդիսաւոր բացումը մասնաճիւղին:

ԵՇՅն, հակառակ օրինախախտումներուն, ստեղծուած «խանդավառ մթնոլորտը չջլատելու» մտասեւեռումով, վերապահութեամբ կը վաւերացնէ նոր վարչութիւնը, թելադրելով որ տարի մը ետք նոր ընտրութիւն կայանայ:

Սակայն, ամիսներ ետք՝ Սեպտեմբերին, տակաւին չէր կայացած բացումը մասնաճիւղին. ըստ Կորիւն վարդապետի՝ «չարամիտ եւ նենգամիտ մարդոց պատճառով մեր աշխատանաքները կը կաղան երբեմն»: Անհամաձայնութիւն կար նաեւ բացման հանդիսութեան մասնակից երգչախումբի անդամներուն միջեւ «...կուսակցական տարբերութեան պատճառով»:

Կը յառաջանայ այլ տագնապ մը եւս. հայ կաթողիկէ գերապայծառ Կամսարական, Ամման ժամանելով կը հիմնէ հայ կաթողիկէ Ս. Սահակ-Մեսրոպ Վարժարանը՝ Ամմանի հայոց հոգեւոր հովիւին դիմագրաւած միջկուսակցական պայքարին տալով միջհամայնքային եւ կրթական նոր բարդութիւն[37]: Ըստ Ամմանի մասնաճիւղին՝ ԵՇՅին փոխանցած տեղեկութեանց, վարժարանի մանկապարտէզը ունէր 70 փոքրեր, 4 դասարան եւ երկու ուսուցչուհի, իսկ նախակրթարանը՝ 35 աշակերտ, 4 դասարան, մէկ ուսուցիչ եւ երկու ուսուցչուհի: Գեր. Կամսարական կ'աւանդէր միքանի դասանիւթ: «Դասընթացքը հայերէն է, ծրագիրը՝ սովորական, շաբաթական միքանի պահ արաբերէն ու անգլերէն

[37] 14 Նոյեմբեր 1950 թուակիրով Կորիւն Վրդ. ԳՇՅին կը գրէր թէ «Պաղեստինի գաղթականութենէն յետոյ պապականութիւնը կ'ուզէ Ամմանի դժբախտ հայութիւնը դրամով խեղդել», ան կը գանգատի թէ յառաջացած մրցակցութեան պատճառով համակերպած է ծնողաց նուազագոյն ջնջին տարեթոշակին հետ եւ «տկարացանք նիւթապէս»: Ան կը նշէ որ նիւթապէս ինքնաբաւ, մօտ 300 աշակերտ հաշուող Հեթումեան վարժարանը արձանագրած է 350 յ.տ.ի բաց մը:

նախակրթարանի բարձրագոյն դասարաններուն»: Աշակերտութեան կարեւոր մաս մը օտար վարժարաններ յաճախող հայեր էին, որոնք այսպէսով հայերէն պիտի սորվէին, սակայն աշակերտութեան երկրորդ կարեւոր մասը կու գար Հեթումեան վարժարանէն: Գեր. Կամսարական Պաղեստինի գաղթականներուն պապական յանձնախումբէն ստացած էր միագումար օգնութիւն 500 յ.տ., որուն պիտի աւելնար նոյն յանձնախումբէն ամսական դրութեամբ 384 յ.տ. գումար մը, իսկ աշակերտներէ պիտի գանձուէր 200 յ.տ. թոշակ: Ան ելք նախատեսած էր.- 500 յ.տ.՝ դպրոցաշէնքի վարձք (5 սենեակ եւ մէկ սրահ) +744 յ.տ.՝ ուսուցիչներու տարեթոշակ+40 յ.տ.՝ գրենական պիտոյք, եւ բաց կը մնար 200 յ.տ. գումար մը, զոր տեղական միջոցներով գոցելը դժուար կը նկատուէր: Գերապայծառը այդ գումարին ապահովումին համար դիմեր էր ԵՇՅին: Վերջինս չէր ընդառաջած Գեր. Կամսարականի դիմումին, բացատրելով թէ 1950-51 կրթաշրջանի վարկը բոլորովին սպառած էր արդէն իսկ ստանձնուած յանձնառութիւններով[38]:

Կորիւն վարդապետի կրթական տագնապը առաւել կը շեղէ զինք Ամմանի մասնաճիւղէն, իսկ ատենապետ Գէորգեան որ մինչ այդ յաջողած էր մասամբ վերահսկել վարչութիւնը, բայց չէր կրցած զայն «կանոնաւոր գործունէութեան մը լծել», կը պաշտօնակոչուի Պաղտատ:

4 Յունուար 1951 թուակիրով Գէորգեան կը յայտնէ ԵՇՅին թէ չուզելով երկպառակութիւն ստեղծել՝ Կորիւն Վրդ. եւ ինք հարց չէին բարձրացուցած, այլ յուսացած որ բոլորը կը լծուին մասնաճիւղին վերակազմութեան աշխատանքներուն: Սակայն իյայտ եկած էր, որ այլ վարչականներու «նպատակն էր միայն մեր Միութեան մէջ մտնել զայն չէզոքացնելու եւ անգործութեան դատապարտելու»: Մուտքի տուրքերէն զատ անդամավճարներուն հազիւ մէկ-հինգերորդը հաւաքուած էր, յստակ չէր պատկերը գանձումներուն, հին անդամները կը մերժէին անդամավճարները տալ՝ ներկայ վարչութեան պաշտօնավարութեան պարագային: Գէորգեան դիմած էր Եղիշէ Վրդ. Տէրտէրեանի աջակցութեան, բայց ադիւնքի չէր հասած, եւ նշելով որ ցարդ հաւաքուած էր շուրջ 44 յ.տ. (20ը՝ անդամավճարներէ, մնացեալը՝ մուտքի տուրքերէ), կ'աւելցնէր թէ Ռըսէյֆայի ծաղկոցին 30 յ.տ. նպաստը կատարուած էր Երուսաղէմի մասնաճիւղէն, անուղղակիօրէն հարցադրելով վերոյիշեալ գումարին ճակատագիրը:

Ի տես այս զարգացումներուն, ԵՇՅն կը դիմէ պատրիարքական տեղապահ հօր խնդրելով իր ազդու միջամտութիւնը եւ կը թելադրէ որ Գէորգեան լուսաբանէ տեղապահ հայրը կացութեան մասին ու աջակցի: Միաժամանակ, Ապրիլին, ԵՇՅն Ամմանի մասնաժողովէն կը փափաքի

[38] Հակառակ Ամմանի մասնաճիւղին դրական յանձնարարութեան:

ունենալ անոր 1950ի տարեկան համարատուութիւնը: Համարատուութեան պահանջքը կը կրկնուի Դեկտեմբերին:

Վարչութեան պատասխան՝ տարեկան տեղեկագիրը կը ներկայացնէ 12 Օգոստոս 1951ին Հեթումեան Վարժարանի սրահը կայացած անդամական ժողովին պատկերը, որուն բացումը կատարելով այժմ ատենապետ Էթեմէզեան, կը դժգոհի կարգ մը անդամներու անդամավճարները վճարելու «անհոգ զլացումէն»: Ժողովի պատ. նախագահ Կորիւն Վրդ. խօսք առնելով կը գնահատէ երիտասարդութեան ներկայութիւնը ու կ'աւելցնէ թէ ՀԲԸՄիութեան ուղիով անոնք շատ բան կրնան ընել, կ'ակնարկէ «ըսի-ըսաւներ»ու[39] եւ գոհութիւն կը յայտնէ որ ներկաները ցոյց կու տան «պատրաստակամութիւն ու զոհողութիւն»: Կ'ընտրուի օրուան դիւան, յոտնկայս լռութեամբ կը յարգուի յիշատակը հանգուցեալ Ապտալլա թագաւորին, ապա կը պարզուի որ 96[40] անդամներէն միայն 56ը վճարած են իրենց անդամավճարները, ներկայ են 31 հոգի, մինչ 12 հոգի բանաւոր պատճառներով բացակայ է ժողովէն: Ժողովը օրինաւոր կը նկատուի ու Էթեմէզեան կոչ կ'ուղղէ որ բոլորը համագործակցաբար եւ համերաշխ ոգիով մօտենան ու առաջ տանին «այս սրբազան աշխատանքը»: Կ'ընթերցուի եւ կը վաւերացուի նախորդ ընդհանուր անդամական ժողովին ատենագրութիւնը, նաեւ՝ վարչութեան տարեկան տեղեկագիրն ու հաշուեկշիռը[41], փափաք կը յայտնուի որ մասնաճիւղը սաներ որդեգրէ Հեթումեան վարժարանին մէջ՝ սաղիմահայ մասնաճիւղին նմանութեամբ, «յոյժ գնահատելի» կը նկատուի վարչութեան գործունէութիւնը, հակառակ անոր որ չէին կատարուած մասնաճիւղին պաշտօնական բացումը, աւանդական Մշակոյթի Կիրակիի նուիրահաւաքը, տարեսկիզբի 94 անդամներուն վրայ աւելցած էին 12 նորագիրներ, բայց դադրած էին 50 անդամներ[42] եւ գումարուած 16 պաշտօնական ժողովներէն վեցը եղած էր խորհրդակցական: Նոր վարչութեան անդամներ կ'ընտրուին Փելթէքեան (ատենապետ, 42 քուէ), Էթեմէզեան (փոխատենապետ, 40 քուէ), Զաքեան

---

[39] Վարդապետը չէր կրնար կողմ ըլլալ նման վէճի եւ լոկ քօղարկուած ակնարկութիւններ կը կատարէ:

[40] Տեղեկագրին մէջ այլուր նշուած է 106:

[41] Ըստ տեղեկագրին՝ գանձիչ Հայկազ Պարսամեան հիւանդանալով չէր կրցած շարունակել գանձումները, զինք փոխարինող Արշակ Աթարեան վեց ամսուան ընթացքին հաւաքած էր 22 յ.տ., որուն 8ը յանձնած էր վարչութեան, իսկ մնացեալը Հայր Կորիւնի պատասխանատուութեամբ մնացեր էր իր մօտ, այլ գանձիչ գտնելու փորձերը չէին յաջողած եւ վարչութիւնը այդ աշխատանքը բարդած էր Պետեւեանին...: Տեղեկագիրը կ'անդրադառնայ նաեւ ՀԲԸՄի մասնաճիւղի վերաբացումը հանդիսաւորապէս նշելու ձեռնարկին յետաձգումին եւ իր սանը կը նկատէ Երուսաղէմի մասնաճիւղին կողմէ աշակերտի մը կրթական որդեգրումը, քանի որ – ըստ իրեն – գումարը յատկացուած էր իր անդամավճարներէն...:

[42] Այս խումբը կը կազմէր առկայ վարչութեան հակադիր խմբակցութիւնը:

(ատենադպիր, 40 քուէ), Պետեւեան (գանձապահ, 35 քուէ), Համբարձում Աֆարեան (խորհրդական, 29 քուէ):

Իր պատասխան՝ 9 Հոկտեմբեր 1951 թուակիրով, ԵԾՅն նաեւ կողմնակի աղբիւրներէ ծանօթ ըլլալով կատարուած «թատրոն»ին, չ'ուզեր «պղտորել ջուրերը», իր քայլերը կ'ըլլան զուսպ. ան կը մատնանշէ կարգ մը ժողովական խախտումներ (օրուան դիւան, բանաւոր բացակայութիւնները նեկայութիւն նկատելը...), եւ ժողովին մասնակից «31 անդամները բացարձակ մեծամասնութիւն» նկատելով, կը վաւերացնէ կատարուած ընտրութիւնը, կը թելադրէ որ սնտուկին առկայ գումարը փոխանցուի պատրիարքական տեղապահին, յաջողութիւն կը մաղթէ նոր վարչութեան, 1 Մարտ 1952էն սկսեալ *Արեւ* օրաթերթ կ'առաքէ մասնաճիւղ, թելադրելով որ մասնաճիւղը հաստատէ ստացումը եւ հաւաքածոն պահէ իր մօտ, կրկին կը պահանջէ համարատուութիւն եւ սնտուկի գումարի փոխանցում:

Սակայն նախորդ տարուան համեմատութեամբ վարչութեան գործունէութեան փոփոխութիւն չի նկատուիր: Կորիւն Վրդ. 2 Ապրիլ 1952 թուակիրով կը գանգատի ԵԾՅին թէ «Ամմանի մասնաժողովը առայժմ քնացած է յեղափոխական եղբայրներու ձեռքը անցած ըլլալուն ...հիմա մեզի կրեւորութիւն տուող չկայ իբր նախագահ» եւ կը մանրամասնէ թէ վարչութիւնը առաջնահերթ դարձուցած է այլ՝ Կարմիր Խաչի Տիկնանց Միութեան շահերը, ու կ'ամփոփէ՝ «աշխատեցան Բարեգործականի վարչութիւնը ձեռք առնել, պարզապէս ձախողցնելու եւ զայն կազմալուծելու համար»:

ԵԾՅի ճիգերը՝ «նոր վերակազմութեամբ վերջ տալ մասնաճիւղին ցաւալի կացութեան», չեն արդիւնաւորուիր. մասնաճիւղը տակաւ բոլորովին անգործութեան կը մատնուի, ցաւ պատճառելով նաեւ «ազնիւ ազգայիններու»: Եղիշէ Արք. Տէրտէրեանէն ակնկալուած օժանդակութիւնը եւս չ'արդիւնաւորուիր: Լուծման միջոց կ'առաջադրուի ընդհանուր անդամական ժողովի մասնակցութիւնը 60 «ընդդիմադիր» երիտասարդներուն եւ գոյացումը մեծամասնութեան մը, որով յառաջանայ նոր վարչութիւն եւ վերակազմուի մասնաճիւղը...:

Ամմանանահայութեան միջմիութեանական պայքարը նոր հանգրուանի մը նախանշանները կու տայ Պէյրութէն ռամկավար գործիչ Բարունակ Թովմասեանի այցելութեամբ[43]: Վերջինս, ըստ Կորիւն Վրդ.ին, «եկած էր Ամման կրթական գործով [եւ] փափաք յայտնեց որ Բարեգործականի մասնաճիւղը կանոնաւորուի Ամմանի մէջ»: Կը թուի՝ Թովմասեանի այցելութիւնը 'ժամանակաւոր' թափ տուած ըլլալ մասնաճիւղին վերակազմութեան: 1 Սեպտեմբեր 1953 թուակիրով ԵԾՅն կը հաստատէ մասնաճիւղին նոր վարչութիւնը՝ Փելթէքեան (ատենապետ), Պետրոս

[43] Ան կը ժամանէ Ամման Պէյրութի Ամերիկեան Համալսարանին համար ուսանողներ հաւաքագրելու առաքելութեամբ:

Պալեան (գանձապահ), Տիրան Պոտոսեան (ատենադպիր), Սերովբէ Անթիքաճեան եւ Աֆարեան (խորհրդականներ):

Յստակ չեն նոր վարչութեան ստանձնումի ընթացակարգին ծալքերը. տուեալները կը պակսին նաեւ վարչութեան յետագայ գործունէութեան: Կ'ենթադրենք սակայն, որ Ամմանի ՀԲԸՄի մասնաճիւղը կը շարունակէ 'գոյատեւել' մինչեւ 1955ի սկիզբները, երբ ՀԲԸՄի տեղի մասնաճիւղը փոխարինելու կու գայ Յորդանանի Ազգային Մարզական Միութիւնը, հակադրուելով հանդիպակաց ճակատին:

Առայժմ, առկայ արխիւային նիւթերը չեն թոյլատրեր պարզելու այս անցումին մանրամասնութիւնները եւս:

ՌԸՍԷՅՖԱ (1939-61)

Ռըսէյֆայի ՀԲԸՄ մասնաճիւղը կը հիմնուի Փետրուար 1939ին, ջանքերովը Պետրոս Լեփէճեանին:

Արդարեւ, մարաշցի իննպարտիզպան ընտանիք, ընդամէնը 54[44] հոգի հաշուող Ռըսէյֆայի հայերը, ժողովի հրաւիրուած էին Լեփէճեանի կողմէ, որ «պահանջք դրած» էր մասնաճիւղ յառաջացնելու, թերեւս՝ իբր բարոյական փոխադարձ պարտք՝ ՀԲԸՄի կողմէ կատարուած յատկացումին: Ներկաները ընդառաջած էին եւ որոշած ամսական 5 պ.ղ. անդամավճար տալ: Հիմնադիր ժողովը գումարուեր էր 13 Մարտ 1939ին, ազգային վարժարանին մէջ եւ 1 Ապրիլին հռչակուեր մասնաճիւղին հիմնադրութիւնը ներկայութեամբ Մովսէս Աւագեանի, Յակոբ Էքմէքճեանի, Պետրոս Լեփէճեանի, Հռութ Պաղտիկեանի, Եղիշէ Պոյրազեանի, Ժիրայր Սերփէքեանի, Մովսէս Գրիգոր Սերփէքեանի, Յովհաննէս Սերփէքեանի, Աւետիս Քեշիշեանի: Ասոնք բոլորը պարտիզպաններ էին, բացի Հռութէն (աշակերտ), Լեփէճեանէն (ուսուցիչ) եւ Էքմէքճեանէն (ջաղացպան): Կազմուեր էր դիւան՝ ատենապետութեամբ Սամուէլ Սերփէքեանի, ատենադպրութեամբ Լեփէճեանի, «գանձապետ»ութեամբ Յակոբ Պոյրազեանի:

ԵՇՅն կը վաւերացնէ վարչութիւնը, կը խոստանայ ամսօրեայ տեղեկագրեր ղրկել եւ կը ղրկէ կնիքը ու Ռըսէյֆայի մասնաճիւղը կ'ունենայ իր թիւը՝ 84: Այնուհետեւ ընթացք կ'առնէ անդամավճարներու դրութիւնը: ԵՇՅի թելադրութեամբ անդամավճարները կը փոխանցուին Երուսաղէմի մասնաժողովին: Աւելի ետք մասնաճիւղը կը կազմակերպէ Մշակոյթի Կիրակիի նուիրահաւաքը եւ կը գոյացնէ 100 պ.ղ., փափաք կը յայտնէ

[44] Այս թիւերը երկար ժամանակ գրեթէ անփոփոխ կը մնան. ընտանիքներուն թիւը կ'աւելնայ չորսով, բնակչութեան թիւը կը տարուբերի 45ի եւ 56ի միջեւ: Միայն 1959ին թիւը կը բարձրանայ «շուրջ 80»ի:





ստանալ Միութեան հրատարակութիւններէն, որովհետեւ «բոլորովին զրկուած ենք հոս հայկ. հրատարակութիւններէ»[45], իսկ աւելի ետք՝ Ե. Աղաթօնի *Օգտակար Գիտելիքներ եւ Գործնական Խրատներ* հատորը[46]: Հոկտեմբերին Լեփէճեան կը տեղափոխուի Եաֆա: Վարչութեան մէջ զինք կը փոխարինէ նոր ուսուցիչը՝ Զօհրապ Լեւոնեան:

Մասնաճիւղին գործունէութեան հիմնական առանցքը կ'ըլլայ դպրոցը, մանաւանդ որ դժուար կ'ըլլայ անոր պահպանումը: 12-14 աշակերտ հաշուող դպրոցին ՀԲԸՄը կը յատկացնէր տարեկան 24 անգլ. ոսկի: 1942-43 կրթաշրջանին օրինակ, կարելի չ'ըլլար դպրոցը վերաբանալ՝ ուսուցիչի չգոյութեան պատճառով: Ուշագրաւ է ԵՇՅի եւ մասնաճիւղին վարչութեան միջեւ ծաւալած նամակագրական փոխասացութիւնը այս առնչութեամբ. Ռըսէյֆայի վարչութիւնը կը խնդրէ ԵՇՅին՝ «փոխան նպաստի ուսուցիչ ղրկէիք մեզի, որովհետեւ վերոյիշեալ տեղերու բնակչութիւնը մեծ փափաք ունի բաց պահել տեղւոյս դպրոցը, եւ այս որքան շուտ՝ այդքան գոհ կ'ըլլանք»: ԵՇՅի պատասխանը կ'ըլլայ ոչ-խոստմնալից. «դժբախտաբար ամէն կողմ ուսուցչի պակաս կայ: Սուրիոյ մէջ ալ կարգ մը գիւղական վարժարաններ չբացուեցան ուսուցչի պակասին հետեւանքով: Ուսուցիչներէն շատեր ալ յանձնառու չեն ըլլար գիւղերը երթալու: Մենք հնարաւորութիւն չունինք ուսուցիչ տրամադրելու, որովհետեւ ինչպէս ըսինք՝ չկայ»: ԵՇՅն կը դիմէ Յարութիւն Աբղ. Մուշեանին, բացատրելով թէ «մեզի համար անկարելի է ուսուցիչ տրամադրել» եւ կը թելադրէ ուսուցիչ գտնել Պաղեստինէն, եւ կամ «Լիբանանէն, եթէ տեղդ գալու դիւրութիւններ տրուին անոր»: Մուշեան 9 Յունիս 1943 թուակիրով կը հաստատէ նոյնը եւ կը թանձրացնէ գոյները. «մեզի համար անկարելի կ'ըլլայ ուսուցիչ ճարել...: Այս տարի ցաւ ի սիրտ կը յայտարարեմ որ Ռըսէյֆայի մանուկներ արաբ փողոցայիններու փողոցային ընկերներ եղան ժառանգելով անոնցմէ շատ մը գէշ բաներ: Եթէ այսպէս շարունակուի Ռըսէյֆայի յաջորդ հայ սերունդը բոլորովին պիտի ուծանայ»: 21 Օգոստոս 1943 թուակիրով ԵՇՅն կը վերահաստատէ թէ ինք կարելիութիւնը չունի ուսուցիչ ղրկելու, բայց

[45] Ի պատասխան կը ղրկուի միութեան ամսական տպագիր տեղեկագիրը:
[46] Երուանդ Աղաթօն փոխնախագահն էր ՀԲԸՄին:

պատրաստ է 25 ոսկիի յատկացումը շարունակելու եւ «հետեւաբար գաղութիդ կը մնայ պէտք եղածը կարգադրել եւ վարժարանին բացումը ապահովել յառաջիկայ դպրոցական տարեշրջանին»:

Վարժարանին փակ մնալը դուռ կը բանայ խլրտումներու: Ատենապապետ Սերփէքեան կը գրէ «հակաբարեգործական»[47] դժգոհութիւններու մասին, մատնանշելով որ ջանք կայ տապալելու տեսուչը, այն առարկութեամբ թէ ռըսէյֆացիներուն մասնավճարները կ'երթան ուրիշ տեղ, մինչ Բարեգործականը չ'օգներ դպրոցին: Սերփէքեան կ'առաջարկէ որ ԵՇՅն շարունակէ յատկացումները, իսկ մնացեալ բացը Ռըսէյֆայի հայերը փակեն եւ կարելի ըլլայ ուսուցիչ մը ապահովել: Նման մտահոգութեամբ, Մուշեան կը խոստանայ, որ «փակելու համար գանգատողներուն ճամփան» պիտի լծուի ամէն գնով ուսուցիչ ճարել, մատնանշելով որ ամսական պէտք պիտի ըլլայ վճարել 7 ոսկի, թէեւ Ռըսէյֆայի 5 կամ 6 զաւակներ ունեցող ընտանիքներ դժուար թէ կարենան այդ գումարը հոգալ եւ կ'առաջարկէ որ ուսուցիչին տրուելիք գումարին գէթ կէսը հոգայ ԵՇՅն:

Սեպտեմբեր 1943ին, տարի մը դադրելէ ետք, կը վերաբացուի ծաղկոցը. Մուշեան կը տեղեկագրէ թէ ուսուցչութեան միքանի թեկնածուները հրաժարած են ամսականի քիչութեան պատճառով, բայց արդէն պաշտօնակոչուած է մարաշցի Զարուհի Ալաճաճեան, «քիչ շատ զարգացած» կին մը: ԵՇՅն գոհունակութիւն յայտնելով ուսուցիչի պաշտօնակոչման կը յուսայ որ «ուսուցչուհին վարժարանին մէջ կը նուիրուի լոկ իր կրթական մշակի պարտականութեանց», անուղղակիօրէն բարձրաձայնելով ի՛ր իսկ մտահոգութիւնը՝ ուսուցիչներու միութենական գործունէութեան առումով:

Ըստ 1943-44 կրթաշրջանի տեղեկագրին, ծաղկոցը կ'ունենայ «գոհացուցիչ վիճակ մը» եւ 11 աշակերտ, որոնցմէ 1 աղջիկը՝ կոկոն, երկուքական մանչ եւ աղջիկ՝ ծաղիկ, մէկ մանչ եւ 2 աղջիկ՝ Ա., եւ երկու մանչ ու մէկ աղջիկ՝ Բ. դասարան են (աւելի ետք, աշակերտութեան թիւը կ'իջնէ 8ի), իւրաքանչիւր աշակերտ ամսական կը վճարէր 30 պ.ղ., որ 9 ամսուան վրայ կը գոյացնէր 21600 պ.ղ., որուն վրայ կ'աւելնար ՀԲԸՄի 25 ոսկիի յատկացումը, մինչ ուսուցչուհիին տարեկան կը վճարուէր 60 պ.ո., որով բաց կը մնար 19400 պ.ղ., զոր փակեր էին ռըսէյֆահայերը:

Ուշագրաւ է 1944-45 կրթաշրջանի ծաղկոցին նիւթական ելումուտքը, ըստ Մուշեանի Ապրիլի հաշուետուութեան.-

Ելք		Մուտք	
Ուսուցիչին	80000 պ.ղ.	11 աշակերտներէն	44000 պ.ղ.
Փայտ	4000 պ.ղ.	Հանդէսէն	7000 պ.ղ.

[47] Սերփէքեան զանոնք դաշնակցական կ'որակէ, իսկ Մուշեան՝ հակաբարեգործական: Հակառակ անոր որ Մուշեան «Ռըսէյֆայի գաղութը բոլոր մարաշցիներ... եւ բուռն բարեգործականճի» կը նկատէ:

Ծեփ (դպրոցին)	3500 պ.ղ.	Աշակերտաց մուտքէն	1100 պ.ղ.
Նստարաններու նորոգթն.	5000 պ.ղ.	Նուէր զանազաններէ	3750 պ.ղ.
Գործարանի նորոգթն.	2000 պ.ղ.		
Հանդէսի տոմսերու	750 պ.ղ.		
Ուսուցչի ճամփու ծախսի	2250 պ.ղ.		
Գումար	97500 պ.ղ.		55850 պ.ղ.

Վարչութիւնը կ'առաջարկէ որ ՀԲԸՄի յատկացումը բարձրացուի «գէթ» 35 պ.ո.ի, իսկ ԵԾՅն յատկացումը կը բարձրացնէ 30ի եւ զայն կը փոխանցէ Ամմանի մասնաժողովին միջոցաւ:

1945-46 կրթաշրջանին ծաղկոցը կը բանայ իր դռները ուսուցիչ ունենալով 20ամեայ Օհան Մարուքեանը (Երուսաղէմի ժառանգաւորացի նորաւարտ սան), 90 պ.ղ. տարեգումարով, իսկ «անոր ապրուստին համար պէտք եղած ուտեստեղէնը կը հոգացուի գիւղիս հայ հասարակութեան կողմէ»: Ծաղկոցին սաներն էին.- Կարապետ Աւագեան, Իսահակ Սերփէքեան, Զաւէն Էքմէքճեան, Հայկազ Էքմէքճեան, Նուարդ Աւագեան, Մարի Էքմէքճեան, Մարի Պոյրազեան, Նուէր Քէշիշեան, Մարի Աւագեան, Վրէժուհի Էքմէքճեան՝ ընդամէնը 10 հոգի, որ կը բարձրանայ 16ի՝ «օտար» աշակերտներու ընդգրկումով, այն արդարացումով, թէ՝ «հայ աշակերտներէն 6ին ամսավճարը 65 պ.ղ. է եւ 4ինը՝ 30..., պզտիկ ըլլալնուն պատճառով: Օտարներուն ամսավճարն է 50ական պ.ղ., ընդամէնը ամսական 810 պ.ղ....»: Կրթաշրջանի վերջնական հաշուեկշիռը կ'առնէ հետեւեալ պատկերը.- 15 աշակերտներու ամսաթոշակներէն՝ 59400 պ.ղ., ՀԲԸՄի նպաստ՝ 30000 պ.ղ., եկեղեցիէն հասոյթ՝ 6870 պ.ղ.: Ելք.- դպրոցի զանազան ծախքեր՝ 15130 պ.ղ., ուսուցիչի տարեկան՝ 90000 պ.ղ., բաց՝ 8860 պ.ղ., զոր կը փակեն «գիւղի ազգայինները»:

Յատկանշական է մասնաճիւղին ատենապետին բնութագրումը՝ ռըսէյֆահայութեան. «ուսուցիչին ուտելիքը եւ լուացքը գիւղիս վրայ է: Մենք պարտիզպանութիւն կ'ընենք եւ հազիւ կրնանք մենք զմեզ ապրեցնել կեանքի սա սուղ օրերուն»: Իմաստալից է նաեւ ռըսէյֆահայութեան՝ ծաղկոցին մէջ օտար աշակերտներու ներկայութեան արդարացումը. «...կը փափաքէինք որ ներողամիտ գտնուէիք... գիտէք որ մենք ալ օտար եւ քախթական (sic!) ենք այս գիւղին մէջ, մենք փափաքեցանք եկեղեցի եւ դպրոց մը շինել տալ. գիւղին բուն բնակիչները չերքէզներն են. բոլոր արտերը եւ գիւղը անոնց է. մենք վարձքով առած էինք. երբ անոնց առաջարկեցինք որ եկեղեցիի եւ դպրոցի կարօտ ենք, իրենց արտերէն ձրի ըլլալով մեզի եկեղեցիի եւ դպրոցի տեղ տուին եւ ուրիշ բան մը ձրի ըլլալով դպրոցի համար 11 հատ կարգ եւ խզիր տուին կրելու համար [շինանիւթերը]. մենք աղքատ եւ խեղճ վիճակի մէջ այս բարիքը ըրին [մեզի]. հիմա մենք ստիպուած ենք իրենց պզտիկները դպրոց

ընդունելու[48]... այս տարի անձրեւ չգալէն մեր արտերը եկամուտ չբերին, ամէն տեսակէտով սուղութիւն եւ գործ քիչ, առաջ մեր ամէնուն տունը 9-10 կով կ'ըլլար, այսօր՝ ոչ մէկ հատ ... անոնց մէջ կ'ապրինք, գործերնիս անոնցմով կը դառնայ, պէտք է անոնց հետ հեզ վարուիլ եւ սրտերնին շահիլ: 10 ընտանիք հայ օտարներու մէջ ապահով եւ հանգիստ ապրելու համար ասկէ զատ ինչ կրնանք ընել եւ այս [ծաղկոցին] մեծ գումարը ինչպէս պիտի պատրաստենք»[49]: Աւելի ետք, այլ վկայութիւն մը կը հաւաստէ թէ արաբ գիւղի միակ դպրոց ունենալը «մեծ պատիւ կը բերէ մեր ազգին եւ հայրենիքին»:

1946-47 կրթաշրջանի ծաղկոցին նախահաշիւ իբրեւ կը նշուի 13 աշակերտ, մէկ ուսուցչուհի՝ 8 պ.ո. ամսականով (9 ամսուան համար), դպրոցաշէնքին անյարմարութեան պատճառով, ուսուցչուհիին կը վարձուի առանձին բնակատեղ մը 9 պ.ո. տարեկան վարձքով, օտար աշակերտներ՝ 7[50]: Այս առթիւ, 30 Սեպտեմբեր 1947 թուակիրով Կորիւն Վրդ. կ'ընդգծէ ԵՇՅին թէ ռըսէյֆացիք աւելի պէտք ունին այս տարի՝ «Անդրյորդանանի մէջ այս տարի տիրող աննախընթաց երաշտին պատճառով»: Ան Ռըսէյֆան «արաբական մութ անկիւն» կ'որակէ, ուր ուսուցիչներ չեն ուզեր երթալ: Յիրաւի, նախորդ տարուան վարժուհին՝ Հալէպէն, Օր. Զուարթ Զուրնաճեան չէր փափաքած շարունակել: Նոյն օրերուն, Ռըսէյֆայի վարչութիւնը դիմած էր ԵՇՅին շնորհակալութիւն յայտնելով ՀԲԸՄին որ «15 տարի բարերար եղած է եւ կրթութեան շնորհք պատճառած... պզտիկները կրթուելով երիտասարդ եւ երիտասարդուհիներ եղան... հիմա մեզմէ պզտիկները նոյն կրթութեան կարօտ են», սակայն «այս տարի դպրոց բանալու համար անցեալ տարիներէ տկար ենք պատճառը անձրեւ չըլլալն է, որ մեր բանջարեղէնները եւ ցորենները չեղան, սուղութեան մէջ ենք... չենք ուզեր որ դպրոցը գոց մնալով պզտիկները փողոցներու մէջ այսդին անդին թափառին. ձեզմէ կը խնդրենք որ այս տարի մեզի քիչ մը աւելի օգնելով դպրոցը շարունակենք... գիտենք որ ազգին ծանրութիւնը ձեր ուսին վրայ է, սակայն մեր կարօտութիւնն ալ ձեր աչքին առջեւ կը բերենք...»: 13 Դեկտեմբեր 1947 թուակիրով Մանուէլ Վրդ. կը յայտնէ որ

---

[48] Աշակերտները կը սորվէին «հայ լեզուն եւ հայ կրօնքը»:

[49] Խօսուն է յառաջացած բարեկամութիւնը. 14 Մարտ 1948 թուակիր նամակը կը նկարագրէ յարաբերութիւններու այլ երեսակ մը. «չերքէզ կիները կը վկայեն որ ձեր [եկեղեցական] արարողութեան վերջին անգամ երգածը (նկատի ունին Տէր Ողորմեան – Ա.Տ.) լսելու համար բոլորս դուրս կը վազենք ու կ'ըսենք իրարու Աստուած ասոնց մէջ է»:

[50] Ըստ 1946-47 կրթաշրջանի ծաղկոցին հաշուեկշիռին, աշակերտներէն գանձուած էր 95600 պ.ղ., իսկ ելքը եղած էր.- ուսուցչուհիին՝ 72000 պ.ղ., ուսուցչուհիին սենեակի վարձք՝ 9000 պ.ղ., ուսուցչուհիին կաղանդի նուէր՝ 3000 պ.ղ., դպրոցին համար գնուած փայտ՝ 1250 պ.ղ., դպրոցին շէնքին նորոգութեան ծախք՝ 4450 պ.ղ., զանազան ծախքեր՝ 1250 պ.ղ.:

հակառակ «շատ մը խոչընդոտներու»[51] վերաբացուած է ծաղկոցը որուն պաշտօնակոչուած է Ամմանէն Օր. Ռոզէթ Եկէնեան, 12 պ.ո. ամսականով, ան լաւ արաբերէն գիտէ, «բաւականաչափ հայերէն եւ քիչ մըն ալ անգլերէն», աշակերտութեան թիւը 20 է, ներառեալ՝ արաբ եւ չերքէզ:

1949-50 կրթաշրջանին ծաղկոցին աշակերտութեան թիւը 20 է, կը պաշտօնակոչուի «շատ շնորհալի եւ արժէքաւոր վարժուհի մը 12 պ.ո. ամսականով՝ Օր. Ագապի Գափլանեան[52], շրջանաւարտ Երուսաղէմի Թարգմանչաց Վարժարանէն, ռըսէյֆացիները շատ գոհ են իրենց վարժուհիին տարած աշխատանքէն»: Կարծէք հունաւորուած է ծաղկոցին կեանքը, ԵՇՅն Ամմանի մասնաճիւղին կը թելադրէ Կորիւն վարդապետին փոխանցել՝ 30 ոսկի առ հաշիւ 1949-50 տարեշրջանի Ռըսէյֆայի ծաղկոցին, որ այժմ կը կոչուի «Դուրեան»:

1951-52 կրթաշրջանի ամավերջի հանդէսին վարժարանը 40 ոսկիի եկամուտ մը կ'ունենայ. այդ գումարով կը կատարուին նորոգութիւններ, հողէ տախտակամածը կը ծեփուի եւ «իսկապէս դպրոց մը եղաւ»: Գոյացած գումարէն 10 պ.ո. նուէր կը տրուի Անդրյորդանանի Հայ Կարմիր Խաչին... «մեր կատարած հանդէսը շատ շքեղ հանդէս մը եղաւ եւ բոլոր ժողովուրդը զարմացան թէ ինչպէս կարելի է 20 աշակերտով մէջտեղ բերել այսքան շքեղ հանդէս մը»:

Ծաղկոցին նախանձախնդիր հոգածութեան կողքին, մասնաճիւղը կը գումարէր պարբերական վարչական եւ անդամական ժողովներ, կը կազմակերպէր ՀԲԸՄի տարեդարձի[53] ձեռնարկ, Մշակոյթի Կիրակիի նուիրահաւաք[54]: Այս ձեռնարկները կարծէք կը հանդիսանային երաշխիք՝ ԵՇՅի յատկացումներուն, կարծէք կը յարգուէր "կողմերուն" միջեւ փոխադարձ յանձնառութեան լուռ համաձայնութիւնը: Մասնաճիւղը կը

---

[51] Հաւանաբար նկատի ունի նաեւ տնտեսական, ուսուցիչ ճարելու, ուսուցիչի կեցութեան եւ ծաղկոցի պայմաններուն դժուար պարագաները:

[52] Ուսուցչուհին կը պաշտօնավարէ նաեւ յաջորդ երկու տարեշրջաններուն:

[53] 27 Ապրիլ 1946ին մասնաճիւղը կը նշէ ՀԲԸՄի հիմնադրութեան 40ամեակը, այդ առթիւ կ'ըլլան նուիրատուութիւններ, որոնց գումարը կը հասնի 4 պ.ո.ի եւ կ'ըլլան նորագիրներ: Ձեռնարկին բացումով Կորիւն Վրդ. խօսած էր «Ի՞նչ է բարեգործութիւնը. հայ ազգը բարեգործ միշտ», եւ՝ «Ընդհ. տեղեկագիր Ռըսէյֆայի ՀԲԸՄի Մասնաճիւղին» նիւթերով, կատարած էր նաեւ փակումը հանդէսին, վարժարանի սաները երգած էին «Տէր Կեցո», «Բանակ Եմ Գնում», «Հայաստանի Գարուն», «Երբ Որ Բացուին», «Հայաստանի Ոստան» երգերը, կիթառի վրայ նուագած էր Ա. Աւագեան՝ «Թամբը Ձեռին», «Մեր Հայրենիք» «Բարձր Սարեր», «Ձէյթունցի Ենք», «Իբրեւ Արծիւ» եւ «Բամ Բորոտան» երգերը, բանախօսած էր Վ. Նագգաշեան՝ «ՀԲԸՄ Հիմնադրութիւնը եւ անոր ունեցած դերը հայոց մէջ» նիւթով, Մարի Էքմէքճեան մեներգած էր «Օրօր»ը, Նուարդ Աւագեան արտասանած «Լուսաւորչի Կանթեղը» եւ «հայր մեր»ով փակուած էր ձեռնարկը:

[54] Ամէնամեայ այս նուիրահաւաքին կը գոյանայ 100 պ.ղ.:

'շնչէր' նաեւ Միութեան գործունէութեամբ. Ընդելուզուած էր անոր լայնածիր ցանցին ու գործունէութեան, կը ստանար միութենական տեղեկագրերը եւ հաշուեկշիռները, նաեւ՝ ՀԲԸՄ 1955ի, 1957ի եւ 1959ի ընդհանուր ժողովներուն մասնակցելու հրաւէր եւ փոխանորդագիր[55]: Ան ցաւով կ'իմանայ ՀԲԸՄ նախագահ Արշակ Գարակէօզեանի անհանգստութեան լուրը եւ կը յուսայ որ «մեր բոլոր ժողովուրդին աղօթքները այդպիսի անձնուէր մարդու մը համար վստահ ենք որ իզուր չպիտի ըլլան, եւ իր մատուցած բարիքները եւ անխնայ աշխատանքները վստահ ենք որ օր մը իր դիմաց պիտի ելլեն»:

...Սակայն, 1948-49 պաղեստինեան տագնապը, ապա Ամմանի մասնաճիւղին ամլութիւնը, հուսկ եւ մանաւանդ՝ Եգիպտոսի նասէրական յեղաշրջումը (որով ԵՇՅն չի կրնար յատկացումներ փոխանցել)[56], կը խախտեն հաղորդակցամիջոցները, տակաւ կը դժուարացնեն փոխանցումները[57] եւ առաւել տագնապի կը մատնեն Ռըսէյֆայի ծաղկոցին գոյութիւնը[58]: Վարչակառավարման մեծ փոփոխութիւններու կ'ենթարկուի ՀԲԸՄը, մանաւանդ՝ Մ. Նահանգներ հաստատուած Կեդրոնի ամրապնդումով: Պահ մը, աշխարհագրական այս տեղափոխութիւնը երկրորդական կը դարձնէ Միջին Արեւելքի հայօճախները, յատկացումներու հայեցակարգն ու քաղաքականութիւնը...:

Միւս կողմէն, նոյնինքն Ռըսէյֆայի մէջ տեղի ունեցած զարգացումները կ'ունենան իրենց բացասական հետեւանքները ռըսէյֆահայութեան եւ անոնց ծաղկոցին վրայ: Լատին միսիոնարներ կը հիմնեն դպրոց, որուն հետեւանքով ծաղկոցին ոչ-հայ աշակերտները կ'անցնին լատինաց դպրոց, մեծապէս նուազեցնելով ծաղկոցին եկամուտը: Անդին, ֆոսֆաթի հանքերու յայտնաբերումով մեծաթիւ հանքափորներ բնակութիւն կը հաստատեն

---

[55] Մասնաճիւղը իրեն իբրեւ փոխանորդ կ'ընտրէ Ալեքս Մանուկեանը, Գրիգոր Կիրակոսեանը, Գրիգոր Համբարձում Գալուստեանը, Հիւս. Ամերիկայի Առաջնորդ Սիոն Արք. Մանուկեանը...:

[56] 1949ին ԵՇՅն կարգադրութիւններ կրցեր էր ընել Ռըսէյֆայի դպրոցին 1947-49 երկամեայ նպաստը (60 պ.ո.) Գէորգեանի միջոցաւ կատարելու, սակայն այնուհետեւ առաւել կը դժուարանայ վիճակը: Իսկ պաղեստինեան դէպքերուն բարդացումով ԵՇՅն մասնաճիւղին հետ հաղորդակցութեան կապ կը դարձնէ Կորիւն Վրդ.ը:

[57] «Հնարաւորութիւն» չունենալով յատկացումները «ուղղակի ղրկելու», 24 Մարտ 1952 թուակիրով ԵՇՅն կը թելադրէ Մանուէլեանին՝ Ռըսէյֆայի վարչութեան մօտ գտնուած անդամավճարներու գումարը յատկացնել ծաղկոցին, նաեւ՝ Ամմանի վարչութեան առկայ գումարը փոխանցել Ռըսէյֆայի ծաղկոցին, իսկ մնացեալ յատկացումին համար ԵՇՅն պիտի փութար կարգադրութեան միջոց մը խորհիլ:

[58] Կային եւ այլ 'երկրորդական' տագնապներ, ինչպէս թուղթի տագնապը, որուն պատճառով Օգոստոս 1945ին կը դադրի Միութեան *Ամսօրեայ Տեղեկագիր*ի հրատարակումը նաեւ «արտասահման առաքման դժուարութեանց պատճառով»:

Ռըսէյֆա, ուր կը փոխուի ժողովրդագրութիւնը, կը փոխուին նկարագիրն ու դիմագիծը գիւղին, որ արագօրէն կը վերածուի աւանի, ապա՝ քաղաքի…:

Այս զարգացումները իրենց հետեւանքը կ'ունենան Ռըսէյֆայի ՀԲԸՄ մասնաճիւղին եւ անոր ծաղկոցին վրայ: Տնտեսական դժուարութիւններ կը նկատուին ընտանիքներուն մէջ, կարգ մը աշակերտներ կը դժուարանան վճարել իրենց կրթաթոշակը, մինչ ծաղկոցին համար անհրաժեշտ էին ստիպողական նորոգութիւններ:

Յստակ է, որ շրջանային, յորդանանեան, տեղական եւ միութենական իրարայաջորդ փոփոխութիւններուն համապատասխան համեմատութեամբ քայլեր ձեռնարկելու ատակ չէր ո՛չ ռըսէյֆահայութիւնը, ո՛չ ալ մասնաճիւղը: Ռըսէյֆահայութիւնը շուրջ երեք տասնամեակ ապրած էր գիւղական զարգացման համապատասխան կշռոյթով, հետեւաբար իր ընկերամշակութային թէ ժողովրդագրական նախապայմանները բաւարար չէին առողջ եւ մեծաքայլ համայնքային վերարտադրութեան…:

Այս պայմաններուն մէջ, մասնաճիւղին հետեւողական ճիգերը՝ ծաղկոցը բաց պահելու համար յատկացումներ ստանալու, չեն արդիւնաւորուիր: Յուսահատ, մասնաճիւղը 20 Օգոստոս 1955 թուակիրով դժգոհանքով կը գրէ ԵՇՅին՝ «մեր հաղորդակցութիւնը վերջ գտաւ», որովհետեւ 3 տարիէ իվեր յատկացումները կասած են Ամմանի մասնաճիւղին վերակազմութեան պատճառով: Ծաղկոցին ծախքերուն (150 տինար ծախք, 12 տինար ամսական՝ ուսուցիչին, կայ նաեւ տանիքի ծեփը, ջուրին ծախքը) կ'օգնէր Եգիպտոսի Շրջանակային Յանձնաժողովը եւ վանքը, իսկ այս տարի գրասեղանները հինցած են, որոնք վանքին հին գրասեղաններն էին»: Նամակը կը խնդրէ որ «սա ցաւալի վիճակին ճարին բան մը» մտածեն եւ յոյս կը յայտնէ որ նամակը անպատասխան չի մնար[59]: Իդէպ, այդ տարի ծաղկոցը կը հաշուէր 17 աշակերտ, որոնցմէ ամսական կը գանձուէր 5,75 յ.տ., մինչ ուսուցչուհի Աննա Շնորհաւորեանը ամսական կը ստանար 12 յ.տ.: Սակայն, ԵՇՅն չէր կրնար Եգիպտոսէն դրամական առաքում կատարել, եւ յոյս կը դնէր Ամմանի կազմալոյծ մասնաճիւղին վերակազմութեան, յենելով նորընտիր պատրիարքական տեղապահ Ներսոյեանի ճիգերուն[60]:

Յաջորդ՝ 1956-57 տարեշրջանին եւս յատկացում չի ստացուիր: Ռըսէյֆացիներուն դժգոհութիւնը կը շեշտուի, մանաւանդ երբ անոնք կը գիտակցին, որ «Ամմանի ժողովուրդը … իրարու հակառակ են եւ այդ

[59] Նման բովանդակութեամբ (10 Դեկտ. 1955) նամակ կը գրէ նաեւ Կորիւն Վրդ., յայտնելով որ իրենց անձանօթ պատճառներով երեք տարիէ իվեր 30 տինարի տարեկան նպաստը չի ղրկուիր, կը շեշտէ որ ծաղկոցը «շատ նեղ վիճակի մէջ է», եւ կ'առաջարկէ գումարը ղրկել Պէյրութի գրասենեակէն:

[60] Բայց պատրիարքարանին մէջ եւս կը յառաջանայ տագնապ երբ Ներսոյեանի դէմ կը ծաւալի ընդդիմութիւն…:

պատճառաւ մէկ կողմը կը շինէ միւս կողմը կը քանդէ», ուստի եւ անյոյս կը գտնեն Ամմանի մասնաճիւղին վերականգնումը: ԵՇՅն չի մանրամասներ, բայց իր 20 Յունուար 1958 թուակիրը յստակ է. «Ձեր նիւթական անձկութեան պարագան աչքի առջեւ ունինք միշտ, սակայն խորապէս կը ցաւինք որ ներկայ պայմաններու մէջ բացարձակապէս անկարելի է ամէնադոյզն օժանդակութիւնն իսկ ընելու Ձեզի»: Կացութիւնը կը դառնայ անկարելի. 16 Նոյեմբեր 1958 թուակիրով ատենապետ Սերփէքեան կը գանգատի. «մեր գանձելի հաշիւը միութենէն՝ 6 տարուան տեւողութեամբ կը հասնի 140,75ի որ կը համապատասխանէ 402 տոլարի», գումար որ կը ծախսուի ուսուցիչին եւ դպրոցին, ապա եւ կը հարցնէ. «6-7 տարիէ իվեր դեռ յարմար առիթ մը չգտա՞ք որ չղրկեցիք» յատկացումը: Աւելի ետք, 1959ին ՀԲԸՄ ընդհանուր ժողովի կայացման առթիւ, Սերփէքեան կը գրէ. «Կ'աղօթենք որ Միութեանս Ընդհանուր Ժողովը խաղաղ եւ համերաշխ եղբայրական մթնոլորտի մը մէջ անցնի որպէսզի կարենայ լաւ պտուղ տալ»: Սերփէքեան քաղաքավարօրէն կ'ակնարկէր ԵՇՅի վարմունքին՝ երբ շտապողութիւն կը դնէր միութեան ընդհանուր ժողովին փոխանորդագիրերու ստացումին, մինչ կը ձգձգէր ծաղկոցին յատկացումը: Ան «սրտերու այրուածք»ով կը հարցապնդէր. «...ձեր խօսքին համեմատ յարմար առիթ մը արդեօք մինչեւ հիմա չեղա՞ւ որովհետեւ մեզի նման անապատի մէջ մնացած խեղճ 10-12 հայ ընտանիք մէջտեղ ձգեցիք» եւ կը հարցադրէ թէ ՀԲԸՄ Պօղոս Նուպարի «կարգադրած (ըսել կ'ուզէ հիմնած – Ա.Տ.) Բարեգործական Միութիւնը արդեօ՞ք մեզի պէս աղքատ ու անապատի մէջ մնացող ժողովուրդի համար [էր] ոչ թէ մեծ քաղաքներու ..»:

Ռըսէյֆայի ծաղկոցը 1960 կրթաշրջանին, ուսուցչուհի Օր. Մարի Ղարճեանի եւ Ամմանի հոգեւոր տեսուչ Արիս Վրդ. Շիրվանեանի հետ

Մասնաճիւղը 1960ի համարատուութեան կը կցէ ծաղկոցին նկարը ու կը բացատրէ. «Ահաւասիկ որբ դպրոցին առջեւը պզտիկները եւ տեսուչը... կարծեմ [կրցաք] հիմա գուշակել այս նկարէն դպրոցին շինութիւնը եւ ինչպէս ըլլալը. դպրոցը մատուռի պէս է ու պարիսպ չունի եւ երբ պզտիկները գնդակով խաղան, գնդակը կ'իյնայ պզտիկներուն ձեռքէն մինչեւ ծորը, պզտիկներն ալ գնդակի մը նման կը վազեն մինչեւ գտնեն ու զայն բերեն»: 21 Հոկտեմբեր 1961ին, Սերփէքեան կը գրէ յուսահատական նամակ մը եւս. «ծաղկոցը առանց օգնութեան անկարելի է որ շարունակէ իր պարտականութիւնը: Այն ժամանակ մեր պզտիկները ստիպուած պիտի ըլլան կառավարական դպրոց երթալու ու այս ալ պատճառ պիտի ըլլայ իրենց Մայրենի Լեզուն մոռնալու»:

1960ականներու սկիզբը, կը թուի հաղորդակցական պայմանները կը բարելաւուին, ԵԾՅն մասնաճիւղին կը ղրկէ 1955-57 տարեշրջաններու ՀԲԸՄ միացեալ տպագիր տեղեկագիրերէն, նաեւ ՀԲԸՄ 47րդ Ընդհանուր Ժողովի (3-4 Դեկտեմբեր 1960) փոխանորդագիրերը եւ կը թելադրէ՝ «ՕԴԱՅԻՆ ԹՂԹԱՏԱՐՈՎ... ԱՆՊԱՅՄԱՆ Նիւ Եորք...» ղրկել զանոնք: ԵԾՅն կը յայտնէ նաեւ թէ գրած է Միութեան «Պատկ. Կեդր. Վարչական Ժողովին, որպէսզի տարեկան որոշ յատկացում մը ընէ Ձեր (Ռըսէյֆայի – Ա.Տ.) վարժարանին, ինչ որ կը յուսանք թէ բարեացակամութեամբ նկատի կ'առնուի»: Յիրաւի, յատկացումներու նախաձեռնութիւնը - յանձնաձնումի բերմամբ - այլեւս չէր պատկաներ ԵԾՅին: Վերջինս 5 Ապրիլ 1961 թուակիրով «ցաւ կը յայտնէ թէ մեծապէս գնահատելով հանդերձ ձեր դպրոցը կանգուն պահելու համար տարուած ջանքերն ու ստանձնուած զոհողութիւնները, ներկայիս ի վիճակի չէ ընծայելու ակնկալուած օժանդակութիւնը», աւելցնելով թէ յառաջիկայ դպրոցական վերամուտին կրկին պիտի յիշեցնէ Ռըսէյֆայի պարագան Պատկ. Կեդր. Վարչ. Ժողովին՝ «ապահովելու համար իր նիւթական օժանդակութիւնը»: Արխիւային նիւթերը անտեղեակ կը ձգեն պրպտողը մասնաճիւղին յետագայ գործունէութենէն:



ԶԱՐՔԱ (1941-59)

Ոչ-աւելի քան 90 հայ[61] կար 1940ականներու սկիզբին Զարքայի մէջ (որոնք «պէտք եղածէն աւելի չքաւոր

[61] Այս թիւը կ'իջնէ 85ի՝ 1959ին:

էին»), ուր Տօնիկեանի[62] ջանքերով կեանքի կոչուած էին դպրոց մը՝ Մեսրոպեան, 20 աշակերտով[63] եւ ՀԲԸՄ մասնաճիւղը:

2 Կիրակի 16 Նոյեմբեր 1941ի յետմիջօրէի ժամը 4ին գումարուած էր տեղի ՀԲԸՄի առաջին ընդհանուր ժողովը, ներկայութեամբ 13 անդամներու, մինչ «միւս անդամները [թիւով տասնմէկ հոգի], զինուորական պաշտօնի վրայ էին»[64]: Գաղտնի քուէարկութեամբ ընտրուած էին երեք վարչականներ՝ Գրիգոր Վարդավառեան[65] (10 քուէ), Նիկողոս Յարութիւնեան[66] (9 քուէ) եւ Տիրան Պոտոսեան[67] (8 քուէ):

Վարչութիւնը 18 Նոյեմբերի իր առաջին նիստին ատենապետ կ'ընտրէ Պոտոսեանը, ատենադպիր՝ Յարութիւնեանը եւ գանձապահ՝ Վարդավառեանը: Դեկտեմբեր 1941 թուակիրով, ԵՇՅն կը վաւերացնէ մասնաժողովին վարչութիւնը եւ կը ղրկէ համապատասխան կնիք[68]:

Հակառակ Ռըսէյֆայէն գրեթէ կրկնակի թիւին՝ Զարքայի հայութեան կրթական-միութենական գործունէութիւնը դրուագային եւ ընդմիջարկուած կ'ըլլայ, որովհետեւ «...Զարքան զինուորական կեդրոն ըլլալուն... այդ քաղաքին բնակչութեան վիճակը անորոշ» կը մնար, ինչ որ կը դժուարացնէր նոյնիսկ միամեայ որոշումներ առնելը:

Զարքայի մէջ դպրոց բանալու խնդրով Տօնիկեան դիմեր էր ԵՇՅին ու Երուսաղէմի պատրիարքութեան աջակցութեան եւ ստացեր վերջինիս 20 պ.ղ.ով մասնակցութեան խոստումը, մինչ ԵՇՅն խոստացեր էր «իմօտոյ» գրել այդ հարցով[69]: Տօնիկեան կը տատամսի դպրոցի բացման խնդրով: Հուսկ, դպրոց կը բացուի Փետրուար 1942ին եւ կրթաշրջանը կ'երկարի մինչեւ ամառ: Սակայն, 1942-43 կրթաշրջանին դպրոցը կը փակուի՝ «հայ ընտանիքներուն մեկնումին պատճառով»:

---

[62] Տօնիկեան ոգեւորուած էր Ռըսէյֆայի մէջ դպրոցի հիմնումին յաջողութեամբ եւ ձգտած Զարքայի ու Քարաքի մէջ ալ դպրոց բանալ՝ յոյս դնելով ԵՇՅի նիւթական յատկացումին:

[63] Տօնիկեան՝ Անդրյորդանանի Հոգեւոր տեսուչի հանգամանքով պարբերական այցելութիւններ կու տար Յորդանանի ծայրամասային հայօճախները: Ան անպաշտօն հաղորդակցակապը կը դառնայ Զարքայի եւ Քարաքի մասնաճիւղերուն եւ ԵՇՅի միջեւ:

[64] Յետագային անդամներուն թիւը կը բարձրանայ 28ի:

[65] Հասանպէյցի Վարդավառեան 36 տարեկան էր, «զինուորական մեքենագէտ՝ սպայի փոխանորդի աստիճանով»:

[66] Վանեցի Յարութիւնեան 35 տարեկան էր, «զինուորական կօշկակար»:

[67] Աֆիոնգարահիսարցի Պոտոսեան 42 տարեկան էր, «Captain T.J. F.T.ի արաբական բանակին մէջ»:

[68] Մասնաճիւղը կը դառնար ՀԲԸՄի 90րդ մասնաճիւղը: Սկզբնական շրջանին հաղորդակցութիւնը կը պահպանուի Տօնիկեանի միջոցով:

[69] Աւելի ետք ԵՇՅն եւս կ'ընդառաջէ եւ յատկացումները կը կատարէ Երուսաղէմի մասնաճիւղին միջոցով:



Դժուար կ'ըլլայ նաեւ վարչական եւ անդամական ժողովներ գումարելը, ձեռնարկ կազմակերպելը: Տօնիկեան կը բացատրէ. անդամներուն մեծամասնութիւնը «կառավարական զինուորներ [ըլլալով] ամէն օր տեղ մը կ'երթան ստիպողական պատճառներով», նոյնիսկ վարչութիւնը (որուն երեք անդամներէն երկուքը սպաներ էին) չի կրնար յաճախակի ժողովներ գումարել[70], կը սահմանափակուի անդամավճարներու գանձումով եւ անոնց փոխանցումով Երուսաղէմ՝ Պանք Օթոմանի վրայ քաշուած չէքերով[71], եւ պարբերական հաղորդակցութիւն կը պահէ ԵՇՅի հետ, պարտաճանաչօրէն գործելով կարելիին սահմաններուն մէջ:

22 Յուլիս 1943 թուակիր պաշտօնագրով վարչութիւնը կը բացատրէ թէ իրենց նամակ չգրելուն պատճառը ժողով գումարել չկարենալն է: Նամակը կը բացատրէ նաեւ թէ անդամներուն մեծ մասը «կառավարական զինուոր» ըլլալով ընդհանրապէս Զարքայէն դուրս կը գտնուին: Վարչութիւնը նամակով կը պարզէ թէ Երուսաղէմ ղրկած է 2900 պ.ղ.՝ Լեւոն Գէորգեանին, փափաքելով որ մասնաժողովին գործունէութիւնը «զանց» ըլլայ, մինչեւ որ «վերջաւորութիւնը յայտնի ըլլայ»: 3 Օգոստոս 1943 թուակիրով ԵՇՅն շնորհակալութիւն կը յայտնէ նամակին եւ փոխանցուած գումարին համար ու վստահութիւն՝ թէ առաջին իսկ հնարաւորութեան մասնաժողովը պիտի շարունակէ իր գործունէութիւնը:

Փաստօրէն կ'առկախուի մասնաճիւղին գործունէութիւնը, թէեւ փորձեր կ'ըլլան վերակազմելու զայն, ինչպէս 1952ին[72]:

ՀԲԸՄ Գահիրէի արխիւատան Զարքայի թղթապանակին մէջի յաջորդ եւ վերջին փաստաթուղթը կը կրէ 1959 թուականը, որմէ կը պարզուի թէ վարչութիւնը կը բաղկանար Փայլակ Կէօքկէօզեանէ (ատենապետ), Յարութիւն Գալինճեանէ (ատենադպիր), Յակոբ Վահիճեանէ (գանձապահ), Աբրահամ Գրիգորեանէ եւ Գէորգ Քեշիշեանէ

[70] Որով «գրեթէ դադրած» կը նկատուի անոր գործունէութիւնը 1942ի վերջաւորութեան, մանաւանդ երբ անպատասխան կը մնան ԵՇՅի աւելի քան չորս դիմումները հաշուետուութեան:

[71] 1941ի վճարումներու հաշուոյն, վարչութիւնը կը ղրկէ 655 պ.ղ. չէք մը:

[72] Փորձ կը կատարուի Զարքայի հայութեան «մուխթար», ատամնաբուժ Յարութիւն Փոլատեանի միջոցով յառաջացնել մասնաճիւղ մը: Առկայ արխիւային նիւթերը ոչինչ կը յաւելեն այս տեղեկութեան:

(խորհրդական): Այդ տարեշրջանին Զարքայի մասնաճիւղը կը հաշուէր 12 անդամ, գումարած էր 1 ժողով:

Քարաք (1941-46)

Վերոյիշեալ արխիւային նիւթերուն մէջ անցողակի ակնարկութիւններու կը հանդիպինք Քարաքի ՀԲԸՄի մասնաճիւղին մասին: Կը պարզուի որ մասնաճիւղը գործած է գէթ 2 Դեկտեմբեր 1941-9 Սեպտեմբեր 1946 շրջանին, սկիզբը ունեցած է 8 անդամ եւ անդամավճարները (4250-11900 պ.ղ.) ղրկուած են Ամմանի մասնաճիւղին:

Քարաքի մէջ գործած է նաեւ ՀԲԸՄ նպաստընկալ վարժարան՝ գէթ 1941-42, 1943-44 եւ 1944-45 կրթաշրջաններուն[73]: Իդէպ, Քարաքի վարժարանին 1944-45 կրթաշրջանի նախահաշիւն էր.- տղոց ամսավճարներէն՝ 50 պ.ղ., վանքէն ստացուած նպաստ՝ 18 պ.ո., մասնաւոր հանգանակութիւններէ՝ 15 պ.ո.= 83 պ.ո.: Իսկ ելքը եղած էր.- Աւագ ուսուցիչի ամսավճար՝ 7x10= 70 պ.ո., արաբերէնի ուսուցիչի՝ 30 պ.ո., դպրոցի վարձք՝ 25 պ.ո.= 125 պ.ո.: Նախորդ կրթաշրջանին համեմատութեամբ աւելցած էին վճարումները աւագ ուսուցիչին (50էն 70 պ.ո.), արաբերէնի ուսուցիչին (20էն 25 պ.ո.) եւ դպրոցաշէնքին (15էն 25 պ.ո.):

Սակայն, արխիւային առկայ նիւթերը չեն յստակացներ Քարաքի հայութեան թիւը, ոչ ալ մասնաճիւղին գործունէութիւնը, բացի անդամավճարներու պարբերական առաքումներէն[74]՝ Ամմանի մասնաճիւղին, ապա՝ Երուսաղէմի մասնաժողովին: Տօնիկեան, որ մօտէն կը զբաղէր Անդրյորդանանի ծայրամասերու հայութեամբ, կը գանգատի որ Քարաքը Ամմանէն հեռու ըլլալով, «գործերս չեն ներեր որպէսզի յաճախ այցելեմ...»:

ՅԳ. ՍԱԼԹ ԵՒ ԻՐՊԻՏ

26 Ապրիլ 1942 թուակիրով Տօնիկեան կը գրէ ԵՇՅին, թէ տօնական օրերուն այցելած է Իրպիտ եւ Սալթ գիւղաքաղաքները եւ «սիրտս շարժեցաւ երբ տեսայ հայ մանուկներուն արաբերէն եւ թուրքերէն լեզուաւ խօսիլնին»: Ան կ'առաջարկէ ճիգ չխնայել՝ փրկելու այս գաղութներուն նորահաս սերունդը եւ կը մանրամասնէ, թէ Իրպիտի մէջ 20 հայ աշակերտցու կայ, որոնցմէ 7 աշակերտցուի ծնողք «անկարող են վճարելու», կը նշէ նաեւ միւս ծնողաց վճարելու սահմանը, ու կ'աւելցնէ թէ Իրպիտի մէջ դպրոցի մը տարեկան ամավարկը պիտի բաղկանայ դպրոցաշէնքի վարձքէ ու մանր

[73] ԵՇՅն վարժարանին կը յատկացնէ 25 անգլ. ոսկի՝ 1944-45 կրթաշրջանին համար:

[74] Արխիւային նիւթեր կը հաստատեն առաքումներ՝ Յունիս եւ Նոյեմբեր 1943ին, Մարտ եւ Յունիս 1944ին, Յուլիս 1945ին, Սեպտեմբեր 1946ին:

ծախքէ՝ 15500 պ.ղ. եւ ուսուցիչի թոշակէն՝ 40000 պ.ղ., ընդամէնը՝ 55500 պ.ղ., մինչ աշակերտներէն պիտի կարելի ըլլայ գանձել 15500 պ.ղ., ընդգծելով 40 պ.ո.ի յատկացումի մը կարիքը: Տօնիկեան կը ներկայացնէ նաեւ նման նախահաշիւ մը Սալթի աշակերտութեան համար, ուր 23 աշակերտցուներէն 8ը անկարող են վճարել ու կ'եզրակացնէ թէ Սալթի դպրոցին ամավարկը պիտի ըլլայ.- 10000 պ.ղ. տան վարձք եւ մանր ծախքեր, եւ 30000 պ.ղ.՝ ուսուցիչի, մինչ աշակերտներէն պիտի կարելի ըլլայ գանձել 10000 պ.ղ. եւ բաց պիտի մնայ 30000 պ.ղ.: Տօնիկեան կ'ամփոփէ՝ «եթէ կարենաք այս երկու գաղութներուն համար վճարել 70 լիրա պաղեստինեան՝ կը փրկուին հայ մանուկները ձուլումէ»:

13 Մայիս 1942 թուակիրով ԵՇՅն կը պատասխանէ Տօնիկեանին թէ վերոյիշեալ նամակին առթիւ «ի մօտոյ» պիտի գրէ, միաժամանակ սակայն կ'աւելցնէ թէ «Միութենէս ակնկալուած աջակցութիւնը համեմատական չէ ծնողքներուն յանձնառութեանց հետ որ պէտք է աւելցուի տակաւին եւ նաեւ ստեղծուին տեղական այլ հասոյթներ, ինչպէս հանդէսներու, վիճակահանութեան եւայլն»: Նամակը անուղղակիօրէն կը թելադրէ աբեղային որ տեղական աւելի լայն միջոցներ յառաջացնէ եւ արդիւնքը իմացնէ ԵՇՅին:

Արխիւային առկայ նիւթերը լուռ կը մնան յետագայ զարգացումներուն մասին:

A Microhistory of the AGBU Chapters of Amman (1929-55), Ruseifa (1939-61), Zarqa (1941-59) and Karak (1941-46) (Summary)

Antranik Dakessian
adakessian@haigazian.edu.lb

Based on AGBU Cairo-located archival materials, the paper tries to reconstruct the microhistory of the AGBU Chapters of Amman (1929-55), Ruseifa (1939-61), Zarqa (1941-59) and Karak (1941-46). The paper focuses on the number of members of each chapter, their activities and the support they gave and effort they made to maintain the local Armenian schools. The paper highlights as well the challenges the Amman chapter faced in the early 1950s due to intra-Armenian rivalry, which was the result of the Cold War. The paper notes that all these chapters faced the challenges of WWII, the repatriation of Armenians to Soviet Armenia in 1946-48 and the war in Palestine in 1948.

Armenians of Irbid and Northern Jordan

Kevork Minas Msrlian
kmsrlian@yahoo.com

THE ARMENIAN COMMUNITY IN IRBID

The history of Irbid goes back to the early Bronze Age and Hellenistic Decapolis settlements. Until 1948 Irbid was an important center of transit trade between the cities of the eastern shores of the Mediterranean and major parts of the Fertile Crescent. The city's population increased significantly from a mere 1065 souls in 1914 to 1.77 million in 2015. Currently Irbid is the second largest city in Jordan after the capital, Amman, which has a population of four million.

Modern Irbid is one of Jordan's industrial areas and an agricultural center as it is in the country's most fertile region. Since 1976, Irbid has become a center for higher education with two state universities and several private universities and community colleges.

According to the testimonies of elderly Armenians,[1] the first Armenians came to Irbid in 1915 as a result of the deportation and Genocide of Western Armenians perpetrated by the Ottomans. These Armenians, however, soon returned to their hometowns after the end of WWI, when France took administrative control of Syria, Lebanon and Cilicia.[2]

---

[1] Due to the absence of any Armenian institutions in Irbid, I could not rely on any archival material that would provide comprehensive or sufficient information about Armenians in Irbid. Accordingly, I have relied mainly on information obtained from interviews with elderly Armenians. The Prelacy register of the Greek Orthodox Church in Irbid was helpful, while Arab sources and documents found in the possession of some Armenian individuals provided me with hints to look for material in certain places and opened up new paths for my research. I have encountered a few instances of discrepancies in the information I obtained during my interviews with elders, particularly dates, and for this reason the accuracy of the information is evidently subject to human error and some of the dates in the paper are approximate (circa).

I would like to express my gratitude to all those who have made this work possible. My sincere gratitude goes to Araxi Msrlian, Shahan and Anahid Jehidian, who provided me with the vast majority of the genealogical information about the Armenian families of Irbid in addition to all the important stories, events and supportive evidence.

My sincere gratitude also goes amongst many others, to those who provided me with information about their own families and ancestors. My unlimited gratitude goes to: Hani Al Khayyat (Sekeljian), Harry Bedevian, Siranush and Barkev Boyajian, Artin Jambazian, Haik, Nubar, and Ardash Karakashian, Arshaluys Kasabian, Fareed Kelenjian, Rafiq Khoury, Ani Milikian, Caroline Oriefej, Astghig Sarkisian, Kaloust and Varoujan Shekerdemian, and Lucine Taminian.

[2] After I presented my initial paper during the conference on Armenians of Jordan in

A few Armenians settled in Irbid and even fewer in Ajloun between 1924 and 1948. The number of Armenians in Irbid reached its peak after the immigration of Armenians, alongside Palestinians, from Palestine during and after the war between the Arabs and Israel in 1948.

Armenians who settled in Irbid prior to 1948 formed the core of the Armenian community there just a few years after the formation of the Jordanian state, the Emirate of Transjordan. They had settled in Irbid, Ajloun, Northern Jordan Valley, Taybeh and some villages surrounding Irbid.

Most of the Armenians in Irbid were descendants of residents of Marash, Aintab, Chorq Marzban (Dort Yol), Constantinople, Hadjin, Kayseri, Kilis and Dikranagerd (Diyarbȩkir).

Living conditions were very difficult when the first Armenians arrived in Irbid. The newly proclaimed state was being formed; the implications of WWI

May 22-24, 2016, I received several comments and feedback from the participants and audience at the conference. These comments were very helpful for me to further develop, edit and complete my paper. I was pleasantly surprised to see the level of interest of Armenians from different regions of the world, Armenians who had previously lived in Irbid or whose ancestors had lived in the city and heard about the conference from newspapers, TV coverage and social media. I established contact with them, sometimes upon their initiative. They provided me with new information, stories, photos and documents. These contributions, which, in addition to providing detailed information added a human dimension, were invaluable for the enrichment of my paper.

Eventually, the paper was converted into a book *The Armenians of Irbid and Northern Jordan*, which was published in Amman, Jordan, in Arabic and English in 2017.

The book narrates the formation, development, growth, the increase and decrease in size of the Armenian community in Irbid and Northern Jordan. It depicts the evolution of the social, economic, spiritual and cultural life of the Armenians in the said region since 1924. Furthermore, it focuses on the continuous efforts of the Armenians to preserve their language, culture, religion, cuisine and history, as well as highlighting the contribution and role of the Armenians, who were and still are an integral part of the local fabric, in the development of the commercial, industrial, agricultural and cultural life cycle of Irbid.

The book sheds light on the relations of Irbid Armenians with Armenia and other Armenian communities in Jordan, Syria, Palestine and Lebanon. It focuses on the relations of Armenian institutions and organizations in Jordan and the networks the Armenian Church established with local religious institutions.

For practical reasons and due to time limitations, I had my research in the book to the first three generations of Armenian families in Irbid with the likelihood of further developing it in the future to include the latest generations, if time permits me such an endeavor. This, however, needs a different sort of continuous monitoring of the social mobility of the Armenian community in the city.

and the collapse of the Ottoman Empire had heavily affected the local economy.

There were no international organizations to take care of or provide relief to the Armenian deportees who took refuge in Jordan, including those who settled in Irbid. However, some efforts were made by the Armenian General Benevolent Union[3] in cooperation with the British army and the Arab Revolt forces during and shortly after WWI to rescue Armenian women, children and orphans who were marooned in the Syrian Desert. Not much can be written about the activities of these "rescue teams" in Irbid and the neighboring villages due to lack of specific information. Likewise, little evidence can be found on the rescue operations conducted in Irbid and the neighboring villages by the League of Nations during the 1920s.

Orphans rescued from Irbid (A*nabadi Hushakir: Levon Yotneghpayriani Gianke Yev Kordzuneyutyune* [Desert memoir: Levon Yotneghpayrian's life and deeds], LA, 2003, p. 143)

Despite the difficult times and tiny economy of the region, native Arab families in Irbid helped and hosted the first Armenians by all means available. In their turn, the refugee Armenians helped and hosted the Armenians who later fled their homes and towns in Palestine during the 1948 war between the Arabs and Israelis.

There is evidence that circa 1915, a group of Armenian families and orphans passed through the villages and towns located to the west of Irbid, where some local Christian families hosted and adopted a number of Armenian orphans and families. Occasionally one finds information about a few orphans, families and their offspring, but the fate of other families and orphans remains unknown.

The first Armenians who settled in Irbid and its neighborhood were simple craftsmen, peddlers and photographers. Later on, however, many of them became businessmen who owned land and houses, others became farmers and engaged in animal husbandry, while still others became public servants.

Some members of the second generation of Irbid Armenians had the

[3] The Armenian General Benevolent Union is a pan-Armenian philanthropic organization founded in Cairo in 1906. Its current headquarters is in New York.

opportunity to obtain a higher education in colleges and universities in Lebanon and Palestine. The early college and university graduates, especially the women and girls, contributed to the development of educational and cultural life in Irbid. Many of them became school teachers in the city and surrounding villages. A significant number of third-generation Armenians had university degrees.

The Irbid Armenians succeeded in establishing good relations with the local community in Irbid and gained respect and trust from their neighbors and fellow-citizens. They were fully integrated into the public life of the city and its social fabric and significantly contributed to the cultural, economic, social, industrial, and athletic development of life in the town.

On the other hand, the Irbid Armenians maintained close ties with their relatives and family members, who lived mainly in Damascus, Jerusalem and Lebanon. Exogamy in the community during the early decades was rare as strong kinship ties made endogamy natural. Indeed, the number of mixed marriages among the first and second generation Irbid Armenians was not significant.

The Irbid Armenians established relations with the Armenian community in Amman, especially with the Armenian Church.[4] Armenian clerics occasionally arranged to visit the Armenian families in Irbid or, upon request, to conduct weddings, funerals, baptisms, etc. These visits enabled the updating of the church register of births, marriages, baptisms and death details of the Irbid community.

The Irbid Armenians made efforts to open an Armenian School, but due to lack of funds and the tiny number of students, these efforts came to nothing. Nonetheless, through Armenian priests who visited the community for a while and certain Armenian ladies who volunteered irregular classes of Armenian language were conducted from time to time. Many of the Irbid Armenians attended Greek Orthodox Church services, while a lesser number attended Roman Catholic Church services in Irbid. Attending non-Armenian church services did not make these Armenians shift from the Armenian Orthodox flock to other flocks, nor did it impact their identity or make them forget their Armenian roots.

The Irbid Armenians succeeded in preserving the Armenian names, lifestyle,

[4] The clergy register of the Armenian Church in Amman shows that on August 14, 1949, Father Gorun Manuelian baptized four Armenian children in Irbid. These were: Boghos Msrlian, Haruthun, Roupen and Pergruhi Taminian. On October 15 of the same year, Father Harutiun Moushian baptized a group of five Armenian children in Irbid, namely Vehanush and Siranush Boyajian, Hampartsum Ouganinian, and Asdghig and Lucine Taminian.

cuisine, and music, albeit some could not preserve their Armenian language. However, many non-speakers have learned their mother tongue either through marriage with Armenian-speaking partners, or by resettling in Armenian neighborhoods in Amman or other parts of the Armenian Diaspora, or by obtaining their higher education in Soviet Armenia, where the language of instruction is Armenian.

Most of the Armenians who studied in Armenia resettled in the capital Amman, rather than going back to Irbid. A significant number of Irbid Armenians emigrated to the United States, Australia or Europe, while very few Armenian families were repatriated to Armenia in the last two decades.

Currently not more than twenty Armenian families live and work in Irbid. This tiny community currently faces the problem of mixed marriages, which menaces the preservation of Armenian identity in the offspring of the mixed family. It is observed that most of the offspring of these mixed families have difficulty communicating in Armenian, while others are being assimilated.

THE RELATIONSHIP OF IRBID ARMENIANS WITH THE ARMENIAN CHURCH IN AMMAN

Father Gorun Vartabed Manuelian visited the town upon the request of the Armenian families up until the late 1950s. During his stay in Irbid, he was hosted by the Msrlian family. It is recalled that as of the late 1950s and until the early 1980s, Father Anushavan Vartabed Zekhjanian visited the city for the same purpose, and he also visited all the Armenian families of Irbid during Christmas and Easter, as well as during other religious holidays. Usually a local Armenian would accompany Father Zekhjanian to the Irbid Armenian houses.

Arshaluys Kasabian (the wife of Mihran Kelenjian) recalls that Father Zekhjanian visited Irbid on a weekly basis and conducted Armenian lessons in a classroom at the Roman Catholic Church offered by the church authorities. This practice continued for a while, until Arshaluys herself took over as a teacher. Eventually, these lessons stopped due to the very limited number of students.

STUDYING IN SOVIET ARMENIA

One of the aims of the Committee for Cultural Relations with Diaspora Armenians[5] was to facilitate the admission of Diaspora Armenians to the higher education institutions of Soviet Armenia. In 1965, the first group of Jordan Armenians was admitted to various institutions. This project was carried out

[5] It was established in 1964 with the direct support of the First Secretary of the Communist Party of Armenia Yakov Zarobyan (http://www.mindiaspora.am/en/News/3554).

through coordination between the Committee and the Watany Sporting Club[6] in Amman. Two Irbid Armenians (Artin and Roupen Taminian) were in this first group of students. Between 1965 and 1990, some fourteen Irbid and Ajloun Armenian students studied in the higher educational institutions of Soviet Armenia.[7]

In addition to obtaining higher education, studying and living in Armenia gave these students the indispensable opportunity to achieve a good command of the Armenian language, as some of them could barely speak Armenian, while others had a very basic and superficial knowledge of the language.

Furthermore, some of these students married native Armenian girls during their studies in Yerevan[8] and established families during their years of study. This helped them to further improve their Armenian language skills.

Needless to say, studying and living in Armenia enabled these Irbid Armenians to establish friendships, relationships and sometimes kinship with other Armenians who came to Armenia from the Middle East and the Diaspora at large for educational purposes.

IMMIGRATION TO ARMENIA IN 1946-1948

Among the 90,000 Armenians who were repatriated to Soviet Armenia during the period between 1946 and 1948, some Armenian families such as the Karakashians applied to immigrate to Armenia. Their application, however, was not accepted. Despite the fact that many Armenians in Irbid and the surrounding areas knew about this project (some even remember the name of the soviet ship, "Pobeda" which anchored at Beirut to carry the repatriates to Armenia), there is no evidence or testimony that any of the Irbid Armenian families were repatriated to Armenia during that period.

CUISINE OF THE IRBID ARMENIANS

In its general characteristics and components, the cuisine of the Armenians of Irbid is very similar to traditional Western Armenian cuisine. The older generation of Irbid Armenians preserved the original recipes for food, including desserts that they had inherited from their ancestors. They were able to transmit these to their offspring. Nonetheless, in due time, however, the Armenians naturally were introduced to the local Jordanian food (like the

---

[6] The Watany Sporting Club (WSC) is an Armenian organization that was registered at the Higher Council for youth as a sport club in 1955.

[7] For the list of Irbid Armenians who studied in Yerevan see: Msrlian, *The Armenians of Irbid*, pp. 66-7.

[8] For instance, both Artin and Roupen Taminian married native Armenians.

famous *mansaf*), which they incorporated into their cuisine.[9] Some of the traditional Armenian food is still prepared.

EPILOGUE

It is impossible to claim that my book covers all aspects of the life of the Armenians of Irbid and Northern Jordan. Nor may I claim that I have completed research of the subject because writing human history never comes to a fair end.

As I mentioned above, there is evidence that circa 1915, some Armenian families and orphans passed through the villages west of Irbid and some Christian families in those villages and towns hosted and adopted a few Armenian orphans and families. This area needs further study and research. It may uncover and reveal the destiny of the Armenian families, individuals and orphans who passed through these areas to as yet unknown destinations.

Իրպիտի Հայերը
(Ամփոփում)

Գէորգ Մսըրլեան
kmsrlian@yahoo.com

Իրպիտը Յորդանանի երկրորդ մեծագոյն քաղաքն է: Մինչեւ 1948 ան Միջերկրականի արեւելեան ափերուն եւ Բերրի Մահիկի ներքնատարածքներուն միջեւ տարանցումի կարեւոր կեդրոն էր:

Այսօր Իրպիտը Յորդանանի ճարտարարուեստական շրջաններէն եւ երկրագործական կեդրոններէն մէկն է, իսկ 1976էն իվեր դարձած է բարձրագոյն ուսման կեդրոն:

Փոքրաթիւ հայեր հաստատուած են Իրպիտ 1924ին: Անոնք բաղկացուցին կորիզը՝ Իրպիտի հայօճախին, որ կազմաւորուեցաւ Անդրյորդանանի Էմիրութեան հռչակման օրերուն:

Իրպիտի մէջ հայկական հաստատութեանց բացակայութեան պատճառով, արխիւային քիչ նիւթ կայ որ կրնայ որոշակի տեղեկութիւն հաղորդել իրպիտահայութեան մասին: Այս զեկոյցը հիմնուած է երէց հայերու հետ հարցազրոյցներու, Իրպիտի յոյն օրթոտոքս համայնքի տոմարներու տուեալներուն, արաբ աղբիւրներու եւ իրպիտահայ ընտանիքներու մօտ պահպանուած արխիւային մնացորդներու վրայ:

Ուսումնասիրութիւնը լուսարձակի տակ կ'առնէ Իրպիտի հայօճախին կազմաւորումը, կը կատարէ պատումը հայօճախին ընկերային, տնտեսական, հոգեւոր եւ մշակութային կեանքի զարգացման՝ 1924էն մինչեւ մեր օրերը: Ան կը բացայայտէ իրպիտահայերուն ճիգը՝ իրենց լեզուն, մշակոյթը, կրօնքը, խոհանոցը եւ պատմութիւնը պահպանելու, կ'ընդգծէ անոնց – իբրեւ բաղկացուցիչը Իրպիտի

Later on, he was appointed governor of Konya, a vast central Anatolian province and a hub for the Armenian deportation routes from northern and western Anatolia to the Syrian Desert. He knew exactly what the Armenians' fate would be since he had witnessed the atrocities in Aleppo. At first, Celal tried to delay the departure of the convoys, claiming lack of wagons for so many people. Once there, he refused to arrange for the deportation of the Konya Armenians, despite repeated orders from Istanbul. Celal even managed to protect some of the Armenians who arrived in Konya after being deported from other districts. By the time he was removed from his post, on October 3, 1915, he had saved thousands of Armenian lives or at least delayed their fate.[8] His departure was also the beginning of the end for the Armenians in Konya. Immediately after his departure, the local authorities reported to the Ministry of the Interior that 10,000 Armenians had been deported from Konya in three days.[9]

Hagop's daughter, Hnazant Berberian, also mentioned Celal's humanitarian role. When the deportations began her father, Hagop, was 18 years old. When he graduated from school he was recruited into the army to work on the railroad. This job saved his family from deportation for a certain time. However, as pressure grew on Celal Bey, Hagop decided with his family members and friends to move towards Aleppo by wagon instead of heading to Der Zor. Nevertheless, the Berberians moved to Adana.

It is not clear how Hagop learned photography. According to Hnazant, French soldiers located in the city after 1918 liked to take photos. This encouraged Hagop to learn photography, and he opened his first studio in Adana. This new job provided him with a good income, and he married Mari Abuhanian in Adana. In 1921, the Berberians left Adana and moved to Iskandarun after the French army withdrew from the city. In Iskandarun, Hagop once again opened a studio but things did not go in the right direction due to the spread of malaria. Concerned about his family's health he decided to settle

---

[6] Sekerian.
[7] Ibid.
[8] Ibid.
[9] Ibid.

in Beirut. During that era Beirut was overcrowded with Armenian and Assyrian refugees, so he moved to Damascus in 1922.

Catholicos Vazken of St. Echmiadzin with King Husein of Jordan, and Patriarch Derderian, October 23, 1963

DAMASCUS AND THE GREAT SYRIAN REBELLION

Wherever there was a foreign army presence, Hagop opened a studio near their base. His studio in Damascus survived till 1925, when the Great Syrian rebellion exploded.

Unlike the British, the French colonial authorities could not co-opt the Arab tribal leaders. From the first day of the creation of the Syrian security forces, which were loyal to the French mandate authorities, many Armenians joined the new military troops. On the other hand, the influx of Armenian and Kurdish refugees to Northern Syria provoked suspicion among Arab tribes regarding these new "intruders" and their "hidden agendas". Armenian refugees were disliked by many Arab town dwellers too, because Armenians competed with Arab laborers, swamped the market with cheap and better quality handwork and even competed with peddlers and small merchants. Moreover, Armenians were dependent on French security. Although Arabs sympathized with the Armenian refugees, they considered the Armenians pawns in the hands of the French colonial powers. The French forbade local Arab tribes to carry arms and interfered in Druze internal affairs, which triggered the famous Druze leader Sultan al Atrash to proclaim the beginning of the Great Syrian Rebellion

in 1925. Atrash in his proclamation called all ethnic and religious communities in Syria to support the rebellion and liberate the country. In his famous book, *A Line in the Sand*, James Barr states that Armenian and Kurdish conscripts were used to suppress the rebellion of 1925.[10]

According to Barr, the French administration in Syria started "*sending irregular Circassian, Armenian, and Kurdish soldiers... who fought the rebels using guerrilla tactics...*"[11] The ruthless violence of the poorly disciplined Circassian and Armenian conscripts far exceeded what even the French had intended. Houses were looted, and there were reports of old people and children being mutilated and women being violated. In the popular outcry that followed, reprisals against Armenians were demanded. Influential Muslim clerics, like Sheikh Badr al Din al-Hassani, a leading Muslim scholar, and others interceded at the request of Christian leaders to avert a Christian bloodbath.[12] The rebels moved towards the non-Muslim quarters of Damascus and looted and burnt down Jewish and Christian stores and shops. Commanded by Nasin al-Bakri and many *aghas*, the rebels murdered some Armenians in the Qadam refugee camp, avenging their participation in the looting and burning of the Ghuta villages.[13]

Under such insecure conditions Hagop decided to head for Amman.

Visiting ruins, a hobby of Hagop Berberian

A NEW LIFE IN AMMAN

During that time, many Armenian families were heading towards Amman. Under British mandate, the country was more secure and relatively calm compared to neighboring countries. Security and stability (notwithstanding foreign rule, which was not a consideration for the refugee Armenians – as both Arab and British/French rulership was equally foreign!) attracted skilled workers. That same year, in 1925, once again Hagop opened a studio in Sadet Street, Amman. Locals called the studio "Mahal Yacoub" or Hagop's shop.

---

[10] James Barr, *A Line in the Sand*, Simon & Schuster Ltd., UK, 2012, p. 146.

[11] Ibid.

[12] Philip Shukry Khoury, *Syria and the French Mandate: The Politics of Arab Nationalism, 1920-1945*, Princeton University Press, 2014, p. 192.

[13] Ibid., p. 193.

During the mid-1920s there was no electricity in Amman. Hagop conducted photo shoots on the roof, where he had prepared a small room for this purpose. Interestingly, during the same period he ventured to open another studio in Zarqa, near the British army training camp. He took a train and went to Zarqa at least once a week. After earning good money he moved from Ashrafiyeh, which was a poor area near Jabal Amman. Later on, he moved again into a new studio near the Ottoman Bank in Amman. As the number of customers grew, demand grew too.

Hagop was an up-to date person, he read the *National Geographic* magazine and was interested in the latest technological innovations related to photography. He read about cameras and watches and started importing *Walklander* cameras from Germany, films and Swiss watches and selling them in his shop. The shop expanded. Two staff were recruited, both Armenians named Hagop too. With the cash he made, Hagop bought land. He built a house for his family with a garden and several rooms for his children. He enjoyed the garden as he liked reading newspapers and smoking outside.

RELATIONS WITH THE KING'S FAMILY

With the start of WWII Hagop's son, now a young man in his early twenties, demanded a car. His father, now more self-confident than ever before, struggles to find a car since, due to the war, cars are not being imported to Jordan. He pays a visit to the palace in hopes of fulfilling his son's request with the help of some palace officials. He had already built relations with the king's relatives and was on good terms with several court officials. Some even visited his studio on a daily basis. Finally his son gets a car, an *Opel*.

Hagop Berberian and his wife, Mari, March 24, 1955

At first Hagop started by taking pictures of King Abdallah I. Women in the palace asked him if his wife could take photos too, which she could not. However, Hagop did not want to lose this opportunity. He taught his wife the techniques and some photography skills, and now his wife became the photographer of the queen and the women of the king's relatives. She worked around 15 years as the photographer of the queen and other high ranking women of the palace. She went to weddings and took photos of the daughters and wives of the king and princes. Ironically, while his wife took the photos, in the studio Hagop worked on them secretly. Hagop's photography became so famous in the palace that they even demanded that he print King Talal's and King Abdallah's pictures on the official Jordanian paper money, the *Dinar*.

Hagop was not the only photographer asked to take the king's photos for the Dinar; he was the most successful. Other photographers' results did not satisfy the palatial taste.

THE ARMENIAN COMMUNITY

In his leisure time, Berberian, an active member of the AGBU local chapter, used to listen to the radio news about Soviet Armenia. During the church crisis in the mid-1950s, he opposed the intervention of political parties in Armenian Church affairs. Unlike Lebanon, where there was a crisis between different Armenian political parties during 1956-58, in Jordan there were no assassinations, but quarrels and beatings occurred. However, they were limited thanks to the swift action and control of the strong, centralized government authority.

Berberian used to listen to Gomidas's songs on the LPs he had brought from Istanbul. He was connected to his original homeland, and one day he took his family to Konya. He wanted to see his father's cemetery, but there was no trace of the Berberians in Konya. The cemetery had been razed to the ground and a football stadium built on it. Throughout his life Berberian helped the Armenian community in Jordan, sometimes intervening and asking the help of the Jerusalem Patriarchate, thanks to his good relations.

CONCLUSION

The story of Hagop Berberian may be similar to the story of our grandparents; each struggled in their own way. They were uprooted from their homeland, built a new life in a foreign country, were never desperate, and did not give in to setbacks since they had a strong determination to succeed in their lives. Berberian was one of those who had strong will and drive, but love of his work did not drive him away from his family.

Թագաւորներու Լուսանկարիչը՝ Յակոբ Պէրպէրեան
(Ամփոփում)

Եղիա Թաշճեան
yeghia.tash@gmail.com

Ուշագրաւ է որ հայ ժողովուրդը հակառակ բոլոր յետ-եղեռնեան դժուարութիւններուն եւ օտար միջավայրի մէջ իր գոյատեւման մարտահրաւէրներուն, յուսահատութեան չմատնուեցաւ, ոչ ալ ընդունեց իրեն մատուցուած ոչ-ձեռնտու ճակատագիրը: Ընդհակառակը, պայքարեցաւ եւ ձգտեցաւ նոր կեանքի ու տարբեր վերելքի:

Յորդանահայ լուսանկարիչ Յակոբ Պէրպէրեանը խորհրդանշական եւ ընդհանրական օրինակ մըն է այս ոգիին: Իր կեանքը վկայութիւնն է հայ երիտասարդ գաղթականի մը, որ հազիւ շրջանցած պատանութիւնը կը նետուի գործի ասպարէզ՝ հոգալու համար իր ընտանիքին կենսապրուստը:

Զգօն եւ արթուն այս երիտասարդը 18 տարեկան էր երբ կը նկատէ որ ֆրանսացի զինուորները շատ կը սիրեն նկարուիլ զինուորական տարազով: Ան Ատանայի մէջ կը բանայ իր լուսանկարչական խանութը: 1921ին ֆրանսացիներուն հետ կ'անցնի Ալեքսանտրէթ, նոյն գործը շարունակելով, ապա՝ Դամասկոս, ուր կարճատեւ կը մնայ:

Յակոբ Պէրպէրեան կ'անցնի Յորդանան, կը հաստատուի Ամման, ուր կը բանայ իր լուսանկարչատունը: Շուտով կը գրաւէ ուշադրութիւնը Յորդանանի պալատական վերնախաւին: Կը դառնայ Յորդանանի Ապտալլա թագաւորին անձնական լուսանկարիչը, ապա նաեւ անոր երկու յետնորդներուն պալատական լուսանկարիչը: Եւ քանի որ թագուհին եւս պէտք էր նկարուէր ու այր մարդոց արգիլուած էր լուսանկարել կիները, Պէրպէրեան իրեն օգնական կը դարձնէ իր …կինը:

Զեկոյցը կ'անդրադառնայ նաեւ Յակոբ Պէրպէրեանի լուսանկարչական յաջողութեան հետեւանքով յառաջացած այլ հնարաւորութիւններուն. ան իր եկամուտէն բաժին կը հանէ իր այլ հետաքրքրութիւններուն, իր կապերը կ'օգտագործէ նաեւ հայկական ձեռնարկներու նպաստելու…:

Լուսանկարիչ Յակոբ Պէրպէրեանի կենսապատումը, որոշ տարբերակումներով կարելի է ընդհանրացնել եւ նկատել իր սերունդին կենսագործունէութիւնը:

Յորդանանի Հայ Կրթօճախները
(Ակնարկ)

Մարալ Ներսէսեան
nersessian.maral@gmail.com

Քսաներորդ դարու ընթացքին, Յորդանանի հայօճախին գոյառումով, երկրին տարբեր քաղաքներու մէջ յառաջացած են շարք մը դպրոցներ:

Հայկական վարժարանները Յորդանանի մէջ, խոնարհ ըլլալով եւ դիմակայելով հանդերձ անորոշ եւ անկայուն նիւթական վիճակներ, հանդիսացած են զօրաւոր պատնէշներ՝ հայութեան այլասերման դէմ: Ստորեւ՝ Յորդանանի մէջ գործած եւ գործող հայ վարժարանները.-

Ա.- Քարաքի Հայոց Դպրոց

1928ին Քարաքի մէջ գոյութիւն ունեցած է հայկական վարժարան մը՝ հայ որբերուն գրաճանաչութիւն սորվեցնելու նպատակով: Շուրջ 16-20 աշակերտ ունեցած այս դպրոցը չի թուիր երկարատեւ կեանք ունեցած ըլլալ, որովհետեւ 1933ին հայերու Ամման տեղափոխութեամբ, աշակերտները կը սկսին յաճախել Ամմանի Հեթումեան Վարժարանը[1]:

Բ.- Ամմանի «Ս. Աթոռոյ Հեթումեան Վարժարան»[2]

Այս վարժարանին գոյութենէն առաջ, Ամմանի մէջ դպրոցական դասընթացքներ կը կատարուէին վարձուած սենեակներու մէջ, ուր նաեւ կիրակնօրեայ պատարագ կը մատուցուէր:

1924ին Յակոբ Պէրպէրեանի նախաձեռնութեամբ կատարուած հանգանակութեամբ եւ 12 հայ ընտանիքներու օժանդակութեամբ, Ամմանի Մստար շրջանին մէջ կը հիմնուի Ամմանի առաջին հայկական մանկապարտէզը, որ յետագային կ'ընդարձակուի եւ կ'ունենայ նախակրթարանի բաժին: Բարերարին անունով Հեթումեան Ազգային Վարժարան կոչուած այս դպրոցը կը գործէ 1925-62 շրջանին: Դպրոցի վերջին տարիներուն տեսուչը եղած է Երուսաղէմի Ս. Յակոբեանց Վանքի միաբան Արիս Աբղ. Շիրվանեան (յետագային՝ արքեպիսկոպոս):

---

[1] Ծ.Խ. ՀԲԸՄ Գահիրէի արխիւատան նիւթեր կը հաստատեն վարժարանին գոյութիւնը 1942-44 կրթաշրջաններուն, իբրեւ ՀԲԸՄ նպաստընկալ վարժարան, տարեկան 25 պաղեստինեան ոսկի յատկացումով:

[2] Հեթումեան Վարժարանի մասին տեղեկութիւնները մեծ մասամբ քաղուած են *Սիոն* ամսագրի, 1959ի թիւ ԼԳ (7-8)ի՝ «Ամմանի Եւ Շրջակայից Կրթական Եւ Հովուական Գործունէութեան Տեղեկագիր 1958-1959 Տարեշրջանի» խմբագրականէն:

Դպրոցի փակման պատճառ իբրեւ կը նշուի աշակերտութեան թիւի նուազումը, որ հետեւանք էր շէնքի վայրի անյարմարութեան, փոխադրամիջոցի չգոյութեան եւ նիւթական դժուարութիւններու:

Վարժարանը, նպատակ ունենալով պատրաստել մրցունակ աշակերտներ, կերտել յորդանանահայ օրինակելի քաղաքացիներ եւ սահուն դարձնել հայ աշակերտներուն անցումը հայ նախակրթարանէն ոչ-հայ երկրորդական վարժարանի, յառաջացուցած էր խիտ դասացուցակ մը: Նախակրթարանին դասացուցակը կ'ընդգրկէր կրօնագիտութիւն, գրաբար, հայերէն, արաբերէն, անգլերէն, հայ եկեղեցւոյ պատմութիւն, արաբական պատմութիւն, ընդհանուր ազգաց պատմութիւն, թուաբանութիւն (հայերէն, արաբերէն եւ անգլերէն), գիտութիւն (Զ. դասարանին՝ անգլերէն), աշխարհագրութիւն (հայերէն եւ արաբերէն), գծագրութիւն, գեղագրութիւն, ձեռագործ, երգ:

Մանկապարտէզի ծրագիրը կը բովանդակէր հետեւեալ դասանիւթերը.- հայերէն, անգլերէն, արաբերէն, թուաբանութիւն, բերանացի աւանդութեամբ՝ կրօն, հայոց պատմութիւն, գիտութիւն, գրավարժութիւն, գեղագրութիւն, արտասանութիւն, երգ, խաղեր:

Մանկապարտէզի եւ նախակրթարանի շրջանաւարտներ (1956-57)

Դպրոցին ամավարկը կը գոյանար կրթաթոշակներէն, ՀԲԸՄէն (տարեկան 10,000 տոլար), Գ. Կիւլպենկեան Հիմնարկութենէն (տարեկան 35,000 տոլար)[3] եւ Ամմանի ՀՕՄէն (ոչ-նուազ քան 5000 ԱՄՆ

[3] Այս յատկացումները շարունակուեցան նաեւ նոր դպրոցաշէնք անցումէն ետք: Կիւլպենկեան Հիմնարկութեան յատկացումը դադրեցաւ 2016-17 կրթաշրջանին: 2015-16 կրթաշրջանին, Քարիթաս Քրիստոնէական հաստատութեան յանձնարարութեամբ, դպրոցը ընդունած էր նաեւ ոչ-հայ, իրաքցի քրիստոնեայ աշակերտներ՝ միամեայ տեւողութեամբ: Այս պայմանագրութիւնը երկարաձգուեցաւ եւ թիւով 42 իրաքցի քրիստոնեայ աշակերտներ մինչեւ օրս կը յաճախեն վարժարանը:

տոլար), UNRWAէն[4], եկեղեցական եկամուտներէն (մկրտութիւն-պսակ-թաղում, բանկալ՝ պնակ եւ մոմ), գրենական պիտոյքներու վաճառքէն, օրացոյց-վիճակահանութիւն-հանդէսէն եւն.: Վարժարանին մէջ սաներ կը պահէին Հայ Ուսանողաց Ամերիկայի Բարեկամները եւ կարգ մը ազգայիններ[5]:

Երուսաղէմի հայոց Սրբոց Յակոբեանց Վանքի միաբանութեան կողմէ նշանակուած յորդանանահայ գաղութի հոգեւոր հովիւները կը հանդիսանային նաեւ վարժարանին տեսուչները կամ տնօրէնները: Կրօնական տեսուչի մը վերահսկողութիւնը յաւելեալ առիթ ու միջոց էր որ դպրոցին մէջ ծաւալէր հովուական-դաստիարակչական գործունէութիւն, որ կը դրսեւորուէր հետեւեալ ձեւերով.-

Ս. Գրքի ընթերցման հաւաքոյթներ.- Երիտասարդ-երիտասարդուհիներու համար Ս. Գիրքը հասկնալու շաբաթական հաւաքներ:

Կրօնական հաւաքոյթներ.- Տարեցներուն համար՝ աղօթքի, երգի եւ քարոզներու շաբաթական հաւաքներ:

Կիրակնօրեայ դպրոց.- Կրօնական եւ բարոյական դաստիարակութեամբ սնուցանելու մատղաշ հոգիները:

Աշակերտութեան եւ ուսուցչակազմի թիւը ըստ կրթաշրջանի

Կրթաշրջան	Մանկապարտէզ	Նախակրթարան	Շրջանաւարտներ	Աշակերտութեան ընդհանուր թիւ	Մանկապարտէզի ուսուցչական մարմին	Նախակրթարանի ուսուցչական մարմին
1950-51				300	11	
1958-59	60	110	7	170	3	8
1961-62	60	105	14	165	10	

Է. Իւզպաշեան-Կիւլպենկեան Ազգային Վարժարան

2 Յուլիս 1961ին կը կատարուի հիմնարկէքը Ամմանի Ազգային Վարժարանին, ձեռամբ Յորդանանի վարչապետին, ներկայութեամբ Եղիշէ պատրիարք Տէրտէրեանի:

[4] United Nations Relief and Works Agency for Palestine: Հաւանաբար, այս նպաստը կը տրուէր 1948ին Պաղեստինէն Ամման գաղթած հայ աշակերտներու կրթական ծախքերուն համար:

[5] Բարերարներու ցուցակին մէջ կը յիշատակուի նաեւ Հաուըրտ Գարակէօզեան Հիմնարկութիւնը:

Դպրոցը կը կառուցուի երեք հաստատութիւններու գործակցութեամբ.-
ա՝ Երուսաղէմի Հայոց Պատրիարքութիւնը կը գնէ հողաշերտ մը Ամմանի հայաշատ շրջանի՝ էշրեֆիէի բլուրի բարձունքին վրայ[6]:
բ՝ Գալուստ Կիւլպենկեան Հիմնարկութիւնը կը յատկացնէ մանկապարտէզի կառուցման գումարը (որ կ'ընդգրկէր եկեղեցին եւս)[7]:
գ՝ ՀԲԸՄ Կեդրոնական Վարչութեան եւ նախագահ Ալեք Մանուկեանի միջամտութեամբ, ամերիկահայ բարերար Վահրամ Իւզպաշեան կը նուիրէ 100,000 ԱՄՆ տոլար՝ նախակրթարանի շինութեան համար:

23 Սեպտեմբեր 1962ին տեղի կ'ունենայ պաշտօնական բացումը վարժարանին, հովանաւորութեամբ Յորդանանի վարչապետին, ներկայութեամբ փոխվարչապետ ու կրթական նախարար Իպրահիմ Քաթթանի[8]:

Պատրիարքարանի *Սիոն* պարբերաթերթը կ'արձագանգէ բացման արարողութեան.-

«Աւարտելու վրայ է Ամմանի նորակառոյց հայ վարժարանը: Ս. Աթոռոյ Հեթումեան Վարժարանը, որ տարիներէ իվեր Երուսաղէմի Աթոռին հովանաւորած հայ դպրոցն էր Ամմանի գաղութին մէջ, բոլորեց իր կրթական վերջին տարին, իր նեղ, անյարմար եւ վարձու շէնքին մէջ: Տարեկան հանդէսը կատարուեցաւ Յունիսի 10ին, խանդավառութեան բացառիկ մթնոլորտի մը մէջ, որովհետեւ ուսանողութիւն եւ ուսուցչական կազմ հրաժեշտ կ'առնէին ոչ միայն տարուան մը աշխատանքէն, այլ մանաւանդ դպրոցական աշխատանքի անկարելի պայմաններէն, ողջունելու համար յաջորդ կրթական տարին նոր, քարաշէն, օդաւէտ եւ գեղեցիկ շէնքին մէջ սկսելու գաղափարը:

Նոր դպրոցը պիտի կրէ նաեւ նոր անուն, իր զոյգ բարերարներու յիշատակութեամբ: Մանկապարտէզը պիտի կոչուի «Գալուստ Կիւլպենկեան Մանկապարտէզ», իսկ նախակրթարանը՝ «ՀԲԸՄիութեան Վահրամ Իւզպաշեան Վարժարան..»[9]:

Բացման հանդիսութեան, Եղիշէ պատրիարք կը հաւաստէ. «Կը բանանք այս դպրոցը յանուն Աստուծոյ, մեր Հայրենիքին եւ Թագաւորին:

Հաշիմական մայրաքաղաքի գեղեցիկ այս բարձունքին վրայ կանգնած այս դպրոցը անմահ կոթող մը պիտի ըլլայ ըսելու համար գալիք սերունդներուն, թէ որքան ապահով եւ ազատ կը զգանք մենք զմեզ

---

[6] Հողի գնման համար պատրիարքարանը կը յատկացնէ 5000 յորդանանեան տինար: Կը թուի թէ նախակրթարանին կահաւորումը արդիական նստարաններով՝ կը մատակարարէ պատրիարք հայրը:

[7] Հիմնարկութիւնը կը յատկացնէ 15,000 ԱՄՆ տոլարի գումար մը:

[8] Շ., «Բացում Ամմանի Նորակառոյց Վարժարանին», *Սիոն, Հայ Ամսագիր Կրօնական, Գրական, Բանասիրական*, Հոկտեմբեր 1962, էջ 284-7:

[9] «Ամմանի Նորակառոյց Վարժարանը», *Սիոն,* Ապրիլ-Մայիս 1962, էջ 134:

այստեղ, թէ՝ հետզհետէ աճող հայութիւնը որքան լուսաւոր կը տեսնէ մեր բարգաւաճ ներկայէն նետուող ապագան...»[10]:

1964ին նախակրթարանին մէջ կը դասաւանդուէին պատմութիւն (երեք լեզուներով), թուաբանութիւն (երեք լեզուներով), գիտութիւն (երեք լեզուներով):

Մինչեւ Երուսաղէմի գրաւումը (1967) Եղիշէ պատրիարք իր ներկայութեամբ կը հովանաւորէր, իսկ Յորդանանի բանակի նուագախումբը իր մասնակցութեամբ առաւել փայլք կու տար դպրոցի ամավերջի հանդէսներուն:

Նախակրթարանի շրջանաւարտներ (1963-64)

Մանկապարտէզի (1984-85) եւ Նախակրթարանի շրջանաւարտներ (1990-91)

Շրջան մը, մինչեւ 1978, Անահիտ Ոսկերիչեան (Յակոբ Օշականի դուստրը) վարած է վարժարանին տնօրէնութիւնը, ապա վարժարանը ունեցած է զոյգ տնօրէնուհիներ՝ Անահիտ Ոսկերիչեան եւ Շուշան Դանիէլեան, այնուհետեւ Դանիէլեան առանձինն շարունակած է առաքելութիւնը: Այդուհետեւ դպրոցի տնօրէններ եղած են Նուարդ Ազիզեան (1990-2005), Երանուհի Հատտատին (2004, կարճ ժամանակ), Քարամ Րապատի (2005-13), Սիւզէթ Զաքարեան (2013, կարճ ժամանակ), Նատիա Ապու Հատպէ (2013էն իվեր): Ուշագրաւ է

[10] Միսաքեան, «Լոյս Ու Ստուեր»:

Մելգոնեան Կրթական Հաստատութեան շրջանաւարտներ Ժիրայր եւ Տիգրանուհի Չքրըքճեաններու յիսնամեայ ծառայութիւնը վարժարանին, մինչեւ 2008: Ժիրայր դասաւանդած է հայերէն, իսկ Տիգրանուհի եղած է մանկապարտէզի տնօրէնուհի:

1980ականներէն մինչեւ 1990ականներու սկիզբը, վարժարանը իր արդիւնքներով միշտ գտնուած է Յորդանանի դպրոցներուն առաջին տասնեակին մէջ, իր շրջանաւարտները դիւրութեամբ ընդունուած են երկրորդական ուսումի յառաջատար դպրոցներ:

Վարժարանին օգնական մարմին հանդիսացած է Տիկնանց Յանձնախումբը, որուն անդամները կը նշանակուին առաջնորդին կողմէ: Յանձնախումբի պարտականութիւնը դպրոցի նիւթական աջակցութիւն եւ շահութաբեր ձեռնարկներ կազմակերպելն է[11]:

Գ. Ռըսէյֆայի Դուրեան Դպրոց

Ռըսէյֆայի դպրոցաշէնքը շէնքը կառուցուեցաւ 1932ին. մինչեւ այդ, դասաւանդութիւնները կատարուեցան վարձու փոքր սենեակի մէջ (տարի մը), ապա երկու տարի՝ Սամուէլ *աղա* Սերփէքեանի տան մէջ, որ նաեւ դպրոցին վերահսկիչն ու հոգատարն էր:

Սկզբնական տարիներուն դպրոցի յատակը հող էր եւ աշակերտները գորգերու վրայ նստած կը դասաւանդուէին, միքանի տարի ետք յատակը պեթոնապատուեցաւ եւ գրասենեակներ յառաջացան:

Մանկապարտէզ եւ մինչեւ 3րդ դասարանի աշակերտութիւնը կը դասաւանդուէին մէկ սրահի մէջ, իսկ այնուհետեւ՝ Ամմանի հայոց դպրոցը եւ կամ օտար դպրոցներ կը յաճախէին: 1959ին դպրոցը ունէր 19 երկսեռ աշակերտ, իսկ 1962ին՝ 20, եւ մէկ ուսուցչուհի: Ուսուցիչները Կիպրոսէն կամ Երուսաղէմէն կը հրաւիրուէին՝ տարեկան պայմանագրութեամբ, դասաւանդելով բոլոր նիւթերը: Դպրոցը գոյատեւած է մինչեւ շուրջ 1968[12]:

Դ. Զարքայի Հեթումեան Ծաղկոց

Զարքայի Հեթումեան Ծաղկոցին հիմնումը անհրաժեշտ դարձած է երբ նկատուած է դպրոցական տարիքի ոչ-հայախօս սերունդի յառաջացումը: Զարքայի եւ Ամմանի մէջ կատարուած հանգանակութեամբ վարձուած է երկու սենեակով եւ փոքր բակով շէնք մը, իբրեւ դպրոցաշէնք[13]:

---

[11] Յանձնախումբին 28 շարունակական տարիներ ծառայած են Նուարդ Ազիզեան, Անի Այնէճեան, Շաքէ Աւագեան, Մարալ Լեփէճեան, Ժանէթ Չքրըքճեան, Շողիկ Սարգիսեան, Սիլվա Տարաքճեան, Նանիկ Քեչէճեան:

[12] *Ծ.Խ.*- Դպրոցին մասին կարդալ այս հատորին մէջ ՀԲԸՄ մասնաճիւղերուն նուիրուած նիւթին մէջ:

[13] Աւելի ետք, ՀԲԸՄիութիւնը 600 յորդանանեան տինարի յատկացում կը կատարէ, ապահովելու համար դպրոցին շարունակականութիւնը:

Ծաղկոցը իր դռները բացած է Հոկտեմբեր 1958ին, 23 աշակերտներով եւ երկու ուսուցչուհիներով[14]:

1950ԱԿԱՆՆԵՐ. ԱՄՄԱՆԱՀԱՅՈՒԹԵԱՆ ՆՈՐ ԱՆԿԻՒՆԱԴԱՐՁԸ

1951ը ծանր տարի կը հանդիսանայ ամմանահայ համայնքին համար, երբ ներքին պառակտումներ եւ մրցակցութիւններ դժուար կացութեան կը մատնեն հայօճախը:

Այդ տարի, ամմանահայ դպրոցներուն թիւը կը բարձրանայ երեքի՝ երբ «բաւական մեծցած ըլլալով ամմանահայ գաղութը, անհրաժեշտ կարիքը զգացուեցաւ ունենալ ... մէկի տեղ երեք դպրոց»ի[15]: Յիրաւի, Հեթումեան Վարժարանին կողքին կը հիմնուին կաթողիկէ «Սահակ Մեսրոպ» Վարժարանը եւ աւետարանականներու «Նազովրեցի» Հայոց Դպրոցը[16]:

Նոյն տարին, աշակերտներ շահելու մրցակցութեան պատճառով, Հեթումեան Վարժարանը կը նուազեցնէ կրթաթոշակը եւ սովորականէն կանուխ կը սկսի արձանագրութեան:

Հակառակ այս երեք դպրոցներուն գոյութեան, յորդանանահայ աշակերտութեան մեծամասնութիւնը 1962ին կը յաճախէր օտար վարժարաններ: Անոնցմէ շատեր դադրած էին հայերէն խօսելէ[17]:

Ե. Հայ Կաթողիկէ «Սահակ Մեսրոպ» Վարժարան

50 ընտանիքէ բաղկացած հայ կաթողիկէ համայնքը 1951ին կ'ունենայ նախակրթարան մը՝ «Սահակ Մեսրոպ», տեսչութեամբ Գեր. Կամսարականի[18]: 1955ին դպրոցը կը հաշուէր 135 աշակերտ[19]:

Սկզբնական տարիներուն, դպրոցին նիւթական ծախքերուն կարեւոր մէկ բաժինը կը հոգայ Վատիկանի Ս. Աթոռը՝ 800 Յ.Դ. տարեկան յատկացումով: Դպրոցին մէջ կը ջամբուի ազգային շունչով եւ զգացումով դաստիարակութիւն: 1990ականներուն, դպրոցը կը յանձնուի կիս՝ լատինաց դպրոցի կառավարման, ապա՝ վարձու կը տրուի Քուպուրեան 3 քոյրերու, որոնք կը պահպանեն հայերէնի դասաւանդութիւնը:

---

[14] *Ծ.Խ.*- Ըստ ՀԲԸՄ Գահիրէի արխիւի նիւթերուն Զարքայի մէջ դպրոց գործած է մինչեւ 1942 կրթաշրջան:

[15] Խմբագրական, «Ս. Յակոբի Ներսէն», *Սիոն*, 1951, ԻԵ (8), էջ 249-56:

[16] Նոյն:

[17] Ըստ 1962ի տեղեկագրին (Վրթանէս Աբղ. Գալայճեան, «Տարեկան Տեղեկագիր Ամմանի Հեթումեան Վարժարանի 1961-1962 Տարեշրջանի», *Սիոն*, 1962, ԼԶ (6), էջ 173-5). նաեւ՝ Հ. Յ. Պզտիկեան, «Հայ Գաղութը Ամմանի Մէջ», *Յառաջ*, 2 Մարտ 1977:

[18] Խմբագրական, «Ս. Յակոբի Ներսէն», Սիոն, 1951, ԻԵ (8), էջ 249-256:

[19] Շաւարշ Միսաքեան, «Լոյս Ու Ստուեր», *Յառաջ Հասարակական-Քաղաքական եւ Գրական Օրաթերթ*, 26 Յունիս 1955:

Ներկայիս հայերէն դասաւանդութիւնը դադրած է՝ հայ աշակերտութեան չգոյութեան պատճառով: Ներկայիս դպրոցը ունի 15 ոչ-հայ աշակերտներ:

Զ. Աւետարանականներու «Նազովրեցի» Հայոց Դպրոց

10-15 ընտանիքներէ բաղկացած հայ աւետարանական համայնքը նոյնպէս կ'ունենայ իր դպրոցը 1951ին: Այն, սակայն, կարճատեւ կեանք կ'ունենայ[20]:

ԿՐԹԱԿԱՆ ՏԱԳՆԱՊ

20 Յուլիս 2018ին, համայնքը իր ինքնութենական գոյութիւնը վտանգող ամէնադժուար պահը ապրեցաւ, երբ Աւետիս Ծ. Վրդ. Իփրաճեան, ժողովի հրաւիրուած Տեղական Խորհուրդի անդամներու եւ համայնքի կառոյցներու ներկայացուցիչներու ներկայութեամբ յայտնեց Յորդանանի հայկական միակ ազգային դպրոցը փակելու եւ տարածքը վարձու տալու որոշումը[21]:

Իւզպաշեան-Կիւլպենկեան մանկապարտէզն ու 6 դասարաններով նախակրթականը անընդհատ 56 տարիներ գործած էին հայաշունչ ոգիով եւ տուած մեծաթիւ հունձք: Երկար տարիներ, դպրոց յաճախած են նաեւ յորդանանաբնակ սուրիահայ ընտանիքներու զաւակներ, ապա եւ Ամման ապաստանած իրաքահայ ընտանիքներու զաւակներ:

Դպրոցի աշակերտներու թիւը, որ կը նուազէր տարուէ տարի՝ տարածաշրջանի անկայուն եւ անապահով վիճակին պատճառով, յատկապէս Սուրիոյ պատերազմական վիճակին հետեւանքով, սուրիահայերու գաղթով կրեց իր ամէնազգալի հարուածը[22]:

Պատրիարքարանին աջակցութեամբ փակման որոշումը փոխուեցաւ եւ վարժարանը վերսկսաւ աշակերտներու արձանագրութեան:

---

[20] Միսաքեան, «Լոյս Ու Ստուեր»:

[21] Դպրոցաշէնքը վարձու պիտի տրուէր արաբական դպրոցի մը, ուր յաճախող հայ աշակերտները հայերէնի դասընթացքներու պիտի հետեւէին:

[22] Յորդանանահայ համայնքին մէջ զգալի թիւ կը կազմէին սուրիահայերը, որոնց մէջ կային նաեւ գործատէրեր: Սուրիոյ մէջ ծայր առած պատերազմին հետեւանքով անոնք ստացան փախստականի կարգավիճակ եւ ՄԱԿի Գաղթականութեանց Բարձր Յանձնաժողովին աջակցութեամբ արտագաղթեցին Արեւմուտք:

Սակայն, առանց լուծելու այն պատճառները որոնք առաջնորդեր էին դպրոցի փակման որոշումին, եւ առանց արմատական փոփոխութիւններ կատարելու, միայն դրամական հարցին լուծում առաջադրելով յայտնի չէ թէ ինչ տեւողութեամբ կրնայ դպրոցը գոյատեւել ու շարունակել:

Ներկայիս վարժարանին աշակերտութեան թիւն է 60 (նախակրթարանի վեց դասարաններ եւ մանկապարտէզ ներառեալ): Ասոնց մէջ հայերը փոքրաթիւ են, ուստի եւ դպրոցի հիմնական լեզուն հայերէնը չէ այլեւս, եւ ազգային տօնակատարութիւնները (ինչպէս՝ Վարդանանք) կը կատարուին հիմնականօրէն ոչ-հայերէն:

Նախակրթարանի շրջանաւարտներ

Ուսուցիչներու թիւը կը հասնի 12ի, որոնց միայն երկուքը հայ են, միւսները՝ արաբ քաղաքացիներ: Դպրոցին ներկայ տեսուչն է Աւետիս Ծ. Վրդ. Իփրաճեան, փոխտնօրէնի եւ հաշուապահի պաշտօնը կը կատարէ Ռաքէլ Մարգարեան: Վերջին միքանի տարիներուն, պետութեան պարտադրանքով, դպրոցի անունը փոխուեցաւ եւ եղաւ (արաբերենէն՝ «Ուղղափառ Հայոց Դպրոց եւ Մանկապարտեզ»[23]:

ՎԵՐՋԱԲԱՆ

Հայ դպրոցը համասփիւռքեան տագնապ կը դիմագրաւէ: Սփիւռքեան համայնքները նպատակադրուած պէտք է ըլլան հեռատես քայլերով հզօրացնել համայնքը՝ զօրացնելով եւ երաշխաւորելով սփիւռքահայ դպրոցը, որ հզօր սերունդ պատրաստէ: Նկատի առնելով սփիւռքահայ դպրոցին դիմագրաւած համընդհանուր տագնապը՝ առաւել կը շեշտաւորուի աշխարհասփիւռ հայ համայնքներուն նոր ռազմավարութիւններ որդեգրելը:

Սփիւռքահայ դպրոցին փրկութիւնը կ'առնչուի թէ՛ հայրենիքին, թէ՛ իւրաքանչիւր հայօճախի պատկան մարմիններուն, մանաւանդ՝ համայնքի բոլոր անդամներուն:

[23] Հայերէն հաղորդագրութիւններու մէջ, սակայն, կը պահպանուի «Իւզպաշեան-Կիւլպենկեան Ազգային Վարժարան» անուանումը:

Շրջանաւարտներու եւ աշակերտութեան թիւ ըստ կրթաշրջանի[24]

Կրթաշրջան	Շրջ.	գումար	Կրթաշրջան	Շրջ.	գումար	Կրթաշրջան	Շրջ.	Գումար
1961-62		190	1980-81	14		1999-2000	15	
1962-63		154	1981-82	18		2000-01	12	
1963-64		197	1982-83	10		2001-02	13	
1964-65		200	1983-84	13		2002-03	10	
1965-66		200	1984-85	17		2003-04	15	
1966-67	15		1985-86	17		2004-05	13	
1967-68	10		1986-87	13		2005-06	10	
1968-69	18	199	1987-88	12		2006-07	15	
1969-70	15		1988-89	15		2007-08	16	
1970-71	12	189	1989-90	12		2008-09	7	
1971-72	18	190	1990-91	17		2009-10		
1972-73	17		1991-92	14		2010-11	8	88
1973-74	17	170	1992-93	19		2011-12	11	78
1974-75	22		1993-94	16		2012-13	10	72
1975-76	19	178	1994-95	20		2013-14	5	65
1976-77	22		1995-96	16		2014-15		
1977-78	19		1996-97	7		2015-16	12	116
1978-79	11		1997-98	9		2016-17	8	111
1979-80	21		1998-99	14		2017-18	6	109[25]

The Armenian Schools in Jordan (An Overview)
(Summary)

Maral Nersessian
nersessian.maral@gmail.com

The paper is an overview of the Armenian schools that functioned in different cities of Jordan, like Karak, Zarqa, Ruseifa, and Amman, during the post-Genocide period.

The paper briefly narrates the history of the only surviving Armenian school in Jordan, the Yuzbashian-Gulbengian Kindergarten and Elementary School, its financial challenges and the dwindling number of its student population. Eventually the school was closed in 2018. The paper argues that though it was reopened due to pressure, nevertheless the causes of its closure have still not been addressed.

[24] Տուեալները համադրուած են զանազան աղբիւրներէ՝ *Սիոն*ի տարբեր համարներ, պատրիարքարանին տարեկան օրացոյցերու տեղեկագիրեր, Ամմանի Ազգային Տեղական խորհուրդի կազմած տեղեկութիւններ եւն.:

[25] 2017-18 կրթաշրջանի թիւերու անհամապատասխանութիւնը արդիւնք է Վանքի օրացոյցին տուած թիւին եւ մեր՝ ուղղակի դպրոցէն քաղած տուեալներուն:

Յորդանանի Հայ Գաղութի Դէմքեր եւ Յորդանանի Հայկական Եկեղեցիները (Ակնարկ)

Ներսէս Ներսէսեան
nerses.nersessian@gmail.com

1930ականներու յորդանանահայութիւնը յառաջացած էր Կիլիկիոյ հայութեան պարպումով, երբ հայեր հաստատուած էին Յորդանանի զանազան քաղաքներու մէջ: Անոնց ընդհանուր թիւը չէր անցներ 700ը:

Ամմանի մէջ հայկական գաղութ հասկացութիւնը շօշափելի դառնալ սկսած է 1932ին: Զեւաւորման համար իր խոշոր դերը բերած է Յակոբ Աւագ Քինյ. Մավեանը[1]: Ան ունեցած է բացառիկ կարողութիւն եւ ձեռք բերած է մեծ ժողովրդականութիւն՝ տեղի գաղութին մէջ: Այդ տարիներուն, յարուցուող որեւէ ընտանեկան կամ ներգաղութային հարց կը քննարկուէր Երուսաղէմի պատրիարքութեան կողմէ նշանակուած ամմանահայոց խորհուրդի մը կողմէ, եւ կը փոխանցուէր Երուսաղէմի վանքի միաբանութեան Տնօրէն Ժողովին:

1948ի Պաղեստինի բաժանման պատերազմին՝ հազարաւոր հայերու հոսք տեղի ունեցաւ դէպի Յորդանան: Այդ շրջանին, Ամմանի հայութեան թիւը բարձրացաւ մինչեւ 10,000ի, մինչ միւս քաղաքներուն մէջ, պատկերը հետեւեալն էր.-

Քաղաք	1948էն անմիջապէս ետք	2016ին
Ամման	մինչեւ 10,000	4000
Աքապա	8 ընտանիք	18 ընտանիք
Աժլուն	4 ընտանիք	0 ընտանիք
Զարքա	45 ընտանիք	10 ընտանիք
Իրպիտ	30 ընտանիք	8 ընտանիք
Ռըսէյֆա	60 ընտանիք	1 ընտանիք
Ֆրիէս	0 ընտանիք	40 ընտանիք
Քարաք	60 ընտանիք	2 ընտանիք

ՀՈԳԵՒՈՐ ՀՈՎՒՒԹԻՒՆ

1920ականներէն սկսեալ, տասնամեակներ շարունակ, Ամմանի մէջ շաբաթօրեայ պաշտամունքներ կամ կիրակնօրեայ պատարագներ կը կատարուէին վարձուած սենեակներու մէջ: Նոյն սենեակներու մէջ կը

[1] Գրող, Գալուստ Կիւլպենկեան Հիմնարկութեան Հայկական Բաժանմունքի տնօրէն Վահրամ Մավեանի (1926--1983) հայրը:

կատարուէին նաեւ դպրոցական դասաւանդութիւնները: Այս դրութիւնը շարունակուած է մինչեւ 1960ի սկիզբները:

Գաղութին ծառայող հոգեւոր հովիւները միաժամանակ կը հանդիսանային վարժարանին տեսուչները կամ տնօրէնները:

Յորդանանի հայօճախին հոգեւոր հովիւները[2]

Յովհաննէս Քհն. Ասատուրեան	1922–1930
Զգօն Վրդ. Յակոբեան	1930–1935
Տիրան Վրդ. Ներսոյեան	1930–1935
Պարգեւ Վրդ. Վրթանէսեան	1930–1935
Գէորգ Վրդ. Անըզեան	1930–1935
Յակոբ Քհն. Մավեան	1935–1939
Հայկասէր Վրդ. Տօնիկեան	1939–1942
Յարութիւն Աբղ. Մուշեան	1942–1945
Կորիւն Վրդ. Մանուէլեան	1945–1956
Վազգէն Աբղ. Գպրսլեան	1956–1957
Դաւիթ Աբղ. Սահակեան	1957
Յովսէփ Աբղ. Մամուր	1958
Արիս Աբղ. Շիրվանեան	1958–1959
Անուշաւան Վրդ. Զոչանեան	1959, այցելու
Արիս Վրդ. Շիրվանեան	1959, այցելու
Եզնիկ Վրդ. Զաւարեան	1959, այցելու
Գեղամ Աբղ.	1959, այցելու
Դաւիթ Վրդ. Սահակեան	1960-1961
Վրթանէս Աբղ. Գալայճեան	1961-1962
Անուշաւան Վրդ. Զոչանեան	1962–1969–1978
Սիփան Աբղ. Մխճեան	1969, այցելու
Պարէտ Վրդ. Երէցեան	1969, այցելու
Մեսրոպ Վրդ. Տեփոյեան	1969, այցելու
Վահան Արք. Թոփալեան	1978-2016ի կէսերը
Հայկազուն Վրդ. Եղիայեան	2013-2016ի կէսերը, վերատեսուչ
Աւետիս Ծ. Վրդ. Իփրաճեան	2016ի կէսերէն իվեր

ԱՄՄԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՏԵՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Ամմանի Ազգային Տեղական Խորհուրդը կը հանդիսանայ այն մարմինը, որ իրաւասութիւն ունի հետեւելու, որոշումներ կայացնելու հայօճախին անդամներուն ընտանեկան հարցերուն՝ բաժանում-ամուսնալուծում-

[2] *ԾԽ.*- Այս մասին տեսնել նաեւ այս հատորին մէջ յորդանահայութեան ժողովրդագրութեան նուիրուած յօդուածը:

ժառանգ, վկայագրերու եւ հաստատագրերու տուչութիւն եւ համայնքային այլեւայլ հարցեր (յարուցուող բողոքներ եւն.) հետապնդելու եւ որոշումներու ընթացք տալու:

Խորհուրդի անդամները կը նշանակուին Երուսաղէմի պատրիարքութեան եւ կամ Ամմանի առաջնորդին կողմէ: Խորհուրդը կը հաստատուի Յորդանանի ներքին գործոց նախարարութեան կողմէ եւ կը վաւերացուի արքունիքէն: Խորհուրդին պաշտօնավարութեան տեւողութիւն չէ սահմանուած: Որեւէ փոփոխութիւն կրնայ կատարուիլ եթէ խորհուրդի անդամ մը հրաժարի, եւ կամ տեղւոյն առաջնորդը դիմում կատարէ ու հրաժարականը պահանջէ որեւէ անդամի:

Առաջին անգամ 1985ին կազմուեցաւ Ամմանի Ազգային Խորհուրդը: Մինչեւ այդ, Երուսաղէմի պատրիարքութիւնը կը զբաղէր յորդանանահայ ներքին կեանքին մէջ ծագած հարցերով: Անոր անդամներն էին.- Վահան Եպս. Թոփալեան՝ նախագահ, Տիրան Ոսկերիչեան՝ ատենապետ, Նուպար Գաբրիէլեան՝ փոխատենապետ, Արթին Գէորգեան՝ գանձապահ, Ապտօ Խարմանտարեան, Էլի եւ Յակոբ Պեննէեան՝ խորհրդականներ:

1989ին Եղիշէ պատրիարք Տէրտէրեանի թելադրութեամբ Ամմանի հոգեւոր առաջնորդ Վահան Եպս. Թօփալեան փոփոխութիւններ մտցուց կազմին մէջ: Նորանշանակ կազմի անդամ եղան.- Վահան Եպս. Թոփալեան (նախագահ), Գաբրիէլեան (ատենապետ), Էլի Պեննէեան (փոխատենապետ), Ներսէս Ներսէսեան (քարտուղար), Վազգէն Սալպաշեան (գանձապահ), Սեպուհ Երկաթեան (արտաքին յարաբերութիւններ), Աբրահամ Մահրէճեան (խորհրդական):

Յաջորդող տարիներուն եւս կազմը որոշ փոփոխութիւններու ենթարկուեցաւ: 2016ին, կազմը ունի հետեւեալ պատկերը.- Վահան Եպս. Թոփալեան (նախագահ), Տոքթ. Ճորճ Էքիճեան (փոխնախագահ եւ Դատաստանական Մարմնի անդամ), Ներսէս Ներսէսեան (Ընդհ. քարտուղար եւ Դատաստանական Մարմնի անդամ, գանձապահ), Եդուարդ Գարաօղլանեան (Դատաստանական Մարմնի անդամ), Անդրանիկ Լեփէճեան (Կրթական Յանձնախումբի ներկայացուցիչ), Գէորգ Գէորգեան-Արամ Մուրատեան (խորհրդականներ):

ՅՈՐԴԱՆԱՆԱՀԱՅ ՀԱՆՐԱՅԱՅՏ ԴԷՄՔԵՐ, ԵՐԱԽՏԱԽՈՐՆԵՐ

Ուշագրաւ է գոյութիւնը յորդանանահայ շարք մը պատուակալ հիւպատոսներու, ինչպէս.- Մովսէս Սքլճեան (Պոլիւիայի, 2000--ցայսօր), Էլէն Աննա Ադամեան-Փանոսեան (Հայիթիի, 2002--ցայսօր), Եղիշէ Փանոսեան (Մոզամպիք, 1995--ցայսօր), մինչեւ վերջերս՝ Պարգեւ Սքլճեան (Ուրուկուէյ):

Յորդանանի Հաշէմական Թագաւորութիւնը խտրական քաղաքականութիւն չի վարեր իր քաղաքացիներուն հանդէպ. ան առիթ կու տայ անոնց որ պաշտօնակոչուին պետական վարչամեքենայի այլեւայլ

բնագաւառներու: Այս լայնամտութեան շնորհիւ, բազմաթիւ յորդանանահայեր աշխատանքի լծուած են Յորդանանի պետական կառոյցներուն մէջ: Ստորեւ՝ անոնցմէ խումբ մը, որոնք Յորդանանի եւ/կամ յորդանանահայ համայնքին իրենց երկարամեայ նուիրեալ ծառայութեան համար արժանացած են պետական գնահատման.-

1.- Վահան Արք. Թոփալեան՝ հոգեւոր առաջնորդ հայոց Յորդանանի, 1978--2016: Ապտալլա Բ. Թագաւորէն ստացած է Յորդանանի Անկախութեան Շքանշան, 3 Սեպտեմբեր 2013ին:
2.- Արսէն Գույումճեան՝ Ամմանի Ելեկտրական Ընկերութեան ելեկտրական ցանցերու տեղեկատու մասնագէտ: Պաշտօնավարած է մինչեւ 75 տարիքը՝ 1987:
3.- Տոքթ. Արամ Եաղլեան՝ առողջապահութեան նախարարութեան արտաքին կապերու տնօրէն՝ 1970ականներուն, Առողջապահական Հիմնարկի տնօրէն, Յորդանանի առողջապահութեան նախարարութեան երկարամեայ ընդհանուր քարտուղար:
4.- Մելիտոս Եկէնեան՝ արուեստագէտ լուսանկարիչ, տարիներով ծառայած է Ապտալլա Բ. եւ Հուսէյն Պըն Թալալ թագաւորներուն: Ապտալլա Բ. թագաւորէն ստացած է Յորդանանի Անկախութեան 4րդ կարգի շքանշան, 2010ին[3]:
5.- Սեդա Եսայեան՝ երկար տարիներ պաշտօնավարած է Յորդանանի արտաքին գործոց նախարարութեան մէջ: Որպէս առաջին քարտուղար ծառայած է 13 նախարարներու: Հուսէյն թագաւորէն ստացած է Husein Al Kawkab Alordoni 4րդ կարգի շքանշան, 1994ին, եւ Ապտալլա Բ. թագաւորէն՝ Յորդանանի Անկախութեան 5րդ կարգի շքանշան, 2010ին:
6.- Հրաչ Էթեմէզեան՝ Յորդանանի բանակի գլխաւոր ճարտարապետ: Ան բանակին միացած է 1963ին եւ հանգստեան կոչուած 1982ին: Ստացած է զանազան շքանշաններ, ինչպէս՝ Al-Husein Order of Military Merit, Անկախութեան, Արծաթեայ Յոբելանի ուսադիր, Քարամա Ճակատամարտի, երկարամեայ ծառայութեան, Վարչական եւ Արհեստագիտական Ատակութեան, Միջազգային Զինուորական Մարզական Խորհուրդի շքանշաններու:
7.- Յովիկ Էթեմէզեան՝ Յորդանանի առաջին հայ դեղագործը:
8.- Տոքթ. Սուրէն Էթեմէզեան՝ Ապտալլա Ա. թագաւորի անձնական բժիշկը, 1946-51ին: Ան կը հանդիսանայ մին Յորդանանի առաջին երեք

[3] Պէտք է ընդգծել որ Յորդանանի թագաւորական պալատին ծառայած է հայ լուսանկարիչներու փաղանգ մը, յանձինս՝ Հուսէյն Պըն Թալալ թագաւորի լուսանկարիչներ՝ Յակոբ Թորանեանի եւ Զօհրապ Մարգարեանի, Նուր Ալ-Հուսէյն թագուհիի լուսանկարիչ՝ Գէորգ Լեփէճեանի, իշխան Հասան Պըն Թալալի լուսանկարիչ՝ Պօղոս Տարագճեանի, իշխանուհի Մունա Ալ-Հուսէյնի (Ապտալլա թագաւորի մայրը)՝ լուսանկարիչ Միհրան (Միրօ) Գիզիրեանի:

բժիշկներէն: Յորդանան հաստատուած է 1927ին, իբրեւ բժիշկ վկայուելէ ետք Պէյրութի Ամերիկեան Համալսարանէն: Ստանձնած էր Յորդանանի Զինեալ Ուժերու գլխաւոր բժիշկի պարտականութիւնները:

9.- Վահէ Ղազարեան՝ երեսնամեակ մը պաշտօնավարած է Յորդանանի Ելեկտրական Ընկերութեան մէջ որպէս պատասխանատու տնօրէն: Հանդիսացած է Ամմանի պասքէթի առաջին համադաշնութեան հիմնադիր-անդամ, 1955ին:

10.- Աֆրամ Ճեմալտանեան՝ Յորդանանի հաղորդակցութեան նախարարութեան պաշտօնատար, խորհրդատու՝ երեսնամեակ մը, մինչեւ 2010ականները: Պաշտօնավարած է նաեւ իբրեւ հաղորդակցութեան փոխ-նախարար:

11.- Վարդան Շուքուրեան՝ Մատապա քաղաքէն մինչեւ Քարաք քաղաք երկարող ջուրի մատակարարման ցանցերու տեղեկատու մասնագէտ: Պաշտօնավարած է պետական ջուրի ընկերութեան մէջ մինչեւ 1995:

12.- Աբրահամ Մահրէճեան՝ Յորդանանի Կեդրոնական Հետախուզական բաժնի պաշտօնատար, մինչեւ 2007:

13.- Փրլանթին Մելքիսեթէքեան՝ Յորդանանի ռատիօկայանի, փոստի ապահովութեան պաշտօնատար, 1970-97:

14.- Ռոստոմ Մխճեան՝ ճարտարագէտ, Յորդանանի հնագիտական պեղումներու մասնագէտ, Յորդանան գետին կից եկեղեցիներով կազմուած բաց թանգարան՝ Մաղթասի շրջանի փոխտնօրէն: Ներկայիս ընդհանուր տնօրէնն է Մաղթասի ամբողջ շրջանին: Պարգեւատրուած է Ապտալլա Բ. թագաւորէն անկախութեան Բ. կարգի շքանշանով, 2015ին:

15.- Ներսէս Ներսէսեան[4]՝ ՀՀ նախագահ Սերժ Սարգսեանի կողմէ Մովսէս Խորենացի շքանշանով (Մայիս 2014), եւ ՀՀ Սփիւռքի նախարարութեան կողմէ Հայրենի «Դեսպան» շքանշանով (Հոկտեմբեր 2013):

16.- Տէր եւ Տիկ. Ժիրայր եւ Տիգրանուհի Չքրըքճեաններ[5]՝ ՆՍՕՏՏ Գարեգին Բ. ամենայն հայոց կաթողիկոսի կոնդակով եւ Ս. Սահակ-Մեսրոպ շքանշանով, 2008ին:

17.- Էլի Պեննէեան՝ ճարտարագէտ, ՀՄԸՄի երկարամեայ ատենապետ, 1980-2000՝ անդամ Յորդանանի պասքէթի համադաշնութեան:

18.- Հայկ Պեննէեան՝ Յորդանանի հաղորդակցութեան նախարարութեան պաշտօնատար, խորհրդատու եւ Ընդհանուր Քարտուղար 2010ականներուն:

19.- Յակոբ Պէրպէրեան՝ պալատական երկարամեայ լուսանկարիչ, Էմիր Հուսէյնի կողմէ արժանացած Անկախութեան Երրորդ Կարգի շքանշանին, իսկ Ապտալլա թագաւորին կողմէ՝ Յորդանանի Աստղի շքանշանին:

---

[4] Մշակոյթի, գրականութեան եւ արուեստի բնագաւառներէն ներս իր բերած երկարամեայ ծառայութեան համար:

[5] Վարժարանիս մէջ իրենց 50 տարիներու շարունակական ծառայութեանց համար:

Յորդանանեան դրամանիշերուն վրայ երեւցող Ապտալլա թագաւորին նկարին լուսանկարողն է ան:

20.- Յովսէփ Սանոսեան՝ Քարաք քաղաքի երկարամեայ դեղագործ: Քարաքի մէջ իր անունով գոյութիւն ունի փողոց մը:

21.- Վարուժան Սարգիսեան՝ ԱՄՄի երկարամեայ ատենապետ: Հիմնադիր-անդամ Ամմանի Պասքէթի Համադաշնութեան, 1955ին: Ան պասքէթը Երուսաղէմէն ներածած է Ամման 1949ին:

22.- Աւետիս Սերփէքեան՝ Ռուսէյֆա ծնած, Խորհրդային Հայաստանէն, ապա եւ Միացեալ Թագաւորութենէն վկայուած ճարտարապետ, ջուրի մատակարարման կայաններու շինարարական ասպարէզին մէջ պաշտօնավարած իբրեւ Ուատի'լ Օրտոնի կառավարչութեան ընդհանուր քարտուղար (Յունիս 1999-Նոյեմբեր 2000): Սերփէքեան միակ հայն է որ նման բարձրաստիճան դիրքի եւ իշխանութեան հասած է Յորդանանի մէջ: Մարտ 2000ին արժանացած է Յորդանանի անկախութեան Բ. կարգի շքանշանին, Ապտալլա Բ. թագաւորին կողմէ[6]:

23.- Իսհաք Սալիպա Գէորգեան՝ Ապտալլահ Ա. թագաւորի առաջին մեքենավարը եւ մեքենագէտը, Յորդանանի մէջ ինքնաշարժ վարելու առաջին արտօնագիր ստացողը:

24.- Սլիման Սալիպա Գէորգեան՝ Իսհաքի եղբայրը, Ապտալլա Ա. թագաւորի երկրորդ մեքենավարը, մեքենագէտը ու անձնական վարորդը, 1928ին:

25.- Գրիգոր Վարդիվառեան՝ յորդանանեան բանակի բարձրաստիճան անձնաւորութիւն: Իրեն շնորհուած է *պէյ* կոչումը:

26.- Տէր եւ Տիկ. Գէորգ եւ Մարի Տագէսեաններ՝ Յորդանանի հայօճախին, եկեղեցիին եւ վարժարանին երկարամեայ բարերարներ, ՆUOSS Գարեգին Բ. ամենայն հայոց կաթողիկոսի կոնդակով եւ Ս. Գրիգոր Լուսաւորիչ Շքանշանով, 2001ին:

27.- Վաչէ Տագէսեան՝ ՀՀ միակ եւ առաջին հայ պատուակալ հիւպատոսը Յորդանանի մէջ 2012-15 տարիներուն:

28.- Պօղոս Տարագճեան՝ արուեստագէտ, իշխան Հասան Պղնձ Թալալի եւ իր ընտանիքին երկարամեայ (մինչեւ այսօր) լուսանկարիչ:o

---

[6] Պարգեւատրումը գնահատական մըն էր Յորդանանի Հովիտի մակերեսի ջրային աղբիւրներու՝ Սերփէքեանի ողջմիտ կառավարման: Ան կրցած էր անջրդի տարուան մը շրջանին յաջողապէս մատակարարել նախորդ տարուան համեմատութեամբ 6 միլիոն խորանարդ մեթր յաւելեալ ըմպելի ջուր՝ Ամմանի բնակչութեան եւ 17% աւելի ոռոգման ջուր՝ հողագործներուն, հակառակ նախորդ տարիէն 100մլն. խորանարդ մեթր նուազ ջրային պաշարին: Մ. Նահանգներ իր մեկնումէն ետք, Յորդանանի Հովիտի իշխանութիւնը Սերփէքեանի անունով կոչեց Ղոր Էլ Սաֆիի իր կեդրոնատեղիին գլխաւոր ժողովասրահը:

29.- Հայկ Փելթէքեան՝ առեւտրական, Յորդանանի բանակի հանդերձանքի մատակարար-դերձակ: Ապտալլա Բ. թագաւորին կողմէ արժանացած է «փաշա»ի տիտղոսին, 1950ին:

30.- Անթուանէթ Քարատանայեան, 21 տարի ծառայած է Յորդանանի բանակի հիւանդանոցներուն մէջ՝ Իրպիտի, Զարքայի, Քարաքի, Աքապայի, Ամմանի, Մարքայի, Ալիա թագուհիի եւ ԱլՄատինէ ԱլԹըպպիյէ հիւանդանոցին մէջ, հասած է *մուքաւրամ* աստիճանին՝ բանակին մէջ, ծառայած է որպէս մանկաբարձութեան բաժնի վարիչ, պարգեւատրուած է Յորդանանի Աստղի բանակային երեք շքանշաններով, որոնցմէ մին՝ 1973ի Հոկտեմբերի պատերազմին իր ծառայութեան համար: 1977ին, Յորդանանի անկախութեան 25ամեակին առթիւ արժանացած է Յորդանանի Անկախութեան շքանշանին:

31.- Քերիմ Օհան՝ 1955-67ականներուն (ամբողջ տասնամեակ մը) Յորդանանի ընդհանուր ոստիկանապետ: Կը յիշուի իբրեւ ուղղամիտ եւ հաւասարակշռուած քաղաքացի: 26 Մայիսի 1959ին, Հուսէյն թագաւորի հրամանագրով կը նշանակուի աշխատակազմի ղեկավար: Յետմահու պարգեւատրուած է վահանակով մը, 2010ին:

32.- Անթուանէթ Սելմէն, Տոքթ. Արամ Գարագաշեան, Տոքթ. Սեդրակ Եսայեան, Տոքթ. Ազիզ Տինեան՝ Հայաստանի մէջ բժշկական մասնագիտութեամբ վկայուած անհատներ, 1972ականներէն երկար տարիներ ծառայած են Յորդանանի բանակին մէջ:

ԵԿԵՂԵՑԻՆԵՐ

Ներկայիս Յորդանանի հայօճախը ունի երկու եկեղեցի՝ Ս. Թադէոս եւ Ս. Կարապետ:

Ս. Թադէոս եկեղեցին կը հանդիսանայ ամմանահայութեան ամէնօրեայ, գործող եկեղեցին: Կառուցուած է 1966ին, բարերարութեամբ նիւեորքաբնակ Յարութիւն Թադոսեանի, ճարտարապետութեամբ Տիրան Ոսկերիչեանի, օգնական ունենալով Օշին Պետեւեան: Հիմնարկէքը կատարուեցաւ ձեռամբ Եղիշէ պատրիարք Տէրտէրեանի, 1963ին:

Եկեղեցին՝ 4 սիւներու վրայ յենած իր գմբէթով, հայկական ոճով կառոյց է, որ իր դիրքով եւ շքեղութեամբ կը գեղեցկացնէ Էշրեֆիէ լեռան հայկական թաղամասի ամբողջ շրջանը: Եկեղեցիին մէջ նստակեաց կը տեղաւորուի 350 հոգի, իսկ քիչ մը սեղմ եւ ոտքի՝ մինչեւ 500 հոգի[7]:

[7] Հոկտեմբեր 27ի օծման արարողութեան ներկայ էին նաեւ քոյր եկեղեցիներու առաջնորդներ ու ներկայացուցիչներ: Պատրիարք հայրը, առ ի գնահատանք, Ս. Յարութեան Ա. կարգի շքանշանով պարգեւատրեց եկեղեցւոյ ճարտարապետ Ոսկերիչեանը, իսկ վարչապետը, յանուն Հուսէյն թագաւորին, յորդանանեան բարձրագոյն կարգի շքանշան «Ալ-Նահտա»ով պատուեց բարերար Յարութիւն Թադոսեանին կուրծքը: Վերջինս իր կարգին, պատրիարքին իր շնորհակալութիւնը յայտնեց՝ ընծայելով ադամանդեայ խաչ մը:

1995ին եկեղեցին ենթարկուեցաւ վերանորոգման. վերակառուցուեցաւ խորանը մարմարեայ քարերով[8]: Նոյն ծիրին մէջ, կառուցուեցաւ նոր վերնատուն՝ դպիրներու համար, փոփոխութեան ենթարկուեցաւ եկեղեցիին մուտքը, որ օժտուեցաւ նոր մայր դուռով:

2005ին եկեղեցիին բակին մէջ զետեղուեցաւ խաչքար-կոթող մը՝ Հայոց Ցեղասպանութեան 90ամեակին առթիւ[9]:

Մաղթասի Հայոց Ս. Կարապետ Եկեղեցի

Նպատակ ունենալով յարգանք մատուցել քրիստոնեայ համայնքներուն, ունենալ եկեղեցիներու բաց թանգարան մը եւ ցոյց տալ աշխարհին, թէ Քրիստոսի մկրտարանի վայրը կը գտնուի Յորդանան գետի արեւելեան ափին, պետութեան սահմաններուն մէջ, Յորդանանի Հաշէմական Թագաւորութիւնը սիրայօժար հողաշերտեր տրամադրեց 13 քրիստոնեայ համայնքներու, 14 Յունիս 2006ին, որպէսզի իւրաքանչիւրը իր եկեղեցին կառուցէ իր ազգային իւրայատուկ ոճով: Այս համայնքներուն շարքին Յորդանանի հայ առաքելական համայնքին եւս տրամադրուած էր 3000 քառ. մեթր հողակտոր մը, որուն վրայ կառուցուեցաւ հայոց Ս. Կարապետ եկեղեցին:

80 քառ. մեթր մակերեսով եկեղեցիին ճարտարապետն է փրոֆեսոր Արտակ Ղուլեան: Շինարարական աշխատանքներուն վերահսկեց յորդանանցի ճարտարապետ Տալիա Խորշիտ:

16 Հոկտեմբեր 2009ի եկեղեցւոյ հիմնարկէքին մասնակցեցան Ամմանի հոգեւոր առաջնորդ, պատրիարքական փոխանորդ Վահան Արք. Թոփալեան, Սեւան Արք. Ղարիպեան, Հայկազուն Վրդ. Եղիայեան, բարերարներ՝ Տէր եւ Տիկ. Վիգէն եւ Շնորհիկ Կարապետեաններ: 12 սուրբերու անուններով փորագրուած մարմարէ հիմնաքարեր զետեղուեցան Ամմանի Ազգային Խորհուրդի անդամներու, միութեանց վարչական անդամներու եւ Ս. Թադէոս եկեղեցւոյ դպրաց դասի անդամներու կողմէ: Արարողութեան նախագահեց Նուրհան Արք. Մանուկեան:

Եկեղեցիին ներքին աշխատանքները ընդգրկեցին Ս. Խորանի սեղանի շինութիւնը (վարագոյր եւ կահաւորում ներառեալ), երկու հանդերձասենեակներու կահաւորում, մոմավառութեան մարմարէ կառոյցը

---

[8] Նոր խորանի նախագիծը պատրաստուեցաւ ճարտարապետ Արամ Պետեւեանի կողմէ: Օծումը կատարուեցաւ Թորգոմ պատրիարք Մանուկեանի ձեռամբ, 30 Սեպտեմբեր 1998ին:

[9] Խաչքարի բարերարները հանդիսացան Տէր եւ Տիկ. Գէորգ եւ Մարի Տագէսեանները: Խաչքարին նախագիծը պատրաստած էր ճարտարապետ Սիլվա Ճամպազեան: Նոյն բարերարներուն նուիրատուութեամբ եւ Ճամպազեանի նախագիծով եկեղեցիին բոլոր լուսամուտներու ապակիները փոխարինուեցան հայկական ծաղկանախշերով զարդարուած ապակիներով:

իր հովանիով, մկրտարանի ամբողջացումը: Եկեղեցիին զանգակը բերուեցաւ Հայաստանէն: Եկեղեցիին շինութիւնը տեւեց մէկուկէս տարի[10]:

Եկեղեցիին օծման արարողութիւնը կատարուեցաւ 30 եւ 31 Հոկտեմբեր 2014ին, ներկայութեամբ սաղիմածին բարերարներ հայր եւ որդի բժիշկներ Կարօ եւ Վիգէն Կարապետեաններու:

Եկեղեցւոյ օծման յաւելեալ փայլք տուաւ Յորդանան ժամանումը ՀՀ նախագահ Սերժ Սարգիսեանի: Ան հանդիսացաւ մկրտաւազանի կնքահայրը[11]:

Ս. ԿԱՐԱՊԵՏ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՅԱՏԱԿԱԳԻԾԸ



[10] Հակառակ մէկ տարուան պայմանագրութեան, շինարարական թեքնիք պատճառներով հնարաւոր չէր զուգահեռ եւ արագընթաց գործել:

[11] Նախագահ Սարգիսեան 30 Հոկտեմբերին եկեղեցիին տարածքը այցելեց իր շքախումբով: Այցին ընկերակցեցան նաեւ Յորդանանի պալատական մեծամեծներ եւ նախարարներ: 30 Հոկտեմբերին կատարուեցաւ եկեղեցւոյ մէջ գտնուող իւրաքանչիւր իրի օծումը, նախագահութեամբ Նուրհան Արք. Մանուկեանի: 31 Հոկտեմբեր 2014ին կատարուեցաւ օծման արարողութեան շարունակութիւնը. օրուան պատարագը մատուցեց Սեւան Արք. Ղարիպեան: Արարողութեանց ներկայ էին շուրջ 600 հիւրեր, որոնց կարգին՝ Յորդանանի պետութեան եւ համայնքներու աշխարհական թէ եկեղեցական ներկայացուցիչներ եւ հայ համայնքի անդամներ:





ՅՈՐԴԱՆԱՆԱՀԱՅԵՐՈՒ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆԸ ՀԱՅՐԵՆԻՔԻՆ ՀԵՏ

Յորդանանի հայօճախը սիրալիր յարաբերութիւններ կը պահպանէ Հայրենիքի հետ 1960ականներէն՝ Սփիւռքահայութեան Հետ Մշակութային Կապի Կոմիտէի գործունէութեան օրերէն: Հայաստանի Բարձրագոյն Ուսումնական Հաստատութիւններու մէջ յորդանանահայ երիտասարդները սկսած են ուսանիլ 1965էն, եւ կը շարունակեն մինչ օրս:



Յորդանանի Հաշէմական Թագաւորութիւնը Հայաստանի Հանրապետութեան անկախութիւնը ճանչցաւ 28 Դեկտ. 1991ին: Այնուհետեւ հաստատուեցան դիւանագիտական յարաբերութիւններ: Համատեղութեան կարգով Սուրիոյ մօտ Հայաստանի Հանրապետութեան հաւատարմատարներ, արտակարգ եւ լիազօր դեսպաններ եւս գործեցին Ամմանի մէջ՝ Դաւիթ Յովհաննէսեան (1992-98), Լեւոն Սարգիսեան (1998-2005), Արշակ Փոլատեան (14 Յունիս 2011-18): Յորդանանի մօտ Հայաստանի պատուակալ հիւպատոսներ եղան՝ Նեպիլ Պերեքէթ (1994-96), Իպրահիմ Ը'թէուի (1996-98), Վաչէ Տագէսեան (2012-15): Կնքուած են միջպետական համաձայնագրեր[12]: Յորդանանը դեսպանատուն չունի Երեւանի մէջ: Ան ներկայացուած է Ուզպէքիստանի մայրաքաղաք Թաշքենտի մէջ Յորդանանի դեսպանատան միջոցով:

Հայաստանի Գ. Հանրապետութեան առաջին իսկ օրերէն հայօճախին յարաբերութիւնները բազմապատկուեցան ՀՀի հետ: Յորդանանահայ տարբեր միութիւններ սերտ կապեր հաստատած են ՀՀ, մանաւանդ՝ Սփիւռքի նախարարութեան հետ, որ նաեւ իր կրթամշակութային ծրագրերով կը նպաստէ յորդանանահայութեան հայապահպանութեան աշխատանքին:

[12] Յորդանանի եւ Հայաստանի կրթական նախարարութիւններու միջեւ կայացած համաձայնութեան հիմամբ, 2013էն իվեր, ՀՀէն թիւով 30 համալսարանականներ Յորդանան կու գան՝ Յորդանանի Պետական Համալսարանին մէջ արաբերէնի դասընթացքներու հետեւելու:

Հայօճախը միշտ մասնակցութիւն բերած է Հայրենիք-Սփիւռք խորհրդաժողովներուն, մասնակցած Սփիւռքի նախարարութեան կազմակերպած ամէնամեայ «Արի Տուն» ծրագրին, ինչպէս նաեւ թեմատիկ թատերական-պարային թէ այլաբնոյթ փառատօներու[13]: Հայոց Ցեղասպանութեան Յորդանանի Միացեալ Յանձնախումբը յաճախակի մասնակցութիւն բերած է հայրենիքի մէջ կայացող ձեռնարկներու:

Տարբեր առիթներով Ամման ժամանած են ՀՀ նախագահը, նախարարներ, Երեւանի քաղաքապետը եւ պաշտօնական հիւրեր: Հայոց Ցեղասպանութեան 100ամեակին առթիւ Ամմանի քաղաքապետը մեկնեցաւ Երեւան՝ մասնակցելու արարողութեանց[14]:

Հայաստանի ռատիոյի ալիքներէն բազմիցս հիւրընկալուած են յորդանանահայ դէմքեր: Եղած են նաեւ փոխայցելութիւններ[15]: Այդ փոխայցելութիւններէն յիշատակելի են, օրինակ՝ 2014ին Ամմանի մէջ, ՀՀ Սփիւռքի նախարարութեան կողմէ կազմակերպուած «Կոմիտաս Յաւերժի Ճամփորդ» ներկայացումը, որ մատուցուեցաւ Արարատեան Հայրապետական թեմի «Ծաղկազարդ» համախումբին կողմէ (խմբավար՝ ՀՀ վաստակաւոր արուեստագէտ Սարգիս Նաճարեան)[16]:

---

[13] 2012ին ԱՄՄի Սպիտակ պարախումբը իր մասնակցութիւնը բերաւ Երեւանի «Իմ Հայաստան» փառատօնին, միութեան Երեւան երգչախումբը (խմբավար Վարդուհի Թորոյեան-Ներսէսեան) 2015 Սեպտեմբերին, Երեւանի մէջ ելոյթ ունեցաւ Կոմիտասի Փառատօնին: 2018ին Ամմանի ՀՕՄի Արազ Պարախումբը (ղեկավար՝ Անի Քարալեան-Գիզիրեան) ելոյթ ունեցաւ հայրենի բեմերու վրայ: Գաղութիս 25 անդամներէ բաղկացած «Վարդավառ» երգչախումբը (ղեկավար՝ Վարդուհի Թորոյեան-Ներսէսեան, հիմնուած 2016 Փետրուարին), ելոյթներ ունենացաւ Յորդանանի եւ Հայաստանի մէջ:

[14] 2015 Ապրիլին Էլ-Րու'իա հեռուստաընկերութիւնը այցելեց Յորդանանի հայկական կառոյցներ, տեղեկութիւններ քաղեց յորդանանահայութեան պատմութեան մասին, զրոյցներ ունեցաւ համայնքի տարբեր ընտանիքներու հետ, լսեց անոնց պատմութիւնը արծարծեց Ցեղասպանութիւնը եւ տեսանիւթեր տարածեց համացանցի վրայ՝ առաւելագոյնին հասցնելով Յորդանանի զանգուածային հաղորդամիջոցներուս հետաքրքրութիւնը Հայոց Ցեղասպանութեան մասին:

[15] 2016ին, «Հայկական Հետք» հաղորդաշարով (Կեդրոն Հեռուստաալիք), Ռուզաննա Ղազարեան ներկայացուցած է Յորդանանի հայօճախը:

[16] Յիշարժան այլ ձեռնարկներու շարք մըն էին Զուարթնոց Հիմնադրամի տնօրէնութեան նախաձեռնած երգի եւ երաժշտութեան աստղերու մասնակցութեամբ ելոյթները՝ 13 Մայիս 2015ին, Յորդանանի տարբեր կեդրոններու մէջ:

Outstanding Figures in the Jordan Armenian Community and the Armenian Churches of Jordan (Summary)

Nerses Nersessian
nerses.nersessian@gmail.com

At least since 1900 the Jordan Armenians have had the support of the congregation of the St. James Armenian Monastery of Jerusalem. The congregation has continuously and with no interruption provided a cleric who is stationed in Amman.

The paper identifies figures who have been members, leaders and founders of local Armenian organizations and institutions which have promoted Armenian education and shaped Armenian identity in consecutive generations and contributed to the Hashemite Kingdom.

The paper focuses on the history of the Armenian Church of Amman, Surp Tateos, which was built in the Armenian residential area of Ashrafiyeh. The paper also provides details about the construction of the second church, Surp Garabed, built in 2014 at Maghtas on the Jordan River bank and its impact. The church was consecrated in the presence of the President of the Republic of Armenia, Serj Sarkisian, in October 2014.

Ժողովրդագրական Քաղուածքներ Ամմանի Ս. Թադէոս Եկեղեցւոյ Պսակի, Մկրտութեան եւ Մահուան Տոմարներէն (1922--2013)

Անդրանիկ Տագէսեան
adakessian@haigazian.edu.lb

Այս ուսումնասիրութիւնը կը ջանայ տալ Յորդանանի հայութեան ժողովրդագրական պատկերի միքանի երեսակ, իբրեւ հիմք ունենալով Ամմանի Ս. Թադէոս եկեղեցւոյ պսակի, մկրտութեան եւ թաղման տոմարները[1]:

ՆԿԱՐԱԳՐՈՒԹԻՒՆ ՏՈՄԱՐՆԵՐՈՒ

Պսակի տոմարը կազմուած է տպագիր երկթերթ հարցաթերթիկներէ: Հարցաթերթիկը աղիւսակի ձեւով ու Բ. եւ Գ. սիւնակներու մէջ առանձնացուցած է համապատասխանաբար հարսին ու փեսային վերաբերող պատասխանները այն հարցումներուն, որոնք դրուած են Ա. սիւնակին մէջ: Հարցումները կը վերաբերին անոնց անուն-ազգանունին, ազգութեան, դաւանանքին, հպատակութեան, ծննդավայրին, տարիքին, ամուսնական վիճակին, «զբաղանք»ին, հօր եւ մօր անունին, բնակավայրին, զբաղանքին, կնքահօր անուն-ազգանունին եւ Ա. ու Բ. վկաներուն անուն-ազգանունին ու զբաղանքին: Այս աղիւսակը ամբողջութեամբ կը կրկնուի հանդիպակաց թերթին վրայ: Աղիւսակէն վար, առաջին թերթին վրայ տրուած են նշանտուքի ու պսակի վայրերուն, թուականներուն եւ կրօնաւորին անունն ու տուեալները, արտօնութիւն-հրամանագրի թուահամարն ու թուականը, հանդիպակաց էջին վրայ՝ այս տուեալներուն փոխարէն տպուած է Երուսաղէմի հայոց պատրիարքին ուղղուած դիմում, որով կը խնդրուի արտօնութիւն շնորհել պսակի արարողութեան: Դիմումին տակի տպագիր գրութիւնը կը թելադրէ տուեալ թերթը ամբողջացնել եւ յղել պատրիարքարան:

Պսակի տոմարի առաջին արձանագրութիւնը կը վերաբերի 23 Մայիս 1940ին՝ Մաանի մէջ կատարուած պսակի արարողութեան, իսկ վերջինը՝ 9 Մայիս 1994ին, ընդամէնը 432 պսակ[2]:

---

[1] Հայկազեան Համալսարանի Հայկական Սփիւռքի Ուսումնասիրութեան Կեդրոնի կողմէ «Յորդանանի Հայերը» գիտաժողովին կազմակերպումին համար, Սեպտեմբեր 2015ին Ամման կատարած այցելութեան օրերուն առիթ յառաջացաւ նկարելու ապա եւ սերտելու Ամմանի հայոց եկեղեցւոյ գրասենեակը պահ դրուած այս տոմարները: Շնորհակալութիւն բոլոր անոնց որոնք կարելի դարձուցին այս թուայնացումը:

[2] Մեր տրամադրութեան տակ ակամայ չունեցանք պսակի երկրորդ տոմարը:

Թաղման տոմարները երկու հատ են: Առաջին տոմարը կ'ընդգրկէ 1 Մարտ 1936-4 Նոյեմբեր 2005 շրջանը: Թաղման թուականի յաջորդականութեամբ, 48 զոյգ թերթերու վրայ, աղիւսակաձեւ, ձեռագիր ցանկագրուած եւ թուագրուած են ննջեցեալին անուն-ազգանունը, ծննդավայրը, տարիքը, արհեստը, հիւանդութիւնը (մահուան պատճառը), թաղման վայրն ու թաղման կարգը կատարող կրօնաւորին անուն-ազգանունը: Տոմարը կը հաշուէ 681 անուն: Երկրորդ՝ լաւագէս պահպանուած տոմարը կ'ընդգրկէ 2006-20 Յուլիս 2013 (եւ այնուհետեւ) շրջանը: Ան կը հաշուէ տպուած հարցաթերթիկի աւելի քան 120 թերթ: Իւրաքանչիւր էջ յատկացուած է մէկ ննջեցեալի տուեալներուն՝ անոր անուն-ազգանունին, ծննդավայրին, զբաղումին, ծննդեան-մահուան-թաղման թուականներուն, մահուան պատճառին, թաղման վայրին եւ կրօնաւորին: Ընդամէնը 760 թաղում:

Մկրտութեան տոմարները չորս հատ են: Առաջին տոմարը առօրեայ արձանագրութեան ծառայած է[3]: Անոր 74 զոյգ էջերու վրայ տարածուած տուեալները (1922-18 Օգոստոս 2006 շրջան)[4] կը հաշուեն թուագրեալ 1062 մկրտեալի անուն, որ սակայն ունի լուրջ խախտումներ, երբեմն նաեւ անխնամ արձանագրութիւն[5]: Ասոնք կ'ընդգրկեն մկրտեալին ծննդեան ու մկրտման թուականները, անուն-ազգանունը, մօր-հօր անուններն ու ծննդավայրերը[6], կնքահօր անուն-ազգանունը եւ մկրտող կրօնաւորին անուն-ազգանունը: Երկրորդ տոմարը, 78 հանդիպակաց էջերով, աղիւսակաձեւ առանձնացուցած է տուեալ տարուան մկրտեալները՝ 22 Փետրուար 1922էն մինչեւ 9 Նոյեմբեր 1997: Տոմարը խնամեալ, սակայն անաւարտ, տարիներ անց կատարուած կոկիկ վերընդօրինակութիւն մըն է: Երրորդ տոմարը կը հաշուէ տպուած հարցաթերթիկի 97 էջերով կազմուած հատոր մը՝ 5 Մայիս 2005-22 Յուլիս 2011 շրջանին համար[7]: Չորրորդ

---

[3] Տոմարը 1945ին սկսուած վերընդօրինակութիւն մըն է: Ենթադրելի է որ զայն նախորդող այլ տոմար մը գոյութիւն ունեցած ըլլայ, զոր չտեսանք:

[4] Առաջին իսկ անուան տողին վրայ, այլ ձեռագիրով աւելցուած են այլ՝ աւելի հին մկրտեալի մը տուեալները: Այս երեւոյթը կրկնուած է առաջին էջի յետագայ շարք մը անուններու տողատակերուն:

[5] Թիւ 954՝ 18 Օգոստոս 1968ին մկրտուած երեխային տուեալներուն յաջորդող էջին ցանկը կը սկսի թիւ 255էն (հակառակ որ բացթողում չկայ նախորդ եւ այս էջերուն մկրտութեան թուականին յաջորդականութեան միջեւ) եւ կը հասնի թիւ 1062ին՝ 13 Սեպտեմբեր 2004ին մկրտեալին տուեալին, ապա անկանոնաբար կ'երկարի մինչեւ 2006: Կան այլ բնոյթի խախտումներ եւս՝ երեխայի անուն՝ Գրիգոր Ապտըլ-Ղազաք Հապաշի, ամմանցի արաբ, կը մկրտուի 10 Սեպտեմբեր 1950ին (ծնած էր Ամման 39 Հոկտ. 1951ին!!) ձեռամբ Կորիւն Վրդ. Մանուէլեանի:

[6] Մօր ծննդավայրի սիւնակը թերի է:

[7] Կը թուի թէ արձանագրութեանց տոմարներու կանոնաւորում մը կատարուած է 2005-6ին, եւ անցում կատարուած ձեռագրելէ՝ նախապէս պատրաստուած տպագիր հարցարաններու ձեւին:

տոմարը կը հաշուէ նոյն հարցաթերթիկի աւելի քան 100 էջերով կազմուած հատոր մը՝ 22 Յուլիս 2011-7 Յունուար 2015 շրջանին համար (եւ այնուհետեւ): Բացի առաջին տոմարէն, մկրտութեան միւս տոմարները լաւապէս խնամուած ու մաքուր վիճակի մէջ են: Մկրտութեան տոմարներուն միասնական ցանկը կը հաշուէ 1850 մկրտութիւն:

Աղիւսակ Յորդանանի հայօճախի մկրտութեան, պսակի եւ թաղման							
ԹԹ.	Մկրտն.	Պսակ	Թղմ.	ԹԹ.	Մկրտն.	Պսակ	Թղմ.
1922	1			1969	15	7	7
1924	1			1970	17	7	7
1925	1			1971	26	12	16
1926	2			1972	19	7	8
1927	4			1973	20	7	10
1928	2			1974	22	4	12
1929				1975	24	9	15
1930	6			1976	23	7	18
1931	11			1977	17	11	11
1932	9			1978	--	15	19
1933	1			1979	24	12	11
1934	4			1980	18	8	18
1935	1			1981	24	13	7
1936	14		1	1982	25	8	13
1937	15		1	1983	23	9	13
1938	10		2	1984	29	13	6
1939	25	2	7	1985	27	11	12
1940	14	3	3	1986	20	2	11
1941	13	3	6	1987	30	9	9
1942	16	6	2	1988	17	8	13
1943	16	1	-	1989	42	3	10
1944	34	5	1	1990	11	5	10
1945	16	5	5	1991	21	11	10
1946	24		4	1992	31	11	12
1947	14	8	1	1993	28	11	14
1948	41	8	12	1994	16	7	11
1949	50	10	10	1995	17		13
1950	45	9	10	1996	24		8

1951	23	7	13	1997	23[8]		19
1952	30	7	7	1998	24		12
1953	42	12	9	1999	17		9
1954	43	4	9	2000	10		4
1955	43	10	13	2001	19		9
1956	45	10	8	2002	18		9
1957	41	8	8	2003	22		6
1958	23	10	8	2004	12		11
1959	46	12	14	2005	20		7[9]
1960	18	6	10	2006	13		19
1961	42	10	10	2007	19		15
1962	27	6	6	2008	18		6
1963	31	6	7	2009	15		10
1964	38	8	9	2010	19		14
1965	25	9	15	2011	11		16
1966	25	10	13	2012			12
1967	22	7	14	2013			9
1968	27	7	13	Գումար	1850	432	762

ՅՈՐԴԱՆԱՆԻ ՀԱՅՈՑ ՀՈԳԵՒՈՐ ՀՈՎՒՒԹԻՒՆԸ

Մինչեւ Մայիս 1925 յորդանահայութեան կրօնական կարիքներուն համար մնայուն կրօնաւոր չկար: Երուսաղէմի միաբաններ կարճատեւ այցելութիւններ տուած են հոն երբ մահացութեան պարագայ արձանագրուած է, ու՝ վերադարձած: Երբեմն, թաղման պարագայով իրենց ժամանումէն օգտուելով կատարած են նաեւ մկրտութեան կարգը չմկրտուածներու, ուստի եւ մէկ օրուան մէջ մկրտուած են մէկէ աւելի երեխաներ[10]:

[8] Վերընդօրինակուած Բ. տոմարը այստեղ կ'աւարտի: Այսուհետեւ՝ մինչեւ 2005 ներառեալ՝ օգտուած ենք առաջին տոմարին տուեալներէն, իսկ այնուհետեւ երրորդ տոմարին տուեալներէն:

[9] Առաջին տոմարը կիսատ կը թողու 2005ի մահացեալներու շարքը որ կը վերսկսուի թաղման Բ. տոմարին մէջ:

[10] Ուշագրաւ է այնթապցի Կարապետ եւ Մարիամ Մեքիքճեան ամոլի հինգ զաւակներուն մկրտութիւնը Սալթի մէջ, կնքահայրութեամբ Սարգիս Սուրճեանի՝ 3 Յուլիս 1944ին: Այդ զաւակները ծնած էին.- Անդրանիկ՝ 12 Յունուար 1924ին, Աշոտ՝ 20 Նոյեմբեր 1933ին, Արօ՝ 10 Յունուար 1936ին, Ազատուհի՝ 24 Դեկտեմբեր 1938ին եւ Արքայ՝ 12 Ապրիլ 1944ին: Նման այլ պարագայ մըն է 30 Յուլիս 1952ին Կորիւն Վրդ. Մանուէլեանի ձեռամբ եւ Յ. Տէր Յովհաննէսեանի կնքահայրութեամբ մկրտութիւնը սալթաբնակ Յարութիւն-Շաքէ Խանճեան ամոլի 3 զաւակներուն՝ Աշոտ (ծն. 2 Դեկտ. 1945), Նոյեմի (23 Մարտ 1948) եւ Վազգէն (24 Մայիս 1952): Կան եւ այլ պարագաներ: Պէտք է ըսել, սակայն, որ կրօնաւորի

Պարագայական այս ժամանումներուն կողքին կան նաեւ պարբերական այցելութիւններ[11]:

20 Մայիս 1925ին յորդանահայութեան մէջ մնայուն ներկայութիւն կը հաստատէ Յովհան Քհնյ. Մաճարեան, որ կը գործէ մինչեւ 25 Սեպտեմբեր 1926: Այնուհետեւ, երկամեայ դադարէ մը ետք զինք կը փոխարինէ Յովհաննէս Վրդ. Ասատուրեան որ կը գործէ 22 Օգոստոս 1928-21 Ապրիլ 1931 շրջանին: Եռամեայ դադարէ մը ետք, զինք կը փոխարինէ Գէորգ Վրդ. Ճանսըզեան՝ 18 Յունիս 1934-27 Յունուար 1936 շրջանին, ապա՝ Յակոբ քահանայ Մավեան (5 Փետրուար 1936-18 Հոկտեմբեր 1939): Իրմով կ'ամրապնդուի մնայուն հովիւ ունենալու փաստը: Ասիկա հետեւանք էր հայօճախին թուային աճին: Ուստի եւ, կարելի է հետեւցնել, թէ եթէ հայօճախին թիւը 1920ականներու երկրորդ կէսին պատեհ կը դարձնէր կրօնաւորի մը մնայուն ներկայութիւնը, ապա 1930ականներու երկրորդ կէսէն սկսեալ էական կը դառնար ասիկա:

Ստորեւ՝ Յորդանանի հայութեան հոգեւոր կարիքներուն սպասարկած կրօնաւորներուն անուններն ու ծայառութեան թուականները, ըստ տոմարներու տուեալներուն[12].-

Յովհաննէս Վրդ. Ասատուրեան.- 22 Փետրուար 1922, 28 Մայիս եւ 20 Նոյեմբեր 1927, 22 Օգոստոս 1928-21 Ապրիլ 1931, 20 Փետրուար 1934:

Յուսիկ Քհնյ. Աւետիսեան.- 20 Փետրուար 1924:

Յովհան Քհնյ. Մաճարեան.- 20 Մայիս 1925-25 Սեպտեմբեր 1926, 27 Ապրիլ 1927:

Յակոբ Վրդ. Մավեան.- 18 Յունիս 1927:

Յակոբ Քհնյ. Մավեան.- 5 Փետրուար 1936-18 Հոկտ. 1939:

Տիրան Վրդ. Ներսոյեան.- 2 Մայիս 1932:

Սիրոն Վրդ. Մանուկեան.- 7-9 Մայիս 1932:

Զգօն Վրդ. Յակոբեան.- 11-18 Սեպտեմբեր 1932:

Պարգեւ Վրդ. Վրթանէսեան.- 11 Հոկտ. 1933, 1 Մայիս 1936:

բացակայութեամբ ալ կատարուած են ստիպողական արարողութիւններ, օրինակ՝ երբ Պօղոս Աբգարեան, սրտի կաթուածէ կը մահանայ 27-11-1981ին, ան կը թաղուի առաքելական ծէսով, «ի չգոյէ եկեղեցականի մենք թաղեցինք»:

[11] Պէտք է ըսել, սակայն որ եթէ ամմանահայութեան համար լուծուած էր մնայուն կրօնաւորի ներկայութեան հարցը, նոյնը չի թուիր ըլլալ պարագան ծայրամասերու հայութեան, ուր պարագաները կը ստիպեն որ կրօնաւորի ներկայութեան կատարուին մէկէ աւելի մկրտութիւններ: Երբեմն ծայրամասային ընտանիքը Ամման գալով կը մկրտէր ցարդ չմկրտուած իր բոլոր զաւակները, ինչպէս օրինակ՝ 24 Հոկտ. 1953ին, Ամմանի մէջ մկրտութիւնը Ճեմիլ Նազիկ Ղաուարի զաւակներուն՝ Լիլի, Ֆուատ, Լեպիպ, Ֆայէզ (որոնք համապատասխանաբար ծնած էին 13 Մայիս 1949, 2 Հոկտ. 1952, 23 Փետրուար 1946, 2 Հոկտ. 1952ին), ձեռամբ՝ Կորիւն Վրդ. Մանուէլեանի:

[12] Բոլոր կրօնաւորները առաքուած են Երուսաղէմի պատրիարքարանէն:

Շաւարշ Վրդ. Գույումճեան.- 20 Փետրուար 1934:

Գէորգ Վրդ. Ճանսըզեան.- 18 Յունիս 1934-27 Յունուար 1936:

Հայկասէր Աբղ. Տօնիկեան.- 5 Նոյ. 1939-9 Օգոստոս 1942:

Յարութիւն Աբղ. Մուշեան.- 16 Օգոստոս 1942-3 Յունիս 1945, 17 Յուլիս եւ 9 Սեպտեմբեր 1945, 10 Դեկտ. 1946, 31 Օգոստոս 1947, 7-14 Նոյ. 1948, 15 Յուլիս-2 Օգոստոս 1951:

Կորիւն Աբղ. (ապա վարդապետ) Մանուէլեան.- 15 Յունիս-11 Նոյ. 1945, 26 Յունուար-1 Դեկտ. 1946, 15 Ապրիլ-27 Յուլիս 1947, 8 Դեկտ. 1947-11 Մարտ 1956:

Սահակ Քհնյ. Շաքարեան.- 3-9 Սեպտեմբեր 1945:

Դերենիկ Եպս. Փոլատեան.- 31 Օգոստոս 1947:

Զարեհ Քհնյ. Պարսումեան.- 15 Յուլիս-1 Օգոստոս 1951:

Վարուժան Աբղ.- 23 Օգոստոս 1953:

Հայկազուն Վրդ. Աբրահամեան.- 2 Յունուար 1955:

Վազգէն Աբղ. Գպրըսլեան.- 2 Ապրիլ-28 Սեպտեմբեր եւ 3 Նոյ. 1957, 5 Հոկտ. 1958, 1-13 Օգոստոս 1963:

Լեւոն Աբղ. Աբելեան.- 16 Սեպտեմբեր 1957:

Եղիշէ Պատրիարք.- Մարտ եւ Սեպտեմբեր 1957ի միջեւ մէկ անգամ, 26 Յուլիս 1963:

Դաւիթ Աբղ. Սահակեան.- 6-27 Հոկտեմբեր, 10-29 Նոյեմբեր եւ 29 Դեկտեմբեր 1957, 16 Օգոստոս 1960-19 Յունուար 1961, 31 Մարտ-11 Յունիս 1961:

Յովսէփ Աբղ. Մամուր.- 6-21 Ապրիլ 1958:

Զաւէն Վրդ. Չինչինեան.- Մայիս 1958:

Արիս Աբղ. Շիրվանեան.- 2 Նոյեմբեր 1958-5 Յուլիս 1959, 13 Սեպտեմբեր 1959-31 Յունուար 1960, 14 Մայիս 1960:

Եզնիկ Աբղ. Չաւտարեան.- 16 Ապրիլ եւ 1-17 Յուլիս 1960:

Գեղամ Աբղ. Զաքարեան.- 7 Օգոստոս 1960, 11 Յունիս 1961:

Արշակ Աբղ. Խաչատուրեան.- 12-16 Փետրուար 1961:

Վրթանէս Աբղ. Գալայճեան.- 25 Յունիս 1961-24 Սեպտեմբեր 1962:

Վաչէ Աբղ. Իգնատիոսեան.- 1-13 Օգոստոս եւ 20 Սեպտեմբեր 1963:

Կարապետ Քհնյ. Անդրէասեան.- 12 Յուլիս 1964:

Շահէ Եպս. Աճէմեան.- 15 Փետրուար 1965:

Ներսէս Վրդ. Պապուճեան.- 29 Օգոստոս 1965:

Տաթեւ Աբղ. Ղարիպեան.- 12 Սեպտեմբեր 1965:

Անուշաւան Վրդ. Զոչանեան.- Մայիս, 17-23 Օգոստոս եւ 7-14 Սեպտեմբեր 1958, 2 Օգոստոս-13 Սեպտեմբեր 1959, 7 Հոկտեմբեր 1962-14 Յուլիս 1963, 10-23 Հոկտեմբեր 1963, 26 Յունուար-21 Յուլիս եւ 2 Օգոստոս-15 Նոյեմբեր 1964, 15 Յունուար-29 Յուլիս 1973:

Վահան Վրդ. Թոփալեան.- 25 Փետրուար 1979-2016:

ԿՐՕՆԱԿԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹԵԱՆՑ ՎԱՅՐԵՐԸ

Տոմարները թոյլ կու տան կողմնորոշուելու թէ սկզբնապէս փոքրաթիւ Ամմանի, նաեւ՝ ծայրամասային հայօճախները ինչպէս լուծած են իրենց անհրաժեշտ կրօնավայրերու հարցը[13]:

Մեկնելով այդ տուեալներէն կ'ունենանք հետեւեալ պատկերը.-

Ա) ***Պսակի արարողութիւններ***

1) Ամմանի պարագային պսակադրութեան վայր դարձած են հարսին-փեսային-կնքահօր-բարեկամ/հարազատի տունը (նոյնիսկ երբ Ս. Թադէոս եկեղեցին կը գործէր արդէն): Պսակներու կարեւոր մաս մը տեղի ունեցած է Ամմանի հայոց Ս. Աստուածածին մատուռը (որ պարբերաբար օգտագործուած է մինչեւ 1980), իսկ 1968էն սկսեալ՝ Ամմանի նորակառոյց Ս. Թադէոս եկեղեցիին մէջ (առաջին պսակադրութիւնը՝ 2 Փետրուար 1968): Պսակի արարողութիւններ կատարուած են նաեւ Ամմանի «անգլիական (բողոքականաց, անկլիքան) Ս. Փրկիչ եկեղեցի»ին[14], «աւետարանական եկեղեցի»ին, «շաբաթապահներու եկեղեցի»ին, «եպիսկոպոսական եկեղեցի»ին, «արաբ աւետարանականներու (անկլիքաններու) եկեղեցի»ին մէջ:

2) Ծայրամասերուն՝ Աքապայի, Զարքայի, Իրպիտի, Մաանի, Մատապայի, Մաֆրաքի-Ռըսէյֆայի-Քարաքի հայկական պսակադրութիւնները եղած են հարսին, փեսային, հարազատին «տան» կամ «բնակարանին» մէջ, Իրպիտի «Յունաց (կամ յոյն օրթոտոքսներու) եկեղեցի»ին եւ Ռըսէյֆայի «Աստուածածնայ Եկեղեցի»ին մէջ, որ խորքին մէջ նաեւ դպրոցաշէնքն էր:

Բ) ***Մկրտութիւնները*** տեղի ունեցած են մկրտեալին բնակարանը, Սետնայա[15], Երեւան, Յորդանան գետ[16], Մաղթասի Ս. Կարապետ նորակառոյց եկեղեցին, իսկ մեծամասնութիւնը՝ Ամմանի Ս. Թադէոս եկեղեցին: Պէտք է նշել, սակայն, որ այլուր մկրտուելու պարագային, ընդհանրապէս մկրտեալները դրոշմուած են եկեղեցւոյ մէջ:

Գ) Քիչ են ***թաղման*** այն պարագաները երբ ծայրամասի հանգուցեալին մարմինը բերուած է Ամման՝ թաղման: Ընդհակառակը, անոնք թաղուած են Մաանի, Ֆըհէսի, Զարքայի քրիստոնեաներու գերեզմանատունը (1979ին), Իրպիտի քրիստոնեաներու գերեզմանատունը (1973ին), Երուսաղէմ, 1964էն սկսեալ նաեւ՝ Ա[մմանի] Ն[որ] Գ[երեզման], իսկ 1968էն՝ «Ն.Գ.», աւելի ետք՝ Ում ըլ Հիրան, ապա նաեւ՝ Սահիապ[17] գերեզմանատունները:

---

[13] Բացի մկրտութեան առաջին երկու տոմարներէն, միւս երկուքը, պսակի տոմարն ու թաղման երկու տոմարները կ'ընդգրկեն արարողութեան վայրին հարցումը:

[14] 1950-60ականներուն աւելի քան քսանեակ մը պսակներ տեղի ունեցած են այս եկեղեցիին մէջ:

[15] Սուրիոյ քրիստոնէական հնագոյն սրբավայր:

[16] Մանաւանդ Հայաստանէն ժամանած զբօսաշրջիկներ կամ ուխտաւորներ:

[17] «Ա.Ն.Գ.», Ում ըլ Հիրան եւ Սահիապ քրիստոնէական գերեզմանատուներ են, ուր հայեր եւս կը թաղուին խառն, քանի որ յատուկ տարածք չէ առանձնացուած

ՏՈՒԵԱԼՆԵՐ ԸՍՏ ՊՍԱԿԻ ՏՈՄԱՐԻՆ

Աղիւսակ ամոլներու նոյն ծննդավայրի, բնակավայրի տուեալներու			
ԹԹ.	Ամոլներու թիւ	Նոյն ծննդավայր	Նոյն բնակավայր
1939-45	26	7=27%	7=27%
1946-50	35	6=17%	19=54%
1951-55	39	4=10%	24=61%
1956-60	47	10=21%	27=57%
1961-65	38[18]	6=15%	24=63%
1966-70	38[19]	8=21%	17=45%
1971-75	40[20]	6=15%	19=47.5%
1976-80[21]	56	16=28.5%	26=46%.
1981-85[22]	57	18=31.5%	21=37%
1986-90[23]	25	3=12%	4=16%
1991-95[24]	41	12=29%	14=34%

1) Ներհայկական պսակ

Աղիւսակը կը պարզէ որ յորդանահայութեան պսակադրութեան հնգամեայ միջին քանակը 32-35ի շուրջ է (տարեկան շուրջ եօթ պսակ): Եթէ յորդանահայ պսակադրութեանց 'բնական' թիւը համարենք 4-5ը (ըստ 1939-45ի տուեալներուն), ապա կը նկատենք որ պաղեստինեան դէպքերուն հետեւանքով ներհոսքը ամբողջ երեսնամեակ մը յորդանահայ պսակներու տարեկան միջինը բարձրացուցած է 7ի: Իսկ եթէ ամէնաշատ պսակադրութիւնները տեղի ունեցած են 1976-85 երկու հնգամեակներուն (որոնցմէ իւրաքանչիւրին ընթացքին առնուազն 9 պսակ աւելի եղած է քան որեւէ այլ հնգամեակի), ապա այդ յաւելումը հաւանաբար կարելի է բացատրել դրացի երկիրներէ (մասնաւորաբար Լիբանանէն) ներհոսքով:

Աղիւսակը կը պարզէ նաեւ որ 1939-95 շրջանին պսակուած ամոլներուն 54-78%ը ունէր նոյն ծննդավայրը կամ բնակավայրը, որ բարացուցական է ներհայկական (կամ տարիներու վրայ երկարող ծանօթութիւններու վրայ հիմնուած) ամուսնութիւններու բարձր, իսկ խառն (կամ կարճատեւ ծանօթութիւններու վրայ հիմնուած) ամուսնութիւններու ոչ-աւելի քան 30-

---

հայերուն: Վերջին երկու գերեզմանատունները ունին մատուռ, ուր կը կատարուին յուղարկաւորութիւնն ու թաղմանական արարողութիւնները: «Ա.Ն.Գ.»ը կը գտնուէր Էշրեֆիէի լեռան վրայ: Պետութիւնը փակած է ներկայիս (հեռախօսազրոյց՝ Մարալ Ներսէսեանի հետ, 12 Օգոստոս 2019):

[18] Երկու ամոլի ծննդավայր՝ անորոշ:

[19] Մէկ ամոլի բնակավայր՝ անորոշ:

[20] Մէկ ամոլի ծննդավայր՝ անորոշ:

[21] Մէկ ամոլի բնակավայր անորոշ:

[22] Երեք ամոլի ծննդավայր անորոշ եւ 7 ամոլի բնակավայր անորոշ:

[23] Չորս ամոլի ծննդավայր անորոշ:

[24] Երկու ամոլի ծննդավայր անորոշ եւ 4 ամոլի բնակավայր անորոշ:

40% համեմատութեան: Բացառութիւնը 1986-90 հնգամեակն է, ուր պսակներու թիւի անկումը կը խօսի արտագաղթի հետեւանքով հայօճախին մէջ երիտասարդներու թիւի անկումին մասին, որուն հետեւանքով ալ՝ խառն ամուսնութիւններու հաւանականութեան մեծացման:

Աղիւսակը կը պարզէ նաեւ որ միայն 1939-45 շրջանին է որ պսակներուն շուրջ կէսը կատարուած է 'նոր' ծանօթութիւններու հետեւանքով, որ կ'արտացոլացնէ ներյորդանահայ համարկումի հանգրուանը:

2) Հպատակութիւն

1940-45 փեսաներու.- անդրյորդանանեան՝ 20, պաղեստինեան՝ 5, սուրիական՝ 1, լիբանանեան՝ 3:
Հարսերու.- անդրյորդանանեան՝ 19, լիբանանեան՝ 3, սուրիական՝ 2, արաբ՝ 1[25]:
1946-50 փեսաներու.- անգլիական՝ 1, անդրյորդանանեան՝ 17, լիբանանեան՝ 4, պաղեստինեան՝ 9, սուրիական՝ 2:
Հարսերու.- անդրյորդանանեան՝ 20, լիբանանեան՝ 3, պաղեստինեան՝ 8, սուրիական՝ 2:
1951-55 փեսաներու.- անգլիական՝ 1, իրաքեան՝ 1, լիբանանեան՝ 4, յորդանանեան՝ 26, պաղեստինեան՝ 3, պարսկական՝ 1, սուրիական՝ 3:
Հարսերու.- յորդանանեան՝ 32, լիբանանեան՝ 2, պաղեստինեան՝ 2, սուրիական՝ 1, լատին՝ 1:
1956-60 փեսաներու.- ամերիկեան՝ 1, լիբանանեան՝ 3, յորդանանեան՝ 41, ֆրանսական՝ 1, պարսկական՝ 1, պաղեստինեան՝ 1, սուրիական՝ 1:
Հարսերու.- անգլիական՝ 2, լիբանանեան՝ 2, յորդանանեան՝ 32, պաղեստինեան՝ 2, սուրիական՝ 1:
1961-65 փեսաներու.- ամերիկեան՝ 1, իրաքեան՝ 1, լիբանանեան՝ 6, յորդանանեան՝ 28, պաղեստինեան՝ 1:
Հարսերու.- իրաքեան՝ 1, լիբանանեան՝ 2, յորդանանեան՝ 35, պաղեստինեան՝ 1:
1966-70 փեսաներու.- ամերիկեան՝ 3, անգլիական՝ 1, աւստրալիական՝ 1, իրաքեան՝ 3, լիբանանեան՝ 3, յորդանանեան՝ 24, սուրիական՝ 3:
Հարսերու.- անգլիական՝ 1, լիբանանեան՝ 1, յորդանանեան՝ 31, սուրիական՝ 5:
1971-75 փեսաներու.- ամերիկեան՝ 2, լիբանանեան՝ 3, յորդանանեան՝ 32, սուրիական՝ 2:
Հարսերու.- լիբանանեան՝ 3, յորդանանեան՝ 33, սուրիական՝ 3:
1976-80 փեսաներու.- ամերիկեան՝ 5, անգլիական՝ 1, աւստրալիական՝ 2, գերմանական՝ 1, զուիցերիական՝ 1, իրաքեան՝ 1, լիբանանեան՝ 4, յորդանանեան՝ 35, պարսկական՝ 1, սուրիական՝ 3:

---

[25] Արաբ այս հարսը՝ երկրագործ, յոյն օրթոտոքս է, որուն հետ ամուսնացած է հայ նպարավաճառ մը 25 Հոկտեմբեր 1942ին:

Հարսերու.- ամերիկեան՝ 1, անգլիական՝ 1, իրաքեան՝ 3, լիբանանեան՝ 3, յորդանանեան՝ 44, սուրիական՝ 5:
1981-85 փեսաներու.- ամերիկեան՝ 5, աւստրալիական՝ 2, իրաքեան՝ 1, յորդանանեան՝ 42, սովետական՝ 1, սուրիական՝ 7, քանատական՝ 1:
Հարսերու.- անգլիական՝ 1, աւստրալիական՝ 2, իրաքեան՝ 1, լիբանանեան՝ 5, յորդանանեան՝ 42, յունական՝ 1, պաղեստինեան՝ 3, սովետական՝ 1, սուրիական՝ 4:
1986-90 փեսաներու.- ամերիկեան՝ 4, աւստրիական՝ 1, լիբանանեան՝ 4, յորդանանեան՝ 18, սովետական՝ 1, սուրիական՝ 3:
Հարսերու հպատակութիւն.- լիբանանեան՝ 1, յորդանանեան՝ 25, սուրիական՝ 5:
1991-95 փեսաներու.- ամերիկեան՝ 11, անգլիական՝ 1, իրաքեան՝ 6, լիբանանեան՝ 1, յորդանանեան՝ 14, սուրիական՝ 3, քանատական՝ 3:
Հարսերու.- ամերիկեան՝ 2, աւստրալիական՝ 4, իրաքեան՝ 19, լիբանանեան՝ 1, հայաստանեան՝ 1, յորդանանեան՝ 9, պաղեստինեան՝ 1, սուրիական՝ 1:

Ամուսնացեալներու հպատակութիւն								
ԹԹ.	Յորդն.		Պղստն.		Արտսիմն.		գումար[26]	
	Ար.	Իգ.	Ար.	Իգ.	Ար.	Իգ.	Ար.	Իգ.
1940-45	20=69%	19=79%	5=17%	-	4=13%	5=21%	29	24
1946-50	17=51%	20=60%	9=27%	8=24%	7=21%	5=15%	33	33
1951-55	26=66%	32=84%	3=7%	2=5%	10=25%	4=10%	39	38
1956-60	41=83%	32=82%	1=2%	2=5%	7=14%	5=12%	49	39
1961-65	28=90%	35=89%	1=3%	1=2%	2=6%	3=7%	31	39
1966-70	24=63%	31=81%	-	-	14=36%	7=18%	38	38
1971-75	32=82%	33=84%	-	-	7=18%	6=15%	39	39
1976-80	35=64%	44=77%	-	-	19=35%	13=22%	54	57
1981-85	42=77%	42=70%	-	3=5%	12=22%	15=25%	54	60
1986-90	18=58%	25=80%	-	-	13=41%	6=19%	31	31
1991-95	14=35%	9=23%	-	1=3%	25=64%	28=73%	39	38
գումար	277=62%	322=74%	19=4%	17=4%	146=33%	97=22%	442	436

Աղիւսակը կը պարզէ որ Յորդանան պսակուած ամոլներու փեսաներուն 62%ը յորդանահպատակներ, 4%ը պաղեստինահպատակներ եւ 33%ը արտասահմանցիներ են: Նոյն հիմամբ կը պարզուի նաեւ որ ամոլներուն հարսերուն 74%ը յորդանահպատակներ, 4%ը պաղեստինահպատակներ եւ 22%ը արտասահմանցիներ են:

[26] Արական եւ իգական թիւերու անհամապատասխանութիւնը հետեւանք է հպատակութեանց տուեալներու չգոյութեան:

3) Արհեստներ

1939-45ին փեսաները.- ատաղձագործ՝ 1, ատամնաբուժ՝ 1, գծագրիչ՝ 1, գրագիր՝1, դերձակ՝2, զինուոր՝ 4, լուսանկարիչ՝1, խոհարար՝1, կօշկակար՝ 3, հաշուապահ՝ 1, ճարտարապետ՝ 1, մեքենագէտ՝ 3, մեքենավար՝ 1, ուսուցիչ՝1, պարտիզպան՝1, ջաղացպան՝2, վաճառական՝1:

Հարսերը[27].- դերձակուհի՝ 2, հիւանդապահուհի՝ 4, վարժուհի՝ 1, տանտիկին՝15:

1946-50ին փեսաները[28].- ատաղձագործ՝1, ելեկտրագէտ՝4, երկաթագործ՝ 1, զինուոր՝ 1, ժամագործ՝ 1, լուսանկարիչ՝ 1, կօշկակար՝ 5, հիւսն՝ 2, մեքենագէտ՝ 7, մսավաճառ՝1, նպարավաճառ՝1, ոսկերիչ՝ 2, պաշտօնեայ՝ 1, սպայ՝1, վաճառական՝5, *րափիաթոր* նորոգող՝1:

Հարսերը.- արդուկիչ՝ 1, դերձակ՝ 5, դպրոցական-ուսանողուհի՝ 4, ուսուցչուհի՝1, տանտիկին՝ 8:

1951-55ին փեսաները.- առեւտրական-վաճառական՝4, գրագիր՝1, դերձակ՝ 2, ինքնաշարժի արտաքին նորոգող՝ 1, լուսանկարիչ՝ 3, խանութպան՝ 1, կօշկակար՝ 7, մեքենագէտ՝ 12, մշակ՝ 1, մսավաճառ՝ 1, ներկարար՝ 1, ոսկերիչ՝1, պաշտօնեայ՝ 2, սափրիչ՝1, վարորդ՝1:

Հարսերը[29].- դերձակ՝ 7, դպրոցական՝ 2, հիւանդապահուհի (ներառեալ՝ մանուկներու)՝ 3, ձեռագործ աշխատող՝ 1, մազայարդար՝ 1, ուսուցչուհի՝ 2, պաշտօնեայ՝1, տանտիկին՝ 6:

1956-60ին փեսաները[30].- ապակեգործ՝ 1, բժիշկ՝ 1, դեղագործ՝ 1, երկաթագործ՝1, երկրաչափ՝2, զինագործ՝1, զինուոր՝ 3, լուսանկարիչ՝ 5, կօշկակար՝ 5, հաշուեքննիչ՝1, մեքենավար՝ 4, մեքենագէտ՝ 5, ոսկերիչ՝ 3, ուսուցիչ՝ 4, պաշտօնեայ (ներառեալ՝ կառավարական)՝ 6, պղնձագործ՝ 1, վաճառական՝ 2:

Հարսերը.- կահագործ՝ 1, գրագիր՝ 1, դերձակ՝ 9, կանանց սափրիչ՝ 2, հիւանդապահուհի՝ 3, ուսուցչուհի՝ 7, տանտիկին՝ 10:

1961-65ին փեսաները.- ատաղձագործ՝ 2, ատամնաբուժ՝ 1, դերձակ՝ 2, ելեկտրագէտ՝ 2, երկրաչափ՝1, լուսանկարիչ՝ 2, կօշկակար՝ 3, մեքենագէտ՝ 6, ոսկերիչ՝ 2, ուսուցիչ՝ 2, պաշտօնեայ՝ 5, պարտիզպան՝ 1, ջուլհակ՝ 1, վաճառական (ներառեալ կօշիկի)՝ 3, քարտուղար՝ 1, քիմիագէտ սպայ 1, օդանաւի մեքենագէտ՝1:

Հարսերը[31].- գրագրուհի՝ 3, դերձակ՝ 1, հիւանդապահուհի՝ 1, ուսուցիչ՝ 4, պաշտօնեայ՝ 2, տանտիկին՝17:

---

[27] Երեք հարսի զբաղում՝ անծանօթ:

[28] Մէկ փեսայի եւ տասնչորս հարսի զբաղում՝ անծանօթ:

[29] Տասնվեց հարսի զբաղում՝ անծանօթ:

[30] Տասնչորս հարսի եւ մէկ փեսայի զբաղում՝ անծանօթ:

[31] Ութ հարսի զբաղում՝ անծանօթ:

1966-70ին փեսաները.- ատաղձագործ՝ 1, ատամնաբուժ՝ 1, ելեկտրագէտ՝ 2, երկաթագործ՝ 1, երկրաչափ՝ 4, ժամագործ՝ 1, լուսանկարիչ՝ 3, կօշկակար՝ 1, մեքենագործ՝ 10, յանձնառու (քոնթրեքթըր)՝ 1, ոսկերիչ՝ 1, ուսանող՝ 1, պաշտօնեայ (կառավարական, դրամատան, ընկերութեան)՝ 6, պարտիզպան՝ 1, վաճառական՝ 2, կանանց սափրիչ՝ 1, շինանիւթի հաշուակալ՝ 1:
Հարսերը[32].- դերձակ՝ 2, պաշտօնեայ՝ 2, տանտիկին՝ 25, ուսանող՝ 2, վարժուհի՝ 4:
1971-75ին փեսաները.- արհեստագէտ՝ 1, բժիշկ՝ 1, դերձակ՝ 2, ելեկտրագէտ՝ 3, երկրաչափ՝ 2, տարրալուծարանի պաշտօնեայ ՝ 1, զօդող՝ 1, լուսանկարիչ՝ 5, կօշկակար՝ 1, հաշուակալ՝ 1, հաշուիչ մեքենաներու մասնագէտ՝ 1, հիւանդանոցի մատակարար՝ 1, մեքենագէտ՝ 3, ներկարար՝ 1, նպարավաճառ՝ 1, ոսկերիչ՝ 4, ուսանող՝ 1, ուսուցիչ՝ 1, պաշտօնեայ՝ 3, վաճառական՝ 1, տպագրիչ՝ 1, *րափիաթոր* նորոգող՝ 1, քիմիագէտ՝ 1, շինանիւթի հաշուակալ ՝ 1, ինքնաշարժի կահագործ՝ 1:
Հարսերը.- դերձակ՝ 3, ուսանող՝ 5, ուսուցիչ՝ 1, պարտիզպան՝ 1, վաճառական՝ 1, տանտիկին՝ 29:
1976-80ին փեսաները.- անձնական գործ՝ 1, արհեստաւոր (ներառեալ՝ կեդրոնական ջեռուցիչ, սառնարան, օդափոխիչ, հեռատեսիլ)՝ 7, բժիշկ՝ 2, գծագրիչ՝ 1, դերձակ՝ 1, ելեկտրագէտ՝ 1, ելեկտրական երկրաչափ՝ 2, երաժիշտ՝ 1, երկաթագործ՝ 1, երկրաչափ՝ 1, զինուոր՝ 1, լուսանկարիչ՝ 8, հաշուապահ՝ 2, ձուլագործ՝ 2, ճարտարապետ՝ 2, մեքենագէտ՝ 7, շինարար՝ 1, ոսկերիչ՝ 4, ուսանող՝ 2, պաշտօնեայ (ներառեալ ամերիկեան հիւպատոսարանի)՝ 5, վաճառական՝ 2, տնային ներքնայարդարում՝ 1, քիմիագէտ՝ 1:
Հարսերը[33].- բժշկուհի՝ 2, դերձակուհի՝ 2, ճարտարապետ՝ 1, ուսանող՝ 6, ուսուցչուհի՝ 5, պաշտօնեայ՝ 4, վարսայարդար՝ 2, տանտիկին՝ 25, քարտուղարուհի՝ 8:
1981-85ին փեսաները.- ալիւմինի արհեստաւոր՝ 2, առեւտրական՝ 9, բժիշկ՝ 2, դերձակ՝ 2, ելեկտրագէտ՝ 4, ելեկտրական երկրաչափ՝ 6, երկաթագործ՝ 2, երկրաչափ՝ 5, զինկոկրաֆ՝ 1, խողովակագործ՝ 1, լուսանկարիչ՝ 4, կահագործ՝ 1, կօշկակար՝ 1, հողագործ՝ 1, մեքենագէտ՝ 6, մեքենագէտ երկրաչափ՝ 1, ներկարար՝ 1, ոսկերիչ՝ 1, ուսանող՝ 1, պաշտօնեայ՝ 1, քիմիագէտ՝ 1, ինքնաշարժի արտաքինը նորոգող՝ 1:
Հարսերը[34].- դերձակ՝ 2, թերթի պաշտօնեայ՝ 1, տարրալուծարանի պաշտօնեայ՝ 1, ծախող՝ 1, հաշուապահ՝ 1, հիւանդապահուհի՝ 1, ուսանող՝

[32] Երկու հարսի զբաղում՝ անծանօթ:
[33] Երկու հարսի զբաղում՝ անծանօթ:
[34] Մէկ հարսի զբաղում՝ անծանօթ:

3, ուսուցիչ՝ 5, պաշտօնեայ՝ 5, վարսայարդար՝ 1, տանտիկին՝ 29, քարտուղար՝ 4:

1986-90ին փեսաները.- անձնական գործ՝ 1, առեւտրական՝ 5, բանուոր՝ 1, ելեկրտական երկաչափ՝ 3, երկրաչափ՝ 1, կօշկակար՝ 1, հաշուապահ՝ 1, մեքենագէտ՝ 1, մեքենագէտ երկրաչափ՝ 1, ոսկերիչ՝ 6, ջեռուցիչի արհեստաւոր՝ 1, վարորդ՝ 2, վերահսկիչ՝ 1:

Հարսերը[40].- լուսանկարիչ՝ 1, կանանց վարսայարդար՝ 1, ուսանող՝ 2, պաշտօնեայ՝ 3, տանտիկին՝ 16:

Աղիւսակ յորդանահայ ամոլներու աշխատանքի ասպարէզի										
ԹԹ.	Ձեռային[35]		Ուսում.[36]		Արհեստ[37]		անուս[38]		Առեւտր.[39]	
	Այր	կին	Այր	կին	այր	կին	այր	Կին	այր	կին
1939-45	4=16%	2=9%	9=36%	5=22%	6=24%	-	5=20%	15=68%	1=4%	-
1946-50	6=17%	6=31%	3=8%	5=26%	19=54%	-	-	8=42%	7=20%	-
1951-55	7=17%	9=39%	3=7%	8=34%	21=53%	-	2=5%	6=26%	6=15%	-
1956-60	9=19%	1=4%	18=38%	11=50%	14=29%	-	4=8%	10=45%	2=4%	-
1961-65	8=22%	1=4%	14=38%	10=35%	9=25%	-	2=5%	17=60%	3=8%	-
1966-70	9=24%	2=5%	13=35%	8=22%	12=32%	-	1=3%	25=71%	2=5%	-
1971-75	12=32%	3=7%	11=29%	6=15%	11=29%	-	-	30=77%	3=8%	-
1976-80	14=25%	-	20=37%	26=47%	17=31%	4=7%	-	25=45%	3=5%	-
1981-85	7=13%	3=6%	17=30%	21=39%	20=35%	-	1=2%	30=55%	9=16%	-
1986-90	6=24%	2=9%	7=28%	5=21%	3=12%	-	3=12%	16=70%	6=24%	-
1991-95	13=36%	-	12=33%	13=33%	5=14%	-	2=6%	26=67%	4=11%	-
գումար	245		319		336		61		120	

[35] Կ'ընդգրկէ հետեւեալ ասպարէզները.- ատաղձագործ, արդուկիչ, գծագրիչ, դերձակ, ժամագործ, լուսանկարիչ, կանանց սափրիչ, ձեռագործ աշխատող, ոսկերիչ, սանրագործ, սափրիչ, վարագոյր շինող, վրանագործ, տպագրիչ:

[36] Կ'ընդգրկէ հետեւեալ ասպարէզները.- ատամնաբուժ, բժիշկ, գրագիր, երաժիշտ, երկրաչափ, զինուոր, թերթի աշխատակից, հաշուապահ, հիւանդապահուհի, ճարտարապետ, ներքնայարդարում, ուսանող, ուսուցիչ, պաշտօնեայ, վերահսկիչ, տարրալուծարանի պաշտօնեայ:

[37] Կ'ընդգրկէ հետեւեալ ասպարէզները.- ալիւմինի արհեստաւոր, արհեստագէտ, ելեկտրագէտ, երկաթագործ, զինագործ, զինկոկրաֆ, զօդող, ինքնաշարժ նորոգող, խառատ, խողովակագործ, կահագործ, *կարաժիստ*, կօշկակար, ձուլագործ, մեքենագէտ, ներկարար, շաքարագործ, պղնձագործ, ջեռուցիչի արհեստաւոր, *րատիաթոր* նորոգող, շինանիւթի հաշուակալ:

[38] Կ'ընդգրկէ հետեւեալ ասպարէզները.- ապուխտագործ, բանուոր, գործաւոր, խոհարար, հացագործ, մեքենավար, պարտիզպան, ջաղացպան, ջուլհակ, վաճառող, տանտիկին:

[39] Կ'ընդգրկէ հետեւեալ ասպարէզները.- անձնական գործ, գորգավաճառ, խանութպան, հակավաճառ, հաւավաճառ, հիւանդանոցի մատակարար, մսավաճառ, նպարավաճառ:

[40] Երկու հարսի աշխատանք անորոշ:

1991-95ին փեսաները[41].- անձնական գործ՝ 2, առեւտրական՝ 2, բժիշկ՝ 1, գործաւոր՝ 2, ելեկտրագործ՝ 2, երկրագործութեան երկրաչափ՝ 1, երկրաչափ՝ 1, լուսանկարիչ՝ 3, ծախող՝ 2, կօշկակար՝ 1, հաշուապահ՝ 1, մեքենագէտ՝ 1, մեքենագէտ երկրաչափ՝ 1, ոսկերիչ՝ 7, ուսանող՝ 2, պաշտօնեայ՝ 2, սափրիչ՝ 1, շինանիւթի հաշուակալ՝ 1, տպագրիչ՝ 2, վերահսկիչ (փոխադրութեան, վաճառքի)՝ 3:
Հարսերը.- ելեկտրագէտ՝ 1, երկրաչափ՝ 1, հիւանդապահուհի՝ 2, ուսանող ՝ 1, պաշտօնեայ՝ 3, տանտիկին՝ 26, քարտուղար՝ 5:

Վերեւ դրուած աղիւսակէն կը պարզուի, որ հարսերուն մէջ գործատէրեր չկան եւ որ անոնց համեմատական մեծամասնութիւնը (26-77%) գործի ասպարէզ չեն ընդգրկուած: Հարսերուն երկրորդ մեծ խումբը (15-47%) կը պատկանի ուսեալներու խաւին, որոնք իրենց ուսման բերմամբ ընդգրկուած են աշխատանքային ասպարէզ: Հարսերուն երրորդ խումբը կը պատկանի ձեռային արհեստներու ասպարէզին: Կը պարզուի նաեւ, որ արհեստները կը հանդիսանան փեսաներուն մեծագոյն ասպարէզը, ապա կու գան ուսումնական մասնագիտութիւնները, երրորդ տեղը կը գրաւեն ձեռային արհեստները, յետոյ՝ գործատէրերն ու առեւտրականները, հուսկ՝ ուսում չպահանջող զբաղումներու խումբը: Մատնանշելի է նաեւ կանխահաս ամուսնութեանց պարագան:

4) Խառն ամուսնութիւններ

Տոմարները մասնակիօրէն կ'արտացոլացնեն խառն ամուսնութիւններու պարագան: Ըստ անոնց տուեալներուն՝ 1947ին կ'արձանագրուի արաբ հօրմէ առաջին ծնունդը: Կը հանդիպինք արաբ/օրթոտոքս/հայ սուրիանի հօր եւ հայ մօր, ինչպէս նաեւ հայ հօր եւ իսլամ/արաբ մօր զաւակներու մկրտութեան շուրջ տասնեակ մը պարագաներու՝ 1950-60ականներուն: Երբեմն նոյն ընտանիքի զաւակները միաժամանակ կը մկրտուին: Ընդհանրապէս բոլոր այսպիսի մկրտութիւնները կատարուած են Ամման:

ՏՈՒԵԱԼՆԵՐ ԸՍՏ ՄԿՐՏՈՒԹԵԱՆ ՏՈՄԱՐՆԵՐՈՒՆ

1) Մկրտեալներու ծննդեան թուական

1921՝ 1, 1924՝ 2, 1926՝ 4, 1927՝ 3, 1928՝ 2, 1929՝ 2, 1930՝ 8, 1931՝ 10, 1932՝ 6, 1933՝ 5, 1934՝ 2, 1935՝ 10, 1936՝ 18, 1937՝ 16, 1938՝ 11, 1939՝ 24, 1940՝ 13, 1941՝ 16, 1942՝ 12, 1943՝ 30, 1944՝ 21, 1945՝ 20, 1946՝ 17, 1947՝ 37, 1948՝ 44, 1949՝ 43, 1950՝ 28, 1951՝ 34, 1952՝ 37, 1953՝ 34, 1954՝ 39, 1955՝ 36, 1956՝ 39, 1957՝ 32, 1958՝ 31, 1959՝ 39, 1960՝ 30, 1961՝ 30, 1962՝ 36, 1963՝ 35, 1964՝ 27, 1965՝ 22, 1966՝ 22, 1967՝ 18, 1968՝ 24, 1969՝ 16, 1970՝ 15, 1971՝ 28, 1972՝ 19, 1973՝ 28, 1974՝ 17, 1975՝ 25, 1976՝ 17, 1977՝ 15, 1978՝ 16, 1979՝ 29, 1980՝ 23, 1981՝ 29, 1982՝ 28, 1983՝ 22, 1984՝ 25, 1985՝ 22, 1986՝ 22, 1987՝ 20, 1988՝ 37, 1989՝ 18, 1990՝ 16, 1991՝ 22, 1992՝ 28, 1993՝ 23, 1994՝ 13, 1995՝

[41] Երկու փեսայի եւ մէկ հարսի զբաղում՝ անծանօթ:

25, 1996՝ 18, 1997՝ 16, 1998՝ 12, 1999՝ 13, 2000՝ 19, 2001՝ 14, 2002՝ 19, 2003՝ 14, 2004՝ 19, 2005՝ 19, 2006՝ 20, 2007՝ 16, 2008՝ 25, 2009՝ 10, 2010՝ 17, 2011՝ 14, 2012՝ 13, 2013՝ 16, 2014՝ 3, գումար՝ 1875:

2) Մկրտեալներու ծննդավայր

Աղիւսակ մկրտեալներու ծննդավայրի				
ԹԹ.	Յորդանան		Պղստն.	Արտսհմն.
	Ամմն.	Այլ վայրեր		
1922-40	86	46	5	3
1941-50	117	67	21	6
1951-55	108	33	4	1
1955-60	154	10	2	1
1961-65	104	16	6	9
1966-70	84	9	3	11
1971-75	88	3	6	21
1976-80	69	4	2	24
1981-85	104	7	6	12
1986-90	76	5	1	11
1991-95	95	1	2	10
1996-2000	109	3	2	16
2001-2005	55	2	-	14
2006-2010	60	3	-	19
20011-15	29	3	-	10
գումար	1338	212	60	167

Եթէ մկրտութեան տեղը բարացուցական է ընտանիքի բնակավայրին, ապա աղիւսակէն կը պարզուի, որ յորդանահայութեան բացարձակ մեծամասնութիւնը (75%) կը բնակի Ամմանի մէջ, իսկ 12%ը՝ ծայրամասերը: Յիրաւի, ուշագրաւ է Ամմանի մէջ մկրտուող երեխաներու թիւի անհամեմատ աճը՝ ի հեճուկս ծայրամասերուն: Օրինակ, 1960ին մկրտուած բոլոր երեխաները (18 հոգի) ծնած էին Ամման:

3) Մկրտեալներու հօր ծննդավայր

1922-40՝ մկրտեալներու հօր ծննդավայր[42].- Ամանոս՝ 1, Այնթապ՝ 17, Ատանա՝ 4, Գոնիա՝ 6, Ուրֆա՝ 8, Եգիպտոս՝ 1, Զէյթուն՝ 3, Էւերէկ՝ 1, Թեքիրտաղ՝ 1, Իզմիր՝ 2, Խառնի՝ 1, Կեսարիա՝ 6, Հաճըն՝ 5, Մարաշ՝ 33, Սիս՝ 1, Վան՝ 3, Տարսոն՝ 1, Տէօրթ Եոլ՝ 33, Քեսապ՝ 1, Քիլիս՝ 1:

1922-40 մկրտեալներու ծննդավայր.- Աժլուն՝ 1, Ամման՝ 86, Գոնիա՝ 1, Զարքա՝ 11, Ժարաշ՝ 1, Իրպիտ՝ 2, Հիւսըն՝ 1, Մաան՝ 1, Պէյրութ՝ 2, Ռըսէյֆա՝ 17, Սալթ՝ 5, Սաղէմ՝ 5, Քարաք՝ 7:

[42] Տաս հօրենական ծննդավայր՝ անընթեռնելի է:

1941-50՝ մկրտեալներու հօր ծննդավայր[43].- Այնթապ՝ 32, Ատանա՝ 17, Աքշեհիր՝ 1, Բեթղեհէմ՝ 1, Գոնիա՝ 3, Ուրֆա՝ 23, Եոզկատ՝ 4, Էյպէզ՝ 2, Էրզրում՝ 1, Էօզերլի՝ 1, Իզմիր՝ 4, Խարբերդ՝ 2, Կապան՝ 1, Կարսպազար՝ 2, Կեսարիա՝ 7, Կիւրին՝ 1, Հալէպ՝ 2, Հաճըն՝ 9, Հասանպէյ՝ 3, Մարաշ՝ 35, Մաֆրաք՝ 1, Նաճարլու՝ 4, Շապին Գարահիսար՝ 1, Պաղտատ՝ 1, Պէյրութ՝ 1, Պոլիս՝ 4, Պուրսա՝ 1, Ռոտոսթօ՝ 2, Սաղէմ՝ 13, Սեբաստիա՝ 4, Սուետիա՝ 2, Վան՝ 5, Տէօրթ Եոլ՝ 57, Տիգրանակերտ՝ 4, Հասանպէյ՝ 1, Քեսապ՝ 4, Քիլիս՝ 4:

1941-50 մկրտեալներու ծննդավայր[44].- Աժլուն՝ 3, Ամման՝ 117, Աքապա՝ 1, Եաֆա՝ 5, Զարքա՝ 24, Իրպիտ՝ 14, Հայֆա՝ 3, Ղոր Սաֆի՝ 2, Մաան՝ 3, Մաֆրաք՝ 7, Պէյրութ՝ 5, Ռըսէյֆա՝ 4, Սալթ՝ 7, Սաղէմ՝ 13, Քարաք՝ 2:

1951-55 մկրտեալներու ծննդավայր.- Ամման՝ 108, Զարքա՝ 5, Իրպիտ՝ 1, Հալէպ՝ 1, Մարտապա՝ 1, Մաֆրաք՝ 1, Նապլուս՝ 1, Ռըսէյֆա՝ 16, Սալթ՝ 4, Սաղէմ՝ 3, Քարաք՝ 5:

1951-55՝ մկրտեալներուն հօր ծննդավայր[45].- Աղեքսանդրիա-Գահիրէ-Եգիպտոս՝ 4, Ամման՝ 57, Այնթապ՝ 11, Ատանա՝ 15, Աֆիոն Գարահիսար՝ 1, Բեթղեհէմ՝ 1, Գոնիա՝ 2, Դամասկոս՝ 4, Եաֆա՝ 6, Ուրֆա՝ 14, Երիքով՝ 1, Զէյթուն՝ 1, Թալաս՝ 1, Թոմարզա՝ 1, Իսկենտէրուն՝ 1, Իրպիտ՝ 3, Լարնաքա՝ 1, Խարբերդ՝ 2, Կեսարիա՝ 11, Կիւրին՝ 1, Հալէպ՝ 4, Հայֆա՝ 1, Հիւսընի՝ 3, Մարաշ՝ 27, Մերսին՝ 2, Նազարէթ՝ 1, Պէյրութ՝ 7, Պիրսապա՝ 1, Պոլիս՝ 3, Ռեմլէ՝ 4, Ռըսէյֆա՝ 1, Սալթ՝ 3, Սաղէմ՝ 30, Սուետիա՝ 1, Վան՝ 1, Տարսոն՝ 1, Տէօրթ Եոլ՝ 27, Տիգրանակերտ՝ 1, Փիրէա՝ 1, Քարաք՝ 6, Քեսապ՝ 7, Քիլիս՝ 3:

1956-60 մկրտեալներու ծննդավայր[46].- Ամման՝ 154, Երուսաղէմ՝ 1, Զարքա՝ 3, Իրպիտ՝ 1, Կազա՝ 1, Պէյրութ՝ 1, Ռըսէյֆա՝ 5, Քարաք՝ 1:

1956-60 մկրտեալներու հօր ծննդավայր.- Ամման՝ 13, Այնթապ՝ 5, Անտիոք՝ 1, Ատանա՝ 2, Աֆիոն Գարահիսար՝ 2, Բեթղեհէմ՝ 2, Դամասկոս՝ 2, Եաֆա՝ 2, Ուրֆա՝ 3, Երուսաղէմ՝ 18, Զարքա՝ 1, Զէյթուն՝ 1, Թիֆլիս՝ 1, Թուրքիա՝ 1, Իսկենտէրուն՝ 9, Խտրպէկ՝ 1, Կեսարիա՝ 2, Կեմերէկ՝ 1, Հայֆա՝ 3, Հիւսընի՝ 2, Մարաշ 3, Մերսին՝ 1, Նազարէթ՝ 2, Չոմաքլու՝ 1, Պէյրութ՝ 1, Տարաա՝ 1, Տէօրթ Եոլ՝ 4, Րեմլէ՝ 1, Քարաք՝ 1:

1961-65 մկրտեալներու ծննդավայր.- Ամման՝ 104, Աքապա՝ 1, Գերմանիա՝ 1, Եաֆա՝ 2, Զարքա՝ 5, Իրպիտ՝ 3, Հալէպ՝ 3, Ղազզա՝ 2, Նիկոսիա՝ 1, Պենկազի՝ 1, Պէյրութ՝ 2, Ռըսէյֆա՝ 1, Սալթ՝ 3, Սաղէմ՝ 2, Քարաք՝ 3, Քուէյթ՝ 1:

---

[43] Երկու հօր ծննդավայր՝ անծանօթ: Ուշագրաւ է «Գէորգ [ծն. Պաղտատ] եւ Զարուհ (Ա. Յովհաննէսեան) Աղքաշեան» ամոլին դստեր՝ Վիլոլէթի (ծն. Երեւան, 4 Ապրիլ 1950), մկրտութիւնը՝ 15 Յուլիս 1951ին:

[44] Մէկ մկրտեալի ծննդավայր՝ անծանօթ:

[45] Տասնհինգ հօր ծննդավայր՝ անծանօթ:

[46] Երկու մկրտեալի ծննդավայր եւ տասնհինգ հօր ծննդավայր՝ անծանօթ:

1961-65 մկրտեալներու հօր ծննդավայր[47].- Ազէզ՝ 1, Ամման՝ 18, Այնթապ՝ 2, Գահիրէ՝ 1, Դամասկոս՝ 5, Եաֆա 10, Ուրֆա՝ 3, Եոզկաթ՝ 1, Զարքա՝ 1, Իսկենտէրուն՝ 12, Իրպիտ՝ 1, Խարբերդ՝ 1, Կիպրոս՝ 1, Հալէպ՝ 6, Հայֆա՝ 1, Հիւսընի՝ 4, Ղազզա՝ 1, Մարաշ՝ 1, Մերսին՝ 2, Նազարէթ՝ 4, Շիքակօ՝ 1[48], Ուատի Սիր՝ 1, Պէյան՝ 1, Պէյրութ՝ 5, Պոլիս՝ 1, Ռըսէյֆա՝ 2, Սալթ՝ 2, Սաղէմ՝ 25, Սուտան՝ 2, Սվազ՝ 1, Վարնա՝ 1, Տէօրթ Եոլ՝ 4, Քարաք՝ 4, Քէօթահիա՝ 1, Քիլիս՝ 1:

1966-70 մկրտեալներու ծննդավայր.- Ամման՝ 84, Աքապա՝ 1, Զարքա՝ 4, Իրպիտ՝ 4, Լոնտոն՝ 1, Լոս Անճելըս՝ 1, Հալէպ՝ 1, Ղափան՝ 1, Պաղտատ՝ 2, Պէյրութ՝ 3, Սաղէմ՝ 3, Քուէյթ՝ 1, դուրսը՝ 1:

1966-70 մկրտեալներու հօր ծննդավայր[49].- Աժլուն՝ 3, Ամման՝ 16, Գահիրէ՝ 1, Դամասկոս՝ 3, Եաֆա՝ 13, Իսկենտէրուն՝ 5, Իրպիտ՝ 1, Կուտինա՝ 1, Հալէպ՝ 5, Հիւսընի՝ 2, Ղափան՝ 1, Մաան՝ 1, Նազարէթ՝ 3, Ուատի Սիր՝ 1, Պաղեստին՝ 2, Պաղտատ՝ 3, Պէյրութ՝ 9, Պոլիս՝ 1, Սալթ՝ 2, Սաղէմ՝ 32, Քարաք՝ 7:

1971-75 մկրտեալներու ծննդավայր.- Ամման՝ 88, Երեւան՝ 2, Բեթղեհէմ՝ 1, Զարքա՝ 2, Թրիփոլի (Լիպիա)՝ 1, Իրպիտ՝ 1, Հալէպ՝ 4, Մ. Նահանգներ՝ 2, Պաղտատ՝ 1, Պէյրութ՝ 7, Պրայթընի՝ 2[50], Սաղէմ՝ 5, Սիտնի՝ 1, Շեֆիլտ՝ 1:

1971-75 մկրտեալներու հօր ծննդավայր[51].- Աժլուն՝ 1, Ամման՝ 25, Ատիս Ապեպա՝ 1, Բեթղեհէմ՝ 4, Դամասկոս՝ 1, Եաֆա՝ 12, Իրպիտ՝ 2, Իսկենտէրուն՝ 4, Հալէպ՝ 5, Մաան՝ 1, Մերսին՝ 1, Նազարէթ՝ 1, Պաղտատ՝ 1, Պէյրութ՝ 13, Րամալլա՝ 3, Սալթ՝ 1, Սաղէմ՝ 34, Քարաք՝ 3:

1976-80 մկրտեալներու ծննդավայր[52].- Ամման՝ 69, Ապու Տապի՝ 1, Բեթղեհէմ՝ 1, Դամասկոս՝ 2, Զահլէ՝ 1, Զարքա՝ 2, Թեքսաս՝ 1, Լիբանան՝ 1, Լոնտոն՝ 1, Խուպար՝ 1, Հասաքէ՝ 1, Հալէպ՝ 2, Մասքաթ Օման՝ 1, Մ. Նահանգներ՝ 2, Պաղտատ՝ 3, Պենկազի՝ 2, Պէյրութ՝ 2, Սալթ՝ 1, Սաղէմ՝ 1, Սէուտ Արաբիա՝ 1, Քարաք՝ 1, Քուէյթ՝ 2:

1976-80 մկրտեալներու հօր ծննդավայր[53].- Աժլուն՝ 2, Ամման՝ 39, Բեթղեհէմ՝ 3, Դամասկոս՝ 1, Եաֆա՝ 10, Զահլէ՝ 2, Զարքա՝ 2, Հալէպ՝ 10, Պաղտատ՝ 2, Պէյրութ՝ 6, Սալթ՝ 2, Սաղէմ՝ 18, Րամալլա՝ 2, Ռըսէյֆա՝ 1, Քարաք՝ 3:

---

[47] Մէկ մկրտեալի եւ հինգ հօր ծննդավայր անծանօթ:

[48] Մովսէս եւ Արշալոյս Քէօրքիւնեաններու որդին է ան՝ Րաֆֆի:

[49] Մէկ մկրտեալի եւ մէկ հօր ծննդավայր անծանօթ:

[50] 1973ին եւ 74ին կը ծնին Անթիքաճեանի 2 թոռները Պրայթընի մէջ: Իր դուստրը՝ Նազենի, ամուսնացած էր Պիրմինկըմ ծնած Ճոն Հիքմընի հետ:

[51] Մէկ մրտեալի եւ երեք հօր ծննդավայր՝ անծանօթ:

[52] Կան եւ օտարազգի մկրտութիւններ, ինչպէս՝ 1974ին եւ 1978ին ծնած բայց միաժամանակ մկրտուած երկու զաւակները Կապի եւ Քրիմհելտ Քարմիի, որոնք կը մկրտուին 1978ին:

[53] Մէկ հօր ծննդավայր՝ անծանօթ:

1981-85 մկրտեալներու ծննդավայր.- Ամման՝ 104, Աւստրալիա՝ 1, Եաֆա՝ 1, Երեւան՝ 1, Զարքա՝ 5, Լիբանան՝ 4, Հալէպ՝ 2, Մ. Նահանգներ՝ 2, Պաղտատ՝ 1, Սաղէմ՝ 4, Ս. Արաբիա՝ 1, Րամալլա՝ 1, Քարաք՝ 2:
1981-85 մկրտեալներու հօր ծննդավայր[54].- Աժլուն՝ 4, Ամման՝ 52, Բեթղեհէմ՝ 3, Դամասկոս՝ 1, Եաֆա՝ 3, Եգիպտոս՝ 1, Երեւան՝ 2, Զարքա 4, Թաֆիլէ՝ 1, Իրաք՝ 1, Իրպիտ՝ 1, Լիբանան՝ 3, Հալէպ՝ 16, Մաան՝ 1, Մաֆրաք՝ 1, Պաղտատ՝ 3, Ռըսէյֆա՝ 2, Սալթ՝ 5, Սաղէմ՝ 13, Քարաք՝ 11, Քուէյթ՝ 1:
1986-90 մկրտեալներու ծննդավայր.- Ամման՝ 76, Աքապա՝ 1, Գերմանիա՝ 1, Զարքա՝ 3, Հալէպ՝ 2, Մ. Նահանգներ՝ 4, Պէյրութ՝ 1, Սաղէմ՝ 1, Տուպայ՝ 1, Րաքքա՝ 1, Քարաք՝ 1, Քուէյթ՝ 1:
1986-90 մկրտեալներու հօր ծննդավայր[55].- Ամման՝ 43, Աքապա՝ 1, Բեթղեհէմ՝ 1, Եաֆա՝ 4, Երեւան՝ 1, Զարքա՝ 5, Թաֆիլէ՝ 1, Իրպիտ՝ 3, Լիբանան՝ 2, Հալէպ՝ 12, Ղազզա՝ 1, Պաղտատ՝ 1, Պէյրութ՝ 1, Ռըսէյֆա՝ 1, Սալթ՝ 6, Սաղէմ՝ 8, Քանատա՝ 1, Քարաք՝ 3:
1991-95 մկրտեալներու ծննդավայր.- Ամման՝ 95, Իրաք՝ 1, Մ. Թագաւորութիւն՝ 1, Մ. Նահանգներ՝ 5, Պաղտատ՝ 1, Պէյրութ՝ 2, Սաղէմ՝ 2, Քարաք՝ 1:
1991-95 մկրտեալներու հօր ծննդավայր[56].- Աժլուն՝ 1, Ամման՝ 31, Բեթղեհէմ՝ 3, Իտալիա՝ 1, Իրաք՝ 3, Իրպիտ՝ 1, Լիբանան՝ 1, Կիպրոս՝ 1, Հալէպ՝ 12, Հայաստան՝ 1, Մաան՝ 2, Մարտապա՝ 5, Մ. Նահանգներ՝ 3, Մուսուլ՝ 1, Պաղտատ՝ 8, Պէյրութ՝ 8, Ռըսէյֆա՝ 1, Սաղէմ՝ 10, Սուրիա՝ 2, Քարաք՝ 2:
1996-2000 մկրտեալներու ծննդավայր.- Ամման՝ 109, Աւստրալիա՝ 1, Իրան՝ 1, Իրպիտ՝ 2, Լիբնանան՝ 1, Հալէպ՝ 4, Մարտապա՝ 1, Մ. Թագաւորութիւն՝ 1, Մ. Նահանգներ՝ 5, Պաղտատ՝ 1, Սաղէմ՝ 2, Քուէյթ՝ 2:
1996-2000 մկրտեալներու հօր ծննդավայր[57].- Ամման՝ 43, Բեթղեհէմ՝ 1, Դամասկոս՝ 1, Եգիպտոս՝ 1, Երեւան՝ 1, Զարքա՝ 2, Իրաք՝ 4, Իրպիտ՝ 3, Լիբանան՝ 4, Հալէպ՝ 12, Հայաստան՝ 1, Մարտապա՝ 2, Մ. Նահանգներ՝ 3, Պաղտատ՝ 1, Պէյրութ՝ 8, Սաղէմ՝ 4, Սուրիա՝ 1:
2001-2005 մկրտեալներու ծննդավայր.- Ամման՝ 55, Իրպիտ՝ 2, Հայաստան՝ 1, Մ. Նահանգներ՝ 9, Պէյրութ՝ 1, Սիտնի՝ 1, Տուպայ՝ 1, Քուէյթ՝ 1:
2001-2005 մկրտեալներու հօր ծննդավայր[58].- Ամման՝ 30, Դամասկոս՝ 1, Զարքա՝ 3, Իրան՝ 1, Իտալիա՝ 1, Իրպիտ՝ 2, Լիբանան՝ 2, Հալէպ՝ 7, Հայաստան՝ 1, Մ. Թագաւորութիւն՝ 1, Պաղտատ՝ 7, Պէյրութ՝ 5, Սաղէմ՝ 1, Սուրիա՝ 1, Քամիշլի՝ 1, Քուէյթ՝ 1:
2006-2010 մկրտեալներու ծննդավայր.- Ամման՝ 60, Դամասկոս՝ 1, Զարքա՝ 1, Իրպիտ՝ 2, Լիբանան՝ 1, Կիպրոս՝ 1, Հայաստան 1, Հոլանտա՝ 1, Մարքա՝

[54] Մէկ հօր ծննդավայր՝ անծանօթ:
[55] Երկու մկրտեալի եւ չորս հօր ծննդավայր՝ անծանօթ:
[56] Երեք մկրտեալի եւ վեց հօր ծննդավայր՝ անծանօթ:
[57] Երկու մկրտեալի եւ երեք հօր ծննդավայր՝ անծանօթ:
[58] Մէկ մկրտեալի եւ երեք հօր ծննդավայր՝ անծանօթ:

1, Մ. Նահանգներ՝ 6, Շուէտ՝ 1, Չինաստան՝ 1[59], Սէուտ Արաբիա՝ 2, Տուպայ՝ 2, Քեսապ՝ 1, Քուէյթ՝ 1:

2006-2010 մկրտեալներու հօր ծննդավայր[60].- Ամման՝ 40, Բեթղեհէմ՝ 1, Գերմանիա՝ 1, Դամասկոս՝ 3, Զահլէ՝ 1, Զարքա՝ 2, Իրաք՝ 3, Իրպիտ՝ 4, Լաթաքիա՝ 1, Լիբանան՝ 3, Հալէպ՝ 5, Մարքա՝ 1, Պաղտատ՝ 11, Պէյրութ՝ 3, Սուրիա՝ 1, Քարաք՝ 2, Քեսապ՝ 1, Քուէյթ՝ 1:

2011-15 մկրտեալներու ծննդավայր.- Ամման՝ 26, Զարքա՝ 3, Լիբանան՝ 1, Հոլանտա՝ 1, Մ. Նահանգներ՝ 4, Յորդանան՝ 3, Ս. Արաբիա՝ 1, Սուրիա՝ 3:

2011-15 մկրտեալներու հօր ծննդավայր[61].- Ամման՝ 16, Գերմանիա՝ 1, Զարքա՝ 3, Իրաք՝ 1, Իրպիտ՝ 2, Լիբանան՝ 3, Հալէպ՝ 2, Յորդանան՝ 5, Պաղտատ՝ 3, Պասրա՝ 1, Սէուտ Արաբիա՝ 1, Սուրիա՝ 2, Տհոք՝ 1:

Աղիւսակ մկրտեալներու հօր ծննդավայրի						
ԹԹ.	Յրդնն.	Պղստ.	Արտսհմն.	Կիլիկիա	Արլ. Անատ.	Արմտ. Անատ.
1922-40	-	-	1	110	9	9
1941-50	1	14	4	207	20	18
1951-55	73	45	21	113	5	15
1956-60	18	27	4	32	1	3
1961-65	33	42	23	25	3	2
1966-70	33	50	22	5	-	2
1971-75	33	54	21	5	6	6
1976-80	49	33	21	497	44	55
1981-85	82	20	27			
1986-90	63	14	18			
1991-95	43	13	41			
1996-2000	50	5	37			
2001-05	33	1	29			
2006-10	49	1	34			
2011-15	26	-	15			
Գումար	586	319	320			

Աղիւսակէն կրնանք հետեւցնել[62], որ Յորդանան մկրտուածներու հայրերուն 48%ը ծնած է Յորդանան, 26%ը՝ Պաղեստին եւ 26%ը՝ արտասահման: Իսկ եթէ համարենք որ բոլոր մկրտեալները յորդանաբնակ

[59] Չինաստան ծնած մկրտեալին հայրը ծնած է Պաղտատ:

[60] Մէկ մկրտեալի եւ մէկ հօր ծննդավայր՝ անծանօթ:

[61] 2010ականներուն կը հանդիպինք դրոշմուողներու, որոնց հայրանունն ու մայրանունը, ինչպէս նաեւ ազգանունը հայկական չեն:

[62] Զանց կ'ընենք մինչեւ 1980 արձանագրուած մկրտուածներու հօրենական ծննդավայրը, նկատի առնելով որ այնուհետեւ չենք հանդիպիր փոքրասիական ծննդավայրերու, ինչ որ ենթադրել կու տայ որ անոնք չեն ինքնաբնութագրած իրենց արմատներով, այլ՝ ծննդավայրերով:

ընտանիքներու զաւակներ են, ապա կը պարզուի որ յորդանահայութեան շուրջ 50%ը 'տեղաբնիկ' հայեր են, իսկ մնացեալ կէսը հաւասարաչափ՝ Պաղեստինէն ու արտասահմանէն եկուորներ:

Ուշագրաւ է որ 1980էն ետք չենք հանդիպիր փոքրասիական տեղանուններու: Ասիկա կը նշանակէ որ երրորդ սերունդը ինքզինք նկատած է տեղաբնիկ քան թէ՝ Փոքր Ասիայէն եկուոր: Ուշագրաւ է այլ պարագայ մը եւս. Պաղեստինէն եկած գաղթականներ, ինչպէս նաեւ դրացի այլ երկիրներէ եկուոր հայեր չեն ինքնաբնութագրած իրենց արմատներով (փոքրասիացի), այլ՝ իրենց ծննդավայրերուն անուններով:

1990էն սկսեալ, կը հանդիպինք Հայաստան ծնած շարք մը մկրտեալներու[63], որոնց հօր ծննդավայրը եւս Հայաստանն է՝ ինչ որ ենթադրել կու տայ որ անոնք հայաստանցի զբօսաշրջիկներ են եկած եւ մկրտուած (կամ դրոշմուած) Ամմանի մէջ, երբեմն ալ Յորդանան գետին մէջ բայց արձանագրուած Յորդանանի հայոց մկրտութեան տոմարին մէջ:

2000ականներէն սկսեալ կը հանդիպինք Իրաք ծնած հայրերու զաւակներու մկրտութեան բազմաթիւ պարագաներու:

ՏՈՒԵԱԼՆԵՐ ԸՍՏ ԹԱՂՄԱՆ ՏՈՄԱՐՆԵՐՈՒ

1) Մահացեալներ՝ ըստ ծննդավայրի[64]

1936-1940ի մահացեալներ.- Ամման՝ 4, Ատանա՝ 2, Զարքա՝ 1, Իզմիր՝ 1, Կեսարիա՝ 1, Կիւրին՝ 1, Մարաշ՝ 1, Ռըսէյֆա՝ 3:

1941-1945ի մահացեալներ.- Ալեքսանտրէթ՝ 1, Ամման՝ 7, Այնթապ՝ 1, Ատանա՝ 1, Մարաշ՝ 2, Ուրֆա՝ 1, Տէօրթ Եոլ՝ 1:

1946-1950ի մահացեալներ.- Աժլուն՝ 1, Ամման՝ 13, Այնթապ՝ 3, Ատանա՝ 1, Ատիաման՝ 1, Եաֆա՝ 1, Երուսաղէմ՝ 7, Ղոթա՝ 1, Մարաշ՝ 2, Շուշի՝ 1, Ուրֆա՝ 1, Սուետիա՝ 1, Տէօրթ Եոլ՝ 1, Տիգրանակերտ՝ 1:

1951-1955ի մահացեալներ.- Աթէնք՝ 1, Ամման՝ 5, Այնթապ՝ 3, Ատաբազար՝ 1, Ատանա՝ 4, Աֆիոն Գարահիսար՝ 1, Դամասկոս՝ 2, Եաֆա՝ 1, Երուսաղէմ՝ 4, Զէյթուն՝ 1, Կեսարիա՝ 3, Կիւրին՝ 1, Հաճըն՝ 1, Մարաշ՝ 4, Ուրֆա՝ 2, Պէյրութ՝ 1, Պոլիս՝ 1, Վան՝ 1, Տէօրթ Եոլ՝ 5, Ռըսէյֆա՝ 1, Քեսապ՝ 2, Քիլիս՝ 1:

1956-1960ի մահացեալներ.- Ալեքսանտրէթ՝ 2, Ամման՝ 9, Այնթապ՝ 4, Ատանա՝ 3, Աֆիոն Գարահիսար՝ 1, Գոնիա՝ 2, Երուսաղէմ՝ 1, Զէյթուն՝ 1, Կեսարիա՝ 1, Մարաշ՝ 8, Ուրֆա՝ 4, Չնքուշ՝ 1, Պոլիս՝ 2, Տէօրթ Եոլ՝ 7, Տիգրանակերտ՝ 2, Քեսապ՝ 1, Քիլիս՝ 1:

1961-1965ի մահացեալներ.- Ալեքսանտրէթ՝ 1, Ամման՝ 4, Այնթապ՝ 1, Ատանա՝ 6, Դամասկոս՝ 2, Եաֆա՝ 1, Զէյթուն՝ 1, Էրզրում՝ 2, Թոմարզա՝ 1,

[63] Ասոնց ծննդեան թուականը կը տարուբերի 1936ի եւ 2015ի միջեւ: Ասոնք գէթ 49 հոգի են:

[64] Քննարկած ենք 1936-2010ի տուեալները:

Կեսարիա՝ 5, Կիւրին՝ 1, Ժարաշ՝ 1, Մարաշ՝ 4, Շապին Գարահիսար՝ 3, Ուրֆա՝ 2, Պիթլիս՝ 1, Տէօրթ Եոլ՝ 5, Քիլիս՝ 1:
1966-1970ի մահացեալներ.- Ամման՝ 9, Այնթապ՝ 2, Անտիոք՝ 1, Անքարա՝ 1, Ատանա՝ 3, Դամասկոս՝ 2, Եաֆա՝ 1, Երուսաղէմ՝ 6, Զէյթուն՝ 1, Թոքաթ՝ 1, Կարսպազար՝ 1, Կեսարիա՝ 4, Ղարաբաղ՝ 1, Մարաշ՝ 4, Մերտին՝ 1, Ուրֆա՝ 3, Սեբաստիա՝ 1, Վան՝ 2, Տարսոն՝ 2, Տէօրթ Եոլ՝ 4, Տիգրանակերտ՝ 2, Ֆնտըճաք՝ 1:
1971-1975ի մահացեալներ.- Ամանոս՝ 1, Ամման՝ 1, Այնթապ՝ 5, Ատանա՝ 5, Աֆիոն Գարահիսար՝ 1, Բեթղեհէմ՝ 1, Գոնիա՝ 1, Եոզկաթ՝ 2, Երուսաղէմ՝ 8, Զէյթուն՝ 2, Էւերէկ՝ 1, Թաֆիլէ՝ 1, Իսկենտէրուն՝ 2, Կեմերէկ՝ 1, Կեսարիա՝ 2, Հալէպ՝ 2, Մարաշ՝ 2, Նազարէթ՝ 1, Ուրֆա՝ 5, Պուրսա՝ 1, Սեբաստիա՝ 2, Տէօրթ Եոլ՝ 10, Քըհտանա՝ 1, Ֆըհէս՝ 1:
1976-1980ի մահացեալներ.- Ալեքսանտրէթ՝ 2, Ամման՝ 6, Այնթապ՝ 4, Ատանա՝ 1, Աֆիոն Գարահիսար՝ 1, Եաֆա՝ 1, Եոզկաթ՝ 1, Երուսաղէմ՝ 5, Զիլէ՝ 2, Էւերէկ՝ 1, Թուրքիա՝ 2, Թոքաթ՝ 1, Իզմիր՝ 1, Լիբանան՝ 2, Խարբերդ՝ 2, Կեմերէկ՝ 1, Կիւրին՝ 2, Հալէպ՝ 2, Հաճըն՝ 2, Հասանպէյ՝ 2, Մարաշ՝ 6, Մերտին՝ 1, Ուրֆա՝ 4, Պիթլիս՝ 1, Սալթ՝ 1, Սղերդ՝ 1, Վան՝ 1, Տէօրթ Եոլ՝ 13, Տիգրանակերտ՝ 4, Րումտիկին՝ 1, Քարաք՝ 1, Քիլիս՝ 1:
1981-1985ի մահացեալներ.- Աղեքսանդրիա՝ 1, Ամման՝ 3, Այնթապ՝ 3, Ատանա՝ 3, Գոնիա՝ 2, Եաֆա՝ 1, Երուսաղէմ՝ 3, Զէյթուն՝ 2, Թուրքիա՝ 1, Թոքաթ՝ 1, Իզմիր՝ 1, Իսկենտէրուն՝ 2, Կեսարիա՝ 1, Հալէպ՝ 2, Ղարաբաղ՝ 1, Մարաշ՝ 3, Ուրֆա՝ 2, Պոլիս՝ 1, Պուրսա՝ 1, Սասուն՝ 1, Վան՝ 1, Տարսոն՝ 1, Տէօրթ Եոլ՝ 5, Տիգրանակերտ՝ 1, Քեսապ՝ 1, Քէօթահիա՝ 1, Քիլիս՝ 1:
1986-1990ի մահացեալներ.- Ամման՝ 3, Այնթապ՝ 2, Ատանա՝ 3, Բեթղեհէմ՝ 1, Դամասկոս՝ 1, Եաֆա՝ 1, Երուսաղէմ՝ 8, Զէյթուն՝ 1, Թուրքիա՝ 2, Լիբանան՝ 2, Կեսարիա՝ 1, Հաճըն՝ 1, Մաան՝ 2, Մարաշ՝ 3, Ուրֆա՝ 4, Պաղեստին՝ 1, Պոլիս՝ 1, Պուրսա՝ 1, Սալթ՝ 1, Սեբաստիա՝ 2, Վան՝ 1, Տէօրթ Եոլ՝ 5, Ֆռնուզ՝ 1:
1991-1995ի մահացեալներ.- Ամման՝ 19, Այնթապ՝ 1, Արաբկիր՝ 1, Բեթղեհէմ՝ 2, Գոնիա 1, Դամասկոս՝ 1, Եաֆա՝ 2, Երուսաղէմ՝ 4, Զարքա՝ 1, Իսկենտէրուն՝ 2, Իրպիտ՝ 1, Կեսարիա՝ 1, Հալէպ՝ 1, Մարժ էլ Համամ՝ 1, Պաղտատ՝ 1, Պէյրութ՝ 3, Սուրիա՝ 1, Ռամլէ՝ 1, Վան՝ 2, Տէօրթ Եոլ՝ 2, Քարաք՝ 1, Ֆըհէս՝ 1, անծանօթ՝ 9:
1996-2000ի մահացեալներ.- Ամման՝ 8, Ատանա՝ 2, Բեթղեհէմ՝ 1, Եաֆա՝ 1, Ուրֆա՝ 1, Եգիպտոս՝ 1, Երուսաղէմ՝ 11, Էւերէկ՝ 1, Թուրքիա՝ 3, Իսկենտէրուն (նաեւ Քրըքխան)՝ 2, Իրաք՝ 1, Լիբանան՝ 1, Հայֆա՝ 1, Ղազզա՝ 1, Մալաթիա՝ 1, Մարաշ՝ 2, Պաղտատ՝ 3, Ռումանիա՝ 1, Տէօրթ Եոլ՝ 2, անծանօթ՝ 15:
2000-2005ի մահացեալներ.- Աժլուն՝ 1, Ամման՝ 3, Այնթապ՝ 1, Դամասկոս՝ 1, Եաֆա՝ 4, Երուսաղէմ՝ 7, Զախօ՝ 1, Թուրքիա՝ 4, Իսկենտէրուն՝ 1, Իրպիտ՝ 2, Հալէպ՝ 3, Հայաստան՝ 1, Հայֆա՝ 1, Ղազզա՝ 1, Պաղտատ՝ 2, Պէյրութ՝ 1, Պուլկարիա՝ 1, Սալթ՝ 1, Տէր Զօր՝ 3, Քարաք՝ 4, Քեսապ՝ 1, անծանօթ՝ 3:

2006-2010ի մահացեալներ.- Ամման՝ 12, Դամասկոս՝ 1, Եաֆա՝ 7, Երուսաղէմ՝ 12, Թուրքիա՝ 3, Հալէպ՝ 2, Պաղեստին՝ 3, Պաղտատ՝ 11, Պէյրութ՝ 5, Սուրիա՝ 3, Տիալա՝ 1, Ռամլէ՝ 1, Քարաք՝ 1, Քերքուք՝ 5, անծանօթ՝ 9:

Աղիւսակ Յորդանան մահացեալներու ծննդավայրերու				
ԹԹ	Յորդանան	Պաղեստին	Արտասահման	Փոքր Ասիա
1936-45	15	-	-	13
1946-70	44	22	7	152
1971-90	21	31	11	165
1991-2010	56	61	67	18
գումար	136	114	85	348

Աղիւսակէն կը պարզուի որ մահացեալներու մեծամասնութիւնը՝ 51%ը, ինչպէս նաեւ յորդանահայերու մեծամասնութիւնը արմատներով, փոքրասիացի է, իսկ 17%ը՝ պաղեստինցի:

2) Մահացեալներ՝ ըստ տարիքի[65]

1936-1940ին.- մինչեւ 1 տարեկան՝ 8, 10-15 տարեկան՝ 1, 20-30 տարեկան՝ 1, 61-75 տարեկան՝ 1, 76-89 տարեկան՝ 3:

1941-1945ին.- մինչեւ 1 տարեկան՝ 5, 1-5 տարեկան՝ 2, 16-20 տարեկան՝ 1, 51-60 տարեկան՝ 2, 61-75 տարեկան՝ 2:

1946-1950ին.- մինչեւ 1 տարեկան՝ 11, 1-5 տարեկան՝ 2, 6-10 տարեկան՝ 1, 10-15 տարեկան՝ 1, 16-20 տարեկան՝ 2, 21-30 տարեկան՝ 1, 31-40 տարեկան՝ 7, 41-50 տարեկան՝ 3, 51-60 տարեկան՝ 2, 61-75 տարեկան՝ 1, 76-89 տարեկան՝ 2, 90 եւ վեր տարեկան՝ 1:

1951-1955ին.- մինչեւ 1 տարեկան՝ 4, 6-10 տարեկան՝ 2, 10-15 տարեկան՝ 2, 16-20 տարեկան՝ 2, 21-30 տարեկան՝ 3, 31-40 տարեկան՝ 2, 41-50 տարեկան՝ 3, 51-60 տարեկան՝ 3, 61-75 տարեկան՝ 22, 76-89 տարեկան՝ 2, 90 եւ վեր տարեկան՝ 3:

1956-1960ին.- մինչեւ 1 տարեկան՝ 3, 1-5 տարեկան՝ 4, 10-15 տարեկան՝ 2, 31-40 տարեկան՝ 1, 41-50 տարեկան՝ 4, 51-60 տարեկան՝ 11, 61-75 տարեկան՝ 16, 76-89 տարեկան՝ 6, 90 եւ վեր տարեկան՝ 3[66]:

1961-1965ին.- մինչեւ 1 տարեկան՝ 2, 10-15 տարեկան՝ 2, 21-30 տարեկան՝ 3, 31-40 տարեկան՝ 1, 41-50 տարեկան՝ 3, 51-60 տարեկան՝ 7, 61-75 տարեկան՝ 12, 76-89 տարեկան՝ 6, 90 եւ վեր տարեկան՝ 5:

1966-1970ին.- մինչեւ 1 տարեկան՝ 5, 1-5 տարեկան՝ 1, 16-20 տարեկան՝ 1, 41-50 տարեկան՝ 6, 51-60 տարեկան՝ 7, 61-75 տարեկան՝ 27, 76-89 տարեկան՝ 6, 90 եւ վեր տարեկան՝ 1:

---

[65] Քննարկած ենք մինչեւ 1990ի տուեալները, այն մտածումով որ այնուհետեւ պետական առողջապահական համակարգը իր դրական ծառայութիւններով յաղթահարեց խնդիրները:

[66] Անոնցմէ մին տէօրթեոլցի Սիսակ Կէօզօղլանեանն է, որ կը մահանայ 16 Փետրուար 1957ին, 103 տարեկանին:

1971-1975ին.- 1-5 տարեկան՝ 1, 21-30 տարեկան՝ 1, 31-40 տարեկան՝ 3, 41-50 տարեկան՝ 3, 51-60 տարեկան՝ 12, 61-75 տարեկան՝ 32, 76-89 տարեկան՝ 9, 90 եւ վեր տարեկան՝ 3:
1976-80ին.- 6-10 տարեկան՝ 2, 16-20 տարեկան՝ 1, 21-30 տարեկան՝ 1, 31-40 տարեկան՝ 2, 41-50 տարեկան՝ 1, 51-60 տարեկան՝ 7, 61-75 տարեկան՝ 34, 76-89 տարեկան՝ 24, 90 եւ վեր տարեկան՝ 3:
1981-1985ին.- 16-20 տարեկան՝ 1, 21-30 տարեկան՝ 1, 41-50 տարեկան՝ 2, 51-60 տարեկան՝ 4, 61-75 տարեկան՝ 20, 76-89 տարեկան՝ 15, 90 եւ վեր տարեկան՝ 5[67]:
1986-1990ին.- 21-30 տարեկան՝ 1, 51-60 տարեկան՝ 6, 61-75 տարեկան՝ 12, 76-89 տարեկան՝ 27, 90 եւ վեր տարեկան՝ 4[68]:

Աղիւսակ մահացեալներու տարիքի					
ԹԹ.	1-20 տ.	21-40տ.	41-60տ.	61-տ.	գումար
1920-45	17=65%	1	2	6=23%	26
1946-70	48=16%	28=9.6%	58=19.9%	157=53.95%	291
1971-90	4=2%	5=2.89%	20=11.5%	144=83.2%	173
Գումար	69=14%	34=6.9%	80=16%	307=62.6%	490

Աղիւսակէն կարելի է հետեւցնել թէ Յորդանանի հայութիւնը ունեցած է երիտասարդ մահացութեան բարձր տոկոս՝ 1920-45 շրջանին: Մահացութեան տոկոսը մեծ համեմատութեամբ – բայց ոչ բաւարար չափով - նուազած է յաջորդ քսանհինգամեակին, մինչեւ 1970: Միայն 1970էն ետք է որ յորդանահայութեան մէջ պատահած մահացութեան պարագաները կարելի է բնութագրել իբրեւ "բնական", ուստի եւ հայօճախին մէջ առողջապահական վիճակը կը դառնայ բարօր:

3) Մահացութեան պատճառ

1936-1950ի միջեւ.- սպամոքսաղիքային հիւանդութիւններ.- 9, ստամոքսի ցաւ՝ 1, փորհարութիւն՝ 1=11; *սրտային հիւնդութիւններ.*- սրտի կաթուած՝ 3; *արկած՝* 3, այրուածք՝ 1, կաթի թունաւորում՝ 1, վախ՝ 2, յանկարծամահ՝ 1=8; *ծերութիւն՝* 6; տկարութիւն՝ 7; լուսնոտութիւն՝ 1; երիկամային հիւանդութիւններ՝ 1; թիֆոյիտ՝ 2, մալարիա՝ 1, թոքաբորբ՝ 2, ուղեղաբորբ՝ 3; փրոսթաթի հիւանդութիւն՝ 1, քաղցկեղ՝ 3:
1951-1965ի միջեւ.- սպամոքսաղիքային հիւանդութիւններ.- աղիքներու տկարութիւն՝ 2, աղետապութիւն՝ 2, լեարդային հիւանդութիւններ՝ 1=5; *արկած՝* 4, այրուածք՝ 1, զարնուած[69]՝ 1, թունաւորում՝ 1, յանկարծամահ՝ 9,

[67] Անոնցմէ մին ծննդավայրը չնշուած Սարա Աճէմեանն է, որ կը մահանայ 27 Յունիս 1984ին, 104 տարեկանին:

[68] Անոնցմէ մին պուրսացի Իսքենտէր Շահպազեանն է, որ կը մահանայ 1 Փետրուար 1986ին, 102 տարեկանին:

[69] Նկատի ունի սպ անութիւն: Կը հանդիպինք անձնասպանութեան պարագայի մը՝ 1966ին եւ սպանութեան զոյգ ոճիրի՝ 1969ին:

տկարութիւն՝ 3, պակասաւոր՝ 1=20; *թոքային հիւանդութիւններ.*- թոքախտ՝ 4, թոքաբորբ՝ 4, պաղառնութիւն՝ 2, շնչահեղձ՝ 2=10; *սրտային հիւանդութիւններ.*- կաթուած՝ 7, սրտային հիւանդութիւններ՝ 15, արեան ճնշում՝ 5, սրտնեղութիւն՝ 1=28; երիկամային հիւանդութիւններ՝ 3; արեան տկարութիւն՝ 1, երակային խցում՝ 1; ծերութիւն՝ 43; թիֆոյիտ՝ 2; հարսանէթ՝ 1, մալարիա՝ 1; շաքարախտ՝ 2, ուղեղային հիւանդութիւններ՝ 2; քաղցկեղ՝ 22:

Այս տուեալներէն կարելի է հետեւցնել, թէ աւելցած են սրտային հիւանդութիւնները, քաղցկեղի պարագաները եւ արկածները:

4) Մահացեալներու աշխատանքային ասպարէզ

1936-1955ի միջեւ.- Ատաղձագործ՝ 2, ատամնաբուժ՝ 1, բանուոր՝ 1, դերձակ՝ 3, լուսանկարիչ՝ 3, լցակայանի բանուոր՝ 1, խանութպան՝ 1, խոհարար՝ 2, հացագործ՝ 2, հողագործ՝ 3, մանկաբարձ՝ 1, մեքենագործ՝ 2, շարժավար՝ 2, շաքարագործ՝ 1, ջաղացպան՝ 1, սանրագործ՝ 1, սպասաւոր՝ 1, սրճեփ՝ 1:

1956-1965ի միջեւ.- ապուխտագործ՝ 1, ատաղձագործ՝ 1, բանակային՝ 1, բժիշկ՝ 1, գորգավաճառ՝ 1, գործիք նորոգող՝ 1, դերձակ՝ 3, երաժիշտ՝ 1, երկաթագործ՝ 2, ժամագործ՝ 2, խառատ՝ 1, կառավարական պաշտօնեայ՝ 1, կօշկակար՝ 2, հողագործ՝ 3, ճաշարանատէր-սրճարանատէր՝ 5, ճարտարագէտ՝ 1, մեքենագործ՝ 3, ներկարար՝ 1, ուսուցչուհի՝ 1, հակավաճառ՝ 1, ջաղացպան՝ 3, սափրիչ՝ 1, սպայ՝ 1, սպասուհի՝ 2, վաճառական՝ 1, ելեկտրագէտ՝ 1:

1966-1975ի միջեւ.- ատաղձագործ՝ 1, ատամնաբուժ՝ 2, դերձակ՝ 3, երկաթագործ՝ 1, ժամագործ՝ 1, խոհարար՝ 1, կօշկակար՝ 7, հաւավաճառ՝ 1, հաստատութեան տնօրէն՝ 1, հեռատեսիլ նորոգող՝ 1, նպարավաճառ՝ 1, ոսկերիչ՝ 2, ուսուցիչ՝ 1, պաշտօնեայ՝ 1, պարտիզպան՝ 2, սափրիչ՝ 2, սրճեփ՝ 1, վաճառական՝ 3, վարագոյր շինող՝ 1, վարորդ՝ 2, քիմիագէտ՝ 1:

1976-1985ի միջեւ.- արհեստաւոր՝ 1, բանուոր՝ 1, բժիշկ՝ 1, գծագրիչ՝ 1, դերձակ՝ 2, ժամագործ՝ 1, լուսանկարիչ՝ 4, խանութպան՝ 1, *կարաժիստ*՝ 1, կօշկակար՝ 5, հիւանդապահ՝ 1, մեքենագործ՝ 3, պաշտօնեայ՝ 2, պարտիզպան՝ 1, սափրիչ՝ 2, սեփականատէր՝ 1, վարորդ՝ 1, վրանագործ՝ 1:

Աղիւսակ մահացեալներու արհեստներու[70]					
ԹԹ.	Ձեռային	Ուսում.	Արհեստ	անուս	Առեւտր.
1936-55	8	2	3	13	1
1956-65	7	7	11	9	8
1966-75	10	5	10	6	5
1976-85	11	4	10	3	2

Աղիւսակէն կը պարզուի որ ձեռային արհեստները կը հանդիսանան մահացեալներուն մեծագոյն զբաղումը, ապա կու գան միւս արհեստները,

[70] Իւրաքանչիւր խմբաւորումին համար տեսնել նախապէս տրուած սահմանումը:

երրորդ տեղը կը գրաւէ ուսում չպահանջող զբաղումներու խումբը, չորրորդը՝ ուսումնական մասնագիտութիւնները, իսկ վերջինը՝ գործատէրերն ու առեւտրականները:

Փեսաներու եւ մահացեալներու զբաղումներու բաղդատութիւնը կը պարզէ որ անցում կայ ձեռային արհեստներէն միւս արհեստներուն, նաեւ՝ ուսումնական մասնագիտութիւններու, հուսկ՝ ուսում չպահանջող զբաղումներու:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ

Հայօճախին թիւը 1920ականներու երկրորդ կէսին պատեհ կը դարձնէ կրօնաւորի մը մնայուն ներկայութիւնը: Ներյորդանահայ համարկումի հանգրուանը կը հանդիսանայ 1939-45ը:

Ան ունեցած է երիտասարդ մահացութեան բարձր տոկոս՝ 1920-45 շրջանին: Մահացութեան տոկոսը մեծ համեմատութեամբ – բայց ոչ բաւարար չափով - նուազած է յաջորդ քսանհինգամեակին, մինչեւ 1970:

Յորդանահայերու մեծամասնութիւնը արմատներով, փոքրասիացի է: Յորդանահայ երրորդ սերունդը ինքզինք կը նկատէ տեղաբնիկ: Պաղեստինէն թէ դրացի այլ երկիրներէ եկուոր հայեր չեն ինքնաբնութագրած իրենց արմատներով, այլ՝ իրենց ծննդավայրերուն անուններով:

Յորդանահայութեան բացարձակ մեծամասնութիւնը (75%) կը բնակի Ամմանի մէջ: Յորդանահայութիւնը արձանագրած է տարեկան շուրջ հինգ պսակ: Պաղեստինեան դէպքերուն հետեւանքով պաղեստինեան (եւ նուազ համեմատութեամբ դրացի այլ երկիրներու) ներհոսքը մեծապէս նպաստած է յորդանահայ ժողովրդագրութեան:

Յորդանահայ ընտանիքներու հայրերու 62%ը յորդանահպատակներ են, իսկ հարսերուն՝ 74%ը: Յորդանան մկրտուածներու հայրերուն 48%ը ծնած է Յորդանան, 26%ը՝ Պաղեստին եւ 26%ը՝ արտասահման: Յորդանահայութեան շուրջ 50%ը 'տեղաբնիկ' հայեր են, իսկ մնացեալ կէսը հաւասարաչափ՝ Պաղեստինէն ու արտասահմանէն եկուորներ:

Հարսերուն մեծամասնութիւնը (26-77%) գործի ասպարէզ չեն ընդգրկուած: Հարսերուն երկրորդ մեծ խումբը (15-47%) կը պատկանի ուսեալներու խաւին: Փեսաներուն մեծագոյն ասպարէզը արհեստներն են, ապա՝ ուսումնական մասնագիտութիւնները, երրորդ տեղը կը գրաւեն ձեռային արհեստները եւ անցում կայ ձեռային արհեստներէն միւս արհեստներուն, նաեւ՝ ուսումնական մասնագիտութիւններու:



Պսակի տոմարին Ա. էջը



Թաղման եւ մկրտութեան տոմարներէն էջ մը



A Demographic Picture of the Jordan Armenians
(Summary)

Dr. Antranik Dakessian
adakessian@haigazian.edu.lb

Though the Armenian Apostolic Church of Amman, St. Thadeus, was built in the mid-1960s, it preserves the burial, baptismal and wedding registers of the Amman Armenians in varying detail from the 1920s up to the present. Based on these data, the paper presents a demographic picture of the Amman Armenians in numerical terms. It highlights the flow of the Armenians from the peripheries to the capital, Amman.

The paper lists the names of all the Armenian Orthodox clerics who have served the community since the 1920s. Furthermore, the Burial registers have enabled the author to map the origins of the Amman Armenian community members.

The paper notes that, notwithstanding the high percentage of births in Amman compared to the peripheries, until the late 1960s the Amman Armenians had not shaped themselves into a developed, stable community demographically.

Equally interesting is the fact that, though the community was fairly well integrated into the larger Jordanian society, until the late-1970s most of the married couples identified themselves with the birthplaces of their ancestors in Cilicia or Western Armenia.

Recollections on the Armenian Evangelical Community in Jordan (Late 1940s)[1]

Rev. Berdj Jambazian
ministertotheunion@aeuna.org

After the Armenian Genocide of 1915 and massacres in Marash in 1920 and Izmir in 1922, Armenian survivors settled as refugees in surrounding territories, including Palestine. Evangelical leaders and congregations were among those dispersed by the genocidal persecutions and deportations.

My father, Hampartsum (born in 1889), and mother, Mary (born in 1903), were survivors of the Marash massacre. They escaped with their four oldest children, who were all born in Marash: Avedis, Panos, Garo and a sister. The baby sister and Garo died along the way. Panos fell into a dry well in Jebel Druze, broke his leg, and was left with a limp for the rest of his life. When they got to Jerusalem, my parents had two surviving children, Avedis and Panos, with them.

After spending two years traveling through Der Zor and southern parts of Syria, specifically Jebel Druze, and receiving some help from Bedouins along the way, they found refuge and settled in Jerusalem in 1923.

1-Puzant Krikorian, 2-Nishan Baghdikian, 3-Barkev Baghdikian, 4-Hranush Krikorian, 5-Makruhi Baghdikian Harutunian, 6-Terfanda Baghdikian, 7-Rev. Samuel Krikorian, 8-Yeghia Dikranian, 1923-25

There, they joined thousands of Armenian refugees who settled in or near the Old City of Jerusalem in what was then Palestine. My family was

[1] Dictated June 13, 2019.

accommodated in the St. James Convent, and many other Armenian Evangelical families who had traced the same route also settled there or nearby.

Most of the Armenian Evangelicals who ended up in Jerusalem were from Marash, Adana, Aintab and other towns in Cilicia.

God blessed my parents with 8 sons and a daughter (I cannot remember a family with fewer than 5 or 6 children. Armenians did not think about how they would support their families at that time. They had lost so many children), most born in Jerusalem and Bethlehem, as the family moved back and forth as circumstances permitted, and housing became available. It was six miles from Bethlehem to Jerusalem.

1-Sunday School Teacher Hranush Krikorian (wife of Rev. Krikorian), 2-Makruhi Baghdikian Harutunian, 3-Barkev Baghdikian (Suzi Baghdikian's father), 1924

In the 1920s, Rev. Samuel Krikorian felt a call to establish a mission in Jerusalem and was sent from the US by the Church of the Nazarene. Rev. Krikorian was born in Aintab but went to the US in 1909 to live with his aunt, Rebecca Krikorian, who was active in the Nazarene church raising funds for Christian missions in Turkey. Rev. Krikorian attended the Nazarene college in Pasadena and graduated in 1917. In Jerusalem, he gathered the Armenian Evangelicals together and established a church, the Armenian Nazarene Church of Jerusalem, in 1924. The congregation numbered about 30 families, maybe 50+ people, mostly young.

A Rev. Chorbajian preached in this Armenian Evangelical church and then Rev. Jamal Chamichian. We had as our youth pastor and leader Rev. Berdj Najarian, who also served at the Armenian Nazarene church, which was composed of Armenian Evangelical families.

Their first official location for worship was the YMCA in Jerusalem, which is located right across from King David's Hotel (until now). Then in 1948, during the Jewish – Arab conflict, thousands fled Jerusalem and settled in other parts of the Near East, in neighboring counties. Many of us were expelled by the British Army and the newly-formed Israeli militia from our home in Old City Jerusalem.

My father rented a truck and we ended up on the dry desert streets of Amman in 1948. There were a great many refugees like us arriving at exactly the same time and not enough homes or shelter. We as Armenian Evangelicals went through the same homeless experience again. We found ourselves in the

Jordanian desert, with no church, no school, nothing. We spent two weeks mostly on the streets before my father found our first home – a garage. Some Armenian Evangelical families were in the same situation, while others who came with money were able to find good living conditions. My brothers found work with jewelry makers. My brother Garo found a job as a cleaner in a small hotel in Amman. When my father found a small one-room shop to rent as a home, my brothers Panos and Avedis started a laundry business there. We had no transportation; I walked almost everywhere. I do remember Jamila's husband sometimes giving us a ride to the Nazarene school in his car, which was the only time I went anywhere in a car.

Jordan AE Community circa 1925-1927 in Jerusalem

My father did whatever work he could find so the family could survive, including selling home-cooked condiments, and eventually becoming a janitor at the Armenian Nazarene Church. My mother took a job cleaning the home of the UN local representative, Mr. Clark. Although we lived in just one room, when pastors and others came to visit, my father accommodated them; sometimes even another 9 people stayed with us! We called them "uncle" - *amo*. Boghos Svadjian, and Rev. Najarian were among our houseguests.

We could not afford medical care. All medicines were homemade and mainly recipes from Marash; these are what my parents gave us when we were ill, and since the water was often not clean, we did get ill. There were no pharmacies such as we have today. The medical situation was very poor, and my father died in 1958 due to lack of medical care.

During our first years in Amman, when my brother Garo worked at a hotel, Missionary Dr. Thomas Lambie was staying there and asked Garo if he could come and visit our family. Lambie asked my parents if he could take their two sons, Hagop and Garo, with him to Bethlehem, where he was building a hospital/sanatorium. My parents were very sad to be parting with their sons but agreed. Dr. Lambie sent food from Bethlehem to us while our brothers worked with him, and this helped us survive. Billy Graham visited the Near East and preached in the Old City of Jerusalem; I was a little boy and I wanted to listen but could not get in. Graham was the special guest of Dr. Lambie, and so my brothers met him. Hans Eisenhut, a missionary from Switzerland, took Hagop

under his wing and sponsored him to study theology, so he left in 1954 for Beatenberg Seminary. My father was very happy; my mom was sad.[2]

In Jordan, Rev. Krikorian again established an Armenian Nazarene School and a church. The first location of the school for Armenian Evangelical children was the home of Jamila Hagopian (Rev. Nuyujukian's sister) in Jebel Amman in 1952-53. I and my brothers attended that school.

Then, very soon a school and a church, together on the same premises, were built by Nazarene missionary Rev. Krikorian and his wife Hranush, who established an amazing children's ministry in this new church near Jabal Ashrafiyeh, a densely populated Armenian neighborhood inhabited mostly by immigrants. Rev. Krikorian started worship services. Again, although called the Armenian Nazarene church, its members without any exception were survivor families of the Armenian Evangelical churches in Cilicia, then Jerusalem.

Mary Jambazian with her son Berdj (approx. 6-7 years old), a few weeks after the family's arrival in Amman, in their first home, which was a garage!

[2] Jacob studied in Switzerland and specialized in music. He went to Germany after that to study music after theology. Hagop was a teacher at the Armenian Evangelical Boarding School in Anjar for a while. I went from the Muslim High School in Amman to the Boarding School in Anjar because of my brother's work, and I later got into Beatenberg Seminary as well. My other brothers went back to cities in Palestine – Jericho, Jerusalem, and Nablus in Samaria. Garo stayed in Bethlehem and Jerusalem throughout his life. His son lives within the St. James Convent in a home with four rooms. Garo's daughter lives in Bethlehem in Beyt Jala (Bedjella) neighborhood, where the hospital her father helped build is located. Hagop became an Evangelist throughout the Near East. My youngest sister, Astine, spent years as a teacher in Dubai and now lives in Montreal. My brother Khatchig went to Jerusalem, started a jewelry business, then returned to Amman, where he eventually had a jewelry workshop with 100 workers. Later he went to Sydney, Australia to establish a jewelry business there. My brother Boghos went to France and settled in Paris, where he became the chief supervisor of a jewelry factory. My mother died in 1987 in Amman.

We were in touch with those in Jerusalem, and went back and forth from Jordan to Jerusalem until borders were closed in 1967. As I have already mentioned above, my father became the janitor of this first Armenian Nazarene church in Amman. He soon discovered that a lot of his friends from the Marash church and from Aintab were also in Amman – Baghdikians, Boyadjians, and others.

Kegham Tashjian and his four brothers, Zaven, Jirair, Vahram, and Varouj grew up as sons of the janitor of the next Armenian Nazarene church located in Zarqa, 30 minutes from Amman. Kegham's father, Samuel Tashjian, was a friend of my father's, and our churches were in constant communication.

1-Barkev Baghdikian, 2-Elizabeth Harutunian (married Agulian), 3-Nellie Harutunian (married Attalah), 4-Herut Baghdikian-Kahkedjian, Easter, 1948

Rev. Krikorian did an amazing job but all in the name of the Nazarene Church. He went back and forth between the two congregations. Before the church was built, the Doctorians were also part of this community. At the time, they were named Hekimian. (Doctor was the translation of *Hekim*). They were Assyrian and had escaped with evangelical Assyrians who also fled the genocide. Badveli Samuel Doctorian, who studied theology in Britain, came to Amman to be our first pastor.

1-Berdj Jambazian, 2-Marina Harutunian (married Youkim), 3-Grace Harutunian (married Etymezian), 4-Jemila Nuyujukian (Rev. Nuyujukian's sister – married Hagopian), 5-Makruhi Baghdikian Harutunian, 6-Araxie Zanazanian Bangdikian, 7-Nellie Harutunian (sister of Grace, married Attalah), 8-Sahag Hagopian, 9-George Harutunian, Easter, 1948

While Rev. Krikorian was establishing the church, he assigned Rev. Doctorian to be the Amman church pastor.

Before the church/school facility was built, we had our worship services in the Whitman Church, which is still there. That is where our Armenian Evangelical community gathered for worship services which were held under the pastoral leadership of Krikorian. My brothers, sister, and many other Armenian Evangelical children, some 25-30, were the entire Sunday School of the so-called Armenian Nazarene church. Again, all of them, without exception, were descendants of Armenian Evangelicals originally from Cilicia.

1-Berdj Jambazian, 2-Marina Harutunian (married Youkim), 3-Grace Harutunian (married Etymezian), 4-Elizabeth Harutunian (married Agulian), 5-George Harutunian, 6-Barkev Hagopian, 7-Sahag Hagopian, 8-Astine Jambazian, Easter, 1948

After the building was completed and he had pastored for a short time, Rev. Doctorian had another call, so he left for Europe. In this elementary school Enza Kassardjian, Sebuh Tashjian,[3] Miss Arshaluyse and Miss Azniv taught us. Classmates I remember include Lucine Hagopian, Alice Missirlian, Ashkhen Ingilizian, Hagop Mahseredjian, and Ishkhan Iskanian. At some point, my family was not able to continue paying for me to attend that school so I went to a Muslim refugee school and then to King Hussein High School.

Armenian Nazarene Church Pastor and Family: 2-Yeghia Baghdikian, son of 3-Araxie Baghdikian, 4- Barkev Baghdikian, 5-Makruhi Baghdikian-Harutunian, 6-Jamila Nuyujukian-Hagopian, 7-Suzi Baghdikian, 8-Sylva Baghdikian-Hekimian, Amman 1962-63

Among Rev. Doctorian's assistants were Vartkes Keshishian. The latter played the violin rather well, and his wife Hasmig. When they left, Rev. Anushavan Euredjian came from Beirut. Rev. Euredjian was a lay preacher from the brotherhood church, and he was assigned as pastor and principal of the

[3] Sebuh Tashjian was not related to Kegham and his brothers.

school, which by this time had grown to several hundred students. In 1958, my father, Hampartsum died and my older brother Avedis took his job as janitor of the church.

This Armenian Evangelical presence under the name of the Nazarene church was very effective due to the educational system that Armenian Evangelicals had all been used to in Cilicia. Everywhere they went, Armenian Evangelicals established their churches and schools. In Jordan, this was done under the auspices of the Nazarene church, but the traditions were Armenian Evangelical.

Jambazian family in Jerusalem: Left to right: Avedis, Bedros, Marie, Arsine, Garabed, (standing at the back), Hagop in front of Garabed, Berdj (later rev., sitting on Hampar's lap), Hampar (Apo's and Hagop's godfather), Khachik, Paul, (Hagop's and Panos' father), circa 1946

The Armenian Evangelical community in Jordan began to disperse in the 1960-70s, going to Australia, Canada, Beirut, and the US In 1958 the political situation in Egypt affected Jordan, and regional tensions continued from 1948 through 1968. Security was one reason for the community to emigrate. Economics was another: there were no jobs, and no good future could be discerned. My parents did what they could to survive, but things were difficult.

Currently there are individuals but no community left. The school I attended is now in the hands of the Arabic Nazarene Church. Some 3-4000 Armenians now live in Amman whereas there were approximately 15,000 when I was a child there.

My family's personal history and the trajectory of two evangelists – myself and my brother – were tremendously impacted by the example of Hampartsum Jambazian, my father, a pillar of faith who sang hymns every morning.

Jambazian family's 8 sons and 1 daughter immediately upon arrival in Amman in 1948, standing in front of the entrance to the Italian Hospital (later the Armenian Evangelical Nazarene School and Church were built just next to this hospital). From left to right: Panos, Avedis, Garo, Bedros, Khachik, Hagop, Paul, Berdj, Astine

Յիշողութիւններ՝ Յորդանանի Հայ Աւետարանական Համայնքին Մասին (Ամփոփում)

Rev. Berdj Jambazian
ministertotheunion@aeuna.org

Հեղինակը մանկութեան եւ պատանութեան յուշերուն ընդմէջէն կը ներկայացնէ իր ընտանիքին ոդիսականը՝ Երուսաղէմէն Ամման եւ հաստատումը այնտեղ, 1940ականներու աւարտին: Ընտանեկան այս պատումին ընդելուզուած են նաեւ նախ Երուսաղէմի ապա եւ Յորդանանի հայ աւետարանական համայնքին պատմութեան կրթական եւ եկեղեցական կարգ մը դրուագները, կենցաղը եւ առօրեան՝ 1940-60ականներուն:

Յորդանանի Հայերը. Յուշեր, Դրուագներ (1967-1978)[1]

Յարութ Չէքիճեան
harout.chekijian@gmail.com

ՄՈՒՏՔ

Շատերուս համար Յորդանանը՝ ընդհանրապէս, եւ անոր հայկական գաղութը՝ մասնաւորապէս, Երուսաղէմ քաղաքով սահմանուած էր, դարերու պատմութիւն ունեցող հայոց պատրիարքարանով ու հայապատկան տարածքներով: 1966ին, Պոլոնիա, Լիբանան կայացած ՀՄԸՄի Մերձաւոր Արեւելքի միջշրջանային բանակումին առիթը ունեցայ ծանօթանալու Երուսաղէմի սկաուտներէն Աբօ Սիւրթիւքեանին, Արսէն Թերճիմանեանին, որոնք յետագային 1967-71 եղան Հայկազեան Համալսարանի (այն ժամանակ Գոլէճ) մտերիմ ընկերներ, Կարօ Հեքիմեանին, այժմ՝ Ուրուկուէյ (Կոմիտաս ռատիօժամի հիմնադիր), եւ ուրիշներու, որոնց պատումները որոշ տպաւորութիւն ստեղծած էին Յորդանանի հայկական գաղութին մասին:

1972-ի Օգոստոսին Ամերիկայէն գործուղուեցայ Յորդանան՝ Royal Scientific Society, իբրեւ ելեկտրոնային բաժանմունքի տնօրէնի տեղակալ եւ արտադրութեան բաժանմունքի վարիչ: Յորդանան պաշտօնավարեցի 1972-80 շրջանին: Այստեղ կ'արձանագրեմ ամմանահայ յիշողութիւններէս եւ տպաւորութիւններէս փունջ մը:

- Ա.- Մեքքէի, Մետինէի եւ Հիժազի իշխան, արաբներու թագաւոր, Օսմանեան Կայսրութեան դէմ արաբական ըմբոստութեանղեկավար Շերիֆ Հուսէյն Պըն Ալի (1853--1931), որ 1901էն 1925 առանց ընդհատումի՝ (այսինքն մարգարէին զաւակէն զաւակ, յաջորդաբար առանց ընդհատումի) վերջին ժառանգորդն (օրինական խալիֆան) էր Մոհամմէտ մարգարէին՝ Մոհամմէտ մարգարէի տոհմէն սեռած (եւ որուն զաւակն էր Յորդանանի առաջին թագաւորը՝ Ապտալլա Ա. (21 Ապրիլ 1921--25 Մայիս 1946)՝ իր հովանաւորութիւնը շնորհեց տարագիր հայութեան: 1917ին ան *ֆաթուա*ով (հրովարտակ) մը հրահանգեց արաբ ժողովուրդին՝ հոգածութիւն ցուցաբերել հայ ժողովուրդին հանդէպ՝ յարգելով հայոց

[1] http://www.aztagdaily.com/archives/376444 ; http://www.aztagdaily.com/archives/328043 ; http://www.aztagdaily.com/archives/324227; http://www.aztagdaily.com/archives/301563 : Այս նիւթերը լոյս տեսած են *Ազդակի* 28 Յունիս,12 Նոյեմբեր, 10 Դեկտեմբեր 2016 եւ 20 Դեկտեմբեր 2017ի թիւերուն մէջ: Այստեղ կը հրատարակուին վերամշակուած:

կրօնի ու լեզուի ազատութիւնը[2]: Այս հրովարտակին լուսապատճէնը տեղադրուած էր Ամմանի ՀՄԸՄի ակումբի դռան մօտ (այս, նաեւ Մուհամմէտ մարգարէին եւ այլ նմանօրինակ *ֆաթուա*ներուն բնագիրերէն պատճէններ կը գտնուին Երուսաղէմի հայոց պատրիարքարանին մէջ): Իսկապէ՛ս այս հրովարտակի տառն ու ոգին լիովին կենսագործուած էր Յորդանանի ժողովուրդին կողմէ, հաւանաբար՝ շատեր առանց իսկ տեղեակ ըլլալու հրովարտակէն: Հայութեան աշխատասիրութեան, հաւատարմութեան, արդարամտութեան, հմտութեան, շինարար ու ստեղծագործող ոգիին համբաւը արդէն բաւարար էր շատերուն համար:

Յորդանանցի բնիկ ժողովուրդը նահապետական-աւատապետական-տոհմային կենցաղով ու սովորութիւններով ընկերային ու հանդուրժող, արդար ու ապահով միջավայր մը յառաջացուցած էր, որմէ դրականօրէն վարակուած էր հայկական գաղութը՝ ազնիւ, հիւրասէր, ծառայասէր զուարթ ու ողջամիտ:

- … Ամմանի գործատեղս կը գործէին նաեւ ամերիկացի խումբ մը մասնագէտներ, որոնց մէջ կը գտնուէր Պոստոնէն, Տոնալտ Ահարոնեանը, որ միայն քանի մը բառ հայերէն գիտէր: Կարճ ժամանակ ետք, առաւօտ մը, տնօրէնը, խուճապահար, խնդրեց, որ ընկերանամ իրեն եւ իբրեւ միջնորդ դասաւորեմ ամերիկացիներուն եւ տեղացի կապալառուին միջեւ «տաք» բանավէճը:

Ահա այստեղ էր, որ ծանօթացայ առաջին յորդանանահայուն՝ մկանուտ ու ջղուտ Ապու Իպրահիմ (Աբրահամի հայր) Կարպիս Հարմանտայեանին՝ Յորդանանի ալումինիումի ամէնանշանաւոր գործարանի տիրոջ, որ բազմաբնոյթ սրահին մէջ պիտի զետեղէր արդիական, ետեւէն լուսարձակուող լսատեսողական յատուկ ապակեման կիսաթափանց հսկայ պաստառ մը՝ խումբ մը ամերիկացիներու զգուշացնող պոռչտուք-ցուցմունքներու տարափին տակ: Ծանօթացումէն ետք ան բարկացկոտ ըսաւ. «Փա՛ռք Աստուծոյ, որ հայ մը կայ այստեղ, սա ամերիկացիները լռեցու՛ր կամ դու՛րս հանէ այստեղէն, որ կարենանք աշխատիլ»:

Յաջորդող Կիրակի երեկոյեան, մեր չերքէզ շարժավարը Ահարոնեանն ու զիս տարաւ Ամմանը կազմող եօթը բլուրներէն հայաբնակ Էշրեֆիէ թաղամասը, ուր կը գտնուին Ս. Թադէոս եկեղեցին, Ազգային Իւզպաշեան վարժարանը եւ ՀՄԸՄի ակումբը՝ քով-քովի, կարծես՝ մէկ կալուածի վրայ: Յետագային եկեղեցւոյ դիմացը կառուցուեցաւ եւ փոխադրուեցաւ Ազգային Մարզական Միութեան ակումբը: Բլուրին աւելի վերը կը գտնուէր Հայ Կաթողիկէ եկեղեցին իր փոքր վարժարանով:

---

[2] http://www.armenian-genocide.org/Affirmation.4/current_category.1/affirmation_detail.html :



Ակումբին դուռը փակ էր, սակայն ճիշտ քովի՝ եկեղեցի ու դպրոց բարձրացնող աստիճաններուն երկրորդական դուռը բաց էր: Մթութեան մէջ, ուղուելով նարտի քարերու ձայնին եկած կողմը, քահանայատան տկար լուսաւորուած դռան առջեւ գտանք, նարտի փոքր սեղանի մը շուրջ, Երուսաղէմէն եկած երկու երիտասարդ վարդապետեր, որոնք յայտնեցին, թէ ակումբը Ուրբաթ օրերը բաց կ'ըլլայ՝ Յորդանանի շաբաթական արձակուրդի օրը: Այն ժամանակ գաղութի հովիւն էր հայր Անուշաւանը, իսկ մինչեւ վերջերս՝ Պուրճ Համուտ մեծցած Վահան Արք. Թոփալեանը[3]:

- Զբօսաշրջութեան համար, ամերիկացիներու խումբին հետ այցելելէ ետք հարաւի նշանաւոր Քարաք բերդը, յուշանուէր գնելու մտօք ուղուեցանք քաղաքի շուկան, ուր ճամփուն դիմացի կողմը արծաթեղէնի եւ յուշանուէրի խանութի մը դռան առջեւ նկատեցի 6-7 տարեկան խարտեաշ աղջնակ մը: Ընկերակիցներուս ըսի, որ այդ խանութը հայկական է, գնումները այնտեղէն կատարենք: Մօտեցայ աղջնակին եւ «բարի լոյս» ըսի, ան ներս վազեց պոռալով՝ «Պապա՛, եկու՛ր, հայեր եկած են»…

Քարաքը՝ 1920ականներէն 1967 եղած է Հայոց Ցեղասպանութեան հետեւանքով, տարագիր հայերով բնակուած լեռնաքաղաք, ուր 1970ականներուն միայն քանի մը հայ ընտանիքներ կ'ապրէին՝ ոսկերիչ, լուսանկարիչ, արհեստաւորներ, իսկ ուրիշներ, որոնք մայրաքաղաք Ամման հաստատուած էին, ամառը կ'անցընէին իրենց սեփական տուներուն մէջ, իբրեւ ամառանոց: Այդ ընտանիքներէն էր Տէօրթ Եոլէն բռնագաղթած Փելթէքեան գերդաստանը, որոնց «աւագը»՝ Խաչիկ, Քարաքէն ոչ-հեռու, յորդանանեան աշիրէթական (տոհմային) դրութեամբ, ունէր լայնատարած պարտէզներ եւ ագարակ՝ Մեռեալ Ծովու *Լիսան* թերակղզիին վրայ (Ղոր-Ալ-Սաֆի)[4], ուր բոլոր եղանակներուն, տարին երեք չորս անգամ, բանջարեղէն կարելի էր արտադրել: Տեղահանած հայերէն մաս մը շոգեկառքով հասած էր աւելի հարաւ՝ Մաան քաղաքը, որ այն ժամանակ Հիժազ երկաթուղիի վերջին կայարանն էր:

Հայկական գաղութին արդէն մասնակից դարձած, Խաչիկ «աւագ»ի եղբօրորդի Յակոբին եւ բարեկամներու հետ այցելեցինք վերոնշեալ ագարակը: Հազիւ հասած՝ ագարակի մուտքին ծերունի պետեւի հովիւը հարիւրաւոր ոչխարներուն մէջէն խոյ մը ընտրեց եւ դաշոյնը հանելով՝

[3] http://www.orthodoxia.ch/it/name/173/show

[4] https://en.wikipedia.org/wiki/Lisan_Peninsula

զենեց զայն մեր առջեւ, իբրեւ բարիգալուստի նշան, պատրաստելու համար յորդանանեան նշանաւոր *մենսէֆ* ճաշը՝ միս, բրինձ եւ *ժամիտ*՝ չորցուած մածունի հեղուկ: Ագարակատան մէջ հանդիպեցանք յորդանանեան *փիշփաշի*ով (պետեւիի զգեստ) ու *քաֆիէ*ով (գլխաշոր) Խաչիկ «աւագ»ին, որ պարտէզներուն եւ ագարակին մասին տեղեկութիւններ տալէ ետք, պատմեց վերջերս պատահած «կրօնի ու հաւատքի» գիւղական դրուագ մը:

«Աւագ»ը այդ հանգրուանի լոլիկի բերքահաւաքէն ետք, իր փորձառութեամբ, նկատած է քանի մը սնտուկ լոլիկի պակասը: Կանչելով պետեւի հողագործները՝ թելադրած է վերադարձնել զանոնք, սակայն պատասխանատուն քանի մը անգամ երդուած է, որ այդպիսի բան չէ պատահած: Ուստի, «աւագ» իր մօտ գտնուող հնամենի խոշոր ձայնասփիւռի կոճակները սեղմելով եւ հայերէնով բաներ մը արտասանելով՝ ըսած է, որ հիմա քահանային հետ խօսեցայ, որպէսզի ան որ գողութիւն ըրաւ, անոր մէզի ճամփան փակէ...: Երկու օր ետք հողագործները դեղնած յանցաւորը շալկած, կը բերեն իր մօտ՝ աղաչելով, որ քահանային հետ խօսի…

- 1976ին Յորդանանի երկրորդ մեծ քաղաքը՝ Իրպիտ, ամիսներով ջուրի տագնապէ կը տառապէր՝ բնակչութիւնը մղելով այն ժամանակ ամբոխային աննախընթաց խռովութիւններու: Իրպիտի ջուրը կը մատակարարուէր արեւելեան անապատի Ազրաքի ովասիսէն՝ հսկայական ջրմուղներու միջոցով:

Վարչապետ Մուտար Պատրանի հրամանով Յորդանանի ելեկտրականութեան եւ ջրմուղներու յայտնի ճարտարագէտներ ու մասնագէտներ գործուղուեցան Ազրաք՝ գտնելու համար տագնապին պատճառը: Երբ այնտեղ հասայ, յիսունի մօտ մարդիկ կը զրուցէին դուրսը: Մտայ ջրմուղի կայան. հետս մտաւ նաեւ խոշոր կազմով ալեհեր անձ մը, որուն մասին լսած էի. ան ելեկտրական ընկերութեան յայտնի ճարտարագէտ Վահէն էր: Անմիջապէս նկատեցինք հաւանական թերութիւնը: Ելեկտրական 6000 վոլթով բանող երեք ջրմուղներէն միայն մէկը սկսարկու հերթափոխիչ կազմած (sequencing starter) ունէր, որուն հարիւրաւոր ածուխներէն մաս մը կայծերու պատճառով մաշած էր: Վահէն այս հաւանականութեան պատրաստ՝ գրպանէն հանեց նուրբ աւազաթուղթեր, հատ մը տալով ինծի՝ սկսանք ողորկել ածուխները եւ համապատասխան մետաղէ «մատերը», որով ոչ միայն ախտորոշում կատարած եղանք, այլեւ ջրմուղը յաջողութեամբ սկսաւ դէպի Իրպիտ ջուր մատակարարել: Ինծմէ պահանջուած տեղեկագիրիս հիման վրայ, երկու օր ետք ջուրի ընկերութեան տնօրէն Ուոլթըր Կարտնըր՝ Հուսէյն թագաւորին անգլիացի առաջին կնոջ հայրը եւ այժմու թագաւորին մեծ հայրը գործէն արձակուեցաւ…

ՀՄԸՄի ակումբը սկզբնական օրերուն (1972-73) ընդհանրապէս ընտանեկան հաւաքավայր էր, հոն կը գործէր նաեւ Հայ Օգնութեան Միութիւնը: Ակումբը ունէր միջակ չափի ուղղանկիւն սրահ մը խոհանոցով, շուրջ 200 անձի, որուն երկայնքին, դուրսը՝ ունէր դաշտը եզերող լայն ծածկուած տարածք մը ուրկէ տեսանելի էր հին Ամման քաղաքին համայնապատկերը, երեք ժողովասենեակներ (մէկուն մէջ գրադարան), եւ կողովագնդակի բացօթեայ դաշտ մը, եւ ունէր կողովագնդակի տղոց Բ. դասակարգի խումբ մը: Աստիճանաբար պատանեկան ու երիտասարդական շարժումը աշխուժացաւ եւ մասնակիցներուն թիւը հասաւ գաղութին համար անհրեւակայելի՝ մօտ երկու հարիւրի: Վերսկսաւ նաեւ սկաուտական շարժումը. ակումբը նեղ կու գար երիտասարդական ձեռնարկներուն:

ՀՄԸՄ Ամմանի կողովագնդակի Յորդանանի 1977ի ախոյեան խումբը եւ վարչականներ: Երեւի շարքը ձախէն աջ ատենապետեր էլի Պենէեան եւ Ճորճ Տագէսեան, Ժաք Պոյաճեան մարզիչ, Ճորճ Աւագեան, Յարութ Չէքիճեան (երիտասարդական) եւ Արշակ Դաւիթեան

Լիբանանի քաղաքացիական պատերազմին պատճառով կարգ մը ընկերութիւններ եւ հաստատութիւններ ժամանակաւոր կերպով Ամման փոխադրուեցան, որոնց հայ պաշտօնեաներէն էր յայտնի մարզիչ Յակոբ (Ժաք) Պոյաճեանը: Ակումբ հրաւիրեցի զինք՝ իր կարծիքը առնելու ակումբի կողովագնդակի խումբին մասին: Տեղացի մարզիչին հսկողութեամբ տղոց «թոյլ» փորձը դիտելով՝ եղբ. Ժաքին «արիւնը եռաց»: Ան պատրաստակամութիւն յայտնեց օժանդակելու: Սկսան մարզումները

եւ անոր ազդեցիկ, խիստ, սակայն ոգեւորիչ ու հոգատար ղեկավարութեամբ, 1976ին խումբը դարձաւ Բ. դասակարգի ախոյեան, իսկ յաջորդ տարի՝ 1977ին իր պատմութեան մէջ առաջին անգամ Յորդանանի առաջին դասակարգի ախոյեան՝ նոր աւիշ ու եռանդ պարգեւելով գաղութին:

- Յիշատակելի յորդանանահայերը շատ են. թագաւորական ընտանիքի լուսանկարիչներ, դերձակներ, ճարտարապետներ, զանազան մասնագիտութեան ճարտարագէտներ, երբեմնի փնտռուած բժիշկներէն էր Սուրէն Էթեմէզեան, իսկ անոր որդին՝ զօրավար Հրաչը, Յորդանանի զինուորական բարձրագոյն աստիճանով հանգստեան կոչուեցաւ, ապա շրջան մը վարեց Յորդանանի Ողիմպիական Կոմիտէի նախագահութիւնը, վարսայարդարներ, փնտռուած արհեստաւորներ եւն.:

Մեր պաշտօնեաներէն երկուքին մեծհայրը, սպիտակ մազերով ու պէխով, յաղթանդամ ու զուարճախօս Արամ Խաչատուրեան (խմբավար Օհան Տուրեանի եղբայրը), եղած է Յորդանանի Ապտալլա Ա. թագաւորին թիկնապահը, ընկերակցողը եւ շարժավարը. ան հպարտութեամբ ցոյց տուաւ իր եւ Յորդանանի ինքնաշարժ վարելու առաջին՝ թիւ մէկ համարի արտօնագիրը:

Կ'ըսուի նաեւ, որ Յորդանանի քայլերգին երաժշտութիւնը յօրինած է քեմանչիստ Ռուբէն (Գարախանեան), թէեւ պաշտօնական հեղինակը Ապտէլ Քատէր Թանին է:

- Յորդանանի ծայրագոյն հիւսիս-արեւմուտքը՝ Յորդանան-Սուրիա-Իսրայէլ սահմաններու միացման կէտին մօտ գտնուող ամայի շրջանի մը մէջ, յորդանանեան օդուժի գաղտնի խարիսխի մը պատասխանատու սպան էր Սահակը՝ 6-25 Հոկտեմբեր 1973ի արաբ-իսրայէլեան պատերազմի օրերուն[5]: Յորդանան իր մասնակցութիւնը չէր յայտարարած այս պատերազմին՝ Եգիպտոսի ու Սուրիոյ կողքին, սակայն խորհրդանշական օժանդակութիւն ցուցաբերեց, երկրին հիւսիսը՝ Սուրիոյ հարաւը զօրք կեդրոնացնելով, տալով նաեւ խորհրդանշական 23 զոհ: Ամմանի հիւսիս-արեւմուտքը՝ Ժըպէյհա բլուրին վրայ գտնուող գործատեղիէս ականատես եղանք հակօդային հրթիռի մը միջոցով իսրայէլեան ռազմական օդանաւի մը ջախջախման:

Այս առաջատար դիրքին սննդամթերքը նուազած էր եւ Սահակ իր փոքրաթիւ զինուորները մէկառմէկ ղրկած էր ջուր եւ սնունդ ապահովելու թելադրանքով, սակայն անոնցմէ որեւէ մէկը չէր վերադարձած, եւ Սահակ մնացած էր առանձին ու առանց սնունդի... Ըստ իրեն տրուած հրահանգին, ինք արտօնուած չէր օգտագործել որեւէ հաղորդակցութեան միջոց՝ թշնամիին կողմէ աննկատ մնալու համար: Ու պատերազմի աւարտէն անտեղեակ, Սահակ շաբաթ մը եւս մնաց այնտեղ՝

[5] https://en.wikipedia.org/wiki/Yom_Kippur_War :

շարունակելով իրեն վստահուած առաքելութիւնը, մինչեւ որ հաւանաբար իր կնոջ՝ Սիլվային հետապնդումով հրամանատարութիւնը անդրադարձաւ եղելութեան ու բարձր գնահատականով պարգեւատրեց զինք:

- Ազգային Իւզպաշեան Վարժարանի երկար տարիներու տնօրէնուհին էր Յակոբ Օշականի դուստրը՝ մտաւորական, մանկավարժ ու գրագէտ Անահիտ Ոսկերիչեան[6] (1919--2005), մինչ ամուսինը՝ ճարտարապետ Տիրան Ոսկերիչեան (1903--1997), Յորդանանի պետութեան եւ Ազգային վարչութեան կողմէ Երուսաղէմի սրբավայրերու պահպանութեան ու վերանորոգման յանձնախումբի ճարտարապետը եւ ներկայացուցիչը եղած է: Ան ճանչցուած էր իբրեւ «Ամմանի շինարարը»՝ իր նախագծած աւելի քան 700 բնակարանային եւ հանրային-պետական կառոյցներով ու կոթողներով: Ահա ամփոփ ցանկ մը.-

Ա. հանրային եւ պետական՝ կառավարական շէնքեր.

1. Երուսաղէմի Սուրբ Յարութիւն Եկեղեցւոյ վերանորոգում:
2. Երուսաղէմի Սուրբ Փրկիչ եկեղեցւոյ եւ Սուրբ Յակոբայ Վանքի վերանորոգում:
3. Պաղեստինի «Շուման Յիշատակի Մզկիթ»ի կառուցում:
4. «Զահիրան» եւ «Հումմար» թագաւորական պալատներու կառուցում:
5. Յորդանանի Անծանօթ Զինուորի յուշահամալիրի կառուցում:
6. Յորդանանի Կեդրոնական Դրամատան նոր շէնքի կառուցում:
7. Ամմանի Առեւտուրի Պալատի նոր շէնքի կառուցում:

Բ. Առեւտրական շէնքեր.

1. «Արապ Պանք» դրամատան կեդրոնական շէնքը եւ բոլոր մասնաճիւղերը:
2. «Գահիրէ-Ամման Դրամատուն»ի կեդրոնական շէնքը եւ բոլոր մասնաճիւղերը:
3. «Յորդանանի Ազգային Դրամատուն»ի կեդրոնական շէնքը եւ բոլոր մասնաճիւղերը:
4. «Յորդանանի Իսլամական Դրամատուն»ի կեդրոնական շէնքը եւ բոլոր մասնաճիւղերը:
5. Ամմանի առաջին «Սփինիզ» համալիրը եւն.:

Ռուբէն Տէր Մինասեանի Պաղեստին կեցութեան ընթացքին Տիրանը որոշ ժամանակ Ռուբէնի *Հայ Յեղափոխականի Մը Յիշատակները* ծաւալուն 7 հատոր յուշագրութեան քարտուղարութիւնը կատարած է եւ ընկերակցած անոր, երբ ձիով կը ճամփորդէին քաղաքէ քաղաք:

Յորդանանի հայկական գաղութը առաւելագոյնը հաշուած է շուրջ տասը հազար անձ, սակայն 1967ի արաբ-իսրայէլեան ու քաղաքացիական պատերազմներուն պատճառով թիւը նուազած է՝

[6] http://www.armeniapedia.org/wiki/Anahid_Oshagan_Voskeritchian :

հասնելով շուրջ չորս հազարի (շրջան մը՝ շուրջ 2500)։ Ըլլալով փոքր գաղութ՝ գրեթէ բոլորը կը ճանչնան զիրար, ինչը ունի դրական ու բացասական կողմեր։ 1980էն սկսեալ Յորդանանի արդիականացումը որոշ չափով, աստիճանաբար փոխեց երկրին աւանդական դիմագիծը, մինչ ներկայի Ամմանը, 35 տարիներ ետք, դարձած է բոլորովին անճանաչելի։

Շնորհիւ դպրոց-եկեղեցի-ակումբ երրորդութեան՝ Յորդանանի հայկական գաղութը իր միութիւններուն եւ անոնց նուիրեալ անդամներուն անխոնջ աշխատանքով կրցած է պահպանել ազգային հաստատութիւնները եւ գաղութին հայկական դիմագիծը։

ԵՐԿՈՒ ԱՅԼ ԴՐՈՒԱԳՆԵՐ

Հեւախուզական Արկածախնդրական Մրցում՝ Րելի Փէյփըր

Յորդանանի մէջ հռչակ շահած էր *րելի փէյփըր* մարզախաղը, քանի որ Հուսէյն թագաւոր, 1955ին, գահակալութեան առաջին օրէն, սկսած էր մասնակցիլ բլուրներու վրայ արագութեան միջազգային մրցումներու։ 1956-ին Լիբանանի մէջ Ռապիյէ-Այն Ասր *րելի*ին առաջնութիւնը շահեցաւ։ Թագաւորը հինգ անգամ առաջնութիւն նուաճած է Յորդանանի Ժարաշ պատմական քաղաքի Ռըմման բլուրի միջազգային *րելի*ին։ Սակայն Յորդանանի մէջ տեղական ակումբային մակարդակով եւ հանգրուանային դրութեամբ այս խաղը ցարդ չէր կիրարկուած։

Լիբանանի մէջ 1960ականներէն մինչեւ 1975ի քաղաքացիական պատերազմը՝ ՀՄԸՄի Պէյրութ մասնաճիւղը եւ տեղական այլ ակումբներ ու համալսարանական միութիւններ կը կազմակերպէին *րելի փէյփըր*ներ, որոնց երկուքին մասնակցած եմ։

Իբրեւ մարզական մրցակցային նորութիւն, 1976ին ՀՄԸՄի Ամմանի վարչութիւնը որոշեց առաջին անգամ կազմակերպել *րելի փէյփըր*՝ խանդավառելու համար յատկապէս 200ի հասնող երիտասարդականի անդամները եւ համայնքը՝ ընդհանրապէս։ Այս խաղին ծանօթ միակ փորձառու վարչականին՝ ինծի, վստահուեցաւ խաղին մասնագիտական բաժինը՝ պատրաստել խաղին կանոնները, հանգրուանները եւ «հանելուկ» հարցարանները։

Առաջին հերթին պէտք էր ապահովել մասնակցիլ փափաքող նուազագոյնը տասը խումբ-ինքնաշարժ, որուն հիման վրայ ստանալ արտօնութիւն պատկան մարմիններէն։ Այսպիսի մրցումներու հեղինակութիւնն է «Յորդանանի Թագաւորական Ինքնաշարժներու Ակումբ»ը, որ տալով արտօնութիւն՝ իր կարգին տեղեակ կը պահէ երթեւեկի տնօրէնութիւնը եւ ապահովական մարմինները։ Վարչութիւնը ապահովելէ ետք այս արտօնութիւնը, նաեւ իր կարգին - բարեբախտաբար - պաշտօնապէս տեղեակ պահեց ապահովական մարմինները եւ ապահովագրեց մասնակիցները մէկ օրուան համար։

Երկրորդ աշխատանքն էր՝ ապահովել ծանուցումներ, զարդարելու համար՝ ինքնաշարժները, ակումբը ու ակումբի թաղամասը, ինչպէս նաեւ ապահովել պարգեւներ՝ առաջին երեք յաղթական խումբերուն համար, ու բոլոր մասնակիցներուն՝ դրօշակներ, *թիշըրթ* շապիկներ, գլխարկներ եւ այլ տեսակի նուէրներ: Նաեւ, վերջապէս, մրցումի աւարտին կազմակերպել խրախճանք՝ մասնակիցներուն եւ ակումբի անդամներուն ու համակիրներուն համար:

Խաղէն մէկ օր առաջ մասնակիցներուն եւ հանգրուանի պատասխանատուներուն մանրամասնօրէն բացատրուեցան խաղին կանոնները, արժեւորումի կէտերու դրութիւնը, պատիժները, խաղին աշխարհագրական տարածքը, յանձնուեցան ինքնաշարժներուն յատուկ կպչուն համարները եւ ծանուցում-զարդարանքները:

Խաղը սահմանափակուած էր Ամմանի եւ արուարձաններուն մէջ, պիտի տեւէր առաւօտեան ժամը 8էն 13:00, շուրջ հինգ ժամ, ընդգրկելով 10 հանգրուան, դիւրին հանելուկներով: Ունեցանք մասնակցողներու 14 խումբ-ինքնաշարժ, երիտասարդ եւ երէց անդամներով, ու տասը հանգրուաններու պատասխանատու 20 անդամներ: Այս ձեւով շուրջ 70 անդամ, ներառեալ՝ մրցակիցները, ուղղակիօրէն մասնակից դարձան խաղին մինչ վարչութիւնը լրիւ կազմով կը հետեւէր իրադարձութիւններուն՝ շրջագայելով նաեւ հանգրուաններուն միջեւ:

Հանգրուաններուն հանելուկները պատրաստելէ ետք Հարմանտայեանին զաւկին հետ, անոր գրասենեակի պատճէնահանով բազմագրեցինք 10 հարցարանները 15 օրինակով, 150 պահարան՝ հանգրուանի թիւերով: Հանելուկներէն երկուքը կը յիշեմ. առաջինը՝ պանդոկ «Շեփըրտ»ն էր, որուն հանելուկն էր տաք ջերմաչափ, անգլերէնով՝ hot, L տառը, եւ հովիւ մը՝ shepherd: Երկրորդը՝ Ամմանի հարաւային արուարձաններէն Ապու Ալանտայի մէջ գտնուող յայտնի հնութիւնը՝ «եօթը ննջողներուն քարայր»ն էր՝ Ահլըլ Քահֆ, որուն մասին գրուած է Քուրանի 18րդ գլխուն մէջ. եօթը անձեր իրենց հաւատքին պատճառով հալածանքէ խուսափելու համար 300 տարի պահուըտած ու քնացած են այդ քարայրին մէջ: Ասոր հանելուկը եօթը քնացողներու գծագրութիւնն էր գլուխներուն վերեւ «խը՛ռ խըռ» գրութեամբ…

Ուրբաթ առաւօտ աներեւակայելի խանդավառ մթնոլորտ մը կը տիրէր ակումբին մէջ՝ մասնակիցներու եւ անդամներու եռուզեռով, դրօշակներով եւ ծանուցումներով զարդարուած ինքնաշարժները, թաղամասը ու ակումբին սրահը, ուրկէ սկիզբ առաւ մրցումը:

Տրուած ըլլալով, որ մրցակիցներուն մէջ փորձառու մասնակցողներ չկային, մրցումը հեզասահ չընթացաւ եւ ոչ մէկ խումբ անսխալ աւարտեց տասը հանգրուանները. բոլորն ալ հեռաձայնեցին ակումբ՝ ստանալու համար ցուցմունքներ, կամ խախտեցին կանոններ, ու այսպիսով կորսնցուցին նիշեր, սակայն՝ առանց կորսնցնելու գեր-

խանդավառութիւնն ու ոգեւորութիւնը, որ մնացին տիրական, նոյնիսկ՝ խաղէն շաբաթներ ետք:

Բարեբախտաբար առանց ինքնաշարժի արկածի, խումբերը մէկ-մէկ վերադարձան ակումբ՝ իւրաքանչիւրը պատմելով պատահարներուն եւ ընդհանրապէս զաւեշտալի իրավիճակներուն մասին՝ խնդուք-պոռչտուք-գանգատներով հարուստ: Խումբերէն մէկուն պատասխանատու Գէորգը ակումբ հասնելուն բարկացկոտ բացականչեց, թէ կազմակերպիչները մոռցած էին «փիֆ-փաֆ» ու քիթ-բերան ծածկող դիմակներ բաժնելու խումբերուն… իր խումբը, հարցարան-հանելուկ մը սխալ մեկնաբանելով, մեկնած էր Ամմանի ճանճերով լեցուն գարշահոտ աղբանոցը, որ կը գտնուի քաղաքէն դուրս՝ խաղին որոշուած շրջագիծէն շատ հեռու, եւ հեգնօրէն՝ իրենց հետեւած են նաեւ երկու այլ խումբեր…

Խումբերէն մէկը չկարենալով մեկնաբանել «ամէնէն դիւրին» հանելուկը՝ «եօթը ննջողներուն քարայրը», մտած է քանի մը խանութ՝ ցոյց տալով հանելուկ-նկարը՝ իմանալու համար անոնց կարծիք-մեկնաբանութիւնը… Ու վերջին խանութին մէջ մոռցած է հարցարանը, ուր այդ պահուն կը գտնուէր գաղտնի սպասարկութեան անդամ մը… Իսկ հարցարանին համար - որ բազմագրած էինք Հարմանտայեանի գրասենեակը - օգտագործած էինք Հարմանտայեանի նախկին տեղացի գործընկերոջ անունով այլեւս անպէտք դարձած նամակի թուղթերը…

Գաղտնի սպասարկութեան «ժրաջան» անդամը կարծելով, որ հանելուկը գերեզման-գանձի մը քարտէսն է, տեսնելով նամակաթուղթին վրայի անունը, գաղտնի սպասարակութեան իմաց տալով կ'անցնի հետախուզութեան: Կը սկսին հետապնդել խեղճ մարդը, եւ ուշ գիշերին զայն կը տանին հարցաքննութեան: Հանելուկ-նամակաթուղթէն բոլորովին անտեղեակ ու շուարած, ան իզուր կը բացատրէ, թէ այդ նամակաթուղթը հին ընկերութեան մը կը պատկանէր, որ դադրած է գործելէ, յայտնելով Ապու Իպրահիմ՝ Կարպիս Հարմանտայեանի հետ այժմ դադրած գործընկերութեան մասին: Ուշ գիշերին, բերման կ'ենթարկուի նաեւ Հարմանտայեանը, որուն վկայութիւնը ու ՀՄԸՄի կողմէ *րելի փէյփըր*ին համար առնուած արտօնութիւնը ստուգելէ ետք, զիրենք ազատ կ'արձակեն:

Վարչութիւնն ու զայրացած Ապու Իպրահիմ Հարմանտայեանը օրուան խանդավառութեան հակաստիճան վիճակի մը մէջ անհաճոյ ժամեր անցուցինք՝ աւարտելով այս առաջին ու վերջի՛ն *րելի փէյփըր*ի երկար օրը:

Խրախճանքը աներեւակայելիօրէն ուրախ մթնոլորտի մը մէջ տեւեց մինչեւ ուշ գիշեր:

Սեռային Ոտնձգութեան Մը Արկածախնդրութիւնը

1978ին, Լիբանանի քաղաքացիական երկրորդ պատերազմի սաստկացած մէկ փուլին, մեծ թիւով լիբանանահայեր Յորդանանի

մայրաքաղաք Ամման եկած էին: Այս նորեկները ընդհանրապէս երեք խումբի կարելի էր բաժնել. ա) իրենց պաշտօնավարած ընկերութեան ժամանակաւորապէս Ամման փոխադրութեան բերմամբ Ամման ժամանածներ, բ) Ամերիկա գաղթելու կամ ճամփորդելու համար վիզայի դիմում կատարելու համար եկածներ, գ) Ամմանի մէջ ազգականներ կամ բարեկամներ ունեցողներ կամ ոչ՝ ապահովութեան եւ կազդուրուելու համար եկածներ:

Ակումբ տանող ճամփան զառիվեր է, եւ ճամփուն կողմը կը գտնուի կողովագնդակի դաշտը, որուն հիւսիսային ծայրը ճամփէն շուրջ երեք մեթր բարձր է, իսկ հարաւային կողմը՝ շուրջ երկու մեթր, ուր կը գտնուի ակումբին մուտքի դուռը: Ճամփուն կողմը զետեղուած է երկաթէ լարերով բարձր ցանկապատ մը, որուն ընդմէջէն կարելի է դիտել Ամման քաղաքին մէկ համայնապատկերը, մանաւանդ՝ գիշերուան գեղեցիկ տեսարանը:

Յորդանանի ժողովուրդը, պետեւիական աւանդութիւններով, չափազանց պատուախնդիր ու արժանապատուութեան տէր է, յարգալիր, եւ հիւրասէր՝ բոլորին նկատմամբ, քաղցրաբարոյ՝ իր արտայայտութեան մէջ: Ութ տարի կեցութեանս ընթացքին բնա՛ւ հայհոյանք չեմ լսած, նոյնիսկ՝ հազուագիւտ կռիւներու ընթացքին: Ամէնամեծ եւ հազուադէպ գործածուող հայհոյանքը «թէյս» է, որ այծ կը նշանակէ: Եթէ լիբանանեան հայհոյանքներ գործածուին մօր եւ քրոջ վերաբերող՝ հետեւանքը սպանութիւն կրնայ ըլլալ: Այս տոհմիկ աւանդութիւններէն դրական կերպով վարակուած էր նաեւ հայկական գաղութը:

Յորդանանեան շաբաթավերջին՝ Հինգշաբթի երեկոները եւ Ուրբաթ օրերը, Ամմանի ՀՄԸՄի ակումբը աննախընթաց եռուզեռով մը կը «վխտար», երբեմն լիբանանահայերուն թիւը կը գերազանցէր ամմանահայերունը. ակումբին սրահը եւ կողովագնդակի դաշտը նեղ կու գային: Իբրեւ վարչականներ՝ աչալուրջ հսկողութիւն կը կատարէինք, յատկապէս՝ մեզի անծանօթ երիտասարդներուն վրայ, նկատի ունենալով յորդանանեան վարք ու բարքը, պահպանողական կենցաղը:

Ուրբաթ երեկոյ մը, երբ ակումբին սրահն ու դաշտը «ողողուած» էին նորեկներով, ընդհանրապէս՝ լիբանանահայեր, մինչ ամէն տեղ խումբ-խումբ մարդիկ հաւաքուած կը զրուցէին, յանկարծ ճերմակ զգեստ ու - այն ժամանակ նորոյթ - բարձր կրունկ կօշիկ հագած, նիհարակազմ, երկար մազերով, նուազ քան 60 քիլօ կշռող, հազիւ քսան տարեկան, բարձրահասակ երիտասարդ մը, դաշտին ճամփուն կողմը ցանկապատին մօտ գտնուող երկու պարմանուհիներուն հետ կարճ ու «տաք» զրոյցէ մը ետք, սուրաց դաշտին մէջէն ակումբէն դուրս:

Որպէս միակ լիբանանցի վարչականը՝ աւելի պատասխանատու կը զգայի պատերազմի մթնոլորտէն փախած մեր հայրենակիցներուն հանդէպ, ուստի անմիջապէս հետեւեցայ անոր, սակայն ուշ հասայ: Այս տկարակազմ ու պճնասէր թուացող երիտասարդը ճամփուն դիմացի

կողմը գտնուող երկու տեղացի երիտասարդներու վրայ յարձակած էր, գետին փռած զանոնք եւ մոլեգին կը հարուածէր: Այլ վարչականի մը օգնութեամբ, դժուարաւ կրցանք բաժնել զինք արիւնլուայ ու սարսափահար երիտասարդներէն: Անոնք իսկոյն զառիվայր փախուստ տուին, իսկ մեր «հերոսը» ամենայն պաղարիւնութեամբ, ճերմակ զգեստը անվթար՝ ըսաւ. «Ասկէ ետք թող համարձակին խօսք նետել հայ աղջիկներուն: Իսկ այդ աղջիկներն ալ ինչու՞ մնացին այնտեղ, լսելէ ետք շարունակուող սեռային ոտնձգութիւնները… արդեօք հաճո՞յք կ'առնէին»:

Մեր կողմէ սաստելով զինք՝ անմիջապէս ակումբ տարինք եւ ակումբին մուտքի երկաթէ դուռը փակեցինք: Այս միջադէպը անպայման վտանգաւոր հետեւանքներ պիտի ունենար, մէկ կողմէ՝ երիտասարդներուն պարագաներուն, մանաւանդ՝ աշիրէթին, եւ միւս կողմէ ոստիկանութեան հետ: Կանխելով որեւէ անորոշութիւն եւ եղելութեան բացասական զարգացում՝ մեր կողմէ տեղեակ պահեցինք ոստիկանութիւնը, թէ՝ երկու երիտասարդներ սեռային ոտնձգութիւն կատարած էին ակումբին դիմացը, թէ՝… ակումբի պատասխանատուներ զգուշացուցած են այդ երիտասարդները, որ հեռանան ակումբի շրջակայքէն, բայց անոնք դիմադրած էին եւ՝ կռիւ սկսած… Պահպանողական Յորդանանի մէջ սեռային ոտնձգութիւն ընդհանրապէս չէր պատահեր. անոր պատիժը խիստ էր, նո՛յնիսկ՝ ի՛ր ընտանիքին կողմէ:

Հետեւանքը չուշացաւ: Մինչ կը սպասէինք ոստիկանութեան, ցանկապատին ետեւէն լսեցինք եւ տեսանք շուրջ հարիւր հոգինոց ամբոխ մը, որ վանկարկումներ գոռալով, ճամփու ստորոտէն մականներ ճօճելով՝ կը մօտենար ակումբին…

…Պատահեցաւ երկրորդ աներեւակայելին: Նորեկներէն սեւ հագուստով, 60 տարիքը անց, գիրուկ կազմով, կարճահասակ, բարձր կռունկով մուճակներ հագած կին մը սկսաւ արագ քայլերով ուղուիլ ակումբէն դուրս՝ դիմակալելու համար ամբոխը… անմիջապէս հետեւեցայ անոր եւ փորձեցի ակումբէն դուրս գալուն արգելք հանդիսանալ, բայց ան անդրդուելի մնաց, բացաւ երկաթէ դուռը եւ ինծի ըսաւ. «Դուն մի՛ խառնուիր, նե՛րս գնա, ես գիտեմ, թէ ի՛նչ կ'ընեմ» ու հրելով զիս ներս՝ փակեց երկաթէ դուռը, հանեց մուճակներէն մէկը ու սկսաւ զայն ճօճելով, կաղ քայլերով յառաջանալ դէպի ամբոխը… Մենք խիստ մտահոգ՝ քար լռութեամբ կը հետեւէինք իրադարձութեան:

Ամբոխը կը գլխաւորէին յորդանանեան աւանդական զգեստով տարեց մարդիկ, որոնք տեսնելով մուճակը ճօճելով իրենց մօտեցող կինը՝ նախ կանգ առին, ապա սկսան ետեւ երթալ… կարծես իրենցմէ աւելի մեծ ամբոխ մը կը մօտենար իրենց…Այս միջոցին, վրայ հասաւ ոստիկանութիւնը, որ խօսելով ամբոխին աւագին հետ՝ շուտով ցրուեց զայն: Բաւարար էր, որ աշիրէթին աւագը իմացաւ հարցին սեռային ոտնձգութեան բնոյթը եւ անմիջապէս հրահանգեց ցրուել ամբոխը:

Ոստիկանութիւնը նոյնիսկ ակումբ չեկաւ... Յստակ էր, որ յանցանքը գործած երիտասարդները իրենց ընտանիքներուն չէին իմացուցած ծեծկռտուքին իսկական դրդապատճառը:

The Jordan Armenians: Memories and Episodes (1967-1978)
(Summary)

Harout Chekijian
harout.chekijian@gmail.com

Between 1967 and 1978 the author, a Lebanese Armenian who studied at Haigazian University (then College) and specialized in the US, was commissioned to work at the Royal Scientific Society Jordan base as the vice-director of the electronic section.

During his stay, Chekidjian was actively involved in the Jordan Armenian community life and was elected a member of the Homentmen club local chapter executive committee. Alongside his social encounters, the author also encountered other Jordan Armenians in the workplace. In this paper Chekidjian narrates recollections of his social experience and depicts interesting aspects of the social life of the Armenian community in Jordanas well as their relations with the indigenous population, the local traditional mindset, the lifestyle and facets of the integration of Lebanese Armenians into the local Armenian community.

An Armenian Family: A Peripatetic Journey

Harry Hagopian
wonrights@yahoo.co.uk

WHERE DO I HAIL FROM?

At first glance, this five-word solitary question might well give the impression that I am plunging headlong into the arcane principles of philosophy or the realms of Kierkegaard-inspired existentialism. Couple it with the Aristotelian flavour of the title I chose for my piece, and some readers might well be forgiven for thinking that I am delving into a highly academic paper on the nature and origin of my life. But nothing could be further from the truth.

Rather, what I am attempting to achieve today through these few pages is to contribute a simple Preface, story-like, to a publication on Armenians in Jordan that has been ably organised and compiled by Haigazian University as part of an ongoing series covering the Armenian Diaspora across the Levant. Mind you, I also concede an increasing awareness of what most of us go through as we get older. No matter how many destinations we have visited in our lives, or how many countries we have lived and worked in, the fact remains that our nostalgia for our native 'homeland' increases as we grow older. The old lemon or fig tree in the garden of our grandparents assumes an identity of its own and reminds us of a history that is no longer with us.

However, that very history, no matter how irreversible, is also an ineluctably formative part of our lives. After all, I cannot fully be who I am today if I do not also remember those tender years when my life began to take shape and when childhood, and later adolescence, morphed into adulthood. Does the French expression not claim that 'experience makes science' and that our seminal memories re-visit us when we are older, purportedly wiser, and perhaps also increasingly more challenged by our ageing realities?

So here is my story, or more accurately the story of my family, spread over three generations and encompassing a century. Bear with me as it is also the simple story of so many other Diaspora Armenians in the Middle East today.

I must have been no more than four or five when my maternal grandfather placed me on his lap and recounted to me the stories of my great-grandparents, who were Ottoman citizens during the early years of the 20th century. My paternal grandfather was a young pharmacist in Constantinople (modern-day Istanbul) and was married to my grandmother who taught in an Armenian elementary school. My maternal grandfather's family were rich businessmen in Dikranagerd (modern-day Diarbekir) and their palatial house overlooked the Tigris River. For all intents and purposes, both sides of my family were actively engaged with the Armenian community in Ottoman Turkey.

However, their ordinary lives were to change quite dramatically - painfully and abruptly - when the triumvirate of Young Turks stoked the prevalent sense of Ottoman nationalism and turned against the Armenian community in their midst by using the cover of World War One to perpetrate the most horrific massacres against this ethnic group (the largest numerical 'minority' in the land) as well as against the Syriac Orthodox and Pontic Greek citizens. Across many parts of the Ottoman lands, Armenians were rounded up, their houses pillaged, their women raped, and their children killed. Scores were deported into the Syrian Desert and many of them perished along the way. The International Association of Genocide Scholars (IAGS), let alone numerous historians and academics, have painstakingly sifted the archives and documented those crimes that ultimately led to a neologism - genocide - to depict *inter alia* the deliberate murder of an entire ethnic group or part thereof. This word, coined by the Polish lawyer Raphael Lemkin, and comprising the two words *genos* (Greek for family, tribe or race) and *-cide* (Latin for killing) led to the UN General Assembly adopting the Genocide Convention in 1948.

2. 3 գիտնականի եւ բանասէրի գործուղել Լիբանան եւ Յորդանան՝ հնատիպ գրքերի եւ ձեռագրերի ուսումնասիրման եւ փոխանակման համար[11]:

[11] Նոյն, g. 2, գ. 14:

Արխիւային նիւթերում տեղեկութիւններ չեն պահպանուել վերոնշեալ ծրագրի իրականացման ընթացքի եւ արդիւնքների մասին, սակայն նախատեսուած միջոցառումների ցանկը թոյլ է տալիս ասել, որ ՍՀՄԿԿն ջանում էր զարկ տալ գաղթօճախի հետ փոխյարաբերութիւնների զարգացմանը: 1967ը ուշագրաւ է նաեւ Հայաստանում պիոնէրական ճամբարներում հանգստանալու համար Յորդանանի համար նախատեսուած տեղերի քանակով. յատկացուել էր 10 տեղ, որը համայնքի համեմատականով բաւական բարձր թիւ էր[12]: Սա գուցէ հետեւանք էր 1967ի արաբ-իսրայէլեան պատերազմի, քանի որ սովորաբար՝ յետագայ տարիներին յատկացւում էր մէկից վեց տեղ: Նշենք, որ պիոնէրական ճամբարներում հանգստանալու համար հրաւիրուող աշակերտների քանակի վերաբերեալ ԱՄՄն պատասխան նամակներում յաճախ էր խնդրում յատկացուած քանակը մեծացնել[13]: ՍՀՄԿԿն, սակայն, միշտ չէ որ կարողանում էր կատարել խնդրանքը:

ՀԱԱում պահպանուել է 1969ին Յորդանանում ՍՍՀՄ դեսպանութիւնից ՍՀՄԿԿին ուղարկուած նամակը, որում նշւում է, որ Յորդանանում - չհաշուած Իսրայէլի կողմից գրաւուած տարածքները - ապրում է 470 հայ ընտանիք՝ մօտ 2350 հայ, որոնցից 320ը Ամմանի եւ Զարքայի հայկական դպրոցների աշակերտներ են: Համայնքային խորհուրդը դիմել էր սովետական դեսպանութեանը հետեւեալ խնդանքներով.-

1. Հայաստանից ուղարկուեն ուսողութեան, բնագիտութեան, պատմութեան դասագրքեր, ինչպէս նաեւ ընթերցանութեան գրքեր նախադպրոցական տարիքի երեխաների համար.
2. Ֆիլմեր եւ սահիկներ.
3. Այցելեն հասարակական գործիչներ, գրողներ, երաժիշտներ, մարզիկներ, ովքեր դասախօսութիւններ կը կարդան հայ գրականութեան, բանաստեղծութեան, պատմութեան վերաբերեալ.
4. Ամէն տարի մինչեւ 20 աշակերտներ՝ 10-15 տարեկան, հանգստանան պիոնէրական ճամբարներում.
5. 1969ի ամռանը ուսուցիչների վերապատրաստմանը մասնակցեն 3-4 ուսուցիչ.
6. Ուղարկուեն դաստիարակներ՝ մանկապարտէզների համար.
7. Ուղարկուեն լուսանկարչամեքենայ, լուսանկարներ[14]:

1969ին ԱՄՄն խնդրել էր Հայաստան հրաւիրել իր բասկէտբոլի խումբը, որը նախկինում եղել էր Յորդանանի ախոյեանը[15]:

---

[12] Նոյն, թ. 32:
[13] Նոյն, g. 8, գ. 127, թ. 13:
[14] Նոյն, g. 2, գ. 36, թ. 25-6:

ՍՀՄԿԿի կողմից սփիւռքահայ ուսուցիչների կատարելագործման դասընթացներին մասնակցելու համար Յորդանանի դպրոցներից ե՛ւ 1970ին[16], ե՛ւ 1971ին[17] հրաւիրուել է մէկ ուսուցիչ, իսկ 1972-73ին իրականացուած աշխատանքների վերաբերեալ արխիւային նիւթերում մեզ չյաջողուեց գտնել որեւէ հաշուետուութիւն կամ նամակ:

Արխիւում նիւթեր կան 1975ի ԱՄՄի վերաբերեալ[18]: Տրուած է ակումբի վարչութեան կազմը, գործող խմբակները, ընդհանուր նկարագիրը եւ կարգավիճակը: Տեղեկանքում նշւում է, որ Ամմանի Իւզպաշեան-Կիւլպենկեան Վարժարանն ու ԱՄՄն Հայրենիքից կանոնաւորապէս ստանում են դասագրքեր, գրենական պիտոյք, երաժշտական գործիքներ, գեղարուեստական գրականութիւն, թերթեր եւ ամսագրեր:

Այսպիսով, 1969ին Յորդանանում ՍՍՀՄ դեսպանութիւնից ուղարկուած վերոնշեալ նամակում Համայնքային Խորհրդի կողմից ներկայացուած խնդրանքները, ինչպէս նաեւ 1970-75ի գործունէութեան աղքատիկ տուեալները յուշում են, որ գաղթօճախը մեծապէս կարիք էր զգում առաւել աշխուժ փոխյարաբերութիւնների: Պէտք է նշել, որ 1970-75ի տեղատուութիւնը զգալի է ոչ միայն Յորդանանի հայ գաղթօճախի հետ տարուող աշխատանքների, այլեւ առհասարակ ՍՀՄԿԿի ողջ գործունէութեան մէջ[19]:

Պահպանուել է Յորդանանի հայ գաղթօճախի վերաբերեալ 1971ի տեղեկանքը, որը ուշագրաւ է Հայրենիք-Սփիւռք յարաբերութիւններում շատ կարեւոր հարցին՝ հայրենադարձութեանը արուած անդրադարձով. նշւում է, որ Յորդանանից զանգուածային հայրենադարձութիւն տեղի չի ունեցել եւ 1948ին հայրենադարձուել է ընդամէնը 3 ընտանիք: Ըստ տեղեկանքի 1970ին համայնքում եղել է մօտ 2350 հայ, հետեւեալ մանրամասնութեամբ.-

Ամմանում՝ 300 ընտանիք, Զարքայում՝ 25, Ռըսէյֆայում՝ 10, Իրպիտում՝ 20, Ղոր Սաֆիում՝ 10, Աքապայում՝ 6, Քարաքում՝ 4, Աժլունում՝ 3:

Գաղթօճախի վերաբերեալ 1972ի տեղեկանքը[20] նախորդ տարիների տեղեկանքների համեմատ առանձնանում է բաւական հարուստ բովանդակութեամբ:

---

[15] Նոյն, g. 4, գ. 366:

[16] Նոյն, թ. 5:

[17] Նոյն, g. 8, գ. 127, թ. 19:

[18] Նոյն, g.14, գ. 207, թ. 6-8:

[19] Ա. Եղիազարեան, Մ. Անանեան եւ այլք, *Հայրենիք-Սփիւռք Յարաբերութիւնները. 1918 Թուականից Մինչեւ Մեր Օրերը*, Երեւան, ԵՊՀ Հրատ., 2017, էջ 112:

[20] ՀԱԱ, ֆոնդ 875, g.14, գ. 201:

Ըստ տեղեկանքի հայութեան թիւը, որն իդէպ չի համապատասխանում նախորդ տեղեկանքում նշուածին, 1914-71 ժամանակահատուածում ունեցել է հետեւեալ պատկերը.-

1. 1914ից մինչեւ 1919ի վերջը՝ 25-30,000.
2. Մինչեւ 1948 նուազել է հասնելով 70 ընտանիքի.
3. 1948-56՝ հասել է աւելի քան 5000 հոգու.
4. 1970ին՝ եղել է 1800 հոգի.
5. 1971ին՝ 1800, որից 1500ը լուսաւորչական, 300ը՝ կաթողիկէ[21]:

Յորդանանահայերի թուաքանակը տարբեր տարիների

Տարի	քանակ
1914-19	25-30,000
--1948	70 ընտանիք
1948-56	5000
1970	1800
1971	1800

Տեղեկութիւն կայ նաեւ համայնքի հայկական դպրոցների, եկեղեցիների մասին: Այսպէս, 1924ին Յակոբ Պէրպէրեանի նախաձեռնութեամբ 12 հայ ընտանիքներից հանգանակութիւն է կատարւում եւ հիմնւում է Ամմանի առաջին հայկական մանկապարտէզը, որը յետագայում ընդարձակուելով վեր է աճւում նախակրթարանի: Վարժարանը բարերարի անունով կոչուել է Հեթումեան Ազգային Վարժարան: 1958ին Ամմանում կառուցւում է հայ կաթողիկէ համայնքի Սուրբ Վերափոխման եկեղեցին եւ Սահակ-Մեսրոպ վարժարանը: 1958ին Զարքայում բացւում է Հեթումեան Ծաղկոցը: 1960ին աւարտւում է Իւզպաշեան Նախակրթարանի եւ Կիւլպենկեան Մանկապարտէզի շէնքի կառուցումը[22]: 1968ին աւարտւում է դպրոցին կից Ս. Թադէոս Եկեղեցու շինարարութիւնը[23]:

Կարեւոր է նաեւ տեղեկանքի այն յիշատակութիւնը, որ Յորդանանում եղել է հայ աւետարանական համայնք՝ ենթակայ Նազովրեցի Եկեղեցուն: Այն 1958ից սկսուած արտագաղթի հետեւանքով դադարել է գոյութիւն ունենալուց: Ունեցել է սեփական ժողովարան ու դպրոց՝ կառուցուած 1953ին:

Ըստ տեղեկանքի՝ 1972ին համայնքում գոյութիւն ունեն հետեւեալ հայկական կազմակերպութիւնները.-

[21] Նոյն, թ. 1-5:
[22] Կառուցուել է ՀԲԸՄ օժանդակութեամբ:
[23] Նոյն, թ. 2-4:

1. Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութիւն, որ ունի շուրջ 100 երկսեռ անդամներ: 1962ից գործում է իր սեփական ակումբում, որը կառուցուել է դպրոցին կից.
2. Ազգային Մարզական Միութիւն, հիմնուել է 1955ին, վարձուած շէնքի մէջ ունի ակումբ, ունի շուրջ 100 անդամ.
3. Հայ Օգնութեան Միութիւն, իրականացնում է աղքատախնամ գործունէութիւն[24]:

Տեղեկանքը նշում է նաեւ հայութեան աշխատանքային ոլորտները.-

Պետական պաշտօնեաներ՝ 47.5%, վաճառականներ՝ 6%, հողագործներ՝ 3.5%, շարժավարներ (վարորդներ)՝ 8.5%, բժիշկներ, ճարտարապետեր՝ 2.5%, թոշակառուներ եւ մեծահասակներ՝ 20%:

Տեղեկանքում տրուած է նաեւ Երուսաղէմի պատրիարքի կողմից նշանակուող, համայնքի ազգային գործերը ղեկավարող Ազգային Խորհրդի կազմը.-

1. Անուշաւան Վրդ. Ձղչանեան, նախագահ
2. Վահէ Ղազարեան, ատենապետ
3. Տիրան Ոսկերիչեան, փոխատենապետ
4. Գէորգ Տագէսեան, ատենադպիր
5. Բիւզանդ Չորպաճեան, գանձապահ
6. Սարգիս Լեփէճեան, խորհրդական
7. Նուպար Գաբրիէլեան, խորհրդական
8. Սարգիս Եկէնեան, խորհրդական

Իդէպ, գաղթօճախի պատմութեան մէջ առաջին անգամն էր, որ Ազգային Խորհրդի կազմը պաշտօնապէս ճանաչուել էր տեղական իշխանութիւնների կողմից[25]:

1919-24 շրջանում են գործել Ապտալլա թագաւորի մօտ աշխատելու հրաւիրուած երեք հայ վարորդներ, որոնցից երկուսը՝ Սերոբ Անթիքաճեանը եւ Սողոմոն Խաչատուրեանը 1972ին տակաւին ապրում էին Ամմանում որպէս յարգուած ազգայիններ[26]: Ըստ տեղեկանքի՝ այս շրջանում գաղութի ակնառու ազգայիններից են եղել.-

1. Սուրէն Էթեմէզեանը, առաջին բժիշկը Ամմանի մէջ.
2. Դանիէլ Եկէնեանը, առաջին ատամնաբուժը Ամմանի մէջ.
3. Յակոբ Պէրպէրեանը, յայտնի վաճառական, լուսանկարիչ Ամմանի մէջ.
4. Հայկ Փելթէքեանը, յորդանանեան բանակի զգեստեղէնի յանձնակատար.

[24] Նոյն, թ. 5:
[25] Նոյն, թ. 7:
[26] Նոյն, թ. 2:

5. Հայկ Չորպաճեանը, յայտնի վաճառական, ժամագործ Ամմանի մէջ.
6. Աւետիս Փանոսեանը, վաճառական, դերձակ Ամմանի մէջ.
7. Մովսէս Ագլճեանը, ընդհ. վաճառական Ամմանի մէջ.
8. Պետրոս Տումանեանը, յայտնի լուսանկարիչ Ամմանի մէջ.
9. Ռուբէն Քեչէճեանը, լուսանկարիչ, յանձնակատար անգլ. ուժերի[27]:

1924-48՝ որպէս նշանակալի իրադարձութիւն նշւում է Յորդանանում առաջին անգամ պտղատու ծառերի եւ բանջարեղէնի մշակութեան յառաջացումը հայերի կողմից: Հայերի սկսած լոլիկի եւ բանջարեղէնի մշակութիւնը հետզհետէ ընդօրինակւում է տեղացի երկրագործների կողմից եւ շուտով դառնում երկրի տնտեսութեան կարեւոր մասերից մէկը:

Այսպիսով, 1972ի տեղեկանքը եւս մէկ վաւերագիր է թէ հայերը Յորդանանում ոչ միայն ազատօրէն կազմակերպել են համայնքային կեանքը, այլեւ աշխուժօրէն ներգրաւուել են երկրի հասարակական, տնտեսական կեանքում:

ՍՀՄԿԿն աշխուժօրէն գործակցել է Իւզպաշեան-Կիւլպենկեան վարժարանի հետ: Արխիւում պահպանուել են վարժարանի տնօրէնուհի Անահիտ Ոսկերիչեանի (Յակոբ Օշականի դուստրը)՝ 1974-79ին ՍՀՄԿԿին ուղարկած նամակները, համաձայն որոնց՝ ՍՀՄԿԿն վարժարանին պարբերաբար ուղարկել է դասագրքեր, ամսագրեր եւ թերթեր[28]:

Արխիւում առկայ է տեղեկանք Իւզպաշեան-Կիւլպենկեան ամէնօրեայ վարժարանի մասին: 1976ին վարժարանի մանկապարտէզը ունեցել է 40, նախակրթարանը՝ 145 աշակերտ: Վարժարանը ունեցել է 10 ուսուցիչ, որից երեքը՝ արաբ: Վարժարանը սերտ կապի մէջ է եղել ԱՄՄի հետ[29]:

1975ին ՍՀՄԿԿն Հայաստան է հրաւիրել Ամմանից 5 եւ Երուսաղէմից 2 երեխայ, ինչպէս նաեւ մէկ ուսուցիչ իւրաքանչիւր համայնքից[30]:

1976ին Հայաստանից Ամման է այցելել զբօսաշրջիկների խումբ: ՍՀՄԿԿին ուղղուած նամակում ԱՄՄի վարչութիւնը գրում է, որ խումբը այցելել է Ժարաշ քաղաքի հռչակաւոր հնութիւնները, Ամմանի հայկական եկեղեցին եւ դպրոցը, ԱՄՄի ակումբը: Իպատիւ հիւրերի տրուած ճաշկերոյթը անցել է ուրախ մթնոլորտում՝ առիթ տալով փոխադարձ մաղթանքների, բաժակաճառերի եւ հայկական երգերի[31]: Նոյն թուականի ամռանը ՍՀՄԿԿի հրաւէրով 10 օրով Հայաստանում է եղել ԱՄՄի ատենապետ Սարգիս Լեփէճեանը: Նրա հետ ՍՀՄԿԿն ԱՄՄի համար ուղարկել է մարզական գոյք, ձայնապնակներ, ֆիլմ[32]:

---

[27] Նոյն, թ. 8:
[28] Նոյն, ց. 8, գ. 127, թ. 2-7:
[29] Նոյն, ց. 14, գ. 207, թ. 8-11:
[30] Նոյն, ց. 8., գ. 127, թ. 34:
[31] Նոյն, թ. 14:
[32] Նոյն, թ. 17-9:

Անահիտ Ոսկերիչեանի 1977 Մարտի 9ի նամակից տեղեկանում ենք, որ Հայաստանից զբօսաշրջական խումբը այցելել է վարժարան՝ աշակերտութեան եւ գաղութի մէջ առաջ բերելով մեծ խանդավառութիւն[33]:

ԱՄՄի վարչութիւնը 10 Օգոստոս 1977 թուակիր նամակով յայտնում է, որ կանոնաւորապէս ստանում են *Հայրենիքի Ձայն*[34], *Հայաստանի Ֆիզկուլտուրնիկ*, *Հայաստանի Աշխատաւորուհի*, *Ծիծեռնակ*, *Գարուն*, եւ *Սովետական Հայաստան* շաբաթաթերթերն ու ամսագրերը[35]: 1977ին ԱՄՄն ՍՀՄԿԿից խնդրել է գրամեքենայ, դաշնամուր, եւ փափաք յայտնել որ արուեստագէտների խումբ ժամանի Ամման: Այս նամակը ՍՀՄԿԿին էին յանձնել ԱՄՄի վարչականներ Ռոստոմ (Հրանտ) Նագգաշեանը եւ Անդրանիկ Լեփէճեանը, ովքեր Սեպտեմբերին տասնհինգ օրով այցելել էին Հայաստան: ՍՀՄԿԿն պատասխանել է, որ 1978ին նախատեսուած է հայրենի արուեստագէտների խմբի գործուղում՝ Յորդանան, եւ որ առաջիկայ երկու տարուայ ընթացքում կ'ուղարկուի դաշնամուրը: Իսկ գրամեքենայի խնդրանքը մերժուել է[36]:

5 Հոկտեմբեր 1977 թուակիր նամակով Կիւլպենկեան մանկապարտէզի պատասխանատու ուսուցչուհի Տիգրանուհի Չքրլքճեանը ջերմօրէն շնորհակալութիւն է յայտնում Հայրենիքում այդ տարի եւս սփիւռքահայ ուսուցիչների կատարելագործման դասընթացները կազմակերպելու համար[37]: Ուսուցիչների՝ Հայաստանում վերապատրաստումը առհասարակ երախտագիտութեամբ էր գնահատւում եւ, անշուշտ, ունենում էր իր դրական արդիւնքները, նոր լիցք հաղորդում սփիւռքահայ ուսուցիչների մանկավարժական գործունէութեանը: Պէտք է նշել, սակայն, որ երբ ՀՀ նախարարների խորհրդի 1990 Դեկտեմբերի 27ի թիւ 846 կարգադրութեամբ ստեղծուեց յանձնախումբ ՍՀՄԿԿի կողմից Սփիւռքի կազմակերպութիւնների, հայկական բարեգործական միութիւնների հետ կապերի զարգացման եւ պահպանման, արժութային գումարների նպատակային ծախսերի հարցերի ուսումնասիրման համար, յանձնախումբը ՍՀՄԿԿի գործունէութեան թերի կողմերի շարքում նշել էր նաեւ, որ անհրաժեշտ մակարդակի վրայ չեն եղել Հայրենիքում վերապատրաստուող ուսուցիչների հետ տարուող աշխատանքները. Հայաստանում գտնուելիս նրանք աւելի շատ զբաղուել են զբօսաշրջութեամբ, քան մասնագիտական որակի բարձրացմամբ, բոլոր

[33] Նոյն, թ. 25:

[34] ՍՀՄԿԿի պաշտօնաթերթ *Հայրենիքի Ձայն* շաբաթաթերթը լոյս է տեսել 1965-96:

[35] ՀԱԱ, ֆոնդ 875, ց. 8, գ. 127, թ. 8:

[36] Նոյն, թ. 35-6:

[37] Նոյն, թ. 38:

ուսուցիչներն ունկնդրել են նոյն դասախօսութիւնը՝ անկախ մասնագիտացումից[38]:

1978ին Արեւելեան Երկրների Բաժնի աշխատանքային ծրագրով նախատեսւում էր նախապատրաստել Իրաք, Սիրիա, Յորդանան յատուկ զբօսաշրջական խմբի մեկնման հարցը, մշակել ծրագիր Պաղտատում, Դամասկոսում եւ Ամմանում հայկական «առաջադիմական» ակումբներում ելոյթներ ունենալու համար[39]: Նախատեսւում էր նաեւ, առաջադիմական կազմակերպութիւնների հրաւէրով, ելոյթների ու հանդիպումների նպատակով Աւստրալիա, Իրաք, Լիբանան, Սիրիա, Յորդանան, Կիպրոս ուղարկել խորհրդահայ արուեստագէտների ու մտաւորականների խմբեր[40]: 1978ին ՍՀՄԿԿի գործունէութեան տարեկան հաշուետուութեան մէջ խօսւում է այն մասին, որ ներկայացուցիչներ են ընդունուել Փարիզի, Ամմանի, Լոնտոնի, Դամասկոսի եւ այլ քաղաքների հայ համայնքներից:

ՍՀՄԿԿն 1978ին Հայաստան էր հրաւիրել Արփինէ Նագգաշեանին եւ Սիրարփի Գալայճեանին: Արխիւում պահպանուել է նամակ, որով Նագգաշեանը եւ Գալայճեանը խնդրում են հրաւիրել նաեւ երկար տարիներ իրենց հետ ազգային գործերով զբաղուած Սաթենիկ Յակոբեանին: Խնդրանքը, սակայն, մերժուել է[41]:

1978ին ՍՀՄԿԿն Ամմանի հայկական ակումբի եւ Վիոլէտ Լեփէճեանի հասցէին ուղարկել է գրքեր եւ պարբերականներ[42]:

1980ին ծրագրուած էր ամռանը արուեստագէտների խմբի այցելութիւնը Մերձաւոր Արեւելքի երկրներ, այդ թւում՝ Ամման: Նոյն թուականին ՍՀՄԿԿն ԱՄՄին նուիրել է դաշնամուր:

1980ին ուղարկուած մի նամակում ԱՄՄն դարձեալ շնորհակալութիւն է յայտնում կանոնաւորաբար գրականութիւն, թերթեր, ամսագրեր, շաբաթաթերթեր եւ օրաթերթեր ստանալու համար: Նոյն թուականին ՍՀՄԿԿն ԱՄՄին նուիրել է դաշնամուր: Այդ տարի ՍՀՄԿԿի կողմից Յորդանանում կազմակերպուել էին դասախօսութիւններ եւ Հայրենիքի հայ մանուկների նկարների ցուցահանդէսներ[43]:

1981ին Յորդանանի գաղթօճախին յատկացուել է Հայաստանում ուսուցիչների վերապատրաստման համար 2 ուսուցչի եւ պիոնէրական ճամբարներում հանգստանալու համար 6 աշակերտի տեղ[44]:

Կարեւոր է Յորդանանի խորհրդային դեսպանատան 1981ի ռուսերէն տեղեկատուութիւնը՝ Իսրայէլի եւ Յորդանանի հայ գաղթօճախների

---

[38] Պետրոսեան, էջ 86-98:
[39] ՀԱԱ, ֆոնդ 875, ց. 8, գ. 157, թ. 2:
[40] Նոյն, թ. 3:
[41] Նոյն, թ. 41:
[42] Նոյն, 43:
[43] Նոյն, ց. 13, գ. 215, թ. 4-6:
[44] Նոյն, թ. 10:

գործունէութեան մասին: Այնտեղ նշւում է, որ Յորդանանի հայութեան թիւը մօտ 3000 է՝ քաղաքներում եւ շրջաններում հետեւեալ բաշխմամբ.-

Ամման՝ մօտ 350 ընտանիք, Զարքա՝ մօտ 30, Իրպիտ՝ մօտ 20, Ռըսէյֆա՝ մօտ 10, Ղոր Սաֆի՝ մօտ 10, Աքապա՝ մօտ 6, Քարաք՝ մօտ 5, Աժլուն՝ մօտ 5 ընտանիք[45]:

Յորդանանի հայ ընտանիքների թիւը, ըստ վայրի եւ թուականի

Տարի	Ամման	Զարքա	Ռըսէյֆա	Իրպիտ	Ղոր Սաֆի	Աքապա	Քարաք	Աժլուն
1970	300	25	10	20	10	6	4	3
1981	350	մօտ 30	մօտ 10	մօտ 20	մօտ 10	մօտ 6	մօտ 5	մօտ 5

1982ի տեղեկանքում նշւում է, որ Երուսաղէմը Իսրայէլի կողմից լրիւ գրաւուելուց յետոյ Երուսաղէմի հայ գաղութի կապը Հայրենիքի հետ ամբողջապէս կատարւում է Յորդանանի ԱՄՄի միջոցով[46]:

ՅՀՀն մեծ ոգեւորութեամբ էր ընդունում յատկապէս Հայաստանից արուեստագէտների այցելութիւնները, որի կապակցութեամբ յաճախ էին խնդրանքներ յղւում ՍՀՄԿԿին: 11 Մարտ 1982 թուակիր նամակով ԱՄՄին տեղեկացւում է, որ Յորդանան են այցելելու երգչուհի Ֆլորա Մարտիրոսեանը, ասմունքող Վլատիմիր Ապաճեանը, դուդուկահար Ճիւան Գասպարեանը[47]:

1982ին ԱՄՄի նոր ատենապետը՝ Վարուժան Սարգսեանը (ընտրուած 1981ին) շնորհակալութիւն է յայտնում Հայաստանում իրենց ցուցաբերուած ջերմ վերաբերմունքի համար: Նոյն թուականին Հայաստանում էր եղել ԱՄՄի Տիկնանց Յանձնախմբի անդամ Արուսեակ Սաֆարեանը: ԱՄՄի վարչութիւնը խնդրում է ՍՀՄԿԿին դիւրութիւններ ստեղծել, որպէսզի Սաֆարեանը բերի հայկական երգ ու պարի ֆիլմեր[48]:

1982ին ՍՀՄԿԿն նախաձեռնել էր սփիւռքահայ մշակութային կազմակերպութիւնների ներկայացուցիչների հաւաք Երեւանում, որին հրաւիրուած էր նաեւ Վարուժան Սարգսեանը: Վերջինս հրաւիրուել է նաեւ 1985ին Երեւանում սփիւռքահայ կազմակերպութիւնների գեղարուեստական խմբերի փառատօնին[49]:

1983ին ՍՀՄԿԿի Արեւելեան Բաժնի կատարած աշխատանքների մէջ նշւում է, որ այդ տարի Եգիպտոսից, Կիպրոսից, Յորդանանից, Սիրիայից եւ Լիբանանից Հայաստան են ժամանել հասարակական գործիչներ, վարժարանի տնօրէններ (բացի կատարելագործման դասընթացների մասնակիցներից)[50]:

---

[45] Նոյն, g. 9, գ. 50, թ. 4-5:
[46] Նոյն, g. 14, գ. 207, թ. 5:
[47] Նոյն, g. 13, գ. 215, թ. 13:
[48] Նոյն, թ. 14-15:
[49] Նոյն, g., 13, գ. 215, թ. 18-24:
[50] Նոյն, g. 16, գ. 6, թ. 1:

ՍՀՄԿԿի 1984ի աշխատանքային ծրագրում նշւում է, որ Խորհրդային Հայաստանի նուաճումներին ծանօթացնելու նպատակով Արեւելեան Երկրների Բաժնի գծով Յորդանանից - ի թիւս այլ համայնքների - ընդունուել է մէկ հոգի 10 օրով[51]: Նոյն ծրագրում նշւում է նաեւ 5 հոգուց բաղկացած արուեստագէտների խմբի 14 օրով Յորդանան գործուղելու մասին (Քուէյթ այցելութեամբ)[52]:

1984ին զբօսաշրջիկների կազմում Ամման է մեկնել *Հայրենիքի Ձայն* շաբաթաթերթի պատասխանատու քարտուղար Հրաչեայ Մաթեւոսեանը[53]:

1985ին ԱՄՄն խնդրել է Յորդանան ուղարկել պարուսոյց: ՍՀՄԿԿն պատասխանել է, որ դեռեւս հնարաւոր չէ բաւարարել այդ խնդրանքը[54]:

Եթէ փորձենք ամփոփել 1976-85 ժամանակահատուածը, կարող ենք նշել, որ 1976ից ՍՀՄԿԿ-ՅՀՀ կապերը սերտացել էին՝ ստանալով սահուն ընթացք. նամակների ոճից, բովանդակութիւնից կարելի է ենթադրել, որ առաւել յստակ էին դարձել փոխադարձ ակնկալիքներն ու կարողութիւնները, որոշ չափով կանխատեսելի էին նաեւ ՍՀՄԿԿի ծրագրերում, տարբեր միջոցառումներում Յորդանանի գաղթօճախին արուելիք յատկացումները:

1986ից ԽՍՀՄը թեւակոխեց նոր՝ «վերակառուցման» փուլ, թէեւ ՍՀՄԿԿն շարունակում էր գործել գաղթօճախների հասարակական-քաղաքական հոսանքները բաժանելով «առաջադիմականների» ու «յետադիմականների»: Մասնաւորապէս 1987 Դեկտեմբերին ՍՀՄԿԿի նախագահ Կարլէն Դալլաքեանը[55] այցելել է Յորդանան եւ Լիբանան: Այցի վերաբերեալ հաշուետուութեան մէջ Դալլաքեանը նշում է, որ Իւզպաշեան-Կիւլպենկեան Վարժարանի տնօրէն եւ համայնքի կրօնական առաջնորդ Հայր Վահան Թոփալեանը խուսափել է իր հետ կապ հաստատելուց եւ ենթադրւում է, որ նա յարում է Դաշնակցութեանը: Դալլաքեանը նշում է նաեւ Ուաթանի ակումբի (ԱՄՄի արաբական անուանումը) ՍՀՄԿԿի հետ կապերը ամրապնդելու անհրաժեշտութեան մասին: Այդ նպատակով նախատեսւում էր 1988ին Ամմանում Ուաթանիի եւ սովետական դեսպանութեան խնդրանքով կազմակերպել հայկական գեղարուեստական եւ փաստագրական ֆիլմերի փառատօն, ինչպէս նաեւ կանոնաւորապէս առաքել պարբերականներ, գրականութիւն, ուսուցողական նիւթեր, տեսագրութիւններ, ձայնագրութիւններ, ինչպէս Ուաթանիին, այնպէս էլ՝ դպրոցներին[56]:

---

[51] Նոյն, g. 16, գ. 176, թ. 3:
[52] Նոյն, թ. 4:
[53] Նոյն, g., 13, գ. 215, թ. 25:
[54] Նոյն, թ. 36:
[55] Նա 1985ին փոխարինել էր Համազասպեանին:
[56] ՀԱԱ, ֆոնդ 875, g. 16, գ. 174, թ. 1:

1988ի երկրաշարժից յետոյ ՍՀՄԿԿն հիմնական ուշադրութիւնը բեւեռեց երկրաշարժից տուժածների համար սփիւռքահայերի օգնութիւնը կազմակերպելու վրայ՝ շարունակելով նաեւ իրականացնել կրթամշակութային ձեռնարկներ:

1988ին արտասահմանեան գործուղումների ծրագրում նշւում է Յորդանանից համայնքային 5 գործիչների 14օրեայ այցելութեան մասին՝ Խորհրդային Հայաստանի նուաճումներին ծանօթանալու նպատակով[57]: Նոյն թուականին նախատեսւում էր արուեստագէտների 5 հոգուց բաղկացած խմբի եւ 1 գրող-գրականագէտի գործուղում Յորդանան՝ 14 օրով[58]:

1989ի աշխատանքային ծրագրում հիմնական գործունէութիւնից զատ նշւում է՝ ընդունել Յորդանանի հայ համայնքի ներկայացուցիչ՝ Հայրենիքի նուաճումներին ծանօթացնելու նպատակով[59]:

ՍՀՄԿԿի 1990ի գործունէութեան վերաբերեալ տարեկան հաշուետուութեան մէջ հիմնական գործունէութիւնից զատ (թերթերի, ամսագրերի առաքում, սփիւռքահայ դիմորդների ընդունելութիւն, մարզական միջոցառումներ եւն.) մշակութային գործունէութեան բաւական հարուստ ցանկում նշւում է Յորդանան, Եգիպտոս, Սիրիա եւ այլ երկրներ արուեստագէտների խմբերի գործուղման մասին[60]:

Մեծ Եղեռնի 75ամեակին նուիրուած միջոցառումներին մասնակցելու նպատակով ՍՀՄԿԿի կողմից Աւստրալիայի, Իսրայէլի, Յորդանանի, Կիպրոսի, Քուէյթի, Արաբական Էմիրութիւնների եւ Սիրիայի հայկական գաղթօճախներ են գործուղուել անուանի պատմաբաններ, հրապարակախօսներ Գէորգ Ղարիբջանեանը, Ստեփան Պօղոսեանը, Սպարտակ Բաղդասարեանը, Գէորգ Էմինը, Լորիս Քալաշեանը, Հրաչիկ Սիմոնեանը, Բագրատ Ուլուբաբեանը եւ Վահան Բայբուրդեանը[61]:

Ամփոփելով, կարող ենք նշել, որ ՍՀՄԿԿի յարաբերութիւնները Յորդանանի հայ գաղթօճախի հետ ունեցել են աւելի հաստատութենական քան թէ անհատական հիմունքներ:

Ժամանակի պահանջով, ցաւօք, այդ յարաբերութիւններից դուրս էր մնում համայնքի «ոչ առաջադիմական» հատուածը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՅՈՐԴԱՆԱՆԱՀԱՅ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ

ՀԱԱում պահպանուել են որոշ տեղեկութիւններ Հայրենիքում բուհական եւ ետբուհական կրթութիւն ստացած երիտասարդների

[57] Նոյն, g.16, գ. 30, թ. 8:
[58] Նոյն, թ. 11:
[59] Նոյն, g. 16, գ. 185, թ. 2:
[60] Նոյն, g. 16, գ. 48, թ. 1-6:
[61] Պետրոսեան:

վերաբերեալ: Եղած տուեալները ամբողջական չեն, սակայն ընդհանուր պատկերացում կազմելու հնարաւորութիւն են տալիս, թէ ինչպէս, ինչ ընթացակարգով էր կազմակերպւում գործընթացը:

Սկզբից եւեթ նշենք, որ ՍՀՄԿԿն իրաւասու չէր համարւում ՀԽՍՀում սփիւռքահայ երիտասարդների ուսման կազմակերպման ու կրթական խնդիրների կարգաւորման համար: Համապատասխան խնդրանքներով նամակներին ՍՀՄԿԿն պատասխանում էր՝ նամակագիրներին ուղղորդելով ՀԽՍՀ բարձրագոյն եւ միջնակարգ կրթութեան նախարարութիւն: Իդէպ, 1960ականների երկրորդ կէսին հաստատուած նոր կարգի համաձայն սահմանւում էր, որ ՀԽՍՀում ուսանել ցանկացող օտարերկրացին պէտք է դիմի բնակութեան պետութիւնում ԽՍՀՄ դեսպանութիւն, որի միջոցով նրա փաստաթղթերը պէտք է ուղարկուեն ՀԽՍՀ[62]:

Արխիւում չեն պահպանուել տեղեկութիւններ յորդանանահայ առաջին ուսանողների վերաբերեալ, սակայն յայտնի է, որ Հայաստանի բուհերում յորդանանահայ երիտասարդները սկսել են ուսանել 1965ից: Այս մասին՝ հիմք ենք ընդունում 1984ին ՍՀՄԿԿին յղուած մի նամակ, որում ԱՄՄն նշում է, որ արդէն 19 տարի է յանձն է առել յորդանանահայ երիտասարդների՝ Հայաստանում ուսանելու հարցը[63]: ԱՄՄի վերաբերեալ 1982ի տեղեկանքում նշւում է, որ անցեալ տարիների ընթացքում ԱՄՄի միջնորդութեամբ բարձրագոյն կրթութիւն ստանալու նպատակով Հայրենիք են ուղարկուել մօտ 100 երիտասարդներ Յորդանանից եւ Երուսաղէմից, որոնցից մօտ 60ը արդէն աւարտել են[64]:

Յորդանանահայ ուսանողների վերաբերեալ պահպանուած նիւթեր կան 1975ից սկսած: ԱՄՄն ՍՀՄԿԿին միջնորդագրով ներկայացնում է ամմանահայ ուսանող Վարդան Լութֆիկ Գարաօղլանեանին, իբրեւ ԱՄՄ երիտասարդ եւ խոստումնալից անդամներից եւ խնդրում, որ նրան համարեն ԱՄՄի ներկայացուցիչը ՍՀՄԿԿի մօտ: Նոյն նամակում ԱՄՄն խնդրում է, որ նրան արտօնութիւն տրուի Երեւանից ԱՄՄի համար բերել կամ ուղարկել երգեհոն[65]: Արխիւում պահպանուել է նաեւ 1975ի մի արտօնագիր առայն, որ յորդանանահայ ուսանող Վահէ Եսայեանին թոյլատրուի Յորդանան տանել ՍՀՄԿԿից Ուաթանի ակումբին նուիրուած գործիքներ[66]:

1979ին ուղարկուած մի նամակում Երուսաղէմի Սրբոց Թարգմանչաց Վարժարանի տեսուչ Հայր Կիւրեղ Գաբիկեանը ՍՀՄԿԿին գրում է, որ

---

[62] Եղիազարեան, Անանեան եւ այլք, էջ 108-09:
[63] ՀԱԱ, ֆոնդ 875, ց. 8, գ. 127, թ. 34:
[64] Նոյն, ց. 14, գ. 207, թ. 8:
[65] Նոյն, ց. 8, գ. 127, թ. 8:
[66] Նոյն, թ. 10:

Երուսաղէմի 5 թեկնածուներից 3ը՝ Անուշ Նագգաշեանը, Մարի Յովսէփեանը եւ Յարութիւն Աղաբէկեանը զրկուել են ԵՊՀում ուսանելու հնարաւորութիւնից: Ամմանից Ս. Լեփէճեանը նախապէս հաղորդել էր, որ նրանք ընդունուել են համալսարան, իսկ արդէն ուսումնական տարուայ սկզբին տեղեկութիւն էր ստացուել, թէ չեն ընդունուել՝ յուսահատութեան մատնելով դիմորդներին: Հայր Գաբիկեանը խնդրում է, որ մերժումը վերջնական չլինի՝ յաւելելով, որ երուսաղէմցի յորդանանահպատակ Մարի Յովսէփեանին եւ Յարութիւն Աղաբէկեանին «*փրկած եմ օտարացման երախէն, Երուսաղէմի հեռաւոր ծայրամասերու մէջ ինկած Հայ պատանիներ են, հեռու հայկական շրջանակէ ու դպրոցէ, խնդրեմ նկատի ունեցէք այս պարագան, ու իրենց հոգիին մէջ մի աղօտէք նոր ծագող Հայրենական արեւը... յետոյ փակաւին իրենց հայրերը այստեղ պաշտօնեաներ են UNRWAի[67] մէջ, իրենց զաւակներու Հայաստանի համալսարան ընդունուիլը օտար շրջանակներու մէջ եւս իր բարերար ազդեցութիւնը պիտի ունենայ Հայկական փրոփականտի տեսակէտէն*»[68]: Չի պահպանուել ՍՀՄԿԿի պատասխան նամակը եւ չգիտենք՝ ինչպէս է լուծուել Մարի Յովսէփեանի եւ Յարութիւն Աղաբէկեանի՝ համալսարան ընդունուելու հարցը, սակայն յետագային բանաստեղծուհի Անուշ Նագգաշեանը, յայտնի է, որ ուսանել է Հայաստանում, 1979-80 կրթաշրջանից:

1980 Յուլիսին ԱՄՄն ՍՀՄԿԿին գրում է, որ յորդանանահայ Հայրապետ Պետրոսի Լեփէճեանը Միութեան անդամներից, կարիք ունի մասնագիտանալու Երեւանի Գեղարուեստաթատերական Ինստիտուտի Կիրառական Արուեստի Բաժնում որպէս փորձնակ: 1972ին նա աւարտել էր վերոնշեալ հիմնարկի նոյն բաժինը, վերադարձել իր բնակավայր եւ լծուել ստեղծագործական բեղուն աշխատանքի: Հաստատելով սեփական արուեստանոցը՝ 8 տարի շարունակ զբաղուել է իր գործով, մասնակցել է արուեստի ցուցահանդէսների, օտար շրջանակներին է ներկայացրել հայրենաշունչ արուեստը: Իր արուեստը կատարելագործելու եւ համայնքին աւելի օգտակար լինելու նպատակով է ցանկացել լծուել փորձնակի խստապահանջ աշխատանքին: ԱՄՄն այս հարցում խնդրում է ՍՀՄԿԿի օգնութիւնը[69]:

1980 Յունիսի 17ի նամակով ԱՄՄն ՍՀՄԿԿին յայտնում է, որ Գրիգոր Կարապետի Գրիգորեանը երեւանաւարտ բժիշկ է: 1979ին աւարտել է Երեւանի Բժշկական Ինստիտուտը, դիմել է մասնագիտանալու Երեւանում եւ ընդունուել, սակայն 5 ամիս չանցած, պատճառ ունենալով հօր ծանր հիւանդութիւնը, ստիպուած է եղել ընդհատել ուսումը եւ վերադառնալ

[67] United Nations' Relief and Work Agency:
[68] ՀԱԱ, ֆոնդ 875, ց. 8, գ. 148, թ. 51-2:
[69] Նոյն, ց. 13, գ. 215, թ. 5:

Յորդանան: Կարճ ժամանակ անց հայրը մահացել է: ԱՄՄն խնդրում է ՍՀՄԿԿի աջակցութիւնը՝ բժիշկ Գրիգորեանին ընդհատուած ուսումը շարունակելու հնարաւորութիւն տալու գործում[70]:

1980 Սեպտեմբեր 30ի նամակով՝ միութեան անդամ, Երեւանի Կարլ Մարքսի Անուան Պոլիտեխնիկական Ինստիտուտի Էլեկտրօտեխնիկական Բաժնի շրջանաւարտ Գէորգ Գրիգորեանը ցանկութիւն է յայտնել շարունակել համալսարանական կրթութիւնը թեկնածուական մակարդակով: Նա Ինստիտուտը աւարտել էր 1977ին, գերազանցիկի դիպլոմով: ԱՄՄն խնդրում է ՍՀՄԿԿի միջամտութիւնը: ՍՀՄԿԿն պատասխանել է, որ խնդրանքը կ'աշխատի բաւարարել 1981ին՝ նախատեսելով Յորդանանին 1 գիտութիւնների թեկնածուի տեղ[71]:

1983 Մայիսին ԱՄՄն դիմել է Յորդանանում ՍՍՀՄ դեսպանատուն, Վարուժան Սանճեանին՝ Հայաստանում կրթութիւն ստանալու հարցով: Սանճեանը սովորել է Իւզպաշեան-Կիւլպենկեան Վարժարանում, սակայն նիւթական դժուարութիւնների պատճառով չի ամբողջացրել միջնակարգ կրթութիւնը: Նա ցանկանում է մշակել ձայնը եւ ժողովրդական պարի դասընթացների հետեւել: ԱՄՄն խնդրում է ՍՀՄԿԿի օժանդակութիւնը, որպէսզի Սանճեանը սովորի երաժշտական դպրոցում կամ Արուեստի Տեխնիկական Ինստիտուտում: ԱՄՄն խիստ դրական է արտայայտւում Սանճեանի անհատականութեան մասին եւ վստահութիւն յայտնում, որ ուսումնառութիւնից յետոյ նա մեծապէս կը նպաստի համայնքում հայկական երգարուեստի եւ ժողովրդական պարերի զարգացմանը[72]: Սանճեանը 1984 Սեպտեմբեր 13ից 1985 Մարտի 31ը Խաչատուր Աբովեանի Անուան Մանկավարժական Ինստիտուտում հետեւել է հայկական եւ դասական պարարուեստի դասընթացներին եւ ստացել փայլուն վկայական: Աւելի ետք, ԱՄՄն խնդրել է հնարաւորութիւն տալ նրան շարունակելու դասընթացները նոյն հիմնարկում կամ Երեւանի Պարարուեստի Ուսումնարանում[73]:

1983-84՝ ուսումնական տարում ԱՄՄի երաշխաւորութեամբ դիմել են հետեւեալ ուսանողները.- Յովհաննէս Կոստիկեան, Թալին Լեփէճեան, Սեպուհ Եսայեան, Սիլվա Եօթնաղբէրեան, Խաչիկ Մազմանեան, Ալին Չաթմաճեան, Լեւոն Պոյաճեան:

ԱՄՄն ՍՀՄԿԿին յայտնում է, որ ընդունման դրական պատասխաններ են ստացել Թալին Լեփէճեանը, Սիլվա Եօթնաղբէրեանը, Խաչիկ Մազմանեանը եւ Լեւոն Պոյաճեանը, իսկ միւսների մասին տեղեկութիւն

[70] Նոյն, թ. 6:
[71] Նոյն, թ. 7-8:
[72] Նոյն, թ. 21-22:
[73] Նոյն, թ. 45:

չունեն եւ խնդրում է լուր ուղարկել[74]: Նոյն նամակում ներփակուած է ՀՍՍՀ բարձրագոյն եւ միջնակարգ կրթութեան նախարարին ուղարկուած նամակ՝ ուսումից դադրեցուած յորդանանահայ ուսանողի ուսումը շարունակելու արտօնութեան խնդրանքով[75]: Իր պատասխան նամակում, ՍՀՄԿԿն յայտնում է թէ դիմել է նախարարութիւն, որը պատասխանել է, որ տուեալ ուսանողը ուսանելու ողջ ժամանակաշրջանում իրեն դրսեւորել է որպէս անկարգապահ, անպարտաճանաչ եւ ցած առաջադիմութիւն ցուցաբերող ուսանող, բազմիցս թոյլ է տուել ՍՍՀՄում արտասահմանցիների բնակուելու կանոնների խախտումներ, մեծ թուով անյարգելի բացակայութիւններ եւ Ինստիտուտի ղեկավարութեան, տեսչարանի աշխատողների բազմաթիւ զգուշացումները որեւէ ներգործութիւն չեն ունեցել նրա վրայ, ուստի՝ ՍՀՄԿԿն չի ընդառաջում ԱՄՄի խնդրանքը[76]:


WATANY SPORTING CLUB
Tel. 73731 - P. O. Box 863
Amman - Jordan

ԱԶԳԱՅԻՆ ՄԱՐԶԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ
ՀԵՌԱԽՕՍ 73731 — ԳՈՒՏԱՐԿ 863
ԱՄՄԱՆ — ՅՈՐԴԱՆԱՆ

20 ՕԳՈՍՏՈՍ 1984

ՊԵԼԱՐԱՆԱԿԱՆ Ա Մ Մ-Ի ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ՆԱԽԱՐԱՐ. ԱՄՄԱՆ - ՅՈՐԴԱՆԱՆ

Ձեզ հայտնի է, որ Հայրենիքի բարձրագոյն ուսումնական հաստատութիւն ընդունելէ առաջ, Ամմանի Ա Մ Մ-ի վարչութեան կողմէ պաշտօնապէս զգուշացուած եւ թելադրուած եմ հետեւեալ կարգապահական հարցերու մասին:

1.- Անցագրէ ուսումնական արտօնագրի գոյութիւն ունենալ մշտապէս ինծի մօտ եւ ներկայացնել ուսումնական դասընթացքներու ընթացքին:

2.- Որեւէ անյարգելի բացակայութիւն չունենալ ուսումնական դասընթացքներուն:

3.- Որեւէ պատճառով ուսումս մշտական դադարեցնելէ եւ մինչեւ վերադարձս Ամման ինծի համար անհրաժեշտ համարուած ամէն գործ կատարելէ:

4.- Ամէն տարի ներկայացնել Ամմանի ներկայացուցչութեան տեղեկագիր իմ ուսումնական առաջադիմութեանս մասին:

5.- Ոչ մէկ ձեւով ներգրաւուիլ քաղաքական գործունէութեան մէջ:

6.- Ամէն տարի Ամման վերադառնալ եւ ներկայանալ Ամմանի Ա Մ Մ-ի վարչութեան:

ՀԱՄԱՁԱՅՆ 22-8-1984
ԱՆՈՒՆ ՈՒ ՀԱՒԱՆԱԿԱՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹԻՒՆ

TEL: 288849

Յակոբ Չաուշեան (Ամման) կը հաստատէ, որ ինք ստորագրած է Թելադրանքներ ԱՄՄի Վարչութեան Կողմէ փաստաթուղթը, որով սահմանուում էին Հայրենիքում ուսանելուն վերաբերող որոշակի կարգապահական կանոններ: 1984ին այն ստորագրել է նաեւ Փոլ Չաուշեանը[78], ով ամենայն հաւանականութեամբ, վերը բերուած ցուցակի 6րդ անձն է: 1984ին ընդունուել է նաեւ Ալին Չաթմաճեանը՝ ոչ

1984-85 կրթաշրջանում Միութեան միջնորդութեամբ Երեւան ուսանելու դիմած 8 հոգուց ընդունուել էին 7ը՝ Անի Պալիոզեան, Լեւոն Մազաքեան, Իսկուհի Գասապեան, Յակոբ Սահակեան, Մովսէս Պապիկեան, Յակոբ Չաուշեան, Սամուէլ Թորոսեան[77]:

Միութեան միջնորդութեամբ ընդունուող երիտասարդները ստորագրում էին «Թելադրանքներ ԱՄՄի Վարչութեան Կողմէ» փաստաթուղթը, որով

[74] Նոյն, թ. 19:
[75] Նոյն, թ. 20:
[76] Նոյն, թ. 23: Եղել են նաեւ այլ պարագաներ, որոնք սակայն վերականգնուել են:
[77] Նոյն, թ. 34:
[78] Նոյն, թ. 32:

ԱՄՄ խողովակով: Նախորդ տարի նա դիմել էր Միութեան միջնորդութեամբ, սակայն չէր ընդունուել:

Արխիւում պահպանուել է նաեւ Արփինէ Նագգաշեանին ուղղուած նամակը թէ՝ նրա դուստրը՝ Անուշը Յորդանանի դեսպանատուն պէտք է ներկայացնի անհրաժեշտ փաստաթղթերը ԵՊՀի թեկնածուականում սովորելու համար[79]:

Հայաստանում ուսումը շարունակելու հարցը դրականօրէն լուծելու կապակցութեամբ 1985 Հոկտեմբեր 23ին շնորհակալական նամակ է ուղել Մալէք Իքի Աղաջ Ռազմիկը (նամակում անուան մօտ գրիչով աւելացուած է՝ Ռ. Մելքոնեան)[80]:

Այսպիսով, ՍՀՄԿԿ-ՅՀՀ գործակցութեան կարեւոր էջերից է յորդանանահայ երիտասարդների՝ Հայաստանում բուհական եւ ետբուհական կրթութիւնը: Յաւելենք, սակայն, որ ՀՀ նախարարների խորհրդի 1990 Դեկտեմբերի 27ի թիւ 846 կարգադրութեամբ ստեղծուած յանձնախումբը ՍՀՄԿԿի գործունէութեան թերի կողմերի շարքում նշել էր նաեւ, որ Հայրենիք ուղարկուող դպրոցականների եւ բուհերում ուսանելու համար առաջադրուած երիտասարդների ընտրութիւնը միշտ չէ, որ կատարուել է առարկայական չափանիշների հիման վրայ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ

Այսպիսով, ՍՀՄԿԿի գործունէութեամբ Հայրենիք-Սփիւռք յարաբերութիւնները թեւակոխեցին որակապէս նոր փուլ: ՍՀՄԿԿի գործունէութիւնը հիմնականում ունէր գաղափարական, քարոզչական ուղղուածութիւն, որը, անշուշտ, պայմանաւորուած էր ԽՍՀՄ պետական համակարգի առանձնայատկութեամբ: Չնայած այդ հանգամանքին՝ ծաւալուած կրթամշակութային ծրագրերը ունեցան կարեւոր նշանակութիւն՝ պահպանելով հայաստանաբնակ հայութեան ու Սփիւռքի միջեւ կենսական կապը եւ ապահովելով անհրաժեշտ հողը յետանկախութեան շրջանում յարաբերութիւնները նոր հարթութիւն տեղափոխելու համար: ՍՀՄԿԿն իր ուրոյն եւ շատ կարեւոր դերն ունեցաւ Յորդանանի հայ համայնքի կեանքում: Դժուար է ասել, թէ այն նոր դիմագիծ հաղորդեց գաղթօճախին, սակայն եղաւ Հայրենիքի հետ կապի հիմնական օղակը, կրթամշակութային ծրագրերով նպաստեց համայնքային կեանքի աշխուժացմանը, հայապահպանութեանը:

Յետանկախութեան առաջին իսկ տարիներից ՍՀՄԿԿն, չնայած իր նոր կանոնադրութիւնը յարմարեցրել էր ստեղծուած պայմաններին, ազատուել գաղափարական սահմանափակումներից, իր առջեւ դրել նոր խնդիրներ, սակայն արդէն ոչ միայն Սփիւռքի հետ յարաբերութիւնների

[79] Նոյն, թ. 38:
[80] Նոյն, թ. 47:

հիմնական կամուրջը չէր, այլեւ այդ յարաբերութիւնները ստանում էին բոլորովին նոր բովանդակութիւն, ինչն էլ յանգեցրեց ՍՀՄԿԿի գործունէութեան դադարեցմանը:

ՅԵՏ ԳՐՈՒԹԵԱՆ

Հաշուի առնելով հանդերձ խորհրդային վարչակարգի բոլոր կաշկանդիչ կամ հայութեան համար ոչ-շահաւէտ կողմերը, այնուամենայնիւ, պէտք է հաստատել, որ ՍՀՄԿԿ-Սփիւռք յարաբերութիւնները Հայրենիք-Սփիւռք յարաբերութիւնների համապատկերում ցայժմ այն սակաւ բնագաւառներից է, որտեղ առաւելապէս պետութիւնն է նպաստել Սփիւռքի խնդիրների լուծմանը:

The Committee of Cultural Relations with Diaspora Armenians and the Jordan Armenians
(Summary)

Hratzin Vardanian
hratsin.vardanyan@mail.ru

The main organizer of cultural relations between Soviet Armenia and Diaspora Armenians was the "The Committee of Cultural Relations with Diaspora Armenians"շ established in 1964 by a state decree. The paper focuses on the cultural relations that developed, between Soviet Armenia and the Armenian community of Jordan between 1964 and the early 1990s.

It highlights the main fields of cooperationշ which included mainly mutual cultural visits such as, participation of Jordan Armenian youth in Soviet Armenia projects on teaching national dances and songs, inviting taechers of Armenian language, literature and history to upgrade their academic knowledge and pedagogical skills, and set meetings with renowned cultural figures.

The paper notes as well that Jordan Armenians participated in pan-Armenian events, like the commemoration of the 75th anniversary of the Armenian Genocide and the invitation of a number of renowned historians and public figures to Jordan. Also on several occasions the Committee sent textbooks to schools as well as documentaries and large photos which reflected the development and progress of the Soviet Armenian economy, life standards and culture.

The paper underlines the fact that at least 100 Jordan Armenian students received their university degrees in Soviet Armenia by majoring in medical sciences or engineering, literature and languages, or the arts.

Սփիւռքահայութեան Հետ Մշակութային Կապի Կոմիտէն եւ Յորդանանահայութիւնը (1964-90)

Հրաժին Վարդանեան
hratsin.vardanyan@mail.ru

ՄՈՒՏՔ

Հայրենիք-Սփիւռք կապերի սերտացման, մշակութային, կրթական ծրագրերի մշակման եւ իրականացման գործում նշանակալի դերակատարում է ունեցել Սփիւռքահայութեան Հետ Մշակութային Կապի Կոմիտէն (ՍՀՄԿԿ), որն ստեղծուեց Հայկական ԽՍՀ նախարարների խորհրդի 1964 Մայիսի 26ի թիւ 226 որոշմամբ[1]: ՀԽՍՀ նախարարների խորհրդի յաջորդ՝ թիւ 227 որոշմամբ նախագահ նշանակուեց պատմաբան Վարդգէս Համազասպեանը[2]: Նոյն թուականի Յունիսի 25ին Երեւանում տեղի ունեցաւ ՍՀՄԿԿի հիմնադիր ժողովը՝ Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգէն Ա.ի եւ Մարտիրոս Սարեանի մասնակցութեամբ: Ընտրուեց 71 հոգուց բաղկացած կոմիտէ, որի կազմից՝ 15 հոգուց բաղկացած նախագահութիւն[3]: ՍՀՄԿԿն ղեկավարւում էր Հայաստանի Կոմունիստական Կուսակցութեան Կենտկոմի կողմից, իսկ Սփիւռքի հետ յարաբերութիւնները կարգաւորւում եւ վերահսկւում էին Խորհրդային Միութեան Կոմունիստական Կուսակցութեան Կենտկոմի կողմից: Կառոյցը ԽՍՀՄի Արտասահմանի Հայրենակիցների Հետ Մշակութային Կապերի Սովետական Ընկերութեան՝ «Ռոդինա»ի, անդամ էր[4] եւ գործեց մինչեւ 1998[5]:

---

[1] Հայաստանի Ազգային Արխիւ (ՀԱԱ), ֆոնդ 875, ց. 1, գ. 2, թ. 1-2:

[2] Նոյն, թ. 3: Վարդգէս Եղիշէի Համազասպեանը եղել է պետական, կուսակցական, կրթական գործիչ, պատմական գիտութիւնների թեկնածու: 1930-48՝ կատարել է կոմերիտական-կուսակցական աշխատանք: 1948-51՝ եղել է Հայաստանի Գրողների Միութեան պատասխանատու քարտուղար, 1951-64՝ Խ. Աբովեանի Անուան ՀՊՄՀ նախագահ: Սփիւռքահայութեան Հետ Մշակութային Կապի Կոմիտէն ղեկավարել է 1964-90ին: Հրատարակել է *Սովետական Հայաստանը Եւ Սփիւռքը*, *Հայրենիքի Պարգեւները Սփիւռքահայ Գործիչներին*, *Սփիւռքահայ Նոր Դափնեկիրները*, *Ալեք Մանուկեան* գրքերը:

[3] Քնարիկ Պետրոսեան, «Սփիւռքահայութեան Հետ Մշակութային Կապի Կոմիտէի Գործունէութեան Պատմութիւնից», *Լրաբեր Հասարակական Գիտութիւնների*, № 3, 2016, էջ 86-98:

[4] ՀԱԱ, ֆոնդ 875, ց. 16, գ. 1, թ. 1:

[5] Համարւում է, որ ՍՀՄԿԿն դադարել է գործել 1998ին, սակայն 1992 Յուլիսից պետական պիւտճէաւորման դադարեցումից յետոյ ՍՀՄԿԿն, փաստօրէն, զրկուել էր իր կանոնադրական խնդիրները կատարելու հնարաւորութիւնից:

ՍՀՄԿԿն հիմնադիր համագումարում հաստատուած կանոնադրութեան մէջ, իր առջեւ խնդիր էր դրել.-

1. Հաստատել եւ զարգացնել կապերը սփիւռքահայ գաղթօճախների հետ.
2. Գաղթօճախների հայութեանը ծանօթացնել Հայրենիքի կեանքի, ձեռքբերումների, գիտութեան ու մշակոյթի հետ.
3. Գաղթօճախների հայութեան մէջ սերմանել հայրենասիրութիւն.
4. ՀԽՍՀի աշխատաւորներին ծանօթացնել գաղթօճախների, առաջադիմական կազմակերպութիւնների, ձուլման դէմ պայքարի եւ Հայրենիք-Սփիւռք յարաբերութիւնների զարգացմանն ուղղուած աշխատանքներին[6]:

ՍՀՄԿԿն գործունէութիւնն իրականացնում էր իր կազմում առկայ տարածաշրջանների հայ համայնքների հետ կապերի բաժինների միջոցով, որոնցից մասնաւորապէս Ասիայի եւ Ափրիկէի Հայկական Գաղթօճախների Հետ Կապերի Բաժինը, որը կոչւում էր նաեւ Արեւելեան Երկրների Բաժին, ի թիւս այլ երկրների, իրականացնում էր Յորդանանի հայ համայնքի (ՅՀՀ) հետ տարուող աշխատանքները:

ՍՀՄԿԿի եւ ՅՀՀի փոխյարաբերութիւնների ուսումնասիրութեան համար հիմնականում օգտուել ենք ՍՀՄԿԿի՝ Հայաստանի Ազգային Արխիւում (ՀԱԱ) պահպանուող նիւթերից: Դրանք ներառում են ՍՀՄԿԿի տարեկան աշխատանքային ծրագրեր, հաշուետուութիւններ, ՅՀՀի վերաբերեալ տարբեր թուականների կազմուած տեղեկանքներ: ՀԱԱում պահպանուել են նաեւ ՍՀՄԿԿին կամ նրա կողմից Յորդանանում գործընկեր կազմակերպութիւններին ուղղուած՝ կրթական, մշակութային տարբեր ծրագրերի վերաբերող, ինչպէս եւ անձնական, շնորհակալական նամակներ: Առկայ նիւթերը թուագրւում են 1964ից սկսած մինչեւ 1990[7]:

ՍՀՄԿԿ-ՅՀՀ յարաբերութիւններում նկատելի են կապերի հաստատման, ամրապնդման, սերտացման փուլերը: ՍՀՄԿԿի հիմնական գործընկեր կազմակերպութիւնը Յորդանանում Ամմանի Ազգային Մարզական Միութիւնն (ԱՄՄ) էր[8]: Հայաստանում ուսուցիչների վերապատրաստման, պիոնէրական ճամբարներում աշակերտների

---

[6] ՀԱԱ, ֆոնդ 875, ց. 1, գ. 2, թ. 1-3:

[7] ՍՀՄԿԿի եւ յորդանանահայութեան յարաբերութիւնների համար 1964-90 կտրուածքը վերցրել ենք՝ պայմանաւորուած այս հանգամանքով:

[8] Հիմնուել է 1955ին Ռամկավար Ազատական Կուսակցութեան հովանու ներքոյ եւ գործում է առ այսօր: Զբաղւում է մարզական ու մշակութային գործունէութեամբ: Միութեանը կից գործել են «Յակոբ Պարոնեան» թատերախումբը, «Մասիս» նուագախումբը: Միութեանը կից գործում է տիկնանց յանձնախումբ, որը պարբերաբար կազմակերպում է զանազան միջոցառումներ («Յորդանան», *Հայ Սփիւռք Հանրագիտարան*, Երեւան, Տիգրան Մեծ Հրատ., 2003, էջ 368):

հանգստանալու, երիտասարդների՝ Հայաստանի բարձրագոյն ուսումնական հաստատութիւններում (ԲՈՒՀ) ուսանելու, կրթական եւ մշակութային ծրագրերը մեծ մասամբ կազմակերպւում էին ԱՄՄի միջոցով:

ՍՀՄԿԿն իր գործունէութիւնը մեկնարկեց Սփիւռքի գաղթօճախների ուսումնասիրութեամբ, եւ յետագայում էլ այդ գործունէութիւնը հիմնւում էր գաղթօճախների, կազմակերպութիւնների, դպրոցների, միութիւնների վերաբերեալ պարբերաբար թարմացուող այդ տեղեկանքների վրայ: Դրանք պարունակում են համայնքների վերաբերեալ բաւական արժէքաւոր տեղեկութիւններ: Պահպանուել է, օրինակ, Յորդանանի հայ համայնքի վերաբերեալ առաջին՝ 1964ի տեղեկանքը, որում խիստ ընդհանրական գծերով ներկայացւում է համայնքի ձեւաւորման պատմութիւնը, նկարագիրը, կացութիւնը: Մասնաւորապէս նշւում է, որ հայութեան թուաքանակը Յորդանանում կազմում է 24,000, որից մօտ 20,000ը բնակւում է Երուսաղէմում, մնացեալը՝ Ամմանում եւ այլ քաղաքներում:

Սփիւռքի գաղթօճախների հետ ՍՀՄԿԿի աշխատանքները սկսեցին աշխուժանալ 1965ից: Այդ տարուայ աշխատանքային ծրագրում արձանագրւում էր.-

1. Սփիւռքահայ կազմակերպութիւնների ու անհատ գործիչների հետ կապերի ընդլայնում (ընդ որում՝ առանձնայատուկ ուշադրութիւն Ասիայի եւ Ափրիկէի երկրների հետ կապերի ընդլայնմանը: Այդ նպատակով Ափրիկէի եւ Ասիայի երկրների բարեկամական կազմակերպութիւններին ուղարկելու նպատակով, պատրաստել արդիւնաբերութեանը, գիւղատնտեսութեանը, առողջապահութեանը, գիտութեանը ու մշակոյթին նուիրուած (անգլերէն, ֆրանսերէն, արաբերէն) լուսանկարներ).
2. Սովետական լայն հասարակայնութեանը արտասահմանի հայութեան կեանքին ծանօթացում.
3. Սփիւռքահայ երիտասարդութեան՝ Հայրենիքի հետ կապերի ամրապնդում եւ ընդլայնում.
4. Ընդհանուր միջոցառումներ.
5. Հայ կանանց կազմակերպութիւնների հետ կապերի ընդլայնում[9]:

1965ի նախագահական նիստերի արձանագրութիւնների մէջ նշւում է, որ վերապատրաստման նպատակով 14 երկրներից հրաւիրուելու է 35 ուսուցիչ՝ ընդ որում՝ 1 հոգի Յորդանանից[10]:

[9] ՀԱԱ, ֆոնդ 875, ց. 1, գ. 48.
[10] Նոյն, ց. 1, գ. 26, թ. 20:

ՍՀՄԿԿի գործունէութեան մէջ առանցքային նշանակութիւն ունէր փոխայցելութիւնների կազմակերպումը՝ փոխադարձ ճանաչողութեան նպատակով: Դրանց շնորհիւ աշխուժացան կապերը Հայրենիքի եւ Սփիւռքի միջեւ: Հայաստան այցելեցին այս կամ այն սփիւռքեան «առաջադիմական» կազմակերպութիւնը ներկայացնող սփիւռքահայեր, արուեստի, մշակոյթի գործիչներ: Այցելած հիւրերին ՍՀՄԿԿն ներկայացնում էր ՀԽՍՀ նուաճումները, մշակոյթի, արուեստի եւ գիտութեան առաջընթացը:

Փոխադարձաբար՝ Սփիւռքի գաղթօճախներ էին այցելում մշակոյթի, արուեստի եւ գիտութեան ներկայացուցիչներ ՀԽՍՀից, որոնց հիմնական նպատակը տեղերի «առաջադիմական» կազմակերպութիւնների հետ կապերի ամրապնդումն էր: 1966ին ՍՀՄԿԿի միջնորդութեամբ ՅՀՀ են այցելել վաստակաշատ գիտնականներ, ձեռագրագէտներ Լեւոն Խաչիկեանը եւ Սէն Արեւշատեանը: Նրանց նկատմամբ ցուցաբերուած սիրալիր վերաբերմունքի համար ՍՀՄԿԿն շնորհակալական նամակ է յղել ԱՄՄին:

Արխիւում առկայ է 1967-68ի հրաւէրների եւ գործուղումների ծրագիրը, ըստ որի 1967ին նախատեսւում էին.-

1. Հայաստան հրաւիրել Միջին Արեւելքից՝ Լիբանան, Սիրիա, Եգիպտոս, Յորդանան, մշակութային գործիչների 10 հոգուց բաղկացած մի խումբ.
2. Հայաստանի լուսաւորութեան նախարարութեան աշխատողների եւ ուսուցիչների 10 հոգուց բաղկացած խմբի գործուղում նոյն երկրներ՝ հայ դպրոցներին մանկավարժական օգնութիւն ցոյց տալու նպատակով.
3. Հայ բանահիւսութեան երկու մասնագէտների եւ մէկ բանահաւաքի գործուղում՝ նոյն երկրներ՝ բանահիւսական նիւթեր եւ չքացող բարբառների նմուշներ հաւաքելու նպատակով.
4. Սովետահայ լրագրողների 10 հոգուց բաղկացած մի խմբի գործուղում՝ նոյն երկրներ՝ ծանօթանալու տեղի լրագրական աշխատանքներին:

1968ի հրաւէրների եւ գործուղումների ծրագրով նախատեսւում էին.-

1. Դէպի Միջին Արեւելք գործուղել գրողների եւ մշակութային գործիչների 10 հոգուց բաղկացած խումբ.
2. 3 գիտնականի եւ բանասէրի գործուղել Լիբանան եւ Յորդանան՝ հնատիպ գրքերի եւ ձեռագրերի ուսումնասիրման եւ փոխանակման համար[11]:

[11] Նոյն, g. 2, գ. 14:

Արխիւային նիւթերում տեղեկութիւններ չեն պահպանուել վերոնշեալ ծրագրի իրականացման ընթացքի եւ արդիւնքների մասին, սակայն նախատեսուած միջոցառումների ցանկը թոյլ է տալիս ասել, որ ՍՀՄԿԿն ջանում էր զարկ տալ գաղթօճախի հետ փոխյարաբերութիւնների զարգացմանը: 1967ը ուշագրաւ է նաեւ Հայաստանում պիոնէրական ճամբարներում հանգստանալու համար Յորդանանի համար նախատեսուած տեղերի քանակով. յատկացուել էր 10 տեղ, որը համայնքի համեմատականով բաւական բարձր թիւ էր[12]: Սա գուցէ հետեւանք էր 1967ի արաբ-իսրայէլեան պատերազմի, քանի որ սովորաբար՝ յետագայ տարիներին յատկացւում էր մէկից վեց տեղ: Նշենք, որ պիոնէրական ճամբարներում հանգստանալու համար հրաւիրուող աշակերտների քանակի վերաբերեալ ԱՄՄն պատասխան նամակներում յաճախ էր խնդրում յատկացուած քանակը մեծացնել[13]: ՍՀՄԿԿն, սակայն, միշտ չէ որ կարողանում էր կատարել խնդրանքը:

ՀԱԱում պահպանուել է 1969ին Յորդանանում ՍՍՀՄ դեսպանութիւնից ՍՀՄԿԿին ուղարկուած նամակը, որում նշւում է, որ Յորդանանում - չհաշուած Իսրայէլի կողմից գրաւուած տարածքները - ապրում է 470 հայ ընտանիք՝ մօտ 2350 հայ, որոնցից 320ը Ամմանի եւ Զարքայի հայկական դպրոցների աշակերտներ են: Համայնքային խորհուրդը դիմել էր սովետական դեսպանութեանը հետեւեալ խնդանքներով.-

1. Հայաստանից ուղարկուեն ուսողութեան, բնագիտութեան, պատմութեան դասագրքեր, ինչպէս նաեւ ընթերցանութեան գրքեր նախադպրոցական տարիքի երեխաների համար.
2. Ֆիլմեր եւ սահիկներ.
3. Այցելեն հասարակական գործիչներ, գրողներ, երաժիշտներ, մարզիկներ, ովքեր դասախօսութիւններ կը կարդան հայ գրականութեան, բանաստեղծութեան, պատմութեան վերաբերեալ.
4. Ամէն տարի մինչեւ 20 աշակերտներ՝ 10-15 տարեկան, հանգստանան պիոնէրական ճամբարներում.
5. 1969ի ամռանը ուսուցիչների վերապատրաստմանը մասնակցեն 3-4 ուսուցիչ.
6. Ուղարկուեն դաստիարակներ՝ մանկապարտէզների համար.
7. Ուղարկուեն լուսանկարչամեքենայ, լուսանկարներ[14]:

1969ին ԱՄՄն խնդրել էր Հայաստան հրաւիրել իր բասկէտբոլի խումբը, որը նախկինում եղել էր Յորդանանի ախոյեանը[15]:

---

[12] Նոյն, թ. 32:
[13] Նոյն, g. 8, գ. 127, թ. 13:
[14] Նոյն, g. 2, գ. 36, թ. 25-6:

ՍՀՄԿԿի կողմից սփիւռքահայ ուսուցիչների կատարելագործման դասընթացներին մասնակցելու համար Յորդանանի դպրոցներից ե՛ւ 1970ին[16], ե՛ւ 1971ին[17] հրաւիրուել է մէկ ուսուցիչ, իսկ 1972-73ին իրականացուած աշխատանքների վերաբերեալ արխիւային նիւթերում մեզ չյաջողուեց գտնել որեւէ հաշուետուութիւն կամ նամակ:

Արխիւում նիւթեր կան 1975ի ԱՄՄի վերաբերեալ[18]: Տրուած է ակումբի վարչութեան կազմը, գործող խմբակները, ընդհանուր նկարագիրը եւ կարգավիճակը: Տեղեկանքում նշւում է, որ Ամմանի Իւզպաշեան-Կիւլպենկեան Վարժարանն ու ԱՄՄն Հայրենիքից կանոնաւորապէս ստանում են դասագրքեր, գրենական պիտոյք, երաժշտական գործիքներ, գեղարուեստական գրականութիւն, թերթեր եւ ամսագրեր:

Այսպիսով, 1969ին Յորդանանում ՍՍՀՄ դեսպանութիւնից ուղարկուած վերոնշեալ նամակում Համայնքային Խորհրդի կողմից ներկայացուած խնդրանքները, ինչպէս նաեւ 1970-75ի գործունէութեան աղքատիկ տուեալները յուշում են, որ գաղթօճախը մեծապէս կարիք էր զգում առաւել աշխուժ փոխյարաբերութիւնների: Պէտք է նշել, որ 1970-75ի տեղատուութիւնը զգալի է ոչ միայն Յորդանանի հայ գաղթօճախի հետ տարուող աշխատանքների, այլեւ առհասարակ ՍՀՄԿԿի ողջ գործունէութեան մէջ[19]:

Պահպանուել է Յորդանանի հայ գաղթօճախի վերաբերեալ 1971ի տեղեկանքը, որը ուշագրաւ է Հայրենիք-Սփիւռք յարաբերութիւններում շատ կարեւոր հարցին՝ հայրենադարձութեանը արուած անդրադարձով. նշւում է, որ Յորդանանից զանգուածային հայրենադարձութիւն տեղի չի ունեցել եւ 1948ին հայրենադարձուել է ընդամէնը 3 ընտանիք: Ըստ տեղեկանքի 1970ին համայնքում եղել է մօտ 2350 հայ, հետեւեալ մանրամասնութեամբ.-

Ամմանում՝ 300 ընտանիք, Զարքայում՝ 25, Ռըսէյֆայում՝ 10, Իրպիտում՝ 20, Ղոր Սաֆիում՝ 10, Աքապայում՝ 6, Քարաքում՝ 4, Աժլունում՝ 3:

Գաղթօճախի վերաբերեալ 1972ի տեղեկանքը[20] նախորդ տարիների տեղեկանքների համեմատ առանձնանում է բաւական հարուստ բովանդակութեամբ:

---

[15] Նոյն, g. 4, գ. 366:

[16] Նոյն, թ. 5:

[17] Նոյն, g. 8, գ. 127, թ. 19:

[18] Նոյն, g.14, գ. 207, թ. 6-8:

[19] Ա. Եղիազարեան, Մ. Անանեան եւ այլք, *Հայրենիք-Սփիւռք Յարաբերութիւնները. 1918 Թուականից Մինչեւ Մեր Օրերը*, Երեւան, ԵՊՀ Հրատ., 2017, էջ 112:

[20] ՀԱԱ, ֆոնդ 875, g.14, գ. 201:

Ըստ տեղեկանքի հայութեան թիւը, որն իդէպ չի համապատասխանում նախորդ տեղեկանքում նշուածին, 1914-71 ժամանակահատուածում ունեցել է հետեւեալ պատկերը.-

1. 1914ից մինչեւ 1919ի վերջը՝ 25-30,000.
2. Մինչեւ 1948 նուազել է հասնելով 70 ընտանիքի.
3. 1948-56՝ հասել է աւելի քան 5000 հոգու.
4. 1970ին՝ եղել է 1800 հոգի.
5. 1971ին՝ 1800, որից 1500ը լուսաւորչական, 300ը՝ կաթողիկէ[21]:

Յորդանանահայերի թուաքանակը տարբեր տարիների

Տարի	քանակ
1914-19	25-30,000
--1948	70 ընտանիք
1948-56	5000
1970	1800
1971	1800

Տեղեկութիւն կայ նաեւ համայնքի հայկական դպրոցների, եկեղեցիների մասին: Այսպէս, 1924ին Յակոբ Պէրպէրեանի նախաձեռնութեամբ 12 հայ ընտանիքներից հանգանակութիւն է կատարւում եւ հիմնւում է Ամմանի առաջին հայկական մանկապարտէզը, որը յետագայում ընդարձակուելով վեր է աճւում նախակրթարանի: Վարժարանը բարերարի անունով կոչուել է Հեթումեան Ազգային Վարժարան: 1958ին Ամմանում կառուցւում է հայ կաթողիկէ համայնքի Սուրբ Վերափոխման եկեղեցին եւ Սահակ-Մեսրոպ վարժարանը: 1958ին Զարքայում բացւում է Հեթումեան Ծաղկոցը: 1960ին աւարտւում է Իւզպաշեան Նախակրթարանի եւ Կիւլպենկեան Մանկապարտէզի շէնքի կառուցումը[22]: 1968ին աւարտւում է դպրոցին կից Ս. Թադէոս Եկեղեցու շինարարութիւնը[23]:

Կարեւոր է նաեւ տեղեկանքի այն յիշատակութիւնը, որ Յորդանանում եղել է հայ աւետարանական համայնք՝ ենթակայ Նազովրեցի Եկեղեցուն: Այն 1958ից սկսուած արտագաղթի հետեւանքով դադարել է գոյութիւն ունենալուց: Ունեցել է սեփական ժողովարան ու դպրոց՝ կառուցուած 1953ին:

Ըստ տեղեկանքի՝ 1972ին համայնքում գոյութիւն ունեն հետեւեալ հայկական կազմակերպութիւնները.-

[21] Նոյն, թ. 1-5:
[22] Կառուցուել է ՀԲԸՄ օժանդակութեամբ:
[23] Նոյն, թ. 2-4:

1. Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութիւն, որ ունի շուրջ 100 երկսեռ անդամներ: 1962ից գործում է իր սեփական ակումբում, որը կառուցուել է դպրոցին կից.
2. Ազգային Մարզական Միութիւն, հիմնուել է 1955ին, վարձուած շէնքի մէջ ունի ակումբ, ունի շուրջ 100 անդամ.
3. Հայ Օգնութեան Միութիւն, իրականացնում է աղքատախնամ գործունէութիւն[24]:

Տեղեկանքը նշում է նաեւ հայութեան աշխատանքային ոլորտները.-

Պետական պաշտօնեաներ՝ 47.5%, վաճառականներ՝ 6%, հողագործներ՝ 3.5%, շարժավարներ (վարորդներ)՝ 8.5%, բժիշկներ, ճարտարապետեր՝ 2.5%, թոշակառուներ եւ մեծահասակներ՝ 20%:

Տեղեկանքում տրուած է նաեւ Երուսաղէմի պատրիարքի կողմից նշանակուող, համայնքի ազգային գործերը ղեկավարող Ազգային Խորհրդի կազմը.-

1. Անուշաւան Վրդ. Ձղչանեան, նախագահ
2. Վահէ Ղազարեան, ատենապետ
3. Տիրան Ոսկերիչեան, փոխատենապետ
4. Գէորգ Տագէսեան, ատենադպիր
5. Բիւզանդ Չորպաճեան, գանձապահ
6. Սարգիս Լեփէճեան, խորհրդական
7. Նուպար Գաբրիէլեան, խորհրդական
8. Սարգիս Եկէնեան, խորհրդական

Իդէպ, գաղթօճախի պատմութեան մէջ առաջին անգամն էր, որ Ազգային Խորհրդի կազմը պաշտօնապէս ճանաչուել էր տեղական իշխանութիւնների կողմից[25]:

1919-24 շրջանում են գործել Ապտալլա թագաւորի մօտ աշխատելու հրաւիրուած երեք հայ վարորդներ, որոնցից երկուսը՝ Սերոբ Անթիքաճեանը եւ Սողոմոն Խաչատուրեանը 1972ին տակաւին ապրում էին Ամմանում որպէս յարգուած ազգայիններ[26]: Ըստ տեղեկանքի՝ այս շրջանում գաղութի ակնառու ազգայիններից են եղել.-

1. Սուրէն Էթեմէզեանը, առաջին բժիշկը Ամմանի մէջ.
2. Դանիէլ Եկէնեանը, առաջին ատամնաբուժը Ամմանի մէջ.
3. Յակոբ Պէրպէրեանը, յայտնի վաճառական, լուսանկարիչ Ամմանի մէջ.
4. Հայկ Փելթէքեանը, յորդանանեան բանակի զգեստեղէնի յանձնակատար.

[24] Նոյն, թ. 5:
[25] Նոյն, թ. 7:
[26] Նոյն, թ. 2:

5. Հայկ Չորպաճեանը, յայտնի վաճառական, ժամագործ Ամմանի մէջ.
6. Աւետիս Փանոսեանը, վաճառական, դերձակ Ամմանի մէջ.
7. Մովսէս Ագլճեանը, ընդհ. վաճառական Ամմանի մէջ.
8. Պետրոս Տումանեանը, յայտնի լուսանկարիչ Ամմանի մէջ.
9. Ռուբէն Քեչէճեանը, լուսանկարիչ, յանձնակատար անգլ. ուժերի[27]:

1924-48՝ որպէս նշանակալի իրադարձութիւն նշւում է Յորդանանում առաջին անգամ պտղատու ծառերի եւ բանջարեղէնի մշակութեան յառաջացումը հայերի կողմից: Հայերի սկսած լոլիկի եւ բանջարեղէնի մշակութիւնը հետզհետէ ընդօրինակւում է տեղացի երկրագործների կողմից եւ շուտով դառնում երկրի տնտեսութեան կարեւոր մասերից մէկը:

Այսպիսով, 1972ի տեղեկանքը եւս մէկ վաւերագիր է թէ հայերը Յորդանանում ոչ միայն ազատօրէն կազմակերպել են համայնքային կեանքը, այլեւ աշխուժօրէն ներգրաւուել են երկրի հասարակական, տնտեսական կեանքում:

ՍՀՄԿԿն աշխուժօրէն գործակցել է Իւզպաշեան-Կիւլպենկեան վարժարանի հետ: Արխիւում պահպանուել են վարժարանի տնօրէնուհի Անահիտ Ոսկերիչեանի (Յակոբ Օշականի դուստրը)՝ 1974-79ին ՍՀՄԿԿին ուղարկած նամակները, համաձայն որոնց՝ ՍՀՄԿԿն վարժարանին պարբերաբար ուղարկել է դասագրքեր, ամսագրեր եւ թերթեր[28]:

Արխիւում առկայ է տեղեկանք Իւզպաշեան-Կիւլպենկեան ամէնօրեայ վարժարանի մասին: 1976ին վարժարանի մանկապարտէզը ունեցել է 40, նախակրթարանը՝ 145 աշակերտ: Վարժարանը ունեցել է 10 ուսուցիչ, որից երեքը՝ արաբ: Վարժարանը սերտ կապի մէջ է եղել ԱՄՄի հետ[29]:

1975ին ՍՀՄԿԿն Հայաստան է հրաւիրել Ամմանից 5 եւ Երուսաղէմից 2 երեխայ, ինչպէս նաեւ մէկ ուսուցիչ իւրաքանչիւր համայնքից[30]:

a) **Apathy**: People in the region in general feel they are neither part of the decision making bodies nor involved in their processes. They perceive themselves as ruled rather than sharing responsibility due to the political structure of governments and states. In fact, being part of minorities accentuates such feelings of apathy, which is already pervasive in society at large. The feeling of apathy, that no results can be achieved in the general Jordanian mainstream, also exists within the community itself.

b) **Condescension**: "Who do they think they [Jordanians] are" attitude? They can't be changed. This gives a feeling of alienation from participation in activities of general public benefit.

c) **Entrepreneurial Upbringing**: Armenians are brought up to value private, self-owned businesses and jobs, shying away from public employment. This mindset becomes into a general attitude of non-participation.

d) **Fear**: Domestic life throughout the 1960s and up to the 1980s encountered difficult and challenging political years, when authorities showed almost zero tolerance towards political activities, as well as social and economic endeavors that danced out of tune with the official music. This resulted in marginalizing citizens, particularly minority groups.

e) **Post-Genocide survival syndrome**: The push by formal Armenian civil society (clubs, schools, church, and organizations) as well as families for preservation of Armenian culture, language and art, caused community members to cocoon themselves, as if everything outside their in-group was only a resource for living. This caused a narrow view of society in general with a focus on mainly Armenian issues, and as a result, undermined participation in public affairs as having no significance or importance.

f) **Sense of belonging**: Coming from a rich history and culture gave community members the feeling that they belonged to another place and time. Such an approach distanced Armenians from the mainstream community, and also contributed to the feeling of belonging to some other place, time and milieu. This perception was reflected in the feeling and behavior that work in and for public affairs, spaces and causes belongs to others and is the responsibility of other groups, communities and individuals.)

BENEFITS OF GETTING INVOLVED

There is no doubt that citizen participation in public affairs is of great importance to both minority and mainstream individuals and communities. One may argue that minorities have more concerns and reasons to get involved than mainstream communities, as in-groups are preoccupied with the protection of their sociocultural, economic and political interests.

It is more likely that public exposure and involvement would offer minority representatives further opportunities to establish their presence and impact policy.

The small size of the Jordan Armenian community is not an excuse for meagre participation. Unlike the Armenians of the USA, France, Canada and Russia, Jordan Armenians have not undergone the critical transformation which would enable them to get involved actively in public life.

FUTURE TRENDS: NO GREATER PARTICIPATION

Bearing in mind the falling number of Armenians in Jordan, the prospects of future involvement are very limited. The main efforts of the community leaders are likely to further concentrate on cultural activities, mainly organized

by Armenians and addressed to Armenians. Very few activities aim to reach out and share Armenian culture and history with out-groups.

It is beyond the purpose of this paper to discuss the perception of out-groups of minority group activities. Yet this is a serious point that minority community leaders should pay more attention to.

In light of the small size of the Jordan Armenian community, and due to lack of extensive cooperation between its members and organizations, it has become imperative to exert extra efforts to achieve more.

Having said that, what has been achieved and is being done currently is commendable considering the limitations. But I believe more needs to be done.

Without addressing the causes of non-participation and without having a strategic plan at the community level, one can hardly see a positive trend of increase in public life engagement.

HOW CAN MORE PARTICIPATION BE ENCOURAGED

Little success may be expected from such a small community, especially when the leadership and followers cannot work together. Currently the community is fragmented, and there is even negative competition between community organizations. Nevertheless, improvement and change are possible.

Schooling could contribute to greater contact with others. The fact that the Armenian school is at the elementary level only means the graduates have to continue their secondary studies in non-Armenian schools, an adequate bridge to open up and integrate.

Participation needs strategic goals, objectives, agenda, incentives, new ideas, and drive. It seems the path that will make this possible is to reorganize the community itself with an unconventional vision in mind. The "what's in it for **ME**?" has to be combined with a greater "what's in it for **US**?"

A community-level, extensive strategic plan has to be put in place although encouraging participation and getting results do not happen overnight.

On another point, community representation needs to be revised and the feeling that community members have a say in community affairs should be translated into tangible reality. This transformation should result in a mode of work that produces better results.

For the past seventy years the community has been comprised of five organizations and institutions: The School, HOM, HOMENETMEN, Watani Sporting Club, The church (hosts appointed community "taghagan khorourt").

Strategic shifts in community policies are needed:

- We need to change focus on what is of interest to any community; the way the community represents itself needs reshaping. Currently the community is run by a representative body that is appointed rather than elected. It is

not based on a civic foundation, but on a secular understanding. The *Taghagan Khorourt* (neighborhood council) is the only officially recognized body. The Jerusalem Patriarchate has the upper hand in Armenian community affairs, though *de facto* it is in another state!!

- To share a personal observation, I want to point out that there is a trend among Christian Jordanians to refuse to be called a minority or sect, and they refuse to be officially recognized by the government through a religious figure, a bishop or patriarch. Work is being done to form a representative body of Jordanian Christians using a cross-sectional approach that brings together Christian religious denominations and involves no religious figures. It would be a lay organization representing the political, social and economic interests of Christian Jordanians as part of civil society. Needless to say, churches, government and the old-guard are fighting the idea as it shakes current and conventional power bases. It is convenient for governments to categorize minorities into religious sects, thus enabling religious institutions to enjoy the monopoly of representation. In a sense, most of what is mentioned in this paper applies also to other small communities across Jordan, including Jordanian Christians.
- The mode of representation has to be changed. This has to start by separating the school administration from its overshadowing church authority. This might result in having five independent bodies/institution in the community, each with its elected board.
- During the process of the board election, the voters should elect an additional person (persons) as the representative of the sub-group in the Community Representative Board (CRB). Also, each board of the five independent bodies/institutions in turn might nominate/appoint/elect a member from among their board to represent it on the CRB. Thus, we would have pan-community representation on the CRB, which should direct, co-ordinate and resolve pan-community affairs. Such a CRB, elected with widespread grassroots support would be legitimized to devise and generate a strategic plan and a path towards community coherence, with diverse multi-oriented objectives including extensive participation in public life with a string attached to the community.

P.S. Having raised the above concerns, one may ask to what extent the community is open to innovative ideas and activities, whether it is realistically capable of providing a relevant number of volunteers to do the job, and to what extent the state system encourages public or outgroup volunteering.

Յորդանահայերու Մասնակցութիւնը Հանրային Կեանքին (Ամփոփում)

Վիգէն Ասլանեան
artteko@orange.jo

Հանրային կեանքի մասնակցութիւնը կը սահմանուի անհատին՝ հանրային օգտակարութիւն ունեցող կառոյցի մէջ կամաւոր կամ վճարովի աշխատանքով:

Զեկոյցը կը ծանրանայ հայերու մասնակցութեան՝ Յորդանանի հանրային կեանքին, կ'արժեւորէ այդ մասնակցութեան օգուտները փոքրամասնութիւններու համար, մանաւանդ՝ 20րդ դարակէսէն սկսեալ երբ երկիրներու բնակչութիւնը դադրեցաւ միատարր ըլլալէ՝ գաղթի թէ այլ տեղաշարժերու պատճառով:

Զեկոյցը կը վերլուծէ թէ ինչու հայկական մասնակցութիւնը քիչ է, եւ կու տայ պատճառներ, որոնք պատճառ դարձան որ հայեր իրենք զիրենք պատեանաւորեն եւ իրենցմէ դուրս գտնուող ամէն բան նկատեն ապրուստի ոլորտ:

Յանկագրելէ ետք Յորդանանի հայկական հանրային կառոյցները՝ զեկոյցը կը մանրամասնէ թէ հանրային ինչ ոլորտներու մէջ կը գործեն փոքրաթիւ հայերը եւ կ'եզրակացնէ ընթացքը այս մասնակցութեան ու կ'առաջադրէ միջոցառումներ՝ բարելաւելու այս վիճակը:

The Formation of the Identity of a Diasporic Armenian Woman

Lucine Taminian
lucine.taminian@gmail.com

Remember that every man
[human being] is a variation of
yourself.
William Saroyan
I can't be just an Armenian.
Charles Aznavour

The questions of: "who is an Armenian?" what are the markers of Armenian identity? Is it descent, language, heritage and/or culture? Have become debatable issues with regard to the Armenian Diaspora.[1] I will discuss these questions in light of the formation of my identity as a woman of Armenian descent born and raised in Irbid, a small town in northern Jordan, where a small Armenian community found refuge after the genocide.

Identity is not given in the sense that one is born with one, nor is it a fixed self. It is rather a constant dynamic process of becoming and of communicating oneself to others. I will address the issue of the constant formation of my identity as a woman who lived most of her life in an "Arab" neighborhood of Jordanians, Palestinians, Syrians and Lebanese, went to a Jordanian school, excelled in Arabic language early on in her life, hardly spoke any Armenian, and was reconnected with Armenia and Armenian culture later in her life.

THE ARMENIAN COMMUNITY OF IRBID

In the 1960s, the Armenian community of Irbid consisted of around twelve families, all of whom were deported from the multi-ethnic Armenian cities of Marash, Antab or Adana, with the exception of my father, whose family was deported from Istanbul. The majority of these families were Turkishized as their language of communication was Turkish. Even those who spoke Armenian at home had to communicate in Turkish whenever they got together with the non-speakers of Armenian.

The Irbidi Armenians were isolated from the larger Armenian community in Amman. Except for the rare visits of the *wartabit* from Amman and of

[1] See Armen Ayvazyan, "The Fundamentals of Armenian Identity or Who Is an Armenian," and M. Bouldoukian's response. www.gardentowerhotel.com .

relatives living somewhere in Jordan or in a neighboring country, their relations to Armenian institutions and other communities of the diaspora were minimal. Once or twice a year the *wartabit* would come from Amman for a visit of few hours. He would make his quick round accompanied by a volunteer from the local community. In each house, he would hurriedly recite a short prayer to bless a glass of water, some salt and *mass* placed on a tray, collect a donation and leave. He would also come if invited to perform a baptism or wedding.

The Armenians of Irbid lacked the fundamentals of a community, such as a compact neighborhood, a school, a church or a youth club. Their feeling of belonging to a community was articulated in periodic practices and a series of social events. It was the women who nurtured a community spirit among the Armenians of Irbid. They visited each other regularly and organized women parties from time to time, during which dishes claimed to be Armenian, such as *ashkili kufta*[2] and *birbirim shourpasi*,[3] were served and quite often became a topic of discussion and, implicitly, a marker of identity. These dishes were Marashli, common knowledge among the women. One would hear the Antabli or Adanali women commenting on the Marashli recipe of these dishes, detailing their own different recipes: "The Marashli prepared *ashkili kufta* this way; we Antabli had a different way of preparing it..."

During these visits, women shared their collective memories of the atrocities committed by the Turks against their villages, homes and families and their suffering while crossing the Syrian Desert to safety. Quite often the sobs of the narrator or the listeners interrupted the flow of the narration. Sometimes the visit turned into a joyful gathering; women would exchange jokes, tell funny stories, or sing old Turkish love songs.

Men visited only at Christmas and Easter, and their visits were usually very formal. They would talk about their everyday affairs and the current situation in Jordan. They never talked about their experiences during the massacre or deportation. Indeed, my father never talked about his life prior to deportation, or how he ended up with his mother and four siblings in Tiberia, or about his father's fate. The sketchy stories we heard about these matters came from my mother. Refugee Studies show that male survivors of massacres feel guilty that they survived while others were killed and thus avoid talking about the topic.

The whole community attended wedding parties and would spend their time drinking, singing and dancing. Armenian songs were performed only if an Armenian visitor from Aleppo or Beirut happened to attend the party.

---

[2] Meaning sour kufta. It is small balls of burghul and minced meet cooked in meat tomato sauce, seasoned with lemon juice, garlic and dry mint.

[3] Meaning pursalne (plant) soup. A soup of chickpeas, lentils, cereal, onion, garlic, sumac and pursalne.

Otherwise the youth would sing Arabic songs, and the old men would sing Turkish songs that tell about the sufferings of Armenians. One particular song, which tells about the agonies of a young Armenian conscript who was denied leave to visit his mother, would bring tears to the eyes of the audience, and quite often provoke their sobs. It was also performed by women while doing household chores; it says:

Annama saylayn damda yatamsin
Shuka shalwarna oshkhue dkhmasin
Oghlum Kalur dey yolta durmasin

Tell my mother not to sleep on the roof,
Not to fasten the belt of her fancy *shalwar*
And [not to] stand in the road waiting for her son's return

Dinimi oghlun kidan Airmeni
Sabkhtan ghakhtim shatana bakhtim
Aghlaye suzlaye boynma dakhtim

I swear to the religion of the dead and gone Armenians
From early morning I looked at my bag,
I tied it round my neck, crying and moaning.

LIVING IN TWO WORLDS

Throughout my childhood, school years, university education and career, I had limited contact with Armenians. The neighborhood we lived in was far from the neighborhood where other Armenian families lived. I met Armenians when Armenian women accompanied by their children visited my mother and during our week-end visits to my maternal grandparents' house. Their house was the meeting place for the Armenians: women would visit regularly and young men would spend their afternoons on the terrace of my grandfather's shop, where they would spend their time chatting, joking and singing - all in Arabic.

My contact with the Armenian language was even more limited. For me and my siblings, Arabic was our first language and the only language of communication with our parents, friends and relatives. My parents always communicated with each other in Turkish though both of them spoke Armenian. My father went to Armenian school in Istanbul and my mother to an Arab school in Irbid. After their marriage in Irbid in 1939, Mother, who was born in Damascus of Marshli parents and went to school in Irbid, taught my father to read Arabic and Father taught her Armenian. I heard Armenian spoken around our house only when relatives from Damascus, Beirut, or Haifa

(who were allowed to cross to East Jerusalem only during Christmas holidays) stayed with us.

When I was growing up, there were always Arabic and English books and magazines around the house. But the only Armenian writing I saw in our house was my father's notes written down in a thick notebook kept in a drawer next to his bed. My father, who was deeply concerned about world affairs, used to get Egyptian and Lebanese magazines and ask me, or one of my sisters, to read him the articles of interest to him. My mother loved reading Georgi Zeidan's historical novels, and she would read them to father in the evenings.

Language was a major issue for the first generation of the Armenian diaspora, who hardly spoke any Arabic, and when they did, had their "broken" Arabic made fun of.[4] My father's "broken" Arabic was supposedly the reason why he left Tiberias, where his family settled after deportation, to settle in Irbid. According to a story I heard several times from a close friend of my father's, my father was often mistaken for a European Jewish immigrant because of his attire of a three-piece suit and a hat. During the 1936 Palestinian uprising, his friends thought his mistaken identity might put his life at risk and advised him to dress as a middle class Palestinian urbanite. They made him wear the white *hata* (head gear) instead of the hat, but his broken Arabic exposed his disguise, and he decided to leave Palestine.

For the Armenians, language was, and indeed still is, the most essential, if not the only, marker of identity. Thus, my Armenianness was always contested, "Do you think you're Armenian when you don't speak Armenian?" During my aunt's short visits from Haifa, she would reprimand my father for letting us become "Arabs," and address us in Armenian, a language we hardly understood. Our Damascene and Lebanese relatives considered us "*hawarneh*,"[5] a derogatory term used to refer to the supposedly uncultured peasants of Hauran. We were the lost Armenian children who had turned native.

When I was five years old, a cousin of my mother, Santough Birtizilian, a journalist who worked for *Aztak* newspaper, came from Beirut with a mission to teach the lost Armenian children Armenian. We had classes in a dark room in my grandfather's house; we would sit on the floor with our notebooks on our laps chanting the Armenian alphabet. Unfortunately, the mission was interrupted; Santough went back to Beirut leaving us with a few words of

---

[4] Armenians were made fun of for their heavy Arabic accent and for mixing genders. The representation of Armenians in Lebanese soap operas and plays as the speakers of broken Arabic is a good example.

[5] *Hawarneh*, refers to the people of Hauran area that extends from somewhere near Damascus in the north to Ajlune Mountains of Jordan in the south. The *Hawarneh* are stereotyped as uncivilized, harsh peasants.

Armenian. I myself learnt the first ten letters of the alphabet, to write my name, and to read the words on the first page of a book she took back with her upon leaving.

My contested Armenian identity strengthened my desire to integrate and become an "Arab" just like my friends and classmates; a desire that was translated into a strong will to master classical Arabic. I spent long hours studying grammatical rules, memorizing classical poems, and rewriting my compositions to perfection. I was very proud to be one of the top three students in Arabic and to be praised for my Arabic writing that "puts the Arab students to shame," as the Arabic teacher often announced to my class. Yet, I was often reminded of my otherness if I made the slightest mistake in Arabic, which of course all students did, "Listen to the Armenian speaking Arabic."

Family is the locus of identity formation. My family's home lifestyle and their not being affiliated to a clan accentuated my sense of myself as the *Other*. Father used to walk around the house in shorts, my parents would address each other using first names,[6] mother would help my father run his farm, and male visitors were not strictly separated from the female members of the family; such acts were socially unacceptable or even shameful to the larger community. In Jordan, affiliation to a tribe or to a long line of male descendants constitutes one's social status and identity. My father's brothers did not get married, and we were not aware if he had paternal uncles in Istanbul or anywhere else. In Jordan, when a Jordanian encounters somebody unknown to him/her, he/she asks the stranger two questions in order to establish his/her identity: where he/she is from and which clan he/she is affiliated to. Up till now, when I find myself in such a situation, I always try to ignore the second question, knowing that one who is not affiliated to a clan is considered *maqtu' mn shajara*, meaning "cut off from a tree," which underlines one's "foreignness."

RECONNECTING WITH ARMENIA

My family's connection to Armenia began with the opening of a Soviet Embassy in Amman in 1963. My father visited the Embassy that same year to inquire about the possibility of sending my two brothers to Erevan for their higher education. It was not the first time that my father had tried to connect with Armenia. According to my mother's narrative, my father considered emigrating to Erevan in the mid-1940s when a ship visited Haifa port to take

[6] In Jordan, after a couple's marriage and the birth of their first son, the father becomes known as Abu X (the father of X), and the mother as Umm X (the mother of X) even by their siblings and parents. Quite often a man becomes known as Abu X before the birth of his first son or even before he gets married. Using the maiden name of a mother is shameful, and not addressing a married man as Abu X is insulting.

Armenians willing to emigrate to Armenia back to Erevan. My mother was against the move, and the family stayed in Irbid.

My brothers started their studies at Erevan Polytechnic in 1966. In the following years, several Armenian students from Irbid joined my brothers, including my uncle, my three cousins and my two siblings. My brothers' university connected us to the "imagined" homeland of Armenia, its culture, heritage and language. Symbols of our Armenian legacy, records of Armenian music, and photo albums of historical monuments and cultural sites appeared in our house for the first time. Upon graduation, my brothers got married to Armenian women who did not speak any Arabic; thus the Armenian language became the language of communication during family gatherings.

The new generation of Jordanian Armenians, unlike their parents who had to struggle for their livelihood in a foreign country, show social solidarity with Armenia and the Armenian diaspora communities and feel responsible for their welfare. They supported the victims of the 1988 earthquake and of the recent wars in Syria and Iraq. The independence of Armenia in 1991 created new attachments among this generation as reflected in their regular visits to Erevan and their desire to be acquainted with its culture, heritage and arts.

CONCLUSION

Identity is multi-layered, fluid and performatively constituted, thus an individual or a community performs it whenever a time and a place allow. In telling others about their deportation and suffering when crossing the Syrian Desert, and in singing "Turkish" songs about the agonies of a young Armenian conscript, the Irbidi Armenian women, who hardly spoke Armenian, identified themselves and were identified by their audience as Armenian women who had survived the massacre. In addition their everyday practices, as exemplified by dishes they prepared and their talk about their different recipes for these dishes, communicated another layer of their identity. They were *not just Armenian*; they were Armenians as well as Marashli, 'Antabli or Adanali. After coming to live in a non-Armenian community, they did not try to become the *Other*; they were at ease to be identified as Armenians who spoke funny Arabic.

Unlike these women, when I was growing up, I wanted to be the *Other*, a desire that was reenforced by the fact that my Armenianness was questioned by Armenians who believed, like all nationalists, that language is the only marker of one's identity. My Arabic was as fluent as any educated native speaker, yet I was often identified either as an Armenian who is fluent in Arabic or an Armenian who speaks broken Arabic. I was made to feel that I was not exactly Armenian, nor exactly Arab. I was in-between, a status inherent in diasporic conditions, a fact that makes me aware, as Charles Aznavour admits, that I am not just an Armenian.

Later on in my life, I started reading about the Armenian genocide and the memoirs of the survivors, and I came to believe that Armenianness is not located solely in the Armenian language, but rather in remembering the massacres committed against the Armenians, a belief that was strengthened while touring the Genocide Museum in Erevan during my first visit to Armenia in 2013. Remembering the genocide is the most powerful marker of Armenian identity, which, I think, is an inclusive identity that includes all who remember it and work for its recognition regardless of their nationality.

Սփիւռքահայու Մը Ինքնութեան Կազմակերտումը (Ամփոփում)

Լուսին Թամինեան
lucine.taminian@gmail.com

Հեղինակը կը կեդրոնանայ իր ինքնութեան կերտումին՝ իբրեւ հայկական ծագումով յորդանանցի կին մը, որ հասակ առած է Իրպիտի մէջ, հիւսիսային Յորդանան, ուր 'թրքացած' փոքր հայկական համայնք մը կ'ապրէր, երբ ազգայնական տարբեր տրամախօսութիւններ հիմնահոսանք ինքնութիւններ արտադրելով կը միտէին տիրապետել հանրային կեանքին: Նկատի առնելով այս ինքնութիւններուն արտաքսական (exclusivist) բնոյթը եւ հարցադրելով իր ինքնութեան հայկական բաղկացուցիչը, Թամինեան կը քննարկէ իր պայքարը՝ «պատկանելու» եւ «համարկուելու»: Այս պայքարը կ'ընդգրկէ կազմումը, կազմաքանդումը եւ վերակազմումը իր ինքնութեան: Թամինեանի համարկումի պայքարը մղում կը ստանար նաեւ ոչ-իրպիտցի հայերէ, որոնք կը հարցադրէին իր հայկականութիւնը՝ երբ ինք հայերէն չէր խօսեր: Ինքնութիւնը ուժական էութիւն մըն է. հետեւաբար իր 'ինքը' եւ իր 'ուրիշները' կը փոխուին՝ ըներամշակութային ենթահողին բերմամբ: Ի՞նչ ենթահողի մէջ անհատին 'ուրիշութիւն'ը կը հեգնուի կամ կը փառաբանուի: Միւս կողմէն՝ ի՞նչ ենթահողի մէջ 'հայկականութիւն'ը կը յապաւուի կամ կը ձայնաւորուի՝ հարցադրումներ են, զորս Թամինեան կը քննարկէ այս ուսումնասիրութեան մէջ:

Յորդանանի Հայ Համայնքը. Արդի Հիմնախնդիրներ[1]

Արաքս Փաշայեան
a_pashayan@hotmail.com

ՅՈՐԴԱՆԱՆԱՀԱՅԵՐԸ՝ ԿՐՕՆԱԿԱՆ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹԻՒՆ

Հայերը Յորդանանում զգալիօրէն աշխուժացել են Հայոց Ցեղասպանութիւնից եւ պատմական Կիլիկիայի հայաթափումից յետոյ՝ մեծ ջանքեր գործադրելով ազգային ինքնակազմակերպման գործում՝ գաղթականներից վերաճելով Յորդանանի լիիրաւ քաղաքացիների: Պատմութեանը յայտնի է Մեքքայի Շերիֆ Էմիր Հուսէյն Պըն Ալի Ալ-Հաշիմիի յայտնի ուղերձը, որով կոչ է անում պաշտպանել Ցեղասպանութիւնից փրկուած հայերին: Տարուած հակաթուրքական եւ հակաօսմանեան գաղափարներով՝ արաբական մեծ յեղափոխութեան առաջնորդ Շերիֆ Հուսէյնը, ի պաշտպանութիւն հայերի, 1917ին իր որդիներ արքայազն Ֆէյսալին եւ արքայազն Ապտըլ Ազիզ Ալ-Ճարպային յորդորում է հայ տարագիրներին պաշտպանել, հովանաւորել եւ ամէն տեսակի օգնութիւն տրամադրել[2]:

Ցեղասպանութեանը յաջորդած տարիներին հայերը բնակութիւն են հաստատել ներկայիս Յորդանանի տարբեր հատուածներում, սակայն յետագայ տարիներին հայերով բնակեցուած շրջանները (Իրպիտ[3], Աժլուն, Ռըսէյֆա, Մաան, Ժարաշ, Մատապա, Քարաք, Շոպաք, Թաֆիլէ եւն.) կորցրել են իրենց հայկական նշանակութիւնը: Ներքին եւ արտաքին

[1] Յորդանանի հայ համայնքի արդի հիմնախնդիրները, առկայ մարտահրաւէրները, ինչպէս նաեւ համայնքի՝ Հայաստանի հետ ունեցած կապերն աւելի լաւ հասկանալու համար նպատակայարմար ենք գտել զրուցել համայնքի առանձին ներկայացուցիչների, ինչպէս նաեւ Յորդանանում ուսանած մի շարք հայաստանցի եւ Հայաստանում ուսանած յորդանանահայ ուսանողների հետ: Հարցազրոյցների մի մասը տեղի է ունեցել Հայաստանում, միւս մասը՝ Հայաստանից դուրս, 2016-17ի ընթացքում: Նաեւ օգտուելով առիթից, ցանկանում ենք յատուկ շնորհակալութիւն յայտնել Ամմանի հայ համայնքի ներկայացուցիչներ Լիանա Սաֆարեան-Նալպանտեանին, Անի Գիզիրեանին, Ներսէս Ներսէսեանին, Մատլէն Մեծակոբեանին, ուսանողներ Աննա Շուքուրեանին, Յասմիկ Փարեմուզեանին, Լուսինէ Սմբատեանին, Հայկուհի Մովսէսեանին եւ Գէորգ Վարդանեանին:

[2] Նարինէ Մարգարեան, «Հայոց Ցեղասպանութեան Իրագործման Գործընթացում Իսլամական Գործօնի Հարցի Շուրջ», http://www.genocide-museum.am :

[3] Իրպիտի եւ Հիւսիսային Յորդանանի հայերի մասին մանրամասն տե՛ս՝ Kevork Minas Msrlian, *The Armenians of Irbid and Northern Jordan*, Amman, 2017:

գաղթի հետեւանքով, ժամանակի ընթացքում, այդ բնակավայրերը հիմնականում դատարկուել են, իսկ հայկական ազգային կառոյցները՝ փակուել: Հայերը Յորդանանում սկսել են կենտրոնանալ մայրաքաղաք Ամմանում:

Հայերը Յորդանանում օգտւում են որոշակի ազգային իրաւունքներից: Նրանք ունեն իրենց եկեղեցին, դպրոցը, ազատ դաւանում են սեփական կրօնը: Որոշակի սահմանափակումներ կան հայերէն լեզուի եւ հայ ժողովրդի պատմութեան ուսուցման հարցում, ինչը բնորոշ է Միջին Արեւելքի արաբական միւս երկրների հայ համայնքներին եւս:

Յորդանանահայերը լաւ համարում, հեղինակութիւն ու ճանաչում ունեն՝ որպէս երկրի նուիրեալ ու օրինապահ քաղաքացիներ, որոնք յաջողել են ազգային կեանքի կազմակերպման հարցում: Կարելի է ասել, որ հայերը Յորդանանում վայելում են թէ՛ հաշիմեան իշխող թագաւորական ընտանիքի եւ թէ՛ հասարակութեան համակրանքն ու աջակցութիւնը[4]:

Հայերը ներգրաւուած են Յորդանանի տնտեսական, հասարակական կեանքում եւ այլեւայլ ոլորտներում՝ մեծ փորձառութիւն ունենալով բոլորին յայտնի մի շարք արհեստների ու արուեստների մէջ (լուսանկարչութիւն, ոսկերչութիւն եւն.): Յորդանանահայերի շրջանում մի շարք ճանաչուած մարդիկ կան[5]:

Հայ համայնքը որոշակի գործօն է նաեւ Յորդանան-Հայաստան երկկողմ յարաբերութիւնների եւ համագործակցութեան ամրապնդման հարցում: 2014ին ՀՀ նախագահ Սերժ Սարգսեանի՝ Ամման կատարած պաշտօնական այցի ընթացքում Ապտալլահ Բ. թագաւորը մասնաւորապէս նշեց, որ Յորդանանը հպարտ է հայերի հետ իր իւրայատուկ բարեկամական կապերի համար՝ ընդգծելով երկու պետութիւնների միջեւ գոյութիւն ունեցող պատմական յարաբերութիւնները յատկապէս Հուսէյն թագաւորի (1952-99) գահակալութիւնից իվեր: Ապտալլահ թագաւորը Յորդանանը համարեց հայ համայնքի հայրենիքը[6]:

---

[4] Մատլէն Մեծակոբեան, «Որոշած Եմ Ամրապնդել Հայաստանի Հետ Կապերս», http://hayernaysor.am/cl/archives/219069 :

[5] Թագաւորական ընտանիքի լուսանկարիչները օրինակ, հայեր են: Զօհրապ Մարգարեանը շուրջ 22 տարի եղել է Յորդանանի Հուսէյն թագաւորի լուսանկարիչը ("Zohrab the Royal Photographer", http://www.azad-hye.net/news; "Zohrab Markarian: The Late King's Photographer", by Dana Al-Basha, https://danassanctuary.wordpress.com):

[6] "King Commends Deeply Rooted Jordanian-Armenian Ties," *The Jordan Times*, 29 Հոկտեմբեր 2014 (http://www.jordantimes.com):

Պետութեան կողմից հայերը ճանաչուած են որպէս կրօնական փոքրամասնութիւն: Պետութեան մօտ համայնքը, իսկ համայնքի առաջ պետութեանը ներկայացնում է Երուսաղէմի հայոց պատրիարքութեանը պատկանող Հայ Առաքելական Եկեղեցու Ամմանի հայոց եւ շրջակայից թեմը՝ ի դէմս պատրիարքական փոխանորդ, առաջնորդ Տ. Վահան արքեպիսկոպոս Թոփալեանի (աթոռանիստը՝ Ամմանի Ս. Թադէոս եկեղեցի): Վերջինս, բացի հոգեւոր-կրօնական գործառոյթներից, հետամուտ է համայնքի կրթական եւ մշակութային կեանքի կազմակերպմանը: Համայնքը ղեկավարւում է հոգեւոր-կրօնական իշխանութեան կողմից, որն ունի դատական եւ իրաւական գործառոյթներ: Համայնքի թիւը 3000-5000ի շրջանակներում է[7]: Հայերի ճնշող մեծամասնութիւնն ապրում է Ամմանում: Ներկայումս, Յորդանանում ապրում են Հայոց Ցեղասպանութիւնից յետոյ հաստատուած հայերի արդէն չորրորդ, հինգերորդ սերունդները:

ՅՈՐԴԱՆԱՆԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԸ՝ ՍՓԻՒՌՔԻ ԱՒԱՆԴԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔ

Յորդանանի հայ համայնքը Սփիւռքի աւանդական համայնքներից է, ունի իր ներքին ենթակառուցուածքները, տիրապետում է մարդկային, դրամական եւ այլեւայլ միջոցների: Համայնքը կազմուած է ընկերային եւ դաւանական տարբեր շերտերից: Ծանրակշիռ հատուածը հայ առաքելական եկեղեցու հետեւորդներն են, աւելի փոքր մաս են կազմում հայ կաթողիկէները: Գործում է երեք եկեղեցի՝ առաքելական ուղղուածութեամբ երկու (Ս. Թադէոս եւ՝ Յորդանան գետի ափին վերջերս կառուցուած Ս. Կարապետ) եւ մէկ կաթողիկէ[8] (Ս. Մարիամ Աստուածածին): Յորդանանում հայ կաթողիկէ համայնքի դերը եւ ծաւալած գործունէութիւնը զգալիօրէն նուազեցին մանաւանդ 1970 Սեպտեմբերի՝ պետութիւն-պաղեստինցիներ ծանր բախումներից յետոյ: Յորդանանից հեռացան Անարատ Յղութեան Հայ Քոյրերի միաբանութեան մի շարք ներկայացուցիչներ, որոնք մեծ դեր էին ունեցել Ամմանում հայ կաթողիկէ համայնքի կրօնական եւ կրթական կեանքը աշխուժացնելու հարցում:

---

[7] Յորդանանի հայերի թիւը 1930-46՝ եղել է մօտ 6000: 1948ի արաբ-իսրայէլեան առաջին պատերազմից յետոյ Պաղեստինից գաղթածների հաշուին Յորդանանի հայ համայնքի թիւը ստուարացել է՝ հասնելով 10,000ի: Սակայն 1950ականներից սկսած, եւ մասնաւորապէս 1967ի արաբ-իսրայէլեան պատերազմից յետոյ հայ համայնքի թիւը սկսեց կտրուկ նուազել, եւ համայնքից մեծ արտագաղթ նկատուեց դէպի ԱՄՆ, Քանատա եւ Աւստրալիա:

[8] Ներկայիս չի գործում իբրեւ հայկական եկեղեցի:

Նշենք, որ Ս. Թադէոս եկեղեցու շրջանակներում գործում է վեցամեայ Իւզպաշեան-Կիւլպենկեան վարժարանը (մանկապարտէզ եւ նախակրթարան)՝ իր հոգաբարձուների խորհրդով: Ազգային ծրագրերը մշակւում են միութիւնների ներսում եւ գործնականում իրականացւում են տուեալ միութեան ենթակառուցուածքների միջոցով: Գործում է Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութիւնը (ՀՄԸՄ), որն ունի իր վարչութիւնը: ՀՄԸՄի շրջանակներում գործում է սկաուտների խումբը: Գործում է Ազգային Մարմնակրթական Միութիւնը (ԱՄՄ), որի շրջանակներում գործում է Ուաթանի մարզական ակումբը եւ պարախումբը: Գործում է կանանց երեք յանձնախումբ, որոնցից մէկը՝ դպրոցի, միւսը՝ ԱՄՄի շրջանակներում է: ՀՄԸՄին պատկանող ՀՕՄը միակ կառոյցն է, որը գրանցուած է պետութեան մօտ, եւ որի հիմնական կազմը կանայք են: Ազգային բոլոր կառոյցները գտնւում են Աշրաֆիէում[9]:

ՀԱՅԱՊԱՀՊԱՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԻՆՔՆՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

Համայնքը կարեւորում է տալիս հայապահպանութեանը: Հայկական ինքնութեան պահպանման համար կարեւոր գործօն է հայ եկեղեցին: Հայապահպանութեան գործում զգալի դեր ունեն Իւզպաշեան-Կիւլպենկեան Վարժարանը եւ հայկական ազգային կառոյցները: Այս տեսանկիւնից, Հայոց Ցեղասպանութեան պատմական յիշողութիւնը նոյնպէս կարեւոր գործօն է հայապահպանութեան հարցում[10]: Հայ համայնքի ճնշող մեծամասնութիւնը կրօնական տօներին այցելում է եկեղեցիներ: Նշւում են նաեւ ազգային տօները (Վարդանանց, Թարգմանչաց եւն.)[11]: Հանդիսաւորութեամբ նշւում է Հայոց Ցեղասպանութեան յիշատակի օրը: Համայնքը ազգապահպանութեան հարցում պարտական է իր մի շարք նախկին ու ներկայ նուիրեալներին, որոնք աշխատել են եւ ներկայումս էլ աշխատում են յանուն ազգային գաղափարների:

Յորդանանի հայ համայնքն այն հարթակն է, որտեղ արեւմտահայերէնը դեռեւս օգտագործւում է, ինչը համահայկական կարեւորագոյն միջոց է: Որպէս հաղորդակցութեան լեզու համայնքի անդամներն օգտագործում են թէ՛ արաբերէնը եւ թէ՛ հայերէնը,

---

[9] Ani Derderian-Aghajanian, "Armenians' Dual Identity of Jordan", *Internatioanl Education Studies*, vol 2, No. 3, August, 2009, http://files.eric.ed.gov/fulltext/EJ1065711.pdf.

[10] Ani Derderian-Aghajanian, "Roots and Routes: Road from Home to America", *International Education Studies*, vol 4, No.3, August, 2011:

[11] «Հեռաւորութիւնը չի խանգարում հայ համայնքին միաւորուել հայ առաքելական եկեղեցու շուրջը. վարդապետ Հայկազուն Եղիայեան», 4 Օգոստոս 2016, http://haymedia.am :

արաբերէնի ճնշող գերակայութեամբ[12]: Չնայած հայերէնն օգտագործւում է, սակայն նկատելի է հայերէնի աստիճանական նահանջելու յստակ միտումը: Աւագ եւ միջին սերունդը, բնականաբար, շփման մէջ աւելի մեծ տեղ է տալիս հայերէնին, քան պատանիներն ու երիտասարդները: Ամէն պարագայում, հայոց լեզուն եւս ինքնութեան խորհրդանիշ է:

Յորդանանի հայերը սիրում են իրենց երեխաներին անուանել հայկական անուններով[13]: Սա նոյնպէս կարեւոր ցուցանիշ է եւ ապացոյց, որ հայերը Յորդանանում, համարկուած լինելով յորդանանեան հասարակութեանը, ձգտում են պահպանել իրենց ազգային դիմագիծը:

Յորդանանի հայերը հիմնականում աչքի են ընկնում երկակի ինքնութեամբ (dual identity)՝ յորդանանեան եւ հայկական[14]: Նրանք հիւրընկալող երկիրը՝ Յորդանանը, համարում են իրենց հայրենիքը, ականածանք ու յարգանք ունեն իշխող թագաւորական ընտանիքի նկատմամբ՝ որպէս իրենց ֆիզիկական ու նիւթական անվտանգութեան երաշխաւորի, իսկ յորդանանեան միջավայրում հպարտանում են իրենց քրիստոնէական, հայկական արմատներով:

Ինչ վերաբերում է Հայաստանին, յորդանանահայերը սիրում են Հայաստանը՝ որպէս պատմական հայրենիք: Կան ընտանիքներ, ովքեր նախընտրում են նաեւ հայաստանեան հեռուստաալիքներ դիտել: Մի մասն ունի, իսկ մնացածը, նոյնիսկ նրանք ովքեր կիսով չափ են հայ, ձգտում են ձեռք բերել հայաստանեան անձնագիր: Շատերը ցանկանում են այցելել Հայաստան: Կան մարդիկ, ովքեր միքանի անգամ են այցելել, գիտեն Հայաստանի թէ՛ լաւ, թէ՛ վատ կողմերը, ըմբռնումով են մօտենում առկայ խնդիրներին, կապուած են Հայաստանին: Հայաստանում գոյութիւն ունեցող ընկերատնտեսական դժուարութիւնների պատճառով Հայաստանում մշտական բնակութիւն հաստատելու հիմնականում նպատակ չունեն: Բացառութիւններ, սակայն, կան[15]: Երեւանում խորհրդային տարիներին ուսանել են եւ ներկայումս էլ ուսանում են բազմաթիւ յորդանանահայեր, որոնք դրա շնորհիւ նորոգուել են ազգային նոր լիցքերով: Նոյնպէս եւ գաղութը ազգային լիցքով է նորոգուել:

---

[12] Մանրամասն տե՛ս՝ Mahmoud Abed Al-Khatib, “Language Shift among the Armenians of Jordan”, https://www.researchgate.net :

[13] Նոյն:

[14] Ani Derderian-Aghajanian, “Armenians’ Dual Identity of Jordan”:

[15] Վերջերս, օրինակ, Արցախում է հաստատուել յորդանանահայ Կարօ Սերփէքեանը, որի սրճարանը Ստեփանակերտում թէ՛ տեղացիների, թէ՛ զբօսաշրջիկների սիրած տեղերից է («Մուկլիմանդիլ. Ապրելու, Պատերազմը Յաղթելու, Երազանքի Հետեւից Գնալու Յանց-Սրճարանը», http://www.aysor.am):

Իր հերթին, ՀՀ կառավարութիւնը Սփիւռքի ենթահողում ուշադրութեան մէջ է պահում նաեւ Յորդանանի հայ համայնքը: Մանաւանդ հայապահպանութեանը նոր լիցքեր հաղորդելու տեսանկիւնից՝ Հայաստանի դերն ուղղակի վճռորոշ է[16]: «Արի Տուն» ծրագրով յորդանանահայ մի շարք աշակերտներ այցելել են Հայաստան: ՀՀ Սփիւռքի նախարարութեան ծրագրով՝ Հայաստանում վերապատրաստուել են նաեւ յորդանանահայ ուսուցիչներ: 2014 Հոկտեմբերին պաշտօնական այցով Յորդանանում գտնուող ՀՀ նախագահը Հոկտեմբերի 29ին պետութեան առաջին դէմքերին հանդիպելուց յետոյ հանդիպել է նաեւ հայ համայնքի ներկայացուցիչներին[17]:

ՀԱՅԿԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ ԴԵՐԸ

Իւզպաշեան-Կիւլպենկեան վարժարանի ղեկավարութիւնը արել եւ անում է առաւելագոյնը հայկական դպրոցի աշխատանքներն առաջ տանելու հարցում: Սակայն Միջին Արեւելքի հայ համայնքներում, այդ թւում՝ Ամմանում, դպրոցներն այսօր բազմաթիւ խնդիրների են բախուել, այդ թւում՝ արհեստավարժ մարդկային ներուժի ու դրամական: Պետական յատկացումները եւ սուղ միջոցները սովորաբար էական չեն եւ չեն ծածկում բոլոր անհրաժեշտ ծախսերը, ինչը շատ դէպքերում դպրոցը դարձնում է ոչ-մրցունակ: Ամմանի հայկական վարժարանը նոյնպէս Սփիւռքի բարեսիրական կառոյցների եւ անհատ բարեգործների, ինչպէս նաեւ Հայաստանի աջակցութեան կարիքն ունի: Վարժարանն ունի ոչ միայն արդիականացման, այլեւ մէկ այլ լրջագոյն խնդիր եւս՝ գնալով նուազող հայ աշակերտների հարցը:

ԱԶԳԱՊԱՀՊԱՆՈՒԹԵԱՆ ԱՌԱՋ ԾԱՌԱՑԱԾ ԽՆԴԻՐՆԵՐ ՈՒ ԴԺՈՒԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Ներկայումս համայնքի հայապահանութեանը խոչընդոտող մի շարք գործօններ եւ նաեւ առարկայականօրէն ստեղծուած բազմաթիւ դժուարութիւններ կան: Ըստ մեր դիտարկման, դրանք են.-

---

[16] «Միջին Արեւելքի Հայ Համայնքների Պատմութեան «Ոսկեդարը», Կարելի Է Ասել, Աւարտուած Է», հարցազրոյց արաբագէտ Արաքս Փաշայեանի հետ, https://168.am :

[17] Համայնքի հետ հանդիպման ընթացքում ՀՀ նախագահը խօսել է Ղարաբաղեան Հարցի, Հայաստան-Սփիւռք կապերի ամրապնդման եւ Յորդանանում հայ համայնքի դերի մասին («Նախագահ Ս. Սարգսեանի Պաշտօնական Այցը Յորդանանի Հաշիմեան Թագաւորութիւն», www.president.am):

Համայնքի սակաւ թուաքանակը եւ ժողովրդագրական նուազող ցուցանիշները

Յորդանանահայ համայնքը շեշտակի կերպով սկսել է նուազել 1967ի արաբ-իսրայէլեան պատերազմից յետոյ: Վերջին տասնամեակի ընթացքում հայերի թիւն է՛լ աւելի է նուազել. համայնքից հեռացել են միքանի տասնեակ ընտանիքներ, ինչը զգալիօրէն նօսրացրել է նաեւ դպրոցի սաների թիւը: Իսկ նուազ թուաքանակը խիստ բացասաբար է անդրադառնում թէ՛ կրթական համակարգի, թէ՛ համայնքի ներքին համախմբման ու ազգային գործունէութեան կենսունակութեան վրայ: Սակաւ թուաքանակն աստիճանաբար յանգեցրել է եւ յանգեցնելու է ժողովրդագրական ցուցանիշների է՛լ աւելի անկմանը, այլ կերպ ասած՝ համայնքի ծերացմանը եւ ազգային կեանքի լճացմանը: Այս տեսանկիւնից, որոշ աշխուժացում հնարաւոր էր վերջին տարիներին Յորդանանում հաստատուած իրաքահայերի եւ սիրիահայերի հաշուին: Սակայն Յորդանանում նրանց մշտական բնակութեան հնարաւորութիւնը վիճարկելի է, քանի որ վերջիններս, ունենալով փախստականի կարգավիճակ, հիմնականում նախընտրում են հաստատուել աւելի բարենպաստ միջավայրում, հիմնականում՝ Արեւմուտքում:

Արտագաղթը եւ Միջին Արեւելքում ստեղծուած ճգնաժամային վիճակը

Միջին Արեւելքն այն տարածաշրջանն է, որը մշտական պատերազմների եւ անկայուն քաղաքական ու տնտեսական իրավիճակների մէջ է: Ինչպէս արդէն նշեցինք, Յորդանանում հաստատուած հայերը աւելի աշխուժ կերպով 1960ականների երկրորդ կէսից աստիճանաբար սկսել են հեռանալ դէպի ԱՄՆ, Քանատա, Աւստրալիա եւ այլ երկրներ: Սակայն վերջին շրջանի ամէնադրամատիկ իրադրութիւնները կապուած են «արաբական գարնան» եւ դրան յաջորդած դէպքերի հետ, ինչը խարխլեց տարածաշրջանի ազգային անվտանգութեան համակարգը[18]: Մեծ չափեր ընդունեցին կրօնական արմատականութիւնը, միջդաւանական ու միջէթնիկ թշնամութիւնը: Սա առաջին հերթին հարուած էր Միջին Արեւելքի փոքրամասնութիւններին, այդ թւում՝ քրիստոնեաներին: Չնայած Յորդանանն աչքի է ընկնում համեմատաբար կայուն անվտանգութեան համակարգով, սակայն մշտական տնտեսական խնդիրներով, հետեւաբար՝ հեռանկարի վերաբերեալ անվստահութիւնն ու մտավախութիւնը, հնարաւոր է, շատերին ստիպեն այլընտրանք փնտռել աւելի ապահով ու բարեկեցիկ երկրներում:

[18] «Տարածաշրջանը Վերադառնում է Միջնադարեան Արժէքներին», հարցազրոյց արաբագէտ Արաքս Փաշայեանի հետ, http://thearmenians.am :

Խառը ամուսնութիւնները

Հարցուածների մեծ մասը նշել է, որ Յորդանանի հայերի շրջանում խառը ամուսնութիւնները որոշակիօրէն մեծ թիւ են կազմում, կարելի է ասել՝ ամուսնութիւնների ճնշող մեծամասնութիւնը: Հայերը դէմ չեն ամուսնանալ արաբ քրիստոնեաների կամ սլաւոնական ծագում ունեցողների հետ, չնայած համայնքի ներսում քաջալերւում են ամուսնութիւնները հայերի հետ: Մուսուլմանների հետ ամուսնութեան դէպքերը խիստ հազուադէպ են: Այդ հարցում համայնքի ներսում գոյութիւն ունեցող մօտեցումը բացասական է:

Ժապալ Աշրաֆիէի դիրքը

1920ականների կէսերից թաղամասն այլեւս բնակեցուած է եղել հայերով: Այդ շրջանում Ժապալ Աշրաֆիէն եղել է Ամմանի արուարձաններից մէկը, բարձունքի վրայ: Հայերը եկել եւ հաստատուել են այնտեղ, բնակեցրել այն: Սակայն աստիճանաբար նրանց մի մասը բնակարաններ է ձեռք բերել քաղաքի այլ հատուածներում: Սակայն այսօր էլ Ամմանում եւ ընդհանրապէս Յորդանանում Աշրաֆիէն ճանաչւում է որպէս հայկական կենտրոն, հայկական թաղամաս: Ինչպէս նշեցինք, այստեղ են գտնւում հայկական հիմնական ազգային կառոյցները, կան հայերին պատկանող տներ, խանութներ, գրասենեակներ ու աշխատավայրեր: Ինչպես նշեցինք, թաղամասը գտնւում է բարձրադիր վայրում, որտեղ շատ յաճախ խցանումներ են լինում: Մեծ ժամանակ է պահանջւում Աշրաֆիէ հասնելու համար: Շատերը երեխաներին չեն տանում հայկական դպրոց՝ նաեւ նշուած նկատառումներից ելնելով:

Օտար միջավայրի ու համաշխարհայնացման գործօններ

Չնայած բազմաթիւ ապացոյցներ կան այն մասին, որ արեւմտեան (քրիստոնէական) միջավայրում, որպէս կանոն, հայ համայնքներն աւելի արագ են ուծացել եւ ձուլուել, որի ապացոյցը, օրինակ, Լեհաստանի երբեմնի հայ համայնքն է, այնուամենայնիւ, անառարկելի փաստ է, որ առհասարակ օտար միջավայրում, այդ թւում՝ մուսուլմանական, դժուար է պահել ազգային աւանդոյթները, սովորոյթներն ու ինքնութիւնը: Այսինքն՝ չնայած հսկայական ջանքերին, դժուար է հայ մնալ ինչպէս Ռուսաստանում, Ֆրանսիայում, Ամերիկայի Միացեալ Նահանգներում, Սիրիայում, Լիբանանում, այնպէս էլ՝ Յորդանանում: Վերջին տարիներին օտար միջավայրի դժուարութիւններին գումարուեց նաեւ համաշխարհայնացումը: Բոլոր այն արժէքները՝ ընտանեկան, ազգային, կրօնական, որոնց վրայ հիմնուած է հայապահպանութիւնը, համաշխարհայնացման գործընթացում արժեզրկւում են՝ իրենց տեղը զիջելով անդրազգային, համաշխարհային արժէքներին: Սա, իհարկէ, նոր ու դժուար մարտահրաւէր է:

ՀԱՄԱՅՆՔԻ ԼՈՒՍԱՆՑՔԱՅԻՆ ԿԱՄ ԱՆԳՈՐԾՕՆ ՀԱՏՈՒԱԾԸ

Համայնքային կեանքի մէջ աշխուժ ներգրաւուածների տեսանկիւնից՝ համայնքի այն շրջանակները, ովքեր չեն մասնակցել կամ մասնակցում ազգային կեանքին, անկախ պատճառներից, ըստ էութեան, լուսանցքային դիրքում են: Համայնքի ամէնաքիչը կէսը կամ կէսից աւելը ներգրաւուած չէ ազգային կեանքին, հիմնականում միութիւնների հետ կապ չի պաշտպանում:

Հետաքրքրութիւն է ներկայացնում այն հարցը, թէ ինքնութեան մակարդակում ովքե՞ր են համայնքային կեանքից այս կամ այն կերպ դուրս մնացած մարդիկ: Առկայ ուսումնասիրութիւնը հնարաւորութիւն տուեց յանգել այն եզրակացութեան, որ նրանց մի մասը ինքնութեամբ իրեն հայ համարող, շատ դէպքերում՝ հայերէնին տիրապետող մարդիկ են, ովքեր ազգային կեանքին չմասնակցելու իրենց անձնական պատճառներն ունեն[19]:

Միեւնոյն ժամանակ, լուսանցքային հատուածում կան շրջանակներ, որոնք միանգամայն անտարբեր են ազգային խնդիրներին, հայութեանը եւ հայերէնին չեն տիրապետում: Իդէպ, վերջին տարիներին յորդանանահայերի շրջանում տարածուել են առանձին աղանդներ, ինչը բացասաբար է ընկալւում համայնքային շրջանակներում:

Յորդանանի հայ համայնքը՝ Մերձաւոր Արեւելքի հայ համայնքների համեմատութեամբ, ընդհանրութիւններ ու տարբերութիւններ ունի.-

- ✓ Համայնքն ազգային կեանքի կազմակերպման ու հայկական ինքնութեան պահպանման կառոյցների առումով ընդհանուր բազմաթիւ եզրեր ունի Մերձաւոր Արեւելքի հայկական այլ համայնքների հետ:
- ✓ Ներկայումս, համայնքի ազգային ինքնութեան պահպանման հարցում ծանրակշիռ տեղ ունի Հայ Առաքելական Եկեղեցին:
- ✓ Յորդանանահայերի շրջանում նոյնպէս ազգային ինքնութեան հիմքերը նոյնն են՝ կրօն-եկեղեցի, դպրոց, մայրենի լեզու:
- ✓ Համայնքի ներսում գործող միութիւնները Սփիւռքում գործող կազմակերպութիւնների (մասնաւորապէս՝ ՀՅԴ, ՍԴՀ, ՌԱ կուսակցութիւնների, ՀՕՄի եւն.) մասնաճիւղերն են, հետեւաբար դրանց կառուցուածքը, գործունէութիւնն ու մօտեցումները նոյնական են:

---

[19] Ազգային կեանքից հեռանալու պատճառներից է, օրինակ, համայնքի աշխուժ ու հայախօս առանձին շրջանակների կողմից աւելի անգործօն ու արաբախօս շրջանակների նկատմամբ ազգապահպանութեան հարցերում խստապահանջ գտնուելը, ինչը որոշակի լարուածութիւն ու անյարմարութիւն է ստեղծել վերջիններիս համար:

✓ Միջին Արեւելքի հայկական կառոյցները, ըստ էութեան, ցանցային են: Յորդանանի հայ համայնքը եւս Միջին Արեւելքի հայ համայնքների ընդհանուր ցանցի՝ networkի, մի մասն է:

✓ Յորդանանում նոյնպէս առկայ են այն տարանջատուածութիւնը եւ համագործակցութեան պակասը, ինչը բնորոշ է Սփիւռքի այլ համայնքներին եւս: Անգամ Ապրիլի 24ի առանցքը չի կարող սօսնձել իրավիճակը: Այս իրողութիւնը խիստ բացասական դեր է խաղում ազգապահպանութեան հարցում: Սակայն վերջին տարիներին, ինչպէս նշել է հարցուածների մի մասը, կանանց տարբեր յանձնախմբերի մէջ դրսեւորուել է առողջ համագործակցութիւնը, ինչը դրական միտում է:

✓ Համայնքը նոյնպէս պահպանում է իր ազգային դիմագիծը շնորհիւ իր նուիրեալների, այնպէս, ինչպէս Մերձաւոր Արեւելքի մնացած հայ համայնքներում:

✓ Ակնյայտ է, որ ազգային մշակութային եւ հոգեւոր գործունէութեան առումով համայնքը զգալիօրէն զիջել է Մերձաւոր Արեւելքի մնացած հայ համայնքներին (մասնաւորապէս Լիբանանի, Սիրիայի), որի պատճառներից մէկը յորդանանահայ համայնքի փոքր թուաքանակն է:

✓ Այսպիսով, Յորդանանի հայ համայնքը, կարելի է ասել, երեք շերտից է կազմուած.- ա) աշխուժ զանգուած, որը ցանկանում է հայ մնալ, հետեւում է հայկական կրօնական, կրօնաճիսական եւ ազգային աւանդոյթներին, ներգրաւուած է համայնքային կեանքում, բ) անգործօն զանգուած, որ հայ է ինքնութեամբ, բայց չի ցանկանում մասնակցել համայնքային կեանքին, որեւէ հայկական կառոյցի հետ կապ չի պահպանում, եւ գ) զանգուած, որ անտարբեր է հայութեան խնդիրներին, չունի շեշտուած հայկական ինքնութիւն:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ

Այսպիսով, իմի բերելով մեր հետազօտութեան արդիւնքները՝ յանգել ենք հետեւեալ եզրակացութեան.-

- Յորդանանահայերը աչքի են ընկնում ազգային եւ կրօնական ինքնագիտակցութեամբ: Համայնքի մի հատուածը ապրում է ազգային, հոգեւոր-մշակութային եւ հասարակական աշխուժ կեանքով:
- Ազգային դաստիարակութիւնը շարունակւում է ինչպէս մարզական եւ մշակութային միութիւններում, այնպէս էլ՝ ընտանիքներում:
- Միջին եւ աւագ սերունդը Յորդանանում հիմնականում իր ուսերին է վերցրել հայապահպանութեան խնդիրները:
- Ինչպէս Միջին Արեւելքի միւս հայ համայքների, այնպէս էլ Յորդանանի հայ համայնքի ազգային հեռանկարը լեցուն է մարտահրաւէրներով: Միջին Արեւելքի - այդ թւում՝ Յորդանանի - հայ

համայնքների հեռանկարը ճիշտ կը լինի դիտարկել տարածաշրջանի հայ համայնքների եւ ընդհանրապէս՝ քրիստոնեաների ընդհանուր խորապատկերի մէջ, որի վերաբերեալ կանխատեսումները, շատ դէպքերում, բաւական մռայլ են: Յորդանանի հայ համայնքի պարագայում բաւական է միայն յղում անել խառը՝ օտար ամուսնութիւնների վիճակագրութեան՝ հասկանալու համար, որ համայնքի ազգային հեռանկարը վտանգուած է:

- Ազգապահապանութեանը մեծ սպառնալիք են ոչ միայն խառը ամուսնութիւնները, այլեւ քաղաքական եւ տնտեսական նկատառումներով պայմանաւորուած արտագաղթը, հայերէնի օգտագործման նահանջը, ժողովրդագրական անկումը, հայկական վարժարանի հայ աշակերտների թուի աստիճանական նուազումը, գոյութիւն ունեցող անտարբերութիւնը թէ՛ ինքնութեան եւ թէ՛ ազգային հարցերին, համաշխարհայնացման յարաճուն ընթացքը, Միջին Արեւելքում ստեղծուած անկայուն ու անկանխատեսելի քաղաքական ու տնտեսական իրավիճակը, մոլեկրօնութեան ու կրօնական արմատականութեան յարաճուն աճը, հասարակութիւնների որոշակի կրօնականացումը եւն.: Նշուած գործօնները բացասական ազդեցութիւն են ունենալու նաեւ Միջին Արեւելքի, այդ թւում՝ Յորդանանի հայ համայքնի հեռանկարի վրայ:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Հաշուի առնելով այն փաստը, որ Յորդանանի հայ համայնքի ազգային կեանքի աշխուժացումը շատ բաներով պայմանաւորուած է Հայաստանից եկող ազդակներով, առաջարկում ենք հետեւեալը.-

- Կարիք ու անհրաժեշտութիւն կայ, որպէսզի Հայաստանն աջակցի յորդանանահայութեանը՝ արդիականացնելու ազգային կրթական համակարգը: Խօսքն առաջին հերթին մեթոդաբանական օգնութեան, Հայաստանում յորդանանահայ ուսուցիչների շարունակական վերապատրաստման, նոր դասագրքերի ստեղծման մասին է, որի փորձը ձեւաւորուել է դեռեւս Խորհրդային Հայաստանի տարիներում:
- Շահեկան կը լինի, եթէ Հայաստանի պետական Հ1 հեռուստաալիքը ժամանակ առ ժամանակ լուսաբանի Միջին Արեւելքի, այդ թւում՝ Յորդանանի հայ համայնքի ազգային կեանքի տարբեր ոլորտները: Այս իրողութիւնը նոր լիցքեր կը հաղորդի համայնքին, ինչպէս նաեւ կը նպաստի Հայաստանի եւ Միջին Արեւելքի հայ համայնքների հիմնախնդիրների աւելի ճիշտ ընկալմանը, հետեւաբար եւ լուծմանը:
- Աւելի մեծ թափ պէտք է տալ Հայաստանում կազմակերպուող սկաուտական բանակումներին եւ երիտասարդական այլեւայլ, այդ թւում՝ մարզական ու մշակութային հանդիպումներին: Պէտք է օգնել, որպէսզի

յորդանանահայ երիտասարդն աւելի մօտիկից ծանօթանայ Հայաստանին, որոշակի գործնական կապ հաստատի Հայաստանի հետ: Շեշտադրելով երիտասարդութեանը՝ հնարաւոր կը լինի վերաձեւել հեռանկարը:

- Օգտագործել Հայաստանում սովորած եւ սովորող յորդանանահայ ուսանողների եւ Յորդանանում սովորած հայաստանցի ուսանողների ներուժը՝ որպէս կողմերին կապող օղակ:
- Կազմակերպել Սփիւռքի՝ նոյնանման մասնագիտութեամբ մարդկանց հանդիպումները Հայաստանում: Հայաստանում կազմակերպուող գիտաժողովներում եւ տարաբնոյթ ամբիոններում ընդգրկել պատուիրակներ Յորդանանից: Հայաստանից պարբերաբար կազմակերպել մշակութային խմբերի հիւրախաղեր, ինչպէս նաեւ միջոցառումներ Յորդանանում:
- Յորդանանահայ համայնքի որոշակի աշխուժացմանը կարող են նպաստել նաեւ Յորդանանի եւ Հայաստանի միջեւ միջպետական գործակցութեան է՛լ աւելի ամրապնդումն ու սերտացումը:

The Armenian Community of Jordan: Current Challenges (Summary)

Araks Pashayan
a_pashayan@hotmail.com

The current Jordan Armenian community reflects a high level of national awareness, maintained by both community institutions and families. The community is relatively vibrant at the national, spiritual, cultural and social levels, with the middle and elder generations running the affairs of the community.

The research covers issues of identitity, preservation and the future prospects of the community. It sheds light on the activities of the educational, athletic, cultural and public institutions of the community as well as the role of the individuals and the church in preserving Armenian identity.

The study is based on interviews with community representatives, heads of national institutions, activists, and students doing their higher education in the Republic of Armenia. IN addition there are interviews with students who received their university education in Jordan and returned to the Republic of Armenia and the chargés d'affaires of the Republic of Armenia in Jordan, Dr. Arshag Poladian (seat in Damascus).

The research focuses on the challenges the community faces concerning the preservation of Armenian culture and the factors impacting it. The study ends with questions regarding the future prospects of the community.

Յաւելուած

[1918]

Նոր Կայան Մը Ազատագրուած Հայերու[1]



...Վերջերս գրաւուած Թաֆիլէ քաղաքէն (Մեռեալ Ծովու շրջան) ՀԲԸՄիութեան Կեդրոնական Ժողովը սպացած է նամակ մը, ուրկէ կ'երեւայ թէ 1000ի չափ տարագրեալներ կը գտնուին ամէնախեղճ վիճակի մէջ: Այդ նամակին վերջին հատուածը սփորեւ կ'արտագրենք:

Մխիթարական է հաստատել թէ այդ շրջանին մէջ տակաւին բազմաթիւ տարագրեալներ կը գտնուին որ ժամէ ժամ կը սպասեն իրենց ազատագրումին: Այս առթիւ խառն խորհրդակցութիւններ կատարուեցան անմիջական օգնութիւն փութացնելու համար զինուորական իշխանութեանց միջոցաւ, որ արդէն հոգածութեան առարկայ ըրած են մեր տարաբախտ հայրենակիցները:

...Ներեցէք որ տեղւոյս հայ գաղթականներու անցեալ եւ ներկայ վիճակին մասին համառօտաբար տեղեկութիւն տամ: 1915 Ապրիլի սկիզբէն սկսաւ հայ գաղթականութիւնը, Կիլիկիոյ եւ Փոքր Հայքի քաղաքներէն եւ գիւղերէն մեզ ճամփայ հանեցին հետիոտն, առանց որեւէ բան առնելու մեր ունեցածէն: Էրիկը կնիկէն, զաւակները ծնողքէն զատելով ամէնը տարբեր կողմեր խրկեցին, շատ տեղերու էրիկմարդիկը առաջուց զատելով դուրս հանեցին ոմանք հրացանի բռնեցին, ոմանք ալ թեւ թեւի կապելով գետերը թափեցին, կիներն էին որ գաղթականութեան կարաւանը կազմեցին,

[1] *Յուսաբեր*, 18 Մարտ 1918:

էրիկմարդոցմէ մաս մը որ պահուըտած էին եկան ճամփան կիներուն միացան: Ճամփորդութեան միջոցին օսմանեան կառավարութենէն դրդուած աւազակներ՝ ծպտեալ պաշտօնեաներու հետ միացած գտնուող էրիկմարդոց ծերէն մինչեւ կաթնկերը սուրէ անցուցած եւ կիները օրական հինգէն վեց անգամ կողոպտած են, միքանի էրիկմարդիկ անտառին մէջ փախած եւ քանի մը օր վերջը միացած են: Այս վիճակին մէջ ոմանքս մերկ, ոմանքս շապիկով մը միայն եկած Հալէպի կայարանը հասած ենք, այստեղէն մեզ շոգեկառքին մէջ զետեղելով անօթի ծարաւ եւ մերկ, շաբաթ մը վերջ Դամասկոսի կուսակալութեան Թաֆիլէ քայմաքամլըքի գիւղերը լեցուցին: Երբ հոս հասանք 2800 հոգի էինք, մեզ հարիւրներով փոքր ախոռներու մէջ բանտարկեցին, այնչափ խիտ՝ որ շարժելու, երկննալու տեղ չէինք գտներ, բացարձակապէս մեզ մահուան դատապարտեցին, մեզ օրական ալ 9-10 ժամ ձրի աշխատցնելով, վերջապէս անօթութենէ, մերկութենէ, բնակարանի նեղութենէ եւ կառավարութեան մեզ մեռցնելու դեռ հնարած նոր նոր հնարքներէն 20-30 հոգի սեւ հողը ղրկեցին: Հոս երիտասարդ կեանքի մը գինը հացի փշրանք մը եղաւ: Որքա՛ն երիտասարդներ ու պատանիներ արաբ դռներու առջեւէն հաց հաց կանչելով իրենց վերջի շունչը աւանդեցին, շատեր կենդանիներու նման փորձեցին խոտ ուտել բայց արգիլուեցան եւ դիակներ անթաղ քանի քանի օրեր ախոռներու անկիւնը եւ փողոցներու մէջ հոտեցան եւ վայրենի գազաններու կերակուր եղան: Շատերուն գանկը, խոպոպները ճակատնուն վրայ փըռուած կենդանիներու սմբակին տակ փշրուեցան, քանի քանի ազնուական օճախներու լոյսը մարեցաւ եւ քանիներու դուռը կնքուեցաւ, երկինքը լացաւ եւ ողբերգեց մեր ողբը այս եղեռնագործութիւններուն վրայ, արաբը ցաւ զգաց եւ մեղքացաւ, բայց օսմանցին իր բոլոր հնարքները ի գործ դրաւ մինչեւ որ մեզ ոչնչացուց: Եւ այժմ 2800 հոգիէն հազիւ 1000 հոգի մնացած [է], եւ աս հայութեան մնացորդը մերկ անօթի նախնի վիճակին մէջ ձեր օգնութեան կը սպասենք, որ մեզ կարելի եղածին չափ շուտ փութաք այստեղէն, մեր գերեզմաններէն ազատել: Եթէ ձեր օգնութիւնները զլանաք եւ մեզ քիչ մը երկար հոս թողուք՝ մեր գերեզմանները կրնաք միայն համրել: Բոլորս միասին կ'աղաչենք մեզ այս տեղէն ազատեցէք:

Ստորագրութիւնք.- Ընդհանուր հայ թաղապետ՝ մարաշցի Տիրան Պէօնէլեան, թաղապետ Հաճընի՝ Գէորգ Տեւէճեան, թաղապետ Կիւրինի՝ Ալեքսան Գլպալը, թաղապետ Մերտինի՝ Ճորճի Սայիտ Հատտատ, թաղապետ Տէօրթ Եոլի՝ Մեսրոպ Քէօրօղլեան, թաղապետ Կեսարիոյ՝ Պետրոս Պօղոսեան, թաղապետ Քիլիսի՝ Լեւոն Շիրինեան, անդամ Մարաշի՝ Յակոբ Տոլապճեան, անդամ Հաճընի՝ Հաճի Չոպանեան, անդամ Կիւրինի՝ Յովհաննէս Գարամանուկեան, անդամ Մերտինի՝ Դաւիթ Հաննա Միտիաթի, անդամ Մարաշի՝ Նազարէթ Գալըօղլեան:

1/13 Փետրուար 1918, Թաֆիլէ

[1918]

Անապատի Կեանքէն (Տարագրի Մը Յուշերէն)[2]

Գրիգոր Գուտուլեան

1915 Օգոստոս 5ին Տրայի ճամփով Ամման հասանք. 600 տնուոր չերքէզ գիւղ մըն է, կայ նաեւ 64 տուն արաբ եւ 3-4 տուն յոյն եւ լատին: Օսմանեան կառավարութիւնը իբր յարմար կեդրոն, հոս տուներուն մէջ կը պահէ ամբողջ Հիճազի [համար] Ամմանի կայարանը հասած ռազմամթերք, ուտեստ եւն.: Հիճազի երկաթուղին քաղաքին ստորոտէն կ'անցնի եւ կ'երկարի մինչեւ Մետինէ: 1917ի վերջերը աւարտած Սալթ-Ամման *շոսէն* եւս կայարանէն կ'երկարի դէպի Սալթ: Սալթէն 6 ժամուան կիրճերու մէջէն, Ղորի մէկ մասի մէջէն անցնելով [երկաթուղին] Յորդանան գետ կը հասնի: Ամման պատմական մայրաքաղաքն է Ամմոնի թագաւորին: Հակառակ դարերու հոլովման եւ հին ազգերու մղած կատաղի կռիւներուն, հոս տակաւին կենդանի կը մնան հին, գեղեցիկ բերդերու փլատակներ, կոթողներ, աղջիկ կուռք մը, մեծ քարէ սիւն մը, հին փորագրուած քարէ գերեզմաններ, ողիմպիական խաղերու ընդարձակ վայրեր՝ մասնաւոր խնամքով տաշուած 4-6 մեթր երկայնութեամբ քարով շինուած նստարաններէ շրջապատուած: Կ'ենթադրուի որ 8000 հոգի առանց նեղուելու կրնայ զետեղուիլ եւ խաղերը դիտել: Քաղաքին բարձունքը հանգչող երեք մեծ բերդերէն մէկուն մէջն ալ քարերուն վրայ հին թագաւորներու եւ մարգարէներու պատկերներ փորագրուած կան:

Սալթ կամ Ճիլաթ եւ Ճարաշ, որ 6-9 ժամուան հեռաւորութիւն մը ունին Ամմանէն, հին ազգերու քաջութիւնները խօսող եւ կեանքերնին անմահացնող հնութիւններ խիստ շատ են: Սալթ գաւառակ իր մօտակայ գիւղերով առաւելութիւններ ունի Հորանի աւազուտքէն. օդը, ջուրը եւ կլիման երբեք չեն բաղդատուիր Հորանի անտանելի եւ անջրդի անապատներուն հետ: Սալթի խաղողը մանաւանդ կրնայ մրցիլ եւ նոյնիսկ գերազանցել Անատոլուի լաւ խաղողը: Երկրին դիրքը եւ կլիման եւ մանաւանդ հողը կառավարութեան ուշն ու ուրուշը գրաւելով, 20-25 տարիներ առաջ զինու զօրութեամբ յաջողած է խլել արաբներու ձեռքէն եւ

[2] *Արեւ*, 2 Օգոստոս 1918: Զայն կը հրատարակենք տեղանուններու, լեզուական եւ կէտադրական փոքր ուղղումներով:

հող բերեր հաստատեր է իր հարազատները՝ չերքէզը, չեչէնը, տաղստանցին եւ ռումելիցի թիւրք գաղթականներ: Թիւրք կառավարութեան բռնի արաբ հողերու յափշտակումը անհաշտ ոգի մը ստեղծեց արաբին մէջ: Ահա այդ պատճառով էր որ մինչեւ 1913 գրեթէ միշտ անպակաս եղաւ Հորանի եւ Քարաքի ապստամբութիւնը օսմանեան կառավարութեան դէմ: Չմոռնանք սա ալ ըսել թէ կառավարութիւնը՝ յոգնած իր անվերջանալի կռիւներէն, տարիներ առաջ զինուորագրութենէ զերծ պահեց Քարաքը իւր գաւառակներով եւ ամբողջ գիւղերով եւ համաշխարհային սա ահեղ պատերազմին եւս հակառակ մեծ խոստումներու եւ յուսադրումներու չյաջողեցաւ օսմանեան դրօշին տակ հաւաքել այլ կողմերու արաբները:

Ռուսիայէն եւ Ռումելիէն արտաքսուած չերքէզ եւ թիւրք գաղթականը բնական էր որ քրիստոնէին եւ հայուն հաշտ աչքով պիտի չնայէր: Առջի օրէն մինչեւ ազատագրում, ամբողջ 3 տարիներ, աննկարագրելի են զուլումները, անիրաւութիւնները, քարկոծումները, գանակոծումները, առեւանգումները եւ մանաւանդ լլկումները:

Ամման մինչեւ 15 Օգոստոս կը հասնինք 3212 հոգի: 1917ին կատարուած արձանագրութիւնը այդ թիւը 2455 հոգիի կ'իջեցնէ: Երուսաղէմ հետզհետէ հասնողներուն ամբողջ թիւը գրեթէ 1600ի կը հասնի, որով 855 հոգի վերջին անգամ Վատիներ չերքէզ գիւղ եւ Ամման կը մնան չազատուած: Մէկ մասը Սիւվելահի մէջ սպաննուած եւ 2 տարուան անսուաղութեան զոհերուն թիւը կը հասնի 757ի, որոնց մէջն է նաեւ էօզերլիցի (Տէօրթ Եոլ) Տ. Պետրոս Փելթէքեան որ իր պաշտելի Փանոսին հետ Սալթ, խառնըցի Պօղոս աղա Չաքըրեանի հողակոյտին քով քովիկը կը հանգչին:

1916 Յունուար 13ին Դամասկոսէն երեք երիտասարդ իթթիհատականներ Սալթ գալով, գաղտնի ժողովի մը մէջ Սալթի եւ շրջակայից հայ տարագիրներուն Ղոր կամ Էօտվան ղրկուիլը խնդրոյ առարկայ եղած էր: Կառավարական շրջանակներու մէջ ազդեցութիւն ունեցող Սէյֆէտտին էֆենտին իր համախոհներով հակառակը պնդած ըլլալուն՝ ծրագիրը յաջողած չէր: Վերջնական վճռական որոշում տուած էին որ շարունակ տեղափոխութիւն ըլլայ եւ ժողովուրդը ինքնաբերաբար փճանայ եւ ծուլուի թիւրք գաղթականներու եւ չերքէզներու հետ:

Սալթի տեղակալը իր արբանեակներով, չերքէզ կամաւորներու միրալայ Էմիրզէ պէյի, հարիւրապետ Իսհակ էֆենտիի, ժանտարմա քոմանտան Պետրի պէյի, գաղթականաց քննիչ Զիւէրի հետ ձեռք ձեռքի տուած կ'աշխատէին փճացնել մնացած ափ մը տարագրութիւնը: Պետրի պէյ Կարս Պազարի Տէր Վարդան քահանան երկու անգամ գանակոծեց կառավարութեան դռան առջեւ որ իսլամութիւնը չ'ընդունիր: Առաջին անգամ խեղճ քահանան կորսնցուց իր ամբողջ ակռաները, իսկ երկրորդ անգամ այնքան ընկճուած էր, որ քանի մը օր վերջ մահը վրայ հասաւ եւ գէթ խեղճ քահանային երէցկինը եւ պզտիկներն ալ չազատեցան: Նոյն

դժբախտ վիճակին ենթարկուեցաւ նաեւ Գալատուրանի Տէր Պետրոս Քհնյ. Տէր Աբրահամեանը, որուն *գալփաքը* շուկային մէջ կտոր-կտոր եղաւ եւ ձեռքերը ու ոտքերը եւ մարմնոյն ամէն կողմը երեք հարիւրէն աւելի գաւազանի հարուածներ տեղացուց այդ մարդ հրէշ Պետրին եւ շաբաթներով բանտարկեց խեղճ քահանան՝ որ այս օրերս Փոր Սայիտ հասաւ ողջ-առողջ:

Ամբողջ առեւանգումներու եւ տուներէ բռնի խլուած հայ աղջիկներուն պատասխանատուն ատոնք են: Քայմաքամ Համտի, ու Պետրի պէյ, որ բացի աղջիկներէ իրենք ալ քովերնին առած էին մէյմէկ գեղեցիկ մանչ 2-12 տարու, մինչեւ վերջ ամբողջ գիւղերը դրդեցին ու գրգռեցին որ նոր իսլամացած հայ աղջիկներու հետ ամուսնանան որ *սեւապ* ու *սիւննէթ* կը համարուի եւ ուղղակի *ճեննէթ* կ'երթան: Արդէն չերքէզին ու թիւրքին փնտռածն ու չգտածը չէ՞ մի որ այդ էր, ինչպէս Քարաքի, Թաֆիլէի եւ Մաանի կողմերը, հոս ալ թիւրք ճիրաններուն մէջ կը մնան շատ մը գեղանի աղջիկներ:

Տեղական քրիստոնեայ տարրէն եթէ երբեք բարիք մը չվայելեցինք, գէթ չարիք մ'ալ չհասցուցին: Սալթի յոյն եւ լատին առաջնորդները, նաեւ՝ Ֆահիսի լատինաց առաջնորդ Խուրի Պշարա երբեմն մեր ցաւերուն սփոփիչը եւ մխիթարիչը եղան եւ յորդորեցին քրիստոնեայ եւ իսլամ արաբները որ չկողոպտեն մեզ եւ լաւ աչքով մը նային: Մանաւանդ Ֆահիսի լատին առաջնորդը իր գիւղը գտնուած գալատուրանցի գաղթականաց չխնայեց իր դիւրութիւններն ու աջակցութիւնները: Նմանապէս Երուսաղէմէն ալ Գիւտ սրբազանի հետ ատանացի եւ այլտեղացի երիտասարդներ թէ՛ Երուսաղէմ գացող Սալթի գաղթականներուն եւ թէ՛ Մատապա Ամման եւ Սալթ գտնուած տարագրեալներուն ըստ բաւականին օգնեցին ու մխիթարեցին:

Մատապայի մէջ գտնուած գաղթականաց մեծամասնութիւնը հաճընցի էր, որոնց մինչեւ վերջ օգնեցին Մատապայի հայասէր եւ բարեպաշտ յոյներն ու լատինները ազատելով շատ մը թանկագին կեանքեր:

Սալթ գաւառակի եւ գիւղերուն մէջ ցրուած գաղթականաց թուոյ եւ տեղւոյ մասին լաւ գաղափար մը տալու համար, ստորեւ կը դնեմ տեղւոյն վրայ պատրաստուած խնամքոտ ճշգրիտ մէկ ցանկը.-

Բուն Սալթ գաւառակի տարագրութիւնը

Կարսպազարցի (Սսոյ մօտ) 50 տուն՝ 283 հոգի, խառնեցի (Ատանա)՝ 37-229, գալատուրանցի (Ճրսըր Շուղուր)՝ 17-116, պանդուխտներ՝ 10-67:

Այնի Օմար թիւրք գիւղ, գալատուրանցի 6 տուն՝ 59 հոգի:

Այնի Սիւվելահ չերքէզ գիւղ, խառնեցի 18 տուն՝ 119 հոգի, հաճընցի՝ 1-5, գալատուրանցի՝ 8-81:

Վատիներ չերքէզ գիւղ, զէյթունցի 1 տուն՝ 7 հոգի, խառնեցի՝ 5-25, գալատուրանցի՝ 3-52, էօզերլիցի (Չորք Մարզուան)՝ 19-116, հաճընցի՝ 28-140:

Նաուր չերքէզ գիւղ, խառնեցի 32 տուն՝ 175 հոգի:
Մատապա արաբ գիւղ, հաճընցի 27 տուն՝ 162 հոգի, խառնեցի՝ 9-48:
Ռըմման արաբ գիւղ, գալատուրանցի 19 տուն՝ 152 հոգի:
Ռըմման արաբ գիւղ, գալատուրանցի 23 տուն՝ 140 հոգի:
Ֆեհիս արաբ գիւղ, գալատուրանցի 39 տուն՝ 265 հոգի:
Մահէս արաբ գիւղ, գալատուրանցի 24 տուն՝ 178 հոգի:
Ալպասան արաբ գիւղ, գալատուրանցի 8 տուն՝ 36 հոգի:
Ընդհանուր գումար՝ 386 տուն, 2455 հոգի:

[1950]

Հայկական Աւան Մը Յորդանանի Մէջ[3]

Ամմանի ծանօթ ազգայիններէն Պր. Յ. Պետեւեան, խմբագրութեանս տուած իր այցելութեան ընթացքին, պատասխանելով մեր հարցումներուն, յայտնեց թէ Ամմանէն 17 քիլոմեթր հեռու, 700 մ. բարձրութեամբ բլուրի մը վրայ, զուտ հայկական եւ արդիական աւան մը շինելու աշխատանքները յաջող ընթացքի մէջ էին:

Դիմում կատարուած է 1850 տէօնիւմ հողի համար: Աւանին մէջ պիտի հաստատուին 5-600 հայ ընտանիքներ, ընտանիք գլուխ 2 տէօնիւմ պիտի յատկացուի (տէօնիւմը միայն 2 յորդանանեան տինարէն): Պիտի կառուցուին համայնքապատկան եկեղեցի, դպրոց, հիւանդանոց, ակումբ եւ հանրային պարտէզ: Կառավարութիւնը արտօնութեան պաշտօնագիրը պիտի յանձնէ ի մօտոյ՝ երբ մասնագէտները հաղորդեն թէ կարելի է լուծել ջուրի հարցը:

Պր. Պետեւեան յայտնեց թէ՝ այս հարցին մէջ եւս Յորդանանի վեհապետ Ապտալլա թագաւորը կը ցուցաբերէր իր անկեղծ հայասիրութիւնը:

Պէյրութի պաղեստինահայ գաղթականները կրնան յարաբերիլ Առժամեայ Յանձնախումբին հետ, փոստարկղ թիւ 23, Ամման:

[3] *Զարթօնք*, 28 Դեկտեմբեր 1950:

[1951]

Յորդանանի Հաշիմեան Թագաւորութեան Վերակառուցուող Մայրաքաղաքը Ամման[4]

Երիտասարդ մտաւորական Պր. Ա[շոտ] Ալթունեանի խմբագրութեանս այցելութենէն օգտուելով, կը հաղորդենք յետագայ շահեկան ծանօթութիւնները Ամմանի եւ հայ գաղութի ներկայ վիճակին մասին:

Պաղեստինի տխուր դէպքերէն յետոյ բազմաթիւ գաղթականներ հաստատուած են արդէն Ամման եւ շրջակայքը: Շինարարական ձեռնարկներու համընթաց, առեւտրական լայն գործառնութիւն մը կեանքի կոչուած է:

Երբ օտարական մը կ'այցելէ Ամման, կը տպաւորուի հոն կատարուող շինարարութեամբ եւ եթէ ներկայ թափը տասնեակ մը տարի տեւէ՝ հաւանաբար Ամման դառնայ անապատի ճամփուն վրայ գեղեցկագոյն ովասիս-քաղաքը:

Բարեզարդումի շինարարական այս աշխատանքներուն մէջ հայերուն դերը ուշագրաւ է: Բազմաթիւ հայ որմնադիրներ կ'աշխատին, իսկ Պէյրութի հայութեան ծանօթ ճարտարապետ տիար Ալթունեան, որ կառուցած էր Լիբանանի խորհրդարանի շէնքն ու Մաարատի ժամացոյցը եւ հսկած՝ թանգարանի շինութեան, աւարտած է շինութիւնը Ն.Վ. Ապտալլա թագաւորին պալատին կից, օտար հիւրերու ընդունելութեան տաղաւարին կառուցումը որ գեղեցիկ յղացումի մը արտայայտութիւնն է:

Տիար Ալթունեան կը կառուցէ նաեւ գահաժառանգ էմիրի եղբօր էմիր Նայիֆի սեփական պալատը, ինչպէս նաեւ Ճեպէլ Ամմանի վրայ կարգ մը շէնքեր:

Ամմանի հայ գաղութը դէպքերէն առաջ մօտ 1000 հոգի կը հաշուէր: Ներկայիս այդ թիւը գրեթէ քառապատկուած է, պաղեստինահայ գաղթականներու միջոցաւ:

Բարեբախտութիւն է նկատել որ անոնց մեծ մասը տիրացած են տնտեսական լաւ վիճակի մը:

Անգործներուն թիւը քիչ է, համեմատած Լիբանանի կամ այլ երկրի մը: Ազգային կեանքը կը շեշտուի առաւելապէս ՀԵՄ եւ ՀՄԸՄ մշակութային եւ մարզական միութիւններուն գործունէութեամբ, որոնք ունին մարզական խումբեր եւ մրցումներ կը կազմակերպեն յաճախ կարգ մը օտար եւ երուսաղէմեան խումբերու հետ:

Պաղեստինեան նախկին հպատակութիւն ունեցողներուն համար հեշտ է յորդանանեան հպատակութիւն ունենալ:

Զրոյցներու սահմանէն դուրս չելան նոր գիւղեր շինելու մասին տարածայնուած հաղորդագրութիւնները: Ըսուեցաւ թէ Բարեգործականը

[4] *Պրիսմակ*, Ա. Տարի, թիւ 10, 1 Մայիս 1951, էջ 16:

պետութեան աջակցութեամբ հայկական թաղամաս մը շինել ծրագրած է Ամմանի արուարձաններուն մէջ:

Ն.Վ. Ապտալլա թագաւորին յայտարարութիւնը թէ «որքան ժամանակ երկրին վեհապետն եմ, պիտի չուզէի որ ոչ մէկ հայու քիթը արիւնի»՝ լաւագոյն հաւաստիքն է հայ գաղութին ապահովութեան եւ վայելած հոգատարութեան:

Ոսկի երազներ հիւսելով Ամման հաստատուիլ փափաքող մեր հայրենակիցներուն կը թելադրենք որ աւելի իրատես ըլլան: Անգործութիւնը հոն ալ իր ներկայութիւնը կը ցուցադրէ. իսկ օտարականի մը համար դժուար պիտի ըլլայ գործի մը ձեռնարկել եւ աժան յաջողութիւն ձեռք բերել, ինչ որ կ'երազեն ոմանք:

[1951]

Յորդանանի Հայ Գաղութը
(Ստոյգ Վիճակագրութիւններ)[5]

Մերձաւոր Արեւելքի մէջ, զանազան պատճառներով, Յորդանանի Ամման մայրաքաղաքը, կարճ ժամանակի մէջ ամէնէն արագ զարգացող եւ ընդարձակուող քաղաքներէն դարձած է: Այս քաղաքը (նախապէս Փիլատելֆիա անունով) ունեցած է պատմական փայլուն անցեալ մը, որ կը հետաքրքրէ հնագէտները: ...Ամման իր շրջակայ աւաններով մեզ հայերս ամէնէն աւելի կը հետաքրքրէ իր մէջ ամփոփած հայութեամբ: Պաղեստինի ծանօթ դէպքերուն պատճառով, այս քաղաքի հայկական գաղութն ալ շուտով աճեցաւ: Չորս տարի առաջ Յորդանանի մէջ կային մօտ 140 հայ ընտանիք, որոնք մազապուրծ կրցած էին ճողոպրիլ թրքական վայրագ զուլումէն, գաղթականութեան դժնդակ օրերուն, եւ վայելած էին ասպնջականութիւնը արաբ ազնիւ եւ վեհանձն ժողովուրդին՝ մօտ 32 տարիներ առաջ: Այն սեւ օրերէն իբրեւ «յուշարձան» կը մնան տակաւին - իբր յաւիտենական նախատինք թուրքին - Մաանի մէջ 10-15 հողակոյտեր, թշուառութենէ եւ անօթութենէ սովամահ հայերու:

Կատարուած խղճամիտ մարդահամար մը այժմ կը ցուցնէ թէ Յորդանանի մէջ կը բնակին 590 հայ ընտանիքներ: Այս ընտանիքները հետեւեալ կերպով ցրուած են Յորդանանի քաղաքներուն եւ գիւղերուն մէջ.- Ամման՝ 465, Զարքա՝ 23, Իրպիտ՝ 24, Ռուսէյֆա՝ 16, Քարաք՝ 13, Մաֆրաք՝ 10, Սալթ՝ 5, Շունէ՝ 5, Ղոր Սաֆի՝ 5, Աքապա՝ 5, Էրչաքոր՝ 4, Հոսն՝ 2, Աճլուն՝ 2, Մարտապա՝ 2, Մաան՝ 2, Ճիսր Ալենպի՝ 2, Ղոր Մըզրաա՝ 2, Ճարաշ՝ 1: Գումար՝ 590 ընտանիք:

Կաթոլիկներու Պէյրութի *Մասիս* թերթին Յունուար 3ի եւ անկէ առաջուան յօդուածները՝ Յորդանանի հայութեան մասին, նպատակաւոր են եւ սխալ: *Մասիս* հայ ընտանիքներուն թիւը նշանակած էր 1000, մինչդեռ իրականութիւնը 590 է, կաթոլիկ ընտանիքներուն թիւը նշանակած էր 110, մինչդեռ իրականութիւնը 50 է միայն: Կան նաեւ 15 հատ ալ բողոքական եւ մկրտչական ընտանիքներ, որոնց հոգեւոր պետն է Վեր. Ս. Գրիգորեան: Մնացեալները ամբողջութեամբ լուսաւորչական են:

Մօտ 125 ընտանիքներ ունին իրենց սեփական բնակարանները: Քաղաքի մէջ բնակող հայերը կը զբաղին արհեստներով եւ առեւտուրով: Ամմանի բոլոր լուսանկարիչները հայեր են, ինչպէս նաեւ վարպետ դերձակները, կօշկակարները եւ մեքանիստները: Կան երկու բժիշկներ՝ Տոքթ. Ս. Պոտոսեան եւ Տոքթ. Ս. Էթեմէզեան, ինչպէս նաեւ ատամնաբուժ

---

[5] Ամմանէն յղուած եւ «Թղթակից» ստորագրութեամբ, երկու շարունակելիով լոյս տեսած այս նիւթը փոքր յապաւումներով քաղած ենք *Զարթօնք*ի 25 եւ 26 Յուլիս 1951 թիւերէն:

մը եւ երկու դեղագործներ: Իսկ գիւղերու մէջ բնակող հայեր կը զբաղին հողագործութեամբ եւ պարտիզպանութեամբ, կարգ մը տեղեր՝ նաեւ ջաղացպանութեամբ: Հոս կ'արժէ յիշել Ռուսէյֆա գիւղը, ուր կը բնակին կանուխէն հաստատուած 16 մարաշցի հայ ընտանիքներ, որոնք կարճ ժամանակամիջոցի մը ընթացքին անապատը դրախտի վերածած են պարտիզամշակութեամբ: Այս գիւղը ունի ծաղկոց մը՝ ասկէ 15 տարիներ առաջ հիմնուած Երուսաղէմի հայոց պատրիարքարանին կողմէ՝ «Դուրեան» անունով: Ունի 20 երկսեռ աշակերտութիւն եւ ուսուցչուհի մը: Տարին 30 յորդանանեան տինար նպաստ կ'ընդունի Բարեգործականէն: Կայ Բարեգործականի մասնաճիւղ մը: Տարուան ընթացքին միքանի անգամ կ'ընդունի հոգեւոր հովիւի այցելութիւնը, որ կու գայ զիրենք մխիթարել հոգեպէս, տօնական օրերուն: Հոգեւոր հովիւը նաեւ այցելութիւններ կու տայ հայաշատ կեդրոններէն Զարքայի եւ Իրպիտի: Ռուսէյֆայի դպրոցի եւ եկեղեցիի շէնքը, ինչպէս նաեւ 2017 քռ.մ. արտը իրենց սեփականութիւնն են:

Յորդանանի հայ գաղութը թեմն է Երուսաղէմի պատրիարքարանի Սրբոց Յակոբեանց վանքին: Կը կառավարուի պատրիարքարանին կողմէ նշանակուած հոգեւոր հովիւով մը: Ունի մատուռ մը՝ Ս. Աստուածածին, եւ դպրոց մը՝ Հեթումեան Ազգային Վարժարան: Վեց տարիներէ իվեր տեղւոյն հոգեւոր հովիւը եւ միեւնոյն ատեն դպրոցի տեսուչն է Հոգ. Տ. Կորիւն Վրդ. Մանուէլեան: Հոգեւոր հովիւը իրեն օգնական ունի պատրիարքարանին կողմէ նշանակուած եօթ անդամներէ բաղկացած Տեղական Խորհուրդ մը, որուն անդամներուն անունները հետեւեալներն են.- Սերովբէ Անթիքաճեան, Տիգրան Եկէնեան, Զաւէն Եկէնեան, Յովիկ Էթեմէզեան, Հայկ Պէրպէրեան, Պետրոս Տումանեան, Հայկ Փելթէքեան:

Տեղական Խորհուրդի այս կազմը անցեալ տարի կանոնաւոր կերպով վաւերացուեցաւ պատրիարքարանին կողմէ՝ երկու տարուան համար, 21 Նոյեմբեր 1950 թուակիր պաշտօնագրով, եւ իր առաջին նիստին ընտրեց իր դիւանը.- Հայկ Պէրպէրեան՝ ատենապետ, Զաւէն Եկէնեան՝ ատենադպիր, Յովիկ Էթեմէզեան՝ գանձապահ, Սերովբէ Անթիքաճեան, Տիգրան Եկէնեան, Պետրոս Տումանեան, Հայկ Փելթէքեան: Առանց չափազանցելու կրնանք ըսել թէ անցեալ տարուան ընթացքին այս կազմը ունեցաւ շատ բեղուն եւ խաղաղ գործունէութիւն մը, կանոնաւոր նիստեր, եւ զբաղեցաւ գաղութիս ընկերային, կրթական եւ վարչական այլեւայլ գործերով: Այս տարի Տեղական Խորհուրդին ջանքերուն կը պարտինք տեսչարանի ելեկտրականութիւնը եւ հեռաձայնը, ինչպէս նաեւ պատրիարքարանին հետ խորհրդակցելով՝ գործնական քայլեր առնելը՝ գաղութիս մէջ սեփական եկեղեցիի եւ դպրոցի շէնքեր շինելու համար: ..Կը յուսանք մօտ ատենէն սկսիլ շատ կարեւոր այս գործին, եթէ արտասահմանի մեր հայրենակիցները մեզի օգնելու բարիկամեցողութիւնը եւ առատաձեռնութիւնը ունենան: Այլապէս, ենթակայ ենք փճանալու եւ

կորսուելու՝ լատինական եւ կաթոլիկ նոր սկսած բուռն թափով գործունէութեան պատճառով:

Տեղական Խորհուրդի այս կազմին կը պարտինք նաեւ յոբելենական այս տարուան Վարդանանց 1500ամեայ աննախընթաց հանդէսին կազմակերպութիւնը, որ խանդավառեց գաղութիս հայութիւնը Վարդանանց ոգիով:

Հեթումեան Ազգային Վարժարանը, որ իր տեսակին մէջ միակ հաստատութիւնն է Ամմանի հայ հասարակութեան, յուսատու վառարանն է մեր գաղութին, որ իր ջերմութիւնը կը ստանայ Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց դարաւոր հայու Ս. օճախէն: Յորդանանի անապատին մէջ, հայրենիքէն հեռու հայ ուսանողը այս խոնարհ բայց վսեմ յարկին տակ է որ 25 տարիներէ իվեր կը սորվի իր մեծասքանչ լեզուն, իր ամէնասուրբ հաւատքը եւ իր անցեալի հերոսապատումը: Միակ կրթական հաստատութիւնն է գաղութին, որ կրնայ ջամբել հայ մանուկին անխարդախ, հարազատ, տոհմիկ հայու շունչն ու հոգին՝ անկողմնակալ գործունէութեամբ: Այժմ ունի 300ի մօտ երկսեռ աշակերտութիւն, երկու բաժանումներով՝ վեց դասարան նախակրթարան եւ չորս դասարան մանկապարտէզ: Ուսուցչական կազմը կը բաղկանայ մէկ եկեղեցական տեսուչէ, երկու ուսուցիչէ եւ 9 ուսուցչուհիէ: Հոն կ'աւանդուին անգլերէն, արաբերէն եւ հայերէն լեզուներէ զատ, նախակրթարանի մը ծրագրին մաս կազմող բոլոր դասերը: Այս դպրոցը կարծես բաւական չըլլար մեր գաղութին, բարի նպատակով Յունաստանէն յատկապէս եկած կաթոլիկներու հոգեւոր հովիւ Գեր. Հայր Յովհաննէս Ծ. Վրդ. Կամսարական նոր դպրոց մը բացաւ լատինութեան պատճառով այլասերած հայերու հայերէն սորվեցնելու մտահոգութեամբ, Պապական Գաղթականաց Վարժարան անունով, որ մօտ 100 աշակերտ ունի: Ասոր տարեկան ծախքը գրեթէ ամբողջութեամբ կը հոգացուի պապական միսիոնարութեան մը կողմէ: Հայ բողոքականներն ալ ունին իրենց դպրոցը, 35 աշակերտներէ բաղկացեալ, որուն ամբողջ ծախքերը կը հոգացուին ամերիկեան միսիոնարութեան մը կողմէ: Պէտք ենք բախտաւոր զգալ, որ տակաւին օտարները մեզ սիրելու բարիկամեցողութիւնը ունին: Իսկ մեր դպրոցը որ տարեկան 1800 Յ.Տ. պատկառելի ծախք մը ունի, հոգեւոր հովիւի ամսականէն եւ պատրիարքարանի 50 Յ.Տ. նպաստէն զատ, մնացած գումարը ամբողջութեամբ կը հոգացուի տեղւոյն մեր աղքատ բայց ժրաջան եւ առատաձեռն ժողովուրդէն, սեփական ճիգերով: Հոս յիշատակութեան արժանի է մեծայարգ տիար Զօհրապ Կէօկօղլանեան, որ այս տարի այլեւայլ առիթներով տուած նուէրներէն զատ 51 Յ.Տ. առատաձեռն նուէր մը ըրաւ մեր դպրոցին, իսկ ՀՕԿ Տիկնանց Միութիւնը նուիրեց 21 Յ.Տ., Պր. Վահէ Ղազարեան նուիրեց 14, Պր. Համբարձում Աֆարեան՝ 15 Յ.Տ.: Որով մեր դպրոցը հակառակ իր անկայուն եւ անորոշ

եկամուտին, խոնարհ բայց անառիկ պատնէշ մըն է միշտ այլասերումին դէմ:

Հայ կաթոլիկներ իրենց եկեղեցական արարողութիւնները կը կատարեն Ամմանի իտալական հիւանդանոցի մատուռին, երբեմն ալ լատինաց եկեղեցիին մէջ: Արդարեւ, հայու միասնականութեան բաղձանքը եւ հարազատ հայ ապրելու ինքնագիտակցութիւնը ունեցող հայորդիի մը համար ո՛րքան ցաւալի եւ դժբախտ երեւոյթ մը կը պարզեն թէ՛ դաւանանքի եւ թէ՛ ուսումի տեսակէտէ այս ճիւղաւորումները, փոքրիկ հայ գաղութի մը մէջ. ժամանակի եւ նիւթականի վատնում պարզապէս: Ինչ լաւ պիտի ըլլար՝ եթէ բոլոր հայերը ըլլային մէկ սիրտ եւ մէկ հոգի եւ իրենց թէ՛ հոգեւոր եւ թէ՛ ուսումնական ծարաւը յագեցնէին հայկական միակ աղբիւրէ մը: Այս մեր փափաքը կը յուսամ թէ միայն մայր հայրենիքին մէջ կրնայ իրականանալ, երջանիկ օր մը: Մաղթենք սրտանց որ այն օրը չուշանայ Աստուծմով:

Մեր գաղութին մէջ կը գործեն հետեւեալ միութիւնները.- ՀԲԸՄի մասնաճիւղը, ՀՄԸՄի մասնաճիւղը, Հայ Օրիորդաց Ռուբինեանց Միութիւնը եւ ՀՕԿարմիր Խաչի Տիկնանց Միութիւնը:

[1952]

Ամմանահայ Կեանք[6]

Յորդանանի մայրաքաղաք Ամմանի հայագաղութը կարեւոր գաղութ մը դարձած է Մերձաւոր Արեւելքի մէջ: Պաղեստինի ծանօթ դէպքերէն վերջ մանաւանդ Երուսաղէմի, Եաֆայի, Հայֆայի հայերը մեծ մասամբ գաղթած եւ հաստատուած են Ամման:

Ամմանահայութեան ներկայ թիւը կը հասնի մօտ 5000ի: Հայեր առհասարակ արհեստաւորներ եւ վաճառականներ են: Ունինք Ս. Աստուածածին անուամբ մատուռ մը, որուն կից է... Հեթումեան Ազգային Վարժարանը 250 երկսեռ աշակերտութեամբ, 12 ուսուցիչ-ուսուցչուհիներով, եւ տեսչութեամբ Հոգ. Տ. Կորիւն Վրդ. Մանուէլեանի:

Երուսաղէմի վանական իշխանութեան կողմէ նշանակուած է Տեղական Խորհուրդ մը, բաղկացած 7 յորդանանահպատակ հայերէ [կազմուած է]...: Ինչպէս միւս գաղութներու մէջ, այս գաղութն ալ զերծ չէ մնացած կուսակցական անհասկացողութիւններէ...:

Երուսաղէմի պատրիարքարանի թեմերն են Ամման, Եաֆա, Հայֆա եւ Կազա: Սոյն թեմերը կը կառավարուին Պատրիարքարանի կողմէ նշանակուած տեսուչներով եւ տեղական խորհուրդներով, ըստ ընկալեալ սովորութեան:

Ասկէ առաջ Տեղական Խորհուրդի կազմը կը նշանակուէր պատրիարաքարանին կողմէ, իր մէջ ունենալով ժողովրդային ամէն տեսակ կուսակցութիւններէ ներկայացուցիչներ, առանց խտրութեան: Նոյնն էր պարագան Ամմանի մէջ՝ մինչեւ 1950: Բայց այս ձեւը խռովութիւններու եւ անհասկացողութիւններու տեղի տուաւ[7]: Պատճառը կուսակցամոլութիւնն էր, որմէ կը վնասուէր գաղութը: Հետեւաբար պատրիարքարանի վարչութիւնը այս տարի Տեղական Խորհուրդի անդամները նշանակեց անկուսակցական ազգայիններէ:...

Ատենապետ՝ Պր. Յակոբ Պէրպէրեան, պալատի պաշտօնական լուսանկարիչ, արժանացած պատուանշաններու՝ Յորդանանի թագաւորներու կողմէ: Ատենադպիր՝ Պր. Զաւէն Եկէնեան, բարձրագոյն ուսում ստացած, բանաստեղծ, այժմ կառավարական բարձր պաշտօնեայ: Գանձապահ՝ Պր. Եդուարդ Խնտամեան, Օսմանեան Դրամատան փորձառու եւ հաւատարիմ հաշուակալն է: Պր. Գ. Սուլթանեան, նախկին հազարապետ յորդանանեան բանակի, այժմ Օսմանեան Դրամատան պաշտօնեայ է: ՊՊ. Հ Չորպաճեան եւ Հ. Փանոսեան՝ յայտնի վաճառականներ են:

---

[6] Յորդանանցի ստորագրութեամբ, *Զարթօնք*ի, 21 եւ 22 Նոյեմբեր 1952ի թիւերուն մէջ լոյս տեսած այս տեղեկատուութիւնը կու տանք յապաւումներով:

[7] Զանց կ'ընենք այդ մասը, որ լրատուութեան կէսէն աւելին կը կազմէ:

[1952]

Հայերը Յորդանանի Մէջ[8]

Յորդանանի սահմաններուն մէջ ներկայիս կ'ապրին մօտաւորապէս 4000 հայեր, որոնց երկու-երրորդը մայրաքաղաք Ամմանի եւ մէկ-երրորդը՝ Երուսաղէմի յորդանանեան շրջանակին մէջ: Կաթողիկէ հայոց թիւը, երկու քաղաքներուն մէջ, կը հասնի 350-400ի, իսկ հայ աւետարանականներունը՝ 100ի:

Նախքան արաբ եւ հրէական պատերազմը, Պաղեստինի մէջ կ'ապրէին աւելի քան 10,000 հայեր: Պատերազմի հետեւանքով անոնք մեծ մասով եղան ցիրուցան եւ հաստատուեցան Յորդանանի, Լիբանանի, Եգիպտոսի եւ այլ երկիրներու մէջ: Ու մինչ պակսեցաւ Երուսաղէմի հայոց թիւը, անդին աւելցաւ Ամմանինը:

Յորդանանի մայրաքաղաքին մէջ, մինչեւ արաբ եւ հրէական պատերազմը կ'ապրէին հազիւ 400 հայեր: Այժմ աւելի քան հնգապատկուած է անոնց թիւը:

Երուսաղէմի վանքին շրջափակին մէջ կը մնան տակաւին հազարի չափ տարագիրներ:

Ամմանէն եւ Երուսաղէմէն զատ շատ փոքրաթիւ հայեր կ'ապրին նաեւ քանի մը այլ կէտերու վրայ: Իսկ Իսրայէլի մէջ մնացած հայոց թիւը կ'ենթադրուի ըլլալ մօտաւորապէս 1500, որոնք կը բնակին Եաֆա, Հայֆա, Երուսաղէմի հրէական մասին մէջ, եւն.:

Դարաւոր հիմնարկութիւններ են հայոց վանքերն ու եկեղեցիները Սուրբ Տեղեաց մէջ: Այնտեղ ունինք Ս. Յակոբեանց տաճարը, Ս. Հրեշտակապետաց վանքը, Ս. Յարութիւն տաճարին եւ Ձիթենեաց Լեռան վրայ համբարձման վայրին հայոց բաժինները, Ս. Աստուածածին եկեղեցիին կէսը եւ Բեթլեհէմի հայոց վանքը: Ս. Փրկիչի վանքը մնացած է հրեաներուն ձեռքը: Հրէական գրաւման շրջանակին մէջ կը գտնուին նաեւ վանքապատկան բազմաթիւ կալուածներ:

Կաթողիկէ հայոց համայնքը ունի իր սեփական վանքն ու եկեղեցին: Բողոքական համայնքի ժողովարանն ու դպրոցը մնացած են հրէական գրաւման բաժնին մէջ, հետեւաբար դարձած են անգործածելի, մանաւանդ որ մեր բողոքական ազգակիցները, որոնց թիւը 400էն աւելի էր Պաղեստինի մէջ, ցրուած են գրեթէ ամբողջութեամբ:

Լուսաւորչական համայնքը, Երուսաղէմի մէջ ունի մէկ վարժարան, Սրբոց թարգմանչացը, Ս. Յակոբայ վանքի շրջափակին մէջ, շուրջ 300-350 աշակերտներով: Կաթողիկէ համայնքի վարժարանը կը համրէ յիսնեակ մը աշակերտներ: Աւետարանականները վարժարան չունին:

---

[8] *«Համազգային»ի Տարեգիրք 1953*, Պէյրութ, Տպ. «Համազգային» Ընկ., 1952, էջ 179-80:

Իբրեւ միութիւն Երուսաղէմի մէջ կը գործեն ՀՄԸՄը, Հայ Երիտասարդացը, Հայ Կաթողիկէ Երիտասարդացը, Ս. Թարգմանչաց Վարժարանի Շրջանաւարտիցը, Հայ Բարեսիրականը (տեղացի հայերով կազմուած) եւ [Հայկական] Բարեգործական [Ընդհանուր Միութիւն]ը:

Ամմանի մէջ, լուսաւորչական համայնքը ունի Հեթումեան Ազգային Վարժարանը 350 աշակերտներով, կաթողիկէ համայնքը՝ Սահակ-Մեսրոպ վարժարանը 100 աշակերտներով եւ հայ աւետարանականները՝ փոքր վարժարան մը՝ քանի մը տասնեակ աշակերտներով:

Այստեղ ալ, հասարակական կեանքը վառ կը պահուի զանազան Միութիւններով, ինչպէս՝ Հայ Կարմիր Խաչը, ՀՄԸՄը, «Ռուբինա» Օրիորդաց Միութիւնը, [Հայկական] Բարեգործական [Ընդհանուր Միութիւն]ը եւ Հայ Կաթողիկէ Երիտասարդաց Միութիւնը:

Ամմանի մէջ եկեղեցիներ ունին հայ լուսաւորչական եւ կաթողիկէ համայնքները:

[1950ականներ]

Թերի Ցանկ Յորդանանաբնակ Հայերու

Յակոբ Աբրահամեան[9], Միսաք Ադամեան, Յակոբ Ալալաճեան, Նազար Ալալաճեան, Յարութիւն Ալմանեան, Հրանդ Անձրեւեան, Կարապետ Ասլանեան, Յակոբ Ասլանեան, Միսաք Աւետիքեան, Յակոբ Աւետիքեան, ՛՛ Բաղրամեան, Անդրանիկ Գազանճեան, Գէորգ Գազանճեան, Գառնիկ Գալայճեան, Համբարձում Գալայճեան, Վահէ Գալայճեան, Միհրան Գալայճեան, Վահէ Գալայճեան, Տիգրան Գալայճեան, Կարապետ Գահրամանեան, Լեւոն Գասապեան, Ասատուր Գարակէօզեան, Յարութիւն Գարակէօզեան, Սամուէլ Գարակէօզեան, Սարգիս Գարակէօզեան, Տիգրան Գարակէօզեան, ՛՛ Գաւաֆեան, Յակոբ Գուպեան, Կարապետ Գուճանտատեան, Միհրան Գրիգորեան, Յարութիւն Գրիգորեան, Յակոբ Դատեան, Արշակ Դաւիթեան, Գասպար Դաւիթեան, Դաւիթ Դաւիթեան, Կարապիս Դաւիթեան, Պօղոս Դաւիթեան, Կարապետ Եաղլեան, Տոքթ. Արամ Եսայեան, Հրայր Էթեմէզեան, Վարուժան Էթեմէզեան, Յակոբ Էօջերեան, Կարօ Թագուորեան, Արշակ Թաշճեան, Շուքրի Թաշճեան, Յակոբ Թերզիպաշեան, Ասատուր Թերճումանեան, Յակոբ Թերճումանեան, Աբրահամ Թիւթիւնճեան, Գրիգոր Թիւթիւնճեան, Կարապետ Թիւթիւնճեան, Յակոբ Թիւթիւնճեան, Յարութիւն Թիւթիւնճեան, Կարապետ Թնճուկեան, Վազգէն Թորոսեան, Յակոբ Թուրապեան, Արուշ Լեպլեպճեան, Գէորգ Լեպլեպճեան, Յովհաննէս Լեպլեպճեան, (Լիւլէճեան), Տիգրան Լեպլեպճեան, Սարգիս Խաշէպեան, Վարդան Խաչատուրեան, Միսաք Կարապետեան, Տիգրան Կարապետեան, Արամ Կիրակոսեան, Վարդգէս Կիրակոսեան, Ընծայ Հալէպեան, Յակոբ Հեքիմեան, Յարութիւն Հեքիմեան, Տիգրան Հեքիմեան, Մանուէլ Հիւսեան, Յակոբ Ճանոյեան, Գէորգ Ճանսըզեան, Պատրիկ Ճիւնկիւրեան, Յովհաննէս Մազըճեան, Մարտիրոս Մաթէոսեան, Միհրան Մաթէոսեան, Սիրական Մաթէոսեան, Յակոբ Մարգարեան, Յակոբ Մահսերէճեան, Պետրոս Մահսերէճեան, Անդրանիկ Մարգարեան, Ստեփան Մարգարեան, Վազգէն Մարգարեան, Նշան Մարտիրոսեան, Պարոյր Մինասեան, Ճաքոմօ Յակոբեան, Յակոբ Յակոբեան, Յարութիւն Յարութիւնեան, Գառնիկ Յովհաննէսեան, Թագուոր Յովհաննէսեան, Խաչօ Յովհաննէսեան, Կարօ Յովսէփեան, Եդուարդ Ներսէսեան, Յակոբ Ներսէսեան, Գրիգոր Շաքըրեան, Կարապետ Շեհմիտիքեան, Մելքոն Շիքլանեան, Պօղոս Չաուշեան, Արամ Պալեան, Յակոբ Պալեան, Նշան Պալեան, Յակոբ Պալըքճեան, Գառնիկ Պալճեան, Յովհաննէս Պալճեան, Կարապետ Պարտաքճեան, Ներսէս Պարտաքճեան, Վարդան Պաքլաճեան, Յարութիւն Պեհեսնիլեան, Աբրահամ Պետեւեան, Յակոբ Պետեւեան, Սահակ Պետեւեան, Յարութիւն Պետրոսեան, Վազգէն

[9] Այս ցանկը կազմած ենք 1950ականներուն վերաբերող ստորագրահաւաքի մը հիմամբ ու դասաւորած այբբենական կարգով:

Պետրոսեան, Լեւոն Պերպաթեան, Արմէն Սեֆէրեան, Մելքոն Սէյրանեան, Սիմոն Սիմոնեան, Աբրահամ Սիրունեան, Աբրահամ Ստեփանեան, Գէորգ Ստեփանեան, Լեւոն Ստեփանեան, Թովմաս Վարդանեան, Նուպար Վարդանեան, Յովհաննէս Վարժապետեան, Անդրանիկ Վարուժեան, Աւետիք Տագէսեան, Գէորգ Տագէսեան, Յակոբ Տագէսեան, Յովսէփ Տեմիրճեան, Գարեգին Տէր Մաթէոսեան, Յարութիւն Տէր Մաթէոսեան, Անդրանիկ Տէր Յովհաննէսեան, Գրիգոր Տէր Յովհաննէսեան Յովհաննէս Տէր Յովհաննէսեան, Աւետիս Տէր Պետրոսեան, Կարապետ Տէր Պետրոսեան, Միսաք Տէր Պետրոսեան, Նազարէթ Տէր Վարդանեան, Նորայր Տէր Վարդանեան, Վազգէն Տէր Վարդանեան, Ղեւոնդ Տէր Սահակեան, Գաբրիէլ Տիգպիգեան, Խաչիկ Տիգպիգեան, Մկրտիչ Տիգպիգեան, Խորէն Տիրանեան, Խաչօ Տիրացուեան, Գառնիկ Փանոսեան, Գէորգ Փելթէքեան, Հայկ Փելթէքեան, Պարգեւ Փելթէքեան, Սահակ Փելթէքեան, Եղիա Քահվէճեան, Յարութիւն Քահվէճեան, Եդուարդ Քեհիայեան, Գալուստ Քեմէրճեան, Յարութիւն Քեմէրճեան, Կարապետ Քէօֆթէճեան:

[1961]

Պաշտօնական Հաղորդագրութիւն Երուսաղէմի Հայոց Պատրիարքարանի

Հիմնադրութիւն Ամմանի Հայոց Նոր Վանքին (ՀԲԸՄի Բարերար Վ. Իւզպաշեան 20,000 Տլ. Կը Նուիրէ)[10]

Երուսաղէմի հայոց պատրիարքական աթոռը ուրախութեամբ կը տեղեկացնէ հաւատացեալ մեր ժողովուրդին, թէ Յուլիսի 2ին [1961], Կիրակի առաւօտ, հիմնադրուեցաւ Ամմանի հայոց նոր վանքը:

Ամմանի հայաշատ բլուրի կողքին վերջերս գնուեցաւ հող մը՝ դպրոց եւ եկեղեցի շինելու մտադրութեամբ:

Ընդառաջելով մեր դիմումին, ՀԲԸՄիութիւնը իր բարերարներէն Վահրամ Իւզպաշեանի նուիրած 20,000 տոլարի յատկացումը, ազնուասիրտ բարերարի հաճութեամբ, տրամադրեց դպրոցի շինութեան:

Քաջալերուած իշխանական այս նուիրատուութենէն եւ նման յատկացումներու ակնկալութեամբ, Ս. Աթոռս որոշեց ձեռնարկել դպրոցի եւ եկեղեցիի շինութեան, յոյսը դնելով Աստուծոյ եւ մեր ժողովուրդի ազգասիրութեան վրայ:

Հիմնարկէքի արարողութիւնը կատարուեցաւ մեծ խանդավառութեամբ:

Ժամը 10ին հասաւ Ս. պատրիարքը, շրջապատուած Ս. Յակոբեանց Միաբանութեան անդամներով եւ ողջունուեցաւ Ամմանի ոստիկանապետին կողմէ:

Ժամը 10:15ին ժամանեց Ն.Վ. Յորդանաի սիրեցեալ վարչապետը, Պահճաթ Թալհունի, շրջապատուած ներքին գործոց եւ արդարութեան նախարար Հասան էլԽաթիպէն եւ կրթական նախարար Րաֆիք էլՀուսէյնիէն, ինչպէս նաեւ Յորդանանի ընդհանուր ոստիկանապետէն, ռատիօկայանի տնօրէնէն եւ այլ պաշտօնական անձնաւորութիւններէ:

Ժամը 10:30ին կատարուեցաւ հիմնարկէքի կրօնական արարողութիւնը, որմէ ետք Ն. Վ. Վարչապետը ծափերու եւ խանդավառութեան մէջ, իր ձեռքով զետեղեց անկիւնաքարը եւ ծեփեց զայն:

Ապա Ս. պատրիարքը խօսք առաւ եւ ըսաւ. «Ահաւասիկ կ'իրականանայ այսօր գաղութին եւ մեր Աթոռին տարիներու երազը...եկած է ատենը շինարարութեան...»: Պատրիարք Հօր խօսքը արաբերէնի թարգմանեց դիւանապետ Հոգշ. Տ. Շահէ Վրդ.:

Ն.Վսեմութիւնը, զգացուած իրեն ուղղուած գնահատանքի եւ շնորհակալութեան խօսքերէն, յայտարարեց. «Ինծի համար հաճոյք է հիմնաքարը դնել կրթական եւ կրօնական հաստատութեան մը, որ պիտի բարձրանայ ու գեղեցկացնէ Ամմանի բլուրներէն մին: Ուրախ եմ շնորհաւորելու հայոց պատրիարքը իր այս ձեռնարկին համար եւ նորանոր յաջողութիւններ կը մաղթեմ իրեն եւ իր հօտին»:

---

[10] *Զարթօնք*, 13 Յուլիս 1961:

Ժամը 11ին զինուորական պատիւներով եւ խանդավառ ծափերով հրաժեշտ առին Ն. Վ. վարչապետը եւ նախարարները:

Նոյն օրը Ամմանի ռատիօկայանը ձայնասփռեց հանդիսութիւնը ամբողջութեամբ:

Հիմնարկէքի հանդիսութիւններէն ետք, անմիջապէս կը ձեռնարկուի շինութեան գործին:

Դիւան Ս. Աթոռոյ

Երեք Լուսանկար Ամմանի Հայ Կաթողիկէ Համայնքէն

Հայ կաթողիկէ Ս. Մարիամ Աստուածածին եկեղեցի, Ամման 1951

Առաջին հաղորդութիւն նոյն եկեղեցիին մէջ, 1963

Մանկապարտէզի շրջանաւարտից հանդէս,
հայ կաթողիկէ Ս. Սահակ-Մեսրոպ վարժարան, 1963

[1967]

Տեղեկագիր Յորդանանում Հայ Համայնքի Մասին[11]

Յորդանանի Հաշիմիտեան թագաւորութիւնում բնակւում է մօտ 2350 հայ: Գրեթէ բոլորն ունեն տեղական քաղաքացիութիւն եւ տեղական միւս բնակչութեան հետ, որոնց ճնշող մեծամասնութիւնը արաբներ են, օգտւում են հաւասար իրաւունքներից: Մի քանիսն ունեն թուրքական քաղաքացիութիւն եւ Յորդանանում բնակւում են որպէս օտարերկրացիներ: Հայ ընտանիքների մեծ մասը բնակւում է երկրի մայրաքաղաք Ամմանում (շուրջ 300 ընտանիք), հիմնականում Աշրաֆիա թաղամասում: Զարքա քաղաքում բնակւում է շուրջ 25 ընտանիք: Մէկ երկու ընտանիքներ էլ բնակւում են Յորդանանի միւս բնակավայրերում:

Քաղաքական կուսակցութիւններ, հայկական համայնքում, որպէս այդպիսին չկան: Սակայն հայ բնակչութեանը՝ ելնելով քաղաքական պատկանելութիւնից կարելի է բաժանել 2 խմբի. առաջինը, որին պատկանում է հայերի մեծ մասը, մօտաւոր 2/3ը, ռամկավարների կողմնակիցներ են, երկրորդ մասը դաշնակցական տրամադրութիւններ ունեն, սակայն նրանց շարքերում էլ կան մարդիկ, ովքեր հանդուրժողական են տրամադրուած ՀԽՍՀ եւ ընդհանուր առմամբ ԽՍՀՄ հանդէպ:

Գաղութում գործում է «Ուաթանի» հայրենասիրական ակումբը, որը միաւորում է շուրջ 600 մարդ: Սակայն վերջին ժամանակներում այդ ակումբի ակտիւութիւնը զգալի անկում է ապրել եւ իվերջոյ զբաղւում է միայն բարեգործական տօնավաճառների եւ մարզական միջոցառումների կազմակերպմամբ: Դրանցում մասնակցութիւն են ունենում 2 խմբեր. ռամկավարական «Հոմինմէն»[12] եւ դաշնակցականամէտ «Հոմենտմեն»: Հայկական գաղութի առաւել ակտիւ անդամներից, ովքեր հայրենասիրական տրամադրութիւններ ունեն Սովետական Հայաստանի հանդէպ, հարկ է նշել յատկապէս Սարգիս Լեփէճեանը, որի միջոցով դեսպանատունը իր կապերն է հաստատում տեղի հայերի հետ:

Հայկական գաղութը Աշրաֆիէում ունի իր սեփական դպրոցը, որը գոյատեւում է կամաւոր նուիրատուութիւնների հաշուին: Աշրաֆիէ հայկական թաղամասն ունի իր աւագանին (մուխթար): Այժմ աւագանին Պեննէեան Ապու Ճորճն է, ով հայրենասիրական տրամադրութիւններ ունի ՀԽՍՀ հանդէպ: Աշրաֆիէում է գտնւում նաեւ հայկական եկեղեցին, որը

---

[11] ՀԱԱ, Ֆ. 326, ց. 1, գ. 528, թթ. 1-2: Փաստաթուղթը կը գտնուի Հայաստանի Ազգային Արխիւ, Ֆ. 875, ց. 14, գ. 207: Զայն մեր տրամադրութեան տակ դրաւ Հայաստանի Ազգային Արխիւի գիտահետազօտական բաժնի վարիչ Գոհար Աւագեանը, որ զայն թարգմանած է ռուսերէնէ:

[12] Պէտք է ըլլայ՝ ԱՄՄ:

ղեկավարում է քահանայ, ով ենթարկւում է Երուսաղէմի Եղիշէ պատրիարքին: Եկեղեցուն կից գործում է 7 հոգուց բաղկացած խորհուրդ:

Հայերը Յորդանանում զբաղւում են առեւտրով, սակայն հարկ է նշել, որ նրանց մէջ խոշոր առեւտրականներ եւ պիզնէսմէններ չկան: Հայերի մէջ կան նաեւ լուսանկարիչներ, վարսայարդարներ, մանր պետական պաշտօնեաներ, կան միքանի զինուորականներ, ինչպէս օրինակ յորդանանեան բանակի գնդապետ Հրաչ Էթեմէզեանը, որը յարում է դաշնակցականներին:

Յորդանանի հայկական գաղութը կապ է պահպանում հարեւան արաբական պետութիւնների՝ Սիրիայի եւ Լիբանանի հայերի հետ: Սակայն այս կապերը ոչ-կանոնաւոր են եւ հիմնականում կրում են պատահական բնոյթ:

Դեսպանատան կարծիքով, հայկական գաղութում մեր աղդեցութիւնը ուժեղացնելու համար հարկաւոր է շարունակել ՀԽՍՀ բուհեր ընդունել Յորդանանի հայ երիտասարդներին, տեղի հայ ուսուցիչներին վերապատրաստել երեւանեան դպրոցներում, Յորդանան ուղարկել հայալեզու գրականութիւն (հիմնականում գեղարուեստական, ուսումնական, պատմական): Ցանկալի կը լինէր նաեւ խմբերում ընդգրկել սովետական զբօսաշրջիկներին, Յորդանան ուղեւորուող ՀԽՍՀ ներկայացուցիչներին, յատկապէս ՀՕՄԴի [13] գծով մասնագիտացած խմբերին: Կարեւոր նշանակութիւն ունի նաեւ Ամմանում գործող սովետական մշակութային կենտրոնի համար դեսպանատուն հայալեզու գեղարուեստական ֆիլմերի ուղարկումը, ինչը, անկասկած, կը նպաստի ՀԽՍՀ կեանքի մասին մեր քարոզչութեանը եւ այդ ուղղութեամբ կը գրաւի հայկական գաղութի, առաջին հերթին երիտասարդների, ուշադրութիւնը:

Յորդանանի ԽՍՀՄ դեսպանատան խորհրդական Իւ. Լվով

10 Յուլիսի 1967

[13] Խորհրդային Բարեկամութեան Ընկերութիւնների Միութիւն:

[1972]

Յորդանանի Հայ Գաղութը[14]

...[Հայ] փախստականների մի ծուէն ... կանգ է առնում պիպլիական Յորդանան գետի ափին՝ անդրյորդանանեան բարձունքի վրայ, ապաստանելով սիրիական կառավարութեանը:

Դա 1914-1919 թուականներին էր, երբ Կիլիկիայի Մարաշ, Ատանա, Հաճըն եւ այլ բնակավայրերից աքսորուած հայերը ապաստան են գտնում սիրիական հեռաւոր Սալթ, Սիր, Քարաք, Ճարաշ եւ այլ քաղաքներում, որոնք էլ յետագայում մասն են կազմում Անդրյորդանանի Էմիրութեան:



Մինչեւ 1919ի վերջը հայ գաղթականների թիւը հասնում էր 25-30 հազարի:

Փրկուելով ֆիզիքական կործանումից, Յորդանանի հայ գաղթականները հանդիպում են մի այլ ճնշման: Տեղական թուրք իշխանութիւնները պարտադրում են հայերին ընդունել իսլամական կրօնը: Հայերը բողոքով դիմում են Երուսաղէմի հայ պատրիարքութեանը, որն էլ ստիպուած խորհուրդ է տալիս հայերին առերես կրօնափոխ լինել. սակայն թուրքերը այսքանով չեն գոհանում: Առաջարկում են եւ պահանջում խառն ամուսնութիւններ՝ տեղական բնակչութեան հետ, որն աստիճանաբար կը ձուլէր հայերին: Հասկանալով այս մտադրութեան վնասակարութիւնը, հայերն սկսում են ամուսնութիւններ կազմակերպել իրենց ընտանիքներում իսլամական ձեւով, հաշուի չառնելով բարեկամական հանգամանքները: Տեղական իշխանութիւնների

[14] *ԾԽ.*- Մեքենագիր վեց էջերէ բաղկացած այս տեղեկագիրը կը կրէ «6/4-72թ.» թուականը: Ան թերի եւ ոչ-ճշգրիտ տուեալներ ու մեկնաբանութիւններ ալ կը պարունակէ, ակնարկային բնոյթի իր փաստագրական բովանդակութեան կողքին: Զայն կը հրատարակենք ուղղագրական եւ կէտադրական վերափոխումներով, տեղավայրերու անուններու ճշգրտումներով: Զայն մեր ուշադրութեան յանձնեց ՀԱԱ գիտահետազօտական բաժնի վարիչ Գոհար Աւագեանը, որուն կը յայտնենք մեր շնորհակալութիւնը: Փաստաթուղթը ՀԱԱ փոխանցուած է Սփիւռքահայութեան Հետ Մշակութային Կապի Կոմիտէէն:

այսօրինակ ճնշումները պատճառ դարձան, որպէսզի այստեղ ապաստանած բազմաթիւ հայեր նորից իրենց ձեռքն առնեն պանդխտութեան ցուպը:

1919-24 ընթացքում հայերը վերջնականապէս հաստատւում եւ հիմք են դնում Յորդանանի հայ գաղութին: Այս շրջանում հայերը ձեռք են բերում որոշ ճանաչում եւ սկսում են զբաղուել առեւտրով եւ զանազան արհեստներով: 1924ին գաղութում յարգուած հայազգի Յակոբ Պէրպէրեանի[15] նախաձեռնութեամբ հանգանակութիւն է կատարւում եւ 12 հայ ընտանիքներից հաւաքւում է 19,500 տինար, որի շնորհիւ Ամմանի մէջ հիմնւում է առաջին հայկական մանկապարտէզը, որը յետագայում վեր է աճւում նախակրթարանի եւ 1935ին տալիս իր անդրանիկ շրջանաւարտները: Վարժարանն իր բարերարի անունով կոչւում է Հեթումեան Ազգային Վարժարան:

Արդէն ձեւաւորուող գաղութին հարկաւոր էր հոգեւոր ղեկավար: Երուսաղէմի պատրիարք Եղիշէ Արք. Դուրեանի կարգադրութեամբ Յակոբ քահանայ Մավեանը (Վահրամ Մավեանի հայրը) ստանձնում է գաղութի հոգեւոր հովւութիւնը եւ այն դարձնում Երուսաղէմի պատրիարքութեան կրօնական առանձին թեմ:

1924-48 ընկած ժամանակաշրջանում հայերն աչքի են ընկնում իրենց աշխատասիրութեամբ թէ՛ գիւղատնտեսութեան, արդիւնաբերութեան եւ թէ՛ առեւտրի բնագաւառում: Նրանք մեծ չափով նպաստում են յիշեալ բնագաւառների զարգացմանն ու բարգաւաճմանը: 1930ական թուերին հայութեան մի զգալի մասը բնակւում էր Ռուսէյֆա եւ Ամման քաղաքներում: Հենց սրանք էլ առաջինն են սկսում պտղատու ծառերի եւ բանջարեղէնի մշակութիւնը, որը միքանի տարի անց ընդգրկում է ամբողջ Յորդանանի հովիտը: Հայերի սկսած գործը, յատկապէս բանջարեղէնի մշակութեան ասպարէզում, աստիճանաբար ընդօրինակում են տեղացի երկրագործները, որը յետագայում դառնում է երկրի տնտեսութեան հիմնական ճիւղերից մէկը՝ յատկապէս լոլիկի մշակութիւնը:

Երկրագործութեան կողքին Անդրյորդանանի զանազան քաղաքներում հայերը զարգացրին արհեստները (կօշկակարութիւն, դերձակութիւն, լուսանկարչութիւն, ոսկերչութիւն եւն.):

1933ին Ամերիկայի Մարաշի Հայրենակցական Միութեան նիւթական օժանդակութեամբ Ռուսէյֆայում հիմնւում է "Ծաղկոց", ուր յետագայում յաճախում են նաեւ Զարքայի հայ երեխաները: Այս Ծաղկոցը փակւում է 1965ին, հայերի արտագաղթի հետեւանքով:

Մինչեւ 1948 թուականը Անդրյորդանանի հայութեան թիւը արտագաղթի պատճառով նուազելով հասնում է շուրջ 70 ընտանիքների:

---

[15] Թուականը ճիշտ չէ, որովհետեւ Պէրպէրեան Ամման կը հաստատուի 1925էն ետք (տե՛ս՝ այս հատորին մէջ իրեն նուիրուած ուսումնասիրութիւնը):

Այս նոյն թուականներին, արաբ-հրէական ընդհարումների հետեւանքով Պաղեստինի մի կարեւոր մասը կցւում է Անդրյորդանանին, որը եւ անակնկալ կերպով նպաստում է Յորդանանի հայ գաղութի զարգացմանը:

1948-56 ընկած ժամանակահատուածը կարելի է նկատել որպէս հայութեան ամէնաբարգաւաճ շրջան, որի ընթացքում հայերի թիւը հասնում է աւելի քան 5000ի, որոնք մեծ մասամբ հաստատւում են Ամմանի հարաւ-արեւելեան կողմում գտնուող Էշրեֆիէ բարձունքի վրայ: Այս շրջանում է որ հայերը սկսում են կառուցել սեփական շէնքեր թէ՛ բնակութեան, թէ՛ աշխատանքի համար: Սակայն, Հեթումեան Ազգային Վարժարանը դեռեւս շարունակում է գործել վարձու շէնքի մէջ եւ ունէր շուրջ 300 աշակերտներ:

1958ը նշանաւոր եղաւ Յորդանանի հայ գաղութի համար: Այս թուականին սկսւում է կառուցուել հայ կաթողիկէ համայնքի Սուրբ Վերափոխման եկեղեցին եւ Սահակ-Մեսրոպ նախակրթարանը Ամմանի Էշրեֆիէ բլուրի վրայ, նիւթական յատկացումով եւ հովանաւորութեամբ Պէյրութի Հայ Կաթողիկէ Պատրիարքութեան, որին այժմ ենթակայ է:

1956ին[16] արաբ-իսրայէլական պատերազմի վերսկսման պատճառով սկսւում է մեծ արտագաղթ Յորդանաի հայ գաղութից, որի հետեւանքով հայութեան մեծամասնութիւնը հեռանում է: 1970ին գաղութում հաշւում էր 1800 մարդ: Տարօրինակն այն է, որ այս շրջանում եկեղեցու եւ դպրոցի նիւթական վիճակն աւելի է լաւանում:

1958ին Զարքայում բացւում է Հեթումեան Ծաղկոցը, ՀԲԸՄիութեան եւ Կիւլպենկեան Հիմնարկութեան տարեկան յատկացումով: 1960ին աւարտւում է [Ամմանի] դպրոցի սեփական շէնքի կառուցումը Էշրեֆիէ բլուրի վրայ, բարերարութեամբ ամերիկահայ ազգային Վահան Իւզպաշեանի եւ Կիւլպենկեան Հիմնարկի: Դպրոցն իր բարերարների անուններով կոչւում է ՀԲԸՄ Վահրամ Իւզպաշեան Նախակրթարան եւ Գալուստ Կիւլպենկեան Մանկապարտէզ:

1968ին աւարտւում է դպրոցին կից Ս. Թադէոս եկեղեցու շինարարութիւնը, որի կառուցման վրայ ծախսւում է 70 հազար տոլար: Այս ծախսը իրենց վրայ են վերցնում եւ վճարում նիւեորքաբնակ Տէր եւ Տիկ. Թադոսեանները: Դպրոցի եւ եկեղեցու հողերը գնւում են շնորհիւ Սերոբ Անթիքաճեանի նուիրատուութեան եւ նախաձեռնութեամբ Երուսաղէմի պատրիարք Եղիշէ Եպս. Տէրտէրեանի, որի անձնական ջանքերով ապահովւում է վերոյիշեալ բարերարների նուիրատուութիւնը: Դպրոցը եւ եկեղեցին կառուցւում են գաղութի յայտնի ճարտարապետ Տիրան Ոսկեր[ի]չեանի նախագծով, որը հաշէմական պալատի պաշտօնական ճարտարապետն է:

[16] Պէտք է ըլլայ 1967:

Յորդանանի հայ համայնքը ճանաչուած է պետութեան կողմից ենթակայ Երուսաղէմի պատրիարքութեանը:

Գաղութի ազգային գործերը վարում են ազգային մարմինները, հոգեւոր հովիւների նախագահութեամբ, որոնք նշանակւում են Երուսաղէմի պատրիարքութեան կողմից:

Գաղութի հայ կաթողիկէ համայնքը ենթակայ է Պէյրութի հայ կաթողիկէ պատրիարքութեանը, որի կողմից էլ նշանակւում է համայնքի ղեկավարութիւնը:

Գաղութի մէջ գործել է նաեւ հայ բողոքական փոքր համայնք, ենթակայ Նազովրեցի Եկեղեցուն, որն ունեցել է իր սեփական ժողովարանն ու դպրոցը՝ կառուցուած 1933ին[17]: Սակայն, 1950 թուից սկսած արտագաղթի հետեւանքով ներկայումս դադարել է գոյութիւն ունենալուց: Այժմ նրանց ժողովարանն ու դպրոցը կառավարում է արաբ բողոքական համայնքը:

Ներկայումս գաղութում գործում են հետեւեալ հայկական կազմակերպութիւնները.-

1.- Հայ Մարմնամարզական Ընդհանուր Միութիւն. Ունի շուրջ 100 երկսեռ անդամներ, 1962ից գործում է իր սեփական ակումբում, որը կառուցուել է դպրոցին կից:

2.- Ազգային Մարզական Միութիւն. Հիմնուել է 1955ին: Վարձուած շէնքի մէջ ունի ակումբ, որտեղ ծաւալւում է միութեան գործունէութիւնը: Անդամների թիւը ներկայումս կազմում է շուրջ 100 հոգի:

3.- Հայ Օգնութեան Միութիւն. Այս միութեան կարեւոր դերը գաղութի մէջ եղել եւ մնում է աղքատախնամութիւն:

1971ի տուեալներով Յորդանանի հայ գաղութը բաղկացած է 1800 անձից, որոնցից 1500ը պատկանում է լուսաւորչական համայնքին, իսկ 300ը՝ հայ կաթողիկէ համայնքին: Ըստ զբաղմունքի, ամբողջ բնակչութիւնը կարելի է ստորաբաժանել հետեւեալ կերպ.-

Պետական պաշտօնեաներ՝ 12%
Արհեստաւորներ՝ 47,5%
Վաճառականներ՝ 6%
Հողագործներ՝ 3,5%
Շարժավարներ՝ 8,5%
Բժիշկներ, ճարտարապետեր՝ 2,5%
Թոշակառուներ եւ մեծահասակներ՝ 20%

Ազգային վարժարանը ունի 190 երկսեռ աշակերտներ, որոնցի 55ը Կիւլպենկեան Մակապարտէզում, 135ը՝ Իւզպաշեան Նախակրթարանում: Վարժարանի վերատեսուչն է Անուշաւան Վրդ. Ջղջանեանը, որը միաժամանակ գաղութի հոգեւոր առաջնորդն է, իսկ դպրոցի տնօրէնուհին

[17] Աւելի հաւանական է՝ 1953:

է Տիկ. Անահիտ Ոսկեր[ի]չեանը: Դպրոցի ուսուցչական կազմը բաղկացած է 9 հոգուց:

Հայ կաթողիկէ Սահակ Մեսրոպ Վարժարանի շէնքը 1970ին արաբական կռիւների հետեւանքով կրել է լուրջ վնասուածքներ: Այժմ վերանորոգման տակ է եւ շուտով կը սկսի գործել:

Գաղութի ազգային գործերը ղեկավարում է 7 հոգուց բաղկացած ազգային խորհուրդը, որը նշանակւում է Երուսաղէմի պատրիարքի կողմից:

Խորհրդի անդամներն են.-

1.- Անուշաւան Վրդ. Ջղջանեան	Նախագահ
2.- Վահէ Ղազարեան	ատենապետ
3.- Տիրան Ոսկեր[ի]չեան	փոխատենապետ
4.- Գէորգ Տագէսեան	ատենադպիր
5.- Բիւզանդ Չորպաճեան	գանձապահ
6.- Սարգիս Լեփէճեան	խորհրդական
7.- Նուպար Գաբրիէլեան	խորհրդական
8.- Սարգիս Եկէնեան	խորհրդական

Գաղութի պատմութեան մէջ ազգային խորհրդի կազմը առաջին անգամն է, որ պաշտօնապէս ճանաչւում է տեղական իշխանութիւնների կողմից: Տեղական խորհրդի հասցէն է.-

Փոստարկղ 186, Ամման Յորդանան

Խորհրդական՝ Դ. Յակոբջանեան

[1973]

Տեղեկագիր Յորդանանում Հայ Համայնքի Մասին[18]

Երուսաղէմի հայ համայնքը ունի հարուստ պատմութիւն: Դեռեւս Մ.Թ. 5րդ դարում քաղաքում եւ դրա շրջակայքում հայերը ստեղծել էին մշակութային օճախներ: Նշուած դարում հայերը՝ վրացիների եւ աղուանների հետ միասին, այստեղ ունէին 70ից աւելի վանքեր եւ եկեղեցիներ: Այդ շինութիւնների մի մասը լաւ պահպանուել է մինչ օրս:

Դարերի ընթացքում, ելնելով պատմական պայմաններից Երուսաղէմի եւ ամբողջ երկրի հայ համայնքը մէկ աճում, մէկ նուազում էր՝ ապրելով անկման եւ բարգաւաճման ժամանակաշրջաններ:

Յորդանանի հայ համայնքի քանակական եւ որակական վերջին լուրջ փոփոխութիւնները տեղի են ունեցել 1914ի հայ-թուրքական բախումներից յետոյ, ինչպէս նաեւ 1948-49ի պաղեստինա-իսրայէլական պատերազմի ժամանակ, երբ մեծ քանակով հայ փախստականներ համալրեցին Յորդանանի եւ Իսրայէլի հայ համայնքները:

Ներկայումս Յորդանանի հայ համայնքը հաշւում է շուրջ 10,000 մարդ: Նրանցից 6000ը բնակւում է Երուսաղէմի արաբական հատուածում եւ դրա շրջակայքում, 3000ը բնակւում է Յորդանանի մայրաքաղաք Ամմանում, իսկ միւսները ցրուած են ամբողջ երկրով եւ փոքր ընտանիքներով բնակւում են Յորդանանի տարբեր քաղաքներում եւ գիւղերում (Իրպիտ, Նապլուս, Մաֆրաք, Աճլուն, Զարքա եւ այլ քաղաքներ):

Նրանք (հայերը) հիմնականում հողագործներ եւ գիւղացիներ, տուրիստական գործակալութիւնների եւ աւիաընկերութիւնների աշխատակիցներ, մանր եւ միջին վաճառականներ, հոգեւորականներ եւ ուսանողներ են: Հարկ է նշել, որ Յորդանանում հայերն ունեն նշանակալի դեր երկրի տուրիստական բնագաւառում, ինչպէս նաեւ իրենց տիրապետութեան տակ են պահում առանձին արհեստներ եւ արուեստներ (ոսկերչութիւն, յուշանուէրների եւ կօշիկի արտադրութիւն, լուսանկարչութիւն եւն.):

Հայերի շատ փոքր մաս աշխատում է Յորդանանի պետական-վարչարարական ապարատում, ինչպէս նաեւ տարբեր կազմակերպութիւններում, որոնք կապուած են ՄԱԿի[19] հետ:

Յորդանանում հայերի ամէնախոշոր հոգեւոր եւ աշխարհիկ կենտրոնը համարւում է Երուսաղէմի հայկական պատրիարաքարանը, որը տեղակայուած է Յորդանանին պատկանող Երուսաղէմի հին արաբական

---

[18] ՀԱԱ, Ֆ. 326, ց. 1, գ. 425, թ. 2-5: Զայն մեր ուշադրութեան յանձնեց ՀԱԱ գիտահետազօտական բաժնի վարիչ Գոհար Աւագեանը, որ զայն թարգմանած է ռուսերէնէ: Կատարած ենք յապաւումներ:

[19] Միաւորուած Ազգերի Կազմակերպութիւն:

հատուածում գտնուող Ս. Յակոբ հայկական վանքում: Երուսաղէմի հայկական թաղամասերը զարդարում է Ժ.-ԺԱ. դարերի վանական համալիրը, որը ներառում է Ս. Յակոբի վանքը: Վանքի շրջակայքում բնակւում է հայկական գաղութ, որը բաղկացած է 1200 հոգուց: Գաղութն ապրում է մեկուսացուած կեանքով: Վանքում առկայ է հայկական աշխարհիկ միջնակարգ Թարգմանչաց դպրոցը, ուր սովորում է աւելի քան 300 հայ աշակերտ: Վերջին շրջանում այս դպրոցը դասագրքեր ստանում է Հայաստանից: Երեւանից ուղարկուել է դպրոցական լապորաթորիայի համար նախատեսուած տեխնիկա:

...

Ամման քաղաքում գործում է հայկական աշխարհիկ թերի միջնակարգ դպրոց (7ամեայ), ուր դասաւանդում են հայերէն լեզուով:

...

Վերջին տարիներին, յատկապէս 1964ից, նկատւում է Յորդանանում բնակուող հայերի զգալի արտագաղթ դէպի Աւստրալիա, Քանատա եւ ԱՄՆ: Մինիմում տարեկան 50-100 հայ ընտանիքներ (300-500 մարդ) լքում են Յորդանանը: Սա առաջին հերթին կապուած է նրա հետ, որ աշխատանքի տեղաւորման, երեխաների դաստիարակութեան, ժամանցի կազմակերպման հարցերը բախւում են շատ ու շատ խնդիրների: Ազդեցութիւն են ունենում նաեւ Յորդանանի պետական ապարատի միջին եւ ցածր օղակներում հանդիպող խոչընդոտները եւ ճնշումները:

Սա է պատճառը, որ հայ երիտասարդները, որպէս կանոն, միջին եւ թերի միջին կրթութիւն ստանալուց յետոյ ամէն ինչ անում են կրթութիւնը Հայաստանում, Եւրոպայում կամ ԱՄՆում շարունակելու համար:

Յորդանանի հայկական գաղութը ակտիւ հետաքրքրուած է հայ ժողովրդի պատմութեամբ, նրա ճակատագրով եւ Արարատի փէշերին փռուած իրենց հայրենիքով: Նրանք հետեւում են տնտեսական, քաղաքական եւ մշակութային բնագաւառներում Սովետական Հայաստանում հայերի գրանցած յաջողութիւններին: Այս հարցում նրանց օգնում է Հայաստանից Երուսաղէմ բերուող գրականութիւնն ու հայալեզու մամուլը:

Բացի սրանից Յորդանանի հայ ուսանողների պատմութիւնները, ովքեր բարձրագոյն եւ միջնակարգ կրթութիւն են ստացել ՀԽՍՀ ուսումնական հաստատութիւններում, օգնում են Յորդանանում բնակուող հայերին ճիշտ ընկալել կեանքը Սովետական Հայաստանում:

Յորդանանի եւ Երուսաղէմի հայկական գաղութի վրայ մեծ ազդեցութիւն են ունեցել Սովետական Հայաստանի կեանքի եւ ձեռքբերումների մասին դասախօսութիւնները, որոնք Ս. Յակոբ հայկական վանքում հայկական մեծ լսարանի առջեւ ընթերցել են 1966ին Մեսրոպ Մաշտոցի անուան Մատենադարանի տնօրէն, ՀԽՍՀ Գիտութիւնների Ակադեմիայի թղթակից անդամ Լեւոն Ստեփանի Խաչիկեանը եւ

Մատենադարանի հին ձեռագրերի ուսումնասիրութեան բաժնի վարիչ Սէն Սուրէնի Արեւշատեանը:

Ապագայում նմանատիպ համեստ, հեղինակաւոր եւ ՀԽՍՀ արուեստի եւ գիտութեան իրենց բնագաւառներում կրթուած աշխատակիցների գիտական ուսումնասիրութիւնները եւ միաժամանակ Յորդանանի հայկական գաղութի մօտ դասախօսութիւնները կ'օգնեն աւելի լաւ հասկանալ Սովետական Հայաստանի կեանքը եւ հնարաւորութիւն կ'ընձեռեն ամրապնդել Յորդանանի գաղութի եւ ՀԽՍՀ միջեւ մշակութային կապերը:

Յորդանանում ԽՍՀՄ դեսպանութեան 1ին քարտուղար Ա. Օհանեանց
Յորդանանում ԽՍՀՄ դեսպանութիւն 15 Մայիսի 1973 թ.
Ամման N. 199

[1975]

Ամմանի Ազգային Մարզական Միութիւն[20]

1955 Յունուարի 15ին Պաղեստինից գաղթած մի խումբ հայեր, ամմանաբնակ ազգային գործիչների հետ միասին, գաղութը աւելի սերտօրէն իրար կապելու, միասնականութեան ոգին ներշնչելու եւ նոր սերնդին ազգային առողջ դաստիարակութիւն տալու պահանջներից ելնելով հիմնեցին Ամմանի Ազգային Մարզական Միութիւնը՝ իր ակումբով, որը կոչւում է «Ուաթանի» ակումբ: Միութեանը 'մարզական' անուն տալու հարցը ելնում է երկրի ներքին քաղաքական պայմաններից: Սակայն Միութիւնը տանում է գաղութում մարզական եւ մշակութային աշխատանքներ, մօտիկից զբաղւում գաղութի հայ վարժարանի գործերով:

Ամմանի ԱՄՄն սերտ կապեր ունի Թէքէեան Մշակութային Միութեան հիմնադիր մարմնի հետ, եւ փաստօրէն կարելի է համարել այն որպէս ԹՄՄեան Ամմանի մասնաճիւղը:

ԱՄՄը յորդանանեան կառավարութեան կողմից վաւերացուած է եւ մտնում է Յորդանանի սպորտային ֆետերացիայի կազմի մէջ: Ակումբի պիւտճէն ապահովւում է անդամավճարների գանձումից, տարեկան կազմակերպուող տարբեր տիպի հանդէսների հասոյթներից, այլ միջոցառումներից եւ Յորդանանի սպորտային ֆետերացիայի կողմից յատկացուող գումարներից:

Ակումբն ունի 150 գործօն անդամ, սակայն նրա բոլոր միջոցառումներին իրենց մասնակցութիւնն է բերում Ամմանի համարեա ողջ հայութիւնը:

1974ին Ամմանի Էշրեֆիէ բարձունքին Երուսաղէմի պատրիարքարանին պատկանող հողատարածութեան վրայ կառուցուել է ԱՄՄ նոր ակումբի երկյարկանի շէնքը:

Ակումբն ունի սպորտային տարբեր խմբակներ: Ներկայումս պատրաստւում են ստեղծել թատերական եւ պարի խմբակներ (նախկինում գոյութիւն ունէին, բայց դադարել են գործել):

1982ին Կիպրոսում կայացած ՀԲԸՄ Նաւասարդեան Խաղերում «Ուաթանի» ակումբի սպորտային թիմերը ակտիւ մասնակցութիւն ունեցան եւ 4 մարզաձեւերում նուաճեցին առաջնութիւնը:

Ներկայիս ԱՄՄեան վարչակազմը հետեւեալն է.-

Վարուժան Սարգսեան, ատենապետ, հիւանդանոցներին անհրաժեշտ սարքաւորումներով եւ դեղօրայքով ապահովող ամերիկեան ընկերութեան Միջին Արեւելքի պատասխանատու:

---

[20] Երեք-էջանի, մեքենագիր այս տեղեկագիրը (ՀԱԱ, Ֆ. 875, ց. 14, գ. 207) հաւանաբար պատրաստուած է 1975ին կամ անկէ քիչ ետք: Զայն մեր տրամադրութեան տակ դրաւ ՀԱԱ գիտահետազօտական բաժնի վարիչ Գոհար Աւագեանը:

Օշին Պետեւեան, փոխատենապետ, ճարտարապետ:

Տիգրան Մահսերէճեան, գանձապահ, ոսկերիչ:

Ներսէս Ներսէսեան, ատենադպիր, ինժենէր, Երեւանի Պոլիտեխնիկական Ինստիտուտի շրջանաւարտ:

Անդրանիկ Լեփեճեան, անդամ, ինժենէր, մեր շրջանաւարտ:

Յակոբ Մահսերէճեան, անդամ, ոսկերիչ:

Վարդան Կարաօղլանեան, անդամ, ինժենէր, մեր շրջանաւարտ:

Վազգէն Սալպաշեան, անդամ, լուսանկարչական սարքաւորումների առեւտրական ընկերութեան ատմինիսթրաթիւ տիրեկտոր:

Ժիրայր Չքրըքճեան, անդամ[21]:

ԱՄՄեան հիմնադիրներից, միութեան ղեկավար եւ գաղութում մեծ հեղինակութիւն վայելող անձերից է Սարգիս Լեփէճեանը, որը ղեկավարում է Յորդանանի ընդհանուր հնագիտութեան պիւրոյի հին ճարտարապետական կոթողների լուսանկարչական բաժինը, դասախօսում է Ամմանի Համալսարանում:

ԱՄՄը, իր ստեղծման օրից, սերտ կապեր է հաստատել հայրենիքի հետ եւ ներկայումս լայն աշխատանք է ծաւալում Հայրենիք-Սփիւռք կապերի ընդլայնման ու ամրապնդման գործում: Անցած տարիների ընթացքում միութեան խողովակով հայրենիք են ուղարկուել բարձրագոյն ուսում ստանալու նպատակով մօտ 100 երիտասարդ հայեր Յորդանանից եւ Երուսաղէմից, որոնցից մօտ 60ը արդէն աւարտել է: Նրանցից շատերը աշխատում են Ամմանում եւ մեծ համբաւ են վայելում որպէս մասնագէտներ (բժիշկներ, ինժենէրներ): Միքանիսը ակտիւօրէն մասնակցում են հայրենիքի հասարակական կեանքին՝ դրական դեր կատարելով Հայրենիք-Սփիւռք կապերի ամրապնդմանը:

---

[21] Աւագեանի մեր տրմադրութեան տակ դրած երկէջեայ, մեքենագիր այլ տեղեկագիր մը (ՀԱԱ, Ֆ. 875, ց. 14, գ. 207), պատրաստուած 1975 Ապրիլին, Ս. Բադալեանի կողմէ, կու տայ ցանկը ԱՄՄ ատենի վարչութեան, ու կ'աւելցնէ ասպարէզային եւ տարիքային տուեալներ.- Սարգիս Լեփէճեան (ատենապետ, 50 տարեկան, հայեացքներով չէզոք, մասնագիտութեամբ՝ նկարիչ, պետական պաշտօնեայ է, ղեկավարում է Յորդանանի Ընդհանուր Հնագիտութեան բիւրոյի հին ճարտարապետական կոթողների լուսանկարչական բաժինը), Յակոբ Մխչեան (գանձապահ, դեղագործ, 50 տարեկան), Արտաշէս Ասատրեան (պատասխանատու քարտուղար, պանքի աշխատակից, 40 տարեկան), Բիւզանդ Չորպաճեան (անդամ, մասնագիտութեամբ ժամագործ, 45 տարեկան, ունի իր սեփական խանութը), Տիգրան Մահսերէճեան (անդամ, մասնագիտութեամբ ոսկերիչ, 35 տարեկան), Յակոբ Մահսերէճեան (մարզական բաժնի պատասխանատու, Տիգրանի եղբայրն է, մասնագիտութեամբ ոսկերիչ, 30 տարեկան), Գարեգին (պարի բաժնի պատասխանատու, մասնագիտութեամբ ֆոթօլուսանկարիչ, ունի իր սեփական խանութը, 30 տարեկան), Ջիւան Նշանեան (անդամ, վաճառական, 35 տարեկան), Օշին Պետեւեան (անդամ, մասնագիտութեամբ ճարտարապետ, 30 տարեկան):

Ամէն ամառ, Յորդանանից եւ Երուսաղէմից հայրենիք են հրաւիրւում մանկավարժներ եւ աշակերտներ: Առաջինները հրաւիրւում են վերապատրաստման դասընթացքներին մասնակցելու համար, իսկ աշակերտները՝ պիոնէրական ճամբարներում հանգստանալու:

Ամմանի հայկական դպրոցն ու ԱՄՄի ակումբը հայրենիքից սիստեմատիկաբար ստանում են դասագրքեր, գրենական պիտոյքներ, երաժշտական գործիքներ, գեղարուեստական գրականութիւն, թերթեր ու ամսագրեր:

Ամմանի հայ առաքելական եկեղեցին պատկանում է Երուսաղէմի թեմին: Հոգեւոր պետը նշանակւում է Երուսաղէմի հայոց պատրիարքի կողմից: Ներկայումս Ամմանի հայոց եկեղեցու հոգեւոր պետն է Վահան Վրդ. Թոփալեանը:

Ամմանում գործում է նաեւ «Հոմենտմէն» ակումբը, որի շուրջ համախմբուած են դաշնակցականները եւ նրանց համախոհները: Սակայն գաղութում ԱՄՄի ազդեցութիւնը անհամեմատ ուժեղ է:

[1976]

Ամմանի Իւզպաշեան-Կիւլպենկեան Հայկական Վարժարանի[22]

Ամմանի Իւզպաշեան-Կիւլպենկեան Հայկական ամէնօրեայ վարժարանը Յորդանանի հայկական գաղթօճախի միակ վարժարանն է:

Վարժարանը լիովին կապուած է Երուսաղէմի պատրիարքարանի հետ: Նրա ուսումնական ծրագիրը տրւում է Երուսաղէմից:

Վարժարանը ֆինանսաւորում է Կիւլպենկեան Հաստատութիւնը եւ ՀԲԸՄիութիւնը: Վարժարանն առ 1976 Նոյեմբեր ունեցել է 185 աշակերտ:

Վարժարանը բաղկացած է մանկապարտէզ եւ նախակրթարան բաժիններից: Մանկապարտէզի բաժնում սովորում են 40, իսկ նախակրթարանում 145 երկսեռ աշակերտներ: Մանկապարտէզի բաժինը ունի մէկ դասարան, իսկ նախակրթարանը 6 դասարան: Նախակրթարանի իւրաքանչիւր դասարանում սովորում են շուրջ 25 աշակերտներ, 6-12 տարեկան, իսկ մանկապարտէզում՝ 4-5 տարեկան: Վարժարանն ունի 10 ուսուցիչ, որից 3ը ազգութեամբ արաբներ են, իսկ 7ը՝ հայեր:

Վարժարանում դասաւանդում են.-

1. Հայոց լեզու, շաբաթական 5 ժամ (օրեկան 1 ժամ, քանի որ վարժարանը շաբաթուայ մէջ ունի 2 հանգստեան օր՝ Ուրբաթ եւ Կիրակի օրերը)
2. Արաբերէն լեզու, շաբաթական 15-20 ժամ:
3. Անգլերէն լեզու:
4. Մաթեմատիկա:
5. Բնագիտութիւն:
6. Ֆիզկուլտուրա:
7. Գծագրութիւն եւ ձեռքի աշխատանք:
8. Կրօն, շաբաթական 4 ժամ, որը եւ օգտագործւում է հայ ժողովրդի պատմութեան դասաւանդման համար:

Վարժարանի շէնքը եւ հողամասը պատկանում է Երուսաղէմի պատրիարքարանին: Այս պատճառով էլ վարժարանը կրում է հայ համայնքի կրօնական վարժարանի բնոյթ: Վարժարանն ունի 3 հոգուց բաղկացած հոգաբարձութիւն: Տնօրէնուհին է Անահիտ Ոսկերչեանը (Յակոբ Օշականի դուստրը):

Վարժարանը սերտ կապերի մէջ է Յորդանանի Հայ Մարմնամարզական Միութեան հետ, նրա աշակերտներից շատերը հանդիսանում են այդ ակումբի մարզական խմբակների անդամներ:

Վարժարանը սերտ կապերի մէջ է [Սփիւռքահայութեան Հետ Մշակութային Կապի] Կոմիտէի հետ: Կոմիտէն սիստեմատիկաբար առաքում է գրական, մանկական գրականութիւն, դպրոցական դասագրքեր: Առաքել է նաեւ դպրոցական լաբորատորիա, մանկապարտէզի համար մանկական խաղալիքներ եւ սպորտային գոյք:

Կազմեց՝ Աւ. Խորհրդական Ս. Բադալեան

---

[22] Երկէջեայ, մեքենագիր այս տեղեկագիրը (ՀԱԱ, Ֆ. 875, ց. 14, գ. 207) մեր տրամադրութեան տակ դրաւ ՀԱԱ գիտահետազօտական բաժնի վարիչ Գոհար Աւագեանը: Վերնագրին կցուած է՝ «Կազմուել է 1976 Նոյեմբերին, ըստ դպրոցի տնօրէն Անահիտ Ոսկերչեանին» բացատրութիւնը:

[1981]

12 Յուլիսի 1981

Յորդանանի Հայկական Գաղութը[23]

Յորդանանի հայ համայնքը (բացառութեամբ Արեւմտեան ափի) բաղկացած է 3000 մարդուց: Յորդանանում նրանք բնակւում են հիմնականում հետեւեալ քաղաքներում եւ թաղամասերում.

Ամման --- շուրջ 350 ընտանիք
Զարքա --- շուրջ 30 ընտանիք
Իրպիտ --- շուրջ 20 ընտանիք
Ռուսէյֆա --- շուրջ 10 ընտանիք
Ղոր-Սաֆի --- շուրջ 10 ընտանիք
Աքապա --- շուրջ 6 ընտանիք
Քարաք --- շուրջ 5 ընտանիք
Աճլուն --- շուրջ 5 ընտանիք

Յորդանանի կառավարութեան կողմից հայ համայնքն ընդունուել է որպէս կրօնական համայնք եւ իրաւունք ունի ղեկավարել իր գործերը ելնելով կրօնական եւ էթնիկ կանոններից եւ սովորոյթներից՝ ունենալ սեփական ազգային դպրոցներ, եկեղեցիներ, ակումբներ, անցկացնել սեփական ծիսակատարութիւնները եւն.:

Համայնքում գլխաւորը համարւում է քահանան, ում նշանակում է Երուսաղէմի հայկական պատրիարքարանը: Բացի իր կրօնական պարտականութիւններից համայնքի ղեկավարը համարւում է նաեւ հայկական դպրոցների գլխաւորը, Համայնքային Խորհրդի նախագահը եւ յորդանանեան կառավարութեան առջեւ հանդէս է գալիս, որպէս հայկական պատրիարքարանի ներկայացուցիչ:

1967ին Երուսաղէմի արաբական մասը եւ Արեւմտեան Ափը Իսրայէլի կողմից գրաւուելու պատճառով, Երուսաղէմի հայկական պատրիարքարանի հետ կապը դժուարացել է: 1968ին այս կապակցութեամբ, պատրիարքի յանձնարարականով, Յորդանանում ստեղծուեց Համայնքային Խորհուրդ: Խորհուրդը ճանաչուել է յորդանանեան կառավարութեան կողմից եւ ներքին գործերի նախարարութեան կողմից գրանցուել է որպէս պաշտօնական կազմակերպութիւն:

Յորդանանեան կառավարութեան վերաբերմունքը հայ համայնքի հանդէպ դրական է: Հայերի հանդէպ լաւ վերաբերմունքի սկիզբը դրել է դեռեւս Էմիր Ապտալլան (թագաւոր Հուսէյնի պապը), ով բաւականին

[23] ՀԱԱ, ֆ. 875, ց. 9, գ. 50, թթ. 5-10: Զայն մեր ուշադրութեան յանձնեց ՀԱԱ գիտահետազօտական բաժնի վարիչ Գոհար Աւագեանը, որ զայն թարգմանեց ռուսերէնէ: Կը հրատարակենք մանր յապաւումներով:

դրական էր վերաբերւում հայերին եւ ամէն կերպ աջակցում էր նրանց բնակեցմանը եւ երկրում յարմարուելուն:

Հայերը համարւում են Յորդանանի լիիրաւ հպատակներ եւ օգտւում են այս թագաւորութեան բոլոր իրաւունքներից: Նրանց գործնական ակտիւութեան, կրթութեան եւ կեանքի այլ բնագաւառներում որեւէ սահմանափակումներ կառավարութիւնը եւ պետութիւնը չեն դնում: Հայերը ստանում են ծննդեան վկայականներ, անձնագրեր եւ այլ փաստաթղթեր, ինչպէս արաբ-յորդանանցիները: Ազգային պատկանելութեան վերաբերեալ նշումներ այդ փաստաթղթերի մէջ չեն կատարւում:

Ունեցուածքի, ամուսնութեան, ամուսնալուծութեան վերաբերեալ փաստաթղթերը տրամադրում է եկեղեցին՝ Համայնքային Խորհրդի առաջարկութեամբ: Ամուսնալուծութեան վերաբերեալ փաստաթղթերը, որպէս բարձրագոյն մարմին, հսկում է անձամբ Երուսաղէմի հայոց պատրիարքը:

Համայնքում պահպանուել են այն երկրների աւանդոյթները եւ սովորոյթները որտեղ հայերը բնակուել են մինչ Յորդանան գաղթելը: Բոլոր երեխաները, անկախ այս կամ այն կրօնական հոսանքին յարելուց (հայ ուղղափառ կամ հայ կաթողիկէ), յաճախում են հայկական նախնական վեցամեայ դպրոց: Այստեղ ուսումն աւարտելուց յետոյ, նրանք կրթութիւնը շարունակում են պետական կամ մասնաւոր տարբեր դպրոցներում: Համայնքի բոլոր անդամները տիրապետում են հայերէնին եւ միքանի այլ լեզուների (արաբերէն, թուրքերէն, անգլերէն, ֆրանսերէն):

Գաղութի մշակութային եւ հասարակական կեանքը կենտրոնացած է դպրոցների, մարզական ակումբների եւ եկեղեցու շուրջ:

Գաղութում առկայ են հետեւեալ հասարակական եւ այլ կազմակերպութիւնները.-

1. Համայնքային Խորհուրդ – խորհրդի անդամները նշանակւում են Երուսաղէմի հայոց պատրիարքի կողմից, սակայն այն չի հանդիսանում կրօնական կազմակերպութիւն: Խորհրդի նախագահը եւ անդամները նշանակւում են ցմահ: Միայն պատրիարքը կարող է ցրել Խորհուրդը: Համայնքային Խորհուրդը ղեկավարում է առաջնորդը, ով հանդիսանում է դրա նախագահը, սակայն չի մտնում Խորհրդի կազմի մէջ, ուղղորդում է Յորդանանի հայ գաղութի կեանքը, հանդիսանում է իւրատիպ «հայկական կառավարութիւն» գաղութի համար: Նա լիազօրուած է տրամադրել վերը թուարկուած փաստաթղթերը, որոնք վերաբերւում են սեփականութեան իրաւունքին եւ գաղութի անդամների քաղաքացիական դրութեանը:

Խորհրդի կազմի մէջ ներառուած են հայկական գաղութում առկայ 2 խոշոր հոսանքների ներկայացուցիչները. հայրենասիրական բնոյթի

(Հնչակեան Կուսակցութիւն)[24] եւ պրօդաշնակցականները: Կարելի է ասել, որ Խորհուրդը հանդիսանում է միջնորդը այս 2 հոսանքների միջեւ:

2. Հայրենասիրական մարզական ակումբ «Ուաթանի» (հայրենիք)[25] - ստեղծուել է 1955ին, կազմի մէջ մտնում են Խորհրդային Հայաստանի հանդէպ հայրենասիրական տրամադրութիւններ ունեցող անձիք: Ակումբի հիմնական առաքելութիւնն է կազմակերպել մարզական միջոցառումներ, գեղարուեստական ինքնագործունէութիւններ, տարբեր թեմաների, այդ թւում նաեւ Խորհրդային Հայաստանի, վերաբերեալ դասախօսութիւններ եւ քննարկումներ:

Ակումբը միաւորում է շուրջ 700 մարդ (անդամներ եւ յարողներ): Ակումբի անդամ դառնալու համար հարկաւոր է ներկայացնել 2 աւելի վաղեմի անդամների երաշխաւորագրեր:

Ակումբի գործունէութիւնը ղեկավարում է վարչութիւնը, որն ընտրւում է անդամների ընդհանուր թուի մեծամասնութեամբ:

Ակումբը զբաղւում է նաեւ բարեգործութեամբ, որն իրականացւում է մասնաւոր ներդրումների եւ նուիրատուութիւնների հաշուին: Այդ բարեգործութիւնն ուղղուած է կարիքաւոր հայ ընտանիքներին եւ ուսանողներին, ովքեր ունեն դրամական դժուարութիւններ:

Ակումբը Յորդանանի դաշնութեան ակումբների կազմի մէջ է մտնում, եւ ինչպէս միւս ակումբներին այնպէս էլ իրենց ամէն տարի յատկացւում է 200 յորդանանեան տինար: Ուրիշ կողմնակի կանոնաւոր դրամական մուտքեր չեն լինում:

Օտարերկրեայ եւ միջազգային կազմակերպութիւնների հետ (եթէ չհաշուենք Խորհրդային Հայաստանը) պաշտօնական կապեր ակումբը չի պահպանում:

Ակումբը աշխուժ մասնակցութիւն է ունենում Խորհրդային Հայաստանի միջին եւ բարձրագոյն ուսումնական հաստատութիւններում ուսանելու համար թեկնածուների ընտրութեանը:

3. Պրօդաշնակցական մարզական ակումբ «ՀՄԸՄ» (Երիտասարդութիւն) - ստեղծուել է 1964ին[26], միաւորում է շուրջ 300 անդամ եւ համակիր: Ակումբի ղեկավարութիւնը ընտրւում է ընդհանուր ժողովի ժամանակ անդամների կողմից եւ բաղկացած է 5 (ժամանակ առ ժամանակ 7) հոգուց:

Ակումբը մեծ աշխուժութիւն չի ցուցաբերում: Նրա հիմնական գործառոյթներից է հակախորհրդային պրոպագանդան հայկական գաղութում, որն ուղղուած է Սովետական Հայաստանի դէմ եւ ազգայնամոլ հայեացքների ու դէպի դրամատիրական երկրներ, յատկապէս ԱՄՆ,

[24] Վրէպ:

[25] Պէտք է թարգմանել «ազգային»:

[26] Տե՛ս՝ այս հատորին մէջ ՀՄԸՄի նուիրուած յօդուածը:

գաղթելու պրոպագանդա: Ակումբը տրամադրում է նաեւ երաշխաւորութիւններ, որոնք վկայում են հայկական գաղութի այս կամ այն անդամի բարեկեցութեան մասին, ինչը կը հեշտացնէր նրանց արտագաղթը դէպի արեւմտեան երկրներ:

Ակումբը աշխուժ կապեր է պահպանում ԱՄՆ դաշնակցական կազմակերպութիւնների հետ՝ Պէյրութի ՀՅԴ կազմակերպութեան միջոցով:

Ակումբն ունի սեփական շէնք, որը ձեռք է բերուել եւ պահպանւում է ԱՄՆից ստացուող միջոցների հաշուին:

Սեփական տպագրական մամուլ ակումբը չունի:

4. Հայկական ազգային դպրոցներ[27] – Առաջին դպրոցը հիմնուել է 1937ին Ամմանում Երուսաղէմի հայոց պատրիարքի միջոցների հաշուին: Յետագայում, 1961ին կառուցուել է նոր դպրոց Կիւլպենկեանի անուան ֆոնտի հաշուին (Պորթուկալ) եւ՝ Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան:

Դպրոցը հայկական համայնքին փոխանցուել է Երուսաղէմի պատրիարքի կողմից եւ անուանուել է Իւզպաշեան-Կիւլպենկեան:

Հայկական ազգային դպրոցներ բացուել են նաեւ Ռուսէյֆայում (1938)[28], Զարքայում (1958), սակայն յետագայում այդ դպրոցները փակուեցին քանի որ սովորողների քանակը շատ քիչ էր: Այս քաղաքներում բնակուող հայերի երեխաները ներկայումս յաճախում են Ամմանի հայկական դպրոց:

Հայկական դպրոցներ աւարտածները ինքնաբերաբար ընդունւում են պետական եւ մասնաւոր միջնակարգ դպրոցներ:

Բարձրագոյն կրթութիւն ստանալու համար հայ երիտասարդները, որպէս կանոն արտագաղթում են ԱՄՆ, Լիբանան, Արեւմտեան Եւրոպա եւ Խորհրդային Միութիւն:

5. Եկեղեցի – Երուսաղէմում եւ Յորդանանում հայկական գաղութի զգալի մասը պատկանում է Հայ Առաքելական եւ մի փոքր մասը՝ Հայ Կաթողիկէ եկեղեցուն:

Հայ Առաքելական Եկեղեցին ղեկավարում է Երուսաղէմի պատրիարք Եղիշէն, ով մշտապէս բնակւում է Երուսաղէմի հայոց պատրիարքարանում եւ հանդիսանում է Յորդանանի հպատակ:

Եկեղեցին չափազանց կարեւոր դեր է խաղում ինչպէս Յորդանանի, այնպէս էլ Իսրայէլի հայկական գաղութի կեանքում: Այն հանդիսանում է հայերի պաշտօնական ներկայացուցիչը յորդանանեան եւ իսրայէլեան իշխանութիւնների մօտ:

---

[27] Այս մասին աւելի համապարփակ եւ ճշգրիտ տե՛ս՝ այս հատորին մէջ յորդանահայ դպրոցներուն նուիրուած յօդուածը:

[28] Այս մասին աւելի համապարփակ տե՛ս՝ հատորին մէջ ՀԲԸՄ մասնաճիւղերուն նուիրուած յօդուածը:

Հայ Կաթողիկէ Եկեղեցին աննշան դերակատարութիւն ունի հայկական գաղութի կեանքում: Նրա հետեւորդները Յորդանանում շուրջ 300 մարդ է:

Հայ կաթողիկէ համայնքը ընդունուել է յորդանանեան ղեկավարութեան կողմից, ունի իր ղեկավարը, եկեղեցին եւ դպրոցը:

Կաթողիկէ համայնքը իր ղեկավարի միջոցով ենթարկւում է Լիբանանի Հայ կաթողիկէ պատրիարքարանին:

Իսրայէլի եւ Յորդանանի հայկական գաղութը, անկախ իր համեմատաբար փոքրաթիւութիւնից (երկրի բնակչութեան 0.5%ից պակաս), գրաւում է բաւականին կարեւոր դեր այդ պետութեան հասարակական, մշակութային եւ տնտեսական կեանքում: Գաղութը բնութագրւում է մի շարք առանձնայատկութիւններով, որը նրանց առանձնացնում է երկրում բնակուող այլ ազգային փոքրամասնութիւններից: Դա, առաջին հերթին, աշխարհի տարբեր երկրներում բնակուող (ներառեալ ԽՍՀՄ) հայերի հետ միջազգային կապերն են, որոնք ունեն բարեկամական, գործնական եւ ազգային հիմքեր, արեւմտեան երկրներ արտագաղթի զգալի ծաւալ, Խորհրդային Հայաստանի նկատմամբ գաղութի որոշ անդամների դրական տրամադրուածութիւնն եւ հայրենասիրութիւնը, Իսրայէլի եւ Յորդանանի միւս բնակիչների հետ հաւասար իրաւունքները եւ միաժամանակ որոշակի մեկուսացումը - հաշուառման, քաղաքացիական կացութեան մասին գրանցման ակտերը եւն. (նման հարցերով զբաղւում է հայոց եկեղեցին), գաղութի անդամների մեծ մասի հաստատումը խոշոր քաղաքներում – այս ամէնը հիմք են հանդիսանում, որպէսզի հայերը Իսրայէլում եւ Յորդանանում առանձնայատուկ տեղ գրաւեն:

Յորդանանում ԽՍՀՄ դեսպանատան կցորդ (խորհրդական)՝ Ի. Զուր

[2019]

Կեանքս Ինչպէս Որ Էր[29]

Թադէոս Եսայեան



Ծնած եմ 1941ին, Ամման Յորդանան: Յաճախած եմ տեղւոյն նախակրթարանը՝ Ազգային Հեթումեան Վարժարան, ապա երկրորդական՝ Թերասանթա Քոլէճ: Բախտի եւ ուրիշներու բարեացակամութեան արդիւնք՝ կարողացեր եմ համալսարանական կրթութիւն ստանալ նախ Պէյրութի Ամերիկեան Համալսարանին մէջ որպէս ճարտարագէտ պսակաւոր գիտութեան վկայականով, 1969ին, ապա Անգլիոյ Սաութհեմփթըն Համալսարանէն որպէս ճարտարագէտ մագիստրոս գիտութեան վկայականով, 1974ին:

1969ին գարնան, Պէյրութի Ամերիկեան Համալսարանին մէջ հանդիպեցայ Օր. Լենա Ենիգոմշուեանին, հալէպահայ, քիլիսցի, նախահայրերը Ակնէն գաղթած հայախօսներ: Նշանուեցանք Պէյրութի մէջ, ամուսնացանք Ամման 1970ի ամռան: Բախտաւորուեցանք երեք զաւակներով՝ Ալեքսի, Լենար, Մարալ:...Ես անձնապէս հպարտ եմ զաւակներուս յաջողութեան համար ու բնաւ չեմ զղչար կեանքս վատնած ըլլալու համար անապատներու մէջ, որպէսզի կրթաթոշակ ապահովեմ զաւակներուս:

Հայրս՝ Իսկենտէր Եսայեան եւ մայրս՝ Վերոնիքա Ասատուրեան, ծնած են Տէօրթ Եոլ, ամուսնացած են Իսքենտէրուն: Ունիմ չորս քոյրեր՝ Սրբուհի, Սիրվարդ, Սեդա, Սոնա եւ փոքր եղբայրս՝ Սահակ: Բայց թէ ինչու՛ յորդանանահայ տէօրթեոլցի եմ՝ պատմեմ: Անշուշտ պիտի պատմեմ այն ինչ որ լսած եմ:

Ըստ մեծմօրս, Յորդանանի անապատները տարագրուած տէօրթեոլցիներ կ'ազատագրուին երբ թրքական բանակները կը պարտուին պաղեստինեան ճակատներուն վրայ, 1918ին: Տէօրթ Եոլ վերադարձի ճամփուն, անոնք կ'անցնին Յորդանան գետի հովիտի մօտիկէն, ուր կը տեսնեն բարեբեր անմշակ հողեր ու նարինջի ծառեր: Նարինջ՝ ճիշտ Տէօրթ Եոլի նարինջներուն պէս նարինջ: Տէօրթ Եոլ կը մնան միքանի տարի, ու ապա կամովին կը գաղթեն Իսքենտէրուն, երբ

[29] Թադէոս Եսայեանի այս ինքնակենսագրականը մեր տրամադրութեան տակ դրաւ Շաքէ Մանկասարեան-Կրոկըն, որուն կը յայտնենք մեր շնորհակալութիւնը:

Տամատեանի լեգէոնականները կը վտարուին Կիլիկիայէն: Հայրս ու մայրս կ'ամուսնանան Իսքենտէրուն: Երեսունական թուականներուն, երբ Իսքենտէրունը կը յանձնուի թուրքերուն, միքանի տէօրթեոլցի ընտանիքներ (Փելթէքեան, Լեփէճեան, Եսայեան) կը գաղթեն Յորդանան՝ հողագործութիւն ընելու համար Յորդանան գետի հովիտին մէջ: Անոնց կը հետեւին ուրիշներ: Ահա այսպէս կ'ըլլանք յորդանանանահայ տէօրթեոլցիներ:

Ամմանի մէջ գաղթական տէօրթեոլցիները կը բնակին Էշրեֆիէյի լեռան վրայ որ չորս կողմէն կը բարձրանայ շրջակայ հովիտներուն վրայ: Հայոց ապրած թաղը արաբները կը կոչեն «հայոց թաղ» եւ մինչեւ այսօր ան կը կոչուի «հայոց թաղ»: Իմ մանկութեան տունը լեռան լանջին էր, մօտ էր գաղութի դպրոցին ու մատուռին եւ երկու ակումբներուն՝ ՀՄԸՄ եւ ԱՄՄ:

Ուրեմն այս էր գաղութը մինչեւ 1948, որմէ ետք պաղեստինցի գաղթականներու ժամանումով՝ քաղաքը զարգացաւ: 1954ին, երբ երկրորդական վարժարանս աւարտեցի, Ամմանը արդէն հսկայ մայրաքաղաք եղած էր:

Մանկութիւնս ունեցաւ անմոռանալի օրեր, որոնք նոյնանման արարողութեան պէս կը կրկնուէին ամէն օր: Դէպի դպրոց առաւօտեան ժամը 7ին, վերադարձ ժամը 4ին, սերտողութիւն չորս ժամ, ընթրիք ժամը 8ին, որմէ ետք կը սկսէին օրուան ամէնահաճելի ժամերը: Մեծ քոյրս՝ Սրբուհին, Ռաֆֆիէն հատուած մը կը կարդար... հայրս շատ կը սիրէր *Աւազակապետը, Ինկած Բերդի Իշխանուհին* եւն.: Հայրս թրքախօս էր, բայց որոշած էր հայերէն սորվիլ. ջանք կը թափէր մեզի հետ հայերէն խօսելու. կոտրտուած հայերէն մը, բայց փառք Աստուծոյ հայերէն էր: Ուշ գիշերին՝ ժամը 10ին, քրոջս՝ Սրբուհիին պարտականութիւնն էր Երեւանը փնտռել մեր հալումաշ պատեանով ձայնասփիւռին վրայ: Կ'ուրախանայինք «Երեւանն է խօսում»ով: Հայրս շատ կը սիրէր Յովհաննէս Պատալեանի «Կանգնիր Կարաւան»ը եւ Սայեաթ Նովայի երգերը: Մեր ձայնասփիւռը չար էր, շատ չար, յաճախ կը համրանար արժանանալով հօրս կշտամբանքին: Բարեբախտաբար քոյրս գիտէր տուփին որ կողմը թակել, ցնցել որպէսզի ան վերսկսի երգել:

Հապա մեծմայրս, ի՜նչ ըսեմ: Աչքին լոյսն էի: Թէեւ հօրեղբօրս՝ Միսաքին, տունը կ'ապրէր, բայց ամէն Կիրակի շագանակով մեզի կու գար: Թրքախօս էր, շատ քիչ հայերէն կը հասկնար բայց ես պէտք էր պատմէի ամէն ինչ՝ ինչ որ սորված էի շաբթուան ընթացքին: Մեծմայրս ու ես անբաժան ընկերներ էինք: Միասին ցորենը ջաղացք կը տանէինք, գիւղ կ'երթային ամառները, հօրաքրոջս լոլիկի պարտէզներուն գիւղը: Մեծմօրս գառնուկն էի կարծես, պէտք էր գիրցնէր զիս համադամ ճաշերով: Ես կը սիրէի ցանքի կանաչները: Գիտէի՝ ո՛ր հաւը ո՛ր թուփին տակ կ'ածէ՝ կը հաւաքէի, մեծմօրս կը տանէի, իսկ մեծմայրս հում հաւկիթ կլլել կու տար: Կը սիրէի էշ նստիլ,

բայց օր մը սխալմամբ ջորիի վրայ բարձրացայ: Անասունը չսիրեց ինծի... վար նետեց: Չցաւեցայ, բայց կարծեմ հեռուէն մեծմայրս ցաւեցաւ:

Գիւղին մէջ ամէն գիշեր պէտք էր պատմութիւն պատմէի. հօրաքրոջս ամուսինը՝ Թորոս *էնիշտէ*ն, լսել կ'ուզէր հայ թագաւորներու մասին: Ու ես կը պատմէի ու կը պատմէի: Ուշ գիշերին, անկողին չմտած, Թորոս *էնիշտէ*ն կը հարցնէր՝ «հապա ի՞նչ եղաւ Ղեւոնդ Քերեցին...» ու ես այս անգամ կը պատմէի Քաջն Վարդանի ու Ղեւոնդ Երէցի Աւարայրը: Եւ այսպէս, ամէն ամառ, Քաջն Վարդան ու Ղեւոնդ Երէց ապրեցան Յորդանանի այս հեռաւոր գիւղին մէջ:

Անմոռանալի յիշատակներ ունիմ Հեթումեան Ազգային Վարժարանի օրերէս: Հայերէն լեզուի ուսուցչուհիս Օր. Արփինէ Սարգիսեանն էր (յետագային Տիկ. Արփինէ Նագգաշեան, անուանի գրող, երուսաղէմահայ Հրանդ Նագգաշեանի տիկինը, բանաստեղծուհի Անուշ Նագգաշեանի մայրը): Տիկին Արփինէն ներկայիս կ'ապրի Երուսաղէմ: Հայոց պատմութեան դասատուն պարոն Սեդրակ Լափաճեանն էր (յետագային Սմբատ. Արք. Լափաճեան, Արեւմտեան Ամերիկայի թեմի առաջնորդ): Անձնապէս, ես այս երկուքին կը պարտիմ սէրս հայ լեզուի եւ հայապաշտութեան: Կը սիրէի Օր. Արփինէի սորվեցուցած քերթուածները: Կը սիրէի Պ. Սեդրակի հայ թագաւորները: Կը յիշեմ ամավերջի հանդէս մը երբ Վարդանանքը բեմադրեցինք, ու ես կարճահասակ թիկնապահը եղայ Յազկերտ արքային: Մեղքս չպահեմ՝ կ'ուզէի Յազկերտը բեմէն վար նետել: Ցաւ էր ինծի համար, մեծ ցաւ որ հայերս այլեւս թագաւոր չունինք: Կ'ուզէի Յորդանանի թագաւորին պէս մենք ալ թագաւոր ունենանք եւ յաճախ բաց աչքերու երազիս մէջ՝ ես կ'ըլլայի թագաւոր ու մեծմայրս թագուհի:

Օր. Արփինէի սորվեցուցած հայերէնս միշտ հետս կ'ապրէր: Ամավերջի հանդէսներուն ինծի վիճակուած էր Օր. Արփինէին սորվեցուցած քերթուածներէն մին արտասանել: Կը սիրէի ամավերջի հանդէսները: Նուէր կը ստանայի որպէս դասարանիս առաջնակարգ աշակերտ: Դասընկերուհի քոյրս ալ նուէր կը ստանար: Տարի մը *հարմոնիքա* նուէր ստացայ հանդիսատես Պ. Սերոբ Անթիքաճեանէն: Ան բարերար մարդ էր: Հող տրամադրեց գաղութին որ նոր դպրոց եւ եկեղեցի կառուցանենք:

Հապա քերթուածները Օր. Արփինէի՞ն: Անոնք սրտիս մէջ կ'ապրէին, բացի քերթուածներէն մին, որ սրտիս վրայ նստած շատ ծանր կը կշռէր: Այդ մէկը Մուշեղ Իշխանի քերթուածն էր՝ «Հայ ըլլալնուս մէջ չտեսանք օր ու արեւ» ոտանաւորը: Այս ի՞նչ անբախտութիւն՝ կ'ըսէի մտքէս: Ինչու՞ այդպէս պէտք է ըլլայ: Ինչու՞ հոս Յորդանանը ունենանք վարձու հայրենիք, երբ «Երեւան խօսում»ը կ'ըսէր թէ ծաղկեալ հայրենիք ունինք. ալ որու՞ն հաւատաս: Բայց ես Մուշեղ Իշխանին հաւատացի, մանաւանդ 1948ի ամռան, երբ պաղեստինցի գաղթականներէն ոմանք իջեւանեցան դպրոցի դասարաններուն մէջ: Ու Աստուած իմ, ինչ ողորմութիւն էր յաջորդ տարի, երբ մենք՝ աշակերտներս «Առաւօտ Լուսոյ»էն ետք մուրացկանի պէս կարգ

բռնեցինք այցելուներու առջեւ՝ գաւաթ մը կաթ եւ դգալ մը ձկան իւղ խմելու համար: Ուրեմն - կ'ըսէի մտքէս - Մուշեղ Իշխան այս ալ գիտէր:

Օրիորդ Արփինէն շատ կը հաւնէր շարադրութիւններս: Բնութիւնը կը խայտար հոն: Գարնանային դպրոցական պտոյտները յատուկ դեր ունէին գրութիւններուս մէջ: Կը սիրէի ծիլ ու ծաղիկը սարերուն: Կը սիրէի պտղատու ծառերը Սամուէլ աղայի պարտէզներուն, ուր յաճախ բոլոր աշակերտութիւնը կը հիւրասիրուէր: Գլխարկ փախցնել, պարան ցատկել, պարան քաշել, գիծ-գիծ խաղ, վրադ է-վրադ է, մոմլիկ-մոմլիկ խաղերը, յետոյ՝ պար, երգ ու նորէն շուրջպար:

Օրիորդ Արփինէն դպրաց դասին մէջ էր: Ես՝ խորանի մոմակիր: Բայց պաշտօնս բարձրացաւ 13 տարեկանէս ետք: Բուրվառը ձեռքս տուին. կը սիրէի խունկը, կը սիրէի աղօթքը: Կը սիրէի Աստուածս բայց կ'ատէի լուսահոգի Հայր Կորիւնը, որուն հետ տունօրինէքի կ'երթայի: Ամէն անգամ որ տէօրթեոլցիի տունը օրհնէինք՝ կը հարցնէր՝ «Թադէոս, որքա՞ն տուին քեզի»: Նոյն հարցումը կը կրկնուէր ամէն կնունքի, հարսանիքի եւ մեռելաթաղէ ետք: Որպէս ընկերակից Հայր Կորիւնին (պայուսակը շալկող նաեւ), ունեցայ շատ մը սաներ, որովհետեւ մանկիկի հիւանդութեան պատճառաւ անակնկալ կնունք կ'ըլլար ու փոքրիկը կը գրկէի որպէս սանահայր: Մեռելաթաղէ բնաւ չեմ վախցած, բացի այն մէկ սրտաճմլիկ պատահարէն երբ դագաղը կարճ ըլլալով՝ երակարահասակ մեռեալին, խեղճին սրունքները ծալուեցան խշրտուքով մը, ու դեղին մորթը երեւցաւ որ մորթուած/փետրատուած հաւի գոյն ունէր: Այդ օրէն իվեր ես հաւու միս չեմ կերած:

Լուսահոգի Հայր Կորիւնին առնչուած կայ նաեւ ցաւալի պատահար մը: Մայիս 28ի օրը: Այդ օր, Հայրսուրբը բռնութեան կ'ենթարկուէր, որովհետեւ կը մերժէր դպրոցը փակել: Ցաւալի երեւոյթ էր: Կը մեղքնայի Հայրսուրբին: Չէի գիտեր ի՞նչ է Մայիս 28ը: Ես ու հայրս գիտցանք Մայիս 28ը երբ Սրբուհին նշանուեցաւ լուսահոգի դաշնակցական Յարութիւն Մխճեանին: Լուսահոգին աննկարագրելի հպարտութեամբ պատմեց ամէն բան: Անկախութիւն, հանրապետութիւն, Ղարաքիլիսէ, Բաշապարան, Սարդարապատ ու երբ կարգը գար Դրոյի, Նժդեհի, Անդրանիկի՝ լուսահոգին բռունցքով վեր, աւելի բարձր կը խօսէր: Հպարտ էր, շատ հպարտ: Ես ու հայրս ալ նոյնքան հպարտ, աւելի՛ հպարտ ու ես մտքէս կ'ըսէի՝ «ուրեմն օ՜խ եղաւ Հայր Կորիւնին, արդէն կը նախանձէր շահած դրամիս»:

1954էն 1959՝ երկրորդական վարժարանի տարիներս էին: Առաջին տարին դժուար էր, մանաւանդ այն դասերը, որոնք արաբերէնով կը դասաւանուէին՝ արաբերէն լեզու եւ արաբական ու իսլամական աշխարհի պատմութիւնը: Երկրորդ տարին արդէն գերազանցեր էի բոլորը վիճակացոյցի նիշերովս: Առաջին եւ երկրորդ տարիներու կրթաթոշակս Ազգային Մարզական Միութիւնը հոգաց: Յաջորդ տարիները՝ ձրիավարժ

դարձայ, երկրորդական վարժարանիս հաշուոյն: Չեմ մոռնար այն պանծալի օրը, երբ արաբական պատմութեան ուսուցիչը՝ *ուսթազ* Ճեմիլը, գովեց հիթիթները որպէս հայերու նախահայրեր ու ըսաւ թէ որպէս քաջ, պատերազմիկ ժողովուրդ՝ նոյնիսկ Ռամսէս փարաւոնը չէր կարողացեր անոնց երկիրը գրաւել: Հպարտ էինք մենք՝ դասարանի հայ աշակերտներս՝ Ռոստոմ Եթեմէզեան, Գեղամ Պոտոսեան, ես ու Զօհրապ Տէրտէրեան: Եթէ թեւեր ունենայի՝ վստահաբար այդ օր կրնայի թռչիլ:

Երկրորդական վարժարանի տարիներուս թէ՛ Սրբուհին ամուսնացաւ, եւ թէ՛ դասընկերուհի քոյրս՝ Սիրվարդը, ամուսնացաւ Գէորգ Գէորգեանի հետ: Երկուքն ալ (այժմ լուսահոգի) Պաղեստինէն գաղթածներ: Յարութիւնը դաշնակցական էր: Գէորգը՝ համակիր ռամկավար: Ուրբաթ կամ Կիրակի օրեր հօրս տունը կու գային: Քարտ կը խաղայինք: Ես ու հայրս կը խուսափէինք խօսիլ գաղութի հայկական լուրերուն մասին, որովհետեւ նիւթը անմիջապէս կուսակցական հարցի կը վերածուէր, ու ահա ա՛ռ քեզի վէճ, պոռչտուք: Հայրս ու ես հաշտարարի դերը կը ստանձնէինք: Ի՞նչ ընենք՝ ստիպուած: Երկուքն ալ սիրելի էին մեզի: Ես նոյնիսկ հաճելի թուելու համար՝ երկուքին ալ ակումբները կ'երթայի: ԱՄՄի մէջ փինկփոնկի լաւ խաղացողներ կային ու ես կը մրցէի անոնց հետ: Երկու տարի շարունակ ակումբի ախոյեանութեան արծաթէ բաժակաիր դարձայ: Կարճահասակ ըլլալուս պասքէթպոլ չէի խաղար, բայց միշտ ներկայ կ'ըլլայի երկու ակումբներու մրցումներուն, երբ օտար խումբերու դէմ խաղային: Տարի մը, Յորդանանի առաջնութեան մրցումը վիճակուեցաւ գաղութի երկու հայ ակումբներուն: Հանդիսատեսները դէմ դէմի նստան ու թմբուկներով միայն ՀՄԸՄ ու ԱՄՄ պոռացին: Թմբուկներու թափը կարծես պատերազմի հրաւէր էր: Ցաւալի երեւոյթ էր մնացեալը: Պարտուողներ հայհոյանքի գնդակներ նետեցին մրցակիցին վրայ (անշուշտ թրքերէն հայհոյանքներ) ու հանդիսատեսներէն ոմանք միացան անոնց: Եկուր հայ եղիր ու դիմացիր: Ես կողմ չէի բռներ... հասկնալի պատճառներով: Իմ այդ օրերու կարճ խելքս կ'ըսէր որ աւելի լաւ է հօրս պէս ըլլամ հաշտարար ու հայապաշտ քան թէ քեռայրներուս պէս կուսակցապաշտ: Եւ այս հայեցողութիւնս իր պտուղը ունեցաւ տարիներ վերջ:

1959ի Յունիսին աւարտեցի երկրորդական վարժարանը, բարձր նիշերով, մասնակցեցայ երկու քննութիւններու՝ GCE անգլերէն, *մեթրիք Օրփոն*՝ արաբերէն: Երկուքն ալ յաջող: *Մեթրիք Օրփոն*ը պետական քննութիւնն էր: Ես երկրորդ հայն էի Յորդանանի մէջ, որ կը յաջողէր այս քննութեան:

Այո, 1959ին աւարտեցի երկրորդական վարժարանս: Ա՛լ կը մնար համալսարան երթալ: Բայց ի՞նչպէս: Բարերար պէտք էր կրթաթոշակիս... ճամփորդութեան ծախս, սենեակի վարձք, ապրուստի եւ գիրքի դրամ եւն.: Մայրս որոշեց դերձակութիւն ընել: Ճամփորդութեան հարցը լուծուեցաւ որովհետեւ տէօրթեոլցի ազգական Միհրան *էմմի*ն սիրով ընդունեց Ամման-

Պէյրութ գիծի բեռնատար մեքենայով տանիլ ու բերել զիս: Միհրան *Էմմի*ն իր յաջորդ Ամման վերադարձին ուրախացուց հայրս ըսելով որ իր հին օրերու բարեկամ դերձակ Լեւոնը հայրաբար պիտի ընդունի զիս իր տան մէջ որպէս երկրորդ մանչ: Հոյակապ: Այս հարցն ալ լուծուեցաւ: Մնաց նիւթականը: Գրեցի Բարեգործական հիմնարկ (ՀԲԸՄ): Մայրս օգնութիւն խնդրեց մօտիկ հարազատներէ: Անօգուտ: Միայն գաղութի հրեշտակ դերձակուհի լուսահոգի տիկին Զարուհի Փելթէքեան ընդառաջեց խնդրանքին: Բարեհաճեցաւ քառասուն տինար կարգադրել, որ այդ օրերուն հաւասար էր 260 լիբանանեանի ու ես այդ գումարը գրպանած հասայ Պէյրութ: Արձանագրուեցայ Պէյրութի Ամերիկեան Համալսարան: Ցոյց տուած 200 լիբանանեան ոսկին չառին, նախընտրեցին բարերարի գումարին սպասել, որ դժբախտաբար բնաւ չհասաւ:

Համալսարանի առաջին տարին բոլորեցի Լեւոն *Էմմի*ին տունը, Թրատ Քեմփ: Միհրան *Էմմի*ն ամէն ամիս մօրս ուղարկած 50 լիբանանեանը կը յանձնէր ինծի: Դասերս համալսարանի գրադարանը կը սորվէի որովհետեւ Լեւոն *Էմմի*ի տան լոյսը հազիւ իրենց կը բաւէր: Չէի մոռնար շնորհակալութիւն յայտնել գիշերուան համեստ ընթրիքին համար: Կը սիրէի Կիրակի օրերը երբ Թրատ քեմփի դրացիները կ'այցելէին, նարտի կը խաղային ու հեքիաթներ կը պատմէին: Թէեւ թրքախօս, բայց հայասէր էին, շատ, շատ: Ինծի կը թուէր հարազատութիւնը միայն աղքատութեան մէջ կը ծնի: Բայց բոլորն ալ նոյն երազը ունէին՝ աւելի լաւ օրերու հասնիլ: Ես Լեւոն *Էմմի*ին ձմեռը շատ սիրեցի, մանաւանդ անձրեւի թփրտուքը թիթեղէ տանիքին վրայ, որ երազի պատկերներ կը գծէր բարձիս վրայ, բայց դժբախտաբար կ'ընդահատուէր երբ փոթորկաշունչ քամին տան տախտակէ պատերը ծեծէր: Հոս նշեմ որ այն երազը որ շրջան մը փայփայեցի Հայաստան մեկնելու՝ դժբախտաբար փարատեցաւ, երբ հայրս մերժեց գրաւոր հաւանութիւն տալ, որպէսզի տիկին Սեզան (*Երիտասարդ Հայուհի*ի խմբագիր) կարգադրէր երթալս: Հայրս նոր էր արձանագրուած բանակի դերձակ՝ վախցաւ: Այդ օրերուն սովետի հետ գործ ունենալը ճիշտ բան չէր:

Չըսեմ այլեւս ուր եւ ինչպէս մէկուկէս տարի եւս մնացի Պէյրութ: Դաժան էր կեանքը, շատ դաժան: Դուն ուզածիդ չափ երգէ «ձախորդ օրերը ձմռան նման կու գան ու կ'երթան»ը իրականութեան մէջ՝ երբ դրամ չունիս՝ ձախորդ օրըրը կու գան ու կը մնան մինչեւ որ հոգիդ բերանդ գայ: Սիրտ չմնաց դաս սորվելու (արդէն անձնական գիրք ալ չունէի): Սիրտ չմնաց նոյնիսկ աղջկայ մը ժպտելու: Արդէն որեւէ աղջիկ երբ զգար որ «գրպանդ ծակ է»՝ կը հեռանար: Նոյնիսկ պարզ անմեղ սէր մը, որ միայն երեք ամիս կրակ առաւ, այդ ալ կրակով ածխացաւ: Պէյրութը խորթ էր այլեւս: Պէտք էր հեռանայի: Պէտք էր վերադառնայի Ամման ու վերադարձայ 1962ի գարնան:

1962ի ամռան մեկնեցայ Ատէն, Հարաւային Եմէն: Հոն պարոն Վարուժան Սարգիսեան, Օր. Արփինէին եղբայրը, զիս օգնական նշանակեց երկրագործական/ջրաբաշխական նախարարութեան մէջ: Լծուեցայ գործի որպէս land surveyor: Տնօրէնս անգլիացի ճարտարագէտ էր: Միշտ գոհ աշխատանքէս: Չորս տարի աշխատեցայ Եմէնի զանազան նահանգներու ջրհեղեղի հոսանքներու ենթակայ ճահճային դաշտերու եւ հովիտներու մէջ: 1966ի գարնան՝ վաստկած մեծ գումարով վերադարձայ Ամման: Սեպտեմբերին մեկնեցայ Լիբանան ու անցեալի պարտքերս վճարելով Պէյրութի Ամերիկեան Համալսարանին, կրկին արձանագրուեցայ ճարտարագիտական ուսումս շարունակելու: 1969ի Յունիսին արդէն վկայեալ ճարտարագէտ էի: Ամուսնացայ 1970ի Յուլիսին: Մանչս՝ Ալեքսին ծնաւ 1971ի Ապրիլին: Նոյն տարուան ամռան բոլորս միասին ճամփորդեցինք Լոնտոն ուր նախկին Եմէնի տնօրէնս ընդունած էր որ պաշտօնավարեմ իր ճարտարագիտական ընկերութեան մէջ, Sir William Halcrow & Partners: Ինծի վիճակուեցաւ ջրաբաշխական նախնական նախագիծը պատրաստել 50,000 հեքթարնոց բամպակի եւ եգիպտացորենի դաշտերուն՝ Ճիզանի մէջ (Սէուտ Արաբիա): Սրտանց աշխատեցայ, նոյնիսկ՝ Շաբաթ-Կիրակի: Ընկերութիւնը առաջարկեց ջրաբաշխական մագիստրական դասընթացքի հետեւիմ՝ ընկերութեան հաշուոյն, պայմանաւ որ աւարտելէս ետք մեկնիմ Ճիզան, վերջնական ջրաբաշխական ծրագիրը տեղւոյն վրայ իրականացնելու համար: Արձանագրուեցայ University of Southampton: 1974ի ամռան արդէն ճարտարագէտ էի մագիստրոս գիտութեան վկայականով: Մեկնեցայ Ճիզան: Յաջորդ տարի տիկինս ժամանեց երկու երեխայով (Ալեքս եւ Լենար): 1977ի գարնան աւարտելով շինարարական պարտականութիւնս՝ վերադարձանք Ամման: Յորդանան պաշտօնավարեցի 13 տարիներ, որոնց յաջորդեց բեղուն 24 տարիներու շրջան մը Աթէնք հաստատուած պաղեստինեան հարուստ շինարարարական ընկերութեան հետ, Consolidated Contractors Int'l Co.: Այս շրջանին էր որ Արաբական Ծոցի երկիրներ եւ Եմէն աշխատելով՝ կարողացայ կրթաթոշակ ապահովել երեք զաւակներուս, որոնք Ամերիկա ուսանեցան:

2014ին հանգստեան կոչուելով փարեցայ հայերէն գրքերուս: Անշուշտ, ուր որ աշխատած եմ հայերէն մէկ կամ երկու գիրք ընկերակցեր են երթիս: Բայց հայերէն կարդալս կամ բանաստեղծելս միշտ գաղտնի մնացած է, որովհետեւ արաբ մրցակից գործընկերներուս համար բանաստեղծ ըլլալը բարենիշ մը չէ ճարտարագէտի մը համար: Այնպէս որ, նոյնիսկ հրատարակած գիրքերս գաղտնի են մնացեր ու միայն նուէր տրուած մտերիմ ծանօթներու:

Ցարդ ունիմ հրատարակած հինգ գիրքեր, որոնցմէ միայն վերջին երեքը յաջող են[30].- *Առաջին Փորձեր* (բանաստեղծութիւններ), Հրատ.՝ Ապրիլ Գրատուն, Լոս Անճելըս, 1985, 50 էջ. *Նոր Քօնթրէքթօրը* (թատրերգութիւն), Հրատ.՝ Ապրիլ Գրատուն, Լոս Անճելըս, 1985, 40 էջ. *Պտղունց Մը Սէր* (բանաստեղծութիւններ), Հրատ.՝ Նոր Աշխարհ Շաբաթաթերթ, Աթէնք, 1987, 95 էջ. *Կեանք Մը Տողերու Վրայ* (բանաստեղծութիւններ), Հրատ.՝ Նոր Աշխարհ Շաբաթաթերթ, Աթէնք, 1989, 76 էջ. *Պաւրկերազ Յուցահանդէս* (բանաստեղծութիւններ), Հրատ.՝ Նոր Աշխարհ Շաբաթաթերթ, Աթէնք, 1991, 76 էջ:

Իմ պաշտօնավարած ընկերութեանս (Consolidated Contractors Company)ի համար քաղած ու անգլերէն պատրաստած եմ 6 ծաւալուն, պատկերազարդ դասագիրքեր՝ *Finishing Works in Buildings*, որոնք կ'օգտագործուին սկսնակ ճարտարագէտներու կողմէ եւ ընկերութեան արհեստաւորական դասընթացքներուն կը ծառայեն՝ կարօտեալ պաղեստինցի երիտասարդներու:

[30] Իմ գրական երթիս յաջողութիւնը կը պարտիմ Դոկտ. Անդրանիկ Տագէսեանի շինիչ քննադատութիւններուն, թելադրանքին եւ քաջալերանքին:

Համառօտ Կենսագրութիւն Հեղինակներու

Դոկտ. Հինտ Ապուշըըր ծնած է Աժլուն: Աւարտած է Յորդանանի Համալսարանի պատմութեան բաժինը: Նոյն համալսարանէն ստացած է մագիստրականն ու դոկտորականը՝ պատմութեան մէջ: 1994էն իվեր կը դասաւանդէ Յորդանանի ԱլՊէյթ Համալսարանին մէջ, որուն Գրականութեան եւ Մարդասիրական Բաժանմունքին տեսուչն է 2005էն իվեր: Անդամ է Յորդանանի Գրողներու Միութեան:
Շրջան մը եղած է Յորդանանի *ԱլՏեսթուր* թերթի սիւնակագիր: 2000ին արժանացած է ԵՈՒՆԵՍՔՕի արծաթեայ, 2002ին՝ «Յորդանանի Լաւագոյն Գիրք»ի մրցանակներուն: Հեղինակ է Պիլատ էլ Շամի եւ Յորդանանի օսմանեան շրջանի պատմութեան նուիրուած ուսումնասիրութիւններու, ինչպէս նաեւ՝
اربد وجوارها (ناحية بني عبيد 1850م-1928م), عمان, 1995: *تاريخ شرقي الاردن في العهد العثماني (1515-1918)* منشورات مؤسسة آل البيت: *سجلات الاراضي في الاردن (1876-1960)* منشورات جامعة آل البيت, 2002: *عمان في العهد الهاشمي 1916-1952*, منشورات امانة عمان الكبرى, 2004: *دراسات في التاريخ الاقتصادي والاجتماعي للاردن في العهدين العثماني وامارة شرقي الاردن*, 2007:

Վիգէն Ասլանեան ծնած է Յորդանան 1958ին: 1980ին աւարտած է Պրայթընի Համալսարանի Ճարտարարուեստի Ճարտարագիտութեան Բաժինը, արժանանալով Ֆրենք Փարքըր մրցանակին: Վկայուած է նաեւ Պըրնմաութ Քոլըճ աֆ Թեքնոլոճիէն եւ Լանտըն Չէյմպըր աֆ Քամըրսէն՝ ճարտարագիտութեան եւ ճարտարարուեստի վարչագիտութեան մէջ:
1981–83՝ զինուորական ծառայութեան ծիրին մէջ, աշխատած է Էմերիքըն Քորփս աւ Էնճինիրզի հետ: 1993ին անցած է Քանատա, ապա վերադարձած Յորդանան, հիմնած իր ընկերութիւնը:
Ասլանեան գործօն անդամ է ոչ-կառավարական կազմակերպութիւններու, հիմնադիր-անդամ՝ Free Thought Forumին, որ քաղաքական եւ քաղաքացիական կրթութիւն կը ջամբէ քաղաքացիներուն:

Փրոֆ. Ճոն Արմաճանի դասախօս է Սընթ Պենետիքթ Քոլէճի Աստուածաբանութեան Բաժանմունքին եւ Միննըսոթայի Սընթ Ճոնզ Համալսարանին մէջ: Կրօնագիտական Ուսմանց դոկտորականը պաշտպանած է Քալիֆորնիայի Համալսարանը (Սանթա Պարպըրա):
Հեղինակն է *Dynamic Islam: Liberal Muslim Perspectives in a Transnational Age* (2004), *Modern Islamist Movements: History, Religion, and Politics* (2012) գիրքերուն: Համախմբագիրն է *Historicol Dimensions of Islam: Pre-Modern and Modern Periods*, *Essays in Honor of R. Stephen Humphreys* (2009) հատորին: Ներկայիս կ'ամբողջացնէ *The Armenian Diaspora and Modern Political Systems: Religious and Ethnic Minorities in their Historical*

Contexts եւ *Shia Islam and Modern Politics: Iran, Iraq, and Lebanon* ուսումնասիրութիւնները:

Դոկտ. Լուսին Թամինեան ծնած է Իրպիտ: Աւարտած է Դամասկոսի Համալսարանի Անգլիական Գրականութեան եւ Լեզուի բաժինը: Մագիստրականը ստացած է Իրպիտի Եարմուք Համալսարանէն՝ ընկերային մարդաբանութեան մէջ, մշակութային մարդաբանութեան դոկտորականը՝ Միշիկընի Էն Արպոր Համալսարանէն, 2001ին:
Գիտական հետաքրքրութիւնը կը ծաւալի արտայայտչական մշակոյթներու շուրջ՝ բանաւոր պատմութիւն, քաղաքային կենցաղ, ինքնութեան քաղաքականութիւն, ճաշատեսակներու մշակոյթ եւն.: Իբրեւ խորհրդատու-հետազօտող մասնակցած է զանազան ուսումնասիրական ծրագիրերու: Աւագ հետազօտող է American Academic Institute in Iraqի: Անդամ է Middle East Association (MESA)ի եւ Արաբ Ընկերային Գիտութիւններու Խորհուրդին:
Դասաւանդած է Յորդանանի, Մ. Նահանգներու եւ Եմէնի համալսարաններու մէջ: Հրապարակած է ուսումնասիրական յօդուածներ եւ խմբագրած գիտահետազօտական հատորներ:

Եղիա Թաշճեան ծնած է Պէյրութ: Պսակաւոր քաղաքագիտութեան տիտղոսով վկայուած է Հայկազեան Համալսարանէն: Աշխուժ գործունէութիւն կը ծաւալէ *պլոկ*ներու եւ ընկերային համացանցերու մէջ:
Քաղաքական շրջանային հարցերու մասին յօդուածներ ունի տեղական եւ շրջանային մամուլի մէջ: 2010ին հիմնած է the New Eastern Politics առցանց կայքը: Մասնակցած է Հայկազեան Համալսարանի Հայկական Սփիւռքի Ուսումնասիրութեան Կեդրոնի կազմակերպած «Հայերը Լիբանանի Մէջ Բ.» գիտաժողովին (2014), ուր ներկայացուցած իր “The Origin, Success and Failure of the Lebanese Armenian ‘Third Force’ During the Intra-Communal Cold War (1956-1960)” ուսումնասիրութիւնը լոյս տեսաւ *Armenians of Lebanon II* (2017) գիրքին մէջ: Եղած է օգնական հետազօտող Հայկական Սփիւռքի Ուսումնասիրութեան Կեդրոնին մէջ եւ շրջանային համադրողը Փարիզի Women in War Միտքի Կեդրոնին: Ներկայիս կ'ամբողջացնէ իր մագիստրականը՝ Պէյրութի Ամերիկեան Համալսարանի Հանրային Քաղաքականութիւն եւ Միջազգային Յարաբերութիւններ բաժանմունքին մէջ:

Սիլվա Սարգիսեան-Հայրապետեան ծնած է Ամման: Նախակրթութիւնն ու երկրորդական ուսումը ստացած է Ամմանի Իւզպաշեան-Կիւլպենկեան, Պէյրութի ՀԲԸՄ Երուանդ Տեմիրճեան, Հայ Աւետ. Գոլէճին մէջ եւ 1979ին աւարտած է Երուսաղէմի Սրբոց Թարգմանչաց Երկրորդական Վարժարանը: 1984ին աւարտած է London School of Economicsի

Ընկերաբանութեան եւ Քաղաքական Գիտութիւններու բաժինը: Պաշտօնավարած է Ամմանի Աղջկանց Ահլիէ Վարժարանին մէջ, իբրեւ ուսուցիչ եւ վարչական պատասխանատու:
Աշխուժ գործունէութիւն ծաւալած է Յորդանանի հայօճախին մշակութային ու մանաւանդ թատերական ծիրին մէջ: Եղած է վարչական անդամ Ամմանի Մարզական Միութեան: Եղած է անդամ եւ մասնակցած է Յորդանանի Թանգարանի «Հայերը Յորդանանի Մէջ» բաժնի յանձնախումբին աշխատանքներուն:

Արսինէ Ճամպազեան ծնած է Ամման, 1957ին: 1980ին աւարտած է Յորդանանի Համալսարանի Երկրաչափութեան Բաժինը: Հետեւած է կամուրջներ նախագծելու եւ կառուցելու, ինչպէս նաեւ ծրագրեր վարչակառավարելու դասընթացքներու՝ 1995ին եւ 2007ին:
Լայնածիր գործունէութիւն ծաւալած է Ամմանի հայօճախին մէջ. եղած է ՀՄԸՄի սկաուտական խմբապետուհի, 1995-2000՝ ատենապետած է սկաուտական խորհուրդը: 2007էն իվեր փոխ-ատենապետուհին է եւ հաշուապահը Ամմանի ՀՕՄին: Փոխատենապետն էր Հայոց Ցեղասպանութեան 100ամեակի Ոգեկոչման Յորդանանի Յանձնախումբին:
1993էն իվեր կը պաշտօնավարէ Յորդանանի Engicon բազմաբնոյթ խորհրդակցական ընկերութեան մէջ, ուր տնօրէնն է Ծրագրերու Յանձնումի Բաժանմունքին: Ճամպազեան անդամ է Յորդանանի Երկրաչափներու Ընկերակցութեան, նաեւ՝ Պահրէյնի ու Քաթարի Երկրաչափներու Ընկերակցութիւններուն:

Վեր. Պերճ Ճամպազեան ծնած է Երուսաղէմի Ս. Յակոբեանց վանքը, նախակրթութիւնը ստացած Երուսաղէմի, Ամմանի եւ Պէյրութի մէջ: 1967ին աւարտած է Զուիցերիոյ Պիթենպերկ Աստուածաբանական Ճեմարանը: 1967-73՝ ֆրանսահայ երկու տարբեր եկեղեցիներու մէջ հովւութիւն ընելէ ետք, 1973-81՝ հովուած է Նոր Մարաշի Հայ Աւետարանական Եկեղեցին, միաժամանակ դասաւանդելով եւ դարմանատնային ծառայութիւններ կազմակերպելով: 1981-93՝ կը հովուէ Լոս Անճելըսի Հայ Աւետարանական Միացեալ Ժողովական Եկեղեցին, միաժամանակ կը հիմնէ երեք նոր եկեղեցիներ Լոս Անճելըսի շրջանին մէջ: 1997-2007՝ եղած է Կլենտէյլի Երիցական Եկեղեցիին Համաշխարհային Առաքելութիւններու եւ Մեծահասակներու Կրթութեան ծրագրերու ընդերակայ պատուելի, ղեկավարելով աւետարանական օգնութեան բազմաթիւ խումբեր Միջին Արեւելքի եւ Հայաստանի մէջ: 2015էն՝ Հիւսիսային Ամերիկայի Հայ Աւետարանական Եկեղեցիներու Միութեան Աւագ Հովիւ է:

Ռոզէթ Ալեմեան-Մահսերէճեան ծնած է Պէյրութ: 1991ին վկայուած է ԵՊՀ Բանասիրական Բաժանմունքէն: Իբրեւ կրթական մշակ եւ տնօրէն ծառայած է Հալէպի, Կիպրոսի, Պէյրութի հայ վարժարաններու մէջ: Յօդուածներ ստորագրած է հայրենի եւ Սփիւռքի մամուլին մէջ:
2009էն իվեր կը վարէ տնօրէնութիւնը Մերձաւոր Արեւելքի Հայ Աւետարանական Եկեղեցիներու Միութեան Հրատարակչական Գրասենեակին, ուր կը հրատարակուին *Ջանասէր* եւ *Պատանեկան Արձագանգ* պարբերականները: 2010էն, նաեւ՝ կրթական գործավարն է ՄԱՀԱԵՄի Լիբանանի Կրթական Խորհուրդին:
Ազգային կեանքի մէջ իր աշխուժ գործունէութեան համար արժանացած է ՀՀ Սփիւռքի Նախարարութեան «Մայրենիի Պաշտպան» մրցանակին (2016), նաեւ «Մայրենիի Դեսպան» շքանշանին (2018):

Մատլէն Մեծակոբեան ծնած է Ամման, 1957ին: 1980ին աւարտած է Յորդանանի Համալսարանի Միջազգային Յարաբերութիւններու Բաժինը, իսկ 1994ին՝ նոյն համալսարանի մագիստրականը: 2004-08՝ գիտաշխատող Ուփսալայի Համալսարանի Խաղաղութեան եւ Հակամարտութեան Բաժանմունքին մէջ:
Ուսումնական խորհրդական է, հետազօտող եւ ուսումնասէր: Ունի ուսումնասիրութիւններ, ինչպէս՝ "Holistic Approach to Globalization and its Impact on Poverty in Jordan" (2001), "Women and Politics in Jordan" (2005), "Gunnar Jarring: Advocacy and Innovation in Peace and Peacemaking" (2008), "Jordan's Diplomacy of Peace Enhancing Human Security Inside and Outside its National Borders" (2010), "The Multifaceted War with its Multifaceted Regional Implications in Syria" (2013), "The EU and Jordan: Aligning Discourse and Practice on Demoncracy Promotion," *European Foreign Affairs Review,* V. 22 (2017) եւն.:

Փրոֆեսոր Քլոտ Մութաֆեան ծնած է Փարիզի մերձակայքը՝ 1915ի Ցեղասպանութենէն մազապուրծ ծնողքէ: Մասնագիտանալով ուսողութեան մէջ, զանազան համալսարաններ դասաւանդած է այդ նիւթը: Այդուհանդերձ իր սէրը՝ պատմութեան (մանաւանդ միջնադարու) հանդէպ զինք մղած է աշակերտելու հայոց պատմութեան եւ դոկտորական պաշտպանելու 2002ին, հայ-խաչակրական դիւանագիտական յարաբերութիւններուն մասին:
Հեղինակած է շարք մը հատորներ, ինչպէս՝ *Historical Atlas of Armenia* (2001) եւ *L'Arménie du Levant* (երկհատորեակ, 2012): Կազմակերպած է բազմաթիւ ցուցահանդէսներ, ինչպէս «Կիլիկիոյ Հայոց Թագաւորութիւնը» (Փարիզ, Սորպոն 1993), «Հռոմ-Հայաստան» (Վատիկան, Սիսթին սրահ, 1999), «Հայաստան Գրչութեան Կախարդանքը» (Մարսէյ, 2007):

Իր նորագոյն գիրքը՝ *The Saga of the Armenians from the Ararat to the Carpathians*, լոյս տեսաւ 2018ին:

Գէորգ Մսըրլեան ծնած է Իրպիտ, 1961ին: Նախակրթութիւնն ու երկրորդական ուսումը ստացած է Իրպիտի հանրային վարժարաններու մէջ: Վկայուած է Երեւանի Պոլիտեխնիկական Ինստիտուտէն (ներկայիս՝ Ազգային Պոլիտեխնիկական Համալսարան): Հայաստանի մէջ սորված է արեւելահայերէն եւ արեւմտահայերէն:
1983–84՝ գլխաւորած է Երեւանի Յորդանահայ Ուսանողներու Միութիւնը: 2015ին ընտրուած է Ճարտարապետներու եւ Երկրաչափներու Համահայկական Ընկերակցութեան Յորդանանի բաժնի համադրող: Աշխատած է Իրաքի, Եմէնի, Յորդանանի, Սուտանի մէջ իբրեւ շինարարական ծրագրերու ջուրի եւ կենսոլորտի բաժնի խորհրդատու: Հիւր-դասախօս է ջուրի եւ կենսոլորտի դասանիւթերու՝ իր աւարտած համալսարանին մէջ:
Յորդանահայութեան մասին ուսումնասիրութիւններով կ'աշխատակցի սփիւռքահայ մամուլին: Հեղինակն է *Armenians in Irbid and Northern Jordan* (Յորդանան, 2017) արաբերէն եւ անգլերէն երկլեզու հատորին:

Դոկտ. Հերի Յակոբեան հանրային միջազգային իրաւաբան է, մասնագիտացած նաեւ հակամարտութեան այլաձեւ հարթումի մէջ: Ներկայիս Պրեքզիթի իրաւական խորհրդատու է Լոնտոնի OTS Solicitorsին: Ծնած է Յորդանան, հասակ առած Ֆրանսայի մէջ եւ իրաւաբանական կրթութիւն ստացած Միացեալ Թագաւորութեան մէջ: Ան Պէյրութի, Կիպրոսի եւ Երուսաղէմի մէջ գործած է Միջին Արեւելքի Եկեղեցիներու Խորհուրդին եւ Անգլիոյ ու Ուէյլզի Կաթողիկէ Եպիսկոպոսաց Համաժողովին հետ: Օսլոյի բանակցութիւններուն ընթացքին, ան Իսրայէլ-պաղեստինեան հակամարտութեան, երկրորդ ուղիի քաղաքական բանակցութեանց բանակցողն էր յանուն Երուսաղէմի աւանդական 13 Եկեղեցիներու: Երեք տարի շարունակ, ան գլխաւորեց քաղաքական ճիգերը՝ Միացեալ Թագաւորութեան մէջ Հայոց Ցեղասպանութեան ճանաչման:
Հեղինակն է *The Armenian Church in the Holy Land* (Russell Press, 2017) and *Keeping Faith with Hope - The Challenge of Israel-Palestine* (Ekklesia Publishing, 2019) գիրքերուն:

Մարալ Ներսէսեան 2001ին աւարտած է Յորդանանի Կիրառական Գիտութեանց Համալսարանի տարրաբանութեան ճիւղը, 2008ին առեւտրական վարչագիտութեան մագիստրականով վկայուած է New York Institute of Technologyի Յորդանանի մասնաճիւղէն: Ներկայիս հայցորդ է Հայաստանի Հանրապետութեան ԳԱԱ Պատմութեան Ինստիտուտի:

Մասնագիտացած է Եւրամիութեան ֆինանսաւորած ծրագրերու ընթացակարգերու գնահատման մէջ, կառավարած է վերագործարկուող ուժանիւթի ծրագրեր, ինչպէս՝ Յորդանանի արհեստագիտական փոխանցման համացանցը: Ներկայացուցած է Յորդանանի ուժանիւթի ոլորտը տարբեր երկրներու մէջ:
Ունի համայնքային աշխուժ գործունէութիւն: Մասնակցած է Հայաստան-Սփիւռք համաժողովներու, եղած է Հայոց Ցեղասպանութեան Հարիւրամեակի Յորդանանի Յանձնաժողովի անդամ:

Ներսէս Ներսէսեան ծնած է Երուսաղէմ, 1948ին: Աւարտած Երուսաղէմի Սրբոց Թարգմանչաց Երկրորդական Վարժարանը, ապա 1972ին՝ Երեւանի Պոլիտեխնիկական Ինստիտուտը, ելեկտրաբանեցման եւ մեքենականացման մասնագիտութիւններով: Նախագծած է դեղօրայքի գործարաններ՝ Յորդանանի, Սէուտական Արաբիոյ, Սուտանի, Եմէնի, Իրաքի, Ալճերիոյ եւ այլ երկիրներու մէջ:
1972-78՝ եղած է Երուսաղէմի Հայ Երիտասարդաց Միութեան գործօն անդամ եւ վարչական, 1978-2015՝ ԱՄՄ գործօն եւ վարչական անդամ: 1989էն անդամ է Ամմանի Ազգային Տեղական Խորհուրդին, ընդհանուր քարտուղարը՝ խորհուրդին եւ ազգային առաջնորդարանին: 2004էն իվեր ատենապետն է Ամմանի ՌԱԿ Վահան Թէքէեան Ակումբին, իսկ 2011-15՝ Հայոց Ցեղասպանութեան 100Ամեակի Ամմանի Միացեալ Յանձնախումբի պատասխանատու:

Փրոֆեսոր Վահրամ Շեմմասեան վկայուած է University of California, Los Angelesէն, պաշտպանելով “The Armenian Villagers of Musa Dagh: A Historical-Ethnographic Study, 1840-1915” դոկտորականը: Տնօրէնն է California State University, Northridgeի ժամանակակից եւ դասական լեզուներու եւ գրականութեան բաժանմունքի հայագիտութեան բաժնին: Հեղինակն է *The Musa Dagh Armenians: A Socioeconomic and Cultural History, 1919-1939* (HU Press, 2015) հատորին: Պարգեւատրուած է ՀՀ Սփիւռքի նախարարութեան Ուիլիըմ Սարոյեան շքանշանով՝ Սփիւռքի մէջ հայագիտութեան եւ հայ մշակոյթին զարգացման իր բերած նպաստին համար: Արժանացած է Ծիծեռնակաբերդի Հայոց Ցեղասպանութեան Թանգարան-Ինստիտուտի Ֆրանց Վերֆէլ պատուանշանին՝ առ ի գնահատանք Մուսա Լեռան մասին իր գիտաշխատութիւններուն:

Յարութ Չէքիճեան ծնած է 1949ին Պէյրութ: 1971ին աւարտած է Հայկազեան Համալսարանի բնագիտութեան ելեկտրոնային ճիւղը: Եղած է վերջին նախագահը Հայկազեանի՝ Լիբանանի Հրթիռներու Հետախուզական Յանձնախումբին: Մասնագիտութիւնը շարունակած է

Մ. Նահանգներու մէջ՝ 1971-73ին, մասնագիտանալով ելեկտրոնային հաղորդակցութեան ճիւղին մէջ՝ ծրագրաւորում եւ արտադրութիւն:
1972-79՝ պաշտօնավարած է Յորդանանի Royal Scientific Societyի մէջ, իբրեւ ելեկտրոնային կեդրոնի փոխվարիչ, արտադրութեան բաժնի վարիչ, ապա մասնայատուկ ծրագրերու կեդրոնի վարիչ:
Եղած է անդամ ՀՄԸՄի Պէյրութի, Ամմանի, Լիբանանի եւ Կեդրոնական վարչութեանց: 1998-2003՝ մաս կազմած է Համահայկական Խաղերու առաջին համաշխարհային կոմիտէին, 1992-98՝ Լիբանանի Ազգային Իշխանութեան Ուսումնական Խորհուրդին (վերջին երկու տարիներուն իբրեւ ատենապետ): Հրապարակագրութեամբ կ'աշխատակցի Լիբանանի *Ազդակ* օրաթերթին:

Սիլվա Մենեքշեան-Պաղսարեան ծնած է Ամման: 1994ին վկայուած է Յորդանանի Arabs' Community Collegeէն իբրեւ ներքին յարդարումի յատակագծող: 1994–98՝ աշխատած է իր մասնագիտութեամբ Ամմանի մէջ: 1999էն սկսեալ արուեստի ուսուցչուհի է Ամմանի Րոզըրի Սիսթըրզ Սքուլին մէջ:
Գործօն անդամ է ՀՄԸՄի Ամմանի մասնաճիւղին, ստանձնած է վարչական պատասխանատուութիւններ 1991–97 շրջանին ու՝ 2015էն իվեր:

Ալին Պեննէեան ծնած է Ամման, 1968ին: 1990ին աւարտած է Յորդանանի Համալսարանի Անգլիական Գրականութեան եւ Քաղաքական Գիտութիւններու բաժինները:
Եղած է ՀՄԸՄի Ամմանի մասնաճիւղի վարչական, ղեկավարած սկաուտական շարժումը, մաս կազմած համայորդանանեան սկաուտական ուսումնակրթական ծրագրի յանձնախումբին: 1995-2000՝ պատասխանատու՝ Յորդանանի կանանց պասքէթպոլի ազգային հաւաքականի վարչակառավարման, անդամ՝ Յորդանանի Պասքէթպոլի Համադաշնութեան Վարչութեան ու Յորդանանի Մարզական Հաղորդամիջոցներու Ընկերակցութեան:
Աշխատակցած է Associated Pressին, մաս կազմած *The Jordan Times*ի խմբագրակազմին, 1991–2003՝ ստանձնած թերթին գործադիր վարչական խմբագիրի պաշտօնը: 2003–10՝ գլխաւորած է Յորդանանի Րանիա թագուհիին հաղորդակցութեան եւ մամուլի պալատական գրասենեակը, ստանձնած Համաշխարհային Երիտասարդութեան Խաղաղութեան Նախաձեռնութեան MENAի տնօրէնութիւնը:

Յակոբ Սերփէքեան ծնած է Ամման, 1949ին: Աւարտած է Հայկազեան Համալսարանի Առեւտրական Վարչագիտութեան բաժինը 1974ին:

Պաշտօնավարած է Յորդանանի Royal Jordanian Airline ընկերութեան առեւտուրի եւ ծրագրաւորումի բաժնին մէջ եւ հանգստեան կոչուած իբրեւ ընկերութեան թռիչքային ժամանակացոյցի եւ վարձակալութեան բաժիններու տնօրէն: Եղած է անդամ՝ ընկերութեան պաշտօնէութեան բնակարանաշինութեան յանձնախումբին:
Աշխուժ գործունէութիւն կը ծաւալէ Յորդանանի հայօճախին մէջ: Ներկայիս ատենապետն է Յորդանանի Ազգային Մարզական Միութեան:

Հրաժին Վարդանեան ծնած է Երեւան: 2013ին աւարտած է ԵՊՀ Բանասիրական Բաժինը, իսկ 2015ին մագիստրականը՝ ԵՊՀ Սփիւռքագիտութեան Ամբիոնէն: Այնուհետեւ լծուած է դոկտորական թեզի պատրաստութեան՝ «Սփիւռքը 20րդ Դարավերջի եւ 21րդ Դարասկզբի Տեսական Քննարկումներում (ԱՄՆ, Քանատա)» նիւթով:
Հրատարակած ուսումնասիրութիւններու շարքին են՝ «Սփիւռքի Սահմանումը եւ Եզրոյթի Իմաստային Ընդլայնման Պատճառները ըստ Խաչիկ Թէօլէլեանի», «Գաղթականութեանը Վերաբերող Միքանի Բառերի Եզրութային Արժէքը Հայերէնում» եւ «Ժամանակակից Կեանքի Պատկերը Լիբանանահայ Գրականութեան Մէջ (1991–2012)»:

Դոկտ. Անդրանիկ Տագէսեան ծնած է Պէյրութ: Դոկտորականը պաշտպանած է Ուէյլզի Համալսարանը: Եղած է Պատասխանատու Քարտուղարը (1993-2016) եւ Պատասխանատու Խմբագիրը (2017-) *Հայկազեան Հայագիտական Հանդէս*ին, անդամ է *Հայագիտական Հարցեր*ի (2014) եւ *Ցեղասպանագիտական Հանդէս*ի (2019) խմբագրակազմերուն: Տնօրէնն է Հայկական Սփիւռքի Ուսումնասիրութեան Կեդրոնին (2011), Հայկազեան Համալսարանի Հրատարակչատան (2012), միաժամանակ դասախօս՝ Հայկազեան Համալսարանին մէջ:
Խմբագրած/կազմած է տասնեակ մը գիրքեր, վերջինը՝ Յարութիւն Գալայճեանի, *Միլիոնէն Մէկը (Ցեղասպանութեան Ականատես Հէյթունցի Պապանիի Մը Յուշերը)* (2018), աշխատասիրած է *Բարսեղ Կանաչեան (1885-1967). Կեանքի Մը Երաժշտացումը* (2017) գիրքը, Դոկտ. Արմէն Իւրնէշլեանի հետ պատրաստած է *Լիբանանահայ Գիրքը 1894-2012, Մատենագիտական Ցանկ* (2013) հատորը: Իր վերջին հեղինակութիւնն է *Լիբանանի Հայօճախը, Գիրք Ա., Համարկումին Խաչուղիները (1920-2005)* (2015) գիրքը:

Փրոֆ. Արաքս Փաշայեան ծնած է 1975ին: 1998ին աւարտած է ԵՊՀ Արաբագիտութեան Բաժինը, միջանկեալ (1996–97) Դամասկոսի մէջ հետեւած է օտարներու համար արաբերէն լեզուի դասընթացքներու: 1998էն իվեր ՀՀ ԳԱԱի Արեւելագիտութեան Բաժանմունքի գիտաշխատող

է: 2001ին պաշտպանած է դոկտորականը՝ «Քաղաքական Իսլամը» նիւթով: 2005էն իվեր քաղաքական իսլամ եւ արաբ պետութիւններու ժամանակակից պատմութիւն կը դասաւանդէ ԵՊՀ Արաբագիտութեան Բաժանմունքին մէջ, իսկ 2010էն իվեր նաեւ՝ «Իսլամը Ազրպէյճանի Մէջ» նիւթը:
Փրոֆ. Փաշայեան անդամ է Հայաստանի Երիտասարդ Արեւելագէտներու Հոգաբարձուներու Խորհուրդին:

Դոկտ. Հիլմար Քայզէր դոկտորականը պաշտպանած է Ֆլորանսի (Իտալիա) European University Instituteին մէջ, 2001ին: Մասնագիտացած է Օսմանեան Կայսրութեան վերջին շրջանի ընկերատնտեսական պատմութեան մէջ, իմասնաւորի՝ Հայկական Ցեղասպանութեան: Մանրամասնեալ, խորացուած ուսումնասիրութիւններ ունի Հայոց Ցեղասպանութեան որոշակի երեսակներուն մասին, ինչպէս՝ *At the Crossroads of Der Zor. Death, Survival, and Humanitarian Resistance in Aleppo, 1915–1917* (2002), *The Extermination of Armenians in the Diarbekir Region* (2014), յօդուած-ուսումնասիրութիւն մը՝ *The Oxford Handbook of Genocide Studies* գիրքին մէջ (2010)՝ "Genocide at the Twilight of the Ottoman Empire" եւ բազմաթիւ ուսումնասիրութիւններ:

Դոկտ. Աննա Օհաննէսեան-Շարփէն ծնած է Պէյրութ: Հետեւած է գեղարուեստի դասընթացքներու՝ Beirut University Collegeի (ներկայիս՝ LAU) մէջ: Աւարտած է Փարիզ 10-Նանթէր Համալսարանը, մագիստրոսի վկայականով՝ մարդաբանութեան մասնագիտութեամբ: 1987ին ստացած է Ecoles des Hautes Etudes en Sciences Socialesի Խորացուած Ուսումնասիրութիւններու վկայականը, ընկերային մարդաբանութեան ուղղութեամբ, մասնագիտանալով հովիւ-վաչկատուններու մասին: Կը գործէ իբրեւ հետազօտող, մարդաբանութեան եւ ընկերային զարգացման խորհրդատու, միաժամանակ հետազօտող էր Ամմանի CERMOCի գրասենեակին (Մարտ 1993–Հոկտ. 1994): Իր նորագոյն հետազօտութիւնները կ'առնչուին գաղթի, ընկերային զարգացման եւ մշակութային ժառանգութեան: Հրատարակած է ուսումնասիրութիւններ հարաւային Յորդանանի (Մաան, Փեթրա) հայերու յետնորդներու մասին, ինչպէս՝ «Les Arméniennes de Ma'an: Entre Oubli et Mémoire»:

Հիմնական Տեղեկութիւններ Յորդանանի Մասին

Յորդանանի տարածքին՝ մարդկային հնագոյն հետքերը կ'երթան մինչեւ 200,000 տարի անցեալ: Երկաթէ դարուն նշանաւոր են Յորդանանի Ամմոնի, Էտոմի եւ Մոապի թագաւորութիւնները: Տարածքը ենթարկուած է ասորական, բաբելոնեան, պարսկական, հելլէնական եւ հռոմէական տիրապետութեանց: Արաբական Խալիֆայութիւնը զայն կը գրաւէ 636ի Եարմուքի ճակատամարտով: Այնուհետեւ մինչեւ 1115 շրջանը կը մնայ արաբական տիրապետութեան տակ, 1115-1187՝ խաչակիրներու, ապա էյյուպեան, իսկ 1260-1516՝ մեմլուքեան տիրապետութեան տակ, երբ օսմանցիք կը գրաւեն շրջանը: Պահ մը՝ 1810-30ականներուն՝ Եգիպտոսի Մուհամմէտ Ալիի բանակները կը գրաւեն շրջանը, բայց 1841ին կը վերահաստատուի օսմանեան իշխանութիւնը:

Արեւելեան Միջերկրականի արաբական տարածքներուն մէջ օսմանեան ուժերու պարտութիւնով, 1917էն տակաւ գործադրութեան կը դրուի Սայքս-Փիքոյի համաձայնութիւնը, որով ժամանակակից Սուրիա-Յորդանան սահմանը կը դառնայ հարաւային բաժանարար գիծը՝ ֆրանսական եւ բրիտանական տիրապետութեան շրջաններուն: Սեպտեմբեր-Հոկտեմբեր 1918ին, օսմանեան բանակները կը նահանջեն Արարայէն, Ամմանէն, Տարաայէն եւ Դամասկոսէն, հուսկ՝ կը կնքուի Մուտրոսի Պայմանագիրը:

1918ին Ֆայսալ, Հիժազի թագաւոր Շերիֆ Հուսէյնի երրորդ զաւակը, կը հռչակուի Սուրիոյ Վիլայէթի ժամանակաւոր կառավարութեան պետ՝ առանց ծանօթ ըլլալու 1916ի Սայքս-Փիքոյի համաձայնութեան եւ 1917ի Պալֆուրի Յայտարարութեան: Անդրյորդանանը կը մասնատուի ու կը կցուի Հարաւային Սուրիոյ եւ Հիւսիսային Հիժազի: Ապրիլ 1920ին Սան Րեմոյի Համաժողովը պաշտօնապէս կը սահմանագծէ Սուրիա-Լիբանանը իբրեւ ֆրանսական եւ Պաղեստինը՝ բրիտանական հոգատարութեան տիրակալութիւն: Վերջինս նախապէս մասն էր Սուրիոյ Վիլայէթի հարաւային գօտիին: Յուլիս 1920ին, Մէյսալունի ճակատամարտին արաբական զօրքերը կը պարտուին ֆրանսացիներէն ու Մարտ 1920ին ինքզինք Սուրիոյ թագաւոր հռչակած Ֆայսալ կ'արտաքսուի Դամասկոսէն: Իր եղբայրը՝ Ապտալլա, կ'ուղղուի Մաան՝ Հիժազի թագաւորութեան հիւսիսը: Մարտ 1921ի Գահիրէի Համաժողովը Ապտալլան կը կարգէ Անդրյորդանանի Էմիրութեան ղեկավար, իսկ Միջագետքի հոգատար՝ Ֆէյսալը: Սեպտեմբեր 1922ին Ազգերու Լիկան իբրեւ պետութիւն կը ճանչնայ Անդրյորդանանը, իսկ 1923ին Բրիտանիա զայն կը ճանչնայ՝ Ապտալլայի գլխաւորութեամբ: Տակաւ կը յստակացուին Էմիրութեան հարաւային սահմանները:

1946ին Բրիտանիա կ'աւարտէ իր հոգատարութիւնը Անդրյորդանանի վրայ, կը հռչակուի Անդրյորդանանի Հաշիմեան անկախ Թագաւորութիւնը,

ծայր կ'առնէ 1947-48ի արաբ-իսրայէլեան պատերազմը. տասնեակ հազարաւոր պաղեստինցիներ կը փախչին Արեւմտեան Ափ ու Յորդանան: Պաղեստին չի գոյանար իբրեւ պետութիւն՝ Պաղեստինի տարածքը կ'երկատուի Իսրայէլի, Յորդանանի եւ Եգիպտոսի միջեւ: Անոր մէկ մասը կը դառնայ Իսրայէլ, մինչ Արեւմտեան Ափը եւ Երուսաղէմը կ'անցնին Յորդանանի տիրապետութեան, իսկ Կազան՝ Եգիպտոսի: Պետութիւնը 1949ին կը վերանուանուի Յորդանանի Հաշիմեան Թագաւորութիւն, Թալալ կը հռչակուի թագաւոր՝ 1951ին սպաննուած իր հօր՝ Ապտալլայի փոխարէն: 1952ին կը հաստատուի երկրին սահմանադրութիւնը, Թալալ առողջական պատճառներով կը հրաժարի գահէն: 1956ին Հուսէյն ձեռք կ'առնէ թագաւորութիւնը, իշխանազրկելով յորդանանեան բանակին բրիտանական միաւորները: Փետրուար 1958ին կազմուած Յորդանան-Իրաք համադաշնութիւնը վերջ կը գտնէ նոյն տարուան 14 Յուլիսի իրաքեան յեղափոխութեամբ:

1967ին տեղի կ'ունենայ արաբ-իսրայէլեան երկրորդ պատերազմը, որով Յորդանան կը կորսնցնէ 1948-49ին իր տիրապետութեան անցած Արեւմտեան Ափն ու Երուսաղէմը:

1994ին կը կնքուի Իսրայէլ-Յորդանան Խաղաղութեան Պայմանագիրը: 1999ին՝ Հուսէյն թագաւորի մահով, որդին՝ Ապտալլա, կը դառնայ Յորդանանի Հաշիմեան Թագաւորութեան չորրորդ թագաւորը:

Յորդանան փոքր, յարաբերաբար անջրդի պետութիւն մըն է, շուրջ 89,342 քառ. քլմ. տարածութեամբ եւ 10 միլիոն բնակչութեամբ: Երկրին գերիշխող կրօնքը սիւննի իսլամութիւնն է (շուրջ 95%), որ յարաբերաբար խաղաղ գոյակեցութիւն ունի տեղաբնիկ քրիստոնեայ (ուղղափառ) փոքրամասնութեան մը հետ: Երկիրը կը հաշուէ շուրջ 2,1 միլիոն պաղեստինցի գաղթականներ:

Յորդանանի Հաշիմեան Թագաւորութիւնը, մանաւանդ վերջին երկու տասնամեակներուն որդեգրած է ազատ տնտեսութեան համակարգը: Ազգային համախառն արտադրանքը բարձրացած է 1980ի 8,25 միլիար տոլարէն 2017ի 89,1ի: 2017ին պետական պարտքը հասած է ԱՀԱի 96%ին: Երկրագործութիւնը կը կազմէ երկրի ԱՀԱի 2.4, արդիւնաբերութիւնը՝ 16.2, շինարարութիւնը՝ 4.6, հանքարդիւնաբերութիւնը՝ 3.1, հաղորդակցամիջոցները՝ 13.5, փոխադրամիջոցները՝ 10, մինչ ծառայութիւնները կը գոյացնեն շուրջ 70ը, զբօսաշրջութիւնը՝ 9.75 առհարիւրը (2004ի տուեալներ):

Համառօտ Ուրուագիծ Յորդանանի Հայօճախին

Հայոց Ցեղասպանութեան հետեւանքով տեղահանեալներու մեծաթիւ խումբ մը - շուրջ 30,000 - կ'աքսորուի Պիլատ ալ Շամի անապատային, ծայրայեղօրէն թշուառ ու յետամնաց հարաւային տարածքները՝ Տարաայէն Իրպիտ, Ժարաշ, Երուսաղէմ, Մեռեալ Ծով, Մաան մինչեւ Աքապա: Աքսորեալներուն աւելի քան երկու-երրորդը կը մահանայ սովի, համաճարակներու եւ տեղի թուրք ու օսմանցի պաշտօնատարներու բիրտ բռնութիւններուն պատճառով:

Ա. Աշխարհամարտի վերջին հանգրուանին, Օսմանեան Կայսրութեան դէմ 5 Յունիս 1916ին ապստամբած Շերիֆ Հուսէյնի ուժերը եւ բրիտանական զօրքերը տիրելով շրջանին՝ տասանորդուած հայերէն շուրջ 5000 հոգի կը տեղափոխուի Երուսաղէմ եւ Փոր Սայիտի գաղթավայր: Ասոնք իրենց ետին կը թողուն արաբ ցեղախումբերէն որդեգրուած մանչուկներ, որբուհիներ եւ առեւանգուած-ամուսնացուած պատանուհիներ:

Կիլիկիոյ երկրորդ պարպումին, փոքրաթիւ հայեր կը հաստատուին մերօրեայ Յորդանանի տարածքին՝ 1922-25ին: Այնուհետեւ Սուրիոյ մէջ հակաֆրանսական եւ Իրաքի մէջ հակաբրիտանական ըմբոստութեանց, անկայունութեան եւ անորոշութեան պատճառով յառաջացած անապահովութենէն փախչելով, աւելի ետք՝ նաեւ Ալեքսանտրէթի պարպումին հետեւանքով հայեր կը հաստատուին յարաբերաբար խաղաղ, տնտեսապէս յուսալից ժամանակակից Յորդանանի զանազան շրջաններ: Հայերու թիւի աճը կը մղէ Երուսաղէմի հայոց պատրիարքարանը որ մնայուն հոգեւոր հովութիւն հաստատէ Ամմանի մէջ եւ աջակցի շուրջ հարիւր աշակերտներով դպրոցի մը յառաջացման:

Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան շուրջ կը սկսին գոյանալ Պաղեստին-Յորդանանի ծայրամասային հայկական կղզեակներ՝ Ղազզայէն Հայֆա-Եաֆա, Բեթղեհէմ, Նապլուս... Ժարաշ, Քարաք, Զարքա, Ռըսէյֆա, Իրպիտ եւ Ամման:

1948ին, Պաղեստինի երկատման հետեւանքով յառաջացած երկու պետութիւններու՝ Իսրայէլի եւ Յորդանանի հայութեան կը պարտադրուի պետական սահմաններով գծուած երկու անջատ հայօճախ: Պաղեստինէն մեծ թիւով հայեր կ'ապաստանին Ամման, ուր կը գոյանայ Էշրեֆիէ լեռան հայկական բնակավայրը, յառաջացնելով աշխուժ հայօճախի մը գոյառման կորիզը: Յորդանանի հայութեան եռապատկուած թիւը հասած էր 10,000ի եւ մղած որ ան կազմակերպուի ու սկսի գործնականացնել դպրոցէն ու մատուռէն անդին՝ եկեղեցիի կառուցման ծրագրերն ու վերածուի լիարժէք հայօճախի, 1946ին Յորդանանի Էմիրութեան հռչակումով մայրաքաղաք դարձած Ամմանը դառնայ Յորդանանի կեդրոնական հայօճախը, տակաւ

իրեն ցանցակալելով ծայրամասային այն օղակները, որոնք նախապէս կապուած էին Երուսաղէմին:

1967ի արաբ-իսրայէլեան պատերազմին կը գրաւուի Երուսաղէմը, կը խզէ Երուսաղէմի հետ յորդանահայութեան պորտակապը, "կը նուիրականանայ" Յորդանանի հայօճախին անջատ գոյութիւնը, եւ Հայֆա, Եաֆա թէ Պաղեստին-Իսրայէլի այլ վայրեր հաստատուած հայեր կ'ամփոփուին Երուսաղէմի ու Ամմանի մէջ: Միաժամանակ կը ծաւալի ներհոսքը Յորդանանի ծայրամասերէն՝ Ամման: Սակայն, յորդանահայութեան թիւին նուազումը պատճառ կը դառնայ որ հայօճախը չկարենայ ծաւալել Երուսաղէմէն ամբողջովին անկախ վարչակառավարական գոյութիւն: 1967ի պատերազմին հետեւանքով գաղթական պաղեստինահայերէն քիչեր կը հաստատուին Յորդանան, մինչ մեծամասնութիւնը կ'ուղղուի Արեւմուտք: Ծայր կ'առնէ նաեւ արտագաղթի ալիք մը՝ նոյնինքն Յորդանանի հայութեան մէջ, առաւել վտանգելով Յորդանանի հայօճախին ինքնուրոյն գոյատեւումին ու զարգացման համար անհրաժեշտ պայմանները: Հայօճախին՝ Երուսաղէմի Հայոց Պատրիարքութենէն վարչաիրաւական կիսանկախութիւնը տակաւ կը շեշտաւորուի մէկ կողմէն Իսրայէլի կողմէ Երուսաղէմի կլանման եւ սաղիմահայութեան նուազումին եւ միւս կողմէն Յորդանանի Հաշէմեան Թագաւորութեան պետաիրաւական սահմաններու յարաբերական ամրապնդումին գործընթացով:

Կը սկսի ուրոյն դիմագիծ առնել Յորդանանի հայօճախը, կը կառուցուի Ս. Թադէոս եկեղեցին, Երեւանի մէջ ուսանած յորդանահայերու ծննդավայր տակաւ վերադարձը նոր աւիշ ու հայկականութիւն կը ներարկէ հայօճախին, որ երբեք չբաժնուելով Երուսաղէմէն կ'ազդուի հոն հաստատուած հայոց դարաւոր պատրիարքութեան մեծ ու փոքր զարգացումներէն, ցնցումներէն, որոնք կը խռովեն նաեւ Յորդանանի հայօճախին կեանքը[1]:

Յորդանահայութիւնը ընկերատնտեսական բնագաւառներուն մէջ տակաւ կը համարկուի Յորդանանի ընկերութեան, շարունակելով մեծապէս նպաստել անոր մարզական, երկրագործական, ճարտարարուեստի, գիտութեան, վարչակառավարման եւ տնտեսական բնագաւառներու զարգացման:

Այնուհետեւ, բացի 1970ի պետութիւն-պաղեստինցիներ սեպտեմբերեան կռիւներու պետական տագնապէն, հայօճախը - նուազած բայց կայուն թիւերով - կը գոյատեւէ խաղաղ, ապահով ու կայուն պայմաններու մէջ[2]՝ ի

[1] Պաղ պատերազմի արձագանգները եւս խռոված էին հայօճախը նախապէս:

[2] 1950ականներու կէսին հակաքրիստոնէական բռնութիւններ կը կատարուին Մատապայի մէջ: Սակայն Մարտ 1953ին, Ամմանի մէջ, հայ սկաուտներու վրայ

տարբերութիւն դրացի երկիրներուն՝ Լիբանանի, Իրաքի եւ Սուրիոյ, ուր յաջորդաբար ծայր առած քաղաքական եւ ընկերատնտեսական անկայունութիւնը դէպի Յորդանան հայկական ներհոսք մը կը յառաջացնէ այդ երկիրներէն: Սակայն, ո՛չ Յորդանանի տնտեսական, ո՛չ ալ հայօճախին ընդգրկելու պայմանները կրնային համարկել այդ գաղթականները: Վերջիններս միաոժամանակ Յորդանան ապաստանելէ ետք, կ'ուղղուին Արեւմուտք, միայն ժամանակաւորապէս նպաստելով հայօճախին թիւին բարձրացման եւ ատոր հետեւանքով յառաջացած աշխուժութեան: Անոնց արտագաղթը եւս կը յառաջացնէ նաեւ տեղական արտագաղթի ալիք մը:

Այսօր, հայօճախին թուային յարաբերական անկայունութիւնն ու փոքրութիւնը մեծ մարտահրաւէրներու առջեւ կը դնեն Յորդանանի միակ հայկական վարժարանի գոյութիւնը եւ նոյնինքն հայօճախին գոյատեւումը: 1990ականներուն Հայաստանի Հանրապետութեան հոչակումը առայժմ չի թուիր ունենալ այն նշանակալի ազդեցութիւնը, որով ապահովուի Յորդանանի հայօճախին ծաղկուն գոյատեւումը, հակառակ առկայ միջպետական բարեկամական յարաբերութիւններուն:

Միջին Արեւելքի մէջ վերջին աւելի քան չորս տասնամեակներու պետական, ժողովրդագրական, տնտեսական, ընկերային, քաղաքական ու արեւելումի տեղաշարժերը կենսական կը դարձնեն Միջին Արեւելքի հայօճախներու եւ անոնց ճակատագրին առնչուող մարմիններու կողմէ համապատասխան քաղաքականութիւն մշակելն ու գործնականացնելը:

Իսլամ եղբայրներու խումբի մը յարձակումէն բացի հակահայ արարքի չենք հանդիպիր Յորդանանի մէջ այդ շրջանին:

Համառօտ Մատենագիտութիւն

Ani Derderian-Aghajanian, "Armenians' Dual Identity in Jordan," *International Education Studies*, vol. 2, no. 3 (August 2009), pp. 35-6.

Chomakhlou, The History of an Armenian Village, by Aris Kalfaian, translated by Krikor Asadourian, edited and revised, with a preface and afterword by Michael Ekizian, published by Chomaklou Compatriotic Society, New York, 1982, USA.

Vahram Dadrian, *To the Desert: Pages from My Diary*, translated from the Armenian by Agop J. Hacikyan, Gomidas Institute, Princeton.

Articles on Ethnic Groups in Jordan, Including: Adyghe People, Chechen People, Dom People, Mahafzah, Shapsugs, Iraqis in Jordan, Armenians in Jordan, Hephaestus Books, 2011.

Raymond Kevorkian, Lévon Nordiguian, Vahe Tashjian, *Les Arméniens 1917-1939: La Quête d'un Refuge*, Presses de l'Université Saint-Joseph, Beirut, 2007.

Ազգային Մարզական Միութիւն 50ամեակ, نادي الوطني الرياضي Ընդհ. պատ.՝ Անդրանիկ Լեփէճեան, խմբ.՝ Ներսէս Ներսէսեան, Ռոզէթ Ալեմեան-Մահսերէճեան, Պէյրութ, Տպ. Շիրակ, 2008:

Հրանդ Աճէմեան, *Յորդանան. Հայերը Յորդանանի Մէջ*, Լոս Անճելըս, Hai Life Publishing, 1989:

Հրանդ Աճէմեան, «Ամմանի Հայկական Գաղութը», *Յառաջ*, 26 Հոկտեմբեր 1994:

Անապատի Յուշագիր. Լեւոն Եօթնեղբայրեանի Կեանքը Եւ Գործունէութիւնը, գրի առաւ՝ Լիպարիտ Արշակեան, խմբ.՝ Հրանդ Աճէմեան, հրատ. Լեւոն Բարեան, Լոս Անճելըս, 2003, Տպ. Color Depot.

Ա. Անդրէասեան, «Այցելութիւններ Դամասկոսի, Ամմանի Եւ Աթէնքի Հայկական Գաղութներուն», *Արեւ*, 16 Փետրուար 1979:

Արիս Գալֆայեան, *Չօմախլու (Կեսարիա)*, Հրատ. Չօմախլուի Նպաստամատոյց Ընկերութեան, Նիւ Եորք, Տպ. Կոչնակ, 1930:

Կարապետ Ա. Քհնյ. Գալֆայեան, *Գիրք Ելից Հայոց (Յիշատակ Անշիրիմ Նահատակաց Հնոց Եւ Նորոց, Յայտից Եւ Անյայտից)*, Պէյրութ, Տպ. Տօնիկեան, 1955:

Գրիգոր Գուտուլեան, *Կարմիր Նոթեր Տարագրի Կեանքէս, Փոր Սայիտ, (Հայկական Գաղթավայր)*, [Եգիպտոս] 1919:

Գրիգոր Գրիգորեան, «Ամմանահայութիւնը Եւ Իր Ցաւերը», *Արեւ*, Գահիրէ, 4 Յունիս 1980:

Բիւզանդ Թորիկեան, *Պատմութիւն Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութեան,* Հատորներ Ա.-Դ., Պէյրութ, 1995, 1999, 2003, 2007:

Համօ Մոսկոֆեան, «Մեր Կեանքի Նպատակն Է Միշտ Օգնել Հայաստանին Եւ Արցախին, Սակայն Ակնկալում Ենք, Որ Մի Քիչ Էլ Հայաստանը Հետաքրքրուի Մեր Գաղթօճախով», *Ազգ*, 5 Ապրիլ 2007, թ. 62:
Յովսէփ Պարազեան, «Հին Ու Նոր Պատմական Ակնարկ. Յորդանանահայ Գաղութը», *Ազատ Օր*, 20-22, Ապրիլ 2006:
Յովսէփ Պարազեան, «Յորդանանահայ Գաղութը», *Մարմարա*, Ստամբուլ, 26, 27 եւ 28 Ապրիլ 2006:
Համօ Պետրոսեան, «Հայերը Յորդանանի Մէջ», *Ազատ Օր*, Աթենք, 27 Օգոստոս 1993:
Արամ Սահակեան, «Դամասկոսէն-Ագապա (Յուշեր Մեծ Եղեռնի Օրերէն)», *Հայրենիք Ամսագիր*, Յունուար, Փետրուար, Մարտ, Ապրիլ, 1950:
Ա.Ս. «Ուրֆացիներու Խումբ Մը՝ Դամասկոսէն Ագապա Ճամբուն Վրայ»՝ Արամ Սահակեան, *Դիւցազնական Ուրֆան Եւ Իր Հայորդիները*, Հրատ.՝ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան, Հայկական Ցեղասպանութեան 100-Ամեակ, Արեւմտեան Հայաստանի Եւ Կիլիկիոյ Յուշամատեաններ [Մատենաշար], Անթիլիաս, 2014, էջ 931-39:
Արամ Սարգսեան, «Յորդանան», *Հայ Սփիւռք Հանրագիտարան*, Երեւան, 2003, էջ 367-8:
Տիգրան Սաւալանեանց, *Պատմութիւն Երուսաղէմի, Հտր. 1-2*, Երուսաղէմ, Տպ. Ս. Յակոբեանց, 1931:
Պ. Տօնապետեան, «Վտարեալ Հայութեան Խաչի Ճամբան (1915-1917)», *Զայն Տառապելոց*, Անթիլիաս, 2008, էջ 292: Հատորը կ'ընդգրկէ նաեւ Քարաք աքսորուած Յարութիւն Բաջանճեանի նամակը (էջ 330-331):
Օրացոյց Առաքելական Աթոռ Սրբոց Յակովբեանց Յերուսաղէմ (տարբեր տարիներ):
Վիքիպեդիա Ազատ Հանրագիտարան, «Յորդանանի Հայ Գաղութը», https://hy.wikipedia.org/wiki/Յորդանանի_հայ_գաղութը :
هند أبو الشعر، *تاريخ شرقي الأردن في العهد العثماني، 922 هـ - 1337 هـ / 1516-1918* م، ط أولى، مؤسسة آل البيت للبحوث الإسلامية، عمان، 2001 م وطبعة ثانية، عام 2010 م وزارة الثقافة، مكتبة الأسرة، عمان.
هند أبو الشعر، *إربد وجوارها، ناحية بني عبيد 1850 - 1928* م، مطبوعات جامعة آل البيت وبنك الأعمال، عمان، 1995 م طبعة أولى، وطبعة ثانية ، وزارة الثقافة ، عمان ، 2009 م .
هند أبو الشعر، *أردني في المكسيك، مذكرات خليل سماوي 1901-1935* م، مركز الرأي للدراسات، طبعة أولى، عمان، 2012 م.
محمد علي العجلوني، *ذكرياتي عن الثورة العربية الكبرى*، عمان، طبعة أولى، 1957 م.
آنا اوهانسيان-شاربان, "أرمنيات معان: بين الذاكرة والنسيان", ريمون كيفوركيان, ليفون نورديكيان, فاهه طاشجيان, *الأرمن البحث عن ملجا 1917-1939*, ترجمة جوزيف كالوستيان, منشورات جامعة القديس يوسف, 2010, ص. 217-233:

محمد عطاالله المعاني, *الارمن في معان, 1915-2016*, معان, 2015.
كيفورك ميناس مصرليان, *الارمن في اربد وشمال الاردن*, مطبعة السفير, الاردن, 2017.
ربيكا ملكيان, *قافلة الموت: مذابح الارمن (رواية)*, 2015, الاردن.
اردا فريج دير كرابديان, *الارمن الاردنيون: الواقع الاجتماعي والهوية*, سلسلة دراسات (5), منشورات البنك الاهلي الاردني, دار ورد للنشر والتوزيع, مطبعة السفير, عمان, 2005.

Հայկական Սփիւռքի Ուսումնասիրութեան Կեդրոն «Յորդանանի Հայերը» Գիտաժողովը Աւարտեց Իր Աշխատանքները

Հայկազեան Համալսարանի Հայկական Սփիւռքի Ուսումնասիրութեան Կեդրոնի (ՀՍՈՒԿ) կազմակերպած «Յորդանանի Հայերը» գիտաժողովը աւարտեց իր աշխատանքները:

Կիրակի, 22 Մայիս 2016ի երեկոյեան պաշտօնական բացման հանդիսութեան, ի ներկայութեան հիւրերու, լիբանահայ մշակութային դէմքերու, Միջին Արեւելքի հայօճախներու պատմութեամբ հետաքրքրուող մտաւորականներու՝ Կեդրոնի տնօրէն Դոկտ. Անդրանիկ Տագէսեան բացման խօսքին մէջ անդրադարձաւ Յորդանանի հայօճախին առանձնայատկութիւններուն եւ կարեւորեց գիտաժողովին նշանակութիւնը:

Ընթերցուեցաւ Գալուստ Կիւլպենկեան Հիմնարկութեան Հայկական Համայնքներու Բաժնի Տնօրէն Դոկտ. Ռազմիկ Փանոսեանի ողջոյնի գիրը:

Ի բացակայութեան Յորդանանի ԱլՊէյթ Համալսարանի Գրականութեան եւ Մարդասիրական Բաժանմունքի տեսուչ Դոկտ. Հինտ Ապու Շըքրի, անոր զեկոյցը կարդաց Հայկազեան Համալսարանի Արուեստից եւ Գիտութեան Կաճառներու տեսուչ Դոկտ. Արտա Էքմէքճին:

Դոկտ. Ապու Շըքրի զեկոյցը՝ «Յորդանանի Նոր Շրջանի Պատմութիւնը՝ Օսմանեան Եւ Ազգային Իշխանութեան Շրջանին (1850-1946)», համապարփակ ներկայացուց Յորդանանի պատմական մօտիկ անցեալը,

վարչական առնչութիւնը Պիլատ ԱլՇամի հետ, տնտեսաժողովրդագրական տեղաւորումները, շրջանին ռազմավարական եւ կրօնական նշանակութիւնը: Զեկոյցը՝ պետութիւն-ժողովուրդ փոխյարաբերութեան, ընկերային-գիտական ու կառավարման յառաջընթացին խորապատկերին վրայ ներկայացուց 20,000 հայ աքսորեալներու ժամանումը արեւելեան Յորդանան, անոնց ընդունումը տեղաբնիկներուն եւ իրենցմէ շուրջ կէս դար առաջ նոյն շրջանը հաստատուած չերքէզներուն կողմէ: Զեկոյցը ընդգծեց հայ աքսորեալներուն նպաստը շրջանի յառաջընթացին:
Բացման հանդիսութիւնը աւարտեցաւ Հայկազեան Համալսարանի նախագահ Վեր.-Դոկտ. Փօլ Հայտօսթեանի փակման խօսքով:

Հանդիսութեան յաջորդեց յորդանահայ լուսանկարիչ Միրօ Գիզիրեանի լուսանկարչական ցուցահանդէսը: Ցուցադրուած էին նաեւ Յորդանանի հայօճախին պատմութեան վերաբերող կարգ մը գիրքեր եւ սաղիմաբնակ խեցեգործ Նշան Պալեանի խեցեղէն սալիկներու ստեղծագործութիւններու փունջ մը:

Երկուշաբթի, 23 Մայիսի առաւօտեան ժամը 8.30ին սկիզբ առին գիտաժողովին նիստերը: Գումարուեցան վեց նիստեր, որոնց ընթացքին կարդացուեցան 21 զեկոյցներ՝ Գերմանիայէն, Մ. Նահանգներէն, Ֆրանսայէն, Հայաստանի Հանրապետութենէն, Յորդանանէն եւ Պէյրութէն ժամանած փորձագէտներէ ու մասնագէտներէ: Զեկոյցները խմբաւորուած էին ըստ բնագաւառներու.- 1) Պատմութիւն, Պետութիւն եւ Ժողովրդագրութիւն, 2) Ծայրամասեր, 3) Կազմակերպութիւններ եւ Հաստատութիւններ, 4) Նոր Ժամանակներ, եւ 5) Ինքնութեան Խնդիրներ:

Զեկոյցներ ներկայացուցին Րոզէթ Ալէմեան, Վիգէն Ասլանեան (ի բացակայութեան՝ իր զեկոյցը ընթերցեց Պետրոս Թորոսեան), Փրոֆ. Ճոն Արմաճանի, Արսինէ Ճամպազեան, Դոկտ. Աննա Օհաննէսեան-Շարփէն (երկու զեկոյց), Դոկտ. Լուսին Թամինեան, Եղիա Թաշճեան, Մատլէն Մեծակոբեան (երկու զեկոյց), Փրոֆ. Քլոտ Մութաֆեան, Գէորգ Մսըրլեան, Ներսէս Ներսէսեան, Սիլվա Պաղսարեան, Ալին Պեննէեան (ի բացակայութեան՝ իր զեկոյցը ընթերցեց Լիլա Փամուքեան), Սիլվա

Սարգիսեան-Հայրապետեան (ի բացակայութեան՝ իր զեկոյցը ընթերցեց Նարեկ Հաննէեան), Յակոբ Սերփէքեան, Հրաճին Վարդանեան, Դոկտ. Անդրանիկ Տագէսեան, Դոկտ. Արաքս Փաշայեան, Դոկտ. Հիլմար Քայզէր: Նիստերը վարեցին Դոկտ.ներ Լեւոն Աւետանեան, Նանօր Գարակէօզեան, Արտա Էքմէքճի, Արմէն Իւրնէշլեան, Զաւէն Մսըրլեան եւ Անքը ԷլՊաթայնէ:

Քիչ անդրադարձ եղաւ ԺԴ.-Ի. դարասկիզբի Յորդանանի հայութեան, գրականութիւն-տպագրութիւն ոլորտին, հայերէնախօսութեան եւ լեզուի իմացութեան խնդիրներուն, Հայաստան ուսանած յորդանահայ ուսանողներու, 1948-67 շրջանին Յորդանանի մաս կազմող Երուսաղէմի, Րամալլայի եւ այլ շրջաններու պատմութեան, իգական սեռի դերին, դրացի երկիրներէն Յորդանան ապաստանած հայ գաղթականներուն:

Գիտաժողովը յատկանշուեցաւ փորձագէտ, հայօճախին մէջ գործօն դեր ստանձնած գործիչներու, լուսանցքային դէտերու առաւել մասնակցութեամբ: Հայօճախին ծայրամասերուն նուիրուած զեկոյցները ականատես-մասնակիցներու վկայութիւններ էին, որոնք հաւաքական յիշողութեան բացառիկ դրսեւորումներ հանդիսացան եւ անցան գրաւոր պատմութեան:

Զեկոյցները կը զանազանուէին նիւթի բնոյթով, մեթոտոլոժիով եւ յառաջացման եղանակով, նաեւ՝ զգացականութեամբ: Անոնք դաշտային հետազօտութեան, բանասիրական ուսումնասիրութեան, արխիւային պրպտումներու, փաստաթուղթերու վերլուծութեան վրայ հիմնուած էին:

Ազատ, անմիջական, երկար քննարկումներու եւ վերլուծումներու ընդմէջէն լուսարձակի տակ առնուեցան յորդանահայութեան մանաւանդ վերջին հարիւրամեակին վերաբերող հարցեր, խնդիրներ, իրագործումներ, նուաճումներ:

Գիտաժողովին պարզուեցաւ նաեւ նախորդ երկու գիտաժողովներուն ալ շեշտուած իրողութիւն մը՝ հաստատութենական թէ անձնական արխիւներու գոյութիւն-մատչելիութիւնը:

Գիտաժողովի տեւողութեան զեկուցաբերներուն կողքին ներկայ եղան մեծաթիւ ունկնդիրներ, ինչ որ կ'արտացոլացնէ նման գիտաժողովներու

հանդէպ յառաջացած հետաքրքրութիւնը: Ակնկալելի է, որ յառաջիկային լիբանահայ համալսարանաւարտներ զեկոյցներ ներկայացնեն, խտացնելով շարքերը Միջին Արեւելքի մէջ հայկական նիւթեր ուսումնասիրող արհեստավարժ մասնագէտներու եւ փորձագէտներու:

Գիտաժողովը նաեւ մէկտեղում մը եղաւ յորդանաբնակ, Միջին Արեւելքի հայօճախներու ժամանակակից պատմութեամբ եւ ընդհանրապէս Սփիւռքի ուսումնասիրութեամբ զբաղող փորձագէտներու, հետազօտողներու, մտաւորականներու եւ հետաքրքրուողներու, ուր շաղախուեցան նոր մտածումներ, հաստատուեցան նոր ծանօթութիւններ եւ յարաբերութիւններ, որոնք կը ծառայեն սփիւռքագիտութեան:

Կեդրոնի կազմակերպած վերջին երեք տարիներու գիտաժողովները շրջանի հայօճախներուն բեւեռուող լուսարձակներ են, որ կը մղեն առնչուող հայութիւնը իր պատմութիւնը, դէպքերն ու զարգացումները շրջանի համապատկերով, Միջին Արեւելքի անդրսահմանային ելակէտերէ դիտելու եւ ընկալելու:

Բարերար Երջօ Սամուէլեանի նուիրատուութեամբ կեանքի կոչուած Հայկազեան Համալսարանի ՀՍՈՒԿը շնորհակալ է Գալուստ Կիւլպենկեան Հաստատութեան Հայկական Համայնքներու Բաժնին, որ նիւթական կարեւոր աջակցութեամբ մը գնահատեց գիտաժողովը: Կեդրոնը շնորհակալ է բոլոր մասնակիցներուն՝ զեկուցողներուն, որոնք իրենց մասնակցութեամբ հարստացուցին գիտաժողովը, ինչպէս նաեւ՝ ունկնդիրներուն, որոնք յատուկ մթնոլորտ յառաջացուց եւ աւելի ծաւալուն դարձուցին գիտաժողովին անմիջական արդիւնքները:

Յառաջիկայ տարուան՝ Կեդրոնի գիտաժողովի նիւթ որոշուած է «Իրաքի Հայերը» թեման: Գիտաժողովը կը ծրագրուի կայացնել 2017 Մայիսին: Ծրագրային նախապատրաստական աշխատանքները արդէն իսկ ընթացք առած են:

Յաւելեալ մանրամասնութիւններու համար դիմել Հայկազեան Համալսարանի Հայկական Սփիւռքի Ուսումնասիրութեան Կեդրոն:

Հայկազեան Համալսարանի
Հայկական Սփիւռքի Ուսումնասիրութեան Կեդրոն

Content of the Book

The book is the compilation of the proceedings of the conference entitled "Armenians of Jordan". The conference was organized by the Haigazian University-based Armenian Diaspora Research Center and was held at Haigazian University on May 22-24, 2016.

The book includes the program of the conference, the opening words, the papers presented, the keynote speech[1], 5 additional papers and their English summaries, an appendix, biographies of the contributors, a selected bibliography, a brief narrative of the history of both Jordan and its Armenian community, and the conference press release.

The papers of the conference included in this book are the following:

- Prof. Claude Mutafian, "The Armenians of Transjordan (12th-14th c.)"
- Dr. Hilmar Kaiser, "The Armenian Deportees in Hauran and Karak Districts During the Armenian Genocide"
- Dr. Jon Armajani, "The Jordan Constitution and the Rights of Minorities"
- Dr. Antranik Dakessian, "A Demographic Study of the Jordan Armenians (1925-2005)"
- Dr. Anna Ohannessian-Charpin, "The Descendants of Armenian Women in South Jordan"
- Aline Benneyan, "Armenians in the North and South of Jordan"
- Hagop Serpekian, "Armenians of Ruseifa"
- Kevork Meserlian, "Armenians of Irbid and Northern Jordan"
- Yeghia Tashjian, "he Kings' Photographer: The Life of Hagop Berberian"
- Silva Sarkissian-Hayrabedian, "The Making of the Armenian Community in Amman"
- Silva Meneksheian-Baghsarian, "The Amman Homenetmen Chapter"
- Arsiné Jambazian, "The Armenian Relief Society of Jordan"
- Rosette Alemian-Mahseredjian, "The Amman Watany Sporting Club"
- Nerses Nersesian, "Outstanding Figures in the Jordan Armenian Community and the Armenian Churches of Jordan"
- Hratzin Vardanian, "The Committee of Cultural Relations with Diaspora Armenians and the Jordan Armenians"
- Madeleine Medzagopian, "The Armenian Diaspora in Jordan between Integration in the Hostland and Connectivity with the Motherland"
- Vicken Aslanian, "Armenian Participation in Jordanian Public Life: A Critical Approach"

[1] It is entitled "The History of Jordan During the Ottoman and National Eras (1850-1946)."

- Dr. Lucine Taminian, "The Formation of the Identity of a Diasporic Armenian Woman"
- Dr. Araks Pashaian, "The Armenian Community of Jordan: Current Challenges"

The five additional papers are:

- Prof. Vahram L. Shemmassian, "Armenian Genocide Survivors in Palestine and Transjordan at the End of World War I"
- Kevork Meserlian, "The Immigration and Naturalization of the Armenians in Jordan and the Granting of Citizenship (1928-1954)"
- Dr. Antranik Dakessian, "A Microhistory of the AGBU Chapters of Amman (1929-55), Ruseifa (1939-61), Zarqa (1941-59) and Karak (1941-46)"
- Maral Nersessian, "The Armenian Schools in Jordan (An Overview)"
- Rev. Berdj Djambazian, "Recollections on the Armenian Evangelical Community in Jordan (late 1940s)"
- Harout Chekijian, "The Jordan Armenians: Memories and Episodes (1967-1978)"
- Dr. Harry Hagopian, "An Armenian Family: A Peripatetic Journey"

The book is the third volume of a series which will feature aspects of the Armenian communities in Middle Eastern countries.

الكتاب في سطور ...

يغطّي هذا الكتاب أعمال مؤتمر "الأرمن في الأردن" الذي نظّمه "مركز الأبحاث للشتات الأرمني" في جامعة هايكازيان، الذي عُقد في حرمها ما بين 22 و24 أيّار 2016، بمشاركة 18 اختصاصياً وأكاديمياً حضروا من الولايات المتحدة، فرنسا، ألمانيا، أرمينيا، الأردن ولبنان.

يتضمّن الكتاب برنامج المؤتمر؛ والمحاضرات الـ20 التي أُلقيت وخلاصاتها؛ بالإضافة إلى السِّيَر الذّاتية للمحاضرين، وصور من المؤتمر؛ والبيان الصحافي الذي وُزّع على الإعلاميّين.

في العودة إلى المحاضرات التي أُلقيت على امتداد أعمال المؤتمر، فقد حملت العناوين الآتية: "تاريخ الأردن في العهدين العثماني والوطني (1850–1946م)" (الدكتور هند غسان أبو الشعر)؛ "الأرمن في الأردن بين القرنين 12 و14" (البروفسور كلود موطافيان)؛ "المنفيّون الأرمن في حوران والكرك إبان الإبادة الأرمنيّة" (الدكتور هيلمار كايزر)؛ "الدستور الأردني وحقوق الأقلّيات" (البروفسور جون أرماجاني)؛ "دراسة ديموغرافية عن الأرمن في الأردن 1925-2012" (الدكتور أنترانيك داكسيان)؛ "ذرّية النساء الأرمن في جنوب الأردن" (الدكتور آنَا أوهانسيان- شاربان)؛ "الأرمن في جنوب وشمال الأردن" (أَلين بنَيان)؛ "الأرمن في الرصيفة" (هاكوب سربيكيان)؛ "الأرمن في إربد" (كيفورك مصرليان)؛ "قصّة مصوّر الملوك هاكوب بربريان" (يغيا طاشجيان)؛ "الأرمن في عمان: تكوين الجالية" (سيلفا هيرابديان- سركيسيان)؛ "نادي هومنتمان في عمان" (سيلفا منكشيان)؛ "جمعيّة صليب إعانة الأرمن في الأردن" (أرسينى جمبازيان)؛ "النادي الوطني الرياضي في الأردن" (روزيت اليميان-مهسريجيان)؛ "وجهاء الأرمن والكنائس الأرمنيّة في الأردن" (نرسيس نرسيسيان)؛ "الأرمن الأردنيّين ولجنة العلاقات الثقافيّة مع الشتات الأرمني" (هراتزين فاردانيان)؛ "الشتات الأرمني في الأردن: بين الاندماج والتواصل مع الوطن الأم" (مادلين ميدزاكوبيان)؛ "الأرمن الأردنيّين في الحياة العامة" (فيكين أصلانيان)؛ "تكوين هويَّة المرأة الأرمنيّة في الشتات.. التجربة الأردنية" (الدكتور لوسين طامينيان)؛ "الجالية الأرمنيّة في الأردن: تحدّيات معاصرة" (الدكتور آراكس باشايان).

ويحتوي الكتاب كذلك خمس محاضرات إضافيّة حَمَلَت العناوين الآتية: "الناجون الأرمن في فلسطين وشرق الأردن بعد الحرب العالميّة الأولى" (البروفسور فهرام شمَسيان)؛ "هجرة الأرمن وتوطينهم في الأردن بين العامين 1928 و1954: الأطر القانونية والدستورية لمنح الجنسيّة

الأردنيّة" (كيفورك مصرليان)؛ "صفحات من تاريخ نوادي الجمعية الخيرية العمومية الارمنية في عمان، الرصيفة، الزرقاء والكرك" (الدكتور أنترانيك داكسيان)؛ "المدارس الأرمنيّة في الأردن" (مارال نرسيسيان)؛ "عائلة أرمنية.. هجرات متتالية" (الدكتور هاري هاكوبيان)؛ "ذكريات عن المجتمع الإنجيلي الأرمني في الأردن" (القس بيرج جامبازيان)؛ "المجتمع الأرمني في الأردن: ذكريات وفصول 1967 - 1978" (هاروت تشاكيجيان).

ومن الجدير ذكره في الختام أنّ هذا الكتاب هو المجلّد الثالث من سلسلة الكتب التي ستَصدُر تباعاً عن دار نشر "جامعة هايكازيان" والتي ستُسلّط الضوء على واقع الأرمن في دول الشرق الأوسط.

Հայկազեան Համալսարանի Հրատարակչատան Գրացանկ
List of Books Published by Haigazian University Press

1) *Armenians of Lebanon: From Past Princesses and Refugees to Present-Day Community*. Edited by Aida Boudjikanian, Beirut 2009, 35$:
2) Alfred de Zayas, J.D., Dr. Phil., *The Genocide Against the Armenians 1915-1923 And the Relevance of the 1948 Genocide Convention*, Beirut February 2010, 10$ (սպառած):
3) *Towards Golgotha: The Memoirs of Hagop Arsenian, A Genocide Survivor*, translated and annotated by Arda Arsenian Ekmekji, Beirut 2011, 30$ (սպառած):
4) Dr. Zaven Messerlian, *Armenian Participation in the Lebanese Legislative Elections 1934-2009,* Beirut 2014, 25$:
5) Dr. Vahram L. Shemmassian, *The Musa Dagh Armenians: A Socioeconomic and Cultural History 1919-1939,* Beirut 2015, գին՝ 50 եւ 60$:
6) *Towards Golgotha: The Memoirs of Hagop Arsenian, A Genocide Survivor*, translated and annotated by Arda Arsenian Ekmekji, 2nd ed., Beirut 2015, 30$:
7) *Հաճնոյ Հերոսամարտի 90ամեակի Գիտաժողովի Նիւթեր եւ Վաւերագրեր Ու Լուսանկարներ*, կազմեց եւ խմբագրեց Դոկտ. Անդրանիկ Տագէսեան, Պէյրութ 2013, 228 էջ, 10$:
8) *Լիբանանահայ Գիրքը 1894-2012. Մատենագիտական Ցանկ,* աշխատասիրեցին Դոկտ. Անդրանիկ Տագէսեան եւ Դոկտ. Արմէն Իւրնէշլեան, Պէյրութ 2013, 20$:
9) *Հայկազեան Հայագիտական Հանդէս, Հտր. ԼԳ./Haigazian Armenological Review, Vol. 33*, 2013, 566 էջ, 20$:
10) *Հայկազեան Հայագիտական Հանդէս, Հտր. ԼԴ./Haigazian Armenological Review, Vol. 34*, 2014, 656 էջ, 20$:
11) *Հայկազեան Համալսարան. Հայ Տպագրութեան 500-Ամեակի Ձեռնարկներ. 5 Մայիս 2012-22 Մարտ 2013*, Պէյրութ, 2014, 104 էջ:

12) *Հայկական Անդրսահմանային Տարածականութիւնը եւ Արդի Հաղորդակցական Միջոցները, Գիտաժողովի Նիւթեր, (15-17 Մայիս 2013)*, խմբ. Անդրանիկ Տագէսեան, Հրատ. Հայկական Սփիւռքի Ուսումնասիրութեան Կեդրոն, Հայկական Սփիւռք Ա., Պէյրութ 2014, 246 էջ, 10$:
13) *Հարիւրամեակ Հայոց Ցեղասպանութեան. Հետեւանքներ եւ Յառաջադրանքներ, Գիտաժողովի Նիւթեր (31 Յունուար-1 Փետրուար 2015)/Armenian Genocide Centennial: Addressing the Implications. Proceedings of the Conference (January 31-February 1, 2015)*, կազմ. եւ խմբ.՝ Անդրանիկ Տագէսեան/Compiled and edited by Antranik Dakessian, 240 էջ, 10$:
14) *Հայկազեան Հայագիտական Հանդէս, Հտր. ԼԵ./Haigazian Armenological Review, Vol. 35*, 2015, 944 էջ, 20$:
15) Անդրանիկ Տագէսեան, *Լիբանանի Հայօճախը. Գիրք Ա., Համարկումին Խաչուղիները (1920-2005)*, 2015, 174 էջ, 10$:
16) Յակոբ Ա. Եագուպեան, *Քննադատական Մտածողութիւնը Լիբանանահայ Վարժարաններու Մէջ*, 2016, 158 էջ:
17) *Իմ Ընտանիքիս Պատմութիւնը*, կազմ.՝ Հայկազեան Համալսարանի Հայագիտական Ուսմանց Ընկերակցութիւն, խմբ.՝ Ա. Տագէսեան, 2016, 296 էջ (սպառած):
18) *Հայկազեան Հայագիտական Հանդէս, Հտր. ԼԶ./Haigazian Armenological Review, Vol. 36*, 2016, 700 էջ, 20$:
19) *Բարսեղ Կանաչեան (1885-1967). Կեանքի Մը Երաժշտացումը,* աշխ.՝ Անդրանիկ Տագէսեան, 670 էջ, 2017, 20$:
20) *Լիբանանի Հայերը (Բ.) Գիտաժողովի Նիւթեր (14-16 Մայիս 2014)/Armenians of Lebanon (II) Proceedings of the Conference (14-16 May 2014)*, խմբ. Ա. Տագէսեան, 366 էջ, 2017, 20$:
21) Roupen Avsharian, *On the Record. Armenian Deputies in the Lebanese Parliaments, Volume I, 1922-1972,* 654 pages, 2017, 30$:
22) Roupen Avsharian, *On the Record. Armenian Deputies in the Lebanese Parliaments, Volume I, 1972-2017,* 680 pages, 2017, 30$:
23) *Հայկազեան Հայագիտական Հանդէս, Հտր. ԼԷ./Haigazian Armenological Review, Vol. 37*, 2017, 720 էջ, 20$:

24) *Սուրիոյ Հայերը. Գիտաժողովի Նիւթեր (24-27 Մայիս 2015)/Armenians of Syria: Proceedings of the Conference (24-27 May 2015)* (2018), խմբ. Ա. Տագէսեան, 720 էջ, 2018, 30$:

25) Aghop Der-Karabetian, *Armenian Ethnic Identity in Context: Empirical and Psychosocial Perspective*, 270 pages, 2018, 20$:

26) *Հայկազեան Հայագիտական Հանդէս, Հտր. ԼԸ./Haigazian Armenological Review, Vol. 38*, 2018, 852 էջ, 20$:

27) Hagop Babiguian, *The Adana Massacres: An Eyewitness Account*, translated and annotated by Dr. A. B. Gureghian, foreword (and Overview) by Dr. A. B. Gureghian, 2018, 140 pages, 10$.

28) هرانت دينك, *امتان قريبتان... جاران بعيدان*
translated into Arabic by Dr. Alexan Keshishian, Beirut 2012, 160 էջ, 10$:

29) د. نورا أريسيان, *100 عام على الإبادة الأرمنية:100 شهادة عربية (بمناسبة الذكرى المئوية للإبادة الأرمنية)*, HAIGAZIAN UNIVERSITY PRESS, Beirut 2015, 10$:

Յորդանանի Հայերը
Armenians of Jordan
Տպաքանակ՝ 300
Գին՝ Լիբանան 30,000L. Ոսկի
Արտասահման 30 Տոլար
Տպագրութիւն՝ Rouhana Chemaly, Daroun s.a.l.

Haigazian University
Armenian Diaspora Research Center
P.O.Box 11 1748 Beirut Lebanon
Fax: 01349230/1, 03712058
Email: adakessian@Haigazian.edu.lb